Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

[illegible] New Testament

[illegible] 5000 copies 1902.

Ȧrarat Armenian New Testament
Reprint, 5000 copies, 1902.

220
498-ԱU
208.2
U-66
23 SEP 2009

ՄԵՐ ՏԷՐ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ

ՅՈՅՆ ԲՆԱԳՐԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

معارف عموميه نظارت جليله‌سى و مطبوعات اداره بهيه‌سى
رخصتيله نشر اولنمشدر
رخصتنامه تاريخى ١٣ ربيع الاخر ٣٢٠ و ٦ تموز ٣١٨
نومرو ٢٠ و ٤١٦

مصارفى انكليز بيبل شركتى طرفندن تسويه اولنه‌رق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄԸ ՏՊԱԳՐՈՒԵՑԱՒ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԲՐԻՏԱՆՆԱԿԱՆ
ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՍՈՎԸ

1902

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. ... Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. Մ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

28 JUN 2013
3101

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՑԱՆԿԸ

ԱՒԵՏԱՐԱՆ		ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Ըստ Մատթէոսի	ունի	28	սկսանի	1
Ըստ Մարկոսի	„	16	„	84
Ըստ Ղուկասու	„	24	„	137
Ըստ Յովհաննու	„	21	„	226
Գործք Առաքելոց	„	28	„	293
ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ				
Առ Հռովմայեցիս	„	16	„	380
Առ Կորնթացիս Ա	„	16	„	446
Առ Կորնթացիս Բ	„	13	„	451
Առ Գաղատացիս	„	6	„	475
Առ Եփեսացիս	„	6	„	487
Առ Փիլիպպեցիս	„	4	„	499
Առ Կողոսացիս	„	4	„	508
Առ Թեսաղոնիկեցիս Ա	„	5	„	516
Առ Թեսաղոնիկեցիս Բ	„	3	„	524
Առ Տիմոթէոս Ա	„	6	„	529
Առ Տիմոթէոս Բ	„	4	„	539
Առ Տիտոս	„	3	„	546
Առ Փիլիմոն	„	1	„	550
Առ Եբրայեցիս	„	13	„	552

ԹՈՒՂԹ		ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Յակոբոսի	ունի	5	գլուխ	579
Պետրոսի Ա.	„	5	„	588
Պետրոսի Բ	„	3	„	598
Յովհաննէսի Ա.	„	5	„	605
Յովհաննէսի Բ	„	1	„	615
Յովհաննէսի Գ	„	1	„	617
Յուդա առաքեալի.	„	1	„	619
Յայտնութիւն	„	22	„	622

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Աբրահամի որդի Դաւիթի որդի Յիսուս Քրիս-
տոսի ծննդեան գիրքը ։
2 Աբրահամը ծնեց Իսահակին . Իսահակը ծնեց
Յակոբին . Յակոբը ծնեց Յուդային և նորա եղ-
3 բայրներին . Յուդան ծնեց Փարէսին և Զարային
Թամարից . Փարէսը ծնեց Եսրոնին . Եսրոնը ծը-
4 նեց Արամին . Արամը ծնեց Ամինադաբին . Ամի-
նադաբը ծնեց Նաասոնին . Նաասոնը ծնեց Սաղ-
5 մոնին . Սաղմոնը ծնեց Բոոսին Ռախաբից . Բոոսը
ծնեց Ովբէդին Հռութից . Ովբէդը ծնեց Յեսսէին.
6 Յեսսէն ծնեց Դաւիթ թագաւորին ։ Դաւիթ թա-
7 գաւորը ծնեց Սողոմոնին Ուրիայի կնոջից . Սողո-
մոնը ծնեց Ռոբովամին . Ռոբովամը ծնեց Աբիային.
8 Աբիան ծնեց Ասային . Ասան ծնեց Յովսափատին .
Յովսափատը ծնեց Յովրամին. Յովրամը ծնեց Ոզիա-
9 յին . Ոզիան ծնեց Յովաթամին . Յովաթամը ծնեց
10 Աքազին. Աքազը ծնեց Եզեկիային . Եզեկիան ծը-
նեց Մանասէին . Մանասէն ծնեց Ամոնին . Ամոնը
11 ծնեց Յովսիային։ Յովսիան ծնեց Յեքոնիային՝ և նո-
րա եղբայրներին , Բաբելոնի գերութեան ժամա-
12 նակին ։ Բաբելոնի գերութիւնից յետոյ Յեքոնիան
ծնեց Սաղաթիէլին . Սաղաթիէլը ծնեց Զօրաբա-

13 բէլին. Զօրաբաբէլը ծնեց Աբիուդին. Աբիուդը
14 ծնեց Եղիակիմին. Եղիակիմը ծնեց Ազովրին. Ազով-
րը ծնեց Սադովկին. Սադովկը ծնեց Աքինին. Աքի-
15 նը ծնեց Եղիուդին. Եղիուդը ծնեց Եղիազարին.
Եղիազարը ծնեց Մատթանին. Մատթանը ծնեց
16 Յակոբին. Յակոբը ծնեց Յովսէփին՝ Մարիամի մար-
դին, որից ծնուեցաւ Յիսուսը, որ ասվում է Քրիս-
17 տոս: Արդ՝ բոլոր ազգերը Աբրահամից մինչև Դա-
ւիթ տասնևչորս ազգ են, և Դաւիթից մինչև Բա-
բելոնի գերութիւնը տասնևչորս ազգ, և Բաբելոնի
գերութիւնից մինչև Քրիստոսը տասնևչորս ազգ:
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն այսպէս էր.
այսինքն նորա մայրը՝ Մարիամը նշանուած լինելով
Յովսէփին՝ դեռ մինչեւ նորանց իրար մօտ գալը
19 Սուրբ Հոգիից յղացած գտնուեցաւ: Եւ նորա
մարդը Յովսէփը արդար լինելով, և նորան խայտա-
ռակել չուզելով, խորհեց ծածուկ արձակել նո-
20 րան: Եւ մինչդեռ նա մտածում էր այս, ահա
Տիրոջ հրեշտակը երազում երեւեցաւ նորան և
ասեց. Յովսէփ՝ Դաւիթի որդի, մի վախենար քեզ
մօտ առնել քո կին Մարիամին, որովհետև նորա-
21 նում ծնուածը Սուրբ Հոգիից է: Եւ նա որդի
կ'ծնի, և նորա անունը *Յիսուս դնես. որովհետև
22 նա իր ժողովրդին կ'փրկէ իրանց մեղքերից: Եւ
այս ամենը եղաւ, որ կատարուի մարգարէի ձե-
23 ռովը Տէրից ասուածը որ ասում է. Ահա կոյսը
կ'յղանայ և որդի կ'ծնի. և նորա անունն Էմմա-
նուէլ կ'կանչեն. որ թարգմանվում է՝ Աստուած
24 մեզ հետ: Եւ Յովսէփը քնից զարթնելով այն-
պէս արաւ, ինչպէս Տիրոջ հրեշտակը հրամայեց
25 իրան. և առաւ իր կնիկն իր մօտ: Եւ չգիտէր նո-

*Այսինքն՝ փրկիչ

րան մինչեւ որ նա իր անդրանիկ որդին ծնեց, և
նորա անունը կոչեց Յիսուս:

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Յիսուսը ծնուեց Հրէաստանի Բեթլէ-
հէմումը Հերովդէս թագաւորի օրերումը, ահա
2 արեւելքից մոգեր եկան Երուսաղէմ, Եւ ասեցին.
Ո՞րտեղ է Հրէաների ծնուած թագաւորը. որով-
հետև մենք տեսանք նորա աստղը արեւելքումը, և
3 եկանք նորան երկրպագելու: Եւ երբոր Հերովդէս
թագաւորը լսեց՝ շփոթուեցաւ, և բոլոր Երուսաղէմը
4 նորա հետ: Եւ նա բոլոր քահանայապետներին և ժո-
ղովրդի դպիրներին ժողովելով՝ նորանցից հարցրեց,
5 թէ ո՞րտեղ պիտի ծնուի Քրիստոսը: Եւ նորանք ա-
սեցին նորան. Հրէաստանի Բեթլէհէմումը. որովհե-
6 տև այսպէս է գրուած մարգարէի ձեռովը. Եւ դու,
Բեթլէհէմ՝ Յուդայի երկիր, բնաւ փոքրագոյն չես
Յուդայի իշխանների մէջ. որովհետև քեզանից իշխան
պիտի դուրս գայ, որ իմ Իսրայէլ ժողովուրդին
7 հովուէ: Այն ժամանակ Հերովդէսը մոգերին թա-
գուն կանչելով, նորանցից ստուգեց այն երեւող
8 աստղի ժամանակը: Եւ նորանց Բեթլէհէմ ու-
ղարկելով ասեց. Գնացէք ստոյգ իմացէք այն ե-
րեխայի համար, և երբոր գտնէք, ինձ իմացրէք,
9 որ ես էլ գամ երկրպագեմ նորան: Եւ նորանք՝
երբոր լսեցին թագաւորիցը՝ գնացին. և ահա այն
աստղը, որ տեսան արեւելքումը, նորանց առաջին
գնում էր, մինչև որ եկաւ կանգնեց այն տեղի վերայ,
10 ուր էր երեխան: Եւ երբոր նորանք տեսան այն
աստղը, մեծ ուրախութիւնով ուրախացան շատ:
11 Եւ երբոր տունը մտան, *գտան երեխային իր մայր

*Ոմանք՝ տեսան

Մարիամի հետ, և ընկնելով երկրպագեցին նորան,
և իրանց գանձերը բացին՝ ընծայ տուին նորան՝ ոսկի
12 և կնդրուկ և զմուռս ։ Եւ երազում հրաման ա-
ռան յետ չ'դառնալ Հերովդէսի մօտ . և ուրիշ
ճանապարհով գնացին իրանց երկիրը ։
13 Եւ երբոր նորանք այն տեղից գնացին, ահա Տի-
րոջ հրեշտակն երեւեցաւ երազում Յովսէփին և
ասեց. Վեր կաց՝ վեր առ երեխային և նորա մօրը,
և փախիր Եգիպտոս, և մնա այնտեղ, մինչեւ որ
ասեմ քեզ. որովհետև Հերովդէսը որոնելու է
14 երեխային որ կորցնէ նորան ։ Եւ նա վերկացաւ
վեր առաւ երեխային և նորա մօրը գիշերով, և
տեղափոխուեցաւ գնաց Եգիպտոս, և այնտեղ էր
15 մինչեւ Հերովդէսի վախճանը . Որ կատարուի Տէ-
րիցն ասուածը մարգարէի ձեռովը, որ ասում է .
Եգիպտոսից կանչեցի իմ որդիին ։
16 Այն ժամանակ Հերովդէսը տեսնելով թէ խաբ-
ուեցաւ մոգերից, շատ բարկացաւ . և ուղարկեց
կոտորեց այն ամեն երեխաներին, որ Բեթլեհէ-
մումը և նորա չորս կողմերումն էին երկու տարե-
կաններին և նորանցից ցածերին, այն ժամանակին
17 նայելով որ ստուգեց մոգերից ։ Այն ժամանակ
կատարուեցաւ Երեմիա մարգարէի ձեռով ասուա-
18 ծըն, որ ասում է . Ձայն լսուեցաւ Ռամայի մէջ՝ ողբ
և լաց և կոծ . Ռաքէլը իր որդկանց վերայ լաց էր
լինում, և չէր կամենում մխիթարուիլ, որովհե-
տև չ'կան ։
19 Եւ երբոր Հերովդէսը մեռաւ, ահա Տիրոջ հրեշ-
տակն երազում երեւեցաւ Յովսէփին Եգիպտոսումը,
20 Եւ ասեց . Վեր կաց՝ վեր առ երեխային և նորա
մօրը և գնա Իսրայէլի երկիրը . որովհետև երեխայի
21 կեանքը որոնողները մեռել են ։ Եւ նա վերկացաւ՝
վեր առաւ երեխային և նորա մօրը և եկաւ Իս-

22 րայէլի երկիրը ։ Եւ լսելով թէ Արքեղայոսն է թա-
գաւորում Հրէաստանի վերայ իր հօր Հերովդէսի
տեղ, վախեցաւ գնալ այնտեղ, և երազում պատ-
23 գամ առնելով՝ գնաց Գալիլեայի կողմերը . Եւ ե-
կաւ բնակուեց այն քաղաքումը որ Նազարէթ է
ասվում . որ կատարուի մարգարէների ձեռով աս-
ուածը թէ՝ Նազովրեցի կ'կոչուի ։

ԳԼ. Գ

1 Այն օրերումն եկաւ Յովհաննէս Մկրտիչը, քարո-
2 զում էր Հրէաստանի անապատումը, Եւ ասում .
Ապաշխարեցէք, որ մօտեցել է երկնքի թագաւո-
3 րութիւնը ։ Որովհետև սա է այն ասուածը Եսա-
յի մարգարէի ձեռովը, որ ասում է . Անապա-
տումը կանչողի ձայնը . պատրաստ արէք Տիրոջ
4 ճանապարհը, ուղիղ արէք նորա շաւիղները ։ Եւ
ինքը Յովհաննէսը ունէր իր հագուստը ուղտի բըր-
դից, և կաշիէ գօտի իր մէջքին, և նորա կերա-
5 կուրն էր մարախ և վայրի մեղր ։ Այն ժամանակ
դուրս էին գնում նորա մօտ Երուսաղէմը և բոլոր
6 Հրէաստանը և Յորդանանի բոլոր կողմերը ։ Եւ
մկրտվում էին Յորդանանի մէջ նորանից՝ իրանց
7 մեղքերը խոստովանելով ։ Եւ երբոր նա տեսաւ որ
Փարիսեցիներից և Սադուկեցիներից շատերը գալիս
էին իր մկրտութեանը, ասեց նորանց . Իժի ձա-
ւակներ, ո՞վ ցոյց տուեց ձեզ փախչել այն գալու
8 բարկութիւնիցը ։ Արդ ապաշխարութեան արժանի
9 պտուղ արէք ։ Եւ մի կարծէք ասել ձեր միջումը
Մենք հայր ունինք Աբրահամին . որովհետև ասում
եմ ձեզ, թէ Աստուած կարող է այս քարերից
10 որդիներ յարուցանել Աբրահամի համար ։ Արդէն
կացինն էլ ծառերի արմատին դրուած է . արդ ամեն

ծառ, որ բարի պտուղ չէ բերում, կ'կտրուի ու-
11 կրակի մէջ կ'գցուի: Ես ջրով եմ մկրտում ձեզ
ապաշխարութեան համար. բայց իմ ետեւից եկողն
ինձանից զօրաւոր է, որի կօշիկները վեր առնելու
ես արժանի չեմ. նա ձեզ կ'մկրտէ Սուրբ Հոգով
12 և կրակով: Որ հոսելին նորա ձեռին է, և նա կը
սրբէ իր կալը և իր ցորենը կ'հաւաքէ շտեմարանը,
իսկ յարդը կ'այրէ անանցանելի կրակով:
13 Այն ժամանակ Յիսուսը Գալիլեայից եկաւ Յոր-
14 դանան Յովհաննէսի մօտ նորանից մկրտուելու: Եւ
Յովհաննէսն արգելում էր նորան և ասում. Ինձ
պէտք է քեզանից մկրտուիլ, և դու ինձ մօտ ես
15 գալիս: Եւ Յիսուսը պատասխան տուաւ և ասեց
նորան. Թող տուր հիմա, որովհետև այսպէս է վա-
յելում մեզ, որ ամեն արդարութիւն կատարենք:
16 Այն ժամանակը թող տուաւ նորան: Եւ մկրտուե-
լուց յետոյ Յիսուսը շուտով դուրս եկաւ ջրից.
և ահա երկինքը բացուեցաւ նորա համար, և նա
տեսաւ Աստուծոյ Հոգին որ վայր էր իջնում ա-
17 ղաւնիի պէս և գալիս նորա վերայ: Եւ ահա եր-
կնքից ձայն էկաւ, որ ասում էր. Դա է իմ սի-
րելի որդին, որին ես հաւանեցի:

ԳԼ. Դ

1 Այն ժամանակ Յիսուսը Հոգիից անապատը
2 տարուեցաւ, որ փորձուի սատանայից: Եւ քառա-
սուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց յետոյ
3 սովեց: Եւ փորձիչը նորա մօտ գալով ասեց. Եթէ
Աստուծոյ որդի ես, ասիր որ այս քարերը հաց լի-
4 նեն: Նա էլ պատասխան տուաւ և ասեց. Գրուած
է՝ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, այլ ամեն
խօսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանից:

5 Այն ժամանակ սատանան նորան առաւ տարաւ
սուրբ քաղաքը, և կանգնեցրեց նորան տաճարի
6 աշտարակի վերայ, Եւ ասեց նորան. Եթէ Աստու-
ծոյ որդի ես, քեզ վայր գցիր. որովհետև գըր-
ուած է թէ Իր հրեշտակներին կ'հրամայէ քեզ
համար, և ձեռների վերայ կ'բարձրացնեն քեզ,
7 որ քո ոտքը քարի չ'գլիպցնես երբէք: Յիսուսը նո-
րան ասեց. Դարձեալ գրուած է, թէ Մի փորձիր
Տիրոջը՝ քո Աստուծուն:
8 Դարձեալ առաւ տարաւ նորան սատանան մի
շատ բարձր սար՝ և ցոյց տուաւ նորան աշխարհքի
բոլոր թագաւորութիւնները և նորանց փառքը,
9 Եւ ասեց նորան. Սորանց ամենը քեզ կ'տամ, ե-
10 թէ ընկած երկրպագես ինձ: Այն ժամանակ ասեց
նորան Յիսուսը. *Գնա գնա, սատանայ. որովհետև
գրուած է թէ Տիրոջը՝ քո Աստուծուն երկրպագիր
11 և միայն նորան պաշտիր: Այն ժամանակ սատա-
նան թողեց նորան, և ահա հրեշտակներ մօտ ե-
կան և ծառայում էին նորան:
12 Եւ երբոր Յիսուսը լսեց, թէ Յովհաննէսը
13 մատնուեցաւ, հեռացաւ գնաց Գալիլեա. Եւ
Նազարէթը թողած եկաւ բնակուեց ծովեզրեայ
կափառնայումումը, Զաբուղոնի և Նեփթաղիմի
14 սահմաններումը. Որ կատարուի Եսայի մարգարէի
15 ձեռով ասուածը, որ ասում է. Զաբուղոնի եր-
կիրը և Նեփթաղիմի երկիրը՝ ծովի ճանապարհը՝
Յորդանանի այն կողմը, հեթանոսների Գալիլեան.
16 Ժողովուրդ, որ խաւարի մէջ նստած էր, մեծ լոյս
տեսաւ. և նորանց որ մահի երկրումը և ստուե-
17 րումը նստած էին, լոյս ծագեց նորանց: Այն ժա-
մանակից Յիսուսն սկսեց քարոզել և ասել. Ապաշ-

*Ոմանք՝ յետս

խարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնքի թագա-
ւորութիւնը։
18 Եւ Յիսուսը Գալիլեացիների ծովի եզրումը ման
գալիս՝ տեսաւ երկու եղբարց՝ Սիմօնին որ Պետրոս է
կոչուած, եւ նորա Անդրէաս եղբօրը, որ ուռկան
19 էին գցում ծովը, որովհետեւ ձկնորս էին. Եւ ասեց
նորանց. Իմ ետեւից եկէք, եւ ես ձեզ մարդկանց որ-
20 սորդ կ'շինեմ։ Եւ նորանք շուտով իրանց ուռկան-
21 ները թողած նորա ետեւից գնացին։ Եւ այն տե-
ղից առաջ գնալով ուրիշ երկու եղբայրներին տե-
սաւ, Զեբեդեան Յակոբոսին եւ նորա եղբայր Յով-
հաննէսին՝ նաւումն իրանց հայր Զեբեդէոսի հետ
իրանց ուռկանները շինելիս, եւ նորանց կանչեց։
22 Նորանք էլ շուտով նաւը եւ իրանց հօրը թողած,
նորա ետեւից գնացին։
23 Եւ Յիսուսը ման էր գալիս բոլոր Գալիլեայումը՝
սովորեցնելով նորանց ժողովարաններումը եւ քարո-
զելով արքայութեան աւետարանը, եւ ժողովրդի
մէջ եղած ամեն հիւանդութիւն եւ ամեն ցաւ
24 բժշկելով։ Եւ նորա համբաւը դուրս եկաւ բոլոր
Սիւրիա. եւ նորա մօտ բերին ամեն հիւանդներին
որ կերպ կերպ ցաւերով եւ տանջանքներով նեղ-
վում էին, եւ դիւահարներ եւ լուսնոտներ եւ ան-
25 դամալոյծներ. եւ նա նորանց բժշկեց։ Եւ նորա
ետեւից շատ ժողովուրդներ էին գնում Գալիլեա-
յիցը եւ Դեկապօլիսիցը եւ Երուսաղէմիցը եւ Հրէ-
աստանիցը եւ Յորդանանի այն կողմիցը։

ԳԼ. Ե

1 Եւ ժողովուրդները տեսնելով վեր ելաւ սարը.
եւ երբոր ինքը նստեց, նորա աշակերտներն եկան
2 նորա մօտ։ Եւ նա իր բերանը բանալով նորանց
սովորեցնում էր եւ ասում.

3 Երանի հոգով աղքատներին, որ նորանցն է
4 երկնքի թագաւորութիւնը։ Երանի սգաւորնե-
5 րին, որ նորանք կ'մխիթարուին։ Երանի հե-
6 զերին, որ նորանք կ'ժառանգեն երկիրը։ Երա-
նի նորանց, որ սոված եւ ծարաւ են արդարու-
7 թեան, որ նորանք կ'կշտանան։ Երանի ողոր-
մածներին, որ նորանք ողորմութիւն կ'գտ-
8 նեն։ Երանի նորանց, որ սրտով մաքուր են,
9 որ նորանք Աստուծուն կ'տեսնեն։ Երանի խա-
ղաղութիւն անողներին, որ նորանք Աստուծոյ
10 որդիք կ'կոչուին։ Երանի նորանց՝ որ արդա-
րութեան համար հալածուած են, որ նորանցն է
11 երկնքի արքայութիւնը։ Երանի է ձեզ, երբոր
կ'նախատեն ձեզ եւ կ'հալածեն եւ ամեն չար բան
սուտ տեղը կ'ասեն ձեր վերայ իմ պատճառովը։
12 Ուրախացէք եւ ցնծացէք, որ ձեր վարձքը շատ է
երկնքումը. որովհետեւ այսպէս հալածեցին մար-
գարէներին, որ ձեզանից առաջ էին։
13 Դուք երկրի աղն էք. եթէ աղն անհամանայ,
ինչով կ'աղանուի. այլ եւս ոչնչի պէտք չէ, միայն
թէ դուրս գցուի եւ մարդկանցից ոտնակոխ լինի։
14 Դուք աշխարհքի լոյսն էք. մի քաղաք, որ կենում
15 է սարի վերայ, կարող չէ թագչուիլ։ Եւ ճրագը
չեն վառիլ եւ դնիլ գրուանի տակ, այլ ճրագակա-
լի վերայ, եւ նա լոյս կ'տայ ամենին՝ որ տան մէջ են։
16 Այսպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդկանց առաջին,
որ ձեր բարի գործերը տեսնեն, եւ փառաւորեն
ձեր Հօրը որ երկնքումն է։
17 Մի կարծէք, թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէ-
ները քանդելու. ես չ'եկայ քանդելու, այլ կատա-
18 րելու։ Որովհետեւ ճշմարիտն ասում եմ ձեզ, մին-
չեւ որ երկինքն եւ երկիրս անց կենան, օրէնքիցը մի
կէտ կամ մէկ պզտիկ նշանագիր չի անցնիլ մինչեւ որ

19 բոլորը չ'կատարուի ։ Արդ՝ ով որ այս ամենափոքր
պատուիրանքներից մէկը քանդէ, և մարդկանց այն-
պէս սովորեցնէ , նա փոքրագոյն կ'կոչուի երկնքի
արքայութիւնումը. բայց նա որ կ'անէ և կ'սովորե-
ցընէ, նա մեծ կ'կոչուի երկնքի արքայութիւնումը։
20 Որովհետև ասում եմ ձեզ, Եթէ չ'աւելանայ ձեր
արդարութիւնն աւելի քան դպիրներինը և փարիսե-
ցիներինը, բնաւ չէք մտնիլ երկնքի արքայութիւնը։
21 Լսել էք , որ առաջիններին ասուեցաւ , Մի
սպանիր, և ով որ սպանէ , պարտական կ'լինի դա-
22 տաստանին ։ Բայց ես ասում եմ ձեզ թէ Ամեն
ով որ զուր տեղը բարկանայ իր եղբօրը , պարտա-
կան կ'լինի դատաստանին . և ով որ իր եղբօրն
ասէ Ցիմար , պարտական կ'լինի ատեանին . և ով
որ իր եղբօրն ասէ Մորոս , պարտական կ'լինի գե-
23 հենի կրակին ։ Արդ՝ եթէ սեղանի վերայ մատու-
ցանես քո ընծան, և այնտեղ յիշես , թէ քո եղ-
24 բայրը քեզ դէմ մէկ բան ունի , թո՛ղ այնտեղ քո
ընծան սեղանի առաջին . և գնա առաջ հաշտուիր
քո եղբօր հետ . և յետոյ եկ ընծադ մատուցրու ։
25 Քո ոսոխի հետ շուտով միաբանուիր , քանի որ
նորա հետ ճանապարհումն ես . որ մի գուցէ ոսո-
խը քեզ դատաւորին մատնէ , և դատաւորը քեզ
26 մատնէ դահճին, և բանտը գցուիս ։ Ճշմարիտ ա-
սում եմ քեզ, դուրս չես գալ այն տեղից , մին-
չեւ որ վերջի նաքարակիտը չ'վճարես ։
27 Լսել էք որ ասուեցաւ առաջիններին, Թէ Շնու-
28 թիւն մի՛ անիր ։ Բայց ես ասում եմ ձեզ թէ
Ամեն ով որ մի կնկայ վերայ մտիկ տայ նորան ցան-
կանալու համար , նա արդէն շնացաւ նորա հետ
29 իր սրտի մէջ ։ Եւ եթէ քո աջ աչքը գայթակղե-
ցընում է քեզ , հանիր նորան և քեզանից դէն
գցիր, որովհետև լաւ է քեզ համար, որ քո անդամ-

ներից մէկը կորչի, և քո բոլոր մարմինը չ'գցուի գե-
30 հենը։ Եւ եթէ քո աջ ձեռքը գայթակղեցնում է
քեզ , կտրիր նորան և քեզանից դէն գցիր. որովհե-
տև լաւ է քեզ համար՝ որ քո անդամներից մէկը կոր-
31 չի, և քո բոլոր մարմինը չ'գցուի գեհենը։ Էլի աս-
ուեցաւ՝ թէ Ով որ իր կնիկն արձակէ, Թող արձակ-
32 ման թուղթ տայ նորան ։ Բայց ես ասում եմ ձեզ
թէ Ով որ իր կնիկն արձակէ առանց պոռնկութեան
պատճառի, նա նորան շնութիւն անել է տալիս. և
ով որ մի արձակուածին առնէ, շնութիւն է անում ։
33 Դարձեալ լսել էք որ ասուեցաւ առաջիններին,
Սուտ երդում մի անիր , բայց Տիրոջը վճարիր քո
34 երդումները։ Բայց ես ասում եմ ձեզ . Բնաւ երդում
մի՛ անիր . ո՛չ երկնքովը՝ որովհետև նա աթոռ է
35 Աստուծոյ . Եւ ոչ երկրովը՝ որովհետև պատուան-
դան է նորա ոտների. և ո՛չ Երուսաղէմովը՝ որ քա-
36 ղաք է մեծ թագաւորի։ Եւ ոչ քո գլխովը երդում
արա , որովհետև կարող չես մէկ մազ սպիտակ
37 անել կամ սեւ ։ Բայց ձեր խօսքը լինի , Այո՝
այո, և Ոչ՝ ոչ . և սորանից աւելին չարից է ։
38 Լսել էք՝ որ ասուեցաւ Աչքի տեղ աչք, և ատա-
39 մի տեղ ատամ ։ Բայց ես ասում եմ ձեզ . Չարին
հակառակ մի կենաք , այլ ով որ ապտակ տայ քո
40 աջ երեսին, միւսն էլ նորան դարձրու ։ Եւ ով որ
ուզէ քեզ հետ դատ վարել և քո շապիկն առնել,
41 քո բաճկոնն էլ թող նորա մօտ ։ Եւ ով որ քեզ
պահակ բռնած մէկ մղոն քշէ , նորա հետ երկու-
42 սը գնա ։ Քեզանից բան ուզողին տուր . քեզանից
փոխ առնել կամեցողից երես մի դարձնիր ։
43 Լսել էք որ ասուեցաւ, Քո ընկերին սիրիր, և քո
44 թշնամին ատիր։ Բայց ես ասում եմ ձեզ, Սիրեցէք
ձեր թշնամիներին , օրհնեցէք ձեզ անիծողներին .
բարի արէք ձեզ ատողներին. և աղօթք արէք ձեզ

45 չարչարողների և ձեզ հալածողների համար. Որ
որդիք լինիք ձեր Հօրն, որ երկնքումն է. որովհետև
նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների
վերայ, և անձրև է բերում արդարների և անի-
46 րաւների վերայ։ Որովհետև՝ եթէ ձեզ սիրողներին
սիրէք, ի՞նչ վարձք ունիք. չէ՞ որ մաքսաւորներն
47 էլ նոյնն են անում։ Եւ եթէ միայն ձեր եղբայր-
ներին բարեւ տաք, ի՞նչ աւելի բան էք անում.
48 չէ՞ որ մաքսաւորներն էլ են այնպէս անում։ Արդ
դուք կատարեալ եղիք, ինչպէս ձեր Հայրը որ
երկնքումն է, կատարեալ է։

ԳԼ. Զ

1 Զգոյշ կացէք, որ ձեր ողորմութիւնը մարդկանց
առաջին չ'անէք, նորանցից տեսնուելու համար, ե-
թէ ոչ՝ վարձք չ'ունիք ձեր Հօրից որ երկնքումն է։
2 Արդ՝ երբոր ողորմութիւն անես, փող մի հնչեցնիր
քո առաջին. ինչպէս կեղծաւորներն են անում ժո-
ղովարանների մէջ և փողոցների մէջ, որ փառաւոր-
ուին մարդկանցից. Ճշմարիտ ասում եմ ձեզ. Նո-
3 րանք իրանց վարձքն առած են։ Բայց դու երբոր
ողորմութիւն անես, թող չ'իմանայ քո ձախ ձեռքը,
4 թէ ինչ է գործում քո աջը. Որպէս զի քո ողոր-
մութիւնը ծածուկ լինի, և քո Հայրն՝ որ ծածուկ
տեղը տեսնում է, յայտնապէս կ'հատուցանէ քեզ։
5 Եւ երբոր աղօթք անես, չ'լինիս ինչպէս կեղծա-
ւորները, որովհետև նորանք սիրում են ժողովարան-
ների մէջ և հրապարակների անկիւններումը կանգ-
նած աղօթք անել, որ մարդկանց երևան։ Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, որ նորանք իրանց վարձքն
6 առած են։ Բայց դու երբոր աղօթք անես, մտիր
քո սենեակը և դուռդ փակած աղօթք արա դէպի

քո Հայրը, որ ծածուկումն է. և քո Հայրն՝ որ ծա-
ծուկ տեղը տեսնում է, յայտնապէս կ'հատուցանէ
7 քեզ։ Եւ աղօթք անելիս շատախօս մի՛ լինիք ինչ-
պէս հեթանոսները, որովհետև նորանք կարծում
8 են, թէ իրանց շատ խօսելու համար կ'լսուին։ Արդ
նորանց մի նմանիք. որովհետև ձեր Հայրը գիտէ թէ
ի՞նչ բաներ պէտք են ձեզ, ձեր նորանից խընդ-
9 րելուցն առաջ։ Արդ դուք այսպէս աղօթք արէք.
Մեր Հայր, որ երկնքումն ես. սուրբ լինի քո
10 անունը. Գայ քո արքայութիւնը, լինի քո կամքը,
11 ինչպէս երկնքումն՝ այնպէս էլ երկրի վերայ։ Մեր
12 ամեն օրուայ հացը տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ
մեր պարտքերը, ինչպէս մենք էլ թողում ենք մեր
13 պարտականներին։ Եւ մի տանիր մեզ փորձութեան
մէջ. այլ ազատիր մեզ չարից. որովհետև քոնն է
թագաւորութիւնը և զօրութիւնը և փառքը յա-
14 ւիտեանս. ամէն։ Որովհետև եթէ դուք մարդկանց
իրանց յանցանքները թողէք, ձեր երկնաւոր Հայրն
15 էլ ձեզ կ'թողէ։ Իսկ եթէ դուք մարդկանց չէք
թողնիլ նորանց յանցանքները, ձեր Հայրն էլ չի
թողնիլ ձեր յանցանքները։
16 Եւ երբոր ծոմ էք պահում, տրտում մի լինիք
ինչպէս կեղծաւորները, որովհետև նորանք իրանց
երեսները տխրեցնում են, որ մարդկանց ծոմ պա-
հող երևան. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ նո-
17 րանք իրանց վարձքն առած են։ Բայց դու ծոմ
18 պահելիս, գլուխդ օծիր և երեսդ լուա. Որ մարդ-
կանց ծոմ պահող չ'երևաս, այլ քո Հօրը՝ որ
ծածուկումն է. և քո Հայրը, որ ծածուկ տեղը
տեսնում է, յայտնապէս կ'հատուցանէ քեզ։
19 Ձեզ համար գանձեր մի դիզէք երկրիս վերայ.
ուր որ ցեցն և ժանգն ապականում են, և ուր որ
20 գողերը պատը ծակում են և գողանում։ Բայց ձեզ

համար գանձեր դիզեցէք երկնքումը, ուր ո՛չ ցեց
և ո՛չ ժանգ չեն ապականում, և ուր գողերը պատ
21 չեն ծակում և չեն գողանում։ Որովհետև ինչ տեղ
որ ձեր գանձն է, այնտեղ կ՚լինի և ձեր սիրտը։
22 Մարմնի ճրագն աչքն է. արդ՝ թէ որ քո աչքը
պարզ լինի, քո բոլոր մարմինը լուսաւոր կ՚լինի։
23 Բայց թէ որ քո աչքը չար լինի, քո բոլոր մարմինը
խաւար կ՚լինի։ Ուրեմն՝ եթէ այն լոյսն որ քեզանում
24 է՝ խաւար է, ապա խաւարը ո՞րքան աւելի։ Ոչ ով չէ
կարող երկու տէրերի ծառայել. որովհետև կամ
մէկին կ՚ատէ և միւսին կ՚սիրէ, կամ մէկին կը
մեծարէ և միւսին կ՚արհամարհէ։ Չէք կարող Աս-
25 տուծուն ծառայել և մամոնային։ Սորա համար
ասում եմ ձեզ. հոգս մի՛ անէք ձեր կեանքի համար
թէ ի՞նչ պիտի ուտէք, և ի՞նչ պիտի խմէք. և ո՛չ
ձեր մարմնի համար՝ թէ ի՞նչ պիտի հագնիք։ Չէ՞ որ
կեանքը աւելի է կերակուրիցը, և մարմինը՝ հագուս-
26 տիցը։ Մտիկ արէք երկնքի թռչուններին, որ չեն
սերմում, և ոչ էլ հնձում, և ոչ ամբարների մէջ
ժողովում, և ձեր երկնաւոր Հայրը կերակրում է
նորանց. չէ՞ որ դուք նորանցից աւելի լաւ էք։
27 Հիմա՝ ձեզանից ո՞վ կարող է հոգս անելով իր հա-
28 սակի վերայ մէկ կանգուն աւելացնել։ Եւ հա-
գուստի համար ի՞նչ էք հոգս անում. մտիկ արէք
դաշտի շուշաններին, թէ ինչպէս են մեծանում. ոչ
29 ջանք են անում՝ և ոչ մանում։ Բայց ասում եմ
ձեզ, թէ Սողոմոնն էլ իր բոլոր փառքի մէջ նո-
30 րանց մէկի նման չ՚հագաւ։ Իսկ թէ որ դաշտի խոտը,
որ այսօր կայ և էգուց փուռն է գցվում, Աստուած
այնպէս է հագցնում, չէ՞ որ շատ աւելի ձեզ, թե-
31 րահաւատներ։ Ուրեմն հոգս մի անէք ասելով, թէ
ի՛նչ պիտի ուտենք, կամ ի՛նչ պիտի խմենք, կամ
32 ի՛նչ պիտի հագնենք։ Որովհետև այդ ամենքը հե-

թանոսներն են խնդրում. որովհետև ձեր երկնա-
ւոր Հայրը գիտէ որ այդ ամենը պէտք է ձեզ։
33 Սակայն առաջ Աստուծոյ արքայութիւնը և նորա
արդարութիւնը խնդրեցէք. և այդ ամենքը կ՚տրուի
34 ձեզ։ Ուրեմն էգուցվայ համար հոգս մի՛ անէք,
որովհետև էգուցվայ օրն իր համար հոգս կ՚անէ.
օրուայ համար բաւական է իր նեղութիւնը։

ԳԼ. Է

1 Մի դատէք, որ չ՚դատուիք։ (2) Որովհետև ինչ
դատաստանով որ դատում էք, նորանով պիտի
դատուիք. և ինչ չափով որ չափում էք, նորանով
3 կ՚չափուի ձեզ։ Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքի միջի
շիւղը տեսնում ես, և քո աչքի միջի գերանը չես
4 նշմարում, կամ ինչպէս կ՚ասես քո եղբօրը, Թող
շիւղը աչքիցդ հանեմ. և ահա քո աչքի մէջ գե-
5 րան կայ։ Կե՛ղծաւոր, առաջ քո աչքիցը գերանը
հանիր, և յետոյ մտիկ կ՚տաս քո եղբօր աչքիցը
6 շիւղը հանելու։ Սուրբ բանը շներին մի տաք, ոչ
էլ ձեր մարգարիտները գցեցէք խոզերի առաջին.
որ նորանց կոխ չ՚տան իրանց ոտքերովը և ետ
դառնան ձեզ պատառեն։
7 Խնդրեցէք և կ՚տրուի ձեզ. որոնեցէք և կ՚գտնէք,
8 դուռը թակեցէք և կ՚բացուի ձեզ։ Որովհետև ամեն
խնդրող առնում է, և որոնողը գտնում է. և դու-
9 ռը թակողին կ՚բացուի։ Կամ ո՞վ է ձեզանից այն
մարդն, որ եթէ նորանից իր որդին հաց ուզէ, մի՞-
10 թէ քար կ՚տայ նորան։ Եւ եթէ ձուկ ուզէ, մի՞-
11 թէ օձ կ՚տայ նորան։ Արդ՝ եթէ դուք չար լինե-
լով, գիտէք բարի պարգևներ տալ ձեր որդկան-
ցը. ո՞րքան աւելի ձեր Հայրը, որ երկնքումն է, բա-
րիքներ կ՚տայ նորանց, որ խնդրում են իրանից։

12 Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մար-
դիկ, այնպէս էլ դուք արէք նորանց. որովհետև
13 այս է օրէնքը և մարգարէները։ Նեղ դռնովը ներս
մտէք. որովհետև լայն է դուռը և ընդարձակ ճա-
նապարհը՝ որ կորուստն է տանում. և շատեր են
14 նորանով գնացողները։ *Քանի՜ նեղ է դուռը՝ և
նեղուածք է ճանապարհը, որ տանում է կեանքը.
և քիչ են նորան գտնողները։
15 Զգուշ կացէք սուտ մարգարէներիցը, որ գալիս
են ձեզ մօտ ոչխարների հանդերձներով, բայց ներ-
16 սեւանց յափշտակող գայլեր են։ Իրանց պտուղնե-
րիցը նորանց †ճանաչեցէք. մի՞թէ փշերից խաղող
17 են քաղում, կամ տատասկից՝ թուզ։ Այսպէս
ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար
18 ծառը չար պտուղ է բերում։ Չէ կարող բարի
ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը բարի
19 պտուղ բերել։ Ամեն ծառ որ բարի պտուղ չէ
20 բերում, կտրվում է և կրակի մէջ գցվում։ Ու-
րեմն իրանց պտուղներիցը †ճանաչեցէք նորանց։
21 Ոչ թէ ամեն ինձ Տէ՛ր, Տէ՛ր ասողը կ'մտնէ եր-
կընքի արքայութիւնը. այլ նա որ կատարում է
22 իմ Հօր կամքը, որ երկնքումն է։ Շատերը կ'ասեն
ինձ այն օրը, Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քո անունովը մար-
գարէացանք, և քո անունովը դեւեր հանեցինք,
և քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք։
23 Եւ ես այն ժամանակ պարզ կ'ասեմ նորանց, թէ
Երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք,
ով անօրէնութիւն գործողներ։
24 Արդ՝ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է և
նորանց կատարում, կ'նմանացնեմ նորան մի իմաս-
տուն մարդի որ իր տունը շինեց ժայռի վերայ։

*Ոմանք՝ քանզի

†Կամ՝ կ'ճանաչէք

25 Եւ անձրեւն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին,
քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և նա
չ'կործանուեցաւ. որովհետև ժայռի վերայ հաստատ-
26 ուած էր։ Եւ ամեն ով որ իմ այս խօսքերը լսում է
և նորանց չէ կատարում, նա կ'նմանուի մի անխելք
27 մարդի՝ որ իր տունը շինեց աւազի վերայ։ Եւ
անձրեւն էլ եկաւ, գետերն էլ վարարեցին, քա-
միներն էլ փչեցին, և այն տանը զարկեցին, և նա
կործանուեցաւ, և նորա կործանումը մեծ էր։
28 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս խօսքերը վերջա-
ցրեց, ժողովուրդները զարմանում էին նորա վար-
29 դապետութեան վերայ։ Որովհետև իշխանութիւն
ունեցողի պէս էր սովորեցնում նորանց, և ոչ թէ
դպիրների պէս։

ԳԼ. Ը

1 Եւ երբոր սարիցն իջաւ, շատ ժողովուրդներ գը-
2 նացին նորա ետեւիցը։ Եւ ահա մի բորոտ գալով
երկրպագում էր նորան և ասում. Տէ՛ր, թէ որ
3 կամենաս, կարող ես ինձ սրբել։ Եւ Յիսուսը ձեռ-
քը մեկնելով նորան դիպաւ և ասեց. Կամենում
եմ՝ սրբուիր. և նորա բորոտութիւնը շուտով սըր-
4 բուեցաւ։ Եւ Յիսուսն ասեց նորան. Զգուշ կաց՝
ոչ ոքի չ'ասես, այլ գնա քեզ ցոյց տուր քահանա-
յին և Մովսէսից հրամայուած ընծան մատուցրու,
նորանց վկայութիւն լինելու համար։
5 Եւ երբոր Յիսուսը մտաւ Կափառնայում, մի
հարիւրապետ եկաւ նորա մօտ, աղաչում էր նո-
6 րան, և ասում. Տէ՛ր, իմ ծառան անդամալոյծ
7 ընկած է տանը և չարաչար տանջւում է։ Յիսուսն
էլ ասեց նորան. Ես կ'գամ կ'բժշկեմ նորան։
8 Եւ հարիւրապետը պատասխանելով ասեց. Տէ՛ր,

1004 1937
...ичная Библ... 7/XI 1922
имен А. Мясн... Ա. ՄԱՍԻԱՆԻ ԱՆՎԱՆ

ես արժանի չեմ, որ իմ յարկի տակը մտնես, այլ
միայն մի խօսք ասիր՝ և իմ ծառան կ՚բժշկուի։
9 Որովհետև ես էլ իշխանութեան տակ լինող մարդ
եմ. և իմ ձեռքի տակ զինուորներ ունիմ. և ասում
եմ սորան՝ գնա, և գնում է, և ուրիշին՝ եկ, և
գալիս է. և ծառայիս՝ այս բանն արա, և անում
10 է։ Եւ երբոր Յիսուսը լսեց, զարմացաւ և ասեց
ետևիցը եկողներին. Ճշմարիտ ասում եմ ձեզ.
11 Իսրայէլի մէջ էլ այսպիսի հաւատք չ՚գտայ։ Եւ
ասում եմ ձեզ, որ շատերը արևելքից և արև-
մուտքից կ՚գան, և կ՚նստեն Աբրահամի և Իսահա-
կի և Յակոբի հետ երկնքի արքայութիւնումը,
12 իսկ արքայութեան որդիքը դուրս կ՚գցուին դրսի
խաւարը, այնտեղ կ՚լինի լացը և ատամների կրճը-
13 տելը։ Եւ Յիսուսն ասեց հարիւրապետին. Գնա, և
ինչպէս որ հաւատացիր՝ թող այնպէս լինի քեզ.
և նորա ծառան առողջացաւ այն ժամումը։
14 Եւ երբոր Յիսուսն եկաւ Պետրոսի տունը, տե-
15 սաւ նորա զոքանչը պառկած ջերմում էր։ Եւ նո-
րա ձեռքիցը բռնեց, և ջերմը թողեց նորան, և
նա վերկացաւ և ծառայում էր նորանց։
16 Եւ երբոր իրիկուն եղաւ, շատ դիւահարներ բերին
նորա մօտ, և նա խօսքով հանեց ոգիները, և ամեն
17 հիւանդներին բժշկեց. Որ կատարուի Եսայի մար-
գարէի ձեռով ասուածը, որ ասում է. Նա մեր
հիւանդութիւնները վեր առաւ և մեր ցաւերը կրեց։
18 Եւ երբոր Յիսուսը շատ ժողովուրդներ տեսաւ
իրան չորս կողմովը, հրամայեց այն կողմը գնալ։
19 Եւ մէկ դպիր մօտենալով նորան ասեց. Վարդա-
պետ, ես քո ետևիցը կ՚գամ, ո՛ր տեղ էլ որ դը-
20 նաս։ Յիսուսն էլ ասեց նորան, Աղուէսները որ-
ջեր ունին, և երկնքի թռչունները՝ բոյներ. բայց
21 մարդի Որդին տեղ չ՚ունի որ իր գլուխը դնէ։ Եւ

նորա աշակերտներից մի ուրիշն ասեց նորան. Տէ՛ր,
ինձ հրաման տուր՝ գնամ առաջ իմ հօրը թաղեմ։
22 Եւ Յիսուսը նորան ասեց. Դու իմ ետևից եկ,
և թող մեռելները թաղեն իրանց մեռելներին։
23 Եւ երբոր նա նաւը մտաւ, նորա աշակերտները
24 գնացին նորա ետևից։ Եւ ահա մեծ ալէկոծում
եղաւ ծովի մէջ, որ նաւն էլ ծածկվում էր ա-
25 լիքներիցը. և ինքը քնած էր։ Եւ նորա աշակերտ-
ները մօտենալով նորան զարթնեցրին և ասեցին.
26 Տէ՛ր, փրկիր մեզ, կորչում ենք։ Եւ նորանց ա-
սեց. Ինչո՞ւ վախկոտ էք, սակաւահաւատներ։
Այն ժամանակ վերկացաւ սաստեց քամիներին և
27 ծովին, և մեծ խաղաղութիւն եղաւ։ Իսկ մար-
դիկը զարմացան և ասում էին, Սա ի՞նչպիսի
մէկն է՝ որ քամիները և ծովն էլ հնազանդում
են սորան։
28 Եւ երբոր նա այն կողմը՝ Գերգեսացիների երկիրն
անցաւ, երկու դիւահարներ պատահեցին նորան,
գերեզմաններիցը դուրս եկած և շատ չար, մինչև
որ մէկը չէր կարող այն ճանապարհովն անցնել։
29 Եւ ահա աղաղակեցին և ասեցին. Քեզ ի՞նչ բան
կայ մեզ հետ, Յիսուս՝ Աստուծոյ Որդի, եկել ես
30 այստեղ ժամանակից առաջ մեզ տանջելո՞ւ։ Եւ
նորանցից հեռու շատ խոզերի երամակ կար՝ որ
31 արածում էր։ Եւ դևերն աղաչում էին նորան
և ասում. Եթէ մեզ հանում ես, հրաման տուր
32 մեզ այն խոզերի երամակը գնալու։ Եւ նորանց
ասեց՝ Գնացէք. և նորանք դուրս եկան և գնացին
խոզերի երամակի մէջ. և ահա խոզերի բոլոր երա-
մակն այն գահավէժ տեղից վազեց ծովը, և ջրե-
33 րի մէջ մեռան։ Եւ խոզարածները փախան, և
քաղաքը գնալով պատմեցին ամենը և դիւահար-
34 ների բաներն էլ։ Եւ ահա բոլոր քաղաքը դուրս

եկաւ Յիսուսի առաջը, և երբոր նորան տեսան,
աղաչեցին որ գնայ իրանց սահմաններիցը։

ԳԼ. Թ

1 Եւ նա նաւը մտնելով անցաւ այն կողմը, և եկաւ
2 իր քաղաքը։ Եւ ահա մի անդամալոյծ բերին նո-
րա մօտ՝ մահճի մէջ դրած. և Յիսուսը նորանց հա-
ւատքը տեսնելով՝ անդամալոյծին ասեց. Քաջա-
3 ցիր, որդեակ, քո մեղքերը ներուած են քեզ։ Եւ
ահա դպիրներից ոմանք իրանց մէջ ասեցին. Դա
4 հայհոյում է։ Եւ Յիսուսը նորանց խորհուրդները
տեսնելով, ասեց. Ի՞նչու էք չար բաներ խորհում
5 ձեր սրտերումը։ Որովհետև ո՞րն է աւելի հեշտ.
ասել՝ Քո մեղքերը թողուած են քեզ, թէ ասել՝
6 Վեր կաց և ման եկ։ Բայց որ իմանաք, թէ մար-
դի Որդին իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղ-
քեր թողելու. այն ժամանակ անդամալոյծին ա-
սեց. Վեր կաց քո մահիճը վեր առ և գնա քո
7 տունը։ Եւ նա վերկացաւ գնաց իր տունը։ (8) Եւ
ժողովուրդները տեսնելով զարմացան, և Աստու-
ծուն փառաւորում էին, որ այնպիսի իշխանու-
9 թիւն է տուել մարդկանց։ Եւ Յիսուսն այն տե-
ղից առաջ գնալով, տեսաւ մի մարդ, որ նստած
էր մաքսատանը, անունը Մատթէոս, և նորան
ասեց. Իմ ետեւից ե՛կ, և նա վերկացաւ գնաց
10 նորա ետեւից։ Եւ եղաւ՝ երբոր նա տանը սեղանի
վերայ նստած էր, և ահա շատ մաքսաւորներ և
մեղաւորներ եկել բազմել էին Յիսուսի և նորա
11 աշակերտների հետ։ Եւ փարիսեցիները տեսնելով՝
նորա աշակերտներին ասեցին. Ի՞նչու համար ձեր
վարդապետը ուտում է մաքսաւորների և մեղա-
12 ւորների հետ։ Բայց երբոր Յիսուսը լսեց, նորանց

ասեց, Առողջները բժշկի կարօտ չեն, այլ հիւանդ-
13 ները։ Գնացէք սովորեցէք՝ Բէ ի՞նչ է. Ողորմու-
թիւն եմ կամենում՝ և ոչ զոհ. որովհետև ես չեմ
եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին՝
ապաշխարութեան։
14 Այն ժամանակ Յովհաննէսի աշակերտները նորա
մօտ եկան և ասեցին. Ի՞նչու մենք և փարիսեցի-
ները շատ ծոմ ենք պահում, և քո աշակերտները
15 ծոմ չեն պահում։ Եւ Յիսուսը նորանց ասեց.
Մի՞թէ կարող են հարսնիքի որդիքը սուգ անել,
քանի որ փեսան նորանց հետ է. բայց օրեր կ՚գան,
որ փեսան նորանցից վեր կ՚առնուի, և այն ժամա-
16 նակ ծոմ կ՚պահեն։ Ոչ ով նոր լաթից կարկա-
տան չի գցիլ հին հանդերձի վերայ, որովհետև
նորա լրութիւնը (չուլչափանը) կ՚առնէ հանդերձիցը,
և պատառուածքն էլ աւելի չար կ՚լինի։
17 Եւ նոր գինին էլ հին տիկերի մէջ չեն ածիլ.
ապա թէ ոչ՝ տիկերը կ՚պատառուին՝ և գինին կը
թափուի, և տիկերը կ՚կորչին. այլ նոր գինին նոր
տիկերի մէջ կ՚ածեն, և երկուսն էլ կ՚պահուին։
18 Նա այս բաները նորանց հետ խօսելիս, ահա մի
իշխան եկաւ նորան երկրպագեց և ասեց. Իմ աղ-
ջիկը արդէն մեռաւ, միայն թէ եկ և ձեռքդ նո-
19 րա վերայ դիր՝ և կ՚ապրի։ Եւ Յիսուսը վերկացաւ
գնաց նորա ետեւից և նորա աշակերտներն էլ։
20 Եւ ահա մի տասներկու տարուայ տեռատե-
կին ետեւիցը մօտ գալով նորա հանդերձի ծայրին
21 դիպաւ։ Որովհետև իր մտքումն ասում էր Եթէ
22 միայն նորա հանդերձին դիպչիմ՝ կ՚փրկուիմ։ Բայց
երբոր Յիսուսը ետ դարձաւ, նորան տեսաւ և ա-
սեց՝ Քաջացիր, դուստր, քո հաւատքը քեզ ազ-
րեցրեց. և կինը ազատուեցաւ նոյն ժամից։
23 Եւ երբոր Յիսուսն եկաւ իշխանի տունը և տե-

24 սաւ փող փչողները և շփոթուած ամբոխը, Նո-
րանց ասեց. Դէ՛ն գնացէք, որովհետև այդ աղջիկը
մեռած չէ, այլ քնած է: Եւ նորանք ծաղր էին
25 անում նորան: Եւ երբոր ամբոխը դուրս արուե-
ցաւ, ներս մտաւ՝ նորա ձեռքիցը բռնեց, և
26 աղջիկը վերկացաւ: Եւ այս համբաւը դուրս եկաւ
այն բոլոր երկիրը:
27 Եւ Յիսուսն այն տեղից անցնելիս, երկու կոյր
նորա ետևից գնում էին, աղաղակում և ասում.
28 Ողորմիր մեզ, Որդի Դաւիթի: Եւ երբոր տունը
մտաւ, կոյրերը նորա մօտ եկան. և Յիսուսը նո-
րանց ասեց. Հաւատո՞ւմ էք թէ կարող եմ այդ
29 անել, նորան ասեցին. Այո՛, Տէր: Այն ժամանակ
նորանց աչքերին դիպաւ և ասեց. Ձեր հաւատքի
30 պէս թող լինի ձեզ: Եւ նորանց աչքերը բացուե-
ցան: Եւ Յիսուսը նորանց սաստեց և ասեց. Զգո՛յշ
31 կացէք, ոչ ոք չ՚իմանայ: Իսկ նորանք դուրս գնա-
ցին՝ հռչակեցին նորան այն բոլոր երկրումը:
32 Եւ երբոր նորանք դուրս էին գնում, ահա մի
33 համր դիւահար մարդ բերին նորա մօտ: Եւ երբոր
դեւը դուրս հանուեցաւ, համրը խօսեց. և ժողո-
վուրդները զարմացան և ասեցին թէ երբէք Իս-
34 րայէլի մէջ այսպիսի բան չ՚երեւեցաւ: Բայց փա-
րիսեցիներն ասում էին թէ Դեւերի իշխանովն է
հանում դեւերը:
35 Եւ Յիսուսն ամեն քաղաքները և գիւղերը ման
էր գալիս, նորանց ժողովարաններումը սովորեցնե-
լով և արքայութեան աւետարանը քարոզելով և
ժողովրդի մէջ ամեն ցաւն և ամեն հիւանդութիւ-
36 նը բժշկելով: Եւ նա ժողովուրդներին տեսնելով,
գթաց նորանց վերայ, որ յոգնած և ցիրուցան ե-
37 ղած էին, ինչպէս ոչխարներ որ հովիւ չ՚ունէին: Այն
ժամանակ իր աշակերտներին ասեց. Հունձքը շատ

38 է, բայց մշակները քիչ: Արդ՝ աղաչեցէք հնձի Տի-
րոջը, որ մշակներ հանէ իր հունձի մէջ:

ԳԼ. Ժ

1 Եւ իր տասներկու աշակերտներին իր մօտ կան-
չեց, և նորանց իշխանութիւն տուաւ պիղծ հոգի-
ների վերայ, որ նորանց հանեն, և ամեն ցաւ և
ամեն հիւանդութիւն բժշկեն:
2 Եւ այն տասներկու առաքեալների անուններն
այս են. առաջինը Սիմոն՝ Պետրոս կոչուածը, և
3 նորա եղբայրն Անդրէաս. Յակոբոս Զեբեդեանը և
նորա եղբայրը՝ Յովհաննէս. Փիլիպպոս և Բարթո-
ղոմէոս. Թովմաս և Մատթէոս մաքսաւորը. Յա-
կոբոս Ալփեանը. և Ղեբէոսը որ Թադէոս մական-
4 ուանուեցաւ, Սիմոն Կանանացին՝ և Յուդա Իսկա-
րիովտացին, որ մատնեց էլ նորան:
5 Այս տասներկուսին ուղարկեց Յիսուսը, նորանց
պատուէր տուաւ և ասեց. Հեթանոսների ճանա-
պարհ չ՚գնաք, և Սամարացիների քաղաք չ՚մտնէք.
6 Բայց աւելի գնացէք Իսրայէլի տան կորած ոչխարնե-
7 րի մօտ: Եւ երբոր կ՚գնաք, քարոզեցէք և ասեցէք,
8 թէ երկնքի արքայութիւնը մօտեցել է: Հիւանդ-
ներին բժշկեցէք, բորոտներին սրբեցէք, մեռել-
ներին յարուցէք, դեւերը հանեցէք. ձրի առել
9 էք, ձրի տուէք: Վեր չ՚առնէք ոսկի, և ոչ ար-
10 ծաթ, և ոչ պղինձ ձեր գօտիների մէջ. Ոչ
ճանապարհի պարկ, և ոչ երկու հանդերձ, և ոչ
կօշիկներ, և ոչ գաւազան. որովհետև մշակն իր կե-
11 րակուրին արժանի է: Եւ որ քաղաք՝ կամ գիւղ
որ մտնէք, հարցրէք թէ նորանում ո՛վ է ար-
ժանի, և այնտեղ կացէք՝ մինչև որ դուրս գնաք:
12 Եւ երբոր տունը կ՚մտնէք, բարեւ տուէք նո-

13 րան ։ Եւ եթէ այն տունն արժանի է, ձեր բա-
րեւը նորա վերայ գայ, բայց եթէ արժանի չէ,
14 ձեր բարեւը ետ դառնայ դէպի ձեզ։ Եւ ով որ
ձեզ չ'ընդունի և ոչ էլ ձեր խօսքին ականջ դնէ,
երբոր այն տանիցը կամ այն քաղաքիցը դուրս
15 գնաք, ձեր ոտների փոշին թօթափեցէք։ Ճշմարիտ
ասում եմ ձեզ, որ Սոդոմացիների և Գոմորացի-
ների երկրի համար աւելի հեշտ կ'լինի դատաստա-
նի օրումը քան թէ այն քաղաքին։

16 Ահա ես ուղարկում եմ ձեզ ինչպէս ոչխարներ
գայլերի մէջ, ուստի խորագէտ եղէք ինչպէս օ-
17 ձերը, և միամիտ՝ ինչպէս աղաւնիները։ Եւ զգոյշ
կացէք մարդկանցից. որովհետև ձեզ դատաստանի
կ'մատնեն, և իրանց ժողովարանների մէջ կ'ծեծեն
18 ձեզ, Եւ կուսակալների և թագաւորների առաջը
կ'տարուիք իմ պատճառովը, նորանց և հեթանոս-
19 ներին վկայութիւն լինելու համար։ Բայց երբոր մատ-
նեն ձեզ, հոգս մի անէք՝ թէ ի՞նչպէս կամ ի՞նչ պի-
տի խօսիք. որովհետև նոյն ժամումը կ'տրուի ձեզ
20 ինչ որ պիտի խօսիք։ Որովհետև չէ թէ դուք էք
խօսողները, բայց ձեր Հօր Հոգին, որ ձեզանում
21 խօսում է։ Եւ եղբայր եղբօրը մահի կ'մատնէ, և
հայրը որդուն, և որդիքը վեր կ'կենան իրանց ծնող-
22 ների վերայ, և կ'սպաննեն նորանց։ Եւ ամենից
կ'ատուիք իմ անունի համար. բայց ով որ կ'համ-
23 բերէ մինչև վերջը, նա կ'ապրի։ Եւ երբոր հալա-
ծեն ձեզ այս քաղաքումը, փախէք ուրիշը. որովհե-
տև ճշմարիտ ասում եմ ձեզ, դուք չէք վերջա-
ցնիլ Իսրայէլի քաղաքները մինչև որ մարդի Որդին
24 կ'գայ։ Աշակերտը վարդապետիցը բարձր չէ, և
25 ո՛չ ծառան բարձր է իր տէրիցը։ Բաւական է աշա-
կերտին որ իր վարդապետի նման լինի, և ծա-
ռային՝ իր տիրոջ նման։ Եթէ տան տիրոջը Բէեղ-

զեբուղ կոչեցին, ապա ո՞րքան աւելի նորա ընտա-
26 նիքը։ Ուստի մի վախենաք նորանցից. որովհետև ոչ-
ինչ չ'կայ ծածուկ որ չ'յայտնուի, և թագուն բան՝
27 որ չ'իմացուի։ Ինչ որ ասում եմ ձեզ խաւարու-
մը, լոյսի մէջ ասեցէք. և ինչ որ ականջում լը-
28 սում էք, կտուրների վերայ քարոզեցէք։ Եւ մի վա-
խենաք նորանցից, որ մարմինն սպանում են և հո-
գին չեն կարող սպանել, բայց աւելի վախեցէք նո-
րանից, որ կարող է հոգին էլ մարմինն էլ կորցնել
29 գեհենի մէջ։ Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի են
ծախվում, և նորանցից մէկը չի ընկնիլ գետինն
30 առանց ձեր Հօր։ Իսկ ձեր գլխի ամեն մազերն էլ
31 համարուած են։ Ուրեմն մի վախենաք. դուք շատ
32 ճնճղուկներից աւելի լաւ էք։ Արդ՝ ամեն ով որ
ինձ մարդկանց առաջին դաւանէ, ես էլ նորան
33 կ'դաւանեմ իմ Հօր առաջին որ երկնքումն է։ Եւ
ով որ ինձ ուրանայ մարդկանց առաջին, ես էլ
կ'ուրանամ նորան իմ Հօր առաջին որ երկնքումն
34 է։ Մի կարծէք թէ ես եկայ երկրիս վերայ խաղա-
ղութիւն գցելու. չ'եկայ խաղաղութիւն գցելու,
35 այլ սուր։ Որովհետև եկայ բաժանելու մարդն իր
հօր դէմ, և աղջիկն՝ իր մօր դէմ, և հարսն՝ իր
36 սկեսրի դէմ։ Եւ մարդի թշնամիներն իր ընտա-
37 նիքը կ'լինին։ Ով որ հօրը կամ մօրը ինձանից ա-
ւելի է սիրում, նա ինձ արժանի չէ. և ով որ
որդին կամ աղջիկն ինձանից աւելի է սիրում, նա
38 ինձ արժանի չէ։ Եւ ով որ չէ առնում իր խաչն
39 և իմ ետևից գալիս, նա ինձ արժանի չէ։ Ով որ
իրան անձը գտնում է՝ կ'կորցնէ նորան. և ով որ
իր անձն ինձ համար կորցրեց՝ նա կ'գտնէ նորան։
40 Ով որ ձեզ ընդունում է, ինձ է ընդունում. և
ով որ ինձ ընդունում է, ինձ ուղարկողին է ըն-
41 դունում։ Ով որ մարգարէ է ընդունում մարգա-

րէի անունով, նա մարգարէի վարձք կ'առնէ. և
ով որ արդար է ընդունում արդարի անունով,
42 արդարի վարձք կ'առնէ : Եւ ով որ այս փոքրնե-
րից մէկին միայն մի աման ցուրտ ջուր խմեցնէ ա-
շակերտի անունով, ճշմարիտ ասում եմ ձեզ, նա
չի կորցնիլ իր վարձքը :

ԳԼ. ԺԱ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսն իր տասնևերկու աշա-
կերտներին պատուէր տալը վերջացրեց, այն տե-
ղից գնաց նորանց քաղաքներումը սովորեցնելու և
քարոզելու :
2 Եւ Յովհաննէսը բանտումը Քրիստոսի գործերը
3 լսելով, իր աշակերտներից երկուսին ուղարկեց: Եւ
նորան ասեց, Դո՞ւ ես այն որ գալու էիր, թէ ու-
4 րիշի սպասենք : Եւ Յիսուսը պատասխան տուաւ
և նորանց ասեց. Գնացէք Յովհաննէսին պատմեցէք
5 ինչ որ լսում էք և տեսնում էք : Կոյրերը տեսնում
են, և կաղերը գնում են, բորոտները սրբվում են, և
խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առ-
նում, և աղքատներին աւետարան է քարոզվում.
6 Եւ երանելի է նա, որ ինձ վերայ չի գայթակղուիլ:
7 Բայց երբոր նորանք գնացին, Յիսուսն սկսեց ժո-
ղովուրդներին ասել Յովհաննէսի համար. Ի՞նչ տես-
նելու դուրս գնացիք անապատը, մի եղէ՞գ քամուց
8 շարժուած : Ապա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք.
մի մա՞րդ փափուկ շորերով հագուած. ահա փա-
փուկ հագնողները թագաւորների տներումն են :
9 Բայց ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մի մարգա-
րէ՞. այո, ասում եմ ձեզ, մարգարէից էլ աւե-
10 լին : Որովհետև սա այն է՝ որի համար գրուած է.
Ահա ես իմ հրեշտակը ուղարկում եմ քո երեսի

առաջին, որ քո ճանապարհը քո առաջին պատ-
11 րաստէ : Ճշմարիտ ասում եմ ձեզ կանանց ծը-
նածների մէջ չէ վեր կացել Յովհաննէս Մկրտչից
մի մեծը, բայց երկնքի արքայութեան միջի փոքրը
12 նորանից մեծ է: Բայց Յովհաննէս Մկրտչի օրերից
մինչև հիմա երկնքի արքայութիւնն ուժով է առնը-
13 վում, և ուժովները յափշտակում են նորան: Որով-
հետև բոլոր մարգարէները և օրէնքը մինչեւ Յով-
14 հաննէսը մարգարէացան : Եւ եթէ կամենում էք
15 ընդունիլ՝ նա Եղիան է, որ գալու էր: Ով որ լսելու
16 ականջ ունի՝ թող լսէ : Բայց ո՞ւմ նմանեցնեմ
այս ազգը, այն երեխաների նման է, որ փողոցնե-
17 րումը նստած իրանց ընկերներին կանչում են, Եւ
ասում. Մենք փող փչեցինք ձեզ համար, և դուք
պար չ'եկաք. մենք ողբացինք ձեզ համար, և դուք
18 կոծ չ'արիք: Որովհետև Յովհաննէսն եկաւ, ոչ ու-
տում էր և ոչ խմում էր. և ասում են, Դեւ կայ
19 նորանում. Մարդի Որդին եկաւ, ուտում է և
խմում է, և ասում են. Ահա ուտող և գինի խմող
մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ,
և իմաստութիւնն արդարացաւ իր որդիներից :
20 Այն ժամանակ նա սկսեց նախատել այն քաղաք-
ներին, որոնցում եղան նորա հրաշքների շատե-
21 րը, որ չ'ապաշխարեցին : Վայ քեզ, Քորազին.
վայ քեզ, Բեթսայիդա. որովհետև եթէ Տիւրոսի և
Սիդոնի մէջ եղած լինէին այն հրաշքները, որ ձեր
մէջ եղան, շատոնց քրձով և մոխրով ապաշխա-
22 րել էին : Բայց ասում եմ ձեզ, Տիւրոսին և Սի-
դոնին աւելի հեշտ կ'լինի դատաստանի օրումը
23 քան թէ ձեզ: Եւ դու, Կափառնայում, որ մին-
չեւ երկինքը բարձրացած ես, մինչեւ դժոխքը կ'ցա-
ծանաս. որովհետև եթէ Սոդոմի մէջ եղած լինէին
այն հրաշքները որ քեզանում եղան, մինչեւ այսօր

24 դեռ կ'մնային ։ Բայց ասում եմ ձեզ, որ Սոդո-
մացիների երկրի համար աւելի հեշտ կ'լինի դա-
տաստանի օրումը քան թէ քեզ ։
25 Այն ժամանակը Յիսուսը պատասխան տուաւ և
ասեց. Գոհանում եմ քեզանից, ով Հայր՝ երկնքի
և երկրի Տէր, որ իմաստուններից և գիտուննե-
րից այս բաները ծածկեցիր և երեխաներին յայտ-
26 նեցիր ։ Այո, ով Հայր. որովհետև այսպէս հաճոյ
27 եղաւ քո առաջին ։ Ամեն բան ինձ տրուեցաւ իմ
Հօրից. և ոչ ով չէ ճանաչում Որդիին՝ բայց
միայն Հայրը. և ոչ ով չէ ճանաչում Հօրը՝ բայց
միայն Որդին. և ում որ Որդին կամենայ յայտնել։
28 Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ և բեռնա-
29 ւորուածներ, և ես հանգիստ կ'տամ ձեզ ։ Ձեզ
վերայ առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. ո-
րովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր
30 անձերի համար հանգստութիւն կ'գտնէք։ Որովհե-
տև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև ։

ԳԼ. ԺԲ

1 Այն ժամանակ Յիսուսը շաբաթ օրը գնաց ար-
տերի միջովը, և նորա աշակերտները սովեցին,
2 և սկսեցին հասկ պոկել և ուտել ։ Եւ երբոր փա-
րիսեցիները տեսան, նորան ասեցին. Ահա քո ա-
շակերտներն անում են ինչ որ արժան չէ շաբաթ
3 օրն անել ։ Նա էլ ասեց նորանց. Դուք չէ՞ք կար-
դացել, թէ ինչ արաւ Դաւիթը, երբոր ինքը սո-
4 վեց և նորա հետ լինողներն էլ. Ինչպէս Ա-
ստուծոյ տունը մտաւ և առաջաւորութեան հացը
կերաւ, որ օրինաւոր չէր նորան ուտել, և ոչ էլ
նորա հետ լինողներին, բայց միայն քահանաներին։
5 Կամ չէ՞ք կարդացել օրէնքումը, որ քահանաները

շաբաթ օրերումն տաճարի մէջ շաբաթը պղծում
6 են, և անմեղ են։ Բայց ես ասում եմ ձեզ՝ որ տա-
7 ճարից էլ մեծն է այստեղ ։ Բայց եթէ գիտէիք՝
ի՛նչ է "Ողորմութիւն եմ ուզում և ոչ թէ զոհ."
8 դուք չէիք դատապարտիլ անմեղներին։ Որովհետև
մարդի Որդին շաբաթի էլ տէրն է ։
9 Եւ Յիսուսը այն տեղից գնաց՝ եկաւ նորանց ժո-
10 ղովարանը ։ Եւ ահա մի մարդ կար՝ ձեռքը չորա-
ցած. Նորան հարցրին և ասեցին թէ Շաբաթ օ-
րը արժա՞ն է բժշկութիւն անել, որ նորանից
11 չարախօսեն ։ Եւ նա ասեց նորանց. Ո՞վ կ'լինի ձե-
զանից այն մարդը, որ մէկ ոչխար ունենայ, և ե-
թէ նա շաբաթ օրը ընկնի փոսի մէջ, միթէ չի
12 բռնիլ նորան և վեր հանիլ։ Ապա ո՞րքան առա-
ւել է մարդը ոչխարից. ապա ուրեմն արժան է
13 շաբաթ օրը բարիք գործել։ Այն ժամանակ ասեց
այն մարդին. Ձեռքդ մեկնիր, նա էլ մեկնեց, և
14 նա ողջ եղաւ ինչպէս միւսը ։ Բայց փարիսեցինե-
րը դուրս գնացին և նորա դէմ խորհուրդ արին,
թէ ինչպէս կորցնեն նորան ։
15 Եւ Յիսուսն իմանալով՝ հեռացաւ այն տեղից, և
շատ ժողովուրդներ գնացին նորա ետևից. և նա նո-
16 րանց ամենին բժշկեց։ Եւ նորանց սաստեց՝ որ նորան
17 յայտնի չ'անեն. Որ կատարուի Եսայի մարգարէի
18 ձեռով ասուածը որ ասում է. Ահա իմ ծառան,
որին ես ընտրեցի, և իմ սիրելին՝ որին իմ անձը
հաւանել է. Իմ Հոգին նորա վերայ կ'դնեմ, և նա
19 հեթանոսներին իրաւունք կ'պատմէ ։ Նա ոչ կ'հա-
կառակէ, և ոչ կ'աղաղակէ, և ոչ էլ հրապարակ-
20 ների մէջ մէկը նորա ձայնը կ'լսէ ։ Ջախջախուած
եղէգը չի փշրիլ, և հանգչող պատրոյգը չի հանգ-
ցնիլ մինչև որ դատաստանը յաղթութեան հանէ ։
21 Եւ հեթանոսները յոյս կ'դնեն նորա անունին ։

22 Այն ժամանակը մի կոյր և համր դիւահար բեր-
ուեցաւ նորա մօտ, և նա նորան բժշկեց. այնպէս
23 որ կոյրը և համրը խօսեց էլ տեսաւ էլ: Եւ բոլոր
ժողովուրդները զարմացան և ասում էին. Միթէ
24 սա է Դաւիթի որդին. Բայց փարիսեցիները լսելով
ասեցին. Դա դեւերն ուրիշ բանով չէ հանում, բայց
25 միայն դեւերի իշխան Բէեղզեբուղի ձեռովը: Եւ
Յիսուսը նորանց խորհուրդներն իմանալով, ասեց
նորանց. Ամեն թագաւորութիւն որ իր դէմ բա-
ժանուած է՝ կ'աւերուի, և ամեն քաղաք կամ
26 տուն որ իր դէմ բաժանուած է՝ չի մնալ: Եւ
թէ որ սատանան սատանային հանում է, իր դէմ
բաժանուեցաւ. էլ ի՞նչպէս նորա թագաւորու-
27 թիւնը կ'կենայ: Եւ եթէ ես Բէեղզեբուղով եմ
հանում դեւերը, ձեր որդիքն ի՞նչով են հանում.
սորա համար նորանք կ'լինին ձեր դատաւորնե-
28 րը: Բայց եթէ ես Աստուծոյ Հոգւովը եմ հա-
նում դեւերը, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը
29 ձեզ վերայ հասել է: Կամ ի՞նչպէս մէկը կարող
է զօրաւոր մարդի տունը մտնել՝ և նորա կարա-
սիները յափշտակել. եթէ առաջ չ'կապէ այն զօ-
30 րաւորին, և յետոյ նորա տունը կ'յափշտակէ: Ով
որ ինձ հետ չէ, ինձ հակառակ է. և ով որ ինձ
31 հետ չէ ժողովում՝ ցրւում է: Սորա համար ա-
սում եմ ձեզ. Ամեն մեղք և հայհոյանք կ'թող-
ուի մարդկանց, բայց Հոգւոյն դէմ հայհոյանքը չի
32 թողուիլ մարդկանց: Եւ ո՛վ որ մարդի Որդիին
դէմ բան ասէ՝ կ'թողուի նորան. բայց ով որ
Սուրբ Հոգիին դէմ ասէ, նորան չի թողուիլ ոչ
33 այս աշխարհքումը և ոչ գալու աշխարհումը: Կամ
ծառը բարի արէք՝ և նորա պտուղն էլ բարի, կամ
ծառը չար արէք՝ և նորա պտուղն էլ չար. որով-
34 հետև ծառը պտղից կ'ճանաչուի: Իժերի ձագուկ-

ներ, դուք ի՞նչպէս կարող էք բարի խօսել՝ որ
չար էք. որովհետև սրտի աւելացածից կ'խօսի
35 բերանը: Բարի մարդն իր սրտի բարի գանձից
բարիքներ կ'հանէ, և չար մարդը չար գանձից
36 չար բաներ կ'հանէ: Բայց ասում եմ ձեզ, թէ
ամեն դատարկ խօսքի համար, որ մարդիկ խօսեն՝
37 դատաստանի օրը համար պիտի տան: Որովհետև
քո խօսքից կ'արդարանաս, և քո խօսքից կ'դա-
տապարտուիս:

38 Այն ժամանակ դպիրներից և փարիսեցիներից
ոմանք պատասխան տուին և ասեցին. Վարդա-
39 պետ, ուզում ենք քեզանից մի նշան տեսնել: Նա
էլ պատասխան տուաւ և նորանց ասեց. Չար և
շնացող ազգը նշան է ուզում, և նշան չի տրուիլ
նորան, բայց միայն Յովնան մարգարէի նշանը:
40 Որովհետև ինչպէս Յովնանը երեք օր և երեք գիշեր
կէտի փորումն էր, այնպէս մարդի Որդին երեք օր
41 և երեք գիշեր երկրի սրտումը կ'լինի: Նինուէ-
ացի մարդիկը վեր կ'կենան դատաստանումը այս
ազգի հետ, և կ'դատապարտեն սորան. որ նո-
րանք Յովնանի քարոզութիւնովն ապաշխարեցին.
42 և ահա Յովնանից մեծն է այստեղ: Հարաւի թա-
գուհին վեր կ'կենայ դատաստանումը այս ազգի
հետ, և կ'դատապարտէ սորան. որ երկրի ծայրե-
րից եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. և
ահա Սողոմոնից էլ մեծն է այստեղ:

43 Եւ երբոր պիղծ ոգին դուրս է գալիս մարդից,
անջուր տեղերում ման է գալիս հանգիստ խընդ-
44 րելով, և չէ գտնում: Այն ժամանակ ասում է,
Ես դառնամ իմ տունը՝ որտեղից դուրս եկայ,
և գալիս է նորան գտնում է պարապ, սրբուած և
45 յարդարուած: Այն ժամանակ գնում է իրանից
էլ աւելի չար եօթն ուրիշ ոգիներ է առնում իր

հետ, և մտնում բնակվում է այնտեղ. և այն մար-
դի յետինն աւելի չար է լինում քան թէ առա-
ջինը. այսպէս կ'լինի և այս չար ազգին։
46 Եւ նա տակաւին ժողովուրդների հետ խօսելիս,
ահա նորա մայրը և նորա եղբայրները դուրսը կանգ-
47 նած՝ ուզում էին նորա հետ խօսել։ Եւ մէկն ա-
սեց նորան. Ահա մայրդ և եղբայրքդ դուրսը կանգ-
48 նած՝ ուզում են քեզ հետ խօսել։ Նա էլ պա-
տասխան տուաւ նրան ասողին և ասեց. Ո՞վ է իմ
49 մայրը, և ո՞վ են իմ եղբայրները։ Եւ իր ձեռքը
դէպի իր աշակերտները մեկնելով ասեց. Ահա իմ
50 մայրը և իմ եղբայրները։ Որովհետև ով որ իմ Հօր
կամքը կատարէ որ երկնքումն է, նա է իմ եղ-
բայրը, քոյրը և մայրը։

ԳԼ. ԺԳ

1 Այն օրը Յիսուսը տանիցը դուրս գալով ծովի ե-
2 զերքումը նստեց։ Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ
ժողովուեցան, մինչև որ նա նաւը մտաւ նստեց.
3 և բոլոր ժողովուրդը ծովեզրին կանգնել էր։ Եւ նո-
րանց հետ շատ բաներ խօսեց առակներով ասելով.
4 Ահա սերմ ցանողը դուրս գնաց սերմ ցանելու.
և նա սերմելիս՝ մի քանիսը ճանապարհի մօտ ըն-
կաւ, և երկնքի թռչուններն եկան և կերան նո-
5 րանց։ Եւ ուրիշներն ընկան քարքարուտ տեղ,
ուր շատ հող չ'կար, և շուտով բուսան՝ խոր հող
6 չ'ունենալու պատճառովը։ Բայց երբոր արեգակը
ծագեց, տաքացաւ. և որովհետև արմատ չ'ունէին
7 չորացան։ Եւ ուրիշներն ընկան փշերի մէջ, և փը-
8 շերը դուրս եկան և խեղդեցին նորանց։ Եւ ուրիշ-
ներն ընկան բարի երկրի վերայ, և պտուղ էին
տալիս, որը հարիւր, և որը վաթսուն, և որը երե-

9 սուն։ Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
10 Եւ աշակերտները մօտ գալով ասեցին նորան,
11 Ինչու առակներով ես խօսում նորանց հետ։ Նա
էլ պատասխան տուաւ և ասեց նորանց. Որովհե-
տև ձեզ տրուած է երկնքի արքայութեան խոր-
հուրդները գիտենալ, բայց նորանց չէ տրուած։
12 Որովհետև ով որ ունի՝ նորան կ'տրուի և կ'աւե-
լանայ. և ով որ չ'ունի, ունեցածն էլ կ'առնուի
13 նորանից։ Նորա համար եմ առակներով խօսում
նորանց հետ, որ տեսնելով չեն տեսնում, և լսե-
14 լով չեն լսում, և չեն իմանում։ Եւ նորանց վե-
րայ կատարվում է Եսայիի մարգարէութիւնն, որ
ասում է. Լսելով կ'լսէք, և չէք իմանալ, և տես-
15 նելով կ'տեսնէք, և չէք տեսնիլ։ Որովհետև թան-
ձրացաւ այս ժողովրդի սիրտը, և իրանց ականջնե-
րովը ծանր լսեցին, և իրանց աչքերը խփեցին, մի
գուցէ աչքերով տեսնեն՝ և ականջներով լսեն՝ և
սրտով իմանան, և ետ դառնան, և ես նորանց բը-
16 ժշկեմ։ Բայց երանելի են ձեր աչքերը՝ որ տես-
17 նում են, և ձեր ականջները՝ որ լսում են։ Որով-
հետև ճշմարիտ ասում եմ ձեզ, որ շատ մարգա-
րէներ և արդարներ ցանկացան տեսնել ինչ որ
տեսնում էք՝ և չ'տեսան, և լսել ինչ որ լսում
էք՝ և չ'լսեցին։
18 Դուք հիմա լսեցէք սերմ ցանողի առակը։
19 Այն ամենից՝ որ արքայութեան խօսքը լսում է և
չէ իմանում, գալիս է չարը՝ և յափշտակում նո-
րա սրտի մէջ սերմածը. սա է ճանապարհի մօտ
20 սերմածը։ Եւ քարքարուտ տեղը սերմածը նա է,
որ խօսքը լսելիս շուտով ուրախութիւնով ընդու-
21 նում է նորան։ Բայց արմատ չ'ունի իր մէջ, այլ
ժամանակաւոր է. և երբոր նեղութիւն կամ հա-
լածանք են լինում այն խօսքի համար, շուտով

22 գայթակղում է։ Եւ փշերի մէջ սերմածը նա է,
որ խօսքը լսում է, և այս աշխարհքի հոգսերը, և
հարստութեան խաբեբայութիւնը խեղդում են
23 այն խօսքը, և անպտուղ է լինում։ Բայց բարի
երկրումը սերմածը նա է, որ խօսքը լսում է և ի-
մանում. որ և պտուղ է տալիս, որը հարիւր եւ
որը վաթսուն և որը երեսուն։
24 Մի ուրիշ առակ նորանց առաջին դրաւ և ա-
սեց. Երկնքի արքայութիւնը նմանուեցաւ մի մար-
25 դի, որ իր արտումը բարի սերմ ցանեց, Եւ մար-
դիկը քնելիս, նորա թշնամին եկաւ և ցորենի մէջ
26 որոմներ ցանեց և գնաց։ Եւ երբոր խոտը բուսաւ
և պտուղ տուաւ, այն ժամանակ որոմներն էլ ե-
27 րեւեցան։ Եւ տան տիրոջ ծառաները մօտ գալով
ասեցին նորան. Տէ՛ր, մի՞թէ դու քո արտումը բա-
րի սերմ չ'սերմեցիր, ապա ի՞նչ տեղից են որոմնե-
28 րը։ Նա էլ ասեց նորանց. Թշնամի մարդ է արել
այդ։ Ծառաներն էլ ասեցին նորան. Հիմա կամե-
նո՞ւմ ես որ գնանք քաղենք նորանց դուրս հանենք։
29 Նա էլ ասեց, Ոչ. մի գուցէ որոմները քաղելիս,
30 ցորենն էլ նորանց հետ պոկէք։ Թող տուէք որ
երկուսը միասին մեծանան մինչև հունձքը, և հնձի
ժամանակին հնձողներին կ'ասեմ. Առաջ որոմները
քաղեցէք և նորանց խուրձ խուրձ կապեցէք այրե-
լու, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ։
31 Մի ուրիշ առակ դրաւ նորանց առաջին և ա-
սեց. Երկնքի արքայութիւնը նման է մանանեխի
հատի, որ մի մարդ առաւ իր արտի մէջ սեր-
32 մեց. Որ ամեն սերմունքից փոքրն է, բայց երբոր
կ'աճի, բոլոր բանջարներից մեծ է, և ծառ է լի-
նում, այնպէս որ երկնքի թռչունները գալիս են
նորա ճղերումը հանգիստ առնում։
33 Մի ուրիշ առակ խօսեց նորանց. Երկնքի ար-

քայութիւնը նման է խմորի՝ որ մի կնիկ առաւ՝ և
երեք չափ ալիւրի մէջ թագցրեց մինչև որ բոլորը
խմորուեցաւ։
34 Այս բոլորը Յիսուս առակներով խօսեց ժողո-
վուրդների հետ, և առանց առակի չէր խօսում
35 նորանց հետ, Որ մարգարէի ձեռով ասուածը կա-
տարուի՝ որ ասում է, Առակներով կ'բանամ իմ
բերանը, և դուրս կ'բղխեմ աշխարհքի սկզբից
ծածկուածները։
36 Այն ժամանակ Յիսուսը ժողովուրդներին թողե-
լով եկաւ տուն, և նորա աշակերտները նորա մօտ
եկան և ասեցին. Մեկնիր մեզ արտի որոմների ա-
37 ռակը։ Նա էլ պատասխան տուաւ և ասեց նո-
38 րանց, Բարի սերմը ցանողը մարդի Որդին է։ Եւ
արտը աշխարհքս է, և բարի սերմը նորանք են, որ
արքայութեան որդիքն են. և որոմները չարի որ-
39 դիքն են։ Եւ թշնամին, որ նորանց սերմեց, սա-
տանան է. և հունձքն աշխարհքի վերջն է, և հըն-
40 ձողները հրեշտակներն են։ Արդ՝ ինչպէս որ որոմ-
ները հաւաքվում են և կրակով այրվում, այնպէս
41 կ'լինի աշխարհքիս վերջումը։ Մարդի Որդին կ'ու-
ղարկէ իր հրեշտակներին, և նորա արքայութիւ-
նիցը կ'հաւաքեն բոլոր գայթակղութիւնները և
42 անօրէնութիւն գործողներին. Եւ կ'դցեն նորանց
կրակի փռան մէջ. այնտեղ կ'լինի լացը և ատամ-
43 ների կրճտելը։ Այն ժամանակ արդարները կ'ծա-
գեն ինչպէս արեգակը իրանց Հօր արքայութեան
մէջ։ Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
44 Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը մի
արտի մէջ թագցրուած գանձի, որ նորան մի մարդ
գտնելով թագցրեց, և ուրախութիւնիցը գնում
ամեն ինչ որ ունի ծախում է, և արտը առնում։
45 Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը մի

վաճառական մարդի, որ գեղեցիկ մարգարիտներ
46 է որոնում. Որ մի թանկագին մարգարիտ գտնե-
լով, գնաց ամեն ինչ որ ունէր՝ ծախեց, և առաւ
նորան ։
47 Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը ծովը
գցուած ուռկանի, որ ամեն տեսակից ժողովում
48 է. Որ երբոր լցուեցաւ՝ ցամաքը հանեցին, ու նըս-
տեցին լաւերը ժողովեցին ամանների մէջ, և ան-
49 պէտքները դուրս գցեցին։ Այսպէս կ՚լինի աշխարհ-
քի վերջումը. հրեշտակները դուրս կ՚գան և կ՚ջո-
50 կեն չարերին արդարների միջից. Եւ կ՚գցեն նորանց
կրակի փռան մէջ. այնտեղ կ՚լինի լացը և ատամ-
ների կրճտելը ։
51 Յիսուսը ասեց նորանց. Իմացա՞ք այդ բոլորը։
52 Ասեցին Նորան. Այո, Տէր։ Նա էլ ասեց նորանց.
Սորա համար ամեն դպիր, որ երկնքի արքայու-
թեանն է աշակերտել, նման է տանտէր մարդի,
որ հանում է իր գանձիցը նոր և հին բաներ ։
53 Եւ եղաւ՝ երբոր Յիսուսը այս առակները վերջա-
54 ցրեց, գնաց այնտեղից ։ Եւ գալով իր գաւառը,
նորանց ժողովարանումը սովորեցնում էր նորանց,
այնպէս որ զարմանում էին նորանք և ասում, ո՞ր-
տեղից է սորան այս իմաստութիւնը և զօրութիւն-
55 ները ։ Չէ՞ որ սա հիւսան որդին է. չէ՞ որ սորա
մայրը Մարիամ է կոչվում. և եղբայրները՝ Յակո-
56 բոս և Յովսէս եւ Սիմօն և Յուդա. Եւ չէ՞ որ սո-
րա ամեն քոյրերը մեզ մօտ են, ապա ո՞րտեղից է
57 սորան այս ամեն բաները ։ Եւ գայթակղում էին
նորա վերայ ։ Յիսուսն էլ նորանց ասեց. Մի մար-
գարէ անարգուած չէ, բայց միայն իր գաւառի և
58 իր տան մէջ ։ Եւ այնտեղ շատ զօրութիւններ
չ՚արաւ նորանց անհաւատութեան պատճառովը ։

ԳԼ. ԺԴ

1 Այն ժամանակը Հերովդէս չորրորդապետը Յիսու-
2 սի համբաւը լսեց. Եւ ասեց իր ծառաներին. Նա
Յովհաննէս Մկրտիչն է. նա մեռելների միջից յա-
րութիւն է առել, և նորա համար զօրութիւններ
են գործվում նորանով ։
3 Որովհետև Հերովդէսը բռնեց Յովհաննէսին, կա-
պեց նորան և բանտի մէջ դրաւ՝ իր եղբայր՝ Փի-
4 լիպպոսի կնոջ Հերովդիայի համար։ Որովհետև Յով-
հաննէսը նորան ասում էր, Թէ Արժան չէ քեզ,
5 որ դու դորան ունենաս ։ Եւ ուզում էր նորան
սպանել, բայց ժողովրդիցը վախենում էր, որովհե-
6 տեւ նորան ընդունում էին ինչպէս մարգարէ։ Եւ
երբոր Հերովդէսի ծննդեան օրն եղաւ, Հերովդիայի
աղջիկը հանդէսի մէջ պարեց՝ և հաճոյ թուեցաւ
7 Հերովդէսին ։ Ապա նա էլ երդումով խոստացաւ
8 նորան տալ ինչ որ ուզէ։ Նա էլ առաջ իր մօրից
խրատ առնելով՝ ասեց. Տուր այստեղ սկուտեղի
9 վերայ Յովհաննէս Մկրտչի գլուխը։ Եւ թագաւորը
տրտմեցաւ, բայց իր երդումների և իր հետ նըս-
10 տողների համար հրամայեց որ տրուի։ Եւ ուղար-
11 կեց բանտումը գլխատեց Յովհաննէսին։ Եւ նորա
գլուխը բերին սկուտեղի վերայ և տուին աղջկանը.
12 և նա տարաւ իր մօրը։ Եւ նորա աշակերտներն ե-
կան՝ մարմինը վեր առան և թաղեցին նորան. և
եկան պատմեցին Յիսուսին ։
13 Եւ Յիսուսը լսելով այնտեղից նաւով գնաց ա-
ռանձին մի անապատ տեղ։ Եւ ժողովուրդներն
երբոր լսեցին, այն քաղաքներից ոտով գնացին նո-
րա ետևից ։
14 Եւ երբոր Յիսուսը դուրս եկաւ, շատ ժողովուրդ-

տեսաւ և գթաց նորանց վերայ և բժշկեց նորանց
15 հիւանդներին։ Եւ երբոր իրիկուն եղաւ, աշա-
կերտները նորա մօտ եկան և ասեցին. Տեղս անա-
պատ է, և ժամանակն արդէն անցել է. ժողովուրդ-
ներն արձակիր որ գնան գիւղերն իրանց համար կե-
16 րակուր առնեն։ Յիսուսն էլ ասեց նորանց. Պէտք
17 չէ որ գնան, դուք տուէք նորանց ուտել։ Նորանք
էլ ասեցին նորան. Մենք այստեղ բ՟ն չ'ունինք,
18 բայց միայն հինգ հաց և երկու ձուկ։ Նա էլ ա-
19 սեց. Նորանք այստեղ բերէք ինձ մօտ։ Եւ հրա-
մայեց որ ժողովուրդները խոտերի վերայ նստեն. և
հինգ հացը և երկու ձուկն առաւ՝ դէպի երկինքը
նայեց՝ օրհնեց, և կտրեց, հացերը տուաւ աշա-
20 կերտներին, և աշակերտները ժողովուրդներին։ Եւ
ամենքը կերան և կշտացան, և կտորների աւելա-
21 ցածը տասներկու քթոց լիքը վեր առան։ Եւ ու-
տողները հինգ հազարի չափ մարդիկ էին բացի կա-
նանցից և երեխաներից։
22 Եւ Յիսուսը շուտով իր աշակերտներին ստիպեց,
որ նաւը մտնեն և իրանից առաջ անցնեն այն կող-
մը, մինչև որ ինքն այն ժողովուրդներին արձակէ։
23 Եւ երբոր ժողովուրդներին արձակեց, վեր ելաւ
սարը, առանձին աղօթք անելու. և երբոր իրիկուն
24 եղաւ, միայն ի՟ն էր այնտեղ։ Բայց նաւն արդէն
ծովի մէջ տեղն էր և ալէկոծվում էր, որովհետև
25 քամին ներհակ էր։ Եւ գիշերի չորրորդ պահին Յի-
26 սուսը ծովի վերայ գնալով նորանց մօտ եկաւ։ Եւ
աշակերտներն երբոր տեսան նորան ծովի վերայ գը-
նալիս, շփոթուեցան և ասեցին, թէ աչքի երևոյթ
27 բան է, և վախից աղաղակեցին։ Եւ Յիսուսը շու-
տով խօսեց նորանց հետ և ասեց. Քաջ եղէք, ես
28 եմ՝ մի վախենաք։ Եւ Պետրոսը պատասխան տուաւ
նորան և ասեց, Տէ՛ր, եթէ դու ես, հրամայիր ինձ,

29 որ ջրերի վերայով քեզ մօտ գամ։ Նա էլ ասեց,
Եկ։ Եւ Պետրոսը նաւիցը իջնելով ջրերի վերայովը
30 գնաց, որ գայ Յիսուսի մօտ։ Եւ տեսնելով որ քա-
մին սաստիկ է, վախեցաւ, և երբոր սկսեց ընկղ-
31 մուիլ, աղաղակեց և ասեց, Տէ՛ր, փրկիր ինձ։ Եւ
շուտով Յիսուսը իր ձեռքը մեկնեց՝ նորան բռնեց
և ասեց նորան. Թերահաւատ, ի՞նչու երկմտեցիր։
32 Եւ երբոր նաւը մտան, քամին հանդարտեց։
33 Եւ նաւի մէջ լինողները մօտ գալով նորան երկըր-
պագեցին և ասեցին. Ճշմարիտ՝ դու Աստուծոյ
Որդին ես։
34 Եւ միւս կողմն անցնելով եկան Գեննեսարէթի
35 երկիրը։ Եւ այնտեղի մարդիկը նորան ճանաչելով,
ուղարկեցին բոլոր շրջակայքը և ամեն հիւանդ-
36 ները նորա մօտ բերին։ Եւ նորան աղաչում էին՝ որ
միայն նորա հանդերձի ծայրին դիպչեն. և նորանք
որ դիպան, *փրկուեցան։

ԳԼ. ԺԵ

1 Այն ժամանակ Երուսաղէմացի դպիրները և փա-
2 րիսեցիները Յիսուսի մօտ եկան և ասեցին. Ի՞նչու
համար քո աշակերտները ծերերի աւանդութիւնը
զանց են անում, որովհետև իրանց ձեռքերը չեն
3 լուանում, երբոր հաց են ուտում։ Նա էլ պա-
տասխան տուաւ և ասեց նորանց. Ապա դուք ի՞ն-
չու էք Աստուծոյ պատուիրանքը զանց անում ձեր
4 աւանդութեան համար։ Որովհետև Աստուած պատ-
5 ուիրեց և ասեց. Պատուիր քո հօրը և մօրը։ Եւ
իր հօրը կամ մօրը †բամբասողը մահով մեռնի։
6 Բայց դուք ասում էք. Թէ Ո՛վ որ հօրը կամ մօրը

---

*Այսինքն՝ բժշկուեցան։ †կամ՝ անիծողը

սէ՝ պատարագ է այն որ ինձանից պիտի շահուե-
իր, նա թող չ'պատուէ իր հօրը և իր մօրը: Եւ
ձեր աւանդութեան համար Աստուծոյ պատուէրը
7 խափանել էք: Կեղծաւորներ, լաւ մարգարէացաւ
8 ձեր մասին Եսայիան ասելով. Այս ժողովուրդը ի-
րան բերանովս է մօտենում ինձ, և շրթունքներովս
է ինձ պատւում, բայց իրանց սիրտն ինձանից հե-
9 ռացած ջոկուած է: Զուր տեղն են պաշտում ինձ՝
վարդապետութիւններ սովորեցնելով, որ մարդ-
10 կանց պատուէրներ են: Եւ ժողովուրդներն իրան
մօտ կանչելով, ասեց նորանց. Լսեցէք և իմացէք.
11 Ոչ թէ բերանը մտնողն է պղծում մարդին, այլ
բերանիցը դուրս եկողը՝ նա է պղծում մարդին:
12 Այն ժամանակ նորա աշակերտները մօտ գալով
ասեցին նորան. Գիտե՞ս որ փարիսեցիներն այն խօս-
13 քը լսելով գայթակղուեցին: Նա էլ պատասխան
տուաւ և ասեց. Ամեն տունկ, որ իմ երկնաւոր
14 Հայրը չ'տնկեց, կ'պոկուի: Թող տուէք նորանց.
կոյր առաջնորդներ են կոյրերի, և երբոր կոյրը կոյ-
րին առաջնորդէ, երկուսն էլ փոսի մէջ կ'ընկնեն:
15 Պետրոսը նորան պատասխան տուաւ և ասեց. Այս
16 առակը մեկնիր մեզ: Յիսուսն էլ ասեց. Դո՞ւք էլ
17 տակաւին անխելք էք: Տակաւին չէ՞ք հասկանում,
թէ ամեն ինչ որ բերանն է մտնում, փորն է գը-
18 նում և արտաքնոցն է գցվում: Բայց բերանիցը
դուրս եկող բաները սրտիցն են դուրս գալիս, և
19 նորանք են մարդին պղծում: Որովհետև սրտիցը
դուրս են գալիս չար խորհուրդներ, սպանութիւն-
ներ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւն-
ներ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ:
20 Սորանք են մարդին պղծողը, բայց անլուայ ձեռ-
քով ուտելը մարդին չէ պղծում:
21 Եւ Յիսուսը այնտեղից դուրս եկաւ գնաց Տիւ-

22 րոսի և Սիդոնի կողմերը: Եւ ահա մի Քանանացի
կին այն սահմաններից դուրս եկած աղաղակում
էր նորան և ասում. Ողորմիր ինձ, Տէ՛ր, Դաւիթի
23 Որդի, իմ աղջիկը չարաչար դիւահարվում է: Եւ
նա նորան մէկ խօսք պատասխան չ'տուաւ. և նորա
աշակերտները մօտ գալով աղաչում էին նորան և
ասում. Արձակիր դորան, որովհետև մեր ետևիցն
24 աղաղակում է: Նա էլ պատասխան տուաւ և ա-
սեց. Ես չեմ ուղարկուել՝ եթէ ոչ Իսրայէլի տան
25 կորած ոչխարների մօտ: Այն կինն էլ եկաւ՝ նորան
26 երկրպագում էր և ասում. Տէ՛ր, օգնիր ինձ: Նա
էլ պատասխան տուաւ և ասեց. Լաւ չէ երեխա-
27 ների հացն առնել և շներին գցել: Նա էլ ասեց.
Այո, Տէր, սակայն շներն էլ իրանց տէրերի սեղա-
28 նից ընկած փշրանքներիցն են ուտում: Այն ժա-
մանակ Յիսուսը պատասխան տուաւ և ասեց նո-
րան. Ով կին, մեծ է քո հաւատքը. քեզ լինի
ինչպէս ուզում ես. և նորա աղջիկը բժշկուեց
նոյն ժամից:
29
Եւ Յիսուսը այնտեղից գնալով Գալիլեայի ծովի
30 մօտ եկաւ, և վեր ելաւ սարը՝ այնտեղ նստեց: Եւ
շատ ժողովուրդներ եկան նորա մօտ, որ իրանց
հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամ-
ներ, և ուրիշ շատեր, և նորանց գցեցին Յիսուսի
31 ոտները, և նա նորանց բժշկեց: Մինչև որ ժողո-
վուրդները զարմանում էին, տեսնելով համրերին
խօսելիս, հաշմանդամներին առողջ, կաղերին գը-
նալիս և կոյրերին տեսնելիս. և փառաւորեցին Իս-
րայէլի Աստուծուն:
32
Եւ Յիսուսը իր աշակերտները մօտը կանչելով
ասեց. Գութս շարժում է այս ժողովրդի վերայ,
որովհետև արդէն երեք օր է իմ մօտս են և բան
չ'ունին որ ուտեն. և նորանց չեմ ուզում սոված

ճանապարհ գցել, մի գուցէ նուաղեն ճանապար-
33 հումը: Եւ նորա աշակերտները նորան ասեցին.
Ո՞րտեղից է մեզ այս անապատումը այնչափ հաց,
34 որ այդքան ժողովուրդը կշտացնենք: Եւ Յիսուսը
նորանց ասեց. Քանի՞ հաց ունիք. նորանք էլ ասե-
35 ցին, Եօթը, և մի քանի փոքր ձկներ: Եւ նա հրա-
36 մայեց ժողովրդին, որ գետնի վերայ նստեն: Եւ այն
եօթն հացը և ձկներն առաւ, գոհացաւ, կոտրեց և
իր աշակերտներին տուաւ, և աշակերտները ժողո-
37 վրդին: Եւ ամենքը կերան և կշտացան. և կտոր-
ների աւելացածը եօթը զամբիւղ լիքը վեր առան:
38 Եւ ուտողները չորս հազար մարդիկ էին՝ կանան-
ցից և երեխաներից ջոկ:
39 Եւ ժողովուրդներն արձակելուց յետոյ մտաւ
նաւը և եկաւ Մագդաղէի սահմանները:

ԳԼ. ԺԶ

1 Եւ փարիսեցիները և Սադուկեցիները նորա մօտ
եկան, և փորձելով նորանից ուզում էին որ եր-
2 կնքից մի նշան ցոյց տայ նորանց: Նա էլ պա-
տասխան տուաւ և ասեց նորանց. Իրիկուն դառած
ժամանակ ասում էք՝ Պարզ կ՚լինի, որովհետև եր-
3 կինքը կարմրել է: Եւ առաւօտը՝ Այսօր մրրիկ կը
լինի, որովհետև երկինքը պղտորած կարմրացել է:
Կե՛ղծաւորներ, երկնքի երեսը գիտէք քննել, բայց
4 ժամանակների նշանները չէ՞ք կարող: Չար և շնա-
ցող ազգը նշան է խնդրում. և նշան չի տրուիլ
նորան, բայց միայն Յովնան մարգարէի նշանը: Եւ
նորանց թողեց գնաց:
5 Եւ նորա աշակերտները այն կողմը գնալիս մոռա-
6 ցան հաց վեր առնել: Եւ Յիսուսը նորանց ասեց.
Տեսէք և զգուշ կացէք փարիսեցիների և Սադու-

7 կեցիների խմորիցը: Իսկ նորանք իրանց միջումը
միտք էին անում և ասում թէ Հաց չենք վեր ա-
8 ռել: Եւ Յիսուսը այս իմանալով ասեց. Ի՞նչու էք
միտք անում ձեր միջումը, թե՛րահաւատներ, թէ
9 հաց չէք վեր առել: Տակաւին չէ՞ք իմանում, և
չէ՞ք էլ յիշում այն հինգ հացը հինգ հազար մարդ-
10 կանցը, և քանի՞ քթոց վեր առաք: Ոչ էլ այն
եօթը հացը չորս հազար մարդկանցը, և քանի՞ զամ-
11 բիւղ վեր առաք. Ի՞նչպէս չէք իմանում, որ հացի
համար չ՚ասեցի ձեզ՝ զգուշ կենալ փարիսեցիների
12 և Սադուկեցիների խմորիցը: Այն ժամանակ հաս-
կացան, որ չ՚ասեց հացի խմորիցն զգուշ կենալ,
այլ փարիսեցիների և Սադուկեցիների վարդապե-
տութիւնիցը:
13 Եւ Յիսուսը դուրս գնաց Փիլիպպեայ Կեսարիայի
կողմերը, և իր աշակերտներին հարցնում էր և ա-
սում. Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, որ
14 մարդի Որդին լինի: Նորանք էլ ասեցին. Ոմանք՝ Թէ
Յովհաննէս Մկրտիչն է. իսկ միւսները՝ Եղիան. ու-
րիշներն էլ՝ Երեմիան, կամ մարգարէների մէկը:
15 Նորանց ասեց. Իսկ դուք ո՞վ էք ասում ինձ հա-
16 մար, թէ լինիմ: Սիմօն Պետրոսը պատասխան տուաւ
և ասեց. Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ
17 Որդին: Եւ Յիսուսը պատասխան տուաւ և ասեց
նորան. Երանի քեզ, Սիմօն՝ Յովնանի որդի, որով-
հետև մարմինը և արիւնը չ՚յայտնեց քեզ, բայց
18 իմ Հայրը որ երկնքումն է: Ես էլ ասում եմ քեզ,
որ դու ես *Պետրոս, և այդ վէմի վերայ կ՚շինեմ
իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն յաղթիլ նո-
19 րան: Եւ ես կ՚տամ քեզ երկնքի արքայութեան
բանալիները, և այն որ կապես երկրի վերայ, կապ-

*Այսինքն՝ վէմ.

ուած կ՚լինի երկնքումը. և այն որ երկրի վերայ
20 արձակես, արձակուած կ՚լինի երկնքումը։ Այն
ժամանակ իր աշակերտներին պատուիրեց, որ ոչ
ոքի չ՚ասեն, թէ նա է Քրիստոսը։
21 Այնուհետև Յիսուսը սկսեց աշակերտներին յայտ-
նել, թէ պէտք է նորան Երուսաղէմ գնալ և ծե-
րերից և քահանայապետներից և դպիրներից
շատ չարչարանքով չարչարուիլ, սպանուիլ և եր-
22 րորդ օրը յարութիւն առնել։ Եւ Պետրոսը նորան
մի կողմ տանելով սկսեց նորան յանդիմանել և
23 ասել՝ Քաւ լիցի քեզ, Տէ՛ր, այդ չ՚լինի քեզ։ Եւ նա
դառնալ՝ ասեց Պետրոսին. Յետս գնա, սա՛տանայ,
դու գայթակղութիւն ես ինձ. որովհետև դու
միտք չես անում Աստուծոյ՝ այլ մարդկանց բաները։
24 Այն ժամանակ Յիսուսը իր աշակերտներին ա-
սեց. Եթէ մէկը կամենում է իմ ետևից գալ,
թող իր անձն ուրանայ և իր խաչն առնէ, և իմ
25 ետևից գայ։ Որովհետև ով որ իր անձը ուզէ
ապրեցնել, կ՚կորցնէ նորան, և ով որ իր անձը
26 կորցնէ ինձ համար՝ կ՚գտնէ նորան։ Որովհետև ի՞նչ
օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհքն ստանայ և
իր անձը կորցնէ. կամ ի՞նչ գին կ՚տայ մարդ իր
27 անձը փրկելու համար։ Որովհետև մարդի Որդին
գալու է իր Հօր փառքովը իր հրեշտակների հետ.
և այն ժամանակ ամեն մէկին կ՚հատուցանէ նորա
28 գործերի համեմատ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ,
այստեղ կանգնողներից կան ոմանք, որ մահ չեն
ճաշակել, մինչև որ մարդի Որդին տեսնեն իր
թագաւորութիւնովը գալիս։

ԳԼ. ԺԷ

1 Եւ վեց օրից յետոյ Յիսուսը Պետրոսին և Յակո-
բին և նորա եղբայր Յովհաննէսին իր հետ առաւ,

2 և նորանց առանձին մի բարձր սար հանեց։ Եւ
նորանց առաջին կերպարանափոխուեցաւ, և նորա
երեսը փայլեց ինչպէս արեգակը, և նորա հանդերձ-
3 ները լոյսի պէս սպիտակ եղան։ Եւ ահա երևեցան
նորանց Մովսէսը և Եղիան, որ նորա հետ խօսում
4 էին։ Եւ Պետրոսը պատասխանեց և ասեց Յիսու-
սին. Տէր, լաւ է որ մենք այստեղ լինենք. եթէ
կամենաս, այստեղ երեք տաղաւար շինենք, մէկը
քեզ համար, մէկը՝ Մովսէսին, և մէկը՝ Եղիային։
5 Եւ նա տակաւին խօսելիս, ահա մի լուսաւոր ամպ
հովանի եղաւ նորանց վերայ. և ահա մի ձայն եղաւ
այն ամպից և ասեց. Դա է իմ սիրելի Որդին, ո-
6 րին ես հաւանել եմ. դորան լսեցէք։ Եւ աշա-
կերտները լսելով իրանց երեսների վերայ ընկան, և
7 շատ վախեցան։ Եւ Յիսուսը մօտեցաւ՝ նորանց բռ-
8 նեց և ասեց. Վեր կացէք և մի վախենաք։ Եւ նո-
րանք իրանց աչքերը բարձրացրին, ու ոչ ոքին չը
տեսան, միայն Յիսուսին։
9 Եւ նորանք սարից իջնելիս, Յիսուսը նորանց
պատուիրեց և ասեց. Ոչ ոքի չ՚ասէք այդ տեսիլքը,
մինչև որ մարդի Որդին մեռելների միջից յարու-
10 թիւն առնէ։ Եւ նորա աշակերտները հարցրին նո-
րանից և ասեցին. Ապա ի՞նչու դպիրները ասում
11 են, թէ Առաջ Եղիան պէտք է գայ։ Յիսուսն էլ
պատասխանեց և ասեց նորանց. Իրաւ առաջ Եղիան
12 կ՚գայ և ամեն բան կ՚վերանորոգէ։ Բայց ես ասում
եմ ձեզ, որ Եղիան արդէն եկել է, և նորան չը
ճանաչեցին. այլ ինչ որ ուզեցին՝ նորան արին.
այնպէս էլ մարդի Որդին չարչարուելու է նորան-
13 ցից։ Այն ժամանակ աշակերտները հասկացան, թէ
Յովհաննէս Մկրտչի համար ասեց նորանց։
14 Եւ երբոր նորանք ժողովրդի մօտ եկան, մի մարդ
մօտեցաւ նորան և առաջը ծունկ դնելով ասում

էր. Տէր, իմ որդուն ողորմիր, որ լուսնոտում է՝ և
չարաչար տանջվում է. որովհետև շատ անգամ
15 կրակն է ընկնում, և շատ անգամ ջուրը։ Եւ ես
նորան քո աշակերտների մօտ բերի, և չ'կարողա-
16 ցան նորան բժշկել։ Յիսուսն էլ պատասխանեց և
ասեց. Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև
ե՞րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև ե՞րբ պիտի ձեզ
17 համբերեմ. Նորան ինձ մօտ բերէք այստեղ։ Եւ
Յիսուսը նորան սաստեց. և դեւը նորանից դուրս
18 եկաւ, և տղան նոյն ժամից բժշկուեցաւ։ Այն
ժամանակ աշակերտներն առանձին Յիսուսի մօտ
եկան և ասեցին. Մենք ինչու չ'կարողացանք հա-
19 նել նորան։ Յիսուսն էլ ասեց նորանց, Ձեր թե-
րահաւատութեան համար. որովհետև ճշմարիտ
ասում եմ ձեզ՝ եթէ մանանեխի հատի չափ հա-
ւատք ունենաք, այս սարին կ'ասէք՝ փոխադրուիր
այստեղից այնտեղ, և նա կ'փոխադրուի. և ոչինչ
20 անկարելի չի լինիլ ձեզ համար։ Բայց այս ցեղը
դուրս չի գալ եթէ ոչ աղօթքով և ծոմով։
21 Եւ երբոր նորանք Գալիլեայի մէջ ման էին գա-
լիս, Յիսուսը նորանց ասեց. Մարդի Որդին մարդ-
22 կանց ձեռն է մատնուելու։ Եւ նորան կ'սպանեն,
և երրորդ օրը յարութիւն կ'առնէ. և նորանք շատ
տրտմեցան։
23 Եւ երբոր նորանք Կափառնայում եկան, երկ-
դրամեան ուզողները Պետրոսի մօտ եկան և ասե-
ցին. Ձեր վարդապետը երկդրամեանը չէ՞ վճարում։
24 Նա ասեց՝ Այո։ Եւ երբոր տունը մտաւ, Յիսուսը
նորանից առաջ սկսեց և ասեց, Քեզ ինչպէս է
երևում, Սիմօն, երկրի թագաւորներն ումի՞ց են
առնում հարկը կամ տուրքը, իրանց որդիների՞ց
25 թէ օտարներից։ Պետրոսն ասեց նորան. Օտարնե-
րից։ Յիսուսը նորան ասեց. Ապա ուրեմն ազատ

26 են որդիները։ Բայց որպէսզի նորանց չ'գայթակ-
ղեցնենք, գնա ծովը և կարթը գցիր, և առաջի
դուրս եկող ձուկն առ՝ բերանը բաց, և մի սատեր
կ'գտնես. այն առ տուր նորանց իմ և քո տեղ։

ԳԼ. ԺԸ

1 Այն ժամումը աշակերտները Յիսուսի մօտ եկան
և ասեցին. Ո՞վ է մեծ երկնքի արքայութեան մէջ։
2 Եւ Յիսուսն իր մօտ մի երեխայ կանչելով, նորան
3 կանգնեցրեց նորանց մէջտեղը. Եւ ասեց. Ճշմարիտ
ասում եմ ձեզ. եթէ դարձ չ'գաք և չ'լինիք ե-
րեխաների նման, չէք մտնիլ երկնքի արքայութիւ-
4 նը։ Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խո-
նարհեցնէ, նա է մեծ երկնքի արքայութեան մէջ։
5 Եւ ով որ մի այսպիսի երեխայ ընդունի իմ անու-
6 նովը, ինձ է ընդունում։ Եւ ով որ գայթակղեցնէ
այս փոքրներից մէկին, որ հաւատում են ինձ, ա-
ւելի լաւ է նորան, որ մի էշի ջաղացի քար նորա
վզիցը կախուի, և նա ծովի անդունդում ընկղմուի։
7 Վա՛յ աշխարհքիս՝ գայթակղութիւնների հա-
մար. որովհետև պէտք է որ գայթակղութիւնները
գան, սակայն վա՛յ այն մարդին, որի ձեռովը կ'գայ
8 գայթակղութիւնը։ Եւ եթէ քո ձեռքը կամ քո
ոտքը քեզ գայթակղեցնում է, կտրիր նորան և
քեզանից դէն գցիր. լաւ է քեզ կաղ կամ հաշ-
մանդամ մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք և
երկու ոտք ունենալ՝ և յաւիտենական կրակը գցը-
9 ուիլ։ Եւ թէ որ քո աչքը քեզ գայթակղեցնում
է, հանիր նորան և քեզանից դէն գցիր, լաւ է
քեզ մէկ աչքով մտնել կեանքը, քան թէ երկու
աչք ունենալ՝ և կրակի գեհենը գցուիլ։
10 Զգոյշ կացէք, որ այս փոքրներից մէկին չ'անար-

գեք. որովհետև ասում եմ ձեզ; որ նորանց հրեշ-
տակներն երկնքումը միշտ տեսնում են իմ Հօր ե-
11 րեսը որ երկնքումն է։ Որովհետև մարդի Որդին ե-
12 կաւ, որ ազատէ կորածը։ Ի՞նչպէս է երևում
ձեզ, եթէ մի մարդի հարիւր ոչխար լինի, և նո-
րանցից մէկը մոլորի, նա չի՞ թողիլ իննսուն և ինը
ոչխարը սարերը և գնալ այն մոլորածին որոնել։
13 Եւ եթէ լինի որ գտնէ նորան, ճշմարիտ ասում
եմ ձեզ, որ նորա վերայ աւելի կ'ուրախանայ քան
թէ այն իննսուն և իննի վերայ որ չեն մոլորած։
14 Այսպէս ձեր Հայրը՝ որ երկնքումն է, չէ կամե-
նում, որ այս փոքրներից մէկը կորչի։

15 Եթէ քո եղբայրը քեզ դէմ մեղանչէ, գնա նո-
րան յանդիմանիր՝ երբոր դու և նա մինակ լինիք.
16 եթէ քեզ լսէ, քո եղբայրը շահեցիր։ Բայց եթէ
չ'լսէ, վեր առ մի կամ երկու ուրիշն էլ քեզ հետ,
որովհետև երկու կամ երեք վկայի բերանով ամեն
17 բան կ'հաստատուի։ Բայց եթէ նորանց էլ չ'լսէ,
ասիր եկեղեցուն. ապա եթէ եկեղեցուն էլ չ'լսէ,
թող լինի քեզ համար ինչպէս հեթանոս և մաք-
սաւոր։

18 Ճշմարիտ ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վերայ
կապէք, երկնքումն էլ կապուած կ'լինի, և ինչ որ
երկրի վերայ արձակէք երկնքումն էլ արձակուած
19 կ'լինի։ Դարձեալ ասում եմ ձեզ՝ եթէ ձեզանից
երկուսը երկրի վերայ միաբանուին՝ ամեն ինչ բանի
համար որ խնդրեն, կ'լինի նորանց իմ Հօրիցն՝ որ
20 երկնքումն է։ Որովհետև ուր որ երկու կամ երեք
հոգի իմ անունովը ժողովուած լինին՝ ես այնտեղ
նորանց մէջ եմ։

21 Այն ժամանակ Պետրոսը նորա մօտ գալով ասեց.
Տէր, քանի՞ անգամ եթէ իմ եղբայրն ինձ դէմ
մեղք անէ, ես ներեմ նորան. մինչև եօ՞թն անգամ։

22 Յիսուսը նորան ասեց. Չեմ ասում քեզ, մինչև
եօթն անգամ, այլ մինչև եօթանասուն անգամ
23 եօթը։ Սորա համար երկնքի արքայութիւնը նման-
ուեցաւ մի թագաւոր մարդի, որ ուզեց իր ծառա-
24 ների հետ հաշիւ տեսնել։ Եւ երբոր սկսեց հաշիւը
տեսնել, նորա մօտ մէկը բերուեցաւ տասը հազար
25 *քանքար պարտական։ Բայց որովհետև չ'ունէր
վճարելու, նորա տէրը հրամայեց որ նա և նորա
կինն և նորա որդիները և ամեն ինչ որ ունէր ծախ-
26 ուի և պարտքը վճարուի։ Եւ ծառան էլ երեսի վե-
րայ ընկնելով երկրպագում էր նորան և ասում.
Տէր, համբերիր ինձ համար, և բոլորը կ'հատուցա-
27 նեմ քեզ։ Տէրն էլ գթաց այն ծառայի վերայ՝ նո-
28 րան արձակեց, և պարտքն էլ շնորհեց նորան։ Եւ
երբոր այն ծառան դուրս եկաւ, իր ծառայակից-
ներից մէկին գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան էր
պարտական, և նորան բռնած խեղդում էր և ա-
29 սում, վճարիր ինձ ինչ որ պարտական ես։ Հիմա
նորա այն ծառայակիցը նորա ոտներն ընկաւ, նո-
րան աղաչում էր և ասում. Համբերիր ինձ համար
30 և բոլորը կ'հատուցանեմ քեզ։ Բայց նա չէր կա-
մենում, այլ գնաց նորան գցեց բանտը, մինչև որ
31 պարտքը վճարէ։ Երբոր նորա ծառայակիցները տե-
սան եղած բաները, շատ տրտմեցան և եկան իրանց
32 տիրոջը յայտնեցին բոլոր եղածը։ Այն ժամանակ
նորա տէրը մօտը կանչեց նորան և ասեց. Չար ծա-
ռայ, ես այն բոլոր պարտքը շնորհեցի քեզ, որով-
33 հետև դու աղաչեցիր ինձ։ Պէտք չէ՞ր որ դու էլ
քո ծառայակցին ողորմէիր՝ ինչպէս որ ես էլ քեզ
34 ողորմեցի։ Եւ նորա Տէրը բարկանալով՝ նորան
մատնեց դահիճներին, մինչև որ բոլոր պարտքը

*Այսինքն՝ տաղանդ

35 վճարէ նորան ։ Այսպէս էլ իմ երկնաւոր Հայրը
կ'անէ ձեզ, եթէ դուք ամեն մէկդ իր եղբօրը
ձեր բոլոր սրտից չ'թողէք նորանց յանցանքը ։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս խօսքերը վերջացրեց,
Գալիլեայից վեր կացաւ Հրէաստանի սահմաններն
2 եկաւ, Յորդանանի այն կողմը ։ Եւ շատ ժողո-
վուրդներ նորա ետեւից գնացին, և նորանց այն-
տեղ բժշկեց ։
3 Եւ փարիսեցիները նորա մօտ եկան և նորան փոր-
ձելով ասում էին նորան. Արժա՞ն է արդեօք մար-
դիս, որ իր կինն արձակէ ամեն որ և է պատճա-
4 ռի համար ։ Նա էլ պատասխանեց և ասեց նո-
րանց. Չէ՞ք կարդացել թէ նա որ սկզբից ստեղ-
5 ծեց, արու և էգ ստեղծեց նորանց, և ասեց. Սորա
համար մարդ կ'թողէ հայրը և մայրը և իր կնոջը
6 կ'յարի և երկուսը կ'լինին մէկ մարմին ։ Որովհետև
այլ ևս երկու չեն, այլ մէկ մարմին. արդ այն որ
7 Աստուած միաւորեց, թող մարդը չ'բաժանէ ։ Նո-
րան ասեցին. Ապա ի՞նչու Մովսէսը պատուիրեց
մեզ, արձակման թուղթ տալ և արձակել նորան ։
8 Նորանց ասեց, թէ Մովսէսը ձեր քարասրտութեան
համար հրաման տուաւ ձեզ, ձեր կնիկներին ար-
9 ձակելու. բայց սկզբից այնպէս չ'եղաւ ։ Եւ ես
ասում եմ ձեզ թէ Ամեն ով որ իր կինն արձա-
կէ, առանց պոռնկութեան պատճառի և ուրիշն
առնէ, շնութիւն է գործում. և արձակուածն
10 առնողը շնութիւն է գործում ։ Իրան աշակերտ-
ները նորան ասեցին. Եթէ այդպէս է մարդի բանը
11 կնկայ հետ, լաւ չէ ամուսնանալ ։ Նա էլ ասեց
նորանց. Ամենքը չեն տանում այդ բանը, բայց ո-

12 րոնց որ տրուած է ։ Որովհետև կան ներքինիներ,
որ մօր որովայնից այնպէս են ծնուել. և կան ներ-
քինիներ՝ որ մարդկանցից են ներքինացրուել. և
կան ներքինիներ՝ որ իրանց ներքինացրին երկնքի
արքայութեան համար. ով որ կարող է տանել՝
թող տանի ։
13 Այն ժամանակ երեխաներ բերուեցան նորա մօտ՝
որ ձեռքերը դնէ նորանց վերայ և աղօթք անէ.
իսկ աշակերտները յանդիմանում էին նորանց ։
14 Բայց Յիսուսն ասեց. Թոյլ տուէք այդ երեխանե-
րին՝ և դորանց մի արգիլէք ինձ մօտ գալ. որով-
հետև այդպիսիներին է երկնքի արքայութիւնը ։
15 Եւ նորանց վերայ ձեռք դրաւ, և այնտեղից գնաց ։
16 Եւ ահա մէկն եկաւ նորա մօտ և ասեց. Բարի
վարդապետ, ի՞նչ բարի գործ գործեմ որ յաւիտե-
17 նական կեանքն ունենամ ։ Նա էլ ասեց նորան.
Ի՞նչու ես ինձ բարի ասում. ոչ ոք է բարի բայց
միայն մէկն՝ Աստուած. իսկ թէ որ կամիս կեանքը
18 մտնել, պահիր պատուիրանքները ։ Նորան ասեց.
Որո՞նք ։ Յիսուսն էլ ասեց, Սորանք. Մի՛ սպանիր,
19 Մի՛ շնար, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայիր, Պատ-
ուի՛ր քո հօրը և քո մօրը, և սիրիր քո ընկերին
20 քո անձի պէս ։ Պատանին նորան ասեց. Այդ ա-
մենն իմ երեխայութիւնից պահեցի. էլ ի՞նչ բա-
21 նով եմ պակաս ։ Յիսուսը նորան ասեց. Եթէ կա-
մենում ես կատարեալ լինել, գնա ունեցածներդ
ծախիր և տուր աղքատներին, և գանձ կ'ունենաս
22 երկնքումը, և եկ հետևիր ինձ ։ Երբոր պատանին
այս խօսքը լսեց, տրտմած գնաց, որովհետև շատ
ստացուածք ունէր ։
23 Յիսուսն էլ ասեց իր աշակերտներին. Ճշմարիտ
ասում եմ ձեզ, որ հարուստը դժուար կ'մտնէ
24 երկնքի արքայութիւնը ։ Բայց դարձեալ ասում եմ

ձեզ. Աւելի հեշտ է, որ մի ուղտ ասեղի ծակով
անցնի, քան թէ մի հարուստ Աստուծոյ արքայու-
25 թիւնը մտնէ։ Եւ նորա աշակերտներն երբոր լսե-
ցին, շատ զարմացան և ասեցին. Ապա ո՞վ կարող
26 է փրկուիլ։ Յիսուսն էլ նորանց մտիկ տալով ա-
սեց. Մարդկանց կողմանէ դա անկարելի է, բայց
Աստուծոյ կողմանէ ամէն բան կարելի է։
27 Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց և ասեց
նորան. Ահա մենք ամէն բաներ թողեցինք և քո
28 ետևից եկանք. հիմա ի՞նչ կ'լինի մեզ. Յիսուսն էլ
ասեց նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
դուք՝ իմ ետևից եկողներդ, *վերստին ծննդու-
մը՝ երբոր մարդի Որդին իր փառաց աթոռի վերայ
կ'նստի, դուք էլ տասներկու աթոռի վերայ կը
նստիք՝ և իսրայէլի տասներկու ցեղերը կ'դատէք։
29 Եւ ամէն ով որ թողեց տներ, կամ եղբայրներ,
կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին,
կամ որդիք, կամ արտեր իմ անունի համար, հա-
րիւրապատիկ կ'առնէ և յաւիտենական կեանքը
30 կ'ժառանգէ։ Եւ շատ առաջիններ յետինք կ'լի-
նին, և յետիններ առաջինք։

ԳԼ. Ի

1 Որովհետև նման է երկնքի արքայութիւնը մի
տանուտէր մարդի, որ առաւօտանց կանուխ դուրս
2 եկաւ իր այգու համար մշակներ բռնելու։ Եւ մը-
շակների հետ օրը մի դահեկանի խօսելով, նորանց
3 ուղարկեց իր այգին։ Եւ ժամը երեքի մօտ դուրս
եկաւ՝ ուրիշներ տեսաւ, որ հրապարակում պա-
4 րապ կանգնել էին։ Նորանց էլ ասեց. Դուք էլ գնա-

*Այսինքն՝ միւսանգամ գալստեանը

5 ցէք այգին, և ինչ որ արժան է կ'տամ ձեզ։ Նո-
րանք էլ գնացին. և դարձեալ ժամը վեցին և իննին
6 դուրս գալով նոյնպէս արաւ։ Եւ ժամը տասնեմէ-
կին մօտ էլ դուրս գալով ուրիշները գտաւ պա-
րապ կանգնած և ասեց նորանց. Ի՞նչու էք այս-
7 տեղ բոլոր օրը պարապ կանգնել։ Նորան ասեցին.
Որովհետև ոչ ոք մեզ չ'վարձեց։ Նորանց ասեց.
Դուք էլ գնացէք այգին, և ինչ որ արժան է՝
8 կ'առնէք։ Եւ երբոր իրիկուն եղաւ, այգու տէրն
իր տան վերակացուին ասեց. Մշակներին կանչիր
և նորանց վարձքը տուր՝ յետիններիցն սկսած մին-
9 չև առաջինները։ Եւ ժամը տասնեմէկինները գա-
10 լով, մի մի դահեկան առան։ Առաջիններն էլ ե-
կան՝ և կարծեցին, թէ աւելի կ'առնեն. և նորանք
11 էլ մի մի դահեկան առան։ Բայց երբոր առան,
12 տան տիրոջիցը տրտնջում էին և ասում. Թէ այդ
յետինները մէկ ժամ գործեցին, և դորանց մեզ
հետ հաւասար արիր, որ օրի ծանրութիւնը և տա-
13 քութիւնը քաշեցինք։ Նա էլ պատասխանեց նո-
րանցից մէկին և ասեց. Ընկեր, ես չեմ զրկում
քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մի դահեկանի համա-
14 ձայնեցիր։ Քոնը առ և գնա. բայց ես ուզում եմ,
15 որ այս յետինին տամ ինչպէս քեզ։ Կամ մի՞թէ
ես իշխանութիւն չ'ունիմ՝ անելու ինչ որ ուզեմ
իմ ստացուածքին. կամ թէ քո աչքը չա՞ր է որ
16 ես բարերար եմ։ Այսպէս յետիններն առաջինք
կ'լինին, և առաջիններն յետինք. որովհետև շա-
տեր են կանչուած, բայց քիչեր են ընտրուած։
17 Երբոր Յիսուսը վեր էր ելնում Երուսաղէմ,
տասներկու աշակերտներն առանձին իր հետ ա-
18 ռաւ ճանապարհումը և ասեց նորանց։ Ահա վեր
ենք ելնում Երուսաղէմ, և մարդի Որդին կ'մատ-
նուի քահանայապետներին և դպիրներին և կ'դա-

19 տապարտեն նորան մահով. Եւ կ'մատնեն նորան
հեթանոսներին՝ խայտառակելու և ծեծելու և խաչ
հանելու. և նա երրորդ օրը յարութիւն կ'առնէ։
20 Այն ժամանակ Զեբեդեայի որդկանց մայրը իր
որդկանցը հետ նորա մօտ եկաւ երկրպագեց, և
21 նորանից մի բան խնդրեց։ Նա էլ ասեց նորան.
Ի՞նչ ես ուզում։ Նորան ասեց. Ասիր որ իմ այս
երկու որդիքը նստեն մէկը քո աջ կողմը՝ և մէկը
22 ձախ կողմը քո արքայութիւնումը։ Յիսուսն էլ
պատասխանեց և ասեց. Դուք չ'գիտէք թէ ինչ էք
խնդրում. կարո՞ղ էք այն բաժակը խմել որ ես
եմ խմելու, կամ այն մկրտութիւնովը մկրտուիլ
որ ես եմ մկրտուելու։ Նորան ասեցին. Կարող
23 ենք։ Եւ նա ասեց նորանց. Իմ բաժակը կ'խմէք
և այն մկրտութիւնովն որ ես պիտի մկրտուիմ
կ'մկրտուիք, բայց իմ աջ և ձախ կողմը *նստեցը-
նելը՝ իմը չէ տալ. այլ նորանց՝ որ իմ Հօրիցը
24 պատրաստուած է։ Եւ այն տասներն երբոր լսեցին,
25 նեղացան այն երկու եղբարց վերայ։ Յիսուսն էլ
նորանց իրան մօտ կանչելով ասեց. Գիտէք, որ ազ-
գերի իշխանները տիրում են նորանց վերայ, և մե-
26 ծամեծները իշխում են նորանց վերայ. Բայց այն-
պէս չ'լինի ձեր մէջ, այլ ձեզանից ով որ կամենայ
27 մեծ լինել, թող ձեզ ծառայ լինի։ Եւ ձեզանից
ով որ կամենայ առաջին լինել, թող ձեզ ծառայ
28 լինի։ Ինչպէս մարդի Որդին չ'եկաւ որ իրան ծա-
ռայեն, այլ որ ինքը ծառայէ, և շատերի փոխա-
նակ իր անձը փրկանք տայ։
29 Եւ երբոր նորանք Երիքովից դուրս եկան, շատ
30 ժողովուրդներ գնացին նորա ետեւից։ Եւ ահա եր-
կու կոյր այն ճանապարհի վերայ նստած էին. եր-

*Յուն. նստելն

բոր լսեցին՝ թէ Յիսուսն է անց կենում, աղաղա-
կեցին և ասեցին, Ողորմիր մեզ, Տէր՝ Դաւիթի
31 Որդի։ Իսկ ամբոխը յանդիմանեց նորանց՝ որ լռեն,
բայց նորանք էլ առաւել էին աղաղակում և ա-
32 սում. Ողորմիր մեզ, Տէր, Դաւիթի Որդի։ Եւ
Յիսուսը կանգնեց՝ կանչեց նորանց և ասեց. Ի՞նչ
33 էք ուզում որ անեմ ձեզ։ Նորան ասեցին. Տէր,
34 որ մեր աչքերը բացուին։ Յիսուսն էլ գթաց՝ նո-
րանց աչքերին դիպաւ, և շուտով տեսան նորանց
աչքերը, և նորանք գնացին նորա ետեւից։

ԳԼ. ԻԱ

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան՝ և Բեթփագէ
եկան Ձիթենեաց սարի մօտ, այն ժամանակ Յի-
2 սուսը երկու աշակերտ ուղարկեց, Եւ ասեց նո-
րանց. Գնացէք այդ գիւղը՝ որ ձեր առաջն է, և
շուտով այնտեղ մի էշ կ'գտնէք կապած և մի ա-
ւանակ նորա հետ. արձակեցէք բերէք ինձ մօտ։
3 Եւ եթէ մէկը բան ասէ ձեզ, ասեցէք, թէ նո-
րանք Տիրոջը պէտք են. և նա շուտով կ'ուղարկէ
4 նորանց։ Բայց այս ամենը եղաւ, որ կատարուի
5 մարգարէի ձեռով խօսուածը, որ ասում է. Ասե-
ցէք Սիօնի աղջկանը. Ահա քո թագաւորը քեզ մօտ
է գալիս, հեզ՝ և էշն ու աւանակի քուռակը հե-
6 ծած։ Աշակերտներն էլ գնացին՝ և արին ինչպէս
7 որ Յիսուսը հրամայեց նորանց. Էշը և աւանակը
բերին՝ և իրանց հանդերձները նորանց վերայ գցե-
8 ցին, և նա նորանց վերայ նստեց։ Եւ խիտ շատ
ժողովուրդներ իրանց հանդերձները ճանապարհի
վերայ փռեցին. ուրիշներն էլ ծառերիցը ճիւղեր
9 էին կտրում և ճանապարհումը փռում։ Եւ ա-
ռաջից և ետեւից գնացող ժողովուրդները աղաղա-

կում էին և ասում. Ովսաննա Դաւիթի Որդուն,
օրհնեալ է Տիրոջ անունովն եկողը. Ովսաննա բար-
ձունքներումը ։
10 Երբոր նա Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը
11 դղրդաց և ասեց. Սա ո՞վ է ։ Եւ ժողովուրդները
ասում էին. Սա Յիսուս մարգարէն է՝ Գալիլեայի
Նազարէթիցը ։
12 Եւ Յիսուսը մտաւ Աստուծոյ տաճարը և դուրս
արաւ տաճարի մէջ բոլոր ծախողներին և առնող-
ներին, և փող փոխողների սեղանները և աղաւնի
13 ծախողների աթոռները կործանեց. Եւ ասեց նո-
րանց. Գրուած է՝ իմ տունը աղօթքի տուն պիտի
կոչուի. և դուք աւազակների այր էք արել դորան։
14 Եւ տաճարի մէջ կոյրեր և կաղեր եկան նորա
15 մօտ և նա նորանց բժշկեց։ Երբոր քահանայապետ-
ները և դպիրները տեսան այն հրաշքները որ ա-
րաւ, և այն երեխաներին էլ տաճարումն աղաղա-
կելիս և ասելիս՝ Ովսաննա Դաւիթի Որդուն, նե-
16 ղացան. Եւ ասեցին նորան. Լսո՞ւմ ես, դորանք
ի՞նչ են ասում։ Յիսուսն էլ ասեց նորանց. Այո՛,
դուք երբէք չէ՞ք կարդացել թէ Մանուկների և
կաթնակերների բերանից օրհնութիւն կատարեցիր։
17 Եւ նա նորանց թողելով գնաց քաղաքիցը
դուրս՝ Բեթանիա և գիշերն այնտեղ մնաց ։
18 Եւ առաւօտանց երբոր ետ էր դառնում քա-
19 ղաքը, սովեց ։ Եւ այն ճանապարհի վերայ մի թը-
զենի տեսնելով, գնաց նորա մօտ, և նորա վերայ
մի բան չ'գտաւ բայց միայն տերև. և նորան ասեց.
Այլ ես քեզանից պտուղ չ'լինի յաւիտեան. և
20 թզենին իսկոյն չորացաւ ։ Եւ աշակերտները տես-
նելով զարմացան և ասեցին. Ի՞նչպէս թզենին իս-
21 կոյն չորացաւ ։ Յիսուսն էլ պատասխանեց և ասեց
նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ որ հա-

ւատք ունենաք և չ'երկմտէք, ոչ թէ միայն կ'ա-
նէք թզենիին եղածը, այլ թէ որ այդ սարին էլ
22 ասէք՝ վեր կաց և ընկիր ծովը, կ'լինի։ Եւ ամեն ինչ
որ աղօթքի մէջ խնդրէք հաւատալով, կ'առնէք ։
23 Եւ երբոր եկաւ տաճարը, նա սովորեցնելիս,
քահանայապետները և ժողովրդի ծերերը նորա մօտ
եկան և ասեցին. Ի՞նչ իշխանութիւնով ես անում
այդ բաները, և ո՞վ տուաւ քեզ այդ իշխանու-
24 թիւնը ։ Յիսուսն էլ պատասխանեց և ասեց նո-
րանց. Ես էլ ձեզանից մէկ բան կ'հարցնեմ. եթէ
այն ինձ ասէք, ես էլ ձեզ կ'ասեմ Թէ ինչ իշխա-
25 նութիւնով եմ անում այս բաները ։ Յովհաննէսի
մկրտութիւնը ո՞րտեղից էր, երկնքի՞ց թէ մարդ-
կանցից. և նորանք իրանց մէջ միտք էին անում
26 և ասում. Եթէ ասենք՝ երկնքից, կ'ասէ մեզ՝ Ապա
ի՞նչու չ'հաւատացիք նորան. իսկ եթէ ասենք՝
մարդկանցից, ժողովրդիցը վախենում ենք, որով-
հետև ամենքը Յովհաննէսին մարգարէի տեղ են
27 ընդունում։ Եւ պատասխանեցին Յիսուսին և ա-
սեցին. Չ'գիտենք ։ Նա էլ նորանց ասեց. Ես էլ
չեմ ասիլ ձեզ՝ Թէ ի՞նչ իշխանութիւնով եմ ա-
նում այս բաները ։
28 Բայց ի՞նչպէս է երևում ձեզ. մի մարդ երկու
որդի ունէր. և եկաւ առաջինին ասեց. Որդի, գնա
29 այսօր իմ այգումը բան արա ։ Նա էլ պատասխա-
նեց և ասեց. Չեմ կամենում. բայց յետոյ զղջաց
30 և գնաց ։ Եւ միւսի մօտ գնաց և ասեց այնպէս.
Նա էլ պատասխանեց և ասեց. Կ'գնամ, տէր. և
31 չ'գնաց ։ Հիմա այս երկուսից ո՞րն արաւ հօր կամ-
քը ։ Նորան ասեցին. Առաջինը ։ Յիսուսը նորանց
ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ մաքսաւոր-
ները և պոռնիկները ձեզանից առաջ կ'մտնեն Աս-
32 տուծոյ արքայութիւնը ։ Որովհետև Յովհաննէսն

եկաւ ձեզ մօտ արդարութեան ճանապարհով, և
չ'հաւատացիք նորան, բայց մաքսաւորները և պոռ-
նիկները հաւատացին նորան. և դուք տեսնելով
չ'զղջացիք յետոյ, որ հաւատաք նորան։
33 Մի ուրիշ առակ լսեցէք. Մի տանուտէր մարդ
կար՝ որ այգի տնկեց և նորան ցանգով պատեց. և
նորա մէջ հնձան փորեց և աշտարակ շինեց. և
տուաւ նորան մշակների, և գնաց հեռու աշխարհք։
34 Եւ երբոր պտղի ժամանակը մօտեցաւ, ուղարկեց
իր ծառաները մշակների մօտ՝ նորա պտուղները
35 առնելու։ Եւ մշակները նորա ծառաներին բռնե-
ցին՝ մէկին տանջեցին, մէկին սպանեցին, մէկին
36 քարկոծեցին։ Դարձեալ ուղարկեց ուրիշ ծառա-
ներ առաջիններից շատ, և նորանց էլ այնպէս ա-
37 րին։ Վերջապէս իր որդուն նորանց մօտ ուղարկեց
38 ասելով, իմ որդուցը կ'ամաչեն։ Բայց մշակներն
որդուն տեսնելով, իրանք իրանց ասեցին. Սա է
ժառանգը, եկէք սորան սպանենք, և նորա ժա-
39 ռանգութեանը տիրենք։ Եւ բռնեցին նորան, այ-
40 գուցը դուրս հանեցին և սպանեցին։ Արդ՝ երբոր
այն այգու տէրը գայ, ի՞նչ կ'անէ այն մշակներին։
41 Նորան ասեցին. Չարերին չարաչար կ'կորցնէ, և
այգին կ'տայ ուրիշ մշակների, որ պտուղները կը
42 տան նորան իրանց ժամանակներումը։ Յիսուսը նո-
րանց ասեց. Դուք երբէք չե՞ք կարդացել գրքու-
մը՝ Այն քարը, որ շինողներն անարգեցին, նա ե-
ղաւ անկիւնի գլուխ. սա Տիրոջիցը եղաւ, և մեր
43 աչքերի առաջին զարմանալի է։ Սորա համար ա-
սում եմ ձեզ. որ Աստուծոյ արքայութիւնը ձե-
զանից վեր կ'առնուի և մի ազգի կ'տրուի, որ նո-
44 րա պտուղներ կ'բերէ։ Եւ այս քարի վերայ ընկնո-
ղը կ'փշրուի. և ում վերայ որ նա ընկնի՝ կ'ջար-
դէ նորան։

45 Եւ երբոր քահանայապետները և փարիսեցիները
նորա առակները լսեցին, հասկացան՝ որ իրանց
46 համար է ասում։ Եւ ուզում էին որ բռնեն նո-
րան, բայց ժողովուրդներիցը վախեցան. որովհետև
նորան մարգարէի տեղ էին ընդունում։

ԳԼ. ԻԲ

1 Եւ Յիսուսը պատասխանեց և դարձեալ խօսեց
2 նորանց հէտ առակներով, ասելով. Երկնքի ար-
քայութիւնը նմանեցաւ մի թագաւոր մարդի, որ
3 իր որդուն հարսանիք արաւ։ Եւ իր ծառաներն
ուղարկեց՝ որ հարսանիքի կանչեն հրաւիրուածնե-
4 րին. և նորանք չ'կամեցան գալ։ Դարձեալ ուրիշ
ծառաներ ուղարկեց և ասեց. Ասեցէք հրաւիր-
ուածներին, ահա իմ ճաշը պատրաստեցի. իմ ար-
ջառները և մսացուները մորթուած են, և բոլորը
5 պատրաստ է. եկէք հարսանիքը։ Իսկ նորանք ան-
հոգ լինելով՝ գնացին մէկն իր արտը, միւսն իր ա-
6 ռուտուրին։ Եւ մնացածները բռնեցին նորա ծա-
7 ռաներին՝ նախատեցին և սպանեցին։ Բայց թագա-
ւորը լսելով բարկացաւ, և իր զօրքն ուղարկեց
այն սպանողներին սատակեցրեց, և նորանց քա-
8 ղաքն այրեց։ Այն ժամանակ իր ծառաներին ասեց.
Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածներն
9 արժանի չէին։ Արդ գնացէք դէպի ճանապարհնե-
րի անցքերը, և ում որ էլ գտնէք, կանչեցէք
10 հարսանիքը։ Եւ այն ծառաները դուրս գնացին
ճանապարհները, և ժողովեցին ամենին ում որ
գտան՝ չարը և բարին, և հարսանիքը բազմական-
11 ներով լցուեցաւ։ Բայց երբոր թագաւորը մտաւ
որ բազմականներին մտիկ անէ, այնտեղ մի մարդ
12 տեսաւ՝ հարսանիքի հանդերձ չ'հագած. Եւ նորան

ասեց. Ընկեր, ի՞նչպէս մտար այստեղ, որ հարսա-
նիքի հանդերձ չ՚ունիս. և նա պապանձուեցաւ։
13 Այն ժամանակ թագաւորն ասեց ծառաներին. Դո-
րա ոտները և ձեռքերը կապեցէք. վեր առէք դո-
րան դրսի խաւարը գցեցէք. այնտեղ կ՚լինի լացը
14 և ատամների կրճտելը։ Որովհետև շատեր են կան-
չուած, բայց քիչեր՝ ընտրուած։
15 Այն ժամանակ փարիսեցիները գնացին նորա հա-
մար խորհուրդ արին, թէ ի՞նչպէս խօսքով որո-
16 գայթ դնեն նորան։ Եւ իրանց աշակերտներին հե-
րովդէսեաններին հետ նորա մօտ ուղարկեցին և ա-
սեցին, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես՝ և
Աստուծոյ ճանապարհը սովորեցնում ես ճշմար-
տութիւնով, և ոչ մի մարդից հոգս չ՚ունիս. ո-
րովհետև մարդի երեսպաշտութիւն չես անում։
17 Արդ՝ ասիր մեզ, ի՞նչպէս է երևում քեզ, կայսրին
18 հարկ տալ պէ՞տք է, թէ չէ։ Եւ Յիսուսը նորանց
չարութիւնն իմանալով ասեց. Ի՞նչու էք փորձում
19 ինձ, կեղծաւորներ։ Ցոյց տուէք ինձ հարկի ստա-
կը, և նորանք մի դահեկան բերին տուին նորան։
20 Եւ նորանց ասեց. Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն
21 է։ Ասեցին նորան. Կայսեր։ Այն ժամանակ ասեց.
Ուրեմն կայսրինը կայսրին տուէք և Աստուծունը՝
22 Աստուծուն։ Եւ լսելով զարմացան. և նորան թո-
ղեցին գնացին։
23 Այն օրը Սադուկեցիները նորա մօտ եկան՝ որ
ասում են թէ յարութիւն չ՚կայ՝ և նորան հար-
24 ցրին, Եւ ասեցին. Վարդապետ, Մովսէսն ասեց,
Եթէ մի մարդ առանց զաւակի մեռնէ, թող նորա
եղբայրը նորա կինն առնէ, և իր եղբօր համար
25 զաւակ յարուցանէ։ Հիմա մեզ մօտ եօթը եղբարք
կային. և առաջինը կին առաւ և մեռաւ, և որով-
հետև զաւակ չ՚ունէր՝ իրան կինը թողեց իր եղ-

26 բօրը։ Այնպէս էլ երկրորդ եղբայրը և երրորդը՝
27 մինչև եօթներորդը։ Եւ ամենից յետոյ կինը մե-
28 ռաւ։ Հիմա յարութիւնումը այն եօթից որի՞ն կը
29 լինի կին. որովհետև ամենքը նորան առան։ Յի-
սուսն էլ պատասխանեց և ասեց նորանց. Մոլոր-
ուած էք, որ չ՚գիտէք գիրքերը, և ոչ Աստուծոյ
30 զօրութիւնը։ Որովհետև յարութիւնումը ոչ կին
են առնում, և ոչ մարդի գնում. այլ երկնքումն
31 Աստուծոյ հրեշտակների նման են։ Իսկ մեռելների
յարութիւն առնելու համար, չէ՞ք կարդացել այն
32 Աստուածանից ձեզ խօսուածը որ ասում է. Ես
եմ Աբրահամի Աստուածը, և Իսահակի Աստուա-
ծը, և Յակոբի Աստուածը։ Աստուած մեռելների
33 Աստուած չէ, այլ կենդանիների։ Եւ ժողովուրդ-
ները լսելով զարմանում էին նորա վարդապետու-
թեան վերայ։
34 Բայց փարիսեցիներն երբոր լսեցին, թէ Սադու-
կեցիներին պապանձեցրեց, հաւաքուեցան մէկտեղ։
35 Եւ նորանցից մէկը՝ մի օրինական՝ հարցրեց փորձե-
36 լով նորան և ասեց. Վարդապետ, ո՞ր պատուի-
37 րանքն է մեծ օրէնքումը. Յիսուսն էլ ասեց նորան.
Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո
38 բոլոր անձովը և քո բոլոր մտքովը։ Սա է առաջին
39 և մեծ պատուիրանքը։ Երկրորդն էլ սորան նման.
40 Սիրիր քո ընկերին քո անձի պէս։ Այս երկու
պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը և մար-
գարէքը։
41 Եւ երբոր փարիսեցիները հաւաքուած էին, Յի-
42 սուսը նորանցից հարցրեց և ասեց. Ձեզ ի՞նչպէս է
երևում Քրիստոսի համար. Նա ո՞ւմ որդին է։
43 Նորան ասեցին. Դաւիթի։ Նորանց ասեց. Ապա
ի՞նչպէս Դաւիթը հոգով նորան Տէր է կոչում,
44 ասելով. Տէրն իմ Տիրոջն ասեց. Իմ աջ կողմը

նատիր, մինչև քո թշնամիները քո ոտների պատ-
45 ուանդան դնեմ։ Արդ՝ եթէ Դաւիթը նորան Տէր
46 է կոչում, նա ինչպէս է նորա որդի։ Եւ ոչ ոք
չէր կարողանում մի բան պատասխան տալ նորան.
և այն օրից յետոյ էլ մէկը չէր համարձակում
նորանից մի բան հարցնելու ։

ԳԼ. ԻԳ

1 Այն ժամանակ Յիսուսը ժողովուրդների և իր
2 աշակերտների հետ խօսեց և ասեց. Մովսէսի ա-
թոռի վերայ դպիրները և փարիսեցիները նստեցին։
3 Արդ՝ ինչ էլ որ ասեն ձեզ պահել, պահեցէք և
արէք, բայց նորանց գործերի պէս մի անէք. որով-
4 հետև ասում են բայց չեն անում։ Որովհետև
ծանր և դժուարակիր բեռներ են կապում և դը-
նում մարդկանց ուսերին, բայց իրանց մատովը չեն
5 ուզում շարժել նորանց։ Եւ իրանց բոլոր գործերն
անում են մարդկանց երևելու համար, իրանց դը-
րապանակները լայնացնում են և իրանց հանդերձի
6 քղանցքները մեծացնում. Սիրում են ընթրիքնե-
րումն առաջին բազմոցը, և ժողովարաններումն ա-
ռաջին աթոռները, և փողոցների մէջ բարևները.
7 Եւ մարդկանցից Ռաբբի Ռաբբի կոչուիլը ։ (8) Բայց
դուք Ռաբբի չ'կանչուիք, որովհետև մէկն է ձեր
ուսուցիչը՝ Քրիստոսը. և դուք ամենքդ եղբարք
9 էք ։ Եւ երկրիս վերայ մէկին ձեզ հայր չ'կանչէք.
որովհետև մէկն է ձեր Հայրը՝ նա որ երկնքումն է։
10 Ոչ էլ ուսուցիչներ կանչուեցէք, որովհետև մէկն
11 է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոսը ։ Եւ ձեզանից մեծը
12 թող ձեր ծառան լինի ։ Ով որ իր անձը բարձրա-
ցնէ՝ կ'խոնարհուի. և ով որ իր անձը խոնարհեցնէ՝
կ'բարձրանայ ։

13 Իսկ վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ փակում էք երկնքի արքայութիւնը
մարդկանց առաջին, որ ինքներդ չէք մտնում, և
14 մտնողներին էլ թոյլ չէք տալիս մտնել ։ [Վայ
ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ
ուտում էք որբևայրիների տները, և պատճա-
ռանքով երկար աղօթք անում. նորա համար ա-
15 ւելի դատապարտութիւն կ'առնաք ։] Վայ ձեզ,
դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ շուռ
էք գալիս ծովն ու ցամաքը, որ մէկը նորահաւատ
անէք. և երբոր լինում է, նորան ձեզանից երկու
16 տակ աւելի գեհենի որդի էք անում ։ Վայ ձեզ,
կոյր առաջնորդներ, որ ասում էք, ով որ տաճա-
րովն երդում անէ, մի բան չէ. բայց ով որ տա-
17 ճարի ոսկովն երդում անէ, պարտական է։ Յիմար-
ներ և կոյրեր. ո՞րն է արդեօք աւելի մեծ, ոսկի՞ն
18 թէ տաճարը, որ սրբում է ոսկուն ։ Եւ, ով որ
սեղանովն երդում անէ, մի բան չէ. բայց ով որ
նորա վերայ լինող պատարագովն երդում անէ,
19 պարտական է ։ Յիմարներ և կոյրեր. ո՞րն է արդ-
եօք աւելի մեծ, պատարա՞գը թէ սեղանը, որ սըր-
20 բում է պատարագին ։ Արդ՝ սեղանովն երդում
անողը նորանով՝ և այն բոլոր բաներովն է երդում
21 անում որ նորա վերայ են։ Եւ տաճարովն երդում
անողը նորանով և նորանում բնակողովն է երդում
22 անում։ Եւ երկնքովն երդում անողը Աստուծոյ
աթոռովն է երդում անում և նորա վերայ նըս-
23 տողովը ։ Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ. որ անանուխի և սամիթի և չամանի
տասանորդը տալիս էք, և թողում էք օրէնքի ծանր
բաները՝ դատաստանը և ողորմութիւնը և
հաւատքը. սա պէտք էր անել՝ և այն չ'թողել ։
24 կոյր առաջնորդներ, որ մժեղը քամում էք, բայց

25 ուղտը կուլ էք տալիս: Վայ ձեզ, դպիրներ և
փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ մաքրում էք բա-
ժակի և սկաւառակի դրսի կողմը, բայց ներսեւանց
լիքն են յափշտակութիւնով և անիրաւութիւնով:
26 Կոյր փարիսեցի, առաջ մաքրիր բաժակի և սկա-
ւառակի մէջը, որ նորանց դուրսն էլ մաքուր լինի:
27 Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւոր-
ներ, որ նման էք ծեփած գերեզմանների, որ դըր-
սեւանց գեղեցիկ են երեւում, բայց ներսեւանց լիքն
են մեռելների ոսկորներով և ամեն պղծութիւնով:
28 Այնպէս էլ դուք՝ դրսեւանց արդար էք երեւում
մարդկանց, բայց ներսեւանց լիքն էք կեղծաւորու-
29 թիւնով և անօրէնութիւնով: Վայ ձեզ, դպիր-
ներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ մարգարէ-
ների տապանները շինում էք՝ և արդարների գե-
30 րեզմանները զարդարում. Եւ ասում էք, Եթէ
մենք լինէինք մեր հայրերի օրերումը, մասնակից
չէինք լինիլ նորանց հետ մարգարէների արիւնին:
31 Ուրեմն դուք ձեր մասին վկայում էք, թէ որդիք
32 էք մարգարէների սպանողներին: Եւ դուք ձեր
33 հայրերի չափը լցրէք: Օձեր, իժերի զաւակներ,
դուք ի՞նչպէս էք փախչելու գեհենի դատաստանի-
34 ցը: Դորա համար ահա ես ձեզ մօտ մարգարէներ
և իմաստուններ և դպիրներ կ'ուղարկեմ. և նո-
րանցից կ'սպանէք և կ'խաչէք և նորանցից ձեր ժո-
ղովարաններումը կ'տանջէք՝ և քաղաքից քաղաք
35 կ'հալածէք, Որպէսզի ձեզ վերայ գայ ամեն ար-
դար արիւն, որ երկրի վերայ թափուել է՝ արդար
Աբէլի արիւնից մինչև Բարաքիայի որդի Զաքա-
րիայի արիւնը, որին սպանեցիք տաճարի և սեղա-
36 նի մէջտեղը: Ճշմարիտ ասում եմ ձեզ, այս բո-
լորը կ'գայ այս ազգի վերայ:
37 Երուսաղէմ Երուսաղէմ, մարգարէները կոտո-

րող, և քեզ մօտ ուղարկուածները քարկոծող.
քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել,
ինչպէս հաւը ժողովում է իր ձագերը թեւերի տա-
38 կը. և դուք չ'կամեցաք: Ահա ձեր տունն աւեր-
39 ուած կ'թողուի ձեզ. Որովհետև ասում եմ ձեզ,
Եէ՝ այսուհետև չէք տեսնիլ ինձ՝ մինչև որ ասէք,
Օրհնեալ է Տիրոջ անունով եկողը:

ԳԼ. ԻԴ

1 Եւ Յիսուսը դուրս եկած գնում էր տաճարից,
և աշակերտները մօտ եկան՝ որ ցոյց տան նորան
2 տաճարի շինուածքը: Յիսուսն էլ պատասխանեց և
ասեց նորանց. Չէ՞ք տեսնում այդ ամենը. Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ. այդտեղ քար քարի վերայ
չի թողուիլ որ չ'քանդուի:
3 Եւ երբոր նա Ձիթենեաց սարի վերայ նստած
էր, աշակերտներն առանձին նորա մօտ եկան և ա-
սեցին. Ասիր մեզ, այդ ե՞րբ կ'լինի. և ի՞նչ կ'լինի
4 քո գալստեան և աշխարհքիս վերջի նշանը: Յիսուսն
էլ պատասխանեց և ասեց նորանց. Զգոյշ կա-
5 ցէք, որ մէկը ձեզ չ'խաբէ: Որովհետև շատերը կը
գան իմ անունովը և կ'ասեն՝ Ես եմ Քրիստոսը.
6 և շատերին կ'մոլորեցնեն: Պատերազմներ և պատե-
րազմների համբաւներ կ'լսէք, զգոյշ կացէք, որ
չ'շփոթուիք. որովհետև ամենը պէտք է լինի. բայց
7 դեռ վերջը չէ: Որովհետև ազգ ազգի վերայ վեր
կ'կենայ, և թագաւորութիւն թագաւորութեան
վերայ. և սովեր կ'լինին. և մահտարաժամներ՝ և
8 տեղ տեղ երկրաշարժութիւններ կ'լինին: Բայց
9 այս ամենը ցաւերի սկիզբն է: Այն ժամանակ ձեզ
նեղութեան կ'մատնեն. և ձեզ կ'սպանեն, և իմ
անունի համար ամեն ազգերից ատուած կ'լինիք:

10 Եւ այն ժամանակ շատերը կ'գայթակղին, և իրար
11 կ'մատնեն և իրար կ'ատեն ։ Եւ շատ սուտ մար-
գարէներ դուրս կ'գան՝ և շատերին կ'մոլորեցնեն ։
12 Եւ անօրէնութեան շատանալու պատճառով՝ շա-
13 տերի սէրը կ'սառչի ։ Բայց ով որ մինչև վերջը
14 համբերէ՝ նա կ'փրկուի ։ Եւ արքայութեան այս
աւետարանը բոլոր տիեզերքումը կ'քարոզուի ամեն
հեթանոսներին վկայութիւն լինելու համար, և
այն ժամանակ կ'գայ վերջը ։
15 Արդ՝ երբոր տեսնէք աւերածի պղծութիւնը՝
Դանիէլ մարգարէի ձեռով ասուածը, սրբութեան
16 տեղումը կանգնած. կարդացողը մտածէ. Այն ժա-
մանակ նորանք որ Հրէաստանումն են՝ թող փախ-
17 չեն սարերը ։ Ով որ կտուրի վերայ լինի՝ թող վար
18 չ'գայ մի բան վեր առնելու իր տանիցը ։ Եւ ով որ
յանդումն է՝ թող յետ չ'դառնայ իր հանդերձնե-
19 րը վեր առնելու ։ Բայց վայ այն օրը յղիներին և
20 ծիծ տուողներին ։ Եւ աղօթք արէք, որ ձեր փախ-
21 չելը ձմեռը չ'լինի, ոչ էլ շաբաթ օրը ։ Որովհետև
այն ժամանակը մեծ նեղութիւն կ'լինի, որ նմանը
աշխարհքիս սկզբիցը մինչև հիմա չ'եղաւ, և ոչ էլ
22 երբէք կ'լինի ։ Եւ եթէ այն օրերը չ'կարճացնուէին,
ոչ մի մարմին չէր փրկուիլ. բայց ընտրուածների
23 համար այն օրերը կ'կարճացնուին ։ Այն ժամանակ
եթէ մէկն ասէ ձեզ՝ Ահա այստեղ է Քրիստոսը,
24 կամ այնտեղ. չ'հաւատաք ։ Որովհետև սուտ
քրիստոսներ և սուտ մարգարէներ վեր կ'կենան, և
մեծ նշաններ և հրաշքներ կ'տան մինչև որ եթէ
կարելի լինէր, ընտրուածներին էլ կ'մոլորեցնէին ։
25 Ահա առաջուց ասեցի ձեզ ։ (26) Արդ եթէ ասեն
ձեզ. Ահա անապատումն է, դուրս չ'գնաք. Ահա
27 ներսի սենեակումն է. չ'հաւատաք ։ Որովհետև ինչ-
պէս կայծակը դուրս է գալիս արևելքից և երև-

ւում մինչև արևմուտք. այնպէս էլ կ'լինի մարդի
28 Որդուն գալուստը ։ Որովհետև որտեղ մեռած
մարմինը լինի, այնտեղ կ'հաւաքուին արծիւները ։
29 Եւ շուտով այն նեղութեան օրերից յետոյ ա-
րեգակը կ'խաւարի, և լուսինն իր լոյսը չի տալ. և
աստղերը երկնքից վայր կ'ընկնեն, և երկնքի զօ-
30 րութիւնները կ'շարժուին ։ Եւ այն ժամանակ կ'ե-
րևի մարդի Որդու նշանը երկնքումը, և այն ժա-
մանակ կոծ կ'անեն երկրի բոլոր ազգերը. և կը
տեսնեն մարդի Որդին գալիս երկնքի ամպերի վե-
31 րայ զօրութիւնով և շատ փառքով ։ Եւ նա կ'ու-
ղարկէ իր հրեշտակները մեծաձայն փողով, և նո-
րանք կ'ժողովեն նորա ընտրուածներին չորս հող-
միցս՝ երկնքի ծայրերից մինչև նորա միւս ծայրերը ։
32 Թզենուցը սովորեցէք առակը. երբոր նորա ճղե-
րըն արդէն կակուղացել են և տերևը բուսել է,
33 գիտէք որ մօտ է ամառը ։ Այնպէս էլ դուք ։
երբոր այս ամենը տեսնէք, իմացէք որ մօտ է՝ դռ-
34 ներին է ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ Այս ազգը չի
35 անցնիլ, մինչև որ այս ամենը լինի ։ Երկինքն ու
երկիրը կ'անցնեն, բայց իմ խօսքերս չեն անցնիլ ։
36 Իսկ այն օրուայ և ժամի համար ոչ ով չ'գիտէ,
ոչ էլ երկնքի հրեշտակները, բայց միայն իմ Հայ-
37 րը ։ Եւ ինչպէս Նոյի օրերն, այնպէս կ'լինի և մար-
38 դի Որդու գալուստը ։ Որովհետև ինչպէս որ էին
ջրհեղեղից առաջ եղած օրերը, ուտում էին և
խմում էին, կին էին առնում և մարդի էին դր-
նում, մինչև այն օրն, որ Նոյը մտաւ տապանը.
39 Եւ չ'գիտացին, մինչև որ ջրհեղեղն եկաւ, և ա-
մենքը վեր առաւ, այնպէս կ'լինի և մարդի Որդու
գալուստը ։
40 Այն ժամանակ երկու հոգի կ'լինին արտումը.
41 մէկը կ'առնուի և մէկը կ'թողուի ։ Եւ երկու հո-

գի մի ջաղացում կ՚աղան՝ մէկը կ՚առնուի և մէ-
կը կ՚թողուի ։
42 Արդ՝ արթուն կացէք. որ չ՚գիտէք թէ ո՞ր ժա-
43 մում ձեր Տէրը կ՚գայ ։ Բայց այս իմացէք, որ ե-
թէ տան տէրը գիտենար թէ որ պահում կ՚գայ
գողը, արթուն կ՚կենար և թող չէր տալ որ իր
44 տունը ծակեն ։ Սորա համար դուք էլ պատրաստ
կացէք որ այն ժամին, որ դուք չէք կարծում,
45 մարդի Որդին կ՚գայ ։ Ուրեմն ո՞վ է այն հաւատա-
րիմ և իմաստուն ծառան, որի տէրը նորան իր ծա-
ռաների վերայ դրաւ, որ նորանց կերակուրը տայ
46 ժամանակին ։ Երանի այն ծառային, որ նորա տէ-
րը, երբոր գայ, նորան այնպէս անելիս գտնէ ։
47 Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նորան իր ամեն ու-
48 նեցածների վերայ կ՚դնէ ։ Բայց եթէ այն չար ծա-
ռան իր սրտումն ասէ, իմ տէրը գալը ուշացնում
49 է. Եւ սկսէ իր ծառայակիցներին ծեծել՝ և արբե-
50 ցողների հետ ուտել և խմել. Այն ծառայի տէրը
մի օր կ՚գայ, որ նա չէ սպասում, և մի ժամ՝ որ
51 նա չ՚գիտէ ։ Եւ նորան միջիցը կ՚կտրէ, և նորա բա-
ժինը կեղծաւորների հետ կ՚դնէ. այնտեղ կ՚լինի
լացը և ատամների կրճտելը ։

ԳԼ. ԻԵ

1 Այն ժամանակ կ՚նմանի երկնքի արքայութիւնը
տասը կոյսերի, որ իրանց լապտերները վեր առան
2 և դուրս եկան փեսային դիմաւորելու ։ Նորանցից
3 հինգը իմաստուն էին, և հինգը յիմար ։ Այն յի-
մարները վեր առան իրանց լապտերները, բայց
4 ձէթ վեր չ՚առան իրանց հետ ։ Սակայն իմաստուն-
ներն իրանց ամաններումը ձէթ վեր առան իրանց
5 լապտերների հետ մէկտեղ ։ Եւ երբոր փեսան ու-

6 շացաւ, ամենքը թմրեցան և քնեցին ։ Եւ կէս գի-
շերին աղաղակ եղաւ՝ Ահա փեսան գալիս է. դուրս
7 եկէք նորան դիմաւորելու ։ Այն ժամանակ ամեն
կոյսերը վերկացան և իրանց լապտերները պատրաս-
8 տեցին ։ Բայց յիմարներն ասեցին իմաստուններին.
Տուէք մեզ ձեր իւղիցը, որովհետև մեր լապտեր-
9 ները հանգչում են ։ Իմաստուններն էլ պատաս-
խանեցին և ասեցին. Մի գուցէ մեզ և ձեզ բա-
ւական չ՚լինի. բայց աւելի լաւ՝ գնացէք ծախողնե-
10 րի մօտ և գնեցէք ձեզ համար ։ Եւ երբոր նո-
րանք գնացին գնելու, փեսան եկաւ. և պատ-
րաստները նորա հետ հարսանիքը մտան, և դուռն
11 փակուեցաւ ։ Եւ յետոյ այն միւս կոյսերն էլ եկան
12 և ասեցին. Տէր, Տէր, բաց մեզ ։ Նա էլ պատաս-
խանեց և ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, Ես
13 չեմ ճանաչում ձեզ ։ Արդ՝ արթուն կացէք. որով-
հետև չ՚գիտէք ոչ օրը և ոչ ժամը, [որ նորանում
մարդի Որդին կ՚գայ ։]
14 Որովհետև ինչպէս մի մարդ, որ օտար երկիր էր
գնում, իր ծառաներին կանչեց, և իր ունեցածը
15 նորանց յանձնեց ։ Եւ մէկին հինգ քանքար տուաւ,
և միւսին՝ երկու, և միւսին՝ մէկ, իւրաքանչիւրին
16 իր կարողութեան չափ, և շուտով գնաց ։ Եւ այն
հինգ քանքար առնողը գնաց նորանցով բան արաւ
17 և ուրիշ հինգ քանքար էլ շահեց ։ Այնպէս էլ
նա՝ որ երկուսն ——, ուրիշ երկուսն էլ շահեց ։
18 Իսկ այն մէկն առնողը գնաց՝ գետինը փորեց՝ և իր
19 տիրոջ արծաթը թագցրեց ։ Եւ շատ ժամանակից
յետոյ գալիս է այն ծառաների տէրը և նորանցից
20 հաշիւ առնում ։ Եւ այն հինգ քանքար առնողը
մօտ եկաւ. ուրիշ հինգ քանքար էլ առաջ բերաւ
և ասեց. Տէր, ինձ հինգ քանքար տուիր, տես,
ուրիշ հինգ քանքար էլ շահեցի նորանց վերայ ։

21 Նորա տէրն էլ ասեց նորան. Լա՛ւ, բարի և հա-
ւատարիմ ծառայ, քիչ բաների վերայ հաւատա-
րիմ էիր, ես քեզ շատ բաների վերայ կ'դնեմ.
22 մտիր քո տիրոջ ուրախութիւնը։ Եւ այն երկու
քանքար առնողն էլ մօտ եկաւ և ասեց. Տէր, ինձ
երկու քանքար տուիր. տես, երկու ուրիշ քան-
23 քար էլ շահեցի նորանց վերայ։ Նորա տէրը նորան
ասեց. Լա՛ւ, բարի և հաւատարիմ ծառայ. քիչ
բաների վերայ հաւատարիմ էիր, ես քեզ շատ
բաների վերայ կ'դնեմ. մտիր քո տիրոջ ուրախու-
24 թիւնը։ Եւ այն մէկ քանքար առնողն էլ մօտ ե-
կաւ և ասեց. Տէ՛ր, ես ճանաչում էի քեզ, որ
դու մի պինդ մարդ ես. հնձում ես ուր որ չ'սեր-
25 մեցիր, և հաւաքում ես, ուր որ չ'փռեցիր։ Եւ
վախենալով գնացի՝ թագցրի քո քանքարը գետնի
26 մէջ. ահա քոնը առ։ Նորա տէրն էլ պատասխա-
նեց և ասեց նորան. Չար և ծոյլ ծառայ, գիտէիր
որ ես հնձում եմ ուր որ չ'սերմեցի, և հաւա-
27 քում եմ ուր որ չ'փռեցի։ Ուրեմն պէտք էր որ
իմ արծաթը սեղանաւորներին տայիր՝ և ես կ'գայի
28 տոկոսով կ'առնէի իմը։ Արդ՝ առէք դորանից քան-
29 քարը, և տուէք տասը քանքարն ունեցողին։ Որով-
հետև ամեն ով որ ունի՝ նորան կ'տրուի և կ'աւե-
լանայ, բայց նա որ չ'ունի՝ նորանից այն ունեցածն
30 էլ վեր կ'առնուի։ Եւ այն անպիտան ծառային
հանեցէք դրսի խաւարը, այնտեղ կ'լինի լացը և
ատամների կրճտելը։

31 Եւ երբոր մարդի Որդին իր փառքովը կ'գայ և
ամեն սուրբ հրեշտակները նորա հետ, այն ժամա-
32 նակ կ'նստի իր փառաց աթոռի վերայ. Եւ ամեն
ազգերը կ'ժողովուին նորա առաջը, և նա նորանց
կ'բաժանէ իրարից ինչպէս հովիւը բաժանում է
33 ոչխարներն այծերիցը. Եւ ոչխարներն իր աջ կող-

մին կ'կանգնեցնէ, իսկ այծերը՝ ձախ կողմին։
34 Այն ժամանակ թագաւորը կ'ասէ իր աջ կող-
միններին, Եկէք, ով իմ Հօր օրհնածները, ժա-
ռանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ համար պատ-
35 րաստուած թագաւորութիւնը։ Որովհետև սովե-
ցի, և դուք տուիք ինձ ուտել. ծարաւեցի և
խմեցրիք ինձ. օտար էի, և ինձ ձեզ մօտ առաք.
36 Մերկ էի, և հագցրիք ինձ. հիւանդ էի, և ինձ
այցելեցիք. բանտի մէջ էի, և ինձ մօտ եկաք։
37 Այն ժամանակ արդարները կ'պատասխանեն նորան
և կ'ասեն. Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ սոված, և կե-
38 րակրեցինք, կամ ծարաւ, և խմեցրինք։ Ե՞րբ տե-
սանք քեզ օտար, և մեզ մօտ առանք, կամ մերկ,
39 և հագցրինք։ Ե՞րբ տեսանք քեզ հիւանդ, կամ
40 բանտի մէջ, և եկանք քեզ մօտ։ Թագաւորն էլ
կ'պատասխանէ և կ'ասէ նորանց. Ճշմարիտ ասում
եմ ձեզ, որովհետև այս իմ փոքր եղբայրներից
մէկին արիք, ինձ արիք։

41 Այն ժամանակ կ'ասէ ձախ կողմիններին էլ.
ինձանից դէն գնացէք, ով անիծեալներ, յաւիտե-
նական կրակի մէջ, որ պատրաստուած է սատա-
42 նայի և նորա հրեշտակների համար։ Որովհետև ես
սովեցի, և դուք չ'տուիք ինձ ուտել, ծարաւեցի,
43 և ինձ չ'խմեցրիք։ Օտար էի՝ և ինձ ձեզ մօտ չ'ա-
ռաք, մերկ՝ և ինձ չ'հագցրիք, հիւանդ և բանտի
44 մէջ՝ և ինձ չ'այցելեցիք։ Այն ժամանակ նորանք
էլ կ'պատասխանեն և կ'ասեն. Տէ՛ր, քեզ ե՞րբ
տեսանք սոված, կամ ծարաւ, կամ օտար, կամ
մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, և քեզ
45 ծառայութիւն չ'արինք։ Այն ժամանակ կ'պատաս-
խանէ նորանց և կ'ասէ. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝
որովհետև այս փոքրներից մէկին չ'արիք, ինձ էլ
չ'արիք։

46 Եւ սորանք կ'գնան յաւիտենական տանջանքը,
իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը:

ԳԼ. ԻԶ.

1 Եւ եղաւ երբոր Յիսուսը այս ամեն խօսքերը վեր-
2 ջացրեց, իր աշակերտներին ասեց. Գիտէք, որ եր-
կու օրից յետոյ զատիկ կ'լինի. և մարդի Որդին
3 կ'մատնուի խաչուելու: Այն ժամանակ քահանա-
յապետները և դպիրները և ժողովրդի ծերերը ժո-
ղովուեցան այն քահանայապետի սրահը, որի ա-
4 նունը Կայիափա էր: Եւ խորհուրդ արին, որ Յի-
5 սուսին բռնեն նենգութեամբ և սպանեն: Բայց
ասում էին, Այս տօնին ոչ, որ ժողովրդի մէջ
խռովութիւն չ'լինի:
6 Եւ երբոր Յիսուսը Բեթանիա էր՝ Սիմօն բորոտի
7 տանը, Նորա մօտ մի կին եկաւ, որ մի շիշ ծան-
րագին իւղ ունէր, և նորա գլխի վերայ թափեց,
8 երբոր նա սեղան նստած էր: Նորա աշակերտներն
էլ տեսնելով նեղացան և ասեցին. Ի՞նչու եղա-
9 ւ այդ կորուստը. Որովհետև կարող էր այդ իւղը
10 շատի ծախուել և աղքատներին տրուել: Յիսուսն
էլ իմանալով ասեց նորանց. Ի՞նչու էք այդ կնոջը
նեղութիւն տալիս, որ դա մի բարի բան գործեց
11 ինձ վերայ: Որովհետև աղքատներն ամեն ժամա-
նակ ունիք ձեզ հետ. բայց ինձ միշտ ձեզ հետ
12 չ'ունիք: Դա այդ իւղն իմ մարմնի վերայ թափե-
13 լով, իմ թաղուելու մասին արաւ: Բայց ճշմարիտ
ասում եմ ձեզ, ուր որ էլ բոլոր աշխարհքի մէջ
այս աւետարանը քարոզուի, կ'խօսուի նա էլ, որ
դա արաւ՝ դորա յիշատակի համար:
14 Այն ժամանակ տասներկուսից մէկը, որ Յու-
դա Իսկարիովտացի էր ասվում, գնաց քահանայա-

15 պետների մօտ և ասեց. Ի՞նչ էք կամենում ինձ
տալ, և ես ձեզ մատնեմ նորան: Եւ նորանք ե-
16 րեսուն արծաթ կշռեցին տուին նորան: Եւ նա այ-
նուհետև յարմար ժամանակ էր որոնում, որ նո-
րան մատնէ:
17 Եւ բաղարջակերաց առաջին օրը աշակերտները
Յիսուսի մօտ եկան և ասեցին նորան, Ո՞րտեղ ես
կամենում, որ քեզ համար զատիկը պատրաստենք
18 ուտելու: Նա էլ ասեց. Գնացէք քաղաքը՝ այսին-
չի մօտ, և ասեցէք նորան. Վարդապետն ասում
է՝ Իմ ժամանակը մօտ է. քեզ մօտ եմ անելու
19 զատիկն իմ աշակերտների հետ: Եւ աշակերտներն
արին ինչպէս Յիսուսը հրամայեց նորանց. և զա-
տիկը պատրաստեցին:
20 Եւ երբոր իրիկուն եղաւ տասներկուսի հետ
21 սեղան նստեց: Եւ նորանք ուտելիս, ասեց. Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, որ ձեզանից մէկը կ'մատնէ
22 ինձ: Եւ նորանց ամեն մէկը շատ տրտմած՝ սկը-
23 սեցին նորան ասել. միթէ ե՞ս եմ, Տէր: Նա էլ
պատասխանեց և ասեց. Նա որ ինձ հետ իր ձեռքը
24 սկաւառակի մէջ մացրեց, նա կ'մատնէ ինձ: Իրա-
ւի մարդի Որդին կ'գնայ, ինչպէս նորա համար
գրուած է. բայց վա՜յ այն մարդին, որի ձեռով
մարդի Որդին կ'մատնուի. Լաւ էր նորան, թէ այն
25 մարդը ծնուած չ'լինէր: Յուդան էլ՝ նորա մատնո-
ղը՝ պատասխանեց և ասեց. Միթէ ե՞ս եմ, Վար-
դապետ: Նորան ասեց, Դու ասեցիր:
26 Եւ նորանք դեռ ուտում էին, Յիսուսը հացն
առաւ և օրհնելով կտրեց, և աշակերտներին
տուաւ և ասեց. Առէ՛ք կերէք, այս է իմ մարմի-
27 նը: Եւ բաժակն առաւ, գոհացաւ, նորանց տուաւ
28 և ասեց. Խմեցէ՛ք դորանից ամենքդ: Որովհետև
այդ է իմ արիւնը նոր ուխտի, որ թափվում է

29 շատերի համար ի թողութիւն մեղաց ։ Միայն ա-
սում եմ ձեզ, թէ Այսուհետև որթի այս բեր-
քիցն էլ չեմ խմիլ մինչև այն օրը, որ դորան ձեզ
հետ նոր կ'խմեմ իմ Հօր արքայութեան մէջ ։
30 Եւ օրհներգելուց յետոյ դուրս ելան Ձիթենեաց
31 սարը ։ Այն ժամանակ Յիսուսը նորանց ասեց .
Դուք ամենքդ այս գիշեր կ'գայթակղիք ինձանից .
որովհետև գրուած է՝ Ես հովիւը կ'զարկեմ՝ և
32 հօտի ոչխարները կ'ցրուին ։ Բայց իմ յարութիւն
առնելուցը յետոյ ձեզանից առաջ կ'գնամ Գալիլ-
33 եա ։ Պետրոսը պատասխանեց և ասեց նորան. Թէև
ամենքը գայթակղեն քեզանից, ես երբէք չեմ գայ-
34 թակղիլ ։ Յիսուսը նորան ասեց . Ճշմարիտ ասում
եմ քեզ . այս գիշեր դեռ հաւը չ'խօսած՝ երեք
35 անգամ կ'ուրանաս ինձ ։ Պետրոսը նորան ասեց .
եթէ քեզ հետ մեռնելու էլ լինիմ, չեմ ուրանալ
քեզ . այնպէս էլ բոլոր աշակերտներն էին ասում ։
36 Այն ժամանակ Յիսուսը նորանց հետ մի տեղ
եկաւ՝ անունը Գեթսեմանի, և ասեց աշակերտնե-
րին . Այդտեղ նստեցէք, մինչև որ ես գնամ ա-
37 ղօթք անեմ այնտեղ ։ Եւ Պետրոսին և Զեբեդեայի
երկու որդկանցն իր հետ առաւ, սկսեց տրտմիլ
38 և վշտանալ ։ Այն ժամանակ նորանց ասեց . Հոգիս
մեռնելու չափ տրտմած է . այստեղ մնացէք, և
39 ինձ հետ արթուն կացէք ։ Եւ մի քիչ առաջ գը-
նալով իր երեսի վերայ ընկաւ, աղօթք էր անում
և ասում . Իմ Հայր, եթէ կարելի է, թող այս
բաժակն ինձանից անցնի . սակայն ոչ թէ ինչպէս
40 ես եմ կամենում, այլ ինչպէս դու ։ Եւ աշակերտա-
ների մօտ է գալիս, և նորանց քնի մէջ է գտնում
և ասում է Պետրոսին . Այդպէս՝ մէկ ժամ է՞լ
41 չ'կարացիք ինձ հետ արթուն կենալ ։ Արթուն կա-
ցէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չ'մըտ-

42 նէք . հոգին յօժար է, բայց մարմինը տկար ։ Դար-
ձեալ երկրորդ անգամ Յիսուսը գնաց, աղօթք ա-
րաւ՝ և ասեց . Իմ Հայր, եթէ կարելի չէ որ այս
բաժակն ինձանից անցնի առանց իմ նորան խմե-
43 լուս, քո կամքը լինի ։ Եւ գալով նորանց դարձեալ
քնի մէջ է գտնում . որովհետև նորանց աչքերը
44 ծանրացել էին ։ Նորանց թողեց՝ դարձեալ գնաց,
և երրորդ անգամ աղօթք արաւ և միենոյն խօսքն
45 ասեց ։ Այն ժամանակ գալիս է իր աշակերտների
մօտ և նորանց ասում . Այսուհետև քնեցէք և
հանգստացէք . որ ահա հասել է ժամը, և մարդի
46 Որդին մատնվում է մեղաւորների ձեռը ։ Վեր կա-
ցէք գնանք, ահա հասաւ ինձ մատնողը ։
47 Եւ նա տակաւին խօսում էր, ահա Յուդան՝ այն
տասներկուսից մէկը եկաւ, և նորա հետ մեծ
ամբոխ սրերով և բիրերով՝ քահանայապետների և
48 ժողովրդի ծերերի կողմից ։ Եւ նորան մատնողը նո-
րանց նշան էր տուել և ասել . Որին որ համբու-
49 րեմ՝ նա է, նորան բռնեցէք ։ Եւ շուտով Յիսուսի
մօտ եկաւ և ասեց . Բարև, վարդապետ . և համ-
50 բուրեց նորան ։ Յիսուսն էլ ասեց նորան . Ընկեր,
ի՞նչու համար եկար . և այն ժամանակ մօտ եկան՝
51 Յիսուսին ձեռք ձգեցին՝ և բռնեցին նորան ։ Եւ
ահա Յիսուսի հետ լինողներից մէկը ձեռքը մեկ-
նեց, իր սուրը հանեց, և քահանայապետի ծառա-
52 յին զարկելով ականջը կտրեց ։ Այն ժամանակ Յի-
սուսը նորան ասեց . Սուրդ տեղը դիր . որովհետև
բոլոր սուր վեր առնողները սրով պիտի կորչեն ։
53 Կամ կարծո՞ւմ ես թէ չեմ կարող հիմա իմ Հօրն
աղաչել, որ հասցնէ ինձ աւելի քան տասներկու
54 գունդ հրեշտակներ ։ Բայց ինչպէս կ'կատարուին
գրքերը, թէ այսպէս պէտք է լինել ։
55 Այն ժամին Յիսուսն այն ամբոխներին ասեց .

Ինչպէս մի աւազակի՞ վերայ սրերով և բրերով
դուրս եկաք ինձ բռնելու. ամեն օր ձեզ մօտ նըս-
տում էի և տաճարումը սովորեցնում էի, և չը
56 բռնեցիք ինձ ։ Բայց այս ամենը եղաւ, որ մարգա-
րէների գրքերը կատարուին։ Այն ժամանակ բոլոր
աշակերտները նորան թողեցին փախան ։
57 Բայց նորանք Յիսուսին բռնեցին տարան Կայիա-
փա քահանայապետի մօտ, ուր որ դպիրները և
58 ծերերը ժողովուած էին ։ Պետրոսն էլ գնում էր
նորա ետևից հեռուանց մինչև քահանայապետի
սրահը, և ներս մտաւ, ծառաների հետ նստեց՝ վեր-
59 ջը տեսնելու։ Բայց քահանայապետները և ծերերը
և բոլոր ատեանը Յիսուսի դէմ սուտ վկայութիւն
60 էին որոնում որ նորան սպանեն, բայց չ՚գտան։ Եւ
թէպէտ շատ սուտ վկաներ էին եկել, բայց չ՚գը-
տան. վերջապէս երկու սուտ վկաներ առաջ եկան,
61 Եւ ասեցին. Սա ասեց Ես կարող եմ Աստուծոյ
տաճարը քանդել՝ և երեք օրումը շինել նորան ։
62 Եւ քահանայապետը վեր կացաւ նորան ասեց. Ոչ-
ինչ չե՞ս պատասխանում. դորանք ի՞նչ են վկայում
63 քեզ դէմ։ Եւ Յիսուսը լուռ էր կենում։ Եւ քա-
հանայապետը պատասխանեց և ասեց նորան. Եր-
դում եմ տալիս քեզ կենդանի Աստուծովը որ
մեզ ասես, թէ դո՞ւ ես Քրիստոսը Աստուծոյ Որ-
64 դին։ Յիսուսն էլ նորան ասեց. Դու ասեցիր. սա-
կայն ասում եմ ձեզ, որ հիմիկուց յետոյ կ՚տես-
նէք մարդի Որդին Զօրութեան աջ կողմը նստած՝
65 և երկնքի ամպերի վերայ գալիս ։ Այն ժամանակ
քահանայապետն իր հանդերձները պատառեց և
ասեց թէ Հայհոյեց. էլ ի՞նչ պէտք են մեզ վկա-
66 ներ. ահա հիմա դորա հայհոյանքը լսեցիք ։ Ի՞նչ-
պէս է երևում ձեզ։ Նորանք էլ պատասխանեցին
67 և ասեցին. Մահապարտ է։ Այն ժամանակ թքե-

ցին նորա երեսին, և բռնցքով ծեծեցին նորան,
68 ոմանք էլ ապտակ տուին նորան, ասելով. Մար-
գարէացիր մեզ, Քրիստոս, ո՞վ էր քեզ զարկողը ։
69 Եւ Պետրոսը դուրսը նստած էր սրահումը, և
մէկ աղախին եկաւ նորա մօտ և ասեց. Դու էլ
70 Գալիլեացի Յիսուսի հետ էիր ։ Նա էլ բոլորի ա-
ռաջին ուրացաւ և ասեց. Ես չեմ իմանում թէ
71 դու ինչ ես ասում։ Եւ երբոր նա դուրսը բակը
գնաց, մի ուրիշը նորան տեսաւ և այնտեղ լինող-
ներին ասեց. Սա էլ էր Նազովրեցի Յիսուսի հետ ։
72 Եւ նա դարձեալ ուրացաւ երդումով, թէ Ես
73 այն մարդին չեմ ճանաչում։ Եւ քիչ ժամանակից
յետոյ այնտեղ կանգնողները եկան և Պետրոսին
ասեցին. Ճշմարիտ՝ դու էլ նորանցից ես. որովհե-
74 տև քո խօսելն էլ յայտնի է անում քեզ։ Այն
ժամանակ նա սկսեց անիծել և երդուել՝ թէ այն
մարդին չեմ ճանաչում, և շուտով հաւը խօսեց ։
75 Եւ Պետրոսը յիշեց Յիսուսի այն խօսքն, որ ասեց
թէ Հաւը խօսելուց առաջ՝ երեք անգամ կ՚ուրա-
նաս ինձ. և դուրս գնաց դառնապէս լացաւ ։

ԳԼ. ԻԷ

1 Եւ երբոր առաւօտ եղաւ, բոլոր քահանայա-
պետները և ժողովրդի ծերերը Յիսուսի դէմ խոր-
2 հուրդ արին, որ սպանեն նորան։ Եւ նորան կապե-
լով տարան և Պոնտացի Պիղատոս կուսակալին
յանձնեցին ։
3 Այն ժամանակ նորա մատնիչը Յուդան տեսնե-
լով որ դատապարտուեցաւ, զղջացած այն երեսուն
արծաթը ետ դարձրեց քահանայապետներին և ծե-
4 րերին, Եւ ասեց, Ես մեղք գործեցի՝ անմեղ արիւն
մատնելով։ Նորանք էլ ասեցին, Մե՞զ ինչ. դու

5 տեսւ։ Եւ նա արծաթը գցեց տաճարի մէջ՝ հեռա-
6 ցաւ, և գնաց ինքնիրան խեղդեց։ Եւ քահանայա-
պետներն որ արծաթն առան՝ ասեցին. Արժան
չէ՛ դորան գանձանակի մէջ ընդունել, որովհետև
7 արիւնի գին է։ Եւ խորհուրդ արին և նորանով
բրուտի արտատեղն առան, օտարականների գե-
8 րեզմանատեղի համար։ Նորա համար այն արտա-
9 տեղը Արիւնի արտ կոչուեցաւ մինչև այսօր։ Այն
ժամանակ կատարուեցաւ Երեմիա մարգարէի ձե-
ռով ասուածը, Եւ երեսուն արծաթն առան՝ այն
գնահատուածի գինը, որ Իսրայէլի որդիներից ոմանք
10 գնահատել էին, Եւ նորան բրուտի արտին տուին,
ինչպէս որ հրամայեց ինձ Տէրը։
11 Եւ Յիսուսը կանգնեց կուսակալի առաջը. և
կուսակալը հարցրեց նորան և ասեց. Դո՞ւ ես Հրէ-
աների թագաւորը։ Յիսուսն էլ ասեց նորան, Դու
12 ես ասում։ Եւ երբոր քահանայապետներիցը և ծե-
րերիցը ամբաստանվում էր՝ ոչինչ չ՚պատասխանեց։
13 Այն ժամանակ Պիղատոսը ասեց նորան. Չե՞ս լը-
սում՝ ո՞րչափ բաներ են վկայում քեզ հակառակ։
14 Եւ նա նորան ոչ մէկ բան էլ չ՚պատասխանեց.
մինչև որ կուսակալն էլ շատ զարմացաւ։
15 Բայց սովորութիւն էր կուսակալին տօնի ժամա-
նակին մէկ կապուած արձակել ժողովրդի համար.
16 որին որ ուզէին։ Եւ այն ժամանակ մի նշանաւոր
17 բանտարկեալ ունէին, անունը Բարաբբա։ Արդ՝
երբոր նորանք հաւաքուեցան, Պիղատոսը ասեց նո-
րանց. Ո՞րն էք ուզում որ ձեզ համար արձակեմ.
Բարաբբայի՞ն, թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչ-
18 վում։ Որովհետև գիտէր, որ նախանձով էին մատ-
նել նորան։
19 Եւ երբոր նա ատեան նստած էր, նորա կինը
մարդ ուղարկեց նորա մօտ և ասեց. Այդ արդար

մարդի հետ դու բան չ՚ունիս. որովհետև շատ բա-
20 ներ քաշեցի այսօր նորա պատճառովը։ Բայց քա-
հանայապետները և ծերերը ժողովրդին համոզե-
ցին, որ Բարաբբային ուզեն, իսկ Յիսուսին կորցը-
21 նեն։ Եւ կուսակալը պատասխանեց և ասեց նո-
րանց. Այս երկուսից ո՞րն էք ուզում, որ արձա-
կեմ ձեզ համար։ Եւ նորանք ասեցին, Բարաբբա-
22 յին։ Պիղատոսն ասեց նորանց. Ապա ի՞նչ անեմ
Յիսուսին որ Քրիստոս է կոչվում։ Ամենքն ասե-
23 ցին. Թող խաչուի։ Եւ կուսակալն ասեց, Ապա
ի՞նչ չար բան է արել։ Բայց նորանք էլ աւելի էին
24 աղաղակում և ասում, Խաչուի։ Պիղատոսն էլ
երբոր տեսաւ, թէ ոչինչ օգուտ չէ անում, այլ
աւելի խռովութիւն է լինում, ջուր առաւ՝ ձեռ-
քերը լուաց ժողովրդի առաջին և ասեց. Ես այդ
25 արդարի արիւնից անմեղ եմ, դուք տեսէք։ Եւ
բոլոր ժողովուրդը պատասխանեց և ասեց. Դորա
26 արիւնը մեզ վերայ և մեր որդկանց վերայ։ Այն
ժամանակ նա Բարաբբային արձակեց նորանց հա-
մար, և Յիսուսին ծեծելուց յետոյ յանձնեց որ
խաչուի։
27 Այն ժամանակ կուսակալի զինուորները Յիսու-
սին տարան պալատը, և բոլոր զօրագունդը հաւա-
28 քեցին նորա վերայ։ Եւ նորան մերկացնելով նորա
29 վերայ մի կարմիր քղամիդ գցեցին։ Եւ փշերից մի
պսակ ոլորեցին՝ նորա գլխին դրին, և նորա աջ
ձեռքին մի եղէգ. և նորա առաջը ծունր դնելով
ծաղր էին անում և ասում. Ողջ լեր, Հրէաների
30 թագաւոր։ Եւ նորա վերայ թքելով՝ եղէգն առ-
31 նում էին և նորա գլուխը ծեծում։ Եւ երբոր ծաղր
արին նորան, կարմիր քղամիդը նորանից հանեցին՝ և
նորան հագցրին իր հանդերձները, և տարան նո-
րան խաչելու։

32 Եւ երբոր դուրս եկան, մի Կիւրենացի մարդ
գտան՝ անունը Սիմօն, նորան պահակ բռնեցին, որ
33 նորա խաչը վեր առնէ ։ Եւ երբոր Գողգոթա աս-
34 ուած տեղն եկան, որ գանկի տեղ ասել է, Նորան
լեղիի հետ խառնած գինի տուին խմելու. և երբոր
35 ճաշակեց, չէր կամենում խմել ։ Եւ նորան խաչը
հանելով բաժանեցին նորա հանդերձները՝ վիճակ
գցելով, որ կատարուի մարգարէի ձեռով ասուա-
ծը՝ Իմ հանդերձներն իրանց մէջ բաժանեցին, և
36 իմ պատմուճանի վերայ վիճակ գցեցին ։ Եւ նըս-
37 տած նորան պահում էին այնտեղ ։ Եւ նորա յան-
ցանքը գրուած դրին նորա գլխիցը վեր․ ԱՅՍ Է
38 ՅԻՍՈՒՍ՝ ՀՐԷԻՑ ԹԱԳԱՒՈՐԸ ։ Այն ժամանակ նո-
րա հետ երկու աւազակներ խաչուեցան՝ մէկը աջ
կողմին և միւսը ձախ կողմին ։

39 Եւ անցնող դարձողները հայհոյում էին նորան,
40 իրանց գլուխները շարժելով, և ասում էին․ Ով
տաճարը քանդող՝ և երեք օրում շինող, ազատիր
քեզ․ եթէ Աստուծոյ Որդի ես, իջիր խաչիցը ։
41 Այնպէս էլ քահանայապետներն էին ծաղր անում
42 դպիրների և ծերերի հետ և ասում․ Ուրիշներին
ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել․
թէ որ Իսրայէլի թագաւորն է, իջնէ հիմա խաչի-
43 ցը, և կ՚հաւատանք դորան ։ Աստուծուն յուսա-
ցաւ, հիմա թող նա փրկէ դորան, եթէ ուզում
է դորան․ որովհետև ասեց, թէ Աստուծոյ Որդի
44 եմ ։ Միևնոյնն էլ աւազակները, որ նորա հետ
խաչուած էին, նախատում էին նորան ։

45 Եւ ժամը վեցից խաւար եղաւ բոլոր երկրի վե-
46 րայ մինչև իննը ժամը ։ Եւ ժամը իննի դէմ, Յիսու-
սը մեծ ձայնով աղաղակեց և ասեց․ Էլի՛ Էլի՛ լա՛-
մա սաբաքթանի․ այսինքն, Իմ Աստուած՝ իմ Աս-
47 տուած, ի՞նչու թողեցիր ինձ ։ Այնտեղ կանգնած-

ներից ոմանք էլ երբոր լսեցին, ասում էին թէ
48 Եղիային է կանչում դա ։ Եւ շուտով նորանցից
մէկը վազեց՝ մի սպունգ առաւ քացախով լցրեց,
եղէգի վերայ անցրեց՝ և նորան տուաւ, որ խմէ․
49 Եւ միւսներն ասում էին, Թող տեսնենք, թէ
Եղիան կ՚գա՞յ՝ դորան փրկէ ։

50 Յիսուսը դարձեալ մեծ ձայնով կանչեց՝ և ար-
ձակեց հոգին ։

51 Եւ ահա տաճարի վարագոյրն երկու ճղուեցաւ
վերևից մինչև ցածը, և երկիրը շարժուեց․ և
52 քարերը պատառուեցան․ Եւ գերեզմանները բաց-
ուեցան․ և շատ սուրբ ննջեցեալների մարմիններ
53 յարութիւն առան․ Եւ գերեզմաններից դուրս
գալով, նորա յարութիւնից յետոյ, սուրբ քաղա-
քը մտան, և շատերին երևեցան ։

54 Բայց հարիւրապետը և նորանք որ նորա հետ
Յիսուսին պահում էին, երբոր երկրաշարժը և այն
եղածները տեսան, շատ վախեցան և ասեցին․ Ճըշ-
մարիտ որ սա Աստուծոյ Որդի էր ։

55 Եւ այնտեղ շատ կանայք կային, որ հեռուանց
մտիկ էին տալիս, որ Գալիլէայից Յիսուսի ետևից
56 եկան նորան ծառայութիւն անելու ։ Նորանց միջումն
էր Մարիամ Մագդաղենացին՝ և Մարիամ Յակո-
բի և Յովսէի մայրը՝ և Զեբեդիայի որդկանց մայրը ։
57 Եւ երբոր իրիկուն եղաւ Արիմաթիայից մի հա-
րուստ մարդ եկաւ՝ անունը Յովսէփ, որ ինքն էլ
58 աշակերտ եղած էր Յիսուսին ։ Սա գնաց Պիղատո-
սի մօտ և Յիսուսի մարմինը խնդրեց․ այն ժամա-
59 նակ Պիղատոսը հրամայեց որ մարմինը տրուի ։ Եւ
Յովսէփը մարմինն առնելով մաքուր կտաւով պա-
60 տանեց, Եւ դրաւ իր նոր գերեզմանի մէջ, որ վէ-
մի մէջ փորել էր․ և գերեզմանի դուռը մի մեծ
61 քար թաւալեց գնաց ։ Եւ այնտեղ էր Մարիամ

Մագդաղենացին և միւս Մարիամը, գերեզմանի
դիմացը նստած:
62 Եւ հետեւեալ օրը որ ուրբաթից յետոյ է, քա-
հանայապետները և փարիսեցիները հաւաքուեցան
63 Պիղատոսի մօտ, և ասեցին. Տէր, յիշում ենք որ
այն մոլորեցուցիչը, դեռ կենդանի, ասում էր Երեք
64 օրից յետոյ յարութիւն կ'առնեմ. Ուրեմն հրա-
մայիր, որ մինչև երրորդ օրը գերեզմանն զգուշու-
թիւնով պահեն. մի գուցէ աշակերտները գիշերը
գան՝ նորան գողանան. և ժողովրդին ասեն՝ Մեռել-
ներից յարութիւն առաւ, և յետին մոլորութիւ-
65 նը չար լինի քան թէ առաջինը: Պիղատոսն էլ ա-
սեց նորանց. Ունիք պահապան զինուորներ, գնա-
66 ցէք՝ զգոյշ պահեցէք՝ ինչպէս գիտէք: Նորանք էլ
գնացին գերեզմանին պահպանութիւն արին, քարը
կնքելով պահապան զինուորների հետ:

Գլ. ԻԸ

1 Եւ շաբաթ իրիկունն՝ որ միաշաբաթ էր լուսա-
նում, Մարիամ Մագդաղենացին եկաւ՝ և միւս
2 Մարիամը, գերեզմանը տեսնելու: Եւ ահա մեծ
շարժ եղաւ, որովհետև Տիրոջ հրեշտակը երկնքից
իջաւ գնաց՝ դռնիցն այն քարը հեռու թաւալեց,
3 և նորա վերայ նստեց: Եւ նորա կերպարանքը փայ-
լակի պէս էր, և նորա հագուստը ձիւնի պէս սպի-
4 տակ: Եւ նորա ահիցը պահապանները շփոթուե-
5 ցան, և մեռելի նման եղան: Եւ հրեշտակը պա-
տասխանեց և այն կանանցն ասեց, Մի՛ վախենաք
դուք, գիտեմ որ խաչուած Յիսուսին էք որոնում:
6 Այստեղ չէ. որովհետև յարութիւն առաւ, ինչ-
պէս ասեց. եկէք, տեսէք այն տեղը, ուր Տէրը
7 պառկած էր: Եւ շուտով գնացէք նորա աշակերտ-
ներին ասեցէք թէ Յարութիւն առաւ մեռելների-

ցը, և ահա նա ձեզանից առաջ Գալիլեա կ'գնայ.
8 այնտեղ նորան կ'տեսնէք. ահա ասեցի ձեզ: Եւ նո-
րանք շուտով գերեզմանիցը դուրս եկան՝ վախով և
մեծ ուրախութիւնով. և վազում էին՝ նորա աշա-
9 կերտներին պատմելու: Եւ երբոր գնում էին որ նո-
րա աշակերտներին պատմեն, ահա Յիսուսը պատա-
հեց նորանց և ասեց. Ողջոյն ձեզ. և նորանք մօտ ե-
կան, նորա ոտները բռնեցին և նորան երկրպագու-
10 թիւն արին: Այն ժամանակ Յիսուսը նորանց ա-
սեց. Մի վախենաք. գնացէք իմ եղբայրներին ասե-
ցէք, որ գնան Գալիլեա, և այնտեղ կ'տեսնեն ինձ:
11 Եւ երբոր նորանք գնացին՝ ահա պահապան զին-
ուորներից ոմանք եկան քաղաքը և պատմեցին քա-
12 հանայապետներին բոլոր եղածները: Եւ նորանք ծե-
րերի հետ հաւաքուած խորհուրդ արին, և շատ
13 փող տուին զինուորներին, Եւ ասեցին. Ասեցէք,
թէ նորա աշակերտները գիշերը եկան գողացան
14 նորան, երբոր մենք քնած էինք: Եւ եթէ այդ լու-
րը կուսակալին հասնէ, մենք կ'համոզենք նորան և
15 ձեզ անհոգ կ'անենք: Եւ նորանք փողն առնելով,
այնպէս արին ինչպէս սովորեցրուած էին. և այս
բանը հռչակուեցաւ Հրէաների մէջ մինչև այսօր:
16 Բայց տասնմէկ աշակերտները գնացին Գալիլեա
17 այն սարը որ Յիսուսը նորանց հրամայել էր: Եւ
երբոր նորան տեսան, երկրպագութիւն արին նո-
18 րան, բայց ոմանք երկմտեցին: Եւ Յիսուսը մօտ
գալով նորանց հետ խօսեց և ասեց, Ամեն իշխա-
նութիւնն ինձ տրուեցաւ երկնքումն և երկրումն.
19 Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նո-
րանց մկրտելով Հօր և Որդու և Սուրբ Հոգու ա-
20 նունովը. Նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ
ձեզ պատուիրեցի՝ պահեն. և ահա ես ձեզ հետ
եմ ամեն օր մինչև աշխարհքի վերջը: Ամէն:

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Աստուծոյ Որդի՝ Յիսուսի Քրիստոսի աւետարա-
նի սկիզբը ։
2 Ինչպէս գրուած է մարգարէներումը. Ահա ես
իմ հրեշտակն ուղարկում եմ քո երեսի առաջից,
3 որ պատրաստէ քո ճանապարհը քո առաջին. Կան-
չողի ձայնը անապատումը՝ պատրաստ արէք Տիրոջ
ճանապարհը, և շիտակ արէք նորա շաւիղները ։
4 Յովհաննէսը անապատումը մկրտում էր, և ապաշ-
խարութեան մկրտութիւն քարոզում՝ մեղաց թո-
5 ղութեան համար ։ Եւ գնում էր նորա մօտ Հրէ-
աստանի բոլոր երկիրն և ամեն Երուսաղէմացիք, և
ամենքը նորանից մկրտվում էին Յորդանան գե-
6 տումը, իրանց մեղքերը խոստովանելով ։ Եւ Յով-
հաննէսը ուղտի բուրդ էր հագած, և կաշուց գօ-
տիկ իր մէջքին, և նորա կերակուրը մարախ և վայ-
7 րի մեղր էր. Եւ քարոզելով ասում էր, Ինձանից
զօրաւորը գալիս է իմ ետևից, որին ես արժանի
չեմ խոնարհուիլ և նորա կօշիկների կապն արձա-
8 կել ։ Ես ջրով մկրտեցի ձեզ, բայց նա Սուրբ Հո-
գով կ'մկրտէ ձեզ ։
9 Եւ եղաւ այն օրերը՝ որ Յիսուսը եկաւ Գալիլէ-
ացիների Նազարէթից, և մկրտուեցաւ Յովհան-
10 նէսից Յորդանանի մէջ ։ Եւ շուտով որ ջրից

դուրս է գալիս՝ տեսաւ երկինքը ճղուած, և Աս-
տուծոյ Հոգին աղաւնիի պէս՝ որ իջնում էր նորա
11 վերայ ։ Եւ ձայն եղաւ երկնքից՝ Դու ես իմ սի-
րելի Որդին, որին ես հաւանեցի ։
12 Եւ շուտով Հոգին նորան անապատը հանեց ։
13 Եւ նա այնտեղ անապատումն էր քառասուն օր
սատանայից փորձուելով. և գազանների հետ էր,
և հրեշտակները ծառայում էին նորան ։
14 Եւ Յովհաննէսը մատնուելուց յետոյ, Յիսուսը
եկաւ Գալիլեա, քարոզում էր Աստուծոյ թագա-
15 ւորութեան աւետարանը և ասում, Թէ ժամանա-
կը կատարուել է, և Աստուծոյ թագաւորութիւ-
նը մօտեցել է. ապաշխարեցէք, և հաւատացէք
աւետարանին ։
16 Գալիլեացիների ծովի մօտով անցկենալիս, տե-
սաւ Սիմօնին և նորա եղբայր Անդրէասին, որ ուռ-
կան էին գցում ծովը. որովհետև ձկնորս էին ։
17 Եւ Յիսուսը նորանց ասեց. Իմ ետևից եկէք, և ես
18 կ'անեմ ձեզ, որ մարդկանց որսորդ լինիք ։ Եւ նո-
րանք շուտով իրանց ուռկանները թողեցին և նո-
19 րա ետևից գնացին ։ Եւ այնտեղից մի քիչ առաջ
գնալով, Յակոբոս Զեբեդեանին և նորա եղբայր
Յովհաննէսին տեսաւ, որոնք էլ նաւի մէջ ուռ-
կաններ շինում էին, և շուտով նորանց կանչեց ։
20 Եւ նորանք իրանց հայր Զեբեդէոսին վարձկանների
հետ նաւի մէջ թողելով, նորա ետևից գնացին ։
21 Եւ մտնում են Կափառնայում. և շուտով շա-
բաթ օրը ժողովարանը մտաւ և սովորեցնում էր ։
22 Եւ զարմանում էին նորա վարդապետութեան վե-
րայ. որովհետև նա նորանց՝ ինչպէս իշխանութիւն
ունեցող սովորեցնում էր և ոչ թէ դպիրների պէս ։
23 Եւ նորանց ժողովարանումը մի մարդ կար՝ պիղծ
24 ոգով, և նա աղաղակեց և ասեց. Թող տուր. Ինչ

բան ունիս մեզ հետ, Յիսուս Նազովրեցի. եկար
մեզ կորցնելո՞ւ. գիտեմ քեզ, Ո՛վ ես, Աս-
25 տուծոյ Սուրբը։ Եւ Յիսուսը սաստեց նորան և
26 ասեց, Պապանձիր, և դորանից դուրս եկ։ Եւ
պիղծ ոգին սաստիկ թափահարեց նորան, և մեծ
27 ձայնով աղաղակելով դուրս եկաւ նորանից։ Եւ
ամենքը զարմացան, մինչև որ իրանց մէջ հարցու-
փորձ էին անում և ասում. Սա ի՞նչ է. ի՞նչ նոր
վարդապետութիւն է դա, որ իշխանութիւնով
պիղծ ոգիներին էլ սաստում է՝ և հնազանդվում
28 են իրան։ Եւ նորա համբաւը շուտով դուրս գնաց
Գալիլեայի ամեն կողմերը։

29 Եւ շուտով ժողովարանից դուրս գալով, եկան
Սիմոնի և Անդրէասի տունը՝ Յակոբի և Յովհաննէ-
30 սի հետ։ Եւ Սիմոնի զոքանչը տենդած պառկած
31 էր, և շուտով նորա համար ասեցին նորան։ Եւ
նա մօտ եկաւ վերկացրեց նորան՝ ձեռքիցը բռնե-
լով. և շուտով տենդը թողեց նորան, և նա ծա-
32 ռայում էր նորանց։ Եւ երբոր իրիկուն եղաւ, ա-
րեգակը մար մտնելիս, բոլոր հիւանդներին և դի-
33 ւահարներին նորա մօտ բերին։ Եւ բոլոր քաղաքը
34 ժողովուած էր դռան առաջին։ Եւ շատ կերպ
կերպ ցաւերով հիւանդներին բժշկեց, և շատ դե-
ւեր հանեց. և թոյլ չէր տալիս դևերին որ խօսեն.
որովհետև գիտում էին նորան։

35 Եւ լուսածագին առաւօտանց շատ կանուխ վեր-
կացաւ՝ դուրս եկաւ գնաց մի անապատ տեղ, և
այնտեղ աղօթք էր անում։

36 Եւ Սիմոնը և նորա հետ լինողները նորա ետևից
37 գնացին։ Եւ երբոր նորան գտան. ասեցին նորան,
38 թէ Ամենքը որոնում են քեզ։ Եւ նորանց ասեց.
Գնանք այս գիւղաքաղաքներն էլ, որ այնտեղ
39 քարոզեմ. որովհետև սորա համար եմ եկած։ Եւ

բոլոր Գալիլեայի մէջ նորանց ժողովարաններումը
քարոզում էր, և դևերը հանում։

40 Եւ մի բորոտ եկաւ նորա մօտ, աղաչում էր
նորան և ծունր էր դնում առաջին և ասում նո-
41 րան. Թէ որ կամենաս կարող ես ինձ սրբել։ Յի-
սուսն էլ գթալով ձեռքը մեկնեց, նորան դիպաւ,
42 և ասեց նորան. Կամենում եմ՝ սրբուիր։ Եւ երբոր
ասեց նորան, շուտով բորոտութիւնը գնաց նորա-
43 նից, և նա սրբուեցաւ։ Եւ նորան սաստելով՝ շու-
44 տով դուրս հանեց նորան, և ասեց նորան. Զգուշ
կաց՝ ոչ ոքի ոչինչ չ՚ասես. այլ գնա՝ քեզ ցոյց
տուր քահանային, և քո սրբութեան համար մա-
տուցրու այն, որ Մովսէսը հրամայեց, նորանց վը-
45 կայութիւն լինելու համար։ Եւ նա դուրս գնալով,
սկսեց շատ բաներ քարոզել և այն բանը տարա-
ծել, մինչև որ նա այլևս չէր կարողանում յայտ-
նապէս քաղաքը մտնել, այլ դուրսը անապատ
տեղերում էր, և ամեն կողմերից գալիս էին նո-
րա մօտ։

ԳԼ. Բ

1 Եւ դարձեալ մտաւ Կափառնայում մի քանի օրից
2 յետոյ, Եւ լսուեցաւ թէ տանն է, և շուտով շատ
մարդիկ ժողովուեցան, մինչև որ տեղ չ՚կար և ոչ
էլ դռան մօտ. և նա խօսում էր նորանց Աստուա-
3 ծոյ խօսքը։ Եւ գալիս էին նորա մօտ, և մի ան-
4 դամալոյծ էին բերում չորս մարդով վեր առած։ Եւ
երբոր չ՚կարողացան մօտենալ նորան ամբոխի պատ-
ճառով, այն տան ծածքը քանդեցին, ուր էր Յի-
սուսը, և ծակ բանալով իջեցրին մահիճը, որի վե-
5 րայ պառկած էր անդամալոյծը։ Յիսուսն էլ նո-
րանց հաւատքը տեսնելով, ասեց անդամալոյծին.

6 Որդեակ, թողուած են քեզ քո մեղքերը: Եւ
դպիրներից ոմանք այնտեղ նստած էին. և իրանց
7 սրտերումը միտք էին անում. Ինչու համար սա
այսպէս հայհոյութիւններ է խօսում. ո՞վ կարող
8 է մեղք թողել, եթէ ոչ մէկը՝ Աստուած: Եւ Յի-
սուսը իր հոգիի մէջ շուտով գիտաց, թէ իրանց
սրտումն այսպէս են միտք անում, և ասեց նորանց.
Ինչու էք ձեր սրտերումն այդ բաները մտածում:
9 Ո՞րն է հեշտ. անդամալոյծին ասել՝ թողուած են
քեզ քո մեղքերը, կամ ասել՝ վեր կաց, քո մա-
10 հիճն առ և ման եկ: Բայց որ իմանաք, թէ Որ-
դին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վերայ մեղ-
11 քեր թողելու. (անդամալոյծին ասեց). Ասում եմ
քեզ. վեր կաց, քո մահիճն առ և գնա քո տու-
12 նը: Եւ նա շուտով վերկացաւ, մահիճն առաւ,
և ամենի առաջին դուրս գնաց. մինչև որ ամենքը
զարմանում էին և Աստուծուն փառաւորում ա-
սելով թէ Երբէք այսպիսի բան չենք տեսել:
13 Եւ դարձեալ դէպի ծովի եզրը դուրս գնաց, և
բոլոր ժողովուրդը նորա մօտ էր գալիս. և նա ու-
14 սուցանում էր նորանց: Եւ անցնելիս տեսաւ Ղեւի
Ալփեանին՝ նստած մաքսաւորութեան. և նորան ա-
սեց. Իմ ետևից եկ. և նա վերկացաւ գնաց նորա
15 ետևից: Եւ եղաւ, երբոր նորա տանը սեղանի վե-
րայ նստած էր, շատ մաքսաւորներ և մեղաւորներ
էլ Յիսուսի և նորա աշակերտների հետ սեղան էին
նստած, որովհետև շատ մարդիկ էին, որ նորա ե-
16 տևից գնում էին: Բայց դպիրները և փարիսեցինե-
րը տեսնելով որ մաքսաւորների և մեղաւորների
հետ ուտում է, ասեցին նորա աշակերտներին.
Այդ ի՞նչ է, որ մաքսաւորների և մեղաւորների
17 հետ ուտում է և խմում է: Եւ Յիսուսը երբոր
լսեց, ասեց նորանց. Առողջներին բժիշկ պէտք չէ,

այլ հիւանդներին. ես չ'եկայ արդարներին այլ մե-
ղաւորներին ապաշխարութեան կանչելու:
18 Եւ Յովհաննէսի աշակերտները և փարիսեցիները
ծոմ էին պահում և եկան նորան ասեցին. Ինչու
Յովհաննէսի և փարիսեցիների աշակերտները ծոմ
են պահում, բայց քո աշակերտները ծոմ չեն պա-
19 հում: Եւ Յիսուսը նորանց ասեց. Մի՞թէ կարող
են հարսնիքի որդիքը ծոմ պահել՝ քանի որ փեսան
նորանց հետ է. քանի որ փեսան իրանց հետ ունին,
20 չեն կարող ծոմ պահել: Բայց օրեր կ'գան, որ փե-
սան նորանցից վեր կ'առնուի, և ապա այն օրերու-
21 մը ծոմ կ'պահեն: Եւ ոչ ով նոր լաթից կարկա-
տան չի դցիլ հին հանդերձի վերայ, ապա թէ ոչ՝
նորն իր ուժովը այն հնիցն կ'առնէ, և պատռ-
22 ուածքն էլ աւելի չար կ'լինի: Եւ ոչ ով նոր գի-
նին հին տիկերի մէջ չի ածիլ. ապա թէ ոչ՝ նոր
գինին տիկերը կ'պատառէ, և գինին կ'թափուի,
տիկերն էլ կ'կորչեն. այլ նոր գինին նոր տիկերի մէջ
պէտք է ածուի:
23 Եւ եղաւ որ նա շաբաթ օրը արտերի միջովն
անցնում էր և նորա աշակերտներն սկսեցին գնալ
24 հասկ պոկելով: Եւ փարիսեցիներն ասեցին նորան.
Տես, ինչ են գործում շաբաթ օրը, որ արժան չէ:
25 Եւ նա ասեց նորանց. Դուք երբէք չե՞ք կարդա-
ցել, թէ Դաւիթն ինչ արաւ, երբոր պէտք ունէր,
26 և սովեց ինքը և նորա հետ լինողներն. ինչպէս Ա-
տուծոյ տունը մտաւ Աբիաթար քահանայապետի
օրին. և առաջաւորութեան հացերը կերաւ, որ
ուրիշի օրէնք չէր ուտել, բայց միայն քահանայից.
27 և իր հետ լինողներին էլ տուաւ: Եւ նորանց ա-
սեց. Շաբաթը մարդի համար եղաւ, և ոչ թէ
28 մարդը շաբաթի համար: Ուրեմն մարդի Որդին
շաբաթի էլ տէրն է:

ԳԼ. Գ

1 Եւ դարձեալ ժողովարանը մտաւ, և այնտեղ մի
2 մարդ կար՝ ձեռքը չորացած ; Եւ սպասում էին
նորան՝ թէ արդեօք շաբաթ օրը կ'բժշկէ՞ նորան
3 որ չարախօսեն նորանից ։ Եւ նա ասեց ձեռքը չո-
4 րացած մարդին. Կանգնիր մէջտեղը ։ Եւ ասեց նո-
րանց . Արժա՞ն է շաբաթ օրը բարի գործել՝ թէ
չար գործել. մի հոգի ազատե՞լ՝ թէ սպանել.
5 իսկ նորանք լռեցին ։ Նա էլ բարկութիւնով չորս
կողմովը նորանց մտիկ տալով՝ նորանց սրտերի կու-
րութեան համար տրտմած՝ այն մարդին ասեց.
Ձեռքդ մեկնիր. և նա մեկնեց, և նորա ձեռքը ող-
6 ջացաւ ինչպէս միւսը ։ Եւ փարիսեցիները շուտով
դուրս գնացին Հերովդեսեանների հետ նորա դէմ
խորհուրդ էին անում, թէ ինչպէս կորցնեն նորան ։
7 Եւ Յիսուսը իր աշակերտների հետ ծովի մօտ
գնաց . և շատ բազմութիւն նորա ետևից գնում
8 էին Գալիլեայից և Հրէաստանից, Եւ Երուսաղէ-
մից, և Եդովմից, և Յորդանանի այն կողմիցը, և
նորանք էլ որ Տիւրոսի և Սիդոնի շրջակայից էին,
շատ բազմութիւն, երբոր լսում էին, թէ ինչ բա-
9 ներ էր անում, նորա մօտ էին գալիս ։ Եւ իր ա-
շակերտներին ասեց որ մի պզտիկ նաւ պատրաստ
լինի իրան համար այն ամբոխի պատճառով, որ չը
10 նեղեն նորան ։ Որովհետև շատերին բժշկեց. մինչև
որ նորա վերայ էին թափվում, որ նորան դպչեն,
11 որոնք որ ցաւ ունէին ։ Եւ պիղծ ոգիները երբոր
նորան տեսնում էին, ընկնում էին նորա առաջը,
12 աղաղակում էին և ասում, Թէ Դու Աստուծոյ
Որդին ես . և նա շատ սաստում էր նորանց, որ
իրան չ'յայտնեն ։

13 Եւ վեր ելաւ սարը և իր մօտ կանչեց որոնց որ ին-
14 քը կամեցաւ. և նորա մօտ գնացին։ Եւ տասներ-
կու հոգի կարգեց, որ իր հետը լինին, և որ նորանց
15 ուղարկէ՝ քարոզելու . Եւ նորանք իշխանութիւն
ունենան ցաւերը բժշկելու՝ և դևերը հանելու ։
16 Եւ Սիմօնի անունը Պետրոս դրաւ . (17) Եւ Զե-
բեդեան Յակոբին՝ և Յակոբի եղբայր Յովհաննէ-
սին . և նորանց անունները Բանէրեգէս դրաւ, որ
18 է՝ Որոտմունքի որդիք . Եւ Անդրէասին, և Փիլիպ-
պոսին, և Բարթողոմէոսին, և Մատթէոսին, և
Թովմասին, և Յակոբոս Ալփեանին, և Թադէոսին,
19 և Սիմօն Կանանացուն ։ Եւ Յուդա Իսկարիովտա-
ցուն, նա որ մատնեց էլ նորան ։
20 Եւ եկան տուն, և դարձեալ հաւաքուեցաւ
ամբոխը, մինչև որ չ'կարողացան հաց էլ ուտել ։
21 Եւ նորա ընտանիքը լսելով դուրս եկան նորան
բռնելու. որովհետև ասում էին թէ գժուել է ։
22 Եւ դպիրները որ Երուսաղէմից իջել էին, ասում
էին, թէ Բէեղզեբուղ ունի, և թէ դևերի իշխա-
23 նովն է հանում դևերը ։ Եւ նորանց իր մօտ կան-
չելով՝ առակներով ասում էր նորանց . Ի՞նչպէս
24 սատանան կարող է սատանայ հանել ։ Եւ եթէ մի
թագաւորութիւն իր միջումը բաժանուի, այն
25 թագաւորութիւնը կարող չէ կենալ ։ Եւ եթէ մի
տուն իր միջումը բաժանուի, այն տունը կարող
26 չէ կենալ ։ Եւ եթէ սատանան իր անձի վերայ
վերկացաւ և բաժանուած է, կարող չէ կենալ,
27 այլ վերջացած է ։ Ոչ ոք կարող չէ մի զօրաւորի
տունը մտնելով, նորա կարասիքը յափշտակել,
եթէ առաջ այն զօրաւորին չ'կապէ, և ապա նո-
28 րա տունը կ'յափշտակէ ։ Ճշմարիտ ասում եմ
ձեզ՝ թէ Մարդկանց որդիների ամեն մեղքերը և
հայհոյանքները, որքան որ հայհոյեն էլ, կ'թող-

29 ուին. Բայց ով որ Սուրբ Հոգուն հայհոյէ, յաւի-
տեան թողութիւն չի ունենալ. այլ յաւիտենա-
30 կան դատապարտութեան պարտական կ'լինի։ Որով-
հետեւ ասում էին, թէ պիղծ ոգի կայ նորանում։
31 Եւ յետոյ նորա եղբարքը և մայրը եկան, և
դուրսը կանգնած՝ նորա մօտ ուղարկեցին կանչե-
32 ցին նորան։ Եւ ժողովուրդը նորա չորս կողմը
նստած էր. և ասեցին նորան. Ահա մայրդ և եղ-
33 բարքդ դուրսը քեզ ուզում են։ Եւ նա նորանց
պատասխանեց և ասեց. Ո՞վ է իմ մայրը կամ իմ
34 եղբարքը։ Եւ իր չորս կողմը նստածներին մտիկ
տուաւ և ասեց. Ահա իմ մայրը և իմ եղբարքը.
35 Որովհետեւ ով որ կատարէ Աստուծոյ կամքը, նա
է իմ եղբայրը և քոյրը և մայրը։

ԳԼ. Դ

1 Եւ դարձեալ սկսեց ծովի մօտ սովորեցնել, և
շատ ամբոխ հաւաքուեցաւ նորա մօտ, մինչև որ
նաւի մէջ մտաւ. և ծովի վերայ նստեց. և բոլոր
2 ամբոխը ծովի մօտ ցամաքի վերայ էին։ Եւ շատ
բաներ էր սովորեցնում նորանց առակներով. և
իր վարդապետութեան մէջ ասում էր նորանց.
3 Լսեցէք. ահա սերմ ցանողը դուրս գնաց սերմ
4 ցանելու։ Եւ եղաւ որ սերմանելու ժամանակին
մի քանին ճանապարհի մօտ ընկաւ, և երկնքի
5 թռչունները եկան և կերան նորան։ Եւ ուրիշն ըն-
կաւ քարքարուտ տեղ. շատ հող չ'կար, և շու-
6 տով բուսաւ՝ հողը խոր չ'լինելուն համար։ Եւ
երբոր արեգակը ծագեց՝ տաքցաւ և արմատ չ'ու-
7 նենալուն համար չորացաւ։ Եւ ուրիշն ընկաւ
փշերի մէջ, և փշերը դուրս եկան և խեղդեցին
8 նորան. և պտուղ չ'տուաւ։ Եւ ուրիշն ընկաւ

բարի երկիրը, և պտուղ էր տալիս, որ դուրս ե-
կաւ և աճեց, և մէկը բերում էր երեսուն՝ և մէ-
9 կը վաթսուն՝ և մէկը հարիւր։ Եւ ասում էր նո-
10 րանց. Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։ Եւ
երբոր մինակ էր, նորա մօտինները այն տասներ-
11 կուսի հետ հարցրին նորան այն առակը։ Եւ նա
ասեց նորանց. Ձեզ տրուած է Աստուծոյ արքա-
յութեան խորհուրդը գիտել, բայց նորանց որ
12 դրսի են, ամեն բան առակներով է լինում. Որ
տեսնելով տեսնեն՝ և չ'տեսնեն, և լսելով լսեն և
չ'իմանան. մի գուցէ դառնան, և մեղքերը թող-
13 ուին նորանց։ Եւ նորանց ասեց. Դուք չ'գիտէ՞ք
այս առակը. և ինչպէս ամեն առակները կ'գիտե-
14 նաք։ Սերմողը խօսքն է սերմում. (15) Եւ նորանք
են ճանապարհի վերայինները, ուր բանը սերմվում
է, և երբոր լսում են, շուտով գալիս է սատանան
և վեր առնում նորանց սրտերումը սերմուած խօս-
16 քը։ Նոյնպէս էլ քարքարուտ տեղը սերմուածնե-
րը նորանք են, որոնք, երբոր խօսքը լսում են, շու-
17 տով ուրախութիւնով ընդունում են նորան. Եւ
իրանց մէջ արմատ չ'ունին, այլ առժամանակեայ
են. յետոյ երբոր այն խօսքի համար նեղութիւն
կամ հալածմունք է լինում, շուտով գայթակղում
18 են։ Եւ փշերի մէջ սերմուածները նորանք են, որ
19 խօսքը լսում են, Բայց աշխարհիս հոգսերը և հա-
րստութեան խաբէութիւնը և ուրիշ բաների ցան-
կութիւնները մտնում են խօսքը խեղդում. և ան-
20 պտուղ է լինում։ Բայց այն բարի երկրի վերայ
սերմուածները նորանք են, որ խօսքը լսում են, և
ընդունում են, և պտուղ են տալիս՝ մէկը երե-
սուն, և մէկը վաթսուն՝ և մէկը հարիւր։
21 Եւ ասեց նորանց. Մի՞թէ ճրագը գալիս է, որ
գրուանի կամ մահճի տակ դրուի. չէ՞ որ ճրա-

22 գակալի վերայ դրուի։ Որովհետեւ ծածուկ բան չը
կայ, որ չ'յայտնուի. և մի թագուն բան չ'եղաւ,
23 որ դէպի յայտնութիւն չ'գար։ Եթէ մէկը լսելու
ականջ ունի, թող լսէ։
24 Եւ ասեց նորանց. Տեսէք՝ ինչ էք լսում, ինչ
չափով որ չափէք, նորանով էլ ձեզ կ'չափուի, և
25 կ'աւելանայ ձեզ լսողներիդ։ Որովհետեւ ով որ ու-
նի, նորան կ'տրուի. և ով որ չ'ունի, այն էլ որ
ունի՝ վեր կ'առնուի նորանից։
26 Եւ ասում էր. այսպէս է Աստուծոյ արքայու-
թիւնը, որպէս թէ մի մարդ սերմ գցէր հողի մէջ՝
27 Եւ գիշեր ցերեկ քնէ և վեր կենայ. և սերմը բուս-
28 նէ և աճի. այնպէս որ նա չ'գիտէ։ Որովհետեւ եր-
կիրն ինքն իրան պտուղ է բերում, առաջ խոտը՝
յետոյ հասկը, և նորանից յետոյ լցուած ցորեն
29 հասկի մէջ։ Բայց երբոր պտուղը կ'տայ, շուտով
կ'ուղարկէ մանգաղը, որովհետեւ հունձքը հասել է։
30 Եւ ասում էր, ինչի՞ նմանեցնենք Աստուծոյ ար-
քայութիւնը, կամ ի՞նչ առակով առակի բերենք
31 նորան։ Նման է մանանեխի հատի, որ երբոր հողի
մէջ սերմնւում է, երկրիս վերայ եղած ամեն սեր-
32 մերից փոքրն է. Եւ երբոր սերմնւում է, բուսնում
է և ամեն բանջարից աւելի մեծ է լինում, և մեծ
մեծ ճիւղեր է արձակում, մինչև որ կարողա-
նում են երկնքի թռչունները նորա հովանիի տակ
բնակուել։
33 Եւ շատ այսպիսի առակներով խօսում էր նո-
րանց հետ խօսքը, ինչպէս որ նորանք կարող էին
34 լսել։ Եւ առանց առակի չէր խօսում նորանց
հետ, բայց առանձին իր աշակերտներին ամեն բան
մեկնում էր։
35 Եւ այն օրն, երբ որ իրիկուն էր լինում, նորանց
36 ասեց. Եկէ՛ք անցնենք այն կողմը։ Եւ ժողովուրդը

թողեցին, և նորան նաւումն առան, ինչպէս որ էր
նաւումը. և ուրիշ նաւակներ էլ կային նորա հետ։
37 Եւ քամիի մեծ փոթորիկ էր լինում, և ալիքները
թափւում էր նաւի մէջ, մինչև որ համարեա ար-
38 դէն լցվում էր։ Եւ ինքը նաւի ետի կողմումը
բարձի վերայ քնած էր. և նորան զարթնեցնում
են և ասում նորան. Վարդապետ, հոգ չէ՞ որ
39 կորչում ենք։ Եւ նա զարթնելով քամիին սաս-
տեց, և ասեց ծովին. Լռիր, պապանձուիր. և քա-
40 մին դադարեց, և մեծ խաղաղութիւն եղաւ։ Եւ
ասեց նորանց. Ի՞նչու այդպէս վախկոտ էք. ի՞նչ-
պէս հաւատք չ'ունիք։ Եւ նորանք մեծ վախով վա-
խեցան, և իրար ասում էին. Սա ո՞վ է արդեօք.
որ քամին էլ ծովն էլ հնազանդվում են սորան։

Գլ. Ե

1 Եւ եկան ծովի այն կողմը՝ Գադարացիների երկի-
2 րը։ Եւ երբոր նաւիցը դուրս եկաւ, նորան իսկոյն
պատահեց գերեզմաններիցը մի մարդ պիղծ ոգով,
3 Որի բնակութիւնը գերեզմաններումն էր. և ոչ ոք
4 շղթաներով էլ չէր կարող նորան կապել։ Որով-
հետեւ շատ անգամ ոտների կապերով և շղթանե-
րով կապուել էր, բայց նա շղթաները կտրատել
և ոտների կապերը փշրել էր, և ոչ ոք կարող չէր
5 նորան նուաճել։ Եւ միշտ գիշեր ու ցերեկ գերեզ-
մաններումը և սարերումն աղաղակում էր և ինքն
6 իրան ծեծում էր քարերով։ Բայց երբոր հեռուանց
Յիսուսին տեսաւ, վազեց նորան երկրպագութիւն
7 արաւ. Եւ մեծ ձայնով աղաղակելով ասեց. Քեզ
ի՞նչ բան կայ ինձ հետ, Յիսուս՝ բարձրեալ Աստու-
ծոյ Որդի. Աստուծով երդւում եմ տալիս քեզ, մի
8 տանջիր ինձ։ (Որովհետեւ ասում էր նորան. Դուրս

9 եկ, պիղծ ոգի, այդ մարդից։) Եւ հարցրեց նո-
րան. Անունդ ի՞նչ է. և նա պատասխանեց և ա-
սեց. Լեգէոն է իմ անունը. որովհետև մենք շատ
10 ենք։ Եւ շատ աղաչում էին նորան, որ իրանց այն
11 աշխարհքիցը դուրս չ'ուղարկէ։ Եւ այնտեղ սարի
մօտ խոզերի մի մեծ երամակ կար, որ արածում
12 էր։ Եւ բոլոր դևերը նորան աղաչեցին և ասեցին.
Ուղարկիր մեզ այն խոզերի մէջ, որ նորանց մէջ
13 մտնենք։ Եւ Յիսուսը հրաման տուաւ նորանց շու-
տով. և պիղծ ոգիները դուրս եկան խոզերի մէջ
մտան. և երամակն այն դահավէժ տեղիցը ծովի
մէջ վազեց. և երկու հազարի չափ էին. և ծո-
14 վումը խեղդվում էին։ Եւ խոզարածները փախան
և քաղաքումը և արտերումը պատմեցին. և դուրս
15 եկան տեսնելու թէ ինչ է այդ եղածը։ Եւ Յիսու-
սի մօտ եկան, և դիւահարին տեսան նստած հագ-
ուած և խելքը գլուխը եկած, նա՛ որ լէգէոնն ու-
16 նեցել էր. և վախեցան։ Եւ տեսնողները պատմե-
ցին նորանց, թէ ինչ եղաւ այն դիւահարին, և
17 խոզերի մասին։ Եւ սկսեցին աղաչել նորան, որ ի-
18 րանց սահմաններիցը դուրս գնայ։ Եւ երբոր նա
նաւը մտաւ, դիւահարն աղաչում էր նորան, որ
19 նորա հետ լինի։ Բայց Յիսուսը թոյլ չ'տուաւ նո-
րան, այլ ասեց նորան. Գնա՛ քո տունը քո ընտա-
նիքի մօտ, և նորանց պատմիր, թէ Տէրը ինչ բա-
20 ներ արաւ քեզ, և քեզ ողորմեց։ Եւ նա գնաց և
սկսեց Դեկապոլիսի մէջ քարոզել, ինչ բաներ որ
Յիսուսը իրան արել էր, և ամենքը զարմանում էին։
21 Եւ երբոր Յիսուսը նաւով դարձեալ այն կողմն
անցաւ, շատ ժողովուրդ նորա մօտ ժողովուեցան,
22 և նա ծովի մօտ էր։ Եւ ահա գալիս է ժողովր-
դապետներից մէկը՝ անունը Յայրոս. և երբոր նո-
23 րան տեսաւ, ընկաւ նորա ոտները. Եւ նորան շատ

աղաչում էր և ասում. թէ Աղջիկս վախճանելու
մօտ է, գաս, ձեռքդ նորա վերայ դնես, որպէսզի
24 ազատուի և ապրի։ Եւ նա նորա հետ գնաց. և
շատ ժողովուրդ նորա ետևից գնում էին, և նո-
րան նեղում էին։
25 Եւ մի կին, որ արիւնի տեռատեսութեան մէջ
26 էր տասներկու տարի, Եւ շատ բժիշկներից շատ
չարչարուել էր, և իր բոլոր ունեցածը ծախսել և
ոչինչ օգուտ չէր ստացել, այլ էլ աւելի էր դէ-
27 պի վատը գնացել, Երբոր Յիսուսի համար լսեց,
ամբոխի մէջ ետևիցն եկաւ դիպաւ նորա հանդեր-
28 ձին։ Որովհետև ասում էր, որ Եթէ միայն նորա
29 հանդերձին դիպչիմ, կ'փրկուիմ։ Եւ շուտով նորա
արիւնի աղբիւրը ցամաքուեցաւ. և նա մարմնումը
30 իմացաւ որ այն տանջանքիցը բժշկուեցաւ։ Եւ
շուտով Յիսուսն իր անձումն իմացաւ, որ իրանից
զօրութիւն դուրս գնաց, դարձաւ ամբոխի մէջ և
31 ասեց. Ո՞վ դիպաւ իմ հանդերձին։ Եւ նորա ա-
շակերտներն ասեցին նորան. Տեսնում ես այդ ամ-
բոխը որ նեղացնում է քեզ, և ասում ես թէ Ո՞վ
32 դիպաւ իմ հանդերձին։ Եւ նա նայում էր չորս
33 կողմն, որ տեսնէ այս բանն անողին։ Կինն էլ վա-
խենալով և դողալով, որովհետև գիտէր ինչ եղաւ
իրան, եկաւ ընկաւ նորա առաջը, և բոլոր ճըշ-
34 մարտութիւնն ասեց նորան։ Նա էլ ասեց նորան.
Դուստր, քո հաւատքն ազատեց քեզ, գնա խա-
ղաղութեամբ, և քո տանջանքիցն առողջ եղիր։
35 Նա դեռ խօսելիս, ժողովրդապետի տանիցը գա-
լիս են և ասում թէ Աղջիկդ մեռաւ, էլ ի՞նչու
36 ես աշխատեցնում վարդապետին։ Եւ Յիսուսը ա-
սած բանն իսկոյն լսելով, ժողովրդապետին ասեց.
37 Մի՛ վախենար, բայց միայն հաւատա։ Եւ ոչ ոքի
թոյլ չ'տուաւ որ իր հետ գնայ, բայց միայն Պետ-

րոսին և Յակոբին և Յակոբի եղբայր Յովհաննէսին.
38 Եւ եկաւ ժողովրդապետի տունը, և այնտեղ մեծ
աղմուկ տեսաւ և լացողներ, և շատ աղաղակ ա-
39 նողներ. Եւ ներս մտաւ՝ նորանց ասեց. Ի՞նչու էք
շփոթվում և լաց լինում. երեխան մեռած չէ,
40 այլ քնած է։ Եւ նորանք ծիծաղում էին նորա վե-
րայ. բայց նա բոլորին դուրս հանեց, և առնելով
երեխայի հօրը և մօրը և իր հետ լինողներին՝ մտաւ
41 այն տեղն ուր երեխան պառկած էր։ Եւ երեխայի
ձեռքիցը բռնելով ասեց նորան. Տալիթա կումի.
որ թարգմանվում է, Ով աղջիկ, (քեզ եմ ա-
42 սում,) վեր կաց։ Եւ շուտով վերկացաւ աղջիկը
և ման էր գալիս, որովհետև տասներկու տարե-
43 կանի չափ էր. և մեծ զարմանքով զարմացան։ Եւ
նորանց շատ պատուիրեց, որ ոչ ոք չ՚իմանայ այս.
և ասեց, որ նորան բան տան ուտելու։

ԳԼ. Զ

1 Եւ այն տեղից դուրս գնաց, եկաւ իր հայրենի-
քը. և նորա աշակերտները նորա ետևից գնում
2 էին։ Եւ որովհետև շաբաթ էր սկսեց ժողովարանի
մէջ սովորեցնել. և շատերը լսելով զարմանում
էին և ասում. Սորան ո՞րտեղից է այս բաները,
կամ սա ինչ իմաստութիւն է՝ որ տրուած է սո-
րան, որ այսպիսի զօրութիւններ էլ են լինում
3 սորա ձեռովը։ Չէ՞ որ սա է հիւսը՝ Մարիամի որ-
դին, Յակոբի և Յովսէսի և Յուդայի և Սիմօնի
եղբայրը, և չէ՞ որ դորա քոյրերը այստեղ մեզ
4 մօտ են. և նորա վերայ գայթակղում էին։ Յիսուսն
էլ նորանց ասեց. Մի մարգարէ անարգ չէ, բայց
միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան
5 մէջ։ Եւ չէր կարողանում այնտեղ ոչ մի զօրու-

թիւն անել. բայց միայն մի քանի հիւանդների
6 վերայ ձեռք դրաւ և բժշկեց։ Եւ նորանց անհա-
ւատութեան համար զարմանում էր։ Եւ ման էր
գալիս չորս կողմի գիւղերը և սովորեցնում։
7 Եւ տասներկուսին իր մօտ կանչեց, և սկսեց
նորանց երկու երկու ուղարկել, և նորանց իշխա-
8 նութիւն էր տալիս պիղծ ոգիների վերայ։ Եւ նո-
րանց պատուիրում էր, որ ճանապարհի համար
ոչինչ վեր չ՚առնեն, բայց միայն մի գաւազան. ոչ
9 պարկ, ոչ հաց, ոչ պղնձէ փող գօտիի մէջ. Այլ
հողաթափ հագնեն. և երկու հանդերձ չ՚հագնէք
10 ասեց։ Եւ նորանց ասում էր. Որ տուն որ մտնէք,
այնտեղ մնացէք, մինչև որ այնտեղից դուրս գնաք։
11 Եւ որոնք որ ձեզ չ՚ընդունեն, և ձեզ ականջ էլ
չ՚դնեն, այնտեղից դուրս գալիս՝ ձեր ոտների տա-
կի փոշին թօթափեցէք, նորանց վկայութիւն լի-
նելու համար։ Ճշմարիտ ասում եմ ձեզ. Սոդոմի
և Գոմորի համար աւելի հեշտ կ՚լինի դատաստանի
օրումը քան թէ այն քաղաքին։
12 Եւ նորանք դուրս ելան, քարոզում էին, որ ա-
13 պաշխարեն։ Եւ շատ դևեր էին հանում, և շատ
հիւանդներին իւղով օծում էին՝ և նորանց բժշ-
կում էին։
14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց, (որովհետև նո-
րա անունը յայտնի եղաւ.) և ասում էր, թէ Յով-
հաննէս Մկրտիչը մեռելների միջից յարութիւն է
առել, և նորա համար զօրութիւններ են գործը-
15 վում նորանով։ Ուրիշներն ասում էին, թէ Եղի-
ան է. ուրիշներն էլ ասում էին թէ Մարգարէ է,
16 կամ թէ մարգարէներից մէկի պէս։ Եւ երբոր
Հերովդէսը լսեց, ասեց. Սա Յովհաննէսն է՝ որի
գլուխը ես կտրեցի. Նա մեռելների միջից յարու-
թիւն է առել։

17 Որովհետև Հերովդէսն ինքն ուղարկեց, Յովհան-
նէսին բռնեց և նորան կապեց բանտի մէջ իր եղ-
բօր՝ Փիլիպպոսի կին Հերովդիայի համար, որ կին
18 էր առել նորան։ Որովհետև Յովհաննէսը Հերով-
դէսին ասում էր, թէ Օրէնք չէ քեզ՝ քո եղբօր
19 կինն ունենալ։ Եւ Հերովդիան նորա դէմ ոխ էր
պահում, և ուզում էր սպանել նորան, և չէր
20 կարողանում։ Որովհետև Հերովդէսը Յովհաննէսից
վախենում էր՝ նորան արդար և սուրբ մարդ ճա-
նաչելով, և պահում էր նորան. և նորանից լսե-
լով՝ շատ բան էր անում, և քաղցրութիւնով լը-
21 սում էր նորան։ Եւ մի յարմար օր պատահելով,
երբոր Հերովդէսը իր ծննդի օրը ընթրիք էր տալիս
իր նախարարներին և զօրապետներին և Գալիլեա-
22 ցիների մեծամեծներին. Եւ երբոր իսկ Հերովդիայի
աղջիկը մտաւ՝ պարեց, և Հերովդէսին և նորա հետ
նստածներին հաճոյ եղաւ. Թագաւորն ասեց աղ-
ջկանը. խնդրիր ինձանից ինչ որ ուզես, և ես կը
23 տամ քեզ։ Եւ երդուում արաւ նորան՝ թէ ինչ
բան որ դու խնդրես ինձանից, կ'տամ քեզ, մինչև
24 իմ թագաւորութեան կէսը։ Նա էլ դուրս գնաց
ասեց իր մօրը, ի՞նչ խնդրեմ. և նա էլ ասեց,
25 Յովհաննէս Մկրտչի գլուխը։ Եւ իսկոյն շտապելով
թագաւորի մօտ գնաց, խնդրեց և ասեց. կամե-
նում եմ որ հէնց հիմա սկուտեղի վերայ տաս ինձ
26 Յովհաննէս Մկրտչի գլուխը։ Եւ թագաւորը շատ
տրտմեց. բայց իր երդմունքի և կանչուած մարդ-
27 կանց համար չ'կամեցաւ անարգել նորան։ Եւ
թագաւորը շուտով դահիճ ուղարկեց և հրամա-
յեց նորա գլուխը բերել. նա էլ գնաց գլուխը
28 կտրեց բանտի մէջ։ Եւ նորա գլուխը սկուտեղով
բերաւ և աղջկանը տուաւ նորան, աղջիկն էլ
29 տուաւ իր մօրը։ Եւ երբոր նորա աշակերտները

լսեցին, եկան նորա մարմինը վեր առան և գերեզ-
մանի մէջ դրին։
30 Եւ առաքեալները Յիսուսի մօտ ժողովուեցան, և
պատմեցին նորան բոլորը՝ թէ՛ ինչ որ արել էին,
31 թէ՛ ինչ որ սովորեցրել էին։ Եւ նա ասեց նորանց.
Դուք առանձին անապատ տեղ եկէք, և մի քիչ
հանգիստ առէք. որովհետև եկող և գնացողները
շատ էին, և հաց ուտելու էլ ժամանակ չ'ունէին։
32 Եւ նաւով առանձին անապատ տեղ գնացին։
33 Եւ ժողովուրդները տեսան նորանց որ գնում էին,
և շատերը ճանաչեցին նորան. և ամեն քաղաքնե-
րից ոտով այնտեղ էին վազում, և նորանից առաջ
34 եկան և նորա մօտ հաւաքուեցան։ Եւ երբոր Յի-
սուսը դուրս եկաւ՝ շատ ամբոխ տեսաւ, և նորանց
վերայ գթաց. որովհետև հովիւ չ'ունեցող ոչխար-
ների պէս էին, և սկսեց նորանց շատ բաներ սովո-
35 րեցնել։ Եւ երբոր արդէն շատ ժամանակ էր ան-
ցել, նորա աշակերտները մօտ եկան և ասեցին,
թէ Այս տեղը անապատ է, և ժամանակն էլ ար-
36 դէն ուշ։ Արձակիր դորանց, որ չորս կողմի շէ-
ները և գիւղերը գնան իրանց համար հաց առնեն.
37 որովհետև այստեղ ուտելու բան չ'ունին։ Նա էլ
պատասխանեց և նորանց ասեց. Դուք տուէք դո-
րանց ուտել. Նորանք էլ ասեցին նորան, Գնա՞նք
երկու հարիւր դահեկանի հաց առնենք, և դո-
38 րանց տանք որ ուտեն։ Նա էլ նորանց ասեց. Քա-
նի՞ հատ հաց ունիք. գնացէք և տեսէք. երբոր
գիտացին, նորան ասեցին. Հինգ, և երկու ձուկ։
39 Եւ հրամայեց նորանց՝ որ ամենքը գունդ գունդ
40 կանանչ խոտի վերայ նստեն։ Եւ դաս դաս նստե-
41 ցին, հարիւր հարիւր՝ և յիսուն յիսուն։ Եւ այն
հինգ հացը և երկու ձուկն առած դէպի երկինքը
նայեց՝ օրհնեց կտրեց հացերը, և իր աշակերտնե-

րին տուաւ որ գցեն նորանց առաջը. և այն երկու
42 ձուկը բաժանեց ամենին։ Եւ ամենքը կերան և
43 կշտացան, Եւ փշրանքներից տասներկու կողով
44 լիքը վեր առան, և ձկներիցն էլ։ Եւ հացը ուտող-
ները հինգ հազարի չափ մարդիկ էին։
45 Եւ շուտով ստիպեց իր աշակերտներին, որ նա-
ւը մտնեն, և առաջ այն կողմը՝ Բեթսայիդա գը-
46 նան, մինչև որ ինքը ժողովուրդին արձակէ։ Եւ
նորանցից բաժանուելով, վեր ելաւ սարը աղօթք
47 անելու։ Եւ երբոր իրիկուն եղաւ, նաւը ծովի մէջ-
48 տեղն էր, և ինքն մինակ ցամաքումը։ Եւ տեսաւ
նորանց, որ նաւելիս ալէկոծվում էին, որովհետև
քամին ներհակ էր նորանց. և գիշերուայ չորրորդ
պահին ծովի վերայ գնալով՝ նորանց մօտ եկաւ, և
49 ուզում էր նորանցից անցնել։ Նորանք էլ, երբոր
տեսան ծովի վերայ գնալիս՝ կարծեցին թէ աչքի
50 երևոյթ բան լինի, և աղաղակ բարձրացրին։ Որով-
հետև ամենքը նորան տեսան՝ և շփոթուեցան. և
շուտով խօսեց նորանց հետ և ասեց. Քաջ եղէք,
51 ես եմ, մի վախենաք։ Եւ վեր ելաւ նաւը նորանց
մօտ՝ և քամին դադարեց, և իրանց մէջ խիստ չա-
52 փազանց ապշել էին, և զարմանում էին. Որովհե-
տև այն հացի վերայ էլ չ'իմացան. որովհետև նո-
րանց սիրտը թմրած էր։
53 Եւ այն կողմն անցնելով, Գեննեսարէթի երկիրը
54 եկան, և խարիսխը գցեցին։ Եւ երբոր նորանք նա-
ւիցը դուրս եկան, այն տեղացիք շուտով ճանաչե-
55 ցին նորան։ Եւ գաւառի կողմերը վազելով՝ սկսե-
ցին հիւանդներին մահիճներով բերել, որտեղ որ
56 լսում էին՝ թէ այնտեղ է։ Եւ որտեղ որ մըտ-
նում էր՝ գիւղեր թէ քաղաքներ թէ ագարակ-
ներ, հիւանդներին հրապարակների մէջ էին դը-
նում, և նորան աղաչում էին որ գոնէ հան-

դերձի ծայրին դպչեն. և որոնք որ դպան նորան,
փրկուեցան։

ԳԼ. Է

1 Եւ ժողովուեցան նորա մօտ փարիսեցիները և դը-
2 պիրներից ոմանք, որ Երուսաղէմից եկել էին։ Եւ
երբոր տեսան, որ նորա աշակերտներից մի քանիսը
խառնակ ձեռքով, այսինքն առանց լուանալու
3 հաց էին ուտում, բամբասեցին։ Որովհետև փա-
րիսեցիները և բոլոր Հրէաները թէ որ մի լաւ չը
լուանան ձեռքերը՝ չեն ուտում. որովհետև պա-
4 հում են ծերերի աւանդութիւնը։ Եւ հրապարա-
կից գալիս, եթէ չ'լուացուին, չեն ուտում. և ու-
րիշ շատ բաներ կան, որ ընդունեցին պահել, բա-
ժակների և անօթների և պղնձէ ամանների և մա-
5 հիճների լուացմունքներ։ Յետոյ փարիսեցիները և
դպիրները հարցրին նորան, թէ ի՞նչու քո աշա-
կերտները ծերերի աւանդութեան համեմատ չեն
գնում. այլ անլուայ ձեռքով հաց են ուտում։
6 Նա էլ պատասխանեց և ասեց նորանց, թէ Եսա-
յիան լաւ մարգարէացաւ ձեզ կեղծաւորներիդ
վերայ, ինչպէս գրուած է. Այս ժողովուրդը շըր-
թունքներով է պատւում ինձ, իսկ նորանց սիրտը
7 ինձանից հեռացած ջոկուած է։ Եւ զուր տեղն են
պաշտում ինձ. սովորեցնելով այնպիսի վարդապե-
8 տութիւններ, որ մարդկանց պատուէրներ են։ Որով-
հետև Աստուծոյ պատուիրանքը թողած՝ պահում
էք մարդկանց աւանդութիւնը, անօթների և ա-
մանների լուացմունքներ՝ և սորանց նման էլ ուրիշ
9 շատ բաներ էք անում։ Եւ նորանց ասեց. Լաւ էք
անարգում Աստուծոյ պատուիրանքը, որ ձեր ա-
10 ւանդութիւնը պինդ պահէք։ Որովհետև Մովսէսն

ասեց. Պատուիր քո հօրը և քո մօրը. և նա որ
հօրիցը կամ մօրիցը չարախօսութիւն անէ, թող
11 մահով մեռնի։ Բայց դուք ասում էք, Եթէ մար-
դըս հօրը կամ մօրը ասէ, Կորբան է (այսինքն պա-
տարագ) այն որ ինձանից պէտք է շահուիս, ազատ
12 է լինում։ Եւ այլևս թոյլ չէք տալիս նորան որ
13 մի բան անէ իր հօրը կամ իր մօրը։ Եւ Աստուծոյ
խօսքն անարգում էք ձեր աւանդութիւնովը, որ
աւանդեցիք. և սորան նման ուրիշ էլ շատ բա-
ներ էք անում։
14 Եւ բոլոր ժողովուրդն իրան մօտ կանչելով ասեց
15 նորանց. Ամենքդ ինձ լսեցէք, և հասկացէք։ Ոչինչ
չ'կայ մարդից դուրս նորա մէջ մտնող, որ կարո-
ղանայ պղծել նորան, այլ նորանից այն դուրս ե-
16 կողներն են որ մարդին պղծում են։ Ով որ լսելու
ականջ ունի, թող լսէ։
17 Եւ երբոր ամբոխիցը տուն եկաւ, նորա աշա-
18 կերտները հարցրին նորան այն առակի համար։ Եւ
նա ասեց նորանց. Դո՞ւք էլ այդչափ անմիտ էք.
չէ՞ք իմանում, որ ամեն ինչ որ դրսիցը մտնում է
19 մարդի մէջ՝ չէ կարող նորան պղծել։ Որովհետև
նորա սիրտը չէ մտնում, այլ փորը, և դուրս է
գնում արտաքնոցը՝ ամեն կերակուրները սրբելով։
20 Եւ ասում էր թէ Մարդիցը դուրս եկողն է պըղ-
21 ծում մարդին։ Որովհետև ներսիցը մարդկանց սըր-
տիցն են դուրս գալիս չար խորհուրդներ, շնու-
22 թիւններ, պոռնկութիւններ, Սպանութիւններ,
գողութիւններ, ագահութիւններ, չարութիւն-
ներ, նենգութիւն, պիղծ ցանկութիւն, չար աչք,
հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամու-
23 թիւն։ Այս ամեն չար բաները ներսիցն է դուրս
գալիս, և մարդին պղծում։
24 Եւ այնտեղից վերկացաւ՝ և եկաւ Տիւրոսի և

Սիդոնի սահմանները. և տուն որ մտաւ՝ չէր ու-
զում որ մէկն իմանայ, բայց չ'կարողացաւ ծած-
25 կուել. Որովհետև նորա համար լսեց մի կին, ո-
րի աղջիկը պիղծ ոգի ունէր. եկաւ նորա ոտների
26 առաջին ընկաւ։ Եւ այն կինը *Յոյն էր՝ ազգաւ
փիւնիկ Ասորի. և աղաչում էր նորան, որ դևն իր
27 աղջկանիցը դուրս հանէ։ Յիսուսն էլ ասեց նորան.
Թող առաջ երեխաները կշտանան. որովհետև լաւ
28 չէ՝ երեխաների հացն առնել և շներին գցել։ Նա
էլ պատասխանեց և ասեց նորան. Այո, Տէր, ո-
րովհետև շներն էլ սեղանի տակին՝ երեխաների
29 փշրանքից են ուտում։ Եւ ասեց նորան, Այդ
խօսքի համար գնա, դևը դուրս եկաւ քո աղջկա-
30 նիցը։ Եւ իր տունը որ գնաց, գտաւ դևը դուրս
եկած, և աղջիկը մահճի վերայ պառկած։
31 Եւ դարձեալ Տիւրոսի և Սիդոնի սահմաններիցը
դուրս գնաց, և Գալիլեայի ծովի մօտ եկաւ՝ Դե-
32 կապոլիսի սահմանների միջից։ Եւ մի խուլ և դըժ-
ուարախօս բերին նորան, և աղաչում էին, որ ձեռ-
33 քը դնէ նորա վերայ։ Եւ նա նորան ամբոխիցը մի
կողմ տարաւ, իր մատները նորա ականջների մէջ
34 դրաւ և թքեց, և նորա լեզուին դպաւ։ Եւ դէպի
երկինքը նայելով հառաչեց և ասեց նորան. Եփ-
35 փաթա՝ այսինքն բացուիր։ Եւ շուտով նորա ա-
կանջները բացուեցան, և նորա լեզուին կապն ար-
36 ձակուեցաւ, և խօսում էր ուղիղ։ Եւ նորանց
պատուիրեց՝ որ ոչ ոքի չ'ասեն. և որչափ նա պատ-
ուիրում էր նորանց, նորանք էլ աւելի էին հռ-
37 չակում։ Եւ չափից դուրս զարմանում էին և ա-
սում. Սա ամեն բան լաւ գործեց. խուլերին լսել
է տալիս՝ և համրերին խօսել։

* Կամ՝ հեթանոս

ԳԼ. Ը

1 Այն օրերին՝ երբոր խիստ շատ ժողովուրդ կար
և բան չ'ունէին ուտելու, Յիսուսը իր աշակերտ-
2 ներին կանչեց՝ և ասեց նորանց. Խեղճս է գալիս
այդ ժողովրդի վերայ. որովհետև արդէն երեք օր
3 է ինձ մօտ են, և բան չ'ունին որ ուտեն։ Եւ եթէ
նորանց սոված արձակեմ իրանց տները, կ'թուլա-
նան ճանապարհին. որովհետև դորանցից ոմանք
4 հեռու տեղից են եկել։ Նորա աշակերտները պա-
տասխանեցին նորան. Ո՞ր տեղից կարող է մէկը
հացով կշտացնել դորանց այստեղ՝ անապատում։
5 Եւ նա նորանց հարցրեց՝ Քանի՞ հաց ունիք։ Եւ
6 նորանք ասեցին՝ Եօթը։ Եւ նա ժողովրդին հրա-
մայեց, որ գետնի վերայ նստեն. և այն եօթը հացը
առաւ, գոհացաւ, կտրեց, և իր աշակերտներին էր
տալիս, որ դնեն. և նորանք դրեցին ժողովրդի ա-
7 ռաջին։ Մի քիչ փոքր ձուկեր էլ ունէին. և նա
8 օրհնեց ու ասեց որ նորանց էլ դնեն։ Կերան և
կշտացան. և կտորների աւելացածը եօթը զամբիւղ
9 վեր առան։ Եւ ուտողները չորս հազարի չափ էին.
10 և նորանց արձակեց։ Եւ շուտով իր աշակերտ-
ների հետ նաւը մտաւ՝ և Դաղմանութայի կող-
մերն եկաւ։

11 Եւ փարիսեցիները դուրս եկան և սկսեցին նորա
հետ վիճել. և նորան փորձելով՝ նորանից նշան էին
12 ուզում երկնքից։ Եւ նա շատ զայրացաւ իր հո-
գիի մէջ և ասեց. Ի՞նչ է, որ այս ազգը նշան է
ուզում. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ այս ազգին
13 նշան չի տրուիլ։ Եւ նորանց թողեց, դարձեալ
նաւը մտաւ՝ և այն կողմը գնաց։

14 Եւ մոռացան հաց վեր առնել, և մէկ հացից

15 աւելի չ'ունէին իրանց հետ նաւի մէջ։ Եւ նորանց
պատուիրում էր և ասում. Զգոյշ կացէք փարի-
սեցիների խմորիցը և Հերովդէսականների խմորիցը։
16 Եւ իրար հետ միտք էին անում և ասում, Որով-
17 հետև հաց չ'ունինք։ Եւ Յիսուսը իմանալով ասեց
նորանց. Ի՞նչ էք միտք անում թէ հաց չ'ունիք.
տակաւին չէ՞ք իմանում և չէ՞ք յիշում. տակա-
18 ւին թմրա՞ծ է ձեր սիրտը։ Աչք ունիք՝ և չէ՞ք
տեսնում. և ականջ ունիք՝ և չէ՞ք լսում. և չէ՞ք
19 յիշում։ Երբոր այն հինգ հացը հինգ հազարի հա-
մար կտրեցի, քանի՞ կողով լիքը վեր առաք նորա
20 կտորները. և նորան ասեցին՝ Տասներկու։ Եւ
երբոր եօթը հացը չորս հազարին համար, քա-
նի՞ զամբիւղ լիքը վեր առաք նորա կտորները. և
21 նորանք ասեցին, Եօթը։ Եւ նորանց ասեց. Ապա
ի՞նչպէս չէք իմանում։

22 Եւ գալիս է Բեթսայիդա. և նորա առաջին մի
կոյր են բերում և նորան աղաչում, որ դիպչի նո-
23 րան։ Եւ կոյրի ձեռքիցը բռնեց՝ շէնիցը դուրս հա-
նեց, և նորա աչքերի մէջ թքելով, և ձեռքը վե-
րան դնելով նորան հարցրեց, թէ մի բան տեսնո՞ւմ
24 է։ Եւ նա մտիկ տուաւ և ասում էր. Մարդիկը
տեսնում եմ որ իբր ծառերի պէս՝ ման են գալիս։
25 Յետոյ ձեռքերը դարձեալ նորա աչքերի վերայ
դրաւ և նորան նայել տուաւ. և նա ողջացաւ՝ և
26 ամեն բան համարձակ տեսնում էր։ Եւ նորան
ուղարկեց նորա տունն և ասեց. Ոչ գիւղը մտնես,
ոչ էլ գիւղի մէջ մէկին ասես։

27 Եւ Յիսուսը իր աշակերտների հետ դուրս գնաց
Փիլիպպեայ Կեսարիայի գիւղերը, և ճանապարհին
հարցնում էր իր աշակերտներին և ասում. Մար-
28 դիկ ինձ համար ո՞վ են ասում, թէ եմ։ Նորանք
էլ պատասխանեցին. Յովհաննէս Մկրտիչը, և ուրիշ-

ները Եղիան, և ուրիշներն էլ՝ Մարգարէներից մէ-
29 կը ։ Նա էլ ասեց Նորանց. Ապա դուք ո՞վ էք
ասում ինձ համար, թէ եմ ։ Պետրոսը պա-
տասխանեց և Նորան ասեց. Դու ես Քրիստոսը ։
30 Եւ Նա Նորանց սաստեց, որ ոչ ոքի չ'ասեն իրան
համար ։
31 Եւ սկսեց սովորեցնել Նորանց, թէ պէտք է մար-
դի Որդին շատ չարչարուի, և անարգուի ծերերից
և քահանայապետներից և դպիրներից, և սպան-
32 ուի և երեք օրից յետոյ յարութիւն առնէ ։ Եւ
համարձակ խօսում էր այս խօսքը. և Պետրոսը Նո-
33 րան մի կողմ քաշեց և սկսեց սաստել Նորան ։ Եւ
Նա դառաւ, իր աշակերտներին տեսաւ՝ Պետրոսին
սաստեց և ասեց. Ե՛տ գնա, սատանայ, որ դու
Աստուծոյ բաները չես միտք անում, այլ մարդ-
կանց բաները ։
34 Եւ Նա ժողովուրդն իր աշակերտների հետ իրան
մօտ կանչեց՝ և Նորանց ասեց. Ով որ ուզում է
իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ և իր
35 խաչը վեր առնէ, և իմ ետևից գայ ։ Որովհետև
ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կ'կորցնէ նո-
րան. և ով որ իր անձն ինձ համար և աւետարանի
36 համար կորցնէ, նա կ'ապրեցնէ նորան ։ Որովհետև
ի՞նչ օգուտ է մարդի, եթէ բոլոր աշխարհս ստա-
37 նայ՝ և իր անձը կորցնէ ։ Կամ ի՞նչ փրկանք կ'տայ
38 մարդ իր անձի համար ։ Որովհետև ով որ ինձ և
իմ խօսքերը ամօթ համարէ այս շնացող և մեղա-
ւոր ազգի մէջ, մարդի Որդին էլ նորան ամօթ կը
համարէ երբոր գայ իր Հօր փառքովը և սուրբ
39 հրեշտակներովը ։ Եւ Նորանց ասեց. Ճշմարիտ ա-
սում եմ ձեզ. թէ այստեղ կանգնածներից ոմանք
կան, որ մահ չեն ճաշակիլ, մինչև որ չ'տեսնեն
Աստուծոյ արքայութիւնը զօրութիւնով եկած ։

ԳԼ. Թ

1 Եւ վեց օրից յետոյ Յիսուսը իր հետն առաւ
Պետրոսին և Յակոբոսին և Յովհաննէսին, և հանեց
Նորանց մինակ առանձին մի բարձր սար և այլա-
2 կերպուեցաւ Նորանց առաջին ։ Եւ Նորա հանդերձ-
ները փայլուն եղան՝ ձիւնի պէս շատ սպիտակ, որ
երկրի վերայ մի թափիչ չէ կարող այնպէս սպի-
3 տակացնել ։ Եւ երևեցաւ Նորանց Եղիան Մովսէսի
4 հետ և խօսում էին Յիսուսի հետ ։ Եւ Պետրոսը
պատասխանեց և ասեց Յիսուսին. Ռա՛բբի, լաւ է
որ մենք այստեղ լինենք. և երեք տաղաւար շի-
նենք, մէկը քեզ և մէկը Մովսէսին և մէկը Եղի-
5 ային ։ Որովհետև չ'գիտէր թէ ինչ խօսէր, որովհե-
6 տև զարհուրել էին ։ Եւ մի ամպ Նորանց վերայ
հովանի եղաւ. այն ամպից ձայն եկաւ՝ և ասեց,
7 Դա է իմ սիրելի Որդին. դորան լսեցէք ։ Եւ շու-
տով որ իրանց շուրջը նայեցին, ոչ ոք չ'տեսան,
8 բայց միայն Յիսուսին իրանց հետ ։ Եւ սարից իջ-
նելիս, Նորանց պատուիրեց, որ ոչ մէկին չ'պատմեն
ինչ որ տեսան, բայց միայն այն ժամանակն որ մար-
դի Որդին մեռելների միջից յարութիւն առնէ ։
9 Եւ Նորանք այն խօսքը պահեցին իրանց մօտ, և ի-
րար հարցնում էին, թէ ի՞նչ է այն մեռելների
10 միջից յարութիւն առնելը ։ Եւ Նորան հարցրին և
ասեցին. Ի՞նչ է որ դպիրներն ասում են, թէ
11 պէտք է առաջ Եղիան գայ ։ Նա էլ պատասխա-
նեց և ասեց Նորանց. Իրաւ Եղիան առաջ կ'գայ,
և ամեն բան կարգի կ'դնէ. և ինչպէս գրուած է
մարդի Որդու համար, թէ շատ պիտի չարչարուի
12 և անարգուի ։ Միայն ասում եմ ձեզ՝ թէ Եղիան
եկաւ էլ, և ինչեր ուզեցին, Նորան արին էլ. ինչ-
պէս Նորա համար գրուած էր ։

13 Եւ երբոր եկաւ աշակերտների մօտ, նորանց չորս
կողմից շատ ամբոխ տեսաւ, և դպիրներին, որ
14 նորանց հետ վիճում էին։ Եւ շուտով բոլոր ժո-
ղովուրդը տեսնելով նորան, շատ զարմացան և ա-
15 ռաջ վազելով նորան բարևում էին։ Եւ նա հար-
ցրեց դպիրներին, Ի՞նչ էիք վիճում նորանց հետ։
16 Եւ ժողովրդի միջից մէկը պատասխանեց և ասեց.
Վարդապետ, իմ որդին քեզ մօտ բերի, որ համր
17 ոգի ունի։ Եւ որտեղ որ նորան հանում է, գետ-
նովն է տալիս նորան. և նա փրփրում է՝ և ատամ-
ները կրճտում է, և ցամաքում է. և քո աշա-
կերտներին ասեցի, որ հանեն նորան, բայց չ'կարո-
18 ղացին։ Նա էլ պատասխանեց և ասեց նորան. Ո՜վ
անհաւատ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ հետ լի-
նեմ. մինչև ե՞րբ պիտի ձեզ համբերեմ. նորան ինձ
19 մօտ բերէք։ Եւ նորան բերին նորա մօտ. և նորան
որ տեսաւ, շուտով ոգին թափահարեց նորան.
և նա գետինն ընկած թաւալում էր փրփրելով։
20 Նորա հօրը հարցրեց, Քանի՞ ժամանակ է, որ այդ
եղաւ դորան. նա էլ ասեց՝ Երեխայութիւնից։
21 Եւ շատ անգամ էլ կրակի մէջ գցեց և ջրի մէջ,
որ դորան կորցնէ, սակայն եթէ մի բան կարող
22 ես, օգնիր մեզ՝ գթալով մեզ վերայ։ Յիսուսն էլ
նորան ասեց. Այն՝ եթէ կարող ես հաւատալ,
23 ամեն բան կարելի է հաւատացողին։ Եւ շուտով
տղայի հայրն աղաղակեց և արտասուքով ասեց,
Հաւատում եմ, Տէր, իմ անհաւատութեանն օգ-
24 նիր։ Եւ երբոր Յիսուսը տեսաւ թէ ամբոխը դիզ-
վում է, պիղծ ոգուն սաստեց և ասեց նորան.
Համր և խուլ ոգի, ես հրամայում եմ քեզ, դո-
րանից դուրս եկ, և այլ ևս դորա մէջ չ'մտնես։
25 Եւ նա աղաղակելով և սաստիկ թափահարելով
նորան, դուրս եկաւ. և նա մեռելի պէս եղաւ.

26 մինչև որ շատերն ասում էին թէ Մեռաւ։ Եւ
Յիսուսը նորա ձեռքիցը բռնեց, վերկացրեց նորան.
27 և նա կանգնեց։ Եւ երբոր նա տուն մտաւ աշա-
կերտներն առանձին հարցրին նորան թէ Մենք
28 ի՞նչու չ'կարողացինք հանել նորան։ Եւ նա ասեց
նորանց. Այդ ցեղը ուրիշ բանով անկարելի է
դուրս գայ, եթէ ոչ աղօթքով և ծոմով։
29 Եւ այնտեղից դուրս եկած Գալիլեայի միջովն
անցնում էին. և չէր ուզում որ մէկն իմանայ։
30 Որովհետև աշակերտներին սովորեցնում էր և նո-
րանց ասում թէ մարդի Որդին մարդկանց ձեռքը
պիտի մատնուի, և նորան կ'սպանեն. բայց երբոր
սպանուի, երրորդ օրումը յարութիւն կ'առնէ։
31 Իսկ նորանք այն խօսքը չէին իմանում, և վախե-
նում էին հարցնել նորան։
32 Եւ եկաւ Կափառնայում. և երբոր տանն էր,
նորանց հարցնում էր՝ Ի՞նչ էիք ճանապարհին ի-
33 րար հետ վիճում։ Բայց նորանք լռում էին, որով-
հետև ճանապարհին իրար հետ վիճում էին, թէ
34 ո՞վ է մեծը։ Եւ նա նստեց տասներկուսին կան-
չեց և ասեց նորանց. Եթէ մէկն ուզում է առա-
ջին լինել, թող ամենից յետին և ամենի *ծառայ
35 լինի։ Եւ մի երեխայ առաւ, կանգնեցրեց նորան
նորանց միջումը. և նորան գրկելով ասեց նորանց.
36 Ով որ այսպիսի երեխաներից մէկին իմ անունովս
ընդունի՝ ինձ է ընդունում. և ով որ ինձ ընդու-
37 նի՝ ինձ չէ ընդունում, այլ ինձ ուղարկողին։ Եւ
Յովհաննէսը նորան պատասխանեց և ասեց. Վար-
դապետ, մէկին տեսանք, որ քո անունովը դևեր
էր հանում, և մեր ետևից չէր գալիս, և մենք
արգիլեցինք նորան, որովհետև մեր ետևից չէր գա-

*պաշտօնեայ

38 լիս ։ Յիսուսն էլ ասեց. Մի արգելէք նորան, որով-
հետև ոչ ով չ՚կայ՝ որ իմ անունովը մի զօրութիւն
39 անէ, և կարողանայ շուտով հայհոյել ինձ ։ Որով-
հետև ով որ մեզ հակառակ չէ, մեր կողմն է ։
40 Որովհետև ով որ մի բաժակ ջուր խմեցնէ ձեզ
իմ անունովը՝ թէ դուք Քրիստոսինն էք, ճշմա-
րիտ ասում եմ ձեզ, նա չի կորցնիլ իր վարձքը ։
41 Եւ ով որ գայթակղեցնէ այս փոքրներից մէկին, որ
ինձ հաւատում են, աւելի լաւ էր նորան, որ նո-
րա վզիցը մի ջաղացի քար անցնուլի, և ծովը գցուլի։
42 Եւ եթէ քո ձեռքը քեզ գայթակղեցնէ՝ կտրիր
նորան, որովհետև լաւ է քեզ որ խեղ մտնես յա-
ւիտենական կեանքը, քան երկու ձեռք ունենաս՝
43 և գեհենը գնաս այն անանցանելի կրակի մէջ. Որ-
տեղ նորանց որդը չէ մեռնում՝ և կրակը չէ անց-
44 նում ։ Եւ եթէ քո ոտքը քեզ գայթակղեցնէ՝ կտ-
րիր նորան. լաւ է քեզ որ կաղ մտնես յաւիտե-
նական կեանքը, քան թէ երկու ոտք ունենաս՝ և
45 գեհենը ընկնիս՝ այն անանցանելի կրակի մէջ. Որ-
տեղ նորանց որդը չէ մեռնում՝ և կրակը չէ անց-
46 նում ։ Եւ եթէ քո աչքը քեզ գայթակղեցնէ,
դուրս հանիր նորան. լաւ է քեզ՝ որ մէկ աչքով
Աստուծոյ արքայութիւնը մտնես, քան թէ երկու
47 աչք ունենաս՝ և կրակի գեհենն ընկնիս ։ Որտեղ
նորանց որդը չէ մեռնում՝ և կրակը չէ անցնում ։
48 Որովհետև բոլորը կրակով պէտք է աղանուի, և
49 ամէն զոհ աղով պէտք է աղանուի։ Աղը բարի է.
իսկ եթէ աղն անհամանայ, ինչո՞վ պիտի համե-
մացնէք. աղ ունեցէք ձեր անձերումը, և իրար
հետ խաղաղութիւն արէք ։

ԳԼ. Ժ

1 Եւ այն տեղից վերկացաւ եկաւ Հրէաստանի սահ-

մանները՝ Յորդանանի այն կողմովը. և ժողովուրդ-
ները դարձեալ հաւաքվում էին նորա մօտ, և
ինչպէս որ սովոր էր՝ դարձեալ սովորեցնում էր
նորանց ։
2 Բայց փարիսեցիները մօտ եկան, նորան հարցրին,
թէ Արժա՞ն է մարդիս որ կինը արձակէ. և փոր-
3 ձում էին նորան ։ Նա էլ պատասխանեց և ասեց
4 նորանց, Մովսէսն ի՞նչ պատուիրեց ձեզ ։ Նորանք
էլ ասեցին. Մովսէսը հրաման տուաւ՝ արձակման
5 թուղթ գրել, և արձակել ։ Եւ Յիսուսը պատաս-
խանեց և ասեց նորանց. Նա ձեր քարասրտու-
6 թեան համար այն պատուիրանքը գրեց ձեզ ։ Բայց
ստեղծագործութեան սկզբից Աստուած նորանց
7 արու և էգ արաւ, [illegible]. Սորա համար մարդ
8 իր հօրը և մօրը կ՚թողէ, և իր կնոջը կ՚յարի. Եւ
երկուսը մէկ մարմին կ՚լինեն. այնպէս որ այլ ևս
9 երկու չեն՝ բայց մէկ մարմին ։ Ուրեմն ինչ որ Աս-
10 տուած միաւորեց՝ թող մարդը չ՚բաժանէ ։ Եւ
տանը աշակերտները դարձեալ միևնոյն բանը հար-
11 ցրին նորանից ։ Եւ նա ասեց նորանց. Ով որ կինն
արձակէ և մի ուրիշն առնէ, շնութիւն է գոր-
12 ծում նորա դէմ ։ Եւ եթէ մի կին իր մարդին ար-
ձակէ և ուրիշ մարդու գնայ, շնութիւն է գործում ։
13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ դպչի
նորանց. բայց աշակերտները սաստում էին բերող-
14 ներին ։ Իսկ երբոր Յիսուսը տեսաւ, բարկացաւ, և
ասեց նորանց. Թող տուէք երեխաներին ինձ մօտ
գան, և մի արգելէք դորանց. որ այդպիսիներին է
15 Աստուծոյ արքայութիւնը ։ Ճշմարիտ ասում եմ
ձեզ, Ով որ Աստուծոյ արքայութիւնը չ՚ընդունի
16 ինչպէս երեխայ, նա չի մտնիլ նորա մէջ ։ Եւ նո-
րանց առաւ գիրկը, ձեռքը դրաւ նորանց վերայ,
և օրհնեց նորանց ։

17 Եւ այնտեղից ճանապարհը գնալիս, մէկը վազե-
լով եկաւ՝ ծունր դրաւ, Նորան հարցնում էր և
ասում. Բարի վարդապետ, ինչ գործեմ, որ յա-
18 ւիտենական կեանքը ժառանգեմ։ Յիսուսն էլ ա-
սեց Նորան. Ի՞նչու ես ինձ բարի ասում. ոչ ով
19 բարի չ'կայ, բայց միայն մէկը՝ Աստուած։ Պատուի-
րանքները գիտես՝ Մի շնար, Մի սպանիր, Մի գո-
ղանար, Մի սուտ վկայիր, Մի զրկիր, Քո հօրը
20 և մօրը պատուիր։ Նա էլ պատասխանեց և ասեց
Նորան. Վարդապետ, այդ ամենն իմ երեխայու-
21 թիւնից պահել եմ։ Յիսուսն էլ Նորան մտիկ
տուաւ՝ Նորան սիրեց, և ասեց Նորան. Մէկ բան
պակաս է քեզ, գնա, ինչ որ ունիս ծախիր և աղ-
քատներին տուր. և գանձ կ'ունենաս երկնքումը.
22 և խաչն առած՝ եկ ինձ հետևիր։ Նա էլ այն խօս-
քի համար դժուարացած՝ գնաց տրտմած. որովհե-
23 տև շատ ինչքի տէր էր։ Եւ Յիսուսը շուրջը նայե-
լով՝ ասեց իր աշակերտներին. Ի՞նչքան դժուար է,
որ հարստութիւն ունեցողներն Աստուծոյ արքա-
24 յութիւնը մտնեն։ Եւ աշակերտները զարմանում
էին Նորա խօսքերի վերայ. բայց Յիսուսը դարձեալ
պատասխանեց և ասեց նորանց, Որդեակներ, ո՞ր-
քան դժուար է, որ հարստութեան վերայ յուսա-
25 ցողները Աստուծոյ արքայութիւնը մտնեն։ Աւելի
հեշտ է, որ ուղտն ասեղի ծակովն անցնէ, քան թէ
26 հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ։ Եւ
նորանք առաւել ևս զարմանում էին, իրար ասե-
27 լով. Ապա ո՞վ կարող է փրկուիլ։ Յիսուսն էլ
նորանց մտիկ տուաւ և ասեց. Մարդկանց կողմա-
նէ անկարելի է, այլ ոչ թէ Աստուծոյ կողմանէ.
որովհետև ամեն բան կարելի է Աստուծոյ կողմա-
28 նէ։ Եւ Պետրոսը սկսեց Նորան ասել. Ահա մենք
29 ամեն բան թողեցինք, և քո ետևից եկանք։ Յի-

սուսն էլ պատասխանեց և ասեց. Ճշմարիտ ասում
եմ ձեզ, ոչ ով չ'կայ, որ թողեց տուն կամ եղ-
բայրներ կամ քոյրեր կամ հայր կամ մայր կամ
կին կամ որդիք կամ արտեր ինձ համար կամ
30 աւետարանի համար, Որ հարիւրապատիկ հիմա
այս ժամանակումը չ'առնէ տներ և եղբայրներ և
քոյրեր և մայրեր և որդիք և արտեր հալածանքի
հետ, և գալու աշխարհքումը՝ յաւիտենական կեան-
31 քը։ Որովհետև շատ առաջիններ յետինք կ'լինեն,
և յետիններն առաջինք։
32 Եւ ճանապարհի վերայ Երուսաղէմ էին գնում,
և Յիսուսը նորանցից առաջ էր գնում, և նորանք
զարմանում էին և ետևից գնալով վախենում էին։
Եւ տասներկուսին դարձեալ առանձին առաւ
մօտը, սկսեց նորանց ասել, թէ ինչ բաներ են ի-
33 րան պատահելու. Թէ ահա վեր ենք ելնում Երու-
սաղէմ. և մարդի Որդին կ'մատնուի քահանայա-
պետներին և դպիրներին. և նորան մահի կ'դատա-
34 պարտեն, և նորան հեթանոսներին կ'մատնեն։ Եւ
նորան ծաղր կ'անեն, և նորան կ'ծեծեն, և նորա
վերայ կ'թքեն, և կ'սպանեն նորան. և երրորդ օ-
րումը յարութիւն կ'առնէ։
35 Եւ Զեբեդիայի որդիք՝ Յակոբոսը և Յովհաննէսը
Նորա մօտ են գնում և ասում. Վարդապետ, ու-
զում ենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ ա-
36 նես։ Նա էլ նորանց ասեց, Ի՞նչ էք ուզում որ
37 ես ձեզ անեմ։ Նորանք էլ ասեցին Նորան. Տուր
մեզ, որ մէկը աջ կողմդ և միւսը ձախ կողմդ նըս-
38 տենք քո փառքումը։ Յիսուսն էլ ասեց նորանց.
Չ'գիտէք թէ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել
այն բաժակը որ ես պիտի խմեմ, կամ այն մկըր-
տութիւնովը մկրտուիլ՝ որով ես պիտի մկրտուիմ։
39 Նորանք էլ ասեցին Նորան. Կարող ենք։ Յիսուսն

էլ ասեց նորանց. Այն բաժակը որ ես պիտի խը-
մեմ, կ'խմէք, և այն մկրտութիւնովն՝ որ ես պիտի
40 մկրտուիմ՝ կ'մկրտուէք։ Բայց իմ աջ և ձախ կող-
մը նստելն իմս չէ, որ տամ. այլ նորանց, որ պատ-
41 րաստուած է։ Եւ այն տասները լսելով սկսեցին
42 բարկանալ Յակոբի և Յովհաննէսի մասին։ Յիսուսն
էլ նորանց իրան մօտ կանչեց, և ասեց նորանց.
Գիտէք՝ որ հեթանոսների իշխան համարուողները
տիրում են նորանց վերայ, և նորանց մեծամեծնե-
43 րը իշխում են նորանց վերայ։ Այնպէս պիտի չլինի
ձեր միջումը. այլ ձեզանից ով որ կամենայ մեծ
44 լինել՝ թող ձեզ *ծառայ լինի։ Եւ ձեզանից ով որ
կամենայ առաջին լինել, թող ամենի ծառայ լինի։
45 Որովհետև մարդի Որդին էլ չ'եկաւ, որ իրան ծա-
ռայեն, այլ նա ծառայէ, և իր անձը փրկանք
տայ շատերի տեղ։
46 Եւ գալիս են Երիքով. և երբոր նա և նորա
աշակերտները և շատ ժողովուրդ Երիքովից դուրս
էին գալիս, Տիմէի որդի Բարտիմէոս կոյրը ճանա-
պարհի վերայ նստած մուրացկանութիւն էր ա-
47 նում։ Եւ լսելով թէ Յիսուս Նազովրեցին է, սկը-
սեց աղաղակել և ասել. Յիսուս՝ որդի Դաւթի,
48 ողորմիր ինձ։ Եւ շատ մարդիկ սաստում էին նո-
րան, որ լուռ կենայ. բայց նա էլ աւելի էր աղա-
49 ղակում. Որդի Դաւթի, ողորմիր ինձ։ Եւ Յիսու-
սը կանգնեց և ասեց, որ նորան կանչեն. և կոյրին
կանչեցին՝ և ասեցին նորան. Քաջ եղիր, վեր կաց,
50 քեզ կանչում է։ Նա էլ իր հանդերձը դէն գցեց՝
51 վերկացաւ և Յիսուսի մօտ եկաւ։ Եւ Յիսուսը
պատասխանեց և նորան ասեց. Ի՞նչ ես կամենում
որ անեմ քեզ։ Կոյրն էլ նորան ասեց. Ռաբբունի,

*պաշտօնեայ

52 որ տեսնեմ։ Յիսուսն էլ ասեց նորան. Գնա՛ քո
հաւատքը քեզ ապրեցրեց. և նա շուտով տեսաւ,
և ճանապարհումը Յիսուսի ետևից գնում էր։

ԳԼ. ԺԱ

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտեցան՝ Բեթփագէ և
Բեթանիա՝ Ձիթենեաց սարի մօտ, իր աշակերտնե-
2 րից երկուսին ուղարկեց։ Եւ ասեց նորանց. Գնա-
ցէք այդ ձեր առաջի գիւղը. և շուտով երբոր նո-
րա մէջ մտնէք, մի կապած աւանակ կ'գտնէք որի
վերայ ոչ ոք չէ նստած. նորան արձակեցէք բերէք։
3 Եւ եթէ մէկը ձեզ ասէ. Ի՞նչու համար էք այդ
անում. ասեցէք՝ թէ նա պէտք է Տիրոջը. և շու-
4 տով նորան այստեղ կ'ուղարկէ։ Գնացին, և աւա-
նակը գտան դուրսը փողոցի մէջ դռան մօտ կա-
5 պած, և նորան արձակեցին։ Եւ այնտեղ կանգ-
նածներից ոմանք ասեցին նորանց. Ի՞նչ էք անում
6 դա, որ արձակում էք այդ աւանակը։ Նորանք
էլ ասեցին նորանց, ինչպէս Յիսուսը հրամայել էր.
7 և թոյլ տուին նորանց։ Եւ աւանակը Յիսուսի մօտ
բերին. և իրանց հանդերձները նորա վերայ գցե-
8 ցին, և նա նորա վերայ նստեց։ Շատերն էլ իրանց
հանդերձները ճանապարհին փռում էին, ուրիշ-
ներն էլ ծառերից ճիւղեր էին կտրում և ճանա-
9 պարհին փռում։ Եւ առաջից գնացողները և ետե-
ւից եկողները աղաղակում էին և ասում, Ովսան-
10 նա. օրհնեալ է Տիրոջ անունով եկողը. Օրհնեալ
է Տիրոջ անունով մեր Դաւիթ հօր եկող թագա-
ւորութիւնը. Ովսաննա 'ի բարձունս։
11 Եւ Յիսուսը մտաւ Երուսաղէմ՝ և տաճարի
մէջ. և չորս կողմով ամեն բանի մտիկ տուաւ. և
որովհետև արդէն իրիկուայ ժամանակ էր, դուրս
գնաց Բեթանիա տասներկուսի հետ։

12 Եւ հետեւեալ օրն երբոր Բեթանիայից դուրս
13 էին գալիս, նա սովեց: Եւ հեռուանց մի թզի ծառ
տեսնելով, որ տերեւներ ունէր, գնաց թէ արդեօք
նորա վերայ մի բան կ'գտնէ՞. և երբոր եկաւ, մի
բան չ'գտաւ բայց միայն տերեւներ. որովհետեւ թզի
14 ժամանակ չէր: Յիսուսը պատասխանեց և ասեց
նորան. այլ եւս ոչ ոք քեզանից յաւիտեան պտուղ
չ'ուտէ. և նորա աշակերտները լսում էին:
15 Եւ եկան Երուսաղէմ. և Յիսուսը տաճարը մը-
տաւ, սկսեց դուրս հանել տաճարումը ծախողնե-
րին և առնողներին. և սատկ փոխողների սեղան-
ները, և աղաւնի ծախողների աթոռները կործա-
16 նեց: Եւ չէր թողում, որ մէկը մի անօթ անցկա-
17 ցնէ տաճարի միջով: Եւ սովորեցնում էր և ասում
նորանց, Գրուած չէ՞ թէ Իմ տունը աղօթքի տուն
պիտի կոչուի ամեն ազգերի համար, իսկ դուք ա-
18 ւազակների բոյն արիք դորան: Եւ դպիրները և
քահանայապետները լսեցին, և ուզում էին թէ
ի՞նչպէս կորցնեն նորան. որովհետեւ վախենում էին
նորանից. որովհետեւ բոլոր ժողովուրդը նորա վար-
դապետութեան վերայ զարմացել էր:
19 Եւ երբոր իրիկուն եղաւ, քաղաքից դուրս ե-
20 կաւ: Եւ առաւօտանց անցնելիս՝ տեսան այն թզի
21 ծառն արմատից չորացած: Եւ Պետրոսը յիշելով
ասեց նորան. Ռաբբի, տես այն թզենին, որ անի-
22 ծեցիր, չորացաւ: Եւ Յիսուսը պատասխանեց և
ասեց նորանց. Աստուծոյ հաւատքն ունեցէք:
23 Որովհետեւ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ով որ
այս սարին ասէ՝ Վեր կաց և ծովն ընկիր, և իր
սրտումն չ'երկմտի, բայց հաւատայ՝ թէ ինչ որ ա-
24 սում է՝ կ'լինի նորան, կ'լինի ինչ որ ասէ: Սորա
համար ասում եմ ձեզ թէ Ամեն ինչ որ աղօթք
անելով խնդրէք, հաւատացէք թէ կ'առնէք, և

25 կ'լինի ձեզ: Եւ որ ժամանակ որ կանգնէք՝ աղօթք
անէք, ներեցէք եթէ մէկի դէմ բան ունենաք.
որպէսզի ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր յան-
26 ցանքը թողէ ձեզ: Բայց եթէ դուք չ'ներէք, ձեր
Հայրն էլ որ երկնքումն է, ձեր յանցանքը չի նե-
րիլ ձեզ:
27 Եւ դարձեալ Երուսաղէմ եկան. և նա տաճա-
րումը ման գալիս, քահանայապետները և դպիրնե-
28 րը և ծերերը նորա մօտ եկան. Եւ ասեցին նորան.
Ի՞նչ իշխանութիւնով ես անում այդ բաները. և
ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւնը որ այդ բա-
29 ներն անես: Յիսուսն էլ պատասխանեց և ասեց
նորանց. Ես էլ ձեզանից մէկ բան հարցնեմ ու ինձ
պատասխան տուէք, և ես էլ կ'ասեմ ձեզ՝ թէ
ի՞նչ իշխանութիւնով եմ անում այս բաները:
30 Յովհաննէսի մկրտութիւնն երկնքի՞ցն էր, թէ
31 մարդկանցից, պատասխան տուէք ինձ: Եւ իրար
հետ միտք էին անում և ասում. Եթէ ասենք՝ Եր-
կնքից, կ'ասէ, Ապա ի՞նչու չ'հաւատացիք նորան:
32 Այլ թէ ասենք՝ Մարդկանցից, ժողովրդիցը վա-
խենում ենք. որովհետեւ ամենքը ընդունում էին
33 Յովհաննէսին՝ թէ իրաւի մարգարէ էր: Եւ պա-
տասխանեցին և ասեցին Յիսուսին. Չ'գիտենք: Յի-
սուսն էլ նորանց պատասխանեց և ասեց. Ես էլ
չեմ ասիլ ձեզ, թէ ի՞նչ իշխանութիւնով եմ ա-
նում այս բաները:

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսեց նորանց հետ առակներով խօսիլ՝ և
ասել. Մի մարդ այգի տնկեց, և նորան ցանգով
շրջապատեց, և հնձան փորեց, և աշտարակ շինեց,
և նորան մշակների տուաւ, և օտար երկիր գնաց:

2 Եւ ժամանակին այն մշակների մօտ մի ծառայ ու-
ղարկեց, որ մշակներից այգու պտղից առնէ։
3 Նորանք էլ բռնեցին՝ նորան ծեծեցին, և դատարկ
4 ճանապարհ դրին։ Եւ դարձեալ մի ուրիշ ծառայ
ուղարկեց նորանց մօտ. և քարկոծելով նորա գլու-
5 խը պատառեցին և անպատուած արձակեցին։ Եւ
դարձեալ ուրիշն ուղարկեց՝ և նորան սպանեցին,
և շատ ուրիշներին, ոմանց ծեծում և ոմանց սպա-
6 նում էին։ Հիմա դեռ իր մէկ սիրելի որդի ունե-
նալով, նորան էլ ուղարկեց նորանց մօտ վերջա-
7 պէս և ասեց թէ իմ որդուցս կ'ամաչեն։ Բայց
այն մշակներն իրար ասեցին թէ Սա է ժառանգը՝
եկէք սորան սպանենք, և ժառանգութիւնը մեզ
8 կ'լինի։ Եւ նորան բռնեցին՝ սպանեցին և հանեցին
9 այգուցը դուրս։ Արդ այգու տէրն ի՞նչ կ'անէ. կը
գայ և մշակներին կ'կորցնէ և այգին ուրիշներին
10 կ'տայ։ Եւ դուք չէ՞ք կարդացել այն գրածը՝ Թէ
այն քարն՝ որ շինողներն անարգեցին՝ նա եղաւ ան-
11 կիւնի գլուխ։ Տէրից եղաւ այս, և մեր աչքերի
առաջին զարմանալի է։
12 Եւ ուզում էին նորան բռնել, բայց ժողովրդից
վախեցան. որովհետև իմացան՝ թէ այն առակն ի-
րանց համար ասեց. և նորան թողեցին և գնացին։
13 Եւ փարիսեցիներից և Հերովդէսեաններից մի
քանի հոգի նորա մօտ ուղարկեցին, որ խօսքով որ-
14 սան նորան։ Եւ նորանք եկան և ասեցին նորան.
Վարդապե՛տ, գիտենք՝ որ ճշմարիտ ես, և ոչ ոքից
հոգս չ'ունիս, որովհետև մարդկանց երեսպաշտու-
թիւն չես անում, այլ Աստուծոյ ճանապարհը
ճշմարտութիւնով սովորեցնում ես։ Արժա՞ն է
կայսրին հարկ տալ, թէ չէ. տա՞նք թէ չ'տանք։
15 Նա էլ իմանալով նորանց կեղծաւորութիւնը, ա-
սեց նորանց. Ի՞նչու էք փորձում ինձ, մի դահե-

16 կան բերէք ինձ՝ որ տեսնեմ։ Նորանք էլ բերին։
Եւ ասեց նորանց. Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն
17 է։ Նորանք էլ ասեցին նորան, կայսրին։ Յիսուսն
էլ պատասխանեց և ասեց նորանց. կայսրինը կայս-
րին տուէք, և Աստուծունը՝ Աստուծուն։ Եւ զար-
մացան նորա վերայ։
18 Եւ նորա մօտ եկան Սադուկեցիները, որ ասում
են՝ թէ Յարութիւն չ'կայ. նորան հարցրին և ա-
19 սեցին. Վա՛րդապետ, Մովսէս մեզ համար գրեց
որ եթէ մէկի եղբայրը մեռնի, և կին թողէ, և
որդիք չ'թողէ՝ որ նորա եղբայրը նորա կինն առնէ,
20 և իր եղբօր համար զաւակ յարուցանէ։ Արդ եօ-
թը եղբարք կային, և առաջինը կին առաւ՝ և
21 մեռնելիս զաւակ չ'թողեց։ Եւ երկրորդը նորան
առաւ՝ և մեռաւ, և նա էլ զաւակ չ'թողեց. այս-
22 պէս էլ երրորդը։ Եւ այն եօթն էլ նորան առան
և զաւակ չ'թողեցին. և ամենից վերջը կինն էլ
23 մեռաւ։ Արդ յարութեան ժամանակին երբոր յա-
րութիւն կ'առնեն, նորանցից որի՞ն կ'լինի կին. ո-
24 րովհետև այն եօթն էլ նորան կին առան։ Եւ Յի-
սուսը պատասխանեց և ասեց նորանց. Չէ՞ որ իսկ
դորա համար մոլորուած էք, որ ոչ գիրքը գիտէք
25 և ոչ Աստուծոյ զօրութիւնը։ Որովհետև երբոր
մեռելների միջից յարութիւն կ'առնեն, ոչ կին
կ'առնեն՝ և ոչ մարդի կ'գնան, այլ հրեշտակների
26 պէս են որ երկնքումն են։ Սակայն մեռելների հա-
մար՝ թէ յարութիւն կ'առնեն, դուք չէ՞ք կար-
դացել Մովսէսի գրքումը մորենու մէջ, Թէ Աս-
տուած ինչպէս խօսեց նորան և ասեց. Ես եմ Աբ-
րահամի Աստուածը, և Իսահակի Աստուածը, և
27 Յակոբի Աստուածը։ Եւ նա մեռելների Աստուած
չէ, բայց կենդանիների. ուրեմն դուք շատ մոլոր-
ուած էք։

28 Եւ դպիրներից մէկը մօտ եկաւ, լսելով որ վի-
ճում էին, և երբոր տեսաւ թէ լաւ պատասխա-
նեց նորանց, նորան հարցրեց, Ո՞րն է ամենից ա-
29 ռաջին պատուիրանքը։ Յիսուսն էլ նորան պատաս-
խանեց, թէ Ամեն պատուիրանքներից առաջինը
սա է, Լսիր, Իսրայէլ, մեր Տէր Աստուածը մէկ Տէր
30 է։ Եւ սիրիր քո Տէր Աստուծուն բոլոր սրտիցդ,
և բոլոր անձիցդ, և բոլոր մտքիցդ, և բոլոր զօ-
31 րութիւնիցդ. սա է առաջին պատուիրանքը։ Եւ
երկրորդը սորան նման, Սիրիր քո ընկերին քո անձի
պէս. սորանցից աւելի մեծ ուրիշ պատուիրանք չը
32 կայ։ Եւ դպիրը նորան ասեց. Լաւ, վարդապետ,
ճշմարտութեամբ ասեցիր՝ թէ մէկ է Աստուած,
33 Նորանից բաց ուրիշը չ'կայ։ Եւ նորան սիրելը բոլոր
սրտից և բոլոր մտքից և բոլոր անձից և բոլոր զօ-
րութիւնից, և ընկերին անձին պէս սիրելը՝ աւելի
34 է քան թէ ամեն ողջակէզները և զոհերը։ Եւ Յի-
սուսը նորան տեսնելով, որ իմաստութեամբ պա-
տասխանեց, ասեց նորան. Դու հեռու չես Աստու-
ծոյ արքայութիւնիցը։ Եւ այլ ևս ոչ ոք չէր հա-
մարձակւում նորան մի բան հարցնել։

35 Եւ Յիսուսը պատասխանեց և ասեց, երբոր տա-
ճարումը սովորեցնում էր. Ի՞նչպէս են ասում
36 դպիրները, թէ Քրիստոս Դաւիթի որդին է։ Որով-
հետև ինքը Դաւիթ Սուրբ Հոգովն ասում է, Տէրն
իմ Տիրոջն ասեց. Իմ աջ կողմը նստիր, մինչև որ
քո թշնամիները ոտներիդ պատուանդան դնեմ։
37 Արդ Դաւիթ ինքն նորան Տէր է ասում՝ ապա
ի՞նչպէս որդի է նորան. և շատ ժողովուրդը յօ-
ժարութեամբ լսում էր նորան։

38 Եւ իր վարդապետութեան մէջ ասում էր նո-
րանց, Զգուշ կացէք դպիրներիցը, որ կամենում
են պայծառ հագուստներով ման գալ, և հրապա-
39 րակներումը բարևներ ընդունել. Եւ ժողովարան-
ների մէջ առաջին աթոռներ, և ընթրիքներում
40 առաջին բազմոցներ։ Որ որբևայրիների տները ու-
տում են, և պատճառանքով երկար աղօթք են
անում. դորանք աւելի ևս դատապարտութիւն
կ'առնեն։

41 Եւ Յիսուսը գանձանակի դիմացը նստած մտիկ
էր անում, թէ ժողովուրդն ինչպէս էր *փող գը-
ցում գանձանակը, և շատ հարուստներ շատ բա-
42 ներ էին գցում։ Եւ մի աղքատ որբևայրի եկաւ
43 երկու լումայ գցեց, որ մի նաքարակիտ է։ Եւ իր
աշակերտներին իրան մօտ կանչեց, և ասեց նորանց.
Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ այս աղքատ որբև-
այրին գանձանակը գցողների ամենից աւելի գցեց։
44 Որովհետև ամենքն իրանց աւելորդիցը գցեցին.
բայց սա իր չքաւորութիւնիցը ամեն ինչ որ ունէր
գցեց, իր կեանքի բոլոր ապրուստը։

ԳԼ. ԺԳ

1 Եւ երբոր նա տաճարիցը դուրս էր գալիս, նորա
աշակերտներիցը մէկը նորան ասեց. Վարդապետ,
տես ի՛նչպիսի քարեր և ի՛նչպիսի շինուածներ։
2 Եւ Յիսուսը պատասխանեց և ասեց նորան. Տես-
նո՞ւմ ես այդ մեծ շինուածները. քար քարի վե-
րայ չի թողուիլ՝ որ չ'քանդուի։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց սարի վերայ նստած էր
տաճարի դիմացը, Պետրոսը և Յակոբոսը և Յով-
հաննէսը և Անդրէասը առանձին հարցնում էին
4 նորան. Ասիր մեզ, դորանք ե՞րբ կ'լինեն. և նշանն
ի՞նչ է, երբոր այդ բոլոր բաները պիտի կատար-

*Յուն. պղինձ

5 ուին։ Յիսուսն էլ պատասխանեց և սկսեց նորանց
ասել. Զգուշ կացէք, մի գուցէ մէկը ձեզ խաբէ։
6 Որովհետև շատերը կ'գան իմ անունովը, և կ'ա-
սեն՝ թէ Ես եմ Քրիստոսը. և շատերին կ'մոլորե-
7 ցնեն։ Բայց երբոր պատերազմներ և պատերազմնե-
րի լուրեր կ'լսէք, մի շփոթուիք, որովհետև պէտք
8 է որ լինեն. բայց դեռ վերջը չէ։ Որովհետև ազգ
ազգի վերայ վեր կ'կենայ, և թագաւորութիւն
թագաւորութեան վերայ. և տեղ տեղ երկրա-
շարժներ կ'լինեն, և սովեր և խռովութիւններ կը
9 լինեն. սորանք նեղութիւնների սկիզբն են։ Բայց
դուք զգուշ կացէք ձեր անձերին, որ ձեզ ատ-
եաններին կ'մատնեն, և ժողովարաններին մէջ կը
ծեծուիք, և կուսակալներին և թագաւորներին ա-
ռաջին կ'կանգնիք ինձ համար նորանց վկայութիւն
10 լինելու։ Եւ բոլոր ազգերին պէտք է առաջ աւե-
11 տարանը քարոզուի։ Բայց երբոր ձեզ կ'տանեն որ
մատնեն, առաջուց հոգս չ'անէք թէ ինչ պիտի
խօսիք, և ոչ էլ մտածեցէք. այլ ինչ որ այն ժա-
մումը կ'տրուի ձեզ, այն խօսեցէք. որովհետև
12 դուք չէք խօսողները՝ բայց Սուրբ Հոգին։ Եւ եղ-
բայր եղբօր կ'մատնէ մահի, և հայրը որդուն. և
որդիք վեր կ'կենան ծնողների վերայ, և նորանց
13 կ'սպանեն։ Եւ ամենին ատելի կ'լինիք իմ անունի
համար. բայց ով որ մինչև վերջը համբերէ՝ նա
կ'ապրի։
14 Եւ երբոր տեսնէք աւերածի պղծութիւնը, որ
ասուած է Դանիէլ մարգարէից, կանգնած այն
տեղումը որ արժան չէ. (ով որ կարդում է, միտք
առնէ.) այն ժամանակ նորանք որ Հրէաստանումն
15 են, թող սարերը փախչեն։ Եւ ով որ կտրի վերայ
է, թող չ'իջնէ տան մէջ, և չ'մտնէ իր տանից մի
16 բան վեր առնելու։ Եւ յանդումը լինողը թող ետ

17 չ'դառնայ իր հանդերձը առնելու։ Բայց վայ այն
18 օրերումը յղացածներին և ծիծ տուողներին։ Եւ
աղօթք արէք, որ ձեր փախչելը ձմեռ ժամանակին
19 չ'լինի։ Որովհետև այն օրերը նեղութիւններ կ'լի-
նեն. որ այնպիսիները աշխարհի սկզբից, որ Աստ-
ուած ստեղծել է, մինչև հիմա չեն եղած, և եր-
20 բէք չեն լինիլ։ Եւ եթէ Տէրն այն օրերը չէր կար-
ճացրել, ոչ մի մարմին չէր ապրիլ, բայց ընտ-
րուածների համար, որոնց ընտրեց, այն օրերը կար-
21 ճացրեց։ Եւ այն ժամանակ եթէ մէկը ձեզ ասէ.
Ահա այստեղ է Քրիստոսը, կամ ահա այնտեղ,
22 մի հաւատաք։ Որովհետև սուտ քրիստոսներ և
սուտ մարգարէներ վեր կ'կենան. և նշաններ և
հրաշքներ կ'տան, որ եթէ կարելի լինէր, ընտ-
23 րուածներին էլ մոլորեցնեն։ Բայց դուք զգուշ կա-
ցէք, ահա ասեցի առաջուց բոլորը։
24 Բայց այն օրերումն այն նեղութիւնից յետոյ ա-
րեգակը կ'խաւարի, և լուսինն իր լոյսը չի տալ։
25 Եւ երկնքի աստղերը կ'թափուին, և երկնքումը
26 լինող զօրութիւնները կ'շարժուին։ Եւ այն ժամա-
նակ կ'տեսնեն մարդի Որդին ամպերով գալիս շատ
27 զօրութիւնով և փառքով։ Եւ այն ժամանակ իր
հրեշտակները կ'ուղարկէ, և իր ընտրուածներին
չորս հողմից կ'ժողովէ, երկրի ծայրից մինչև եր-
28 կնքի ծայրը։ Բայց թզենուցը սովորեցէք առակը.
երբոր նորա ճղերը արդէն կ'կակղին և տերևները
29 կ'արձակուին գիտէք թէ ամառը մօտ է։ Այնպէս
էլ դուք, երբոր տեսնէք այս բոլորը լինելիս, ի-
30 մացէք թէ մօտիկ է դռներին։ Ճշմարիտ ասում
եմ ձեզ, թէ այս ազգը չի անցնիլ, մինչև որ այս
31 բոլորը լինի։ Երկինքն և երկիրը կ'անցնեն, բայց
իմ խօսքերը չեն անցնիլ։
32 Միայն այն օրուայ և ժամի համար ոչ ով չ'գի-

տէ, ոչ հրեշտակները երկնքումը և ոչ Որդին, բայց
33 միայն Հայրը ։ Զգուշացէք, արթուն կացէք և ա-
ղօթք արէք. որովհետև չ'գիտէք թէ ժամանակը
34 երբ է ։ Ինչպէս մի մարդ, որ հեռու աշխարհք
գնալիս իր տունը թողէ, և իր ծառաներին իշխա-
նութիւն տայ, և ամեն մէկին իր գործը, և դռա-
35 նապանին հրաման տայ, որ արթուն կենայ ։ Արդ
արթուն կացէք, որ չ'գիտէք թէ տանտէրը երբ կը
գայ, իրիկո՞ւնը, թէ կէս գիշերը, թէ հաւի խօ-
36 սելու ժամանակին, թէ առաւօտանց. Որ չ'լինի
37 թէ յանկարծ գալով ձեզ քնած գտնէ ։ Բայց ինչ
որ ձեզ ասում եմ, ամենին եմ ասում. Արթուն
կացէք ։

ԳԼ. ԺԴ

1 Եւ երկու օրից յետոյ զատիկն էր և բաղարջա-
կերք, և քահանայապետները և դպիրները որոնում
էին թէ ի՞նչպէս նորան նենգութեամբ բռնեն ըս-
2 պանեն։ Բայց ասում էին՝ Ոչ Թէ տօնումը, մի գու-
ցէ ժողովրդի մէջ խռովութիւն լինի ։
3 Եւ երբոր Բեթանիա էր, Սիմոն բորոտի տան սե-
ղան նստած, մի կին եկաւ՝ որ մի շիշ ազնիւ թան-
կագին նարդոսի իւղ ունէր, և շիշը կոտրեց՝ նորա
4 գլխի վերայ թափեց ։ Բայց կային ոմանք որ իրանց
մէջ դժուարացան, ասելով. Ի՞նչու համար եղաւ
5 իւղի այդ կորուստը ։ Որովհետև կարելի էր դորան
երեք հարիւր դահեկանից աւելի թանկ ծախել,
և աղքատներին տալ. և շատ յանդիմանում էին
6 այն կնոջը ։ Յիսուսն էլ ասեց. Թող տուէք դո-
րան. ի՞նչու էք նեղութիւն տալիս դորան. դա մի
7 բարի բան գործեց ինձ վերայ ։ Որովհետև ամեն
ժամանակ աղքատներին ձեզ հետ ունիք, և երբոր

կամենաք՝ կարող էք նորանց բարի անել. բայց
8 ինձ ամեն ժամանակ ձեզ հետ չ'ունիք ։ Դա ինչ որ
ունէր, արաւ. առաջուց իմ մարմինն օծեց՝ թաղ-
9 ման համար ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ, ուր որ
այս աւետարանը քարոզուի, բոլոր աշխարհքի մէջ
դորա յիշատակի համար նա էլ կ'խօսուի՝ որ դա
արաւ ։
10 Եւ Յուդա Իսկարիովտացին՝ այն տասներկուսից
մէկը՝ քահանայապետների մօտ գնաց, որ նորան
11 մատնէ նորանց։ Նորանք էլ երբոր լսեցին՝ ուրախա-
ցան և խոստացան նորան արծաթ տալ. և որոնում
էր թէ ի՞նչպէս յարմար ժամանակով մատնէ նորան։
12 Եւ բաղարջակերաց առաջին օրը, երբոր զատկի
գառը մորթում էին, նորա աշակերտները նորան ա-
սեցին. Ի՞նչտեղ ես կամենում, որ գնանք պատ-
13 րաստենք, որ զատիկն ուտես ։ Եւ իր աշակերտնե-
րից երկուսին ուղարկեց և ասեց նորանց. Գնացէք
քաղաքը, և մի մարդ կ'պատահի ձեզ՝ ջրի կուժ
14 տանող, նորա ետևից գնացէք ։ Եւ ուր որ մտնէ,
այն տան տիրոջն ասեցէք, թէ Վարդապետն ա-
սում է՝ Ո՞ւր է այն իջևանը, ուր զատիկն ուտեմ
15 աշակերտներիս հետ ։ Եւ նա մի մեծ վերնատուն
ցոյց կ'տայ ձեզ՝ սարքուած պատրաստ. այնտեղ
16 պատրաստեցէք մեզ համար ։ Եւ նորա աշակերտ-
ները ելան ու եկան քաղաքը, և գտան ինչպէս
նորանց ասեց. և զատիկը պատրաստեցին ։
17 Եւ երբոր իրիկուն եղաւ, եկաւ տասներկու-
18 սին հետ. Եւ երբոր սեղան նստեցին և ուտում
էին, Յիսուսը ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ
ձեզանից մէկը կ'մատնէ ինձ. Նա որ ինձ հետ ու-
19 տում է ։ Նորանք էլ սկսեցին տրտմել և մէկը մէ-
կից յետոյ նորան ասել, Մի՞թէ ես. և միւսը՝ Մի-
20 թէ ե՞ս ։ Նա էլ պատասխանեց և ասեց նորանց.

Տասներկուսից մէկը՝ նա որ ձեռքը ինձ հետ
21 սկուտեղի մէջ կոխեց։ Բայց մարդի Որդին կը
գնայ՝ ինչպէս նորա համար գրուած է. սակայն վայ
այն մարդին, որի ձեռովը մարդի Որդին կ'մատնուի.
լաւ էր նորան, եթէ այն մարդը ծնուած չ'լինէր։
22 Եւ նորանք ուտելիս, Յիսուսը հաց առաւ՝ օրհ-
նեց՝ կտրեց և տուաւ նորանց և ասեց. *Առէք
23 կերէք". այս է իմ մարմինը։ Եւ բաժակն առաւ՝
գոհացաւ, տուաւ նորանց, և ամենքը խմեցին նո-
24 րանից, Եւ ասեց նորանց. Այս է իմ արիւնը նոր
25 ուխտի, որ շատերի համար թափվում է։ Ճշմա-
րիտ ասում եմ ձեզ թէ այլ ևս որթի բերքից
չեմ խմիլ մինչև այն օրը, երբոր նորան նոր խմեմ
Աստուծոյ արքայութեան մէջ։
26 Եւ օրհներգելուց յետոյ դուրս ելան Ձիթենեաց
27 սարը։ Եւ Յիսուսը նորանց ասեց թէ Ամենքդ այս
գիշեր կ'գայթակղիք ինձանից. որովհետև գրուած
է՝ Ես հովիւը կ'զարկեմ՝ և ոչխարները կ'ցրուին։
28 Բայց իմ յարութիւն առնելուց յետոյ ձեզանից
29 առաջ կ'գնամ Գալիլեա։ Պետրոսն էլ ասեց նո-
րան. Թէև ամենքն էլ գայթակղին, բայց ես ոչ։
30 Յիսուսն էլ նորան ասեց. Ճշմարիտ ասում եմ
քեզ, թէ այսօր, հէնց այս գիշեր հաւը երկու
անգամ չ'խօսած, երեք անգամ կ'ուրանաս ինձ։
31 Բայց նա առաւել ևս ասում էր. Թէ որ քեզ հետ
մեռնել էլ պէտք լինի ինձ, ես քեզ չեմ ուրա-
նալ. այնպէս էլ ամենքն էին ասում։
32 Եւ եկան մի տեղ՝ որի անունը Գեթսեմանի էր.
և նա իր աշակերտներին ասեց. այստեղ նստեցէք,
33 մինչև ես աղօթք անեմ։ Եւ Պետրոսին և Յակո-
բոսին և Յովհաննէսին իր հետ առաւ, և սկսեց

*Ոմանք՝ Առէք.

34 զարհուրել և տխրել։ Եւ ասեց նորանց. Իմ անձը
մահի չափ խիստ տրտմած է. այստեղ մնացէք և
35 արթուն կացէք։ Եւ մի քիչ առաջ գնաց, գետ-
նի վերայ ընկաւ, և աղօթք էր անում, որ եթէ
36 կարելի է, այն ժամն իրանից անցնէ։ Եւ ասում
էր. Աբբա, Հայր, ամեն բան կարելի է քեզ, այս
բաժակն ինձանից անցրու. բայց ոչ թէ ինչ որ ես
37 եմ կամենում, այլ ինչ որ դու։ Եւ գալիս է
գտնում նորանց քնած և ասում Պետրոսին. Սի-
մօն, քնո՞ւմ ես, չ'կարացի՞ր մէկ ժամ արթուն
38 կենալ։ Արթուն կացէք և աղօթք արէք, որ փոր-
ձութեան մէջ չ'մտնէք. հոգին յօժար է, բայց
39 մարմինը տկար։ Եւ դարձեալ գնաց աղօթք ա-
40 րաւ, նոյն խօսքերն ասելով։ Եւ ետ դառաւ՝ նո-
րանց դարձեալ քնած գտաւ, որովհետև նորանց
աչքերը ծանրացել էին, և չ'գիտէին թէ ինչ պա-
41 տասխանեն նորան։ Եւ երրորդ անգամն է գալիս
և ասում նորանց. Այսուհետև քնեցէք և հան-
գիստ առէք. բաւական է. ժամն եկաւ. ահա մար-
42 դի Որդին մատնվում է մեղաւորների ձեռը։ Վեր
կացէք գնանք, ահա մօտեցաւ ինձ մատնողը։
43 Եւ շուտով դեռ նա խօսելիս՝ եկաւ Յուդան՝ այն
տասներկուսից մէկը. և նորա հետ շատ ամբոխ
սրերով և բրերով՝ քահանայապետներից և դպ-
44 պիրներից և ծերերից։ Նորան մատնողն էլ նո-
րանց նշան էր տուել՝ և ասել, Որին որ ես համ-
բուրեմ, նա է, նորան բռնեցէք և զգուշութեամբ
45 տարէք։ Եւ եկաւ՝ շուտով մօտեցաւ նորան և ա-
46 սեց. Ռա՛բբի, Ռա՛բբի, և համբուրեց նորան։ Եւ
նորանք իրանց ձեռքը գցեցին նորա վերայ և բռ-
47 նեցին նորան։ Եւ նորա մօտ կանգնածներից մէկը
սուրը քաշեց՝ քահանայապետի ծառային զարկեց,
48 և ականջը կտրեց։ Եւ Յիսուսը պատասխանեց և

ասեց նորանց. ինչպէս մի աւազակի՞ վերայ սրերով
49 և բիրերով դուրս եկաք ինձ բռնելու ։ Ամեն օր
ձեզ մօտ էի տաճարումն սովորեցնելով. և ինձ չը
50 բռնեցիք. բայց որպէսզի գրքերը կատարուին ։ Եւ
51 ամենքը նորան թողեցին փախան ։ Եւ մէկ երիտա-
սարդ նորա ետևից գնում էր, որ կտաւ էր գցել
մերկ մարմնի վերայ, և երիտասարդները բռնում
52 էին նորան ։ Իսկ նա կտաւը թողեց՝ և մերկ փա-
խաւ նորանցից ։
53 Եւ Յիսուսին տարան քահանայապետի մօտ, և
բոլոր քահանայապետները և գպիրները և ծերերը
54 նորա մօտ էին գալիս ։ Եւ Պետրոսն էլ հեռուանց
գնաց նորա ետևից մինչև քահանայապետի սրահի
ները, և սպասաւորների հետ նստել էր և կրակի
55 մօտ տաքանում էր ։ Բայց քահանայապետները և
բոլոր ատեանը Յիսուսի դէմ վկայութիւն էին ո-
րոնում որ նորան սպանեն. սակայն չէին գտնում,
56 Որովհետև շատերը սուտ վկայութիւն էին տալիս
նորա դէմ, բայց վկայութիւններն իրար յարմար
57 չէին ։ Եւ ոմանք վերկացան և նորա դէմ սուտ վը-
58 կայում էին և ասում՝ թէ Մենք լսեցինք դորա-
նից, որ ասում էր՝ թէ Ես այդ ձեռագործ տա-
ճարը կ'քանդեմ, և երեք օրում ուրիշը կ'շինեմ
59 անձեռագործ ։ Սակայն այնպէս էլ նորանց վկայու-
60 թիւնն իրար յարմար չէր ։ Եւ քահանայապետը
վերկացած մէջտեղը՝ Յիսուսին հարցրեց և ասեց.
Ոչինչ չե՞ս պատասխանում. ի՞նչ են վկայում դո-
61 րանք քեզ դէմ ։ Իսկ նա լուռ էր կենում՝ և ոչ-
ինչ պատասխան չէր տալիս. քահանայապետը դար-
ձեալ նորան հարցնում էր և ասում. Դո՞ւ ես
62 Քրիստոսը՝ Օրհնեալի Որդին ։ Յիսուսն էլ պատաս-
խանեց, Ես եմ. և դուք կ'տեսնէք մարդի Որդին
զօրութեան աջ կողմը նստած, և երկնքի ամպերով

63 եկած ։ Եւ քահանայապետն իր հանդերձները պա-
տառելով ասեց. Էլ ի՞նչ պէտք է մեզ վկաներ ։
64 Լսեցիք հայհոյանքը. ի՞նչպէս է երևում ձեզ. Նո-
րանք էլ ամենքը դատապարտեցին նորան, թէ
Մահապարտ է ։
65 Եւ ոմանք սկսեցին նորա վերայ թքել, և երեսը
ծածկել, և բռունցքով ծեծել նորան և նորան
ասել, Մարգարէացիր. և սպասաւորները նորան
ապտակներով ծեծում էին ։
66 Եւ երբոր Պետրոսը վարը սրահումն էր, քահա-
67 նայապետի աղախիններից մէկը գալիս է, Եւ տես-
նում է Պետրոսին որ տաքանում է, մօտիկ է տալիս
նորան՝ և ասում. Դու էլ էիր Յիսուս Նազովրեցու
68 հետ ։ Բայց նա ուրացաւ և ասեց. Չ'գիտեմ և
չեմ էլ հասկանում, թէ դու ինչ ես ասում. և
69 դուրս գնաց նախասրահը և հաւը խօսեց ։ Եւ ա-
ղախինը նորան տեսաւ, դարձեալ սկսեց ասել
70 այնտեղ կանգնածներին թէ Սա նորանցից է ։ Բայց
նա դարձեալ ուրացաւ. և մի քիչ յետոյ այնտեղ
կանգնածները դարձեալ ասեցին Պետրոսին. Ճըշ-
մարի՛տ՝ դու էլ նորանցից ես, որովհետև Գալիլ-
71 եացի ես և քո խօսուածքն էլ նման է ։ Բայց նա
սկսեց անիծել և երդում անել թէ Ես չ'գիտեմ
72 այն մարդին, որ դուք ասում էք ։ Եւ հաւը երկ-
րորդ անգամ խօսեց ։ Եւ Պետրոսը յիշեց այն խօս-
քը, որ Յիսուսը նորան ասեց թէ Հաւը դեռ եր-
կու անգամ չ'խօսած՝ դու երեք անգամ կ'ուրա-
նաս ինձ. և սկսեց լալ ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ շուտով առաւօտանց քահանայապետները
ծերերի և գպիրների հետ՝ և բոլոր ատեանը խոր-

հուրդ արին, Յիսուսին կապեցին՝ և տարան մատ-
2 նեցին Պիղատոսին։ Եւ Պիղատոսը նորան հարցրեց․
Դո՞ւ ես Հրէից Թագաւորը․ Նա էլ պատասխանեց
3 և ասեց նորան․ Դու ես ասում։ Եւ քահանայա-
պետները շատ ամբաստանութիւններ էին անում
4 նորանից․ Եւ Պիղատոսը դարձեալ հարցրեց նորան
և ասեց․ Ոչինչ պատասխան չե՞ս տալիս․ տես ո՛ր-
5 քան են վկայում քեզ դէմ։ Բայց Յիսուսը դար-
ձեալ ոչինչ չ'պատասխանեց, մինչև որ Պիղատոսը
զարմացաւ։
6 Բայց նա ամէն տօնի ժամանակին մէկ բանտար-
կեալ էր արձակում նորանց համար, որին որ խընդ-
7 րում էին։ Եւ Բարաբբա ասուած մէկը կար այն
խռովարարների հետ կապուած, որ իրանց խռովու-
8 թիւնումը մարդասպանութիւն էին արել։ Եւ ամ-
բոխն սկսեց բարձր ձայնով աղաղակել և խնդրել,
9 որ անէ ինչպէս միշտ անում էր նորանց։ Պիղա-
տոսն էլ պատասխանեց նորանց և ասեց․ Կամե-
նո՞ւմ էք՝ Հրէից Թագաւորը կ'արձակեմ ձեզ հա-
10 մար։ Որովհետև գիտէր որ քահանայապետները
11 նախանձով էին մատնել նորան։ Բայց քահանայա-
պետներն ամբոխին գրգռեցին, որ աւելի Բարաբ-
12 բային արձակէ նորանց համար։ Եւ Պիղատոսը
դարձեալ պատասխանեց նորանց և ասեց․ Ապա
ի՞նչ էք ուզում որ անեմ նորան որին ասում էք
13 Հրէից Թագաւոր․ Եւ նորանք դարձեալ աղաղա-
14 կեցին, Խաչիր նորան։ Պիղատոսն էլ նորանց ասեց․
Ապա ի՞նչ չար բան է արել․ և նորանք առաւել
15 ևս աղաղակում էին, Խաչիր դորան։ Բայց Պիղա-
տոսը՝ որովհետև կամենում էր ամբոխը գոհացնել,
Բարաբբային արձակեց նորանց համար․ և Յիսու-
սին ծեծեց՝ նորանց յանձնեց, որ խաչուի։
16 Եւ զինուորները նորան տարան սրահի ներսը

այսինքն պալատը․ և բոլոր գունդը մէկտեղ կան-
17 չեցին։ Եւ նորան ծիրանի հագցրին և փշերից հի-
18 նած պսակ դրին նորա գլխին․ Եւ սկսեցին նորան
19 ողջոյն տալ․ Բարե՜ւ, Հրէից Թագաւոր։ Եւ նորա
գլուխը եղէգով ծեծում էին, և նորա վերայ թը-
քում էին՝ և ծունկ դնելով երկրպագում էին նո-
20 րան։ Եւ երբոր ծաղր արին նորան, այն ծիրանին
նորանից հանեցին, և իր հանդերձները հագցրին,
և դուրս տարան որ խաչեն նորան։
21 Եւ պահակ բռնեցին Սիմօն Կիւրենացուն, Աղեք-
սանդրի և Ռուփոսի հօրը՝ որ արտից գալով այն
տեղից անցնում էր, որ նորա խաչը վեր առնէ։
22 Եւ նորան տարան մի Գողգոթա ասուած տեղ, որ
23 թարգմանվում է Գանկի տեղ։ Եւ նորան զմռսած
24 գինի էին տալիս խմելու, բայց նա չ'առաւ։ Եւ
նորան խաչեցին և բաժանեցին նորա հանդերձները
վիճակ գցելով նորանց վերայ՝ թէ ով ինչ պիտի
25 առնէ։ Եւ ժամը երրորդն էր՝ որ նորան խաչեցին։
26 Եւ նորա յանցանքի գիրը գրուած էր՝ ՀՐԷԻՑ
27 ԹԱԳԱՒՈՐԸ։ Եւ նորա հետ երկու աւազակ խա-
չեցին, մէկը նորա աջ կողմին և մէկը ձախ կողմին։
28 Եւ կատարուեցաւ այն գիրը, որ ասում է, Անօ-
29 րէնների հետ համարուեցաւ։ Եւ այնտեղով անց-
նողները նորան հայհոյում էին, իրանց գլուխները
շարժելով ու ասելով, Վա՜հ, ով տաճարը քան-
30 դող՝ ու երեք օրումը շինող, Ապրեցրու քո անձը
31 և իջիր խաչից։ Նոյնպէս էլ քահանայապետները
դպիրների հետ միասին ծաղր էին անում և ասում․
Ուրիշներին ապրեցրեց՝ իր անձը չէ կարողանում
32 ապրեցնել։ Քրիստոսը՝ Իսրայէլի Թագաւորը թող
հիմա խաչից իջնէ, որ տեսնենք և հաւատանք․
և նորա հետ խաչուածներն էլ էին նորան նախա-
տինք տալիս։

33 Եւ երբոր ժամը վեցը եկաւ, խաւար եղաւ բո-
34 լոր երկրի վերայ մինչև ինը ժամը: Եւ իններորդ
ժամին Յիսուսը մեծ ձայնով աղաղակեց և ասեց.
Էլի՛ Էլի՛ լա՛մա սաբաքթանի. որ թարգմանվում
է՝ իմ Աստուած, իմ Աստուած, ինչու՞ թողիր
35 ինձ: Եւ այնտեղ կանգնածներիցը ոմանք, երբոր
լսեցին, ասում էին. Ահա Եղիային է կանչում:
36 Եւ մէկը վազեց մի սպունգ քացախով լցրեց, և
եղէգի վերայ դրաւ, տուաւ Նորան՝ որ խմէ, և
ասեց. Թողէք տեսնենք, Եղիան կ'գա՞յ որ Նորան
վայր բերէ:
37 Եւ Յիսուսը մեծ ձայն արձակեց՝ և հոգին տուաւ:
38 Եւ տաճարի վարագոյրն երկու պատառուեցաւ՝ վե-
39 րևից մինչև ցածը: Եւ հարիւրապետը, որ այնտեղ
Նորա դիմացը կանգնած էր, երբոր տեսաւ թէ
Յիսուսը այսպէս աղաղակելով հոգի տուաւ, ասեց.
40 Ճշմարի՛տ, այս մարդն Աստուծոյ Որդի էր: Կանայք
էլ կային, որ հեռուանց մտիկ էին տալիս, որոնց
միջումն էր Մարիամ Մագդաղենացին, և փոքր
Յակոբոսի և Յովսէսի մայրը Մարիամ և Սաղոմէն,
41 Որոնք էլ, երբոր Նա Գալիլեա էր, Նորա ետևից
գնում և Նորան ծառայում էին. և ուրիշ շատ
կանայք էլ, որ Նորա հետ Երուսաղէմ էին եկել:
42 Եւ երբոր արդէն իրիկուն եղաւ, որովհետև
43 ուրբաթ էր՝ այսինքն շաբաթից առաջի օրը. Եկաւ
Արիմաթացի Յովսէփը՝ մի երևելի խորհրդական, որ
ինքն էլ Աստուծոյ արքայութեան սպասում էր.
համարձակելով մտաւ Պիղատոսի մօտ, և խնդրեց
44 Յիսուսի մարմինը: Եւ Պիղատոսը զարմացաւ, թէ
արդէն մեռել է. և հարիւրապետին իրան մօտ
կանչեց, Նորան հարցրեց և ասեց, թէ Շատո՞նց է
45 որ մեռաւ: Եւ հարիւրապետիցը տեղեկանալով,
46 մարմինը Յովսէփին շնորհեց: Եւ Յովսէփը կտաւ

առաւ և Նորան իջեցրեց կտաւով պատեց, և Նո-
րան մի գերեզմանի մէջ դրաւ, որ փորուած էր
քարից. և մի քար թաւալեց գերեզմանի դռանը:
47 Եւ Մարիամ Մագդաղենացին և Յովսէսի մայր Մա-
րիամն էլ տեսան այն տեղը, ուր որ Նա դրուեցաւ:

ԳԼ. ԺԶ

1 Եւ երբոր շաբաթն անցաւ, Մարիամ Մագդա-
ղենացին և Յակոբի մայրը Մարիամը և Սաղոմէն
2 խունկեր առան, որ գան Նորան օծեն: Եւ միաշա-
բաթի առաւօտանց շատ կանուխ արեգակը ծա-
3 գելիս գալիս են գերեզմանը: Եւ իրար ասում էին.
Ո՞վ կ'թաւալեցնէ քարը մեզ համար գերեզմանի
4 դռնիցը: Եւ նայեցան տեսան, որ քարը գերեզմա-
նիցը հեռու էր թաւալած, որովհետև շատ մեծ
5 էր: Եւ երբոր գերեզմանը մտան, մի երիտասարդ
տեսան՝ աջ կողմը նստած՝ սպիտակ պատմուճան
6 հագած. և շատ զարհուրեցին: Եւ Նա ասեց
նորանց. Մի զարհուրիք, դուք խաչուած Նա-
զովրեցի Յիսուսն էք որոնում. Նա յարութիւն ա-
ռաւ, այստեղ չէ, ահա այն տեղը՝ ուր որ Նորան
7 դրին: Բայց գնացէք, Նորա աշակերտներին և Պետ-
րոսին ասեցէք, թէ Նա ձեզանից առաջ կ'գնայ
Գալիլեա. այնտեղ կ'տեսնէք Նորան ինչպէս Նա
8 ձեզ ասեց: Եւ շուտով դուրս եկան փախան գե-
րեզմանիցը, և նորանք դողով և սարսափով բըռ-
նուած էին, և ոչ ոքի ոչինչ չ'ասեցին. որովհետև
վախենում էին:
9 Եւ Յիսուսը երբոր յարութիւն առաւ՝ միաշա-
բաթի առաւօտանց առաջ երևեցաւ Մարիամ
10 Մագդաղենացուն, որից եօթը դև էր հանել: Եւ
Նա գնաց պատմեց Նորա հետ լինողներին, որ սուգ

11 էին անում և լաց լինում: Նորանք էլ լսելով՝
թէ կենդանի է, և երևեցաւ նորան, չ՚հաւատա-
12 ցին: Սորանից յետոյ ուրիշ կերպարանքով երևե-
ցաւ նորանցից երկուսին, որ մին գալով յանդն
13 էին գնում: Նորանք էլ գնացին այն միւսներին
պատմեցին, բայց նորանց էլ չ՚հաւատացին:
14 Վերջը երբոր այն տասնևմէկը սեղան էին նըս-
տած, նորանց երևեցաւ և նորանց անհաւատու-
թիւնը և քարասրտութիւնը յանդիմանեց, որ չը
հաւատացին նորանց, որ նորան տեսել էին յա-
րութիւն առած:
15 Եւ նորանց ասեց. Գնացէք բոլոր աշխարհք, ա-
16 ւետարանը քարոզեցէք ամեն արարածի: Ով որ
հաւատայ և մկրտուեցաւ կ՚փրկուի. և ով որ չը
17 հաւատայ՝ կ՚դատապարտուի: Նորանց էլ, որ հա-
ւատացին, այս նշանները կ՚հետևեն. իմ անունովը
18 դևեր կ՚հանեն, նոր լեզուներ կ՚խօսեն. Օձեր վեր
կ՚առնեն, և եթէ մի մահադեղ խմեն, նորանց
վնաս չի տալ. հիւանդների վերայ ձեռք կ՚դնեն,
և նորանք կ՚առողջանան:
19 Արդ Տէրը նորանց հետ խօսելուց յետոյ, եր-
կինքը համբարձաւ, Աստուծոյ աջ կողմը նստեց:
20 Նորանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում
էին, և Տէրը գործակցում էր նորանց և խօսքը հաս-
տատում էր այն նշաններովը որ հետևում էին:
Ամէն:

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Որովհետև շատերը ձեռնարկեցին մեր մէջ հաս-
տատուած բաների պատմութիւնը վերստին կար-
2 գել. ինչպէս մեզ աւանդեցին սկզբից ականատես
3 և խօսքին սպասաւոր լինողները, Ես էլ, որ սկըզ-
բից բոլոր բաներին ճշմարտութիւնով հետևեցի,
կամեցայ կարգաւ գրել քեզ, ո՛վ պատուական
4 Թէոփիլէ. Որ իմանաս այն բաների ստուգութիւ-
նը, որ սովորեցիր:
5 Հրէաստանի թագաւոր Հերովդէսի օրերումը մի
քահանայ կար անունը Զաքարիա, Աբիայի դասա-
կարգութիւնիցը, և նորա կինն Ահարոնի աղջիկ-
6 ներիցը, և նորա անունն Եղիսաբեթ: Երկուսն էլ
Աստուծոյ առաջին արդար էին, և Տիրոջ բոլոր
պատուիրանքներումը և իրաւունքներումը գնում
7 էին անարատ: Եւ նորանք զաւակ չ՚ունէին, որով-
հետև Եղիսաբեթը ամուլ էր. և երկուսն էլ ի-
րանց օրերը անց էին կացրել:
8 Եւ եղաւ, երբոր նա քահանայութիւն էր ա-
նում իրան հասած դասակարգութեան օրերումը
9 Աստուծոյ առաջին, Քահանայութեան սովորու-
թեան պէս, իրան ընկաւ, որ Տիրոջ տաճարը մտնէ
10 խնկարկութիւն անելու: Եւ ժողովրդի բոլոր բազ-
մութիւնը դուրսն աղօթք էին անում խնկարկու-

11 թեան ժամանակին։ Եւ Տիրոջ հրեշտակը երեւ-
ցաւ նորան՝ կանգնած խնկի սեղանի աջ կողմին։
12 Եւ Զաքարիան տեսնելով շփոթուեցաւ, եւ վախ
13 ընկաւ նորա վերայ։ Եւ հրեշտակն ասեց նորան.
Մի վախենար, Զաքարիա. որովհետեւ քո աղօթքը
լսուեցաւ, եւ քո կինն Եղիսաբեթը մի որդի կ՚ծնի
14 քեզ, եւ նորա անունը Յովհաննէս կ՚դնես։ Եւ քեզ
ուրախութիւն եւ ցնծութիւն կ՚լինի, եւ շատերը նո-
15 րա ծնունդովը կ՚ուրախանան։ Որովհետեւ նա մեծ
կ՚լինի Տիրոջ առաջին. եւ գինի եւ օղի չի խմիլ, եւ
16 դեռ իր մօր որովայնից Սուրբ Հոգով կ՚լցուի։ Եւ
Իսրայէլի որդիներից շատերին կ՚դարձնէ դէպի ի-
17 րանց Տէր Աստուածը։ Եւ ինքն կ՚գայ նորա առա-
ջից Եղիայի հոգովը եւ զօրութիւնովը, որ հայրերի
սրտերը դէպի որդիքը դարձնէ, եւ անհնազանդնե-
րը՝ արդարների իմաստութեան մէջ, որ Տիրոջ հա-
18 մար բարեկարգ ժողովուրդ պատրաստէ։ Եւ Զա-
քարիան ասեց հրեշտակին. Ես ի՞նչով ճանաչեմ
այդ. որովհետեւ ես ծեր եմ, եւ իմ կինն իր օրերն
19 անց է կացրել։ Եւ հրեշտակը պատասխանեց եւ
ասեց նորան. Ես Գաբրիէլն եմ, որ Աստուծոյ ա-
ռաջին կանգնում եմ, եւ ուղարկուեցայ քեզ հետ
20 խօսելու եւ այս բաները քեզ աւետիք տալու։ Եւ
ահա համր կ՚լինես, եւ չես կարենալ խօսել, մին-
չեւ այն օրն՝ որ այս բաները կ՚լինին. որովհետեւ չը
հաւատացիր իմ այս խօսքերին՝ որ իրանց ժամա-
21 նակին կ՚կատարուին։ Եւ ժողովուրդը սպասում էր
Զաքարիային, եւ զարմանում էին նորա տաճարի
22 մէջ ուշանալու համար. Եւ երբոր դուրս եկաւ,
չէր կարենում խօսել նորանց հետ. եւ իմացան՝ որ
տաճարի մէջ տեսիլք է տեսել. եւ նա նշաններով
էր խօսում նորանց հետ, եւ մնում էր պապան-
23 ձուած։ Եւ եղաւ, երբոր նորա պաշտօնի օրերը

24 կատարուեցան, գնաց իր տունը։ Եւ այն օրերից
յետոյ նորա կին Եղիսաբեթը յղացաւ, եւ հինգ
ամիս իր անձը ծածուկ պահում էր եւ ասում.
25 Թէ այսպէս արաւ ինձ Տէրն այս օրերումն, որ ինձ
վերայ նայեց՝ որ իմ նախատինքը մարդկանց միջից
վեր առնէ։
26 Եւ վեցերորդ ամսումը Գաբրիէլ հրեշտակն
Աստուածանից ուղարկուեցաւ Գալիլեայի մի քա-
27 ղաք, որի անունը Նազարէթ էր, Մի կոյսի մօտ,
որ նշանուած էր մի մարդի, որի անունը Յովսէփ
էր՝ Դաւիթի տանից. եւ այն կոյսի անունը Մարիամ
28 էր։ Եւ հրեշտակը նորա մօտ գալով ասեց. Ողջոյն
քեզ, ով շնորհընկալ. Տէրը քեզ հետ. օրհնեալ
29 ես դու կանանց մէջ։ Եւ նա նորան տեսնելով շը-
փոթուեցաւ նորա խօսքի համար, եւ իր մտքումը
մտածում էր, թէ ինչպիսի բան պիտի լինի այս
30 ողջոյնը։ Եւ հրեշտակը ասեց նորան. Մի վախե-
նար, Մարիամ. որովհետեւ Աստուածանից շնորհք
31 գտար։ Եւ ահա կ՚յղանաս՝ եւ որդի կ՚ծնես. եւ նո-
32 րա անունը Յիսուս կ՚դնես։ Նա մեծ կ՚լինի, եւ
Բարձրեալի Որդի կ՚կոչուի. եւ Տէր Աստուածը նո-
րա Դաւիթ հօր աթոռը կ՚տայ նորան. եւ նա յա-
33 ւիտեան կ՚թագաւորէ Յակոբի տան վերայ. Եւ
34 նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ։ Եւ Մա-
րիամն ասեց հրեշտակին. Սա ի՞նչպէս կ՚լինի. ըստ
35 որում ես այր չ՚գիտեմ։ Հրեշտակը պատասխանեց
եւ ասեց նորան. Սուրբ Հոգին կ՚գայ քեզ վերայ, եւ
Բարձրեալի զօրութիւնը քեզ վերայ կ՚հովանաւորէ,
վասն որոյ եւ այն ծնուած սուրբն էլ Աստուծոյ Որդի
36 կ՚կոչուի։ Եւ ահա քո ազգականն՝ Եղիսաբեթը,
նա էլ մի որդիով յղի է իր ծերութիւնումը. եւ
37 սա այն ամուլ կոչուածի վեցերորդ ամիսն է։ Որով-
հետեւ Աստուծոյ առաջին ոչ մի բան անկարելի չէ։

38 Մարիամն էլ ասեց. Ահա Տիրոջ աղախինն եմ.
Թող քո խօսքի պէս լինի ինձ։ Եւ հրեշտակը
գնաց նորանից։
39 Մարիամն այն օրերումը վերկացաւ՝ շտապելով
40 լեռնակողմը գնաց՝ Յուդայի քաղաքը. Եւ Զաքա-
41 րիայի տունը մտաւ, և Եղիսաբեթին բարևեց։ Եւ
եղաւ, երբոր Եղիսաբեթը Մարիամի բարևը լսեց,
երեխան նորա որովայնումը խաղաց. և Եղիսաբեթը
42 Սուրբ Հոգիով լցուեցաւ։ Եւ մեծ ձայնով աղա-
ղակեց և ասեց. Օրհնեալ ես դու կանանց մէջ. և
43 օրհնեալ է քո որովայնի պտուղը. Եւ սա ի՞նչ
տեղից է ինձ, որ իմ Տիրոջ մայրն ինձ մօտ եկաւ։
44 Որովհետև ահա, երբոր քո բարևի ձայնն իմ ականջ-
ներին հասաւ, երեխան որովայնումս ուրախանա-
45 լով խաղաց։ Եւ երանի նորան, որ հաւատաց, թէ
այն բաները կ'կատարուին, որ Տէրից իրան աս-
46 ուած են։ Եւ Մարիամը ասեց. Թող իմ անձը փա-
47 ռաւորէ Տիրոջը։ Եւ իմ հոգին ուրախացաւ իմ
48 փրկիչ Աստուծովը։ Որովհետև իր աղախնի խոնար-
հութեանը մտիկ տուաւ, որովհետև ահա այսու-
49 հետև բոլոր ազգերը կ'երանեն ինձ։ Որովհետև
Հզօրը մեծամեծ բաներ արաւ ինձ, և սուրբ է նո-
50 րա անունը։ Եւ նորա ողորմութիւնը ազգից ազգ
51 նորանից վախեցողներին վերայ է։ Զօրութիւն արաւ
իր բազուկովը, ցրուեց ամբարտաւաններին իրանց
52 սրտի մտածմունքովը։ Զօրաւորներին աթոռներից
53 իջեցրեց, և խոնարհներին բարձրացրեց։ Սովածնե-
րին բարիքներով լցրեց, և հարուստներին դատարկ
54 արձակեց։ Իր Իսրայէլ ծառային օգնեց իր ողորմու-
55 թիւնը յիշելով. Ինչպէս մեր հայրերի հետ խօսեց,
Աբրահամին և նորա զաւակին՝ մինչև յաւիտեան։
56 Եւ Մարիամը մնաց նորա մօտ երեք ամսի չափ.
և յետոյ դարձաւ իր տունը։

57 Եւ Եղիսաբեթի ծնելու ժամանակը լրացաւ, և
58 որդի ծնեց։ Եւ նորա դրացիները և ազգականները
լսեցին, թէ Տէրն իր ողորմութիւնը մեծ արաւ նո-
րա վերայ. և ուրախանում էին նորա հետ։
59 Եւ եղաւ՝ ութերորդ օրումն եկան երեխային
թլփատելու, և նորան իր հօր անունովը Զաքարիա
60 էին կոչում։ Եւ նորա մայրը պատասխանեց և ա-
61 սեց. Ոչ, այլ Յովհաննէս կոչուի։ Եւ ասեցին նո-
րան, թէ Ոչ ոք չ'կայ քո ազգումը, որ այդ անու-
62 նով կոչվում լինի։ Եւ նշաններով հարցնում էին
նորա հօրը, թէ ի՞նչ է կամենում որ նա կոչուի։
63 Եւ նա տախտակ խնդրեց, գրեց և ասեց, Նորա
64 անունը Յովհաննէս է. և ամենքը զարմացան։ Եւ
իսկոյն նորա բերանը և լեզուն բացուեցաւ. և
65 խօսում էր՝ Աստուծուն օրհնելով։ Եւ ահ ընկաւ
ամենքի վերայ, որ նորանց չորս կողմովը բնակվում
էին. և Հրէաստանի բոլոր լեռնակողմումը այս ա-
66 մեն բաները պատմվում էին։ Եւ բոլոր լսողներն
իրանց սրտերումն էին դնում և ասում. Այս երե-
խան ի՞նչ պիտի լինի։ Եւ Տիրոջ ձեռը նորա հետ էր։
67 Եւ նորա հայրը՝ Զաքարիան Սուրբ Հոգիով լց-
68 ուեցաւ, մարգարէացաւ և ասեց. Օրհնեալ է Իս-
րայէլի Տէր Աստուածը, որ այցելութեան եկաւ, և
69 փրկութիւն արաւ իր ժողովրդի համար։ Եւ փըր-
կութեան եղջիւր վերկացրեց մեզ համար իր Դա-
70 ւիթ ծառայի տանը։ Ինչպէս որ խօսեց յաւիտե-
71 նից իր սուրբ մարգարէների բերանովը. Փրկու-
թիւն մեր թշնամիներիցը. և բոլոր մեզ ատողների
72 ձեռիցը. Որ մեր հայրերի վերայ ողորմութիւն ա-
73 նէ, և իր սուրբ ուխտը յիշէ. Այն երդումը, որ
74 մեր հայր Աբրահամին երդուաւ, որ մեզ տայ, Որ
մեր թշնամիների ձեռիցն ազատուած աներկիւղ
75 պաշտենք իրան Սրբութիւնով և արդարութիւնով

76 Նորա առաջին մեր կեանքի բոլոր օրերումը։ Եւ
դու, երեխայ, Բարձրեալի մարգարէ կ'կոչուիս. ո-
րովհետև կ'գնաս Տիրոջ երեսի առաջից նորա ճա-
77 նապարհները պատրաստելու, Որ նորա ժողովրդին
տաս փրկութեան գիտութիւնը իրանց մեղքերի
78 թողութեան մէջ, Մեր Աստուծոյ գթած ողոր-
մութեան համար, որով ծագող արեգակը վերևիցը
79 այցելեց մեզ. Որ լոյս տայ խաւարումն և մահի
ստուերումը նստողներին. որ մեր ոտները դէպի
խաղաղութեան ճանապարհն ուղղէ։
80 Եւ երեխան աճում էր և զօրանում էր հոգի-
ով. և անապատներումն էր, մինչև այն օրն որ
նա երևեցաւ Իսրայէլին։

ԳԼ. Բ

1 Եւ այն օրերումն եղաւ, որ հրաման դուրս եկաւ
2 Օգոստոս կայսերից, որ բոլոր աշխարհ գրուի։ Սա
առաջին աշխարհագիրն եղաւ Կիւրենի՝ Սիւրիայի
3 կուսակալութեան ժամանակումը։ Եւ ամենքը գը-
4 նում էին գրուելու՝ ամեն մէկն իր քաղաքը։ Յով-
սէփն էլ Գալիլեայիցը՝ Նազարէթ քաղաքիցը գնաց
Հրէաստան Դաւիթի քաղաքն, որ Բեթլէհէմ է
կոչվում. որովհետև նա Դաւիթի տանիցը և ազ-
5 գիցն էր. Որ գրուի իր նշանած Մարիամի հետ,
6 որ յղի էր։ Եւ եղաւ երբոր նորանք այնտեղ էին.
7 նորա ծնելու օրերը լրացան։ Եւ իր անդրանիկ որ-
դին ծնեց, և պատեց խանձարուրներով և մսուրի
մէջ դրաւ. որովհետև այն իջևանումը տեղ չ'կար
նորանց համար։

8 Եւ այն տեղումը հովիւներ կային դաշտումը կա-
9 ցող, որ գիշերն իրանց հօտերը պահում էին։ Եւ
ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց նորանց առաջին,

և Տիրոջ փառքը նորանց շուրջը ծագեց. և մեծ
10 վախով վախեցան։ Եւ հրեշտակն ասեց նորանց.
Մի վախենաք, որովհետև ահա մեծ ուրախութիւն
եմ աւետում ձեզ, որ բոլոր ժողովրդին պիտի
11 լինի. Թէ այսօր ձեզ փրկիչ ծնուեցաւ Դաւիթի
12 քաղաքումը. որ է Քրիստոս Տէրը։ Եւ այս լինէ
ձեզ նշան. մի երեխայ կ'գտնէք խանձարուրներով
13 պատած, և մսուրի մէջ դրած։ Եւ յանկարծակի
այն հրեշտակի հետ եղաւ երկնաւոր զօրքի մի բազ-
մութիւնը, որ Աստուծուն օրհնում էին և ասում.
14 Փառք Աստուծոյ բարձունքումը, և երկրի վերայ
խաղաղութիւն, և մարդկանց մէջ հաճութիւն։
15 Եւ եղաւ երբոր հրեշտակները նորանցից վերացան
երկինքը, այն հովիւ մարդիկն իրար ասեցին. Եկէք
գնանք մինչև Բեթլէհէմ, և տեսնենք այս եղած
16 բանը, որ Տէրը ցոյց տուաւ մեզ։ Եւ շտապելով
եկան և գտան Մարիամին և Յովսէփին, և երեխա-
17 յին՝ մսուրի մէջ դրած։ Եւ երբոր տեսան՝ իմացրին
այն բանն, որ այս երեխայի համար ասուեցաւ նո-
18 րանց։ Եւ բոլոր լսողները զարմացան այն բաների
19 համար, որ հովիւները նորանց հետ խօսեցան։ Իսկ
Մարիամն այս բոլոր բաները պահում էր, և իր
20 սրտումը մտածում էր։ Եւ հովիւները ետ դառան.
Աստուծուն փառաբանում և օրհնում էին այն
բոլոր բաների համար, որ լսեցին և տեսան, ինչ-
պէս որ նորանց ասուեցաւ։

21 Եւ երբոր ութ օր լրացաւ, որ մանուկը թըլ-
փատուէր, նորա անունը Յիսուս կոչուեցաւ, այն
որ հրեշտակից կոչուած էր՝ նա դեռ արգանդու-
մը չյղացուած։

22 Եւ երբոր նորա մաքրուելու օրերը լրացան, Մով-
սէսի օրէնքի պէս, նորան տարան Երուսաղէմ, որ
23 Տիրոջ առաջին կանգնեցնեն։ Ինչպէս Տիրոջ օրէն-

քումը գրուած է, Թէ Ամէն արու որ արգանդ
24 բանայ, Տիրոջը սուրբ պիտի կոչուի։ Եւ որ Տիրոջ
օրէնքումը ասուածին պէս պատարագ բերեն մի
զոյգ տատրակ, կամ աղաւնու երկու ձագ։
25 Եւ ահա Երուսաղէմումը մի մարդ կար, որի
անունը Սիմէօն էր, և այս մարդը արդար և աս-
տուածավախ էր, և սպասում էր Իսրայէլի մխիթա-
26 րութեանը, և Սուրբ Հոգի կար նորա վերայ։ Եւ
նորան պատգամ էր եղած Սուրբ Հոգիիցը, որ մահ
չի տեսնիլ, մինչև որ Տիրոջ Քրիստոսին կ'տեսնէ։
27 Եւ Հոգիովն եկաւ տաճարը, և երբոր ծնողքը Յի-
սուս երեխային բերին, որ օրէնքի սովորութեան
28 պէս նորա վերայ անեն, Նա էլ առաւ նորան ըն-
դունեց իր գիրկը, և Աստուծուն օրհնեց, և ասեց.
29 Հիմա արձակում ես քո ծառային, ով Տէր, քո
30 խօսքի պէս խաղաղութիւնով. Որովհետև իմ աչ-
31 քերը տեսան քո փրկութիւնը, Որ պատրաստեցիր
32 ամէն ժողովուրդների առաջին։ Լոյս՝ հեթանոսնե-
րին լուսաւորելու, և փառք՝ քո Իսրայէլ ժողո-
33 վրդի համար։ Եւ Յովսէփը և նորա մայրը զարմա-
ցել էին այն բաների վերայ, որ նորա համար խօս-
34 վում էին։ Եւ Սիմէօնն օրհնեց նորանց, և նորա
մայր Մարիամին ասեց, Ահա այս մանուկը կայ Իս-
րայէլի մէջ շատերի համար ընկնելու և կանգնելու
35 և հակառակութեան նշան։ Եւ իսկ քո անձովը
սուր կ'անցնէ, որ շատ սրտերից խորհուրդներ
յայտնուին։
36 Եւ այնտեղ էր Աննա մարգարէուհին՝ Փանուէլի
աղջիկն՝ Ասերի ցեղիցը. սա ինքը շատ օրեր էր ան-
ցրել, և իր կուսութեան ժամանակիցն եօթը տա-
37 րի էր ապրել մարդի հետ. Եւ ութսուն և չորս
տարուայ չափ որբևայրի էր, որ տաճարիցը չէր
հեռանում. ծոմերով և աղօթքներով գիշեր ու-

38 ցերեկ ծառայում էր Աստուծուն։ Սա էլ նոյն ժա-
մումը վերկացաւ՝ Տէրիցը գոհանում էր և խօսում
էր նորա մասին այն ամենին որ Երուսաղէմի մէջ
փրկութեան սպասում էին։
39 Եւ երբոր ամենը Տիրոջ օրէնքի պէս կատարե-
ցին, ետ դարձան Գալիլեա՝ իրանց Նազարէթ քա-
40 ղաքը։ Երեխան էլ աճում էր և զօրանում հո-
գիով՝ իմաստութիւնով լցուած. և Աստուծոյ շը-
նորհքը նորա վերայ էր։
41 Եւ նորա ծնողքը տարուց տարի Երուսաղէմ էին
42 գնում զատկի տօնին։ Եւ երբոր նա տասնևերկու
տարեկան եղաւ, նորանք տօնի սովորութեան պէս
43 Երուսաղէմ գնացին, Եւ երբոր օրերը կատարելուց
յետոյ ետ դառան, Յիսուս տղան Երուսաղէմումը
44 մնաց. և չ'իմացան Յովսէփը և նորա մայրը, Եւ
կարծելով, Թէ նա ճանապարհակիցների հետ կը
լինի, մի օրուայ ճանապարհ եկան՝ և նորան որո-
45 նում էին ազգականների և ծանօթների մէջ։ Եւ
երբոր նորան չ'գտան, ետ դառան Երուսաղէմ և
46 որոնում էին նորան։ Եւ երեք օրից յետոյ եղաւ,
որ նորան տաճարի մէջ գտան, վարդապետների
մէջ նստած՝ նորանց ականջ էր դնում, և նորան-
47 ցից հարցնում էր։ Եւ ամենքն, որ նորանից լսում
էին, զարմանում էին նորա իմաստութեան և պա-
48 տասխանների վերայ։ Եւ երբոր նորան տեսան, շատ
սքանչացան. և նորա մայրն ասեց նորան. Որդեակ,
ի՞նչու համար մեզ այսպէս արիր. ահա, հայրդ և
49 ես ցաւելով որոնում էինք քեզ։ Եւ նա նորանց
ասեց. Ի՞նչու համար էիք ինձ որոնում. դուք չը
գիտէի՞ք Թէ պէտք է, որ ես իմ Հօր տանը լինեմ։
50 Եւ նորանք չ'հասկացան այն խօսքը որ նորանց հետ
51 խօսեց։ Եւ նա նորանց հետ իջաւ և գնաց Նազա-
րէթ. և նորանց հնազանդ էր. և նորա մայրը այս

32 բոլոր բաները պահում էր իր սրտումը։ Եւ Յի-
սուսը զարգանում էր իմաստութիւնով և հասա-
կով, և շնորհքով Աստուծոյ և մարդկանց մօտ։

ԳԼ. Գ.

1 Տիբերիոս կայսեր տէրութեան տասնևհինգերորդ
տարում, Պօնտացի Պիղատոսի Հրէաստանի վերայ
կուսակալութեան ժամանակին, և Հերովդէսի՝ Գա-
լիլեայի վերայ չորրորդապետութեան ժամանակին,
և նորա եղբայր Փիլիպպոսի՝ Իտուրացիների և Տրա-
քոնացիների երկրի վերայ չորրորդապետութեան
ժամանակին, և Լիւսանիայի Աբիլինացիների վե-
2 րայ չորրորդապետութեան ժամանակին, Աննայի և
Կայիափայի քահանայապետութեան օրերումը Աս-
տուծոյ խօսքն եղաւ Զաքարիայի որդի Յովհաննէ-
3 սին անապատումը։ Եւ նա եկաւ Յորդանանի ա-
մէն կողմերը, ապաշխարութեան մկրտութիւնը
4 քարոզելով մեղքերի թողութեան համար. ինչ-
պէս Եսայիա մարգարէի խօսքերի գրքումը գրուած
է՝ որ ասում է կանչողի ձայնը անապատումը.
պատրաստ արէք Տիրոջ ճանապարհը, և ուղիղ ա-
5 րէք նորա շաւիղները։ Ամէն ձոր լցուի, և ամէն
սար և բլուր խոնարհուի. և դժուարները հեշտ
լինեն, և խորտուբորտները հարթ ճանապարհներ
6 լինեն. Եւ ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը
կ'տեսնէ։
7 Եւ այն ժողովուրդներին, որ դուրս էին եկած
նորանից մկրտուելու, ասեց. Իժերի զաւակներ,
ո՞վ սովորեցրեց ձեզ փախչել այն գալու բարկու-
8 թիւնից։ Արդ ապաշխարութեան արժանի պտուղ-
ներ արէք. և մի սկսէք ասել ձեր միջումը՝ մենք
Աբրահամն ունինք հայր. որովհետև ասում եմ
ձեզ, թէ Աստուած կարող է այս քարերիցը որ-

9 դիներ հանել Աբրահամի համար։ Բայց արդէն
կացինն էլ ծառերի արմատի մօտ դրած է. արդ
ամէն ծառ որ բարի պտուղ չէ բերում, կ'կտրուի
10 և կրակի մէջ կ'գցուի։ Եւ ժողովուրդները նորան
11 հարցնում էին և ասում. Ապա ի՞նչ անենք։ Եւ
նա պատասխանեց և ասեց նորանց. Նա որ երկու
հանդերձ ունի, թող մ՛ը չ'ունեցողին տայ. և նա
12 էլ, որ կերակուր ունի, թող նոյնպէս անէ։ Եւ
մաքսաւորներն էլ եկան մկրտուելու, և նորան ա-
13 սեցին. Վարդապետ, ի՞նչ անենք։ Նա էլ ասեց
նորանց. Ձեզ հրամայածիցն աւելի պահանջելով ոչ
14 մի բան մի առնէք։ Եւ զինուորներն էլ էին հար-
ցնում նորան և ասում. Ապա մենք ի՞նչ անենք,
նորանց էլ ասեց. Ոչ մէկին մի հարստահարէք,
ոչ էլ զրպարտութիւն արէք, և ձեր թոշակովը
բաւականացէք։
15 Ժողովուրդն էլ դեռ սպասելիս և ամէնքն իրանց
սրտերումն մտածելիս՝ Յովհաննէսի համար, թէ
16 մի՛ գուցէ նա լինի Քրիստոսը, Յովհաննէսն ամենին
պատասխանեց և ասեց. Ես ջրով եմ մկրտում
ձեզ. բայց ինձանից աւելի զօրաւորն է գալիս, որ
ես արժանի չեմ նորա կօշիկների կապերը լուծե-
լու. Նա ձեզ Սուրբ Հոգով և կրակով կ'մկրտէ։
17 Որ հօսելին նորա ձեռքին է, և նա իր կալը կ'սրբ-
բէ, և ցորենն իր ամբարը կ'ժողովէ, իսկ դարմանը
18 կ'այրէ անշէջ հրով։ Եւ ուրիշ էլ շատ բաներ
19 յորդորելով աւետարանում էր ժողովրդին։ Բայց
Հերովդէս չորրորդապետը՝ նորանից յանդիմանուած
իր եղբայր Փիլիպպոսի կնկայ Հերովդիայի մասին,
և այն ամէն չար գործերի համար, որ Հերովդէսն
20 արաւ, Ամենի վերայ սա էլ աւելացրեց, որ Յով-
հաննէսին բանտի մէջ դրաւ։
21 Եւ բոլոր ժողովրդի մկրտուելու ժամանակին ե-

ղաւ, որ երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ և աղօթք
22 էր անում, երկինքը բացուեցաւ, Եւ Սուրբ Հոգին
մարմնաւոր տեսիլքով աղաւնու պէս իջաւ նորա
վերայ. և երկնքիցը ձայն եղաւ որ ասում էր. Դու
ես իմ սիրելի Որդին, ես քեզ հաւանեցի ։
23 Եւ ինքն Յիսուս սկսած էր երեսուն տարեկանի
չափ լինել, որ ինչպէս կարծվում էր, Յովսէփի որ-
24 դին էր. և նա Հեղիին. և նա Մատթատի. Եւ նա
Ղևիի. և նա Մեղքիի. և նա Յաննէի. և նա Յով-
25 սէփի. Եւ նա Մատաթիայի. և նա Ամովսի. և նա
26 Նաւումի. և նա Եսղիի. և նա Նանգէի, Եւ նա
Մաաթի. և նա Մատաթիայի. և նա Սեմէիի. և
27 նա Յովսէփի. և նա Յուդայի. Եւ նա Յովհաննայի.
և նա Րէսայի. և նա Զօրաբաբէլի. և նա Սաղա-
28 թիէլի. և նա Ներէիի. Եւ նա Մեղքիի. և նա
Ադդէիի. և նա Կովսամի. և նա Եղմովդադի. և
29 նա Էրի. Եւ նա Յովսէսի. և նա Եղիազարի. և նա
30 Յովրիմի. և նա Մատթատի. և նա Ղևիի. Եւ նա
Սիմէօնի. և նա Յուդայի. և նա Յովսէփի. և նա
31 Յովնանի. և նա Եղիակիմի. Եւ նա Մելեայի. և նա
Մայնանի. և նա Մատաթայի. և նա Նաթանի.
32 և նա Դաւիթի. Եւ նա Յեսսէի. և նա Ովբէդի. և
33 նա Բոոսի. և նա Սաղմոնի. և նա Նաասոնի. Եւ նա
Ամինադաբի. և նա Արամի. և նա Եսրոնի. և նա
34 Փարէսի. և նա Յուդայի. Եւ նա Յակոբի. և նա
Իսահակի. և նա Աբրահամի. և նա Թարայի. և
35 նա Նաքովրի. Եւ նա Սերուքի. և նա Ռագաւի. և
36 նա Փաղեկի. և նա Եբերի. և նա Սաղայի. Եւ նա
Կայնանի. և նա Արփաքսադի. և նա Սէմի. և նա
37 Նոյի. և նա Ղամեքի. Եւ նա Մաթուսաղայի. և
նա Ենովքի. և նա Յարեդի. և նա Մաղաղիէլի. և
38 նա Կայնանի. Եւ նա Ենովսի. և նա Սէթի. և նա
Ադամի. և նա Աստուծոյ ։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուսը Սուրբ Հոգիով լցուած Յորդանանիցը
ետ դառաւ և Հոգիովը տարուեցաւ անապատը ։
2 Քառասուն օր սատանայիցը փորձուեցաւ. և այն
օրերումը ոչինչ չ'կերաւ, և երբոր նորանք լրա-
ցան, սովեց ։
3 Եւ սատանան նորան ասեց. Եթէ Աստուծոյ որ-
4 դի ես, ասիր այդ քարին որ հաց լինի ։ Եւ Յիսու-
սը նորան պատասխանեց և ասեց. Գրուած է, թէ
Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, այլ Աստուծոյ
ամեն խօսքովը ։
5 Եւ սատանան նորան մի բարձր սար հանեց՝ և
աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցոյց տուաւ
6 նորան մի վայրկեանի մէջ ։ Եւ սատանան ասեց նո-
րան. Այս բոլոր իշխանութիւնը և սորանց փառքը
քեզ կ'տամ. որ ինձ է տրուած. և ում որ կամե-
7 նում եմ տալիս եմ սորան ։ Արդ դու, եթէ իմ
առաջը ընկած երկրպագութիւն անես, բոլորը քո-
8 նը կ'լինի ։ Եւ Յիսուսը նորան պատասխանեց և ա-
սեց. *գնա յետս, սատանայ. որովհետև՝ գրուած
է, թէ քո Տէր Աստուծուն պէտք է երկրպագու-
թիւն անես, և նորան միայն պաշտես ։
9 Եւ նա տարաւ նորան Երուսաղէմ, և տաճարի
աշտարակի վերայ կանգնեցրեց և ասեց նորան.
Եթէ Աստուծոյ որդի ես, այստեղից քեզ վայր
10 գցիր. Որովհետև գրուած է, թէ Իր հրեշտակնե-
11 րին կ'հրամայէ քեզ համար, որ քեզ պահեն. Եւ
որ ձեռքերի վերայ քեզ վեր առնեն, որ երբէք
12 քո ոտքը քարի չ'դպցնես ։ Յիսուսը նորան պատաս-

*Ոմանք չ'ունին ։

խանեց և ասեց, Թէ Ասուած է՝ Մի փորձիր քո
13 Տէր Աստուծուն։ Եւ սատանան երբոր բոլոր փոր-
ձուԹիւնը կատարեց, հեռացաւ Նորանից մինչև
մի ժամանակ։
14 Եւ Յիսուսը Հոգիի զօրուԹիւնովը ետ դառաւ
Գալիլեա. և Նորա համբաւը դուրս գնաց այն գա-
15 ւառի ամեն կողմերը։ Եւ Նա սովորեցնում էր Նո-
րանց ժողովարաններումը, և ամենից փառաւոր-
վում էր։
16 Եւ եկաւ Նազարէթ, ուր որ մեծացել էր. և իր
սովորուԹեան պէս շաբաԹ օրը ժողովարանը մտաւ,
17 և կանգնեց որ կարդայ։ Եւ Եսայիա մարգարէի
գիրքը տուին Նորան. և երբոր գիրքը բացաւ՝ այն
18 տեղը գտաւ, ուր գրուած էր. Տիրոջ Հոգին ինձ
վերայ է. որի համար էլ օծեց ինձ. Նա ինձ ուղար-
կել է աղքատներին աւետարանելու, սրտով կոտ-
19 րուածներին բժշկելու, Գերիներին ԹողուԹիւն
քարոզելու, և կոյրերին տեսուԹիւն. խոցուածնե-
րին արձակելու ազատելով, Տիրոջ ընդունելի տա-
20 րին քարոզելու։ Եւ գիրքը խփեց՝ պաշտօնեային
տուաւ, նստեց, և ժողովարանի մէջ ամենքի աչ-
21 քերը Նորան էին մտիկ տալիս։ Եւ Նա սկսեց ասել
Նորանց, Թէ Այսօր այս գիրքը կատարուեցաւ ձեր
22 ականջներումը։ Եւ ամենքը վկայում էին Նորան,
և զարմանում էին այն շնորհաց խօսքերի վերայ,
որ դուրս էին գալիս Նորա բերանիցը. և ասում
23 էին. Չէ՞ որ սա Յովսէփի որդին է։ Եւ Նա Նորանց
ասեց, Ի հարկէ՝ այս առակը կ՚ասէք ինձ. Բժի՛շկ,
քո անձը բժշկիր. որչափ բաներ լսեցինք՝ Կափառ-
նայումի մէջ եղած, քո հայրենիքումը այստեղ էլ
24 արա։ Եւ ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, Թէ
Ոչ մի մարգարէ ընդունելի չէ իր հայրենիքումը։
25 Եւ ճշմարտուԹեամբ ասում եմ ձեզ, Եէ Եղիայի

օրերին Իսրայէլի մէջ շատ որբևայրիներ կային,
երբոր երկինքը երեք տարի և վեց ամիս փակուե-
ցաւ, այնպէս որ բոլոր երկրի վերայ մեծ սով եղաւ։
26 Եւ Եղիան Նորանցից ոչ ոքի մօտ չ՚ուղարկուեցաւ,
բայց միայն Սիդոնացիների Սարեփթան՝ մի որբև-
27 այրի կնոջ մօտ։ Եւ շատ բորոտներ կային Իսրա-
յէլի մէջ Եղիսէ մարգարէի ժամանակին. և Նո-
րանցից ոչ ոք չ՚որբուեցաւ, բայց միայն Նէեման
28 Ասորին։ Եւ ամենքը բարկուԹիւնով լցուեցան ժո-
29 ղովարանի մէջ, երբոր այս լսեցին։ Եւ վերկա-
ցան՝ Նորան քաղաքիցը դուրս հանեցին, և տարան
Նորան մինչև այն սարի գլուխը որի վերայ Նորանց
քաղաքը շինուած էր, որ բարձր տեղիցը վայր գցեն
30 Նորան։ Իսկ Նա Նորանց միջովն անցաւ գնաց։
31 Եւ իջաւ Կափառնայում՝ Գալիլեացիների քա-
ղաքը, և շաբաԹ օրը սովորեցնում էր Նորանց։
32 Եւ Նորանք զարմանում էին Նորա վարդապետու-
Թեան վերայ, որ Նորա խօսքը իշխանուԹիւնով էր։
33 Եւ ժողովարանումը մի մարդ կար, որ պիղծ դևի
34 ոգի ունէր, և մեծ ձայնով աղաղակեց, Եւ ասեց.
Թող տուր. ի՞նչ բան ունիս մեզ հետ, Յիսուս
Նազովրեցի. եկար մեզ կորցնելո՞ւ. գիտեմ քեզ,
35 դու ով ես, Աստուծոյ Սուրբը։ Յիսուսը սաստեց
Նորան և ասեց. Պապանձիր և դուրս ել դորանից.
և դևը Նորան գետինը զարկեց մէջ տեղը՝ և դուրս
եկաւ Նորանից, և ոչ մի վնաս չ՚տուաւ Նորան։
36 Եւ զարմանք եղաւ ամենքի վերայ, և իրար հետ
խօսում էին և ասում. Սա ի՞նչ բան է, որ իշխա-
նուԹիւնով և զօրուԹիւնով պիղծ ոգիներին սաս-
37 տում է, և Նորանք դուրս են գալիս։ Եւ Նորա
համբաւը գնում էր շրջակայքի ամեն տեղը։
38 Եւ վերկացաւ ժողովարանիցը, և մտաւ Սիմոնի
39 տունը. Սիմոնի զոքանչն էլ սաստիկ տենդով բռ-

40 նուած էր. և նորան աղաչեցին նորա համար: Եւ
նա նորա մօտը կանգնեց՝ սաստեց տենդին. և տեն-
դը թողեց նորան. և նա իսկոյն վերկացաւ՝ և ծա-
ռայում էր նորանց:
41 Եւ արեգակը մտնելիս՝ ամենքը, որ կերպ կերպ
ցաւերով հիւանդներ ունէին, նորանց բերում էին
նորա մօտ. նա էլ նորանց ամեն մէկի վերայ ձեռք
42 էր դնում՝ և բժշկում նորանց: Շատերից էլ դեւեր
էին դուրս գալիս, աղաղակում էին և ասում, թէ
Դու ես Քրիստոսը Աստուծոյ Որդին, և նա սաս-
տելով նորանց թոյլ չէր տալիս որ խօսեն. որով-
հետև գիտէին որ նա Քրիստոսն է:
43 Եւ երբոր ցերեկ եղաւ, դուրս եկաւ գնաց ա-
նապատ տեղ. և ժողովուրդները որոնում էին նո-
րան, և եկան մինչև նորա մօտ. և արգելում էին
44 նորան, որ չ'գնայ իրանցից: Նա էլ ասեց նորանց,
Ես ուրիշ քաղաքներին էլ պէտք է Աստուծոյ ար-
քայութիւնը աւետարանեմ, որովհետև իսկ սորա
45 համար ուղարկուեցայ: Եւ քարոզում էր Գալիլէ-
այի ժողովարանների մէջ:

ԳԼ. Ե

1 Եւ եղաւ, երբոր ժողովուրդը նորա վերայ կխտ-
վում էր Աստուծոյ խօսքը լսելու, և ինքը Գեննե-
2 սարէթի ծովակի մօտ կանգնած էր. Եւ երկու նաւ
տեսաւ՝ ծովակի մօտ կանգնած, ձկնորսներն էլ
նորանցից դուրս էին եկած՝ և ուռկանները լուա-
3 նում էին: Եւ նա մտաւ այն նաւերի մէկի մէջ
որ Սիմօնինն էր, և խնդրեց նորան նաւը ցամաքից
մի քիչ ներս տանել. նստեց և նաւից սովորե-
ցնում էր ժողովուրդներին:
4 Եւ երբոր խօսելուց դադարեց, Սիմօնին ասեց.

Նաւը դէպի խորը տար, և ձեր ուռկանները գցե-
5 ցէք որսի: Եւ Սիմօնը պատասխանեց և ասեց նո-
րան. Վարդապետ, բոլոր գիշերն աշխատեցանք՝ և
ոչինչ չ'բռնեցինք, բայց քո խօսքի համար ուռկա-
6 նը կ'գցեմ: Եւ երբոր այս արին, ձկների մի մեծ
բազմութիւն ներս փակեցին, և նորանց ուռկանը
7 պատառվում էր: Եւ նշան էին անում միւս նա-
ւի մէջ լինող ընկերներին, որ գան իրանց օգնեն.
և նորանք եկան, և երկու նաւը լցրին մինչև որ
8 թաղվում էին: Սիմօն Պետրոսն էլ տեսնելով ըն-
կաւ Յիսուսի ծնկների առաջին և ասեց. Ինձանից
դուրս գնա, որ ես մեղաւոր մարդ եմ, Տէր:
9 Որովհետև ահ պատեց նորան և ամենքին էլ, որ
նորա հետ էին, այն ձկների որսի համար որ բռնե-
10 ցին: Այնպէս էլ Զեբեդեայի որդիներին՝ Յակո-
բոսին և Յովհաննէսին, որ Սիմօնի ընկերներն էին,
և Յիսուսը Սիմօնին ասեց. Մի վախենար՝ այսու-
11 հետև մարդիկ որսող կ'լինես: Եւ նաւերը հանե-
ցին ցամաքը, ամեն բանը թողեցին, և նորա ե-
տևից գնացին:
12 Եւ եղաւ, երբոր նա քաղաքներից մէկումն էր,
ահա մի մարդ՝ բորոտութիւնով լիքը, երբոր Յի-
սուսին տեսաւ, երեսի վերայ ընկնելով, նորան ա-
ղաչեց՝ և ասեց. Տէր, եթէ կամենաս, կարող ես
13 ինձ սրբել: Եւ նա իր ձեռքը մեկնելով դպաւ
նորան և ասեց. Կամենում եմ, սրբուիր. և շու-
14 տով բորոտութիւնը հեռացաւ նորանից: Եւ ինքը
պատուիրեց նորան, որ ոչ ոքի չ'ասէ, այլ թէ՝
Գնա, անձդ ցոյց տուր քահանային, և քո սրբու-
թեան համար ընծան բեր, ինչպէս Մովսէսը հրա-
15 մայեց՝ նորանց վկայութեան համար: Բայց նորա
վերայ խօսակցութիւնը առաւել ևս տարածվում
էր, և շատ ժողովուրդներ ժողովվում էին՝ որ լսեն

և իրանց հիւանդութիւններիցը բժշկուելու նորա-
16 նով։ Իսկ նա քաշւում էր անապատ տեղերանք,
և աղօթք էր անում։
17 Եւ մէկ օր եղաւ, որ ինքը սովորեցնում էր. և
փարիսեցիները և օրէնքի վարդապետները նստած
էին, որ Գալիլեայի ամեն գիւղաքաղաքներիցը և
Հրէաստանից և Երուսաղէմիցը հաւաքուած էին.
և Տիրոջ զօրութիւնը կար նորանց բժշկելու հա-
18 մար։ Եւ ահա մարդիկ մահիճով մի մարդ էին
բերում, որ անդամալոյծ էր, և ուզում էին նորան
19 ներս տանել, և նորա առաջը դնել։ Եւ երբոր չը
գտան թէ որ տեղով նորան ներս տանեն՝ այն ամ-
բոխի պատճառովը, վեր ելան կտուրը, և օճորքի-
ցը կախեցին նորան մահիճովը մէջտեղը Յիսուսի
20 առաջին։ Եւ նա նորանց հաւատքը տեսնելով նո-
րան ասեց. Ով մարդ, քո մեղքերը թողուած լի-
21 նեն քեզ։ Եւ դպիրները և փարիսեցիները սկսեցին
խորհել և ասել. Սա ո՞վ է, որ հայհոյանք է խօ-
սում. ո՞վ կարող է մեղք թողել՝ բացի միայն
22 Աստուած։ Յիսուսն էլ երբոր նորանց խորհուրդ-
ներն իմացաւ, պատասխանեց և նորանց ասեց.
23 Ի՞նչ էք խորհում ձեր սրտերումը. Ո՞րն է աւելի
հեշտ. ասել՝ Մեղքերդ թողուած լինեն քեզ, թէ
24 ասել՝ Վեր կաց և ման եկ։ Բայց որ իմանաք, թէ
մարդի Որդին իշխանութիւն ունի երկրի վերայ
մեղքեր թողելու. անդամալոյծին ասեց. Քեզ եմ
ասում, Վեր կաց և մահիճդ առ, և գնա քո
25 տունը։ Եւ նա իսկոյն նորանց առաջին վեր կա-
ցաւ, իր վերայ առաւ այն՝ ինչի վերայ պառկած
էր, և գնաց իր տունը՝ Աստուծուն փառաւորե-
26 լով։ Եւ զարմանք բռնեց ամենքին, և փառք էին
տալիս Աստուծուն. և ահով լցուեցան, և ասում
էին, թէ Նորանշան բաներ տեսանք այսօր։

27 Եւ նորանից յետոյ Յիսուսը դուրս գնաց և մի
մաքսաւոր տեսաւ՝ անունը Ղևի, մաքս առնելու
28 տեղը նստած, և նորան ասեց, Իմ ետևից եկ։ Եւ
նա ամեն բան թողեց, վերկացաւ գնաց նորա ե-
29 տևից։ Եւ Ղևին նորան մեծ ընդունելութիւն ա-
րաւ իր տան մէջ. և շատ բազմութիւն կար մաք-
սաւորների և ուրիշների, որ նորանց հետ սեղան
30 էին նստել։ Եւ նորանց դպիրները և փարիսեցինե-
րը տրտնջում էին նորա աշակերտների մօտ և ա-
սում. Ի՞նչու էք մաքսաւորների և մեղաւորների
31 հետ ուտում և խմում։ Եւ Յիսուսը պատասխա-
նեց և ասեց նորանց. Առողջները կարօտ չեն բժշ-
32 կի, այլ հիւանդները։ Ես չեմ եկել արդարներին
կանչելու, այլ մեղաւորներին՝ ապաշխարութեան։
33 Նորանք էլ ասեցին նորան. Ի՞նչու Յովհաննէսի
աշակերտները ստէպ ծոմ են պահում և աղօթք-
ներ են անում, նոյնպէս էլ փարիսեցիները. իսկ
34 քո աշակերտները ուտում են և խմում։ Նա էլ ա-
սեց նորանց. Մի՞թէ կարող էք հարսանիքի տղանե-
րին, քանի որ փեսան նորանց հետ է, ծոմ պահել
35 տալ։ Բայց օրեր կ'գան, երբոր փեսան վեր կ'առ-
նուի նորանցից. ապա այն օրերումը ծոմ կ'պահեն։
36 Մի առակ էլ ասեց նորանց թէ Ոչ ով մի նոր
հանդերձի կարկատան հին հանդերձի վերայ չի
դցիլ. ապա թէ ոչ, այն նորն էլ կ'պատռէ, և
հնի հետ չի միաբանուիլ այն կտորը որ նորիցն է։
37 Եւ ոչ ով նոր գինի հին տկերի մէջ չի ածիլ.
ապա թէ ոչ, նոր գինին տկերը կ'պատռէ. ինքն
38 էլ կ'թափուի, տկերն էլ կ'կորչեն։ Այլ նոր գի-
նին նոր տկերի մէջ պէտք է ածուի, և երկուսն
39 էլ կ'պահուին։ Եւ ոչ ով չ'կայ, որ հինը խմէ,
շուտով նորը կամենայ, որովհետև ասում է, թէ
Հինն աւելի քաղցր է։

ԳԼ. Զ

1 Եւ երկրորդի առաջին շաբաթ օրումն եղաւ որ
Նա անցնում էր արտերի միջով, և նորա աշա-
կերտները հասկ էին պոկում՝ ափի մէջ շփում և
2 ուտում։ Եւ փարիսեցիներից ոմանք ասեցին նո-
րանց. Այդ ի՞նչու էք անում, որ շաբաթ օրն օ-
3 րէնք չէ։ Եւ Յիսուսը նորանց պատասխանեց և ա-
սեց. Դուք չէ՞ք կարդացել այն որ Դաւիթն ա-
րաւ, երբոր սովեց ինքը և նորա հետ լինողները.
4 ինչպէս նա Աստուծոյ տունը մտաւ, և առաջաւո-
րութեան հացերն առաւ և կերաւ, և իր հետ
լինողներին էլ տուաւ. որոնց օրէնք չէր ուտել,
5 բացի միայն քահանաներին։ Եւ ասեց նորանց,
թէ Մարդի Որդին տէր է շաբաթի էլ։
6 Եւ մի ուրիշ շաբաթ օր էլ եղաւ, որ ժողովա-
րանը մտաւ՝ և սովորեցնում էր. և այնտեղ մի
7 մարդ կար, և նորա աջ ձեռքը չորացած էր։ Եւ
դպիրները և փարիսեցիները սպասում էին նորան,
թէ շաբաթ օրումը կ'բժշկէ՞, որ նորանից չարա-
8 խօսելու պատճառ գտնեն։ Նա էլ գիտէր նորանց
խորհուրդները, և այն մարդին, որի ձեռքը չորա-
ցած էր, ասեց. Վեր կաց, և կանգնիր մէջտեղը.
9 և նա վեր կացաւ կանգնեց։ Արդ Յիսուսը ասեց
նորանց. Հարցնում եմ ձեզանից. Ի՞նչ է արժան
շաբաթ օրը, բարի՞ բան անել՝ թէ չար գործել.
10 հոգի ապրեցնե՞լ՝ թէ կորցնել։ Եւ չորս կողմը
նորանց ամենի վերայ նայելով ասեց այն մարդին.
Ձեռքդ մեկնիր, նա էլ այնպէս արաւ. և նորա
11 ձեռքը առողջացաւ միւսի պէս։ Նորանք էլ կա-
տաղութիւնով լցուեցան, և իրար հետ խօսում
էին, թէ ի՞նչ անեն Յիսուսին։

12 Եւ այն օրերումն եղաւ, որ ելաւ սարը աղօթք
անելու, և բոլոր գիշերն անցրեց աղօթք անելով
13 դէպի Աստուած։ Եւ երբոր առաւօտ եղաւ, կան-
չեց իր աշակերտները, և ընտրեց նորանցից տասն-
14 երկուսին, որոնց առաքեալ էլ անուանեց. Սի-
մոնին, որին Պետրոս էլ անուանեց, և նորա եղ-
բայրը՝ Անդրէասին, Յակոբոսին և Յովհաննէսին,
15 Փիլիպպոսին և Բարթողոմէոսին. Մատթէոսին և
Թովմասին, Յակոբոս Ալփէոսին, և Նախանձայոյզ
16 կոչուած Սիմոնին. Եւ Յակոբի Յուդային, և Յու-
դա Իսկարիովտացուն, որ մատնիչ էլ դառաւ։
17 Եւ իջաւ նորանց հետ՝ մի տափարակ տեղ կանգ-
նեց. և այնտեղ էր նորա աշակերտների ժողովը և
ժողովրդի մի մեծ բազմութիւն բոլոր Հրէաստանից
և Երուսաղէմից և Տիւրոսի և Սիդօնի ծովեզերքից,
18 Որ եկան նորանից լսելու, և իրանց հիւանդու-
թիւններիցը բժշկուելու. և պիղծ ոգիներից չար-
19 չարուողները. և բժշկվում էին։ Եւ բոլոր ժողովուր-
դը ուզում էր դպչել նորան, որովհետև նորանից
զօրութիւն էր դուրս գալիս և ամենին բժշկում։
20 Եւ նա իր աչքերը դէպի իր աշակերտները բար-
ձրացրեց՝ և ասեց. Երանի աղքատներիդ, որ ձերն
21 է Աստուծոյ արքայութիւնը։ Երանի հիմա սոված-
ներիդ, որ պիտի կշտանաք. երանի հիմա լացող-
22 ներիդ, որ պիտի ծիծաղիք։ Երանի ձեզ, երբոր
մարդիկ ձեզ ատեն, և երբոր ձեզ ջոկեն և նա-
խատեն, և ձեզ վերայ չար անուն հանեն՝ մարդի
23 Որդու պատճառովը։ Ուրախ եղէք այն օրումը և
ցնծացէք, որ ահա ձեր վարձքը շատ է երկնքումը.
որովհետև այդպէս էին անում մարգարէներին նո-
24 րանց հայրերը։ Բայց վայ ձեզ՝ հարուստներիդ, որ
25 ձեր մխիթարութիւնն ընդունեցիք։ Վայ ձեզ՝ որ հիմա
կշտացել էք, որ պիտի սովիք. վայ ձեզ՝ որ հիմա

ծիծաղում էք, որ սուգ պիտի անէք, և լաց պի-
26 տի լինիք ։ Վա՜յ ձեզ՝ երբոր ամեն մարդիկ ձեզա-
նից բարի ասեն, որովհետև այդպես էին անում
սուտ մարգարէներին նորանց հայրերը ։
27 Բայց ձեզ՝ որ լսում էք, ասում եմ. Սիրեցէք
ձեր թշնամիներին, բարի արէք ձեզ ատողներին ։
28 Օրհնեցէք ձեզ անիծողներին, աղօթք արէք ձեզ
29 նեղացնողների վերայ ։ Քո մէկ երեսին զարկողին
միւսն էլ դէմ արա. և նա՛ որ քո վերարկուն
քեզանից հանում է, շապիկդ էլ մի արգելիր նո-
30 րանից ։ Ամենին՝ որ ուզում է քեզանից, տուր, և
31 քոնը առնողից ետ մի առնիր ։ Եւ ինչպես կամե-
նում էք՝ որ մարդիկ ձեզ անեն, նոյնպես էլ դուք
32 արէք նորանց ։ Եւ եթէ դուք ձեզ սիրողներին սի-
րէք, ի՞նչ շնորհք է ձեզ, որովհետև մեղաւորներն
33 էլ են իրանց սիրողներին սիրում ։ Եւ եթէ ձեր
բարերարներին բարի անէք, ի՞նչ շնորհք է ձեզ,
որովհետև մեղաւորներն էլ են այնպես անում.
34 Եւ եթէ փոխ էք տալիս նորանց՝ որ նորանցից ետ
առնելու յոյս ունիք, ի՞նչ շնորհք է ձեզ. որով-
հետև մեղաւորներն էլ են մեղաւորներին փոխ
35 տալիս, որ հաւասար չափը ետ առնեն ։ Բայց սի-
րեցէք ձեր թշնամիներին, և բարի արէք և փոխ
տուէք ոչինչ ակնկալելով. և ձեր վարձքը շատ կը
լինի, և Բարձրեալի որդիք կ՛լինիք. որովհետև նա
36 քաղցր է երախտամոռների և չարերի վերայ ։ Ո-
րեմն ողորմած եղէք, ինչպես ձեր Հայրն էլ ողոր-
37 մած է ։ Եւ մի դատէք, և չէք դատուիլ. մի դա-
տապարտէք, և չէք դատապարտուիլ. *արձակե-
38 ցէք՝ և կ՛արձակուիք ։ Տուէք և կ՛տրուի ձեզ.
լաւ չափով՝ թափ տրուած շարժուած լիք լեքը

*Կամ՝ ներեցէք և կ՛ներուի ձեզ ։

կ՛տան ձեր գոգը. որովհետև այն չափովը որ չա-
փէք, նորանով կ՛չափուի ձեզ ։
39 Մի առակ էլ ասեց նորանց, Մի՞թէ կարող է
կոյրը կոյրին առաջնորդել, չէ՞ որ երկուսն էլ փոսը
40 կ՛ընկնեն. Աշակերտն իր վարդապետիցը բարձր չէ.
բայց ամեն կատարեալն իր վարդապետի պես կ՛լինի ։
41 Եւ ի՞նչու քո եղբօր աչքումը շիւղը տեսնում
ես, և քո աչքի միջի գերանը չես նշմարում ։
42 Կամ ի՞նչպես կարող ես եղբօրդ ասել. Եղբայր,
թող քո աչքի միջի շիւղը հանեմ, բայց քո աչքի
միջի գերանը չես տեսնում. կեղծաւոր, առաջ քո
աչքիցը գերանը հանիր, և ապա մտիկ կ՛տաս, որ
43 քո եղբօր աչքիցը շիւղը հանես ։ Որովհետև բարի
ծառ չ՛կայ, որ չար պտուղ բերէ. և ոչ էլ չար
44 ծառ, որ բարի պտուղ բերէ ։ Որովհետև ամեն
մէկ ծառ իր պտղից է ճանաչվում. որովհետև
փշերից թուզ չեն քաղում, և ոչ մորենուցը խա-
45 ղող են կթում ։ Բարի մարդն իր սրտի բարի գան-
ձիցը բարի է բղխում, և չար մարդն իր սրտի չար
գանձիցը չար է բղխում, որովհետև սրտի աւելա-
ցածից խօսում է նորա բերանը ։
46 Եւ ի՞նչու էք ինձ Տէր Տէր կոչում, և չէք ա-
47 նում այն որ ասում եմ ։ Ամեն ով որ ինձ մօտ է
գալիս և իմ խօսքերը լսում՝ և նորանց անում,
48 ցոյց տամ ձեզ՝ թէ ո՞ւմ նման է ։ Նման է մի
տուն շինող մարդի, որ փորեց և խորացրեց, և հի-
մը ժայռի վերայ դրաւ, և երբոր ջրի հեղեղներ
եղան, գետն այն տանը զարկեց, և չ՛կարողացաւ
շարժել նորան, որովհետև ժայռի վերայ էր հաս-
49 տատուած ։ Բայց իմ խօսքերը լսող և չ՛անողը, նման
է մի մարդի՝ որ տունը հողի վերայ շինեց առանց
հիման. որ գետը նորան զարկեց, և շուտով վայր
ընկաւ. և այն տան կործանումը մեծ եղաւ ։

ԳԼ. Է

1 Եւ իր բոլոր խօսքերը ժողովրդի ականջներին խօ-
սելը կատարելուց յետոյ մտաւ Կափառնայում։
2 Եւ մի հարիւրապետի ծառայ հիւանդացած մեռ-
նելու մօտ էր, որ պատուական էր նորա համար։
3 Եւ նա Յիսուսի համար լսելով, Հրէաներից ծերեր
նորա մօտ ուղարկեց՝ նորան աղաչելով, որ գայ իր
4 ծառային ապրեցնէ։ Նորանք էլ Յիսուսի մօտ ե-
կան՝ նորան թախանձանօք աղաչում էին և ա-
սում, թէ Արժանի է նա, որ այս անես նորան։
5 Որովհետև մեր ազգին սիրում է, և ժողովարանն
6 էլ նա շինեց մեզ համար։ Եւ Յիսուսը նորանց
հետ գնաց. երբոր նա տանիցը տակաւին շատ հե-
ռու չէր, հարիւրապետը բարեկամներ ուղարկեց
նորա մօտ և ասեց նորան. Տէր, մի յոգնիր, որով-
հետև արժանի չեմ, որ իմ յարկի տակ մտնես։
7 Նորա համար ես իմ անձն էլ արժանաւոր չ'հա-
մարեցի՝ քեզ մօտ գալու. այլ խօսքով ասիր, և
8 ծառաս կ'բժշկուի։ Որովհետև ես էլ իշխանու-
թեան տակ դրուած մարդ եմ, որ իմ ձեռքի տակ
զինուորներ ունիմ, և սորան ասում եմ՝ Գնա, և
նա գնում է. և ուրիշին՝ Եկ, և գալիս է. և իմ
9 ծառային՝ Այս բանն արա, և անում է։ Եւ Յի-
սուսը այս լսելով՝ զարմացաւ նորա վերայ, և դար-
ձաւ իր ետևից գնացող ժողովրդին ասեց. Ասում
եմ ձեզ՝ թէ Իսրայէլի մէջ էլ այսպիսի հաւատք
10 չ'գտայ։ Եւ այն ուղարկուած մարդիկը ետ դառան
տուն, և հիւանդ ծառային բժշկուած գտան։
11 Եւ հետևեալ օրը եղաւ, որ Նային ասուած
քաղաքն էր գնում, և նորա հետ գնում էին նո-
րա աշակերտներից շատերը և շատ ժողովուրդ։

12 Եւ երբոր մօտեցաւ քաղաքի դռանը, ահա մի
մեռել էին դուրս բերում՝ իր մօր միածնունդ
որդին. և նա որբևայրի էր. և քաղաքից էլ մի
13 մեծ բազմութիւն կար նորա հետ։ Եւ Տէրը նորան
տեսաւ՝ գթաց նորա վերայ և ասեց նորան. Մի
14 լար։ Եւ մօտ եկաւ՝ դագաղին դպաւ. և տանող-
ները կանգնեցին. և ասեց. Երիտասարդ, քեզ եմ
15 ասում՝ Վեր կաց։ Եւ մեռելը վերկացաւ, նստեց
16 և սկսեց խօսել. և նորան տուաւ իր մօրը։ Եւ ահ
բռնեց ամենքին, և Աստուծուն փառք էին տալիս
և ասում, թէ Մի մեծ մարգարէ է վեր կացել
մեր մէջ, և թէ Աստուած իր ժողովրդին այցելել
17 է։ Եւ այս ձայնը նորա համար դուրս գնաց բոլոր
Հրէաստանը և բոլոր շրջակայքը։
18 Եւ Յովհաննէսին պատմեցին իր աշակերտներն
19 այս բոլոր բաների համար։ Եւ Յովհաննէսն իր ա-
շակերտներից երկուսին կանչեց իրան մօտ, ուղար-
կեց Յիսուսի մօտ և ասեց. Դո՞ւ ես այն որ գալու
20 է, թէ ուրիշի սպասենք։ Այն մարդիկն էլ նորա
մօտ գալով ասեցին. Յովհաննէս Մկրտիչը մեզ ու-
ղարկել է քեզ մօտ՝ և ասում է, Դո՞ւ ես այն որ
21 գալու է, թէ ուրիշի սպասենք։ Եւ այն ժամին
շատերին բժշկեց հիւանդութիւններից և հար-
ուածներից և չար ոգիներից, և շատ կոյրերին
22 տեսնել շնորհեց։ Եւ Յիսուսը պատասխանեց և
ասեց նորանց, Գնացէք Յովհաննէսին պատմեցէք
ինչ որ տեսաք և լսեցիք. որ կոյրերը տեսնում են,
կաղերը գնում են, բորոտները սրբվում են, խու-
լերը լսում են, մեռելները յարութիւն են առ-
նում, աղքատներին աւետարան է քարոզվում։
23 Եւ երանելի է նա, որ ինձ վերայ չի գայթակղել։
24 Եւ երբոր Յովհաննէսի ուղարկած մարդիկը գը-
նացին, սկսեց ժողովուրդների հետ Յովհաննէսի

համար ասել, ի՞նչ տեսնելու դուրս գնացիք անա-
25 պատը, մի եղէ՞գ քամուց շարժուած։ Ապա ի՞նչ
տեսնելու դուրս գնացիք, մի մա՞րդ՝ փափուկ հան-
դերձներ հագած. ահա նորանք որ փառաւոր հան-
դերձներում և փափկութիւնում են՝ թագաւոր-
26 ների պալատներումն են։ Ապա ի՞նչ տեսնելու
դուրս գնացիք, մի մարգարէ՞. այո, ասում եմ
27 ձեզ, որ մարգարէից էլ աւելին։ Սա այն է, որի
համար գրուած է, թէ Ահա իմ *հրեշտակն ու-
ղարկում եմ քո առաջից, որ պատրաստէ քո ճա-
28 նապարհը քո առաջին։ Որովհետև ասում եմ ձեզ,
որ կանանց ծնուածների մէջ Յովհաննէս Մկրտչից
աւելի մեծ մարգարէ ոչ ով չ'կայ. բայց Աստուծոյ
արքայութեան միջի փոքրագոյնը նորանից մեծ է։
29 Եւ բոլոր ժողովուրդն երբոր այս լսեցին՝ և մաք-
սաւորները՝ Աստուծուն արդարացրին Յովհաննէսի
30 մկրտութիւնովը մկրտուելով։ Բայց փարիսեցիները
և օրինականները անարգեցին Աստուծոյ խորհուրդն
իրանց անձերի համար՝ նորանից չ'մկրտուելով։
31 †Տէրն էլ ասեց. Արդ ո՞ւմ նմանցնեմ այս ազ-
32 գի մարդիկը. և ո՞ւմ են նման։ Նման են այն երե-
խաներին որ հրապարակներումը նստած են և իրար
կանչում են և ասում. Մենք փող հնչեցինք ձեզ
համար՝ և դուք պար չ'եկաք, ողբ երգեցինք և չը
33 լացիք։ Որովհետև Յովհաննէս Մկրտիչն եկաւ, ո՛չ
հաց էր ուտում, ո՛չ էլ գինի խմում, և ասում
34 էք՝ դև ունի։ Մարդի Որդին եկաւ, ուտում է և
խմում է, և ասում էք. Ահա ուտող և գինի խը-
մող մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարե-
35 կամ։ Եւ իմաստութիւնը արդարացաւ բոլոր իր
որդիներիցը։

*դեսպանն   †Ոմանք չ'ունին։

36 Փարիսեցիներից մէկն աղաչում էր նորան, որ հաց
ուտէ իր հետ. և նա մտաւ փարիսեցիի տունը սե-
37 ղան նստեց։ Եւ ահա այն քաղաքումը մի կին կար,
որ մեղաւոր էր, երբոր իմացաւ, թէ նա փարիսե-
ցիի տանը սեղան է նստած, մի շիշ անուշահոտ
38 իւղ բերաւ։ Եւ նորա ոտների մօտ նորա ետևից
կանգնած, լաց էր լինում, և սկսեց արտասուքով
նորա ոտները թրջել, և իր գլխի մազերովը սրբում
էր, և նորա ոտները համբուրում էր, և իւղովը
39 օծում։ Եւ փարիսեցին էլ, որ նորան կանչել էր,
երբոր տեսաւ, իր մտքումն ասում էր. Սա եթէ
մի մարգարէ էր, ապա կ'գիտենար՝ թէ ով կամ
ինչպիսի կին է նա, որ իրան մօտենում է, որով-
40 հետև մեղաւոր է։ Եւ Յիսուսը պատասխանեց և
ասեց նորան. Սիմօն, մի բան ունիմ քեզ ասելու.
41 նա էլ ասեց. Ասիր, Վարդապետ. և ասեց. Մի
փոխ տուող երկու պարտական ունէր, մէկը հինգ
հարիւր դահեկան էր պարտական և միւսը յիսուն։
42 Եւ երբոր նորանք բան չ'ունէին վճարելու, երկու-
սին էլ շնորհեց. արդ նորանցից ո՞րն աւելի կ'սիրէ
43 նորան, *ասիր։ Սիմօնն էլ պատասխանեց և ասեց.
Ինձ այսպէս է երևում, թէ նա՝ որ նորան շատ
շնորհեց. նա էլ ասեց նորան. Ուղիղ դատեցիր։
44 Եւ դառնալով դէպի կինը, Սիմօնին ասեց. Տես-
նո՞ւմ ես այս կինը. ես քո տունը մտայ, իմ ոտ-
ներին դու ջուր չես տուել, բայց սա իր արտա-
սունքովը թրջեց ոտներս, և իր գլխի մազերովը
45 սրբեց։ Դու ինձ համբոյր չես տուել. իսկ սա՝ քա-
նի որ այստեղ եմ մտել՝ ոտներս համբուրելուց չը
46 դադարեց։ Դու իւղով չ'օծեցիր իմ գլուխը. սա
47 անուշահոտ իւղով օծեց իմ ոտները։ Վասնորոյ

*Ոմանք չ'ունին։

ասում եմ քեզ. Սորա շատ մեղքերն իրան թող-
ուած կ'լինին, որովհետև շատ սիրեց. բայց որին որ
48 քիչ կ'թողուի՝ նա քիչ կ'սիրէ։ Եւ նորան ասեց.
49 Քո մեղքերը թողուած լինին քեզ։ Եւ նորա հետ
սեղան նստողներն սկսեցին իրանց մտքումն ասել.
50 Սա ո՞վ է, որ մեղք էլ է թողում։ Եւ նա ասեց
այն կնկանը. Քո հաւատքն ապրեցրեց քեզ. գնա
խաղաղութիւնով։

ԳԼ. Ը

1 Եւ նորանից յետոյ եղաւ, որ նա ման էր գալիս
քաղաքները և գիւղերը քարոզելով և Աստուծոյ
արքայութիւնն աւետարանելով. և այն տասներ-
2 կուսն էլ նորա հետ. Եւ մի քանի կանայք, որ չար
ոգիներից և հիւանդութիւններից բժշկուած էին.
Մագդաղենացի կոչուած Մարիամը, որ նորանից
3 եօթը դև էին դուրս եկել. Եւ Յովհաննան՝ Հե-
րովդէսի տան տեսուչ Քուզայի կինը, և Շուշանը,
և շատ ուրիշներ, որ իրանց ստացուածքներիցը նո-
րան ծառայութիւն էին անում։
4 Եւ երբոր մեծ բազմութիւն էր հաւաքուած, և
ամեն մէկ քաղաքից նորա մօտ եկան, առակով ա-
5 սեց. Սերմ ցանողը դուրս գնաց իր սերմը ցանելու.
և նա սերմելիս՝ որը ճանապարհի մօտ ընկաւ՝ և
կոխուեցաւ, և երկնքի թռչունները նորան կերան։
6 Եւ ուրիշը ապառաժի վերայ ընկաւ. և բուսնե-
լու ժամանակին չորացաւ՝ հիւթի պակասութեան
7 պատճառովը։ Եւ ուրիշն ընկաւ փշերի մէջ, և
8 փշերը նորա հետ բուսան և խեղդեցին նորան։ Եւ
ուրիշն ընկաւ այն բարի և պարարտ երկրի վերայ.
և բուսաւ՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ. այս
բաները խօսելիս՝ աղաղակեց. Ով որ լսելու ականջ
ունի՝ թող լսէ։

9 Աշակերտներն էլ նորան հարցնում էին, թէ ի՞նչ
10 է այն առակը։ Նա էլ ասեց. Ձեզ տրուած է Աս-
տուծոյ արքայութեան խորհուրդները գիտենալ,
բայց ուրիշներին՝ առակներով խօսւում է. որ տես-
նելով չ'տեսնեն, և լսելով չ'իմանան։
11 Արդ առակն այս է. Սերմը Աստուծոյ խօսքն է։
12 Ճանապարհի մօտինն էլ նորանք են, որ լսում են
և յետոյ սատանան գալիս է և խօսքը նորանց սըր-
13 տիցը հանում է, որ չ'հաւատան՝ և փրկուին։ Ապա-
ռաժի վերայինններն էլ նորանք են, որ երբոր կ'լը-
սեն, խօսքը ուրախութիւնով ընդունում են. սա-
կայն սորանք արմատ չ'ունին. մի առ ժամանակ հա-
ւատում են, բայց փորձութեան ժամանակին հե-
14 ռանում են։ Փշերի մէջ ընկողն էլ նորանք են, որ
խօսքը լսած են լինում, բայց հոգսերից և հարըս-
տութիւնից և կեանքի զուարճութիւններից՝ գնա-
15 լով խեղդվում են, և անպտուղ են լինում։ Բայց
այն պարարտ երկրի միջինը, նորանք են, որ բարի
և յօժար սրտով խօսքը լսում և ընդունում են,
և համբերութիւնով պտուղ են տալիս։
16 Ոչ ով ճրագ չի վառիլ և անօթով թագցնիլ
կամ մահիճի տակ դնիլ. այլ ճրագակալի վերայ
17 կ'դնէ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն։ Որովհե-
տև ծածուկ բան չ'կայ՝ որ չ'յայտնուի. և ոչ թա-
18 գուն բան, որ չ'իմացուի և յայտնուի։ Ուրեմն տե-
սէք թէ ինչպէս էք լսում. որովհետև ով որ ու-
նի, նորան կ'տրուի, և ով որ չ'ունի, այն էլ որ
կարծում է թէ ունի, նորանից վեր կ'առնուի։
19 Եւ նորա մայրը և նորա եղբայրները նորա մօտ
եկան, և չէին կարողանում բազմութեան պատ-
20 ճառով նորա մօտ հասնել։ Նորան իմաց արին և
ասեցին. Մայրդ և եղբայրներդ դուրսը կանգնած
21 ուզում են քեզ տեսնել։ Նա էլ պատասխանեց

և ասեց նորանց․ Իմ մայրը և իմ եղբայրներն նո-
րանք են, որ Աստուծոյ խօսքը լսում են և անում։
22 Եւ մէկ օր եղաւ, որ նա նաւ մտաւ, և նորա
աշակերտներն էլ, և նա ասեց նորանց․ Անց կե-
նանք ծովակի միւս կողմը․ և ճանապարհ ընկան։
23 Եւ երբոր նաւով գնում էին՝ նա քնեց․ և քամու
փոթորիկ ընկաւ այն ծովակի մէջ, և նաւը լցվում
24 էր, և վտանգի մէջ էին։ Եւ մօտ եկան․ նորան
արթնացրին և ասեցին․ Վարդապետ, վարդապետ,
կորչում ենք․ Նա էլ վերկացաւ, և քամուն և ջրի
ալէկոծութեանը սաստեց, և հանդարտեցին, և
25 խաղաղութիւն եղաւ։ Եւ ասեց նորանց․ Ո՞ւր է
ձեր հաւատքը, և նորանք խիստ վախեցան զար-
մացան, և իրար ասում էին․ Սա ո՞վ է արդեօք
որ քամիներին և ջրերին էլ է հրաման տալիս, և
հնազանդում են սորան։
26 Եւ նաւով գնացին *Գադարացիների երկիրը, որ
27 Գալիլեայի դիմացի կողմն է։ Եւ նա դուրսը ցա-
մաքը գնալիս, քաղաքիցը մի մարդ պատահեց նո-
րան, որ դևեր ունէր բաւական ժամանակից հե-
տէ, և հագուստ չէր հագած և տան մէջ չէր կե-
28 նում այլ գերեզմաններումը։ Եւ Յիսուսին որ տե-
սաւ, աղաղակեց և նորա առաջին ընկաւ, և մեծ
ձայնով ասեց․ Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ, Յի-
սուս՝ Որդի բարձրեալ Աստուծոյ․ աղաչում եմ
29 քեզ՝ մի տանջիր ինձ։ Որովհետև նա պիղծ ոգուն
հրամայում էր որ այն մարդուցը դուրս գայ․ որով-
հետև շատ ժամանակ էր որ յափշտակել էր նո-
րան, և շղթաներով ու ոտնակապերով կապուած
պահվում էր, բայց կապանքները կտրում էր, և
30 դևիցը անապատ տեղեր էր տարվում։ Յիսուսն էլ

*Ոմանք՝ Գերգեսացիների

նորան հարցրեց՝ և ասեց․ Անունդ ի՞նչ է․ նա էլ
ասեց․ Լեգէոն, որովհետև շատ դևեր էին մտած
31 նորա մէջ։ Եւ աղաչում էին նորան, որ չ՚հրամայէ
32 նորանց գնալ անդունդը։ Եւ այնտեղ շատ խոզե-
րի մի երամակ կար, որ այն սարի վերայ արածում
էին, և նորանք աղաչում էին նորան, որ հրաման
տայ իրանց մտնել նորանց մէջը․ և նա հրաման
33 տուաւ նորանց։ Դևերն էլ այն մարդիցը դուրս ե-
կան՝ խոզերի մէջ մտան․ և երամակն այն գահա-
վէժ տեղիցը վազեց ծովակի մէջ և խեղդուեցաւ։
34 Խոզարածներն էլ որ տեսան այն եղած բաները,
փախան և գնացին քաղաքի և ագարակների մէջ
35 պատմեցին։ Եւ դուրս ելան այն եղած բանը տես-
նելու։ Եւ Յիսուսի մօտ եկան, և նստած գտան
այն մարդը որից դևերը դուրս էին եկել, հագուած
և զգաստացած Յիսուսի ոտների մօտ․ և վախեցան։
36 Եւ նորանք էլ որ տեսել էին, պատմեցին նորանց,
37 թէ ինչպէս փրկուեցաւ դիւահարը։ Եւ Գադա-
րացիների շրջակայքի բոլոր բազմութիւնը աղաչե-
ցին նորան որ իրանցից գնայ որ մեծ ահով բռ-
38 նուած էին․ Նա էլ նաւ մտաւ՝ ետ դառաւ։ Եւ
այն մարդն էլ, որից դևերը դուրս էին եկել, նո-
րան աղաչում էր, որ նորա հետ լինի․ բայց Յիսու-
39 սը արձակեց նորան և ասեց․ Դարձիր քո տունը,
և պատմիր ինչ որ Աստուած քեզ արաւ․ և նա
գնաց քարոզում էր բոլոր քաղաքումը ինչ որ Յի-
սուսը իրան արաւ։
40 Եւ եղաւ երբոր Յիսուսը ետ դառաւ, ժողո-
վուրդն ընդունեց նորան․ որովհետև ամենքն սպա-
41 սում էին նորան։ Եւ ահա մի մարդ եկաւ՝ անունն
Յայրոս, և նա ժողովարանի իշխան էր․ և Յիսուսի
ոտներն ընկնելով աղաչում էր նորան, որ իր տու-
42 նը մտնէ։ Որովհետև մի միածնունդ աղջիկ ունէր,

իր տասներկու տարեկան, և նա մեռնում էր.
և նորա գնալու ժամանակ՝ ժողովուրդները նեղում
էին նորան։
43 Եւ մի կին կար տասներկու տարուց հետէ ա-
ռատեսութեան մէջ, որ իր բոլոր ինչքը բժիշկնե-
րի ծախսելով չէր կարողացել ոչ մեկից բժշկուիլ՝
44 Նա մօտ եկաւ ետևից, նորա հանդերձի ծայրին
դպաւ. և իսկոյն նորա արիւնի վազելը կանգնեց։
45 Եւ Յիսուսը ասեց. Ո՞վ է որ ինձ դպաւ. և երբոր
ամենքն ուրանում էին, ասեց Պետրոսը և նորա
հետ լինողները. Վարդապետ, ժողովուրդները սեղ-
մում են քեզ և նեղում, և դու ասում ես, Ո՞վ
46 է որ ինձ դպաւ։ Եւ Յիսուսը ասեց. Մէկը դպաւ
ինձ. որովհետև ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս
47 եկաւ ինձանից։ Եւ երբոր տեսաւ կինը, որ ծա-
ծուկ չ՚մնաց, դողալով եկաւ՝ նորա առաջին ըն-
կաւ, և բոլոր ժողովրդի առաջին պատմեց նորան,
թէ ինչ պատճառով նորան դպաւ, և թէ ինչպէս
48 իսկոյն բժշկուեցաւ։ Նա էլ ասեց նորան. Քաջա-
ցիր, դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ, գնա
խաղաղութիւնով։
49 Եւ նա տակաւին խօսելիս ժողովրդապետի տա-
նից մէկն եկաւ, և նորան ասեց, թէ Աղջիկդ մե-
50 ռաւ. մի աշխատացնիր վարդապետին։ Բայց Յիսու-
սը երբոր լսեց, նորան պատասխանեց և ասեց. Մի
51 վախենար, միայն հաւատա, և կ՚ապրի։ Եւ երբոր
տունն էր մտնում, ոչ ոքի չ՚թողեց ներս մտնել՝
բայց միայն Պետրոսին, և Յակոբոսին և Յովհաննէ-
52 սին, և աղջկայ հօրը և մօրը։ Եւ ամենքը լաց էին
լինում և նորա վերայ սուգ անում. և նա ասեց՝
53 Լաց մի լինիք, մեռած չէ, այլ քնած է։ Բայց
ծաղր էին անում նորան, գիտենալով որ մեռել է՝
54 Իսկ նա ամենքին դուրս հանեց, և նորա ձեռքից

55 բռնելով՝ կանչեց և ասեց. Աղջիկ, վեր կաց. Եւ
նորա հոգին դարձաւ, և նա իսկոյն կանգնեց. և
56 հրամայեց, որ նորան բան տան ուտելու։ Եւ նո-
րա ծնողքը զարմացան. և նա պատուիրեց, որ ոչ
ոքի չ՚ասեն եղածը։

ԳԼ. Թ

1 Եւ իր տասներկու աշակերտներին մէկտեղ կան-
չեց, և նորանց զօրութիւն և իշխանութիւն տուաւ
բոլոր դևերի վերայ, և հիւանդութիւններ բժշկե-
2 լու։ Եւ նորանց ուղարկեց Աստուծոյ արքայու-
թիւնը քարոզելու, և հիւանդներին բժշկելու։
3 Եւ ասեց նորանց. Ոչինչ վեր չ՚առնէք ճանապարհի
համար. ոչ գաւազան, ոչ պարկ, ոչ հաց, ոչ ար-
4 ծաթ, ոչ երկու երկու վերարկու ունենալ։ Եւ
ո՛ր տուն որ մտնէք՝ այնտեղ մնացէք, և այնտեղից
5 դուրս գնացէք։ Եւ որոնք որ ձեզ չ՚ընդունեն, այն
քաղաքիցը դուրս գնալիս, ձեր ոտներիցը փոշին էլ
թօթափեցէք՝ նորանց վկայութիւն լինելու համար։
6 Եւ նորանք դուրս գնացին՝ և մտն էին գալիս գիւ-
ղերը աւետարանը քարոզելով, և ամեն տեղ
բժշկութիւններ անելով։
7 Եւ Հերովդէս չորրորդապետը լսեց նորանից ե-
ղած բոլոր գործերը. և տարակուսանաց մէջ էր նո-
8 րա համար՝ որ ոմանք ասում էին, թէ Յովհաննէ-
սը մեռելներից յարութիւն է առել, և ոմանք
էլ, թէ Եղիան յայտնուել է. և ուրիշները, թէ
Առաջի մարգարէներից մէկը յարութիւն է առել.
9 Եւ Հերովդէսն ասեց. Յովհաննէսին գլխատեցի.
բայց սա ո՞վ է, որի մասին ես այսպիսի բաներ եմ
լսում. և ուզում էր տեսնել նորան։
10 Եւ առաքեալները դարձան և պատմեցին նորան

ինչ որ արին. և նորանց առաւ և գնաց առանձին
մի անապատ տեղ՝ մի քաղաքի մօտ, որ կոչվում
11 էր Բեթսայիդա ։ Եւ ժողովուրդներն իմանալով՝
նորա ետևից գնացին. և նորանց ընդունեց և նո-
րանց հետ Աստուծոյ արքայութեան մասին խօ-
սում էր, և նորանց՝ որ բժշկութեան կարօտ է-
ին՝ բժշկում էր ։
12 Եւ օրն սկսեց տարաժամել. տասներկուքն էլ
մօտ եկան և ասեցին նորան. Արձակիր այդ ժողո-
վուրդը, որ շրջակայ գիւղերը և ագարակները գը-
նան, իջևանեն, և կերակուր գտնեն. որովհետև
13 այստեղ անապատ տեղում ենք ։ Եւ նորանց ա-
սեց. Դուք տուէք դորանց ուտել. Նորանք էլ ա-
սեցին. Մենք հինգ հացից և երկու ձկնից աւելի
չ'ունինք, եթէ ոչ՝ գնանք այդ բոլոր ժողովրդի հա-
14 մար կերակուր գնենք ։ Որովհետև հինգ հազարի
չափ մարդիկ էին։ Եւ նա իր աշակերտներին ասեց.
15 Նստեցրէք դորանց դաս դաս յիսուն յիսուն։ Եւ
16 այնպէս արին, և ամենքին նստեցրին։ Եւ այն հինգ
հացն և երկու ձուկն առաւ, դէպի երկինքը նա-
յեց, օրհնեց նորանց և կոտրեց, և տալիս էր աշա-
17 կերտներին, որ ժողովրդի առաջին դնեն ։ Ամենքը
կերան և կշտացան. և կտորների փշրանքները վեր
առան տասներկու քթոց ։
18 Եւ եղաւ, երբոր նա առանձին աղօթք էր ա-
նում, աշակերտներն էլ նորա հետ էին. և հար-
ցրեց նորանց և ասեց. Ժողովուրդներն ինձ համար
19 ո՞վ են ասում, թէ լինեմ։ Նորանք էլ պատաս-
խանեցին և ասեցին. Յովհաննէս Մկրտիչը, ուրիշ-
ներն էլ՝ Եղիան, ուրիշներն էլ, թէ Առաջի մար-
20 գարէներից մէկը յարութիւն է առել ։ Եւ նորանց
ասեց. Բայց դուք ո՞վ էք ասում ինձ համար թէ
լինեմ. Պետրոսը պատասխանեց և ասեց. Աստու-

21 ծոյ Քրիստոսը ։ Նա էլ սաստեց նորանց, և պատ-
22 ուիրեց՝ որ այս բանը ոչ ոքի չ'ասեն։ Եւ ասեց, թէ
Պէտք է մարդի Որդին շատ չարչարուի և անար-
գուի ծերերից և քահանայապետներից և դպիր-
ներից, և սպանուի և երրորդ օրումը յարութիւն
23 առնէ։ Եւ ամենքին ասում էր, Եթէ մէկը կամե-
նում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ
և ամեն օր իր խաչն առնէ և իմ ետևից գայ ։
24 Որովհետև ով որ կամենայ իր անձն ապրեցնել՝ կը
կորցնէ նորան. և ով որ իր անձն կորցնէ ինձ հա-
25 մար՝ նա կ'ապրեցնէ նորան։ Քանզի ինչ օգուտ է
մարդի, որ բոլոր աշխարհքս ստանայ, և իր անձը
26 կորցնէ, կամ վնասուի ։ Որովհետև ով որ ինձ և
իմ խօսքերն ամօթ համարէ, մարդի Որդին էլ նո-
րան ամօթ կ'համարէ, երբոր գայ իր, և Հօր և
27 սուրբ հրեշտակների փառքովը։ Բայց ճշմարիտ ա-
սում եմ ձեզ. Այստեղ կանգնածներիցը ոմանք
կան, որ մահ չեն ճաշակիլ, մինչև որ Աստուծոյ
արքայութիւնը տեսնեն ։
28 Եւ եղաւ, որ այս խօսքերիցն ութ օրի չափ յե-
տոյ, Պետրոսին և Յովհաննէսին և Յակոբին առաւ՝
29 և վեր ելաւ սարը աղօթք անելու ։ Եւ եղաւ որ
նա աղօթք անելիս, նորա երեսի կերպարանքն ու-
րիշ կերպ եղաւ. և նորա հագուստը սպիտակ փայ-
30 լուն եղաւ ։ Եւ ահա երկու մարդ խօսում էին
31 նորա հետ, որ Մովսէսն և Եղիան էին. Նորանք
փառքով երևեցած խօսում էին նորա վախճանի
32 համար, որ Երուսաղէմումը կատարուելու էր։ Բայց
Պետրոսը և նորա հետ լինողները քնով ծանրացած
էին, և երբոր զարթնեցին՝ տեսան նորա փառքը,
և այն երկու մարդկանցը որ նորա մօտ կանգնած
33 էին ։ Եւ եղաւ որ նորանք նորանից հեռանալիս,
Պետրոսն ասեց Յիսուսին. Վարդապետ, լաւ է մեզ

համար այստեղ կենալ. և երեք տաղաւար շի-
նենք, մէկը քեզ համար, և մէկը Մովսէսին, և
մէկը Եղիային. և չ'գիտէր թէ ինչ էր խօսում։
34 Եւ երբոր նա այս ասում էր մի ամպ եկաւ և նո-
րանց վերայ հովանի արաւ. և վախեցան, երբոր
35 այն ամպի մէջ մտան։ Եւ ձայն եղաւ ամպիցն, որ
ասեց. Դա է իմ սիրելի Որդին, դորան լսեցէք։
36 Եւ այն ձայնն որ եղաւ, Յիսուսը մինակ գտնուե-
ցաւ. և նորանք լռեցին, և այն օրերումն ոչ ոքի
ոչինչ չ'պատմեցին այն բաներիցն, որ տեսան։
37 Եւ հետևեալ օրը եղաւ որ նորանք սարիցն իջ-
38 նելիս, շատ ժողովուրդ նորա առաջին եկաւ։ Եւ
ահա ժողովրդիցը մի մարդ աղաղակեց և ասեց.
Վարդապետ, աղաչում եմ քեզ, մտիկ տուր իմ
39 որդուն, որովհետև միածնունդս է։ Եւ ահա ոգի
բռնում է նորան, և նա յանկարծ գոռում է, և
նորան գետնով է տալիս փրփրեցնելով, և հազիւ
հեռանում է նորանից՝ նորան կոտրատելուց յե-
40 տոյ։ Եւ ես քո աշակերտներին աղաչեցի, որ հա-
41 նեն նորան, բայց չ'կարողացան։ Յիսուսն էլ պա-
տասխանեց և ասեց. Ով անհաւատ և թիւր ազգ,
մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ և համբերեմ
42 ձեզ. քո որդին այստեղ բեր։ Եւ նա դեռ մօտ
գալիս՝ դևը գետնով զարկեց նորան և շատ սաս-
43 տիկ թափահարեց։ Իսկ Յիսուսը սաստեց պիղծ
ոգուն, և երեխային բժշկեց. և նորան տուաւ իր
44 հօրը։ Եւ ամենքը զարմանում էին Աստուծոյ մե-
ծափառութեան վերայ։
Եւ երբոր ամենքը զարմանում էին այն բոլոր
բաների վերայ, որ Յիսուսը անում էր, իր աշա-
կերտներին ասեց. Այս խօսքերը դուք ձեր ականջ-
ներումը դրէք. որովհետև մարդի Որդին մարդկանց
45 ձեռն է մատնուելու։ Բայց նորանք չէին իմանում

այն խօսքը և ծածկուած էր նորանցից, որ չ'հաս-
կանան նորան. և վախենում էին հարցնել նորան
այն բանի համար։
46 Մի խորհուրդ էլ մտաւ նորանց մէջ՝ այն թէ՝
47 նորանցից ո՞վ լինի մեծը։ Յիսուսն էլ նորանց
սրտերի մտածմունքներն իմանալով մի երեխայ ա-
48 ռաւ՝ և նորան կանգնեցրեց իրան մօտ, Եւ ասեց
նորանց. Ով որ այս երեխային ընդունի իմ անու-
նովը, ինձ է ընդունում. և ով որ ինձ ընդունի,
ինձ ուղարկողին է ընդունում. որովհետև ով որ
ձեր ամենիդ մէջ փոքրագոյն է, նա մեծ կ'լինի։
49 Յովհաննէսն էլ պատասխանեց և ասեց. Վար-
դապետ, մէկը տեսանք, որ քո անունովը դևեր էր
հանում, և արգիլեցինք նորան, որովհետև մեզ
50 հետ չէ ման գալիս։ Եւ Յիսուսը նորանց ասեց.
Մի արգիլէք նորան. որովհետև ով որ մեզ հա-
կառակ չէ, մեր կողմն է։
51 Եւ եղաւ, երբոր նորա վերանալու օրերը կա-
տարվում էին, *նա իր երեսը հաստատեց՝ որ գը-
52 նայ Երուսաղէմ։ Եւ իր երեսի առաջին պատգա-
մաւորներ ուղարկեց. և գնացին՝ Սամարացիների
մի գիւղը մտան, որ նորա համար բան պատրաս-
53 տեն։ Բայց նորանք չ'ընդունեցին նորան, որ նորա ե-
54 րեսը ուղղուած էր Երուսաղէմ գնալու։ Երբոր նորա
աշակերտները՝ Յակոբոսը և Յովհաննէսը տեսան՝ ա-
սեցին. Տէր՝ կամենո՞ւմ ես ասենք, կրակ իջնէ եր-
կընքիցը և նորանց սատկեցնէ ինչպէս Եղիան էլ ա-
55 րաւ։ Նա էլ դարձաւ՝ սաստեց նորանց և ասեց.
56 Դուք չ'գիտէք՝ թէ ո՛ր հոգու էք դուք։ Որովհետև
մարդի Որդին չ'եկաւ՝ մարդկանց հոգիները կորցը-
նելու, այլ ապրեցնելու. և գնացին ուրիշ գիւղ։

---

*հաստատ որոշեց

57 Եւ եղաւ որ նորանք գնալիս, ճանապարհին մի
մարդ նորան ասեց. Ես քո ետեւիցը կ'գամ՝ ո՛րտեղ
58 որ գնաս, Տէր: Յիսուսն էլ նորան ասեց. Աղ-
ուեսները որջեր ունին, և երկնքի թռչուննե-
րը բոյներ. բայց մարդի Որդին տեղ չ'ունի, որ
գլուխը դնէ:
59 Մի ուրիշին էլ ասեց. Իմ ետեւիցն եկ. և նա
ասեց. Տէր, հրաման տուր, որ գնամ առաջ իմ
60 հայրը թաղեմ: Յիսուսը նորան ասեց. Թող մեռել-
ներն իրանց մեռելներին թաղեն. իսկ դու գնա
Աստուծոյ արքայութիւնը քարոզիր:
61 Մի ուրիշն էլ ասեց. Տէր, քո ետեւից կ'գամ.
միայն թէ առաջ հրաման տուր ինձ, որ իմ տա-
62 նը բարև մնաս ասեմ: Յիսուսն էլ նորան ասեց. Ո՛չ
ով որ ձեռքը մաճի վերայ է դնում և ետեւին
մտիկ անում, յարմար չէ Աստուծոյ արքայու-
թեան համար:

ԳԼ. Ժ

1 Սորանից յետոյ Տէրն ուրիշ եօթանասուն հոգի էլ
կարգեց. և նորանց երկու երկու իր երեսի առա-
ջին ուղարկեց այն բոլոր քաղաքներն և տեղերն,
2 որտեղ որ ինքը գնալու էր: Եւ ասում էր նորանց.
Հունձքը շատ է, բայց մշակները քիչ. ուրեմն ա-
ղաչեցէք հունձքի Տիրոջը, որ մշակներ հանէ իր
3 հունձքը: Գնացէք. ահա ես ուղարկում եմ ձեզ
4 ինչպէս գառներ գայլերի մէջ: Վեր մի առնէք ոչ
քսակ, ոչ պարկ, ոչ կօշիկներ. և ճանապարհին
5 ոչ ոքի բարև չ'տաք: Եւ որ տուն որ մտնէք, ա-
6 ռաջ ասեցէք՝ խաղաղութիւն այս տանը: Եւ թէ
որ այնտեղ խաղաղութեան որդի լինի, ձեր խա-
ղաղութիւնը նորա վերայ կ'մնայ. ապա թէ ոչ

7 դէպի ձեզ ետ կ'դառնայ: Եւ այն տանը մնացէք,
նորանց ունեցածիցը կերէք և խմեցէք. որովհետև
մշակն իր վարձքին արժանի է. տանից տուն մի
8 փոխուիք: Եւ որ քաղաք որ մտնէք, և ձեզ ըն-
9 դունեն, կերէք՝ ինչ որ կ'դնեն ձեր առաջին: Եւ
նորա միջի հիւանդներին բժշկեցէք. և նորանց ա-
սեցէք՝ Թէ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է
10 ձեզ վերայ: Բայց որ քաղաք որ մտնէք, և ձեզ
չ'ընդունեն՝ դուրս նորա հրապարակները գալով
11 ասեցէք. Այն փոշին էլ, որ ձեր քաղաքիցը մեզ
կպել է, թօթափում ենք ձեզ վերայ. միայն թէ
սա գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնը մօտե-
12 ցել է ձեզ: Եւ ասում եմ ձեզ, որ Սոդոմացինե-
րի համար աւելի հեշտ կ'լինի այն օրումը՝ քան թէ
13 այն քաղաքին: Վա՛յ քեզ, Քորազին. վայ քեզ,
Բեթսայիդա. որովհետև եթէ Տիւրոսի և Սիդոնի
մէջ եղած լինէին այն զօրութիւնները՝ որ ձեր մէջ
եղան, վաղուց քուրձի և մոխրի մէջ նստած ա-
14 պաշխարել էին: Սակայն Տիւրոսի և Սիդոնի հա-
մար աւելի հեշտ կ'լինի դատաստանումը քան թէ
15 ձեզ: Եւ դու՝ Կափառնայում, որ մինչև երկինքը
բարձրացած ես, մինչև դժոխքը պիտի ցածանաս:
16 Ձեզ լսողը, ինձ է լսում. և ձեզ անարգողը, ինձ
է անարգում. և ինձ անարգողը, ինձ ուղարկողին
է անարգում:
17 Եւ այն եօթանասունքը ուրախութիւնով ետ
դառան և ասեցին, Տէր, դևերն էլ հնազանդում
18 են մեզ քո անունովը: Եւ նորանց ասեց. Տեսնում
էի սատանային, որ կայծակի պէս երկնքիցը վայր էր
19 ընկնում: Ահա իշխանութիւնը տուի ձեզ, կոխել
օձերի և կարիճների վերայ և ձեզ ոչինչ չի վնա-
20 սիլ: Սակայն նորա համար մի ուրախանաք՝ որ
ոգիները ձեզ հնազանդում են, բայց աւելի

ուրախացէք, որ ձեր անունները գրուած են
երկինքումը ։
21 Նոյն ժամումն Յիսուսը *Հոգովը ցնծաց և ասեց.
Գոհանում եմ քեզանից, Հայր, երկնքի և երկրի
Տէր, որ իմաստուններից և գիտուններից այս բանե-
րը ծածկեցիր և մանուկների յայտնեցիր։ Այո, ով
Հայր. որովհետև այսպէս հաճոյ եղաւ քո առա-
22 ջին։ Ամէն բան տրուեցաւ ինձ իմ Հօրիցը. և ոչ
ով չ'գիտէ թէ ով է Որդին, բայց միայն Հայրը.
և ով է Հայրը՝ բայց միայն Որդին, և ում որ Որ-
դին կամենայ յայտնել ։
23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝
և ասեց. Երանի այն աչքերին՝ որ տեսնում են
24 այն որ դուք էք տեսնում ։ Որովհետև ասում
եմ ձեզ, թէ շատ մարգարէներ և թագաւոր-
ներ կամեցան տեսնել այն որ դուք էք տես-
նում, և չ'տեսան. և լսել այն որ դուք էք լսում,
և չ'լսեցին ։
25 Եւ ահա մէկ օրինական վերկացաւ՝ Նորան փոր-
ձում էր ասելով. Վարդապետ, ի՞նչ գործեմ որ
26 յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Նա էլ ա-
սեց նորան. Օրէնքումն ի՞նչ է գրուած, ի՞նչպէս ես
27 կարդում։ Նա էլ պատասխանեց և ասեց. Սիրիր
քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտիցը, քո բոլոր
անձիցը, քո բոլոր զօրութիւնիցը, և քո բոլոր
28 մտքիցը. և քո ընկերին՝ քո անձի պէս։ Եւ Նորան
ասեց. Ուղիղ պատասխանեցիր. այդ արա՝ և կ'ապ-
29 րես ։ Իսկ նա՝ որովհետև կամենում էր իր անձն
արդարացնել՝ Յիսուսին ասեց. Եւ իմ ընկերն ո՞վ
30 է։ Յիսուսն էլ պատասխանեց և ասեց. Մի մարդ
Երուսաղէմից իջնում էր Երիքով. և աւազակների

*Ոմանք՝ Սուրբ Հոգովը

ձեռք ընկաւ, նորանք էլ մերկացրին նորան՝ և խո-
31 ցոտեցին նորան, կիսամահ թողեցին գնացին։ Եւ
դիպուածով մի քահանայ էր իջնում նոյն ճանա-
32 պարհովը, և նորան տեսաւ՝ անցաւ։ Նոյնպէս էլ
մի Ղևտացի այն տեղը հասաւ եկաւ և տեսաւ՝
33 անցաւ։ Մի Սամարացի էլ, որ ճանապարհորդում
34 էր, եկաւ այնտեղ և նորան տեսնելով գթաց։ Եւ
մօտ եկաւ՝ նորա խոցերը փաթաթեց՝ վերան ձէթ
և գինի ածելով. և իր անասունի վերայ դրած
տարաւ նորան մի իջևան, և նորան հոգ տարաւ։
35 Եւ հետևեալ օրն երբոր այն տեղիցը դուրս էր
գնում, երկու դահեկան հանեց և իջևանի տիրոջը
տուաւ և ասեց նորան. Դորան հոգ տար, և ինչ որ
աւելի ծախք անես, ես միւսանգամ ետ դառնալիս
36 կ'վճարեմ քեզ։ Հիմա այն երեքից ո՞րն է երևում
քեզ՝ թէ ընկեր է եղել այն աւազակների ձեռք
37 ընկած մարդին։ Նա էլ ասեց. Նա՝ որ ողորմու-
թիւն արաւ նորան։ Ապա Յիսուսը նորան ասեց.
Գնա, դու էլ այնպէս արա։
38 Եւ եղաւ որ նորանք գնալիս, ինքն էլ մի գիւղ
մտաւ. և մի կին՝ անունը Մարթա՝ ընդունեց նո-
39 րան իր տունը։ Եւ նա մի քոյր ունէր՝ անունը
Մարիամ. և սա Յիսուսի ոտների մօտ նստեց, և
40 լսում էր Նորա խօսքերը։ Մարթան էլ ծառայու-
թեան համար շատ զբաղմունքի մէջ էր, էկաւ
կանգնեց և ասեց. Տէր, հոգդ չէ՞ որ քոյրս ինձ
մենակ թողեց ծառայելու. ուրեմն ասիր դորան,
41 որ օգնէ ինձ։ Յիսուսը պատասխանեց և ասեց Նո-
րան. Մարթա, Մարթա, դու հոգս ես քաշում
42 և շատ բաներով զբաղուած ես. Բայց մէկ բան է
պէտք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ վեր
չի առնուիլ Նորանից։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղաւ որ մի տեղ աղօթք էր անում. և երբոր
դադարեց, իր աշակերտներից մէկն ասեց նորան.
Տէ՛ր, սովորեցրու մեզ աղօթք անելը, ինչպէս Յով-
2 հաննէսն էլ իր աշակերտներին սովորեցրեց։ Եւ
ասեց նորանց. Երբոր աղօթք անէք, ասեցէք. Մեր
Հայր, որ երկնքումն ես, քո անունը սուրբ լինի.
քո արքայութիւնը գայ։ Քո կամքը լինի՝ ինչպէս
3 երկնքումն այնպէս էլ երկրիս վերայ։ Մեր ամեն
4 օրուայ հացը օրէցօր տուր մեզ։ Եւ թող մեզ մեր
մեղքերը. որովհետև մենք էլ թողում ենք ամե-
նին, որ պարտական է մեզ. և մեզ փորձանքի մէջ
մի տանիր, այլ փրկիր մեզ չարիցը։
5 Եւ նորանց ասեց. Ձեզանից ո՞վ է, որ բարեկամ
ունենայ, և կէս գիշերին նորա մօտ գնայ, և նորան
6 ասէ. Բարեկամ, ինձ երեք հաց փոխ տուր. Որով-
հետև իմ բարեկամն ինձ մօտ եկաւ ճանապարհի-
ցը, և ես բան չ'ունիմ՝ որ նորա առաջին դնեմ։
7 Եւ նա պատասխանէ ներսից և ասէ. Մի յոգնե-
ցնիր ինձ. դուռն արդէն փակուած է, և երեխա-
ներս ինձ հետ անկողնումն են. չեմ կարող վեր
8 կենալ և տալ քեզ։ Ասում եմ ձեզ, Եթէ վեր
էլ չ'կենայ և նորան տայ նորա բարեկամ լինելու
համար, սակայն նորա թախանձանքի համար վեր
կ'կենայ և կ'տայ նորան ինչ որ էլ պէտք լինի։
9 Եւ ես ասում եմ ձեզ, խնդրեցէք՝ և կ'տրուի
ձեզ, որոնեցէք և կ'գտնէք, դուռը թակեցէք՝ և
10 կ'բացուի ձեզ։ Որովհետև ամեն ով որ խնդրում
է՝ առնում է, և ով որ որոնում է՝ գտնում է, և
11 ով որ դուռը թակում է՝ բացվում է նորան։ Եւ
ձեզանից ո՞ր հօրից իր որդին հաց ուզէ, մի՞թէ

քար կ'տայ նորան. կամ եթէ ձուկ՝ մի՞թէ ձկան
12 տեղ օձ կ'տայ նորան։ Եւ կամ ձու ուզէ, մի՞թէ
13 կարիճ կ'տայ նորան։ Արդ եթէ դուք, որ չար էք՝
գիտէք բարի պարգևներ տալ ձեր որդկանցը, էլ
ո՞րքան աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կ'տայ
նորանց, որ ուզում են նորանից։
14 Եւ մի դև էր հանում, որ համր էր. և եղաւ որ
դևը դուրս գալիս համրը խօսեց. և ժողովուրդնե-
15 րը զարմացան։ Եւ նորանցից ոմանք ասեցին. Դա
դևերի իշխան՝ Բէեղզեբուղովն է հանում դևերը։
16 Ուրիշներն էլ փորձելով մի նշան էին խնդրում
17 նորանից երկնքիցը։ Բայց նա նորանց մտածմունք-
ները իմանալով ասեց նորանց. Ամեն թագաւորու-
թիւն, որ իր մէջ բաժանուած է՝ կ'աւերուի, և
18 տուն՝ տան դէմ բաժանուած կ'կործանուի։ Ապա
եթէ սատանան ինքն իրան դէմ բաժանուած է,
նորա թագաւորութիւնն ի՞նչպէս կ'կենայ. որով-
հետև ասում էք, թէ ես Բէեղզեբուղովն եմ հա-
19 նում դևերը։ Եթէ ես Բէեղզեբուղովն եմ հա-
նում դևերը, ապա ձեր որդիքն ի՞նչով են հանում.
դորա համար նորանք կ'լինին ձեր դատաւորները։
20 Բայց եթէ ես Աստուծոյ մատովն եմ հանում
դևերն, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեզ վե-
21 րայ հասել է։ Երբոր զօրաւորը զինուորուած իր
տունը պահէ, նորա ստացուածքը խաղաղութեան
22 մէջ են։ Բայց եթէ նորանից էլ աւելի զօրաւորը
գայ՝ նորան յաղթէ, նորա զէնքերը՝ որ յոյսն նո-
րանց վերայ էր դրել, կ'հանէ և նորա աւարը կը
23 բաժանէ։ Ով որ ինձ հետ չէ՝ ինձ հակառակ է, և
ով որ ինձ հետ չէ ժողովում՝ ցրվում է։
24 Երբոր պիղծ ոգին դուրս է գալիս մարդիցը՝ ան-
ջուր տեղերանքում ման է գալիս և հանգիստ ո-
րոնում. և երբոր չէ գտնում՝ ասում է. Ետ դառ-

25 նամ իմ տունը՝ որտեղից դուրս եկայ։ Եւ գալիս՝
26 նորան սրբուած և զարդարուած է գտնում։ Այն
ժամանակ գնում է և իրանից էլ աւելի չար եօ-
թը ոգիներ է առնում՝ և մտնում բնակվում է
այնտեղ, և այն մարդի յետինն աւելի չար է լի-
նում քան թէ առաջինը։
27 Եւ եղաւ որ նա այս խօսելիս, ժողովրդի միջիցը
մի կին ձայն բարձրացրեց և ասեց. Երանի այն ո-
րովայնին՝ որ քեզ կրեց, և այն ծծերին՝ որ քեզ
28 ծծեցրին։ Նա էլ ասեց. Այո՛, երանի նորանց, որ
Աստուծոյ խօսքը լսում են և նորան պահում։
29 Եւ երբոր ժողովուրդները նորա վերայ դիզվում
էին, սկսեց ասել. Այս ազգը չար է. նշան է խընդ-
րում, և նշան չի տրուիլ սորան՝ բայց միայն Յով-
30 նան մարգարէի նշանը։ Որովհետև ինչպէս Յովնանը
նշան եղաւ Նինուէացիների համար, այնպէս էլ
31 մարդի Որդին այս ազգին կ'լինի։ Հարաւի թագու-
հին դատաստանումը վեր կ'կենայ այս ազգի մարդ-
կանց հետ և կ'դատապարտէ նորանց, որովհետև
երկրի ծայրերից եկաւ Սողոմոնի իմաստութիւնը
լսելու, և ահա Սողոմոնից էլ աւելին է այստեղ։
32 Նինուէի մարդիկը դատաստանումը վեր կ'կենան
այս ազգի հետ և կ'դատապարտեն սորան, որով-
հետև նորանք Յովնանի քարոզութիւնովը ապաշ-
խարեցին. և ահա Յովնանից էլ աւելին է այստեղ։
33 Ոչ ով ճրագը չէ վառում և թագուն տեղ դը-
նում և ոչ գրուանի տակ, այլ ճրագակալի վե-
34 րայ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն։ Մարմնի
ճրագը աչքն է, արդ երբոր աչքդ պարզ է, բոլոր
մարմինդ էլ լուսաւոր կ'լինի. բայց երբոր չար է,
35 մարմինդ էլ խաւար կ'լինի։ Ուրեմն՝ զգոյշ կաց,
մի գուցէ այն լոյսը, որ քեզանում է, խաւար լի-
36 նի։ Եթէ բոլոր մարմինդ լուսաւոր է և ոչ մի խա-

ւար մասը չ'կայ, բոլորը լուսաւոր կ'լինի. ինչպէս
երբոր ճրագն իր ճառագայթովը լուսաւորէ քեզ։
37 Եւ նա այս խօսելիս, մի փարիսեցի աղաչում էր
նորան, որ նորա մօտ հաց ուտէ. և նա մտաւ սե-
38 ղան նստեց։ Փարիսեցին էլ տեսնելով զարմացաւ,
39 որ ճաշից առաջ չ'լուացուեց։ Տէրն էլ ասեց նո-
րան. Հիմա դուք փարիսեցիներդ բաժակի և ամա-
նի դրսի կողմը սրբում էք. բայց ձեր ներսը լիքն է
40 յափշտակութիւնով և չարութիւնով։ Անմիտներ,
41 չէ՞ որ դուրսը անողը ներսն էլ արաւ։ Բայց ձեր
ունեցածիցը ողորմութիւն տուէք, և ահա ամեն
42 բաներ սուրբ են ձեզ համար։ Բայց վայ ձեզ փա-
րիսեցիներիդ, որ անանուխի և փեգենայի և ամեն
բանջարի տասանորդ էք տալիս, և Աստուծոյ իրա-
ւունքը և սէրը զանց էք անում. այս պէտք էր ա-
43 նել, և նորանք չ'թողել։ Վայ ձեզ փարիսեցինե-
րիդ, որ սիրում էք ժողովարանների մէջ առաջի
44 աթոռները, և հրապարակներում՝ բարևները։ Վայ
ձեզ՝ դպիրներիդ և փարիսեցիներիդ, կեղծաւոր-
ներ, որ դուք այն գերեզմանների պէս էք, որ ան-
յայտ են, և մարդիկը որ նորանց վերայ գնում են
չ'գիտեն։
45 Եւ պատասխանեց օրինականներից մէկը և ասեց
նորան. Վարդապետ, այդ ասելով մեզ էլ ես
46 նախատինք տալիս։ Նա էլ ասեց, Եւ ձեզ օրինա-
կաններիդ էլ վայ. որովհետև դժուար տանելի
բեռներով բեռնում էք մարդկանց, և դուք ձեր
մատների մէկովը չէք մօտենում այն բեռներին։
47 Վայ ձեզ որ մարգարէների գերեզմանները շինում
48 էք, և հէնց ձեր հայրերը սպանեցին նորանց։ Ապա-
ուրեմն վկայում էք և հաւանում էք ձեր հայրե-
րի գործերին. որովհետև նորանք կոտորեցին նո-
րանց, և դուք շինում էք նորանց գերեզմանները։

49 Սորա համար Աստուծոյ իմաստութիւնն էլ ասեց.
Մարգարէներ և առաքեալներ կ'ուղարկեմ նորանց
50 մօտ, և նորանցից կ'սպանեն և կ'հալածեն։ Որ բո-
լոր մարգարէների արիւնը, որ աշխարհքի սկզբիցը
51 թափուած է, այս ազգիցը պահանջուի։ Աբէլի ա-
րիւնիցը մինչև Զաքարիայի արիւնը, որ սեղանի և
տաճարի մէջ կորաւ. այո՛, ասում եմ ձեզ, այս
52 ազգիցը կ'պահանջուի։ Վայ ձեզ՝ օրինականներիդ,
որ գիտութեան բանալիքը վեր էք առել. դուք
չէք մտել, և մտնողներին էլ արգելել էք։
53 Եւ երբոր այս բաներն ասում էր նորանց, դպիր-
ները և փարիսեցիներն սկսեցին սաստիկ ստիպել,
և շատ բաների համար նորա հետ հակառակել.
54 Եւ նորան աչքի տակ առած՝ ուզում էին, նորա
բերանիցը մի բան որսալ, որ ամբաստանեն նորան։

ԳԼ. ԺԲ

1 Այն միջոցին երբոր հազարներով ժողովուրդները
դիզվում էին՝ մինչև որ իրար կոխ էին տալիս,
սկսեց իր աշակերտներին ասել. Առաջ ձեր անձե-
րը զգոյշ պահեցէք փարիսեցիների խմորիցը, որ է
2 կեղծաւորութիւնը։ Որովհետև ոչինչ չ'կայ ծա-
ծուկ, որ չ'յայտնուի. և թագուն, որ չ'իմացուի։
3 Ուստի ինչ որ խաւարումն ասեցիք, լոյսի մէջ կը
լսուի. և ինչ որ ներսի սենեակներումն ականջում
4 խօսեցիք, կտուրների վերայ կ'քարոզուի։ Բայց ա-
սում եմ ձեզ՝ իմ բարեկամներին. Մի վախենաք
նորանցից՝ որ մարմինն սպանում են, և նորանից
5 յետոյ աւելի բան չ'ունին՝ որ անեն։ Բայց ցոյց
տամ ձեզ, թէ ումից պէտք է վախենաք. Նորա-
նից վախեցէք, որ սպանելուց յետոյ իշխանութիւն
ունի գեհենի մէջ գցելու. այո՛, ասում եմ ձեզ՝

6 Նորանից վախեցէք։ Չէ՞ որ հինգ ճնճղուկ երկու
դանկի են ծախվում. և նորանցից մէկն էլ Աս-
7 տուծոյ առաջին մոռացուած չէ։ Բայց ձեր գլխի
բոլոր մազերն էլ համարուած են. ուրեմն մի վա-
խենաք. որովհետև դուք շատ ճնճղուկներից ա-
8 ւելի լաւ էք։ Իսկ ասում եմ ձեզ, թէ Ամեն ով
որ ինձ մարդկանց առաջին դաւանէ, մարդի Որդին
էլ նորան կ'դաւանէ Աստուծոյ հրեշտակների ա-
9 ռաջին։ Եւ ով որ ինձ ուրանայ մարդկանց առա-
ջին, նա էլ կ'ուրացուի Աստուծոյ հրեշտակների ա-
10 ռաջին։ Եւ ամեն ով որ մարդի Որդու դէմ բան
ասէ, կ'թողուի նորան. բայց ով որ Սուրբ Հոգու
11 դէմ հայհոյեց, նորան չի թողուիլ։ Եւ երբոր
տանեն ձեզ ժողովարանները և դատաւորների և
պետութիւնների առաջին, հոգս մի՛ անէք՝ թէ
ինչպէս և ի՛նչ պատասխանէք, կամ ի՛նչ ասէք։
12 Որովհետև Սուրբ Հոգին նոյն ժամումը կ'սովորեցնէ
ձեզ՝ թէ ինչ պէտք է խօսել։
13 Եւ ժողովրդիցը մէկն ասեց նորան. Վարդա-
պետ, իմ եղբօրն ասիր, որ ժառանգութիւնն ինձ
14 հետ բաժանէ։ Նա էլ ասեց նորան. Մարդ, ո՞վ
կարգեց ինձ ձեզ վերայ դատաւոր կամ բաժանա-
15 րար։ Եւ նորանց ասեց. Տեսէք և զգոյշ կացէք ա-
գահութիւնիցը, որ մարդիս ստացուածքի առա-
16 ւելութիւնիցը չէ նորա կեանքը։ Եւ նորանց մի
առակ խօսեց և ասեց. Մի հարուստ մարդի արտը
17 առատ պտուղ տուաւ։ Եւ նա իր մտքումը մտա-
ծում էր և ասում. Ի՞նչ անեմ, որ տեղ չ'ունիմ
18 որ իմ պտուղներն այնտեղ ժողովեմ։ Եւ ասեց.
Այս կ'անեմ. իմ շտեմարանները կ'քանդեմ, և
աւելի մեծերը կ'շինեմ, և իմ բոլոր բերքերն ու
19 բարիքները այնտեղ կ'ժողովեմ։ Եւ իմ անձին
կ'ասեմ. Ով անձն, շատ բարիքներ ունիս շատ

տարիների համար ամբարուած. հանգստացիր, կեր,
20 խմիր, զուարճացիր։ Բայց Աստուած նորան ասեց.
Անմիտ. հէնց այս գիշեր հոգիդ քեզանից ետ կը
պահանջեն. ապա այս որ պատրաստեցիր՝ ո՞ւմ կը
21 լինի։ Այսպէս էլ նա՝ որ իր անձի համար գանձ է
հաւաքում, և Աստուծով չէ հարուստ։
22 Իր աշակերտներին էլ ասեց. Դորա համար ա-
սում եմ ձեզ. հոգս մի անէք ձեր կեանքի հա-
մար՝ թէ ինչ պիտի ուտէք. ոչ էլ մարմնի համար՝
23 թէ ինչ պիտի հագնէք։ Հոգին աւելի է կերակու-
24 րիցը, և մարմինը՝ հագուստիցը։ Մտիկ արէք ագ-
ռաւներին. որ ոչ սերմում են և ոչ հնձում են.
որոնք ոչ շտեմարաններ ունին և ոչ ամբարներ, և
Աստուած կերակրում է նորանց. դուք ո՞րքան ա-
25 ւելի արժէք ունիք թռչուններիցը։ Ձեզանից ո՞վ
կարող է իր հոգս անելով իր հասակի վերայ մի
26 կանգուն աւելացնել։ Արդ եթէ ամենափոքր բա-
նի համար կարող չէք, ի՞նչու էք ուրիշ բաների
27 համար հոգս անում։ Մտիկ արէք շուշաններին.
ինչպէս են մեծանում. ոչ ջանք են անում և ոչ
մանում. բայց ասում եմ ձեզ Սողոմոնն էլ իր
բոլոր փառքի մէջ նորանց մէկի նման չ՚հագաւ։
28 իսկ եթէ յանդի խոտն, որ այսօր կայ և էգուց
փռան մէջ է գցվում, Աստուած այնպէս է հագ-
ցնում, ո՞րքան ևս առաւել ձեզ, թերահաւատ-
29 ներ։ Եւ դուք մի որոնէք թէ ինչ ուտէք կամ
30 ինչ խմէք, և մի գրգռուիք։ Որովհետև այդ բոլոր
բաներն աշխարհքի հեթանոսներն են որոնում. բայց
31 ձեր Հայրը գիտէ՝ որ դորանք ձեզ պէտք են։ Սա-
կայն Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէք, և այդ
32 բոլորը կ՚աւելանայ ձեզ։ Մի վախենար, փոքր հօտ.
որովհետև ձեր Հայրը հաճեցաւ, որ արքայութիւ-
33 նը տայ ձեզ։ Ձեր ստացուածքը ծախեցէք և ողոր-

մութիւն տուէք. ձեզ համար չ՚հինացող քսակներ
շինեցէք՝ անպակաս գանձ՝ երկնքումը, որտեղ գող
34 չէ մօտենում և ոչ էլ ցեց է ապականում։ Որով-
հետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր
35 սրտերը կ՚լինին։ Թող ձեր գօտիները պինդ կապ-
36 ուած լինին մէջքին, և ճրագները վառուած։ Եւ
դուք նման եղէք մարդկանց, որ սպասում են ի-
րանց տիրոջը, թէ նա երբ ետ կ՚դառնայ հարսա-
նիքից. որ երբոր գայ և դուռը թակէ, շուտով
37 բանան նորա համար։ Երանի այն ծառաներին, որ
տէրը գալիս՝ արթուն գտնէ նորանց. Ճշմարիտ ա-
սում եմ ձեզ, թէ գօտին մէջքը կ՚կապէ և նո-
րանց սեղան կ՚նստեցնէ և առաջ եկած կ՚ծառայէ
38 նորանց։ Եւ եթէ երկրորդ կամ երրորդ պահին
գայ՝ և այնպէս գտնէ, երանի այն ծառաներին։
39 Բայց սա իմացէք, որ եթէ տան տէրը գիտենար՝
թէ գողն ո՛ր ժամին կ՚գայ. արթուն կ՚կենար և
40 թող չէր տալ իր տունը ծակել։ Արդ դուք էլ
պատրաստ եղէք, որովհետև այն ժամին, որ չէք
կարծում, մարդի Որդին կ՚գայ։
41 Եւ Պետրոսը ասեց նորան. Տէր, այդ առակը
42 մե՞զ ես ասում, թէ ամենքին էլ։ Տէրն էլ ասեց.
Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ և իմաստուն տըն-
տեսը, որին իր տէրը իր գերդաստանի վերայ կար-
գեց, որ նորանց կերակուրը տայ ժամանակին։
43 Երանի այն ծառային, որ իր տէրը՝ երբոր գայ,
44 այնպէս անելիս գտնէ նորան։ Ճշմարիտ ասում եմ
ձեզ, թէ իր բոլոր ստացուածքների վերայ կ՚դնէ
45 նորան։ Բայց եթէ այն ծառան իր սրտումն ասէ,
իմ տէրն ուշանում է գալու, և սկսէ ծառաներին
և աղախիններին ծեծել, ուտել ու խմել և արբե-
46 նալ, կ՚գայ այն ծառայի տէրն այն օրը, որ նա չէ
սպասում, և այն ժամին, որ նա չ՚գիտէ, և նորան

միջիցը կ'կտրէ, և նորա բաժինն անհաւատարիմ-
47 ների հետ կ'դնէ։ Եւ այն ծառան, որ իր տիրոջ
կամքը գիտենալով չէ պատրաստել և ոչ էլ ա-
48 րել նորա կամքի պէս, շատ ծեծ կ'ուտէ։ Եւ նա
որ չ'գիտենալով ծեծի արժանի բան գործեց, քիչ
կ'ծեծուի. այն ամենին որ շատ տրուեց՝ նորանից
շատ կ'ուզուի. և ում որ շատ պահ տրուեց՝ նո-
րանից էլ աւելի կ'պահանջեն։
49 Ես եկայ որ կրակ գցեմ երկրիս վերայ. և ի՞նչ
50 ուզում եմ, եթէ արդէն իսկ բորբոքուել է։ Բայց
մի մկրտութիւն ունիմ մկրտուելու. և ի՜նչպէս
51 հոգս եմ քաշում, մինչև որ կատարուի։ Կարծո՞ւմ
էք թէ ես եկայ խաղաղութիւն տալ երկրիս վե-
52 րայ. Ոչ, ասում եմ ձեզ, այլ բաժանմունք։ Որով-
հետև այսուհետև հինգ հոգի մէկ տան մէջ բա-
53 ժին բաժին կ'լինին, երեքը երկուսի դէմ, և եր-
կուսն երեքի դէմ։ Հայրը կ'բաժանուի որդուցը,
և որդին հօրիցը, մայրն աղջկանիցը, և աղջիկը մօ-
րիցը, սկեսուրը հարսիցը, և հարսն իր սկեսրիցը։
54 Եւ ժողովուրդներին էլ ասեց. Երբոր տեսնում
էք արևմուտքիցն ամպ դուրս գալիս, շուտով ա-
55 սում էք. Անձրև կ'գայ, և այնպէս է լինում. Եւ
հարաւային քամին փչելիս, ասում էք՝ թէ Շոգ
56 կ'լինի, և այնպէս է լինում. Կեղծաւորներ, երկրի
և երկնքի երեսը գիտէք փորձել. բայց ի՞նչպէս չէք
57 այս ժամանակը փորձում։ Եւ ի՞նչու իսկ ձեզանից
58 էլ չէք ընտրում արժանին։ Երբոր քո ոսոխի հետ
իշխանի մօտ ես գնում, ճանապարհին տուր տալի-
քը, որ նորա ձեռիցն ազատուիս. մի գուցէ քեզ
դատաւորի մօտ քաշէ, և դատաւորը քեզ դահ-
59 ճին մատնէ, և դահիճը բանտի մէջ գցէ։ Ասում
եմ քեզ. Այնտեղից դուրս չես գալ, մինչև որ
վերջի լուման էլ չ'վճարես։

ԳԼ. ԺԳ.

1 Այն ժամանակը եկան ոմանք և պատմեցին նորան
այն Գալիլէացիների մասին, որոնց արիւնը Պիղա-
2 տոսը իրանց զոհի հետ խառնեց։ Յիսուսն էլ պա-
տասխանեց և ասեց նորանց. Կարծո՞ւմ էք, թէ
այդ Գալիլէացիներն աւելի մեղաւոր էին քան թէ
բոլոր Գալիլէացիները, որ այդպիսի բաներ քաշե-
3 ցին։ Ոչ, ասում եմ ձեզ. այլ եթէ չ'ապաշխա-
4 րէք, ամենքդ էլ այնպէս կ'կորչէք. Կամ այն
տասնևութ հոգին, որոնց վերայ Սելովամի միջի
աշտարակը վայր ընկաւ, և նորանց սպանեց. կար-
ծո՞ւմ էք, թէ նորանք աւելի պարտաւոր էին
քան թէ Երուսաղէմումը բնակող բոլոր մարդիկը։
5 Ո՛չ, ասում եմ ձեզ. այլ եթէ չ'ապաշխարէք,
ամենքդ էլ այնպէս կ'կորչէք։
6 Այս առակն էլ ասեց. Մի մարդ իր այգու մէջ
մի թզենի էր տնկել. և եկաւ, նորա վերայ պը-
7 տուղ որոնելու, և չ'գտաւ։ Եւ այգեպանին ասեց.
Ահա երեք տարի է, որ գալիս եմ պտուղ որոնե-
լու այդ թզենու վերայ, և չեմ գտնում. կտրիր
8 դորան, ի՞նչու դա երկիրն էլ խափանէ։ Նա էլ
պատասխանեց և ասեց. Տէր, այս տարի էլ թող
դորան, մինչև որ դորա չորս կողմովը փորեմ և
9 աղբ ածեմ, Թերևս պտուղ բերէ, ապա եթէ ոչ,
եկող տարի կտրիր դորան։
10 Եւ ժողովարաններից մէկումը սովորեցնում էր
11 շաբաթ օրը։ Եւ ահա մի կին կար, որ հիւանդու-
թեան ոգի ունէր տասնևութ տարից ի վեր. և
կծկուած էր, և ամենևին չէր կարողանում ուղիղ
12 կանգնել։ Եւ Յիսուսը նորան տեսնելով, իրան մօտ
կանչեց և ասեց նորան. Ով կին, արձակուած ես
13 քո հիւանդութիւնիցը։ Եւ ձեռքը դրաւ նորա

վերայ, և նա շուտով ուղղուեցաւ և փառաւորում
14 էր Աստուծուն։ Իսկ ժողովարանի գլխաւորը շատ
բարկացած, որ Յիսուսը շաբաթ օրը բժշկեց, պա-
տասխանեց և ասեց ժողովրդին. Վեց օր կայ, որ
նորանցում պէտք է գործել. հիմա այն օրերը ե-
15 կէք բժշկուեցէք, և ոչ թէ շաբաթ օրը։ Տէրն էլ
պատասխանեց նորան և ասեց. Կեղծաւոր, ձեզա-
նից ամեն մէկը շաբաթ օրն իր եզը կամ էշը չէ՞
արձակում մսուրից և տանում ջուր տալիս։
16 Բայց սա՝ Աբրահամի աղջիկը լինելով, որին սա-
տանան ահա տասնևութ տարի է որ կապել էր, ար-
ժան չէ՞ր որ շաբաթ օրն այն կապանքիցն արձակ-
17 ուէր։ Եւ երբոր նա այս ասեց, ամօթով էին լի-
նում ամենքը, որ հակառակում էին նորան. և բո-
լոր ժողովուրդն ուրախանում էր այն ամեն փա-
ռաւոր գործերի համար, որ նորանով լինում էին։
18 Եւ ասում էր. Աստուծոյ արքայութիւնն ինչի՞
19 նման է. և ի՞նչի նմանեցնեմ նորան։ Մանանեխի
հատի նման է, որը մի մարդ առաւ իր պարտէզի
մէջ ցանեց. և մեծացաւ և մեծ ծառ եղաւ, և
երկնքի թռչունները նորա ճղերի վերայ բնակուեցին։
20 Եւ դարձեալ ասեց. ինչի՞ նմանեցնեմ Աստուծոյ
21 արքայութիւնը. Նման է խմորի. որ նորան մի կին
առաւ և երեք չափ ալիւրի մէջ թաղցրեց, մին-
չև որ բոլորը խմորուեցաւ։
22 Եւ ման էր գալիս քաղաքները և գիւղերը՝ և
սովորեցնում էր. և ճանապարհ ընկած գնում էր
23 դէպի Երուսաղէմ. Եւ մէկն ասեց նորան. Տէր,
միթէ քիչ են փրկուողները. Նա էլ ասեց նորանց.
24 Ջանք արէք որ նեղ դռնովը ներս մտնէք. որովհե-
տև ասում եմ ձեզ, Շատերը կ'ուզեն մտնել և
25 չեն կարողանալ։ Նորանից յետոյ որ տան տէրն
կ'ելլէ և դուռը կ'փակէ. և կ'սկսէք դուրսը կանգ-

նել և դուռը թակել և ասել. Տէր Տէր, բաց
մեզ. և նա պատասխանելով կ'ասէ ձեզ. Չեմ
26 ճանաչում ձեզ, թէ ինչ տեղից էք։ Այն ժամա-
նակ կ'սկսէք ասել. Մենք քո առաջին կերանք և
խմեցինք, և դու մեր հրապարակներումը սովորե-
27 ցրիր։ Եւ կ'ասէ. Ասում եմ ձեզ, Ես չեմ ճանա-
չում ձեզ, թէ ի՛նչ տեղից էք. հեռու կացէք ին-
28 ձանից, բոլոր անիրաւութիւն գործողներդ։ Այն-
տեղ կ'լինի լացը և ատամների կրճտելը. երբոր կը
տեսնէք Աբրահամին և Իսահակին և Յակոբին և
բոլոր մարգարէներին Աստուծոյ արքայութեան մէջ,
29 իսկ ձեզ՝ դուրս հանած։ Եւ կ'գան արևելքից և
արևմուտքից, և հիւսիսից և հարաւից, և կ'նըս-
30 տեն Աստուծոյ արքայութիւնումը։ Եւ ահա յե-
տիններ կան՝ որ առաջիններ կ'լինին. և առաջիններ
կան՝ որ յետիններ կ'լինին։
31 Նոյն օրումը մի քանի փարիսեցիներ մօտ եկան
և նորան ասեցին. Դուրս եկ և գնա այստեղից. ո-
րովհետև Հերովդէսը կամենում է քեզ սպանել։
32 Եւ նորանց ասեց. Գնացէք ասեցէք այն աղուէսին.
Ահա դևեր եմ հանում և բժշկութիւններ եմ
կատարում այսօր և էգուց. և երրորդ օրը կ'կա-
33 տարուիմ։ Սակայն այսօր և էգուց և միւս օրը
պէտք է գնամ. որովհետև կարելի չէ որ մի մար-
34 գարէ Երուսաղէմից դուրս կորչի։ Երուսաղէմ,
Երուսաղէմ, մարգարէները կոտորող, և քեզ մօտ
ուղարկուածները քարկոծող. քանի՞ անգամ կա-
մեցայ քո որդիները ժողովել ինչպէս հաւն իր ձա-
գերը թևերի տակն է ժողովում. և չ'կամեցաք։
35 Ահա ձեր տունը աւերակ է թողվում ձեզ. բայց
ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ինձ էլ չէք տես-
նիլ, մինչև գայ ժամանակն, որ ասէք. Օրհնեալ է
Տիրոջ անունով եկողը։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ, երբոր նա մի շաբաթ օր փարիսեցինե-
րի իշխաններից մէկի տունը մտաւ հաց ուտելու. և
2 նորանք սպասում էին նորան։ Եւ ահա մի ջրգող-
3 ուած մարդ կար նորա առաջին։ Եւ Յիսուսը պա-
տասխանեց և օրինականներին և փարիսեցիներին
ասեց թէ Արժա՞ն է շաբաթ օրը բժշկութիւն ա-
4 նել։ Եւ նորանք լռեցին. և նա բռնեց բժշկեց նո-
5 րան և արձակեց։ Եւ պատասխանեց նորանց և ա-
սեց. Ձեզանից որի՞ էշը կամ եզը ջրհորի մէջ ընկնի,
6 և նա շուտով չի հանիլ նորան շաբաթ օրը։ Եւ չը
կարողացան պատասխանել նորան այդ բանի համար։
7 Եւ այն կանչուած մարդկանց էլ մի առակ խօ-
սեց, տեսնելով՝ թէ ինչպէս առաջի տեղերն էին
8 ընտրում. և ասեց նորանց. Երբոր մէկից հարսա-
նիք ես կանչվում, մի նստիր առաջի բարձի վերայ.
մի գուցէ քեզանից մի աւելի պատուաւորը լինի
9 կանչուած նորա կողմից։ Եւ նա՝ որ քեզ և նորան
կանչեց, գայ և քեզ ասէ. Սորան տեղ տուր. և
այն ժամանակ սկսես ամօթով վերջի տեղը նստել։
10 Բայց երբոր կանչվում ես, գնա վերջի տեղը նըս-
տիր. որպէս զի, երբոր քեզ կանչողը գայ, ասէ
քեզ. Բարեկամ, վերև նստիր. այն ժամանակ քեզ
11 հետ նստողների առաջին փառք կ'լինի քեզ։ Որով-
հետև ամեն ով որ իր անձը բարձրացնում է՝ կը
խոնարհուի. և ով որ իր անձը խոնարհեցնում է,
կ'բարձրանայ։
12 Եւ իրան կանչողին էլ ասեց. Երբոր ճաշ կամ
ընթրիք ես անում, մի կանչիր քո բարեկամներին,
և ոչ քո եղբայրներին, և ոչ քո ազգականներին,
և ոչ քո հարուստ հարևաններին, մի գուցէ նո-

րանք էլ նորա փոխարէն կանչեն քեզ և հատու-
13 ցում լինի քեզ։ Այլ երբոր հացկերութիւն ես
անում, կանչիր աղքատներին, խեղերին, կաղերին,
14 կոյրերին։ Եւ երանելի կ'լինիս. որովհետև բո՛ն չ'ու-
նին որ փոխարէն վճարեն քեզ. որովհետև ար-
դարների յարութեան ժամանակին կ'լինի քեզ
հատուցումը։
15 Եւ երբոր սեղան նստողներից մէկն այս բաները
լսեց, նորան ասեց. Երանի նորան, որ Աստուծոյ
16 արքայութիւնումը հաց կ'ուտէ։ Եւ նա ասեց նո-
րան. Մի մարդ մեծ ընթրիք արաւ և շատերին
17 հրաւիրեց։ Եւ ընթրիքի ժամանակին իր ծառան
ուղարկեց, որ հրաւիրածներին ասէ. Եկէք, որով-
18 հետև արդէն ամենը պատրաստ է։ Եւ ամենքն
սկսեցին մէկ մէկ ետ քաշուիլ. առաջինն ասեց
նորան. Ագարակ առայ, և պէտք է գնամ՝ նորան
տեսնեմ. աղաչում եմ քեզ, ինձ հրաժարուած
19 համարիր։ Եւ միւսն ասեց. Հինգ լուծ եզ առայ,
և գնում եմ որ նորանց փորձեմ. աղաչում եմ
20 քեզ, ինձ հրաժարուած համարիր։ Եւ միւսն ա-
սեց. Կին եմ առել, և նորա համար չեմ կարող
21 գալ։ Եւ այն ծառան եկաւ, այս բաները պատմեց
իր տիրոջը. այն ժամանակ տան տէրը բարկացած
ասեց իր ծառային. Դուրս գնա շուտով քաղաքի
հրապարակները և փողոցները, և աղքատներին և
խեղերին, և կաղերին և կոյրերին մտցրու այստեղ։
22 Եւ ծառան ասեց. Տէր, եղաւ ինչպէս հրամայե-
23 ցիր, և դեռ էլ տեղ կայ։ Եւ տէրն ասեց ծա-
ռային. Դուրս գնա ճանապարհները և ցանգերը,
24 և ստիպիր որ մտնեն, որ իմ տունը լցուի։ Որով-
հետև ասում եմ ձեզ, թէ այն կանչուած մարդ-
կանցից ոչ մէկն իմ ընթրիքը չի ճաշակիլ։
25 Եւ շատ ժողովուրդներ գնում էին նորա հետ.

26 և դարձաւ նորանց ասեց. Եթէ մէկն ինձ մօտ
գայ, և չ'ատէ իր հօրը և մօրը, կնոջը և որդինե-
րին, և եղբայրներին և քոյրերին, և հէնց իր ան-
27 ձին էլ. նա չէ կարող իմ աշակերտ լինիլ։ Եւ
ով որ իր խաչը վեր չ'առնէ և իմ ետևից գայ, նա
28 չէ կարող իմ աշակերտ լինիլ։ Որովհետև ձեզա-
նից ո՞վ է, որ կամենայ աշտարակ շինել, և առաջ
չ'նստի և ծախսը հաշուէ թէ աւարտելու համար
29 բաւական բան ունի՞։ Որ մի գուցէ երբոր հիմքը դնէ
և չ'կարողանայ աւարտել, ամեն տեսնողներն սկը-
30 սեն ծաղր անել նորան, Եւ ասել. Թէ Այս մարդն
31 սկսեց շինել, և չ'կարողացաւ աւարտել։ Կամ ո՞ր
թագաւոր է, որ գնայ ուրիշ թագաւորի հետ
պատերազմ անելու. մի՞թէ չի նստել առաջ խոր-
հուրդ անիլ՝ թէ տասը հազարով կարո՞ղ է դէմ
կենալ նորան, որ քսան հազարով գալիս է իր վե-
32 րայ։ Ապա թէ ոչ, քանի որ նա հեռու է, պատ-
գամաւոր կ'ուղարկէ՝ և կ'աղաչէ որ խաղաղու-
33 թիւն անէ։ Արդ այսպէս էլ ձեզանից ամեն մէկն,
որ իր բոլոր ինչքիցը չ'հրաժարուի, չէ կարող ինձ
34 աշակերտ լինել։ Աղը լաւ բան է. բայց եթէ աղն
35 անհամանայ, ի՞նչով պիտի համեղանայ։ Ոչ հողի
համար է պիտանի և ոչ աղբի համար, դուրս կը
գցեն նորան. ով որ լսելու ականջ ունի, թող լսէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորներն և մեղաւորները մօտե-
2 նում էին նորան, որ լսեն նորանից։ Եւ փարիսե-
ցիներն և դպիրները տրտնջում էին և ասում, թէ
Սա ընդունում է մեղաւորներին և նորանց հետ
ուտում։
3 Եւ այս առակն ասեց նորանց։ (4) Ձեզանից

ո՞վ է այն մարդը, որ հարիւր ոչխար ունենայ, և
նորանցից մէկը կորցնէ. չի՞ թողնիլ իննսուն և ինը
անապատումը, և այն կորածի ետևից գնալ, մինչև
5 որ գտնէ նորան։ Եւ երբոր գտնէ, ուրախանալով
6 իր ուսերի վերայ կ'դնէ նորան։ Եւ տուն գալով,
բարեկամներին և դրացիներին կ'կանչէ և նորանց
կ'ասէ. Ուրախացէք ինձ հետ. որովհետև իմ կո-
7 րած ոչխարը գտայ։ Ասում եմ ձեզ, թէ այսպէս
ուրախութիւն կ'լինի երկնքումը մէկ մեղաւորի հա-
մար, որ ապաշխարէ, քան թէ իննսուն և ինն ար-
դարների համար, որոնց ապաշխարութիւն պէտք
8 չէ։ Կամ ո՞վ է այն կինը, որ տասը դրամ ունե-
նայ, և եթէ մէկ դրամ կորցնէ, ճրագ չի՞ վառիլ
և տունն աւելել և սաստիկ որոնել, մինչև որ
9 գտնէ։ Եւ երբոր կ'գտնէ, բարեկամներին և դրա-
ցիներին կ'կանչէ և կ'ասէ. Ուրախացէք ինձ հետ.
10 որովհետև դրամը գտայ, որ կորցրել էի։ Ասում
եմ ձեզ, այսպէս էլ Աստուծոյ հրեշտակների ա-
ռաջին ուրախութիւն կ'լինի մէկ մեղաւորի հա-
մար որ կ'ապաշխարէ։
11 Եւ ասեց. Մի մարդ երկու որդի ունէր. (12) Եւ
նորանցից փոքրն ասեց հօրը. Հայր, տուր ինձ ինչ
որ բաժին կ'հասնէ ինձ ստացուածքիցդ, և նա ապ-
13 րանքը բաժանեց նորանց։ Եւ շատ օր չ'անցած՝
փոքր որդին ամեն բաները ժողովեց հեռու երկիր
գնաց. և այնտեղ իր ստացուածքը վատնեց, անա-
14 ռակ ապրելով։ Եւ երբոր բոլորը հատցրեց, սաս-
տիկ սով եղաւ այն երկրումը և ինքն սկսեց չքա-
15 ւորել։ Եւ գնաց այն երկրի քաղաքացիների մէկի
մօտ մտաւ. և նա նորան ուղարկեց իր յանդը որ
16 խոզ արածեցնէ։ Եւ նա ցանկանում էր՝ իր փորն
լցնել այն եղջիւրներովը, որ խոզերն ուտում էին,
17 բայց ոչ ով չէր տալիս նորան։ Եւ ինքն իրան գա-

լով ասեց. Քանի՛ վարձկաններ ունի իմ հայրը՝ հա-
ցով լցուած. և ես այստեղ սովամահ կորչում եմ։
18 Վեր կենամ գնամ իմ հօր մօտ, և նորան ասեմ.
19 Հայր, մեղանչեցի երկնքի դէմ և քո առաջին։ Եւ-
այլ ես արժանի չեմ քո որդի կոչուելու. ինձ քո
20 վարձկաններից մէկի պէս արա։ Եւ վերկացաւ եկաւ
իր հօր մօտ։ Եւ դեռ որ նա հեռու էր, հայրը
տեսաւ նորան և գութը շարժեց. և վազեց՝ նորա
21 վզովն ընկաւ, և համբուրեց նորան։ Եւ որդին ա-
սեց նորան. Հայր, մեղանչեցի երկնքի դէմ և քո
առաջին, և այլ ես չեմ արժանի քո որդի կոչուե-
22 լու։ Հայրն էլ ասեց իր ծառաներին. Առաջի պատ-
մուճանը հանեցէք և հագցրէք նորան, և մատանի
դրէք նորա ձեռքին, և կօշիկներ նորա ոտներին։
23 Եւ մսացու եզը բերէք մորթեցէք, և ուտենք՝ ու-
24 րախ լինենք. Որ այս իմ որդին մեռած էր, և կեն-
դանացաւ. և կորած էր, և գտնուեցաւ. և սկսեցին
25 զուարճանալ։ Եւ նորա մեծ որդին յանդումն էր.
և երբոր եկաւ տանը մօտեցաւ, երգերի և պար
26 գալու ձայնը լսեց։ Եւ ծառաներից մէկին կանչեց
27 իրան մօտ, հարցնում էր թէ այդ ի՞նչ է։ Նա էլ
ասեց նորան. Թէ Եղբայրդ եկել է, և քո հայրը
մսացու եզը մորթեց, որովհետև ողջ և առողջ ըն-
28 դունեց նորան։ Եւ նա բարկացաւ, և չէր ուզում
ներս մտնել, բայց հայրը դուրս եկաւ, աղաչում
29 էր նորան։ Նա էլ պատասխանեց և ասեց հօրը.
Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ, և
քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել. բայց ինձ
երբէք մի ուլ չ'տուիր, որ իմ բարեկամների հետ
30 ուրախ լինէի։ Իսկ երբոր այդ քո որդին եկաւ, որ
քո ստացուածքը պոռնիկների հետ կերաւ, մսացու
31 եզը մորթեցիր դորա համար։ Նա էլ ասեց նորան.
Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, և ա-

32 մեն ինչ որ իմն է՝ քոնն է։ Բայց ուրախ լինել և
խնդալ պէտք էր. որ այս քո եղբայրը մեռած էր
և կենդանացաւ. կորած էր և գտնուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ իր աշակերտներին էլ ասեց. Մի հարուստ
մարդ կար, որ մի տնտես ունէր. և նորանից գան-
գատ եղաւ նորան, իբր թէ նա վատնում է նորա
2 ստացուածքը։ Եւ նորան կանչեց և ասեց. Սա ի՞նչ
է որ ես լսում եմ քեզանից. տուր քո տնտեսու-
թեան համարը. որովհետև այլ ես կարող չես
3 տնտես լինել։ Տնտեսն էլ իր մտքումն ասեց. Ի՞նչ
անեմ, որ իմ տէրը տնտեսութիւնն ինձանից առ-
նում է. հերկել չեմ կարող, մուրանալու ամա-
4 չում եմ։ Գիտեմ ինչ կ'անեմ, որ՝ երբոր տնտե-
սութիւնից դուրս գամ, ինձ ընդունեն իրանց
5 տները։ Եւ իր տիրոջ պարտականներին մի մի իրան
մօտ կանչեց և ասեց առաջինին. Ի՞նչքան ես պար-
6 տական իմ տիրոջը։ Նա էլ ասեց. Հարիւր մար
ձէթ. և նորան ասեց. Առ գիրդ, և նստիր՝ շու-
7 տով գրիր յիսուն։ Յետոյ միւսին ասեց. Դո՞ւ ինչ-
քան ես պարտական. Նա էլ ասեց. Հարիւր քոռ
ցորեն. և նորան ասեց. Առ գիրդ և գրիր ութսուն։
8 Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին, որ իմաստու-
թիւնով գործեց. որովհետև այս աշխարհքի որդի-
քը լոյսի որդիներիցն իմաստուն են իրանց ցեղի
9 մէջ։ Եւ ես ասում եմ ձեզ. Անիրաւ մամոնայից
բարեկամներ արէք ձեզ համար. որ երբոր պա-
կասուիք, յաւիտենական բնակարանների մէջ ըն-
10 դունեն ձեզ։ Քիչ բանի մէջ հաւատարիմը, շատ
բանի մէջ էլ հաւատարիմ է. և քիչ բանի մէջ
11 անիրաւը, շատ բանի մէջ էլ անիրաւ է։ Արդ թէ

որ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չ՚եղաք,
12 ճշմարիտ հարստութիւնն ո՞վ կ՚տայ ձեր ձեռը։ Եւ
եթէ օտար բանի մէջ հաւատարիմ չ՚եղաք, ձերն
ո՞վ կ՚տայ ձեզ։
13 Ոչ մի ծառայ չէ կարող երկու տիրոջ ծառայել․
որովհետև կամ մինին կ՚ատէ և միւսին կ՚սիրէ․
կամ մինին կ՚պատուէ և միւսին կ՚արհամարհէ․
կարող չէք Աստուծոյ ծառայել և մամոնային։
14 Այս բոլոր բաները լսում էին փարիսեցիները, որ
արծաթասէր էին, և ծիծաղում էին նորա վերայ։
15 Եւ նորանց ասեց. Դուք էք, որ մարդկանց առա-
ջին ձեր անձերը արդարացնում էք, բայց Աստուած
գիտէ ձեր սրտերը․ որովհետև մարդկանց առաջին
16 բարձրը պիղծ է Աստուծոյ առաջին։ Օրէնքը և
մարգարէները մինչև Յովհաննէսն են. Նորանից յե-
տոյ Աստուծոյ արքայութիւնն է աւետարանվում,
և ամեն մարդ ջանք է անում ուժով մտնել նորա
17 մէջ։ Եւ աւելի հեշտ է որ երկինքն և երկիրս անց-
նեն, քան թէ օրէնքի մէկ պզտիկ նշանագիրը վայր
18 ընկնէ։ Ամեն ով որ արձակում է իր կինը և ու-
րիշն առնում, շնութիւն է գործում, և ով որ
մարդից արձակուած կին է առնում՝ շնութիւն է
գործում։
19 Եւ մի հարուստ մարդ կար, և շատ ազնիւ ծի-
րանի և բեհեզ էր հագնում. և ամեն օր փառա-
20 ւոր զուարճութիւն էր անում։ Մի աղքատ մարդ
էլ կար, անունը Ղազարոս. որ նորա դռան մօտ
21 գցուած էր խոցերով լիքը. Եւ ցանկանում էր իրան
կշտացնել այն փշրանքներից, որ հարուստի սեղա-
նից ընկնում էին. այլ և շներն էլ գալիս էին և
22 նորա խոցերը լիզում էին։ Եւ եղաւ որ աղքատը
մեռաւ, և հրեշտակները տարան նորան Աբրահամի
23 գոգը. հարուստն էլ մեռաւ՝ և թաղուեցաւ։ Եւ

դժոխքումն՝ մինչ տանջանքի մէջ էր գտնվում, իր
աչքերը բարձրացրեց, հեռուանց Աբրահամին տե-
24 սաւ, և Ղազարոսին էլ նորա գոգումը։ Եւ նա ա-
ղաղակեց և ասեց. Հայր Աբրահամ, ինձ ողորմիր,
և Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թրջէ
ջրով, և իմ լեզուն հովացնէ. որովհետև այս կրակի
25 բոցի մէջ տանջվում եմ։ Աբրահամն էլ ասեց.
Որդեակ, յիշիր, որ դու ընդունեցիր քո բարիքը
քո կեանքումը, և նմանապէս էլ Ղազարոսը՝ չար-
չարանքները. և հիմա սա այստեղ մխիթարվում է,
26 իսկ դու տանջվում ես։ Եւ ի վերայ այսր ամենայնի
մեր և ձեր մէջ մեծ անդունդ է հաստատուած,
որ այստեղից ձեզ մօտ անցնել ուզողները չ՚կարո-
27 ղանան, և ոչ էլ այդտեղից մեզ մօտ անցնեն։ Եւ
ասեց. Ուրեմն աղաչում եմ քեզ, հայր, որ դո-
28 րան ուղարկես իմ հօր տունը. Որովհետև ես հինգ
եղբայր ունիմ. որ նորանց վկայութիւն տայ, որ
29 նորանք էլ չ՚գան այս տանջանքի տեղը։ Աբրահամն
ասեց նորան, Նորանք Մովսէսին և մարգարէներին
30 ունին, թող նորանց լսեն։ Նա էլ ասեց. Ոչ, հայր
Աբրահամ, այլ եթէ մեռելներից մէկը նորանց մօտ
31 գնայ, կ՚ապաշխարեն։ Եւ նորան ասեց. Եթէ Մով-
սէսին և մարգարէներին ականջ չեն դնում, չեն
էլ համոզուիլ՝ եթէ մեռելներից մէկը յարութիւն
առնէ։

ԳԼ․ ԺԷ

1 Եւ աշակերտներին ասեց. Անկարելի է, որ գայ-
թակղութիւններ չ՚գան. բայց վայ նորան որի ձե-
2 ռովը կ՚գան։ Աւելի լաւ է նորան, որ նորա վզիցը
մի էշի ջաղացի քար կախուէր և ծովը գցուէր,
քան թէ այս փոքրներից մէկին գայթակղեցնէ։

3 Զգո՛յշ կացէք ձեր անձերին։ Եթէ քո եղբայրը
մեղանչէ քեզ դէմ, յանդիմանիր նորան․ և եթէ
4 ապաշխարէ, ներիր նորան։ Եւ եթէ օրը եօթն ան-
գամ քեզ դէմ մեղանչէ՝ և եօթն անգամ քեզ
մօտ դառնայ և ասէ՝ Ապաշխարում եմ, ներիր
նորան։
5 Եւ առաքեալներն ասեցին Տիրոջը․ Մեր հաւատքն
6 աւելացրու։ Եւ Տէրն ասեց․ Եթէ մանանեխի հա-
տի չափ հաւատք ունենայիք, այս թզենուն կ'ա-
սէիք․ Պոկուիր և ծովի մէջ տնկուիր, և նա կ'հնա-
զանդէր ձեզ։
7 Բայց ձեզանից ո՞վ է նա, որ մի հողագործ կամ
հովիւ ծառայ ունենայ, որ երբոր դաշտիցը գայ տուն
մտնէ, շուտով ասէ նորան, թէ Եկ սեղան նստիր։
8 Այլ չի՞ ասիլ նորան, Թէ պատրաստիր ինչ որ իրի-
կունս պիտի ուտեմ, և գօտիդ կապիր ինձ ծառա-
յիր, մինչև որ ուտեմ և խմեմ, և յետոյ դու էլ
9 կ'ուտես և կ'խմես։ Մի՞թէ այն ծառայիցը շնոր-
հակալ կ'լինի, որ այն բոլոր իրան հրամայուածներն
10 արաւ․ չ'կարծեմ։ Այնպէս էլ դուք, երբոր բոլոր
ձեզ հրամայուած բաներն անէք, ասեցէք, թէ
Մենք անպիտան ծառաներ ենք․ որովհետև այն ենք
արել, ինչ որ պարտական էինք անելու։
11 Եւ եղաւ՝ երբոր նա Երուսաղէմ էր գնում, ին-
քը Սամարիայի և Գալիլեայի միջովն էր անցնում,
12 Եւ նա մի գիւղ մտնելիս, տասը բորոտ մարդիկ
13 պատահեցան նորան, որ հեռուանց կանգնեցին, Եւ
իրանց ձայնը բարձրացրին և ասեցին․ Յիսուս՝ Վար-
14 դապետ, մեզ ողորմիր։ Եւ երբոր տեսաւ՝ ասեց
նորանց․ Գնացէք ձեր անձերը քահանաներին ցոյց
տուէք․ և եղաւ, որ նորանք գնալիս՝ սրբուեցան,
15 Եւ նորանցից մէկն, երբոր տեսաւ թէ բժշկուե-
ցաւ, ետ դառաւ՝ բարձր ձայնով փառաւորում

16 էր Աստուծուն։ Եւ իր երեսի վերայ ընկաւ նորա
ոտների առաջին, և գոհանում էր նորանից․ և ին-
17 քը Սամարացի էր։ Յիսուսն էլ պատասխանեց և
ասեց․ Չէ՞ որ տասն էլ սրբուեցան․ ապա այն ինն
18 ո՞ւր են։ Եւ դառնողներ չ'գտնուեցան, որ Աստու-
19 ծուն փառք տան, բացի այս այլազգին։ Եւ ասեց
նորան․ Վեր կաց՝ գնա․ քո հաւատքն ապրեցրեց
քեզ։
20 Երբոր փարիսեցիներից հարցուեցաւ, թէ Աս-
տուծոյ արքայութիւնն ե՞րբ պիտի գայ, պատաս-
խանեց նորանց և ասեց․ Աստուծոյ արքայութիւնը
21 դրսի նշանով չի գալ։ Ոչ էլ կ'ասեն, Թէ Ահա
այստեղ է, կամ՝ ահա այնտեղ է․ որովհետև ահա
Աստուծոյ արքայութիւնը հէնց ձեր ներսումն է։
22 Աշակերտներին էլ ասեց․ Օրեր կ'գան, որ դուք
կ'ցանկանաք մարդի Որդու օրերից մէկը տեսնել, և
23 չէք տեսնիլ։ Եւ ձեզ կ'ասեն՝ Ահա այստեղ է,
կամ՝ ահա այնտեղ է, չ'գնաք և ետևիցը չ'հետևիք։
24 Որովհետև ինչպէս կայծակն որ փայլում երկնքի
տակիցը՝ լոյս է տալիս մինչև երկնքի միւս տակը,
25 այնպէս էլ կ'լինի մարդի Որդին իր օրումը։ Բայց
առաջ պէտք է որ նա շատ չարչարուի և անարգուի
26 այս ազգիցը։ Եւ ինչպէս եղաւ Նոյի օրերումն, այն-
27 պէս էլ կ'լինի մարդի Որդու օրերումը։ Ուտում
էին և խմում էին՝ կին էին առնում՝ և մարդի էին
գնում, մինչև այն օրն որ Նոյը մտաւ տապանը, և
28 ջրհեղեղն եկաւ և ամենքին կորցրեց։ Նմանապէս
էլ ինչպէս Ղովտի օրերումն եղաւ․ ուտում էին,
խմում էին, առնում էին՝ ծախում էին, տնկում
29 էին՝ շինում էին։ Եւ այն օրն որ Ղովտը Սոդոմիցը
դուրս եկաւ, կրակ և ծծումբ տեղաց երկնքիցը և
30 ամենքին կորցրեց։ Նոյն կերպովն էլ կ'լինի այն
31 օրումը, որ մարդի Որդին կ'յայտնուի։ Այն օրումն

ով որ կտրի վերայ լինի և իր բաները տան մէջ,
թող չ'իջնէ նորանց առնելու. և յանդումը լինողն
32 էլ այնպէս թող ետ չ'դառնայ: Յիշեցէք Ղովտի
33 կինը: Ով որ ուզէ իր անձն ապրեցնել, կ'կորցնէ
նորան. և ով որ կորցնէ նորան, կ'ապրեցնէ նորան:
34 Ասում եմ ձեզ. նոյն գիշերումն երկու հոգի մէկ
մահիճի մէջ կ'լինին, մէկը կ'առնուի և միւսը կը
35 թողուի: Երկու հոգի միասին աղալու վերայ կ'լի-
նին, մէկը կ'առնուի և միւսը կ'թողուի. և երկու
հոգի արտումը կ'լինին, մէկը կ'առնուի և միւսը
36 կ'թողուի: Եւ պատասխանեցին և նորան ասեցին.
37 Տէր, ո՞րտեղ: Նա էլ ասեց նորանց. Որտեղ մար-
մինն է, արծիւներն էլ այնտեղ կ'հաւաքուին:

ԳԼ. ԺԸ

1 Մի՛առակ էլ ասեց նորանց՝ նորա վերայ թէ պէտք
է ամեն ժամանակ աղօթք անել և չ'ձանձրանալ:
2 Եւ ասեց. Մի դատաւոր կար մի քաղաքում, որ
Աստուածանից չէր վախենում, և մարդից չէր ամա-
3 չում: Եւ մի որբևայրի էլ կար այն քաղաքումը,
և նորա մօտ էր գալիս և ասում, Իրաւունք արա
4 ինձ իմ ոսոխիցը: Եւ նա մի ժամանակ չ'կամեցաւ.
նորանից յետոյ իր մտքումն ասեց. Թէև Աստուա-
ծանից չեմ վախենում, և մարդկանցից չեմ ամա-
5 չում, Սակայն որովհետև այս որբևայրին յոգնե-
ցնում է ինձ, իրաւունք անեմ նորան, որ վերջապէս
6 չ'գայ ինձ ձանձրացնէ: Եւ Տէրն ասեց. Լսեցէք թէ
7 անիրաւ դատաւորն ի՛նչ է ասում: Բայց Աստուած
մի՞թէ իր ընտրեալների համար իրաւունք չի անիլ,
որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա, թէև
8 նորանց վերայ երկայնամիտ էլ լինի: Ասում եմ
ձեզ թէ շուտով իրաւունք կ'անէ նորանց համար:

Սակայն մարդի Որդին գալիս՝ արդեօք հաւատք
կ'գտնէ՞ երկրի վերայ:
9 Ոմանց էլ, որ իրանցում վստահ էին, թէ ար-
դար են և ուրիշներին ոչինչ էին համարում, այս
10 առակն ասեց. Երկու մարդ վեր ելան տաճարն ա-
ղօթք անելու. մէկը փարիսեցի և միւսը մաքսաւոր:
11 փարիսեցին առանձին կանգնած այս էր աղօթք
անում. Ով Աստուած, գոհանում եմ քեզանից,
որ չեմ ինչպէս ուրիշ մարդիկը՝ յափշտակող, ան-
իրաւ, շնացող, կամ ինչպէս էլ այս մաքսաւորը.
12 Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում, և իմ
բոլոր ստացուածքներիցը տասանորդ եմ տալիս:
13 Եւ մաքսաւորը հեռու կանգնած իր աչքերն էլ չէր
կամենում դէպի երկինքը բարձրացնել. այլ իր
կուրծքը ծեծում էր և ասում. Ով Աստուած,
14 ողորմիր ինձ մեղաւորիս: Ասում եմ ձեզ, թէ սա
արդարացած իջաւ իր տունը քան թէ նա. որով-
հետև ամեն ինքն իրան բարձրացնողը կ'խոնարհուի,
և ինքն իրան խոնարհեցնողը կ'բարձրանայ:
15 Երեխաներ էլ էին բերում նորա մօտ, որ նորանց
դպչի. աշակերտներն էլ երբոր տեսան, յանդիմա-
16 նում էին նորանց: Բայց Յիսուսը նորանց իրան մօտ
կանչեց, և ասեց. Թոյլ տուէք երեխաներին ինձ
մօտ գալ, և մի արգիլէք դորանց. որովհետև այդ-
17 պիսիներինն է Աստուծոյ արքայութիւնը: Ճշմարիտ
ասում եմ ձեզ թէ Ով որ Աստուծոյ արքայու-
թիւնը չ'ընդունի ինչպէս երեխայ՝ նա չի մտնիլ նո-
րա մէջ:
18 Եւ մէկ իշխան հարցրեց նորան և ասեց. Բարի
վարդապետ, ի՞նչ գործեմ, որ յաւիտենական կեան-
19 քը ժառանգեմ: Յիսուսն էլ նորան ասեց. Ի՞նչու
ես ինձ բարի ասում. ոչ ով բարի չէ բացի մէկը՝
20 Աստուած: Պատուիրանքները գիտես. Մի շնար,

Մի սպանիր, Մի գողանար, Մի սուտ վկայիր,
21 Պատուիր քո հօրը և մօրը։ Նա էլ ասեց. Այդ
22 ամենն իմ երեխայութիւնիցը պահել եմ։ Յիսուսն
էլ երբոր այս լսեց՝ նորան ասեց. Մի բան տակա-
ւին պակաս է քեզ. ամեն ինչ որ ունիս՝ ծախիր,
և աղքատներին տուր, և գանձ կ'ունենաս երկն-
23 քումը, և եկ հետևիր ինձ։ Նա էլ այս լսելով
24 տրտմեց. որովհետև սաստիկ հարուստ էր։ Յիսուսն
էլ երբոր նորան տրտմած տեսաւ, ասեց. Ի՜նչպէս
դժուար կ'մտնեն Աստուծոյ արքայութիւնը նո-
25 րանք, որ ստացուածքներ ունին։ Որովհետև աւելի
հեշտ է որ ուղտն ասեղի ծակով անցնէ, քան թէ
26 հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ։ Եւ նո-
րանք որ լսեցին՝ ասում էին. Էլ ո՞վ կարող է
27 փրկուիլ։ Նա էլ ասեց. Այն բաներն որ կարելի
28 չեն մարդկանց մօտ, կարելի են Աստուծոյ մօտ։ Եւ
Պետրոսն ասեց. Ահա մենք բոլորը թողեցինք և քո
29 ետևից եկանք։ Նա էլ ասեց նորանց. Ճշմարիտ
ասում եմ ձեզ թէ Ոչ ով չ'կայ, որ թողել է
տուն, կամ ծնողներ, կամ եղբայրներ, կամ կին,
30 կամ որդիք՝ Աստուծոյ արքայութեան համար, Որ
բազմապատիկ չ'առնէ այս ժամանակումը, և այն
գալու աշխարհքումը յաւիտենական կեանքը։
31 Եւ այն տասներկուսին մօտն առաւ և ասեց
նորանց. Ահա վեր ենք ելնում Երուսաղէմ. և
կ'կատարուին մարգարէների ձեռովն մարդի Որդու
32 համար բոլոր գրուածները։ Որովհետև հեթանոս-
ներին կ'մատնուի, և ծաղր կ'լինի, կ'նախատուի, և
33 նորա վերայ կ'թքուի։ Եւ կ'ծեծեն կ'սպանեն նո-
34 րան. և երրորդ օրը յարութիւն կ'առնէ։ Եւ նո-
րանք սորանցից ոչինչ չ'իմացան, և խօսքը ծած-
կուած էր նորանցից, և ասածները չէին իմանում։
35 Եւ եղաւ, որ նա Երիքովին մօտենալիս, մի կոյր

ճանապարհի վերայ նստած մուրացկանութիւն էր
36 անում։ Եւ երբոր ժողովրդի անցնելը լսեց, հար-
37 ցնում էր՝ թէ Դա ինչ է։ Եւ պատմեցին նորան,
38 թէ Յիսուս Նազովրեցին է անցնում։ Եւ նա աղա-
ղակեց և ասեց. Յիսուս՝ որդի Դաւթի, ինձ ողոր-
39 միր։ Եւ նորանք՝ որ առաջից գնում էին, յանդի-
մանում էին նորան, որ լռէ. իսկ նա էլ աւելի էր
40 աղաղակում. Որդի Դաւթի, ինձ ողորմիր։ Յիսուսն
էլ կանգնեց և հրամայեց, որ նորան իրան մօտ բե-
րեն. և երբոր նա մօտ եկաւ, հարցրեց նորան և
41 ասեց. Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ. և նա
42 ասեց. Տէր, որ տեսնեմ։ Եւ Յիսուսն էլ ասեց նո-
43 րան. Տես. քո հաւատքը ապրեցրեց քեզ. Եւ իս-
կոյն տեսնում էր, և նորա ետևից գնում էր՝ Աս-
տուծուն փառաւորելով. և բոլոր ժողովուրդը որ
տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս Աստուծուն։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտած՝ Երիքովի միջովն անցնում էր։ (2) Եւ
ահա մի մարդ՝ անունով Զաքէոս կոչուած, որ նա
3 մաքսապետ էր, և ինքը հարուստ էր։ Եւ ուզում
էր Յիսուսին տեսնել թէ ով է, բայց բազմու-
թեան պատճառով չէր կարողանում. որովհետև
4 հասակով կարճ էր։ Եւ առաջ վազեց՝ վեր ելաւ
մի ժանտաթզենի, որ տեսնէ նորան. որովհետև
5 այնտեղովը պիտի անցնէր։ Եւ երբոր այն տեղն
եկաւ, Յիսուսը վեր նայեց և նորան ասեց. Զաքէ,
շուտ արա իջիր. որովհետև ինձ այսօր պէտք է քո
6 տանը կենալ։ Նա էլ շտապելով իջաւ և ուրա-
7 խութիւնով ընդունեց նորան։ Եւ բոլոր տեսնող-
ները տրտնջում էին և ասում թէ Մեղաւոր մար-
8 դի մօտ մտաւ հանգիստ առնելու։ Զաքէոսն էլ

կանգնեց և Տիրոջն ասեց. Տէր, ահա իմ ինչքերի
կէսն աղքատներին կ'տամ. և եթէ մէկին զրպար-
տութիւնով զրկել եմ՝ չորեքպատիկ կ'վճարեմ:
9 Յիսուսն էլ նորան ասեց թէ Այսօր փրկութիւն
եղաւ այս տանը. որովհետև սա էլ Աբրահամի որ-
10 դի է: Որովհետև մարդի Որդին եկաւ, որ որոնէ և
ապրեցնէ կորածին:
11 Եւ դեռ որ նորանք այս բաները լսում էին, մի
առակ աւելացրեց և ասեց, որովհետև Երուսա-
ղէմին մօտենում էր, և նորանք կարծում էին, թէ
Աստուծոյ արքայութիւնը իսկոյն յայտնուելու է:
12 Ապա ասեց. Մի ազնուական գնաց հեռու երկիր,
որ թագաւորութիւն առնէ իրան համար և ետ
13 դառնայ: Եւ իր տասը ծառաներին կանչեց, տասը
մնաս տուաւ նորանց, և ասեց նորանց. Բանեցրէք
14 մինչև որ գամ: Բայց նորա քաղաքացիներն ատում
էին նորան. և նորա ետևիցը պատգամաւորներ ու-
ղարկեցին և ասեցին. Չենք ուզում որ դա թա-
15 գաւորէ մեզ վերայ: Եւ եղաւ՝ որ նա թագաւո-
րութիւնն առած ետ դառաւ և ասեց որ կանչեն
այն ծառաներին, որոնց տուել էր արծաթը, որ
16 իմանայ թէ ով ինչ շահուեցաւ: Եւ առաջինն ե-
կաւ և ասեց. Տէր, քո մնասը շահեց տասը մնաս:
17 Եւ նորան ասեց. Լա՛ւ, բարի ծառայ, որովհետև
քիչումը հաւատարիմ եղար, տասը քաղաքի վե-
18 րայ իշխանութիւն ունեցիր: Եւ երկրորդն եկաւ և
19 ասեց. Տէր, քո մնասը հինգ մնաս շահեց: Նորան
20 էլ ասեց. Դու էլ հինգ քաղաքի վերայ եղիր: Եւ
ուրիշն էլ եկաւ և ասեց. Տէր, ահա քո մնասը՝ որ
21 վարշամակի մէջ պատած պահում էի: Որովհետև
վախենում էի քեզանից. որովհետև դու խիստ
մարդ ես. վեր ես առնում ինչ որ չես դրել, և
22 հնձում ես ինչ որ չես սերմել. Եւ ասեց նորան.

Քո բերանիցը դատում եմ քեզ, չար ծառայ.
գիտէիր որ ես խիստ մարդ եմ, որ վեր եմ առ-
նում ինչ որ չեմ դրել, և հնձում եմ ինչ որ
23 չեմ սերմել: Էլ ի՞նչու իմ արծաթը սեղանաւոր-
ներին չ'տուիր, որ ես գալի շահով ետ առնէի նո-
24 րան: Եւ այնտեղ կանգնողներին ասեց. Առէք դո-
25 րանից մնասը, և տուէք տասը մնասն ունեցողին: Եւ
26 նորան ասեցին. Տէր, տասը մնաս ունի: Սորա հա-
մար ասում եմ ձեզ, թէ ամեն ունեցողին կ'տրուի.
և չ'ունեցողից ինչ էլ որ ունի, վեր կ'առնուի:
27 Իսկ այն իմ թշնամիներին, որ չէին ուզում, որ
ես նորանց վերայ թագաւորեմ, այստեղ բերէք և
28 սպանեցէք իմ առաջին: Եւ երբոր այս ասեց, ա-
ռաջ գնաց, որ վեր ելնէ Երուսաղէմ:
29 Եւ եղաւ երբոր Բեթփագէին և Բեթանիային
մօտեցաւ, այն սարին մօտ՝ որ Ձիթենեաց սար է
կոչվում, իր աշակերտներից երկուսին ուղարկեց և
30 ասեց. Գնացէք այդ դիմացի գիւղը, և երբոր մէջը
մտնէք, մի կապած աւանակ կ'գտնէք, որի վերայ
երբէք ոչ մի մարդ նստած չէ. նորան արձակեցէք
31 բերէք: Եւ եթէ մէկը հարցնէ ձեզ՝ թէ ի՞նչու էք
արձակում, նորան այսպէս ասեցէք թէ Տիրոջը
32 պէտք է սա: Ուղարկուածներն էլ երբոր գնացին,
33 այնպէս գտան ինչպէս նորանց ասեց: Եւ նորանք
աւանակն արձակելիս՝ նորա տէրերն ասեցին նո-
34 րանց. Ի՞նչու էք արձակում այդ աւանակը: Նո-
35 րանք էլ ասեցին. Տիրոջը պէտք է սա: Եւ նորան
բերին Յիսուսի մօտ. և իրանց հանդերձները աւա-
36 նակի վերայ գցեցին, և Յիսուսին հեծեցրին: Եւ
նորա գնալու ժամանակին իրանց հանդերձները
37 փռում էին ճանապարհի վերայ: Եւ երբոր նա
արդէն մօտեցաւ Ձիթենեաց սարի զառիվայրին,
աշակերտների բոլոր բազմութիւնն ուրախութիւ-

նով սկսեց օրհնել Աստուծուն բարձր ձայնով այն
38 բոլոր զօրութիւնների համար, որ տեսել էին։ Եւ
ասում էին․ Օրհնեալ է Տիրոջը անունովը եկող
թագաւորը․ խաղաղութիւն լինի երկնքումը և փառք
39 բարձունքներումը ։ Եւ փարիսեցիներից ոմանք ժո-
ղովրդի միջիցը նորան ասեցին․ Վարդապետ, յան-
40 դիմանիր աշակերտներիդ։ Եւ նա պատասխանեց և
ասեց՝ Ասում եմ ձեզ՝ որ եթէ սորանք լռեն, քա-
րերն են աղաղակելու ։
41 Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ քաղաքը, լացաւ
42 նորա վերայ և ասեց․ Եթէ դո՛ւ էլ իմանայիր՝
գոնեա այս օրուայ օրը քո խաղաղութեան մասին․
43 բայց հիմա ծածկուեցաւ քո աչքերիցը։ Որովհետև
օրեր կ'գան քեզ վերայ, և քո թշնամիները չորս
կողմովդ պատնէշ կ'պատեն, և կ'պաշարեն քեզ և
44 ամեն կողմից քեզ կ'նեղացնեն․ Եւ հիմնայատակ
կ'անեն քեզ և քո որդիքն էլ քո միջումը․ և չեն
թողիլ քո միջումը քար քարի վերայ․ փոխանակ
որ չ'ճանաչեցիր քեզ այցելելու ժամանակը ։
45 Եւ տաճարը մտաւ սկսեց դուրս հանել նորա-
46 նում ծախողներին և առնողներին․ Եւ նորանց ա-
սեց․ Գրուած է Թէ իմ տունն աղօթքի տուն է, և
դուք նորան աւազակների այր էք արել ։
47 Եւ ամեն օր սովորեցնում էր նորանց տաճարու-
մը․ բայց քահանայապետները և դպիրները և ժո-
ղովրդի գլխաւորներն ուզում էին կորցնել նորան,
48 Եւ չէին գտնում թէ ինչ անեն․ որովհետև բոլոր
ժողովուրդը նորանից կախուած էր լսելով ։

ԳԼ․ Ի

1 Եւ եղաւ որ այն օրերի մէկին նա տաճարումը ժո-
ղովրդին սովորեցնելիս և աւետարանելիս, քահա-

նայապետները և դպիրները ծերերին հետ վերայ
2 հասան։ Եւ ասեցին նորան․ Ասիր մեզ, ի՞նչ իշխա-
նութիւնով ես անում այդ բաները, կամ ո՞վ է
3 այդ իշխանութիւնը քեզ տուողը։ Եւ նա պատաս-
խանեց և ասեց նորանց․ Ես էլ ձեզ մի բան հար-
4 ցնեմ, և ասեցէք ինձ․ Յովհաննէսի մկրտութիւնը
5 երկնքի՞ցն էր, թէ մարդկանցից ։ Եւ նորանք ի-
6 րանց միջումը միտք արին և ասեցին․ Եթէ ասենք,
Երկնքիցը․ կ'ասէ․ Ապա ի՞նչու չ'հաւատացիք նո-
րան․ և եթէ ասենք, Մարդկանցից, բոլոր ժողո-
վուրդը կ'քարկոծէ մեզ․ որովհետև համոզուած են
7 թէ Յովհաննէսը մարգարէ է։ Եւ պատասխանեցին
8 թէ չ'գիտեն, թէ ո՛ր տեղից է ։ Եւ Յիսուսն էլ
նորանց ասեց․ Ես էլ ձեզ չեմ ասիլ՝ թէ ինչ իշ-
խանութիւնով եմ անում այս բաները։
9 Եւ սկսեց այս առակն ասել ժողովրդին․ Մի
մարդ այգի տնկեց, և մշակների տուաւ նորան, և
10 ինքն օտարութիւն գնաց շատ ժամանակով։ Եւ
ժամանակին մի ծառայ ուղարկեց մշակների մօտ,
որ այգու պտղից իրան տան․ բայց մշակները ծե-
11 ծեցին նորան և դատարկ ետ ուղարկեցին։ Եւ նո-
րա վերայ մի ուրիշ ծառայ էլ ուղարկեց․ և նո-
րանք նորան էլ ծեծեցին, անպատիւ արին և դա-
12 տարկ ետ ուղարկեցին ։ Եւ նորա վերայ մի երրոր-
դին էլ ուղարկեց․ Նորանք նորան էլ վիրաւորեցին
13 դուրս հանեցին ։ Եւ այգու տէրն ասեց․ Ի՞նչ ա-
նեմ․ իմ սիրելի որդին ուղարկեմ․ գուցէ նորան
14 տեսնելով ամաչեն ։ Բայց մշակներն երբոր նորան
տեսան՝ իրար հետ խորհուրդ արին և ասեցին․ Սա
է ժառանգը․ եկէք սպանենք սորան․ որ ժառան-
15 գութիւնը մերը լինի։ Եւ այգուցը դուրս հանեցին
նորան և սպանեցին․ արդ՝ այգու տէրն ի՞նչ կ'անէ
16 նորանց ։ Կ'գայ և այն մշակներին կ'կորցնէ, և այ-

գին ուրիշներին կ'տայ։ Լսողներն էլ ասեցին. Քաւ
17 լիցի։ Իսկ նա մտիկ տալով նորանց և ասեց. Ապա
ի՞նչ է այն գրուածը թէ Այն քարն՝ որ շինողներն
18 անարգեցին նա անկիւնի գլուխ եղաւ։ Ամէն այս
քարի վերայ ընկնողը կ'փշրուի, և ում վերայ որ
19 նա ընկնի, կ'ջարդէ նորան։ Եւ քահանայապետներն
և դպիրները նոյն ժամումն ուզում էին ձեռք ձգել
նորա վերայ, բայց ժողովրդիցը վախեցան. որովհետև
իմացան, որ իրանց համար ասեց այն առակը։
20 Եւ դարանամուտ լինելով խաբեբայ մարդիկ ու-
ղարկեցին, որ կեղծաւորութիւնով իրանց անձերն
արդար էին ցոյց տալիս, որ խօսքով բռնեն նորան՝
տէրութեան և կուսակալի իշխանութեանը նորան
21 մատնելու համար։ Եւ նորան հարցրին և ասեցին.
Վարդապետ, գիտենք որ ուղիղ ես խօսում և սո-
վորեցնում, և երեսպաշտութիւն չես անում. այլ
ճշմարտութիւնով սովորեցնում ես Աստուծոյ ճա-
22 նապարհը։ Արժա՞ն է մեզ՝ Կայսրին հարկ տալ թէ
23 ոչ։ Նորանց խորամանկութիւնը հասկանալով, ա-
24 սեց նորանց. Ի՞նչու էք ինձ փորձում. Ցոյց տուէք
ինձ մի դահեկան։ Ո՞ւմ պատկերը և գիրն ունի
25 սա։ Պատասխանեցին և ասեցին. Կայսեր։ Եւ նա
ասեց նորանց. Ուրեմն կայսրինը կայսրին տուէք, և
26 Աստուծունը Աստուծուն։ Եւ չ'կարողացան խօս-
քով բռնել նորան ժողովրդի առաջին. և նորա
պատասխանի վերայ զարմանալով լռեցին։
27 Սադուկեցիներիցը, որ հակառակում են թէ յա-
րութիւն չ'կայ, ոմանք մօտ եկան և հարցրին նո-
28 րան, Եւ ասեցին. Վարդապետ, Մովսէսը գրեց
մեզ, Եթէ մէկի եղբայրը մեռնէ, որ կին ունենայ,
և ինքն անզաւակ մեռնէ, որ նորա եղբայրն այն
կինն առնէ և իր եղօր համար զաւակ յարուցա-
29 նէ։ Հիմա եօթն եղբարք կային, և առաջինը կին

30 առաւ և առանց զաւակի մեռաւ։ Եւ երկրորդն
առաւ այն կինը, և նա էլ մեռաւ առանց զաւա-
31 կի։ Երրորդն էլ առաւ նորան. այսպէս այն եօթն
32 էլ, և որդիք չ'թողեցին, և մեռան։ Եւ ամենից
33 յետոյ այն կինն էլ մեռաւ։ Արդ յարութեան ժա-
մանակին նորանցից որի՞ն պիտի լինի կին. որովհետև
34 այն եօթն էլ կին առան նորան։ Եւ Յիսուսը պա-
տասխանեց և ասեց նորանց. Այս աշխարհքի որ-
35 դիքը կին են առնում և մարդի են գնում։ Բայց
նորանք որ արժանի լինին այն աշխարհքին հասնե-
լու և մեռելներից յարութիւն առնելու, ոչ կին
36 կ'առնեն և ոչ մարդի կ'գնան։ Եւ ոչ իսկ կարող
են մեռնել, որովհետև հրեշտակների հաւասար են
և Աստուծոյ որդիք, յարութեան որդիք լինելով։
37 Բայց թէ մեռելները յարութիւն կ'առնեն, Մով-
սէսն էլ մարգարէացաւ մորենու մօտ, ինչպէս Տի-
րոջ համար ասում է՝ Աբրահամի Աստուած և Ի-
38 սահակի Աստուած և Յակոբի Աստուած։ Իսկ Աստ-
ուած մեռելներինը չէ, այլ կենդանիներինը. որով-
39 հետև ամենքը կենդանի են նորա համար։ Դպիր-
ներից ոմանք պատասխանեցին և ասեցին. Վար-
40 դապետ, լաւ ասեցիր. Եւ այլևս չէին համարձա-
կում նորանից ոչ մի բան հարցնելու։
41 Եւ նորանց ասեց. Ի՞նչպէս են ասում Քրիստոսի
42 համար՝ թէ Դաւիթի որդի է։ Եւ Դաւիթն ինքը
Սաղմոսների գրքումն ասում է. Տէրն իմ Տիրոջն
43 ասեց՝ Իմ աջ կողմը նստիր, Մինչև որ քո թշնա-
44 միները ոտներիդ պատուանդան դնեմ։ Արդ եթէ
Դաւիթը Տէր է կոչում նորան, ապա ի՞նչպէս է
նորա որդի։
45 Եւ երբոր բոլոր ժողովուրդը լսում էր, ասեց իր
46 աշակերտներին. Զգոյշ կացէք դպիրներիցը, որ փա-
ռաւոր պատմուճաններով կամենում են ման գալ

և սիրում են հրապարակներումը բարև առնելը, և
ժողովարանների մէջ առաջին աթոռները, և ընթ-
47 րիքներումը վերևի տեղերը: Որ որբևայրիների տներն
ուտում են, և պատճառանքով երկար աղօթք են
անում. նորանք աւելի դատապարտութիւն կ'ըն-
դունեն:

ԳԼ. ԻԱ.

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հարուստներին, որ ի-
2 րանց տուրքը գանձանակն էին գցում: Մի որբևայրի
աղքատ կին էլ տեսաւ, որ երկու լումայ գցեց
3 այնտեղ: Եւ ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
այս աղքատ որբևայրին ամենից աւելի գցեց՝
4 Որովհետև նորանք ամենքն իրանց աւելացածնե-
րիցը գցեցին Աստուծոյ ընծաների մէջ, իսկ սա իր
կարօտութիւնից իր բոլոր ապրուստն՝ որ ունէր՝
գցեց:
5 Եւ երբոր ոմանք ասում էին տաճարի համար թէ
գեղեցիկ քարերով և *նուէրներով զարդարուած
6 է, ասեց. Այդ բոլորն որ տեսնում էք, օրեր կը
գան, որ այդտեղ քար քարի վերայ չի թողուիլ
7 որ չ'քանդուի: Եւ հարցրին նորան և ասեցին. Վար-
դապետ, ե՞րբ կ'լինին սորանք և ի՞նչ է նշանը՝
8 երբոր սորանք լինին: Նա էլ ասեց. Զգուշ կացէք
մի խաբուիք. որովհետև շատերը կ'գան իմ անու-
նովը և կ'ասեն, թէ Ես եմ. և ժամանակը մօտե-
9 ցաւ. արդ նորանց ետևից մի գնաք: Բայց երբոր
պատերազմներ և խռովութիւններ կ'լսէք, մի զար-
հուրիք. որովհետև պէտք է որ առաջ նա լինի,
10 բայց դեռ շուտով վերջը չէ: Այն ժամանակ նո-

*Գրաբար՝ աշտարակներով

րանց ասեց. Ազգ ազգի վերայ կ'կենայ և թագա-
11 ւորութիւն թագաւորութեան վերայ: Եւ մեծա-
մեծ գետնաշարժներ և տեղ տեղ սովեր և մահ-
տարաժամներ կ'լինին. և երկնքից ահաւոր բաներ
12 և մեծամեծ նշաններ կ'լինին: Բայց այս բոլոր բա-
ներից առաջ իրանց ձեռները ձեզ վերայ կ'ձգեն
և կ'հալածեն. ժողովարանների և բանտերի մէջ
կ'մատնեն, և կ'տանեն թագաւորների և կուսա-
13 կալների առաջ՝ իմ անունի համար: Եւ սա կ'լինի
14 ձեզ վկայութեան համար: Արդ ձեր սրտի մէջ
դրէք, որ առաջուց հոգս չ'անէք պատասխանելու
15 համար: Որովհետև ես բերան և իմաստութիւն կը
տամ ձեզ. որին չեն կարողանալ հակառակ խօ-
սիլ և ոչ ընդդիմանալ ձեր բոլոր հակառակորդ-
16 ները: Եւ կ'մատնուիք ծնողներից և եղբայրներից
և ազգականներից և բարեկամներից էլ, և ձեզա-
17 նից կ'սպանեն: Եւ բոլորին ատելի կ'լինիք իմ ա-
18 նունի համար: Եւ ձեր գլխիցը մի մազ չի կորչիլ:
19 Եւ ձեր համբերութեամբը կ'շահէք ձեր հոգիները:
20 Բայց երբոր կ'տեսնէք Երուսաղէմը զօրքերով
շրջապատուած, այն ժամանակ գիտացէք, թէ նո-
21 րա աւերումը մօտ է: Այն ժամանակ նորանք, որ
Հրէաստանումն են, թող սարերը փախչեն. և նո-
րանք, որ նորա միջումն են, թող հեռանան. և
նորանք, որ նորա գաւառներումն են, թող չ'մտնեն
22 նորա մէջ: Որովհետև այն օրերը վրէժխնդրութեան
23 օրեր են, որ ամեն գրուածները կատարուին: Բայց
այն օրերումը վա՜յ յղիներին և ծիծ տուողներին.
որովհետև մեծ նեղութիւն կ'լինի երկրիս վերայ,
24 և բարկութիւն այդ ժողովրդի վերայ: Եւ սրի բե-
րանով կ'ընկնեն, և բոլոր հեթանոսների մէջ գերի
կ'տարուին. և Երուսաղէմը հեթանոսներից ոտնա-
կոխ կ'լինի, մինչև որ հեթանոսների ժամանակները

25 կատարուին ։ Եւ նշաններ կ'լինին արեգակումը և
լուսնումը և աստղերումը, և երկրի վերայ հեթա-
նոսները խռովութեամբ կ'տագնապին, ծովը կ'գոչէ
26 և կ'ծփան ալիքները։ Որովհետև մարդկանց սրտերը
կ'նուաղին վախից և այն բաների սպասելուցն, որ
բոլոր աշխարհքի վերայ պիտի գան. որովհետեւ
27 երկնքի զօրութիւնները կ'շարժուին ։ Եւ այն ժա-
մանակ կ'տեսնեն մարդի Որդին ամպերի վերայ ե-
28 կած զօրութեամբ և մեծ փառքով ։ Եւ երբոր այս
բաները կ'սկսեն լինիլ, վեր նայեցէք և բարձրացրէք
ձեր գլուխները. որ ձեր փրկութիւնը մօտ է ։
29 Եւ նորանց մի առակ ասեց. Տեսէք թզենին և
30 բոլոր ծառերը։ Երբոր արդէն բողբոջած են, տես-
նելով՝ ինքներդ իմանում էք, թէ ամառը մօտ է.
31 Այնպէս էլ դուք երբոր այս բոլոր բաները եղած
տեսնէք, գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնը
32 մօտ է ։ Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ այս ազգը
33 չի անցնիլ, մինչև այս բոլորը լինի։ Երկինքը և եր-
կիրս կ'անցնեն, բայց իմ խօսքերը չեն անցնիլ ։
34 Զգոյշ կացէք անձներիդ, մի գուցէ ձեր սրտերը
ծանրանան շատակերութիւնով և արբեցութիւնով
և ապրուստի հոգսերով, և այն օրը յանկարծ հաս-
35 նէ ձեզ վերայ. Որովհետև որոգայթի պէս կ'հասնէ
այն ամենքի վերայ, որ բոլոր երկրի երեսի վերայ
36 բնակած են։ Ուրեմն արթուն կացէք, և ամեն ժա-
մանակ աղօթք արէք, որ արժանի լինիք ազատուիլ
այն բոլոր բաներիցը, որ պիտի լինին, և կանգնել
մարդի Որդու առաջին ։
37 Եւ ցերեկները տաճարումը սովորեցնում էր և
գիշերները դուրս էր գալիս և կենում այն սարումն,
38 որ Ձիթենեաց սար էր կոչվում ։ Եւ ժողովուրդն
առաւօտանց կանուխ գնում էր տաճարը նորա մօտ
նորանից լսելու ։

ԳԼ. ԻԲ

1 Եւ բաղարջակերաց տօնը մօտեցաւ, որ զատիկ է
2 կոչվում ։ Եւ քահանայապետները և դպիրները ո-
րոնում էին, թէ ինչպէս սպանեն նորան. որովհետև
ժողովրդիցը վախենում էին։
3 Սատանան էլ մտաւ Իսկարիովտացի ասուած Յու-
4 դայի մէջ, որ տասներկուսի թուիցն էր։ Եւ գնաց
քահանայապետների և իշխանների հետ խօսք կա-
5 պեց, թէ նորան ինչպէս մատնէ նորանց։ Եւ նորանք
ուրախացան և խոստացան արծաթ տալ նորան ։
6 Եւ նա խօսք տուաւ և յարմար ժամանակ էր որո-
նում՝ որ նորան մատնէ նորանց առանց ամբոխի։
7 Եւ բաղարջակերաց օրն եկաւ, որ նորանում
8 պէտք էր զատիկը մորթել ։ Եւ Պետրոսին և Յով-
հաննէսին ուղարկեց և ասեց. Գնացէք զատիկը
պատրաստեցէք մեզ համար որ ուտենք, և նորանք
9 ասեցին. Ի՞նչտեղ ես կամենում, որ պատրաստենք։
10 Նա էլ ասեց նորանց. Ահա երբոր քաղաքը կը
մտնէք, մի մարդ կ'պատահի ձեզ, որ ջրի կուժ է
կրում. Նորա ետևից գնացէք այն տունն, ուր որ
11 նա կ'մտնէ ։ Եւ տան տիրոջն ասեցէք. Վարդա-
պետն ասում է քեզ, Ո՞ւր է այն օթևանը, ուր
12 ես զատիկն ուտեմ իմ աշակերտների հետ։ Եւ նա
ձեզ մի մեծ վերնատուն ցոյց կ'տայ սարքուած.
13 այնտեղ պատրաստեցէք ։ Եւ նորանք գնացին այն-
պէս գտան, ինչպէս որ ասեց նորանց. և զատիկը
պատրաստեցին ։
14 Եւ երբոր ժամն եղաւ, նա սեղան նստեց. և
15 տասներկու առաքեալներն էլ նորա հետ։ Եւ նո-
րանց ասեց. Ցանկանալով ցանկացայ՝ այս զատիկը
16 ձեզ հետ ուտել իմ չարչարուելուցն առաջ. Որով-

Հետև ասում եմ ձեզ, թէ սորանից էլ երբէք
չեմ ուտիլ, մինչև որ կատարուի Աստուծոյ ար-
17 քայութիւնումը։ Եւ բաժակն առաւ՝ գոհացաւ և
ասեց. Առէք դորան և ձեր միջումը բաժանեցէք։
18 Որովհետև ասում եմ ձեզ, թէ որթի բերքիցն էլ
չեմ խմիլ, մինչև որ Աստուծոյ արքայութիւնը
գայ։
19 Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց և նորանց
տուաւ, և ասեց. Այս է իմ մարմինը, որ ձեզ հա-
մար տրվում է. այս արէք իմ յիշատակի համար։
20 Այնպէս էլ ընթրիքից յետոյ բաժակն առաւ, և
ասեց. Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովը,
որ ձեզ համար թափվում է։
21 Սակայն ահա իմ մատնողի ձեռքն ինձ հետ սե-
22 ղանի վերայ է։ Եւ մարդի Որդին գնում է ինչպէս
սահմանուած է. բայց վայ այն մարդին, որի ձե-
23 ռովը կ՚մատնուի։ Եւ նորանք սկսեցին հարցուփորձ
անել իրանց մէջ, թէ իրանցից ո՞վ է արդեօք նա,
որ այն բանը գործելու է։
24 Նորանց միջումը մի վէճ էլ եղաւ, թէ իրանցից
25 ո՞վ պիտի մեծ համարուի։ Եւ նա ասեց նորանց.
Ազգերի թագաւորները տիրապետում են նորանց
վերայ, և նորանց վերայ իշխանութիւն անողները
26 բարերար են կոչվում։ Բայց դուք ոչ այնպէս. այլ
ձեր միջի մեծը՝ թող փոքրագոյնի պէս լինի, և
27 առաջնորդը ծառայողի պէս։ Որովհետև ո՞վ է մեծ.
սեղան նստո՞ղը թէ ծառայողը. չէ՞ որ սեղան նստո-
28 ղը. բայց ես ձեր միջումը ծառայողի պէս եմ։ Իսկ
դուք էք, որ միշտ ինձ հետ կենում էիք իմ փոր-
29 ձութիւններումը։ Եւ ես ուխտում եմ ձեզ թա-
գաւորութիւն՝ ինչպէս իմ Հայրն էլ ինձ թագաւո-
30 րութիւն ուխտեց. Որ ուտէք և խմէք իմ սեղանի
վերայ իմ արքայութիւնումը, և աթոռների վերայ

նստէք՝ Իսրայէլի տասներկու ցեղերին դատաս-
տան անելու համար։
31 Եւ Տէրն ասեց. Սիմօն, Սիմօն. ահա սատանան
32 ձեզ ուզեց, որ մաղէ ցորենի պէս։ Բայց ես աղա-
չեցի քեզ համար, որ քո հաւատքը չ՚պակասի. և
դու երբոր դառնաս, եղբայրներիդ հաստատիր։
33 Նա էլ ասեց նորան. Տէր, ես պատրաստ եմ քեզ
34 հետ բանտը և մահն էլ գնալու։ Եւ նա ասեց.
Ասում եմ քեզ, Պետրոս, այսօր հաւը չի խօսիլ,
մինչև որ դու երեք անգամ ուրանաս՝ թէ ինձ
չ՚գիտես։
35 Եւ նորանց ասեց. Երբոր ուղարկեցի ձեզ առանց
քսակի, և պարկի և կօշիկների, մի՞թէ կարօտա-
36 ցաք մի բանի։ Նորանք էլ ասեցին. Ոչինչի. ապա
ասեց նորանց. Բայց հիմա քսակ ունեցողը թող
առնէ, այնպէս էլ պարկը. և չ՚ունեցողը՝ թող իր
37 հանդերձը ծախէ և իրան համար սուր առնէ։ Որով-
հետև ասում եմ ձեզ, թէ դեռ այս գրուածն էլ
պէտք է կատարուի ինձանում, թէ Անօրէնների
հետ համարուեցաւ. որովհետև ինչ որ ինձ համար
38 ասուած է, կատարվում է։ Նորանք էլ ասեցին.
Տէր, ահա այստեղ երկու սուր կայ. և նա ասեց
նորանց. Բաւական է։
39 Եւ դուրս ելաւ իր սովորութեան պէս գնաց Ձի-
թենեաց սարը, և աշակերտներն էլ նորա ետևից
40 գնացին։ Եւ երբոր այն տեղը հասաւ, նորանց ա-
սեց. Աղօթք արէք, որ փորձութեան մէջ չ՚մտնէք։
41 Եւ ինքը նորանցից հեռացաւ մի քարընկեցի չափ,
42 ծունր դրաւ, աղօթք էր անում, Եւ ասում. Հայր,
եթէ կամիս այս բաժակը անցրու ինձանից. սակայն
43 ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի։ Եւ հրեշ-
տակ երևեցաւ նորան երկնքից, և զօրացնում էր
նորան. և նա տագնապի մէջ լինելով, աւելի ե-

44 ուանդով էր աղօթք անում. Եւ նորա քրտինքն էր
ինչպէս արիւնի կաթիլներ, որ թափվում են երկրի
45 վերայ ։ Եւ աղօթքիցը վերկացաւ եկաւ իր աշա-
կերտների մօտ, և նորանց քնի մէջ գտաւ տրտմու-
46 թիւնից․ Եւ ասեց նորանց․ Ի՞նչու էք քնում․
վեր կացէք, աղօթք արէք, որ փորձութեան մէջ
չ՚մտնէք ։
47 Եւ նա տակաւին խօսելիս, ահա մի ամբոխ․ և Յու-
դա կոչուածը՝ այն տասներկուսիցը մէկը՝ գնում
էր նորանց առաջին․ և մօտեցաւ Յիսուսին, որ
48 համբուրէ նորան. Յիսուսն էլ նորան ասեց. Յուդա,
49 համբուրո՞վ ես մարդի Որդին մատնում։ Երբոր նո-
րա հետ լինողները տեսան, թէ ինչ է լինելու, նո-
50 րան ասեցին. Տէր, սրով զարկե՞նք ։ Եւ նորանցից
մէկը քահանայապետի ծառային զարկեց, և նորա
51 աջ ականջը կտրեց ։ Յիսուսն էլ պատասխանեց և
ասեց․ Թող տուէք մինչ այս․ և նորա ականջին
52 դպաւ և բժշկեց նորան ։ Եւ Յիսուսն ասեց իրան
վերայ եկած քահանայապետներին և տաճարի իշ-
խաններին և ծերերին. Ինչպէս մի աւազակի՞ վերայ
53 դուրս եկաք սրերով և բիրերով։ Ես որ ամեն օր
ձեզ հետ էի տաճարումը, ձեռք չ՚ձգեցիք ինձ
վերայ․ բայց սա ձեր ժամն է և խաւարի իշխանու-
թիւնը ։
54 Եւ նորան բռնեցին տարան, և մտցրին քահա-
նայապետի տունը. Պետրոսն էլ հեռուանց գնում
55 էր նորա ետևից ։ Եւ երբոր սրահի մէջ կրակ էին
վառել և չորս կողմով նստել, Պետրոսն էլ նստեց
56 նորանց միջումը ։ Մի աղախին տեսնելով նորան՝
լոյսի մօտ նստած, դիտեց նորա վերայ և ասեց. Սա
57 էլ նորա հետ էր։ Բայց նա ուրացաւ և ասեց. Ով
58 կին, ես նորան չ՚գիտեմ։ Եւ քիչ մի յետոյ ուրիշը
տեսաւ նորան և ասեց. Դու էլ նորանցից ես. Պետ-

59 րոսն էլ ասեց. Ով մարդ, չեմ։ Եւ մէկ ժամի չափ
էլ որ անցաւ, մէկ ուրիշը վիճում էր և ասում.
Ճշմարիտ որ սա էլ նորա հետ էր. որովհետև Գա-
60 լիլեացի է։ Պետրոսն էլ ասեց. Մարդ, ես չ՚գիտեմ,
թէ դու ինչ ես ասում. և իսկոյն նա դեռ ասե-
61 լիս՝ հաւը խօսեց։ Եւ Տէրը դարձաւ մտիկ տուաւ
Պետրոսին, և Պետրոսը յիշեց Տիրոջ խօսքը, որ ա-
սեց նորան, թէ Մինչև հաւի խօսելը, երեք անգամ
62 կ՚ուրանաս ինձ։ Եւ Պետրոսը դուրս գնաց դառնա-
պէս լացաւ ։
63 Եւ Յիսուսին պահող մարդիկը ծաղր էին անում
64 նորան և ծեծում։ Եւ նորա աչքերը ծածկում էին
և երեսին զարկում, և նորան հարցնում էին և
ասում. Մարգարէացիր՝ ո՞վ է նա, որ քեզ զար-
65 կեց։ Եւ ուրիշ շատ բաներ էլ հայհոյանքով խօ-
սում էին նորա դէմ։
66 Եւ երբոր առաւօտ եղաւ, ժողովրդի ծերակոյտը՝
քահանայապետները և դպիրները ժողովուեցան, և
նորան հանեցին տարան իրանց ատեանը, և ասե-
67 ցին. Եթէ դու Քրիստոսն ես, ասիր մեզ ։ Եւ նո-
րանց ասեց․ Եթէ ասեմ ձեզ, դուք չէք հաւա-
68 տալ ։ Եւ եթէ ձեզ հարցնեմ էլ, ինձ պատաս-
69 խան չէք տալ, կամ ինձ արձակել ։ Բայց այսու-
հետև մարդի Որդին նստած կ՚լինի Աստուծոյ զօ-
70 րութեան աջ կողմը։ Եւ ամենքն ասեցին. Ուրեմն
դո՞ւ Աստուծոյ Որդին ես․ և նա ասեց նորանց.
71 Դուք էք ասում, որ ես եմ ։ Նորանք էլ ասեցին.
Էլ ի՞նչ պէտք է մեզ վկայութիւն, որ մենք ինք-
ներս լսեցինք դորա բերանից ։

ԳԼ. ԻԳ

1 Եւ նորանց բոլոր բազմութիւնը վեր կացաւ, և

2 Նորան տարան Պիղատոսի մօտ։ Եւ սկսեցին ամբաս-
տանութիւն անել նորանից և ասել. Սորան գտանք
որ ազգին մոլորեցնում էր՝ և արգելում էր կայսրին
հարկ տալ՝ ինքն իրան համար ասելով, թէ Քրիս-
3 տոս՝ թագաւորն է։ Բայց Պիղատոսը հարցրեց նո-
րան և ասեց. Դո՞ւ ես Հրէից թագաւորը. նա պա-
4 տասխանեց նորան և ասեց. Դու ասեցիր։ Պիղա-
տոսն էլ ասեց քահանայապետներին և ժողովուրդ-
ներին. Ես մի յանցանք չեմ գտնում այս մարդու-
5 մը։ Բայց նորանք սաստկացնում էին և ասում թէ
ժողովուրդները խռովեցնում է բոլոր Հրէաստանի
մէջ սովորեցնելով՝ Գալիլեայիցն սկսած մինչև այս-
6 տեղ։ Պիղատոսն էլ երբոր Գալիլեան լսեց, հար-
7 ցրեց, թէ այդ մարդը Գալիլեացի՞ է. Եւ իմանա-
լով թէ Հերովդէսի իշխանութիւնիցն է, տանել
տուաւ նորան Հերովդէսի մօտ, որ նա էլ այն օրե-
րը Երուսաղէմումն էր։
8 Հերովդէսն էլ Յիսուսին տեսնելով շատ ուրա-
խացաւ. որովհետև շատ ժամանակից ուզում էր
տեսնել նորան. որովհետև նորա համար շատ բա-
ներ էր լսել. և յոյս ունէր թէ մի նշան կ'տեսնէ
9 նորանից եղած։ Շատ խօսքերով հարցնում էր նո-
րան, բայց նա ոչինչ պատասխան չ'տուաւ նորան։
10 Քահանայապետները և դպիրները կանգնած էին, և
շատ սաստիկ ամբաստանութիւն էին անում նո-
11 րանից։ Հերովդէսն էլ իր զինուորների հետ անար-
գեց նորան. և ծաղր անելուց յետոյ մի փառաւոր
հանդերձ հագցրեց նորան, և ետ տանել տուաւ
12 Պիղատոսի մօտ։ Եւ Պիղատոսն ու Հերովդէսը բա-
րեկամ եղան այն օրը միմեանց հետ. որովհետև
առաջ իրար դէմ թշնամութեան մէջ էին։
13 Պիղատոսն էլ կանչեց քահանայապետներին և
14 իշխաններին և ժողովրդին, Եւ նորանց ասեց. Դուք

այս մարդն ինձ մօտ բերիք իբրև ժողովուրդը մո-
լորեցնող և ահա ձեր առաջին դատելով ոչ մի
յանցանք չ'գտայ այս մարդումն այն բաների հա-
մար, որ դուք ամբաստանութիւն էք անում դո-
15 րանից։ Եւ ոչ էլ Հերովդէսը. որովհետև ձեզ տա-
նել տուի նորա մօտ. և ահա մեռնելու արժանի
16 ոչինչ չէ գործել դա։ Արդ պատժեմ դորան՝ և
17 արձակեմ։ Որովհետև հարկաւոր էր, որ տօնի ժա-
18 մանակին մի հոգի արձակէր նորանց համար։ Իսկ
նորանք բոլոր բազմութեամբ աղաղակում էին և
ասում. Վեր առ դորան, և արձակիր մեզ համար
19 Բարաբբային. Որ քաղաքումն եղած մի խռովու-
թեան և մարդասպանութեան համար բանտն էր
20 գցուած։ Եւ Պիղատոսը դարձեալ խօսեց դէպի
21 նորանց. կամենալով արձակել Յիսուսին։ Իսկ նո-
րանք աղաղակում էին և ասում. Խաչիր, խաչիր
22 դորան։ Եւ նա երրորդ անգամ ասեց նորանց. Ապա
ի՞նչ չար բան գործեց սա. ոչինչ մեռնելու յան-
ցանք չ'գտայ սորանում. կ'պատժեմ սորան և կ'ար-
23 ձակեմ։ Բայց նորանք բարձր ձայնով ստիպում էին
և խնդրում էին, որ նա խաչուի. և նորանց և քա-
24 հանայապետների աղաղակը զօրանում էր։ Եւ Պի-
25 ղատոսը վճռեց, որ նորանց խնդիրքը լինի։ Արձա-
կեց նորանց համար խռովութեան և մարդասպանու-
թեան համար բանտի մէջ գցուածը, որին խնդրում
էին. և Յիսուսին մատնեց նորանց կամքին։
26 Եւ երբոր նորան տանում էին, Սիմոն Կիւրենացի
[illegible] մէկին բռնեցին, որ յանդիցը գալիս էր.
խաչը նորա վերայ դրին, որ Յիսուսի ետևից տանէ։
27 Եւ շատ ժողովուրդ էր գնում նորա ետևից. և
կանայք էլ, որ կոծ և սուգ էին անում նորա վե-
28 րայ։ Յիսուսն էլ դարձաւ՝ նորանց ասեց. Երուսա-
ղէմի աղջիկներ, լաց մի լինիք ինձ վերայ, այլ լաց

29 եղէք ձեզ վերայ և ձեր որդկանց վերայ։ Որովհետև
ահա օրեր կ՚գան, որ կ՚ասեն. Երանի ամուլներին
և այն որովայններին, որ չ՚ծնեցին և այն ծծերին,
30 որ չ՚ծծեցրին։ Այն ժամանակ կ՚սկսեն ասել սա-
րերին, Մեզ վերայ ընկէք, և բլուրներին՝ Ծածկե-
31 ցէք մեզ։ Որովհետև եթէ կանանչ փայտին են
անում այս բաներն, ապա չորին ի՞նչ կ՚լինի։
32 Ուրիշ երկու մարդիկ էլ տարան, չարագործ-
33 ներ, որ Նորա հետ սպանեն։ Եւ երբոր եկան այն
տեղը որ Գագաթն էր կոչվում, այնտեղ խաչեցին
Նորան. և այն չարագործներին, մէկը աջ կողմին և
34 միւսը ձախ կողմին։ Եւ Յիսուսն ասեց. Հայր, Թո-
ղիր դորանց. որովհետև չ՚գիտեն թէ ի՛նչ են անում.
և Նորա հանդերձները բաժանելիս, վիճակ գցեցին։
35 Եւ ժողովուրդը կանգնած մտիկ էր անում. իշ-
խաններն էլ նորանց հետ ծաղր էին անում՝ և ա-
սում. ուրիշներին ապրեցրեց, թող իրան էլ ապ-
րեցնէ, եթէ դա է Քրիստոսն, Աստուծոյ ընտրուա-
36 ծը։ Զինուորներն էլ էին ծաղր անում Նորան. և
37 մօտ գալով քացախ էին տալիս Նորան. Եւ ասում.
Եթէ դու ես Հրէաների Թագաւորը, փրկիր քո
38 անձը։ Եւ մի գիր էր գրուած Նորա վերայ, Յու-
նարէն, Հռովմայեցերէն և Եբրայեցերէն գրերով,
Դէ ԱՅՍ Է ՀՐԷԱՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐԸ։
39 Եւ այն կախուած չարագործներից մէկը հայհո-
յում էր Նորան և ասում. Եթէ դու ես Քրիստո-
40 սը, փրկիր քո անձը և մեզ։ Իսկ միւսը պատաս-
խանեց սաստելով Նորան՝ և ասեց. Եւ դու չե՞ս
վախենում Աստուածանից, որ հէնց նոյն պատժի
41 մէջ ես։ Ու մենք՝ իրաւունքով ենք պատժուած.
որովհետև մեր արած գործերին արժանի հատու-
ցումն ենք առնում. իսկ սա ոչ մի անտեղի բան
42 չ՚գործեց։ Եւ ասեց Յիսուսին. Տէր, ինձ յիշիր,

43 երբոր գաս քո Թագաւորութիւնովը։ Եւ Յիսուսը
ասեց Նորան. Ճշմարիտ ասում եմ քեզ, Դու այսօր
ինձ հետ դրախտումը կ՚լինիս։
44 Եւ ժամը վեցի դէմ էր. և բոլոր երկրի վերայ
45 խաւար եղաւ մինչև ինը ժամը։ Եւ արեգակը խա-
ւարուեցաւ, և տաճարի վարագոյրը միջիցը ճղուե-
46 ցաւ։ Եւ Յիսուսը մեծ ձայնով կանչեց և ասեց.
Հայր, հոգիս քո ձեռն եմ աւանդում. և այս ա-
սելով հոգի տուաւ։
47 Եւ հարիւրապետը եղածը տեսնելով, Աստուծոյ
փառք տուաւ և ասեց. Յիրաւի՛ այս մարդն արդար
48 էր։ Եւ բոլոր ժողովուրդները, որ այս տեսարանը
դիտելու համար եկել էին, եղած բաները տեսնելով՝
իրանց կուրծքերը թակում էին և ետ դառնում։
49 Նորա բոլոր ծանօթներն էլ հեռուանց կանգնած
էին, և այն կանայքն էլ, որ Գալիլեայից Նորա
ետևից եկել էին և տեսնում էին այս բաները։
50 Եւ ահա մի մարդ՝ անունը Յովսէփ, որ խորհրդա-
51 կան էր, բարի և արդար մարդ. (Սա չէր միա-
բանուել նորանց խորհրդի և գործերի հետ.) Հրէա-
ների Արիմաթիա քաղաքիցը. որ ինքն էլ հէնց
52 սպասում էր Աստուծոյ արքայութեանը. Սա գնաց
53 Պիղատոսի մօտ և Յիսուսի մարմինը խնդրեց։ Եւ
վայր բերաւ Նորան, ազնիւ կտաւով պատեց, և
քարից փորած գերեզմանի մէջ դրաւ՝ ուր երբէք
54 մի մարդ դրուած չէր։ Եւ օրը ուրբաթ էր, և շա-
բաթ էր լուսանում։
55 Եւ այն կանայքն էլ, որ Գալիլեայից Նորա հետ
եկել էին՝ գնում էին Նորա ետևից, տեսան գե-
րեզմանը, և թէ ինչպէս դրուեցաւ Նորա մարմինը։
56 Եւ ետ դառան խնկեր և իւղեր պատրաստեցին.
բայց շաբաթ օրը հանգարտ մնացին պատուիրանքի
համեմատ։

ԳԼ․ ԻԴ

1 Բայց միաշաբաթի օրը առաւօտանց կանուխ եկան
գերեզմանը, և բերին այն խնկերը, որ պատրաստե-
2 ցին. և ոմանք էլ նորանց հետ ։ Եւ քարը գերեզ-
3 մանիցը հեռու թաւալած գտան ։ Եւ երբոր ներս
4 մտան , Տէր Յիսուսի մարմինը չ'գտան ։ Եւ եղաւ
երբոր նորա համար շատ հիացել էին, ահա երկու
մարդ հասան նորանց լուսաւոր հանդերձներով ,
5 Եւ երբոր նորանք ահով լցուեցան, և իրանց երես-
ները դէպի երկիր խոնարհեցրին , նորանց ասեցին .
6 Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում ։ Այս-
տեղ չէ, այլ յարութիւն առաւ. յիշեցէք ինչպէս
7 նա ձեզ հետ խօսեց, երբոր Գալիլեայումն էր. Որ
ասում էր , թէ պէտք է մարդի Որդին մեղաւոր
մարդկանց ձեռը մատնուի՝ և խաչուի և երրորդ
8 օրը յարութիւն առնէ ։ Եւ նորա խօսքերը յիշեցին ։
9 Եւ գերեզմանիցը ետ դառան և այս բոլոր բաները
10 պատմեցին տասնևմէկին և բոլոր ուրիշներին ։ Եւ
էին Մարիամ Մագդաղենացին , և Յովհաննան, և
Յակոբոսի մայր Մարիամը , և նորանց հետ ուրիշ-
ներն էլ , որ այս բաները ասում էին առաքեալնե-
11 րին ։ Եւ նորանց խօսքերը ցնորք երևեցաւ նորանց
12 առաջին , և չէին հաւատում նորանց ։ Բայց Պետ-
րոսը վեր կացաւ վազեց գերեզմանը , և ծռելով
տեսաւ կտաւները մինակ դրուած. և գնաց եղածի
վերայ իր մտքումը զարմանալով ։
13 Եւ ահա նորանցից երկուսը միենոյն օրը մի գիւղ
էին գնում, որ վաթսուն ասպարէզ Երուսաղէմիցը
14 հեռու էր, անունն Էմմաուս ։ Եւ նորանք իրար հետ
15 խօսում էին այն բոլոր անցած բաների համար ։ Եւ
եղաւ որ նորանք խօսելիս և վիճաբանելիս , հէնց

ինքն Յիսուսը մօտեցաւ և գնում էր նորանց հետ ։
16 Բայց նորանց աչքերը բռնուած էին, որ չ'ճանաչէին
17 նորան ։ Եւ նորանց ասեց. Այդ ի՞նչ բաներ են, որ
դորանց համար իրար հետ վիճում էք գնալիս , և
18 տրտմած էք ։ Եւ պատասխանեց նորանցից մէկը ,
անունը Կղէոպաս, և ասեց նորան . Դո՞ւ ես միայն
բնակվում Երուսաղէմումն , որ չ'իմացար այն բա-
19 ները, որ այս օրերը եղան նորանում ։ Եւ նա ասեց
նորանց . Ո՞ր բաներ . և նորանք ասեցին . Յիսուս
Նազովրեցու մասին , որ մի մարգարէ մարդ էր ,
զօրաւոր գործերով Աստուծոյ և բոլոր ժողովրդի
20 առաջին ։ Թէ ինչպէս մեր քահանայապետները և
իշխանները մահի դատաստանի մատնեցին նորան ,
21 և խաչեցին նորան ։ Իսկ մենք յոյս ունէինք թէ նա
է , որ Իսրայէլին փրկելու էր. այլ այսու ամենայ-
22 նիւ սա երրորդ օրն է, որ այս բաները եղան ։ Բայց
մի քանի կանայք էլ մեր միջիցը զարմացրին մեզ ,
23 որ առաւօտանց կանուխ գնացին գերեզմանը ։ Եւ
նորա մարմինը չ'գտած՝ եկան և ասեցին, թէ հրեշ-
տակների տեսիլք են տեսել , որ ասում էին , թէ
24 նա կենդանի է ։ Եւ մեզանից ոմանք գնացին գե-
րեզմանը , և իսկ այնպէս գտան , ինչպէս կանայքն
25 ասեցին, բայց նորան չ'տեսան ։ Եւ նա ասեց նորանց.
Ով անմիտներ և թուլասիրտներ, հաւատալու այն
26 բոլոր բաներին, որ մարգարէները խօսեցին ։ Չէ՞ որ
պէտք էր՝ որ Քրիստոսը այս չարչարանքները քաշէր
27 և իր փառքը մտնէր ։ Եւ սկսելով Մովսէսիցը և
բոլոր մարգարէներիցը մեկնում էր նորանց՝ ինչ որ
28 գրքերի մէջ գրուած էր իր մասին ։ Եւ մօտեցան այն
գիւղին, ուր որ գնում էին. և նա այնպէս էր ցոյց
29 տալիս, թէ աւելի հեռու տեղ է գնում ։ Եւ նո-
րանք բռնադատեցին նորան և ասեցին . Մնա մեզ
հետ , որովհետև իրիկուայ դէմ է և օրն իջել է.

30 և Նա մտաւ որ նորանց հետ մնայ։ Եւ եղաւ երբոր
Նա նորանց հետ սեղան նստեց, հաց առաւ՝ օրհ-
31 նեց, կտրեց և տուաւ նորանց։ Եւ նորանց աչքերը
բացուեցան և նորան ճանաչեցին. և Նա աներևոյթ
32 եղաւ նորանցից։ Եւ իրար ասեցին. Չէ՞ որ մեր
սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանա-
պարհին մեզ հետ խօսում էր, և ինչպէս գրքերը
բաց էր անում մեզ համար։
33 Եւ նոյն ժամին վերկացան՝ ետ դառան Երուսա-
ղէմ, և այն տասնևմէկին ժողովուած գտան, և
34 նորանց հետ լինողներին. Որ ասում էին թէ Ար-
դարև Տէրը յարութիւն է առել, և երևացել Սի-
35 մօնին։ Եւ նորանք պատմում էին այն որ ճանա-
պարհին եղաւ, և թէ ինչպէս իրան ճանաչեցրեց
իրանց՝ հաց կտրելու ժամանակին։
36 Եւ նորանք այս խօսելիս, Յիսուսն ինքը կանգնեց
նորանց միջումը և նորանց ասեց. Խաղաղութիւն
37 ձեզ։ Եւ նորանք զարհուրելով վախեցած, համա-
38 րում էին, թէ ոգի են տեսնում։ Եւ նորանց ա-
սեց. Ի՞նչու էք շփոթուած. ի՞նչու համար խոր-
39 հուրդներ են վերկենում ձեր սրտերումը։ Տեսէք
իմ ձեռքերը և իմ ոտները, որ ես ինքս եմ. շօ-
շափեցէք ինձ և տեսէք. որովհետև ոգին մարմին
և ոսկերք չ'ունի, ինչպէս ինձ էք տեսնում որ ու-
40 նիմ։ Եւ սա որ ասեց, ձեռքերն ու ոտները ցոյց
41 տուաւ նորանց։ Եւ քանի որ դեռ չէին հաւատում
ուրախութիւնից և զարմացած էին, ասեց նորանց.
42 Կերակուր ունի՞ք այս տեղ։ Եւ նորանք խորոված
43 ձկան կտոր տուին նորան՝ և մեղրախորիսխ։ Եւ
44 առաւ կերաւ նորանց առաջին։ Եւ ասեց նորանց.
Այս այն բաներն են՝ որ ձեզ հետ խօսեցի, քանի
որ ես ձեզ հետ էի, թէ պէտք է կատարուի Մով-
սէսի օրէնքումը և մարգարէներումը և սաղմոսնե-

45 րումը բոլոր ինձ համար գրուածները։ Այն ժամա-
նակ նորանց միտքը բացաւ, որ գրքերը իմանան։
46 Եւ նորանց ասեց թէ Այսպէս է գրուած, և այս-
պէս պէտք էր Քրիստոսին չարչարուիլ և երրորդ
47 օրը մեռելների միջից յարութիւն առնել. Եւ նո-
րա անունովը ապաշխարութիւն և մեղքերի թո-
ղութիւն քարոզուիլ բոլոր ազգերի մէջ Երուսա-
48 ղէմից սկսած։ Եւ դուք այս բաների համար վկա-
49 ներ էք։ Եւ ահա ես իմ Հօր խոստմունքը կ'ուղար-
կեմ ձեզ վերայ. դուք էլ նստեցէք Երուսաղէմ
քաղաքումը, մինչև վերևից զօրութիւն հագնիք։
50 Եւ նորանց հանեց մինչև Բեթանիա. և իր ձեռ-
51 քերը բարձրացրեց և օրհնեց նորանց։ Եւ եղաւ որ
Նա նորանց օրհնելիս, ջոկուեց նորանցից, և վերա-
52 նում էր երկինքը։ Եւ նորանք երկրպագեցին նորան,
և մեծ ուրախութիւնով ետ դառան Երուսաղէմ։
53 Եւ ամեն ժամանակ տաճարումն էին. գովում և
օրհնում էին Աստուծուն։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկզբումն էր Բանը. և Բանն Աստուծոյ մօտ էր.
2 և Բանն Աստուած էր։ Նա սկզբումն Աստուծոյ
3 մօտ էր։ Ամեն ինչ Նորանով եղաւ, և առանց Նո-
4 րան ոչինչ չ'եղաւ, ինչ որ եղաւ։ Նորանով էր
5 կեանքը, և կեանքը մարդկանց լոյսն էր։ Եւ լոյսը
խաւարումը լոյս է տալիս. և խաւարը չ'իմացաւ
Նորան։
6 Մի մարդ եղաւ Աստուածանից ուղարկուած,
7 անունը Յովհաննէս։ Սա վկայութեան համար ե-
կաւ, որ այն Լոյսի համար վկայէ. որ ամենքը Նո-
8 րանով հաւատան։ Նա չէր Լոյսը, այլ որ Լոյսին
համար վկայէ։
9 Այն էր ճշմարիտ Լոյսը, որ ամեն մարդի լուսա-
10 ւորում է, որ գալիս է աշխարհքը։ Աշխարհքումն
էր, և աշխարհքը Նորանով եղաւ, և աշխարհքը
11 Նորան չ'ճանաչեց։ Իրանների մէջ եկաւ, և իրան-
12 ները Նորան չ'ընդունեցին։ Բայց որոնք որ Նորան
ընդունեցին, իշխանութիւն տուաւ Նորանց Աստու-
ծոյ որդիներ լինելու՝ Նորանց, որ Նորա անունին
13 հաւատում են։ Որոնք ոչ արիւնից և ոչ մարմնի
կամքից, և ոչ մարդի կամքից, այլ Աստուածանից
14 ծնուեցան։ Եւ Բանը մարմին եղաւ՝ և բնակուեց

մեր մէջ. և Նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից
եղած միածնի փառք՝ շնորհքով և ճշմարտութիւ-
նով լիքը։
15 Յովհաննէսը վկայում է Նորա համար. և աղա-
ղակեց և ասեց, Սա էր, որի համար ասում էի,
Թէ ինձանից յետոյ եկողը, ինձանից առաջ եղաւ.
16 որովհետև ինձանից առաջ էր։ Եւ Նորա լիութիւ-
նիցը մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ։
17 Որովհետև օրէնքը Մովսէսի ձեռովը տրուեցաւ.
շնորհքը և ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի ձե-
18 ռովն եղաւ։ Աստուծուն ոչ ով երբէք չէ տեսել։
Բայց միածին Որդին, Հօր ծոցումը լինողը, Նա
պատմեց։
19 Եւ այս է Յովհաննէսի վկայութիւնը, երբոր
Հրէաներն Երուսաղէմից քահանաներ և Ղևտացի-
ներ ուղարկեցին Նորա մօտ, որ հարցնեն Նորան, Թէ
20 Դու ո՞վ ես։ Եւ Նա խոստովանեց և չ'ուրացաւ։
21 և խոստովանեց, Թէ Ես չեմ Քրիստոսը։ Եւ Նո-
րան հարցրին. Ապա ո՞վ, Եղիա՞ն ես. և Նա ասեց.
Չեմ. մարգարէ՞ն ես դու. և Նա պատասխանեց,
22 Ոչ։ Արդ ասեցին Նորան. Ապա ո՞վ ես, որ պա-
տասխան տանք մեզ ուղարկողներին. ի՞նչ ես ա-
23 սում քեզ համար։ Ասեց. Ես եմ անապատումը
կանչողի ձայնը, Թէ Ուղղեցէք Տիրոջ ճանապարհը,
24 ինչպէս Եսայիս մարգարէն ասեց։ Եւ ուղարկուած-
25 ները փարիսեցիներիցն էին։ Եւ Նորան հարցրին և
ասեցին. Ապա ինչու ես մկրտում, եթէ դու ոչ
26 Քրիստոսն ես և ոչ Եղիան, և ոչ մարգարէն։ Յով-
հաննէսը պատասխանեց Նորանց և ասեց. Ես ջրով
եմ մկրտում. բայց ձեր միջումը կայ Մէկը, որին
27 դուք չ'գիտէք։ Նա է ինձանից յետոյ եկողը, որ
ինձանից առաջ եղաւ. որ ես արժանի չեմ, Նո-
28 րա կօշիկների կապը արձակելու։ Սա Բեթաբա-

բայում եղաւ Յորդանանի այն կողմին ուր որ Յով-
հաննէսը մկրտում էր ։
29 Հետեւեալ օրը Յովհաննէսը տեսնում է Յիսու-
սին իրան մօտ գալիս, և ասում է. Ահա Աստու-
ծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհքի մեղքը։
30 Սա է, որի համար ես ասում էի, Թէ ինձանից յե-
տոյ մի մարդ է գալիս, որ ինձանից առաջ եղաւ,
31 որովհետեւ ինձանից առաջ էր։ Եւ ես նորան չ'գի-
տէի. այլ որ նա յայտնի լինի Իսրայէլին, նորա
32 համար ես եկայ ջրով մկրտելու։ Եւ վկայեց Յով-
հաննէսը և ասեց թէ Տեսնում էի Հոգին, որ ա-
ղաւնու պէս վայր էր գալիս երկնքից և նորա վե-
33 րայ մնում։ Եւ ես չ'գիտէի նորան. բայց նա որ
ինձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ասեց ինձ թէ
Որի վերայ որ տեսնես Հոգին վայր է գալիս և նո-
րա վերայ մնում, նա է Սուրբ Հոգով մկրտողը։
34 Եւ ես տեսայ և վկայեցի թէ Սա է Աստուծոյ
Որդին ։
35 Հետեւեալ օրը դարձեալ կանգնած էր Յովհան-
36 նէսը, և նորա աշակերտներից երկուսը։ Եւ մտիկ
տուաւ Յիսուսին, որ ման էր գալիս, և ասեց. Ահա
37 Աստուծոյ Գառը։ Եւ այն երկու աշակերտները
լսեցին նորանից՝ որ խօսում էր, և գնացին Յիսու-
38 սի ետեւից։ Յիսուսն էլ դարձաւ նորանց տեսաւ,
որ գնում էին իր ետեւից, և ասեց նորանց. Ի՞նչ
էք ուզում. Նորանք ասեցին նորան. Ռաբբի, (որ
թարգմանուած ասվում է՝ վարդապետ.) ո՞րտեղ
39 ես կենում։ Նորանց ասեց. Եկէք և տեսէք. եկան
և տեսան Թէ որտեղ էր կենում. և այն օրը նորա
40 մօտ մնացին. ժամն էլ տասի մօտ էր։ Անդրէասը՝
Սիմօն Պետրոսի եղբայրն՝ այն երկուսից մէկն էր,
որ Յովհաննէսից լսեցին և նորա ետեւից գնացին։
41 Սա առաջ գտնում է իր Սիմօն եղբօրն և նորան

ասում. Մեսիան գտել ենք, (որ թարգմանվում է
42 *Քրիստոս)։ Եւ բերաւ նորան Յիսուսի մօտ. Յի-
սուսն էլ նորան մտիկ տուաւ և ասեց. Դու Սի-
մօնն ես՝ Յովնանի որդին. դու պիտի կոչուիս Կե-
փաս, (որ թարգմանվում է †Պետրոս)։
43 Հետեւեալ օրը կամեցաւ Յիսուսը դուրս գնալ
Գալիլեա. և գտնում է Փիլիպպոսին, և ասում
44 նորան. Իմ ետեւից եկ։ Փիլիպպոսն էլ Բեթսայի-
դայից էր, Անդրէասի և Պետրոսի քաղաքից։
45 Փիլիպպոսն էլ գտնում է Նաթանայէլին և ասում
նորան. Նա որի մասին գրեց Մովսէսն օրէնքումը,
և մարգարէներն էլ, գտանք՝ Յովսէփի որդի Յիսու-
46 սին՝ Նազարեթից։ Եւ Նաթանայէլը նորան ասեց.
Կարելի՞ է որ Նազարեթից մի բարի բան լինի.
47 Փիլիպպոսը նորան ասեց. Եկ և տես։ Յիսուսը տե-
սաւ Նաթանայէլին իրան մօտ գալիս՝ և ասեց նո-
րա համար. Ահա ճիշդ Իսրայէլացի. որի մէջ նեն-
48 գութիւն չ'կայ։ Նաթանայէլն ասում է նորան.
Ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ. Յիսուսը պատաս-
խանեց և ասեց նորան. Փիլիպպոսը դեռ քեզ չը
49 կանչած քեզ տեսայ որ թզենու տակն էիր. Նա-
թանայէլը պատասխանեց և ասեց. Ռաբբի, դու
Աստուծոյ Որդին ես. դու ես Իսրայէլի թագաւո-
50 րը։ Յիսուսը պատասխանեց և ասեց նորան. Որով-
հետեւ ես ասեցի քեզ թէ թզենու տակ տեսայ
քեզ, հաւատա՞ում ես. սորանցից էլ աւելի մեծ
51 բաներ կ'տեսնես։ Եւ նորան ասեց. Ճշմարիտ ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ, այսուհետեւ կ'տեսնէք
երկինքը բացուած, և Աստուծոյ հրեշտակներին
մարդի Որդու վերայ ելնելիս և իջնելիս։

*Այսինքն՝ Օծեալ։ †Այսինքն՝ վէմ։

ԳԼ. Բ

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլեայի Կանա-
2 յումը, և Յիսուսի մայրն այնտեղ էր։ Յիսուսն էլ
կանչուեցաւ այն հարսանիքը և Նորա աշակերտ-
3 ներն էլ։ Եւ երբոր գինին պակասեց, Յիսուսի
4 մայրն ասեց Նորան. Գինի չ'ունին։ Յիսուսը Նորան
ասեց, Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ, կին. իմ ժա-
5 մանակը դեռ չէ հասել։ Նորա մայրն ասեց սպա-
6 սաւորներին. Ինչ որ ասէ ձեզ, արէք։ Այնտեղ
վեց քարէ կարասներ կային Հրէաների մաքրուելու
համար, որոնցից ամեն մէկը երկու կամ երեք մար
7 էին տանում։ Յիսուսը նորանց ասեց. Այդ կա-
րասները ջրով լցրէք. և նորանց լցրին մինչև վերը։
8 Եւ նորանց ասեց. Հիմա առէք և տարէք սեղանա-
9 պետին. և նորանք տարան։ Եւ երբոր վերակացուն
այն գինի դառած ջուրը ճաշակեց, (և չ'գիտէր
թէ ինչ տեղից է. բայց սպասաւորները գիտէին՝ որ
ջուրը լցրել էին) սեղանապետը փեսային կանչեց,
10 Եւ նորան ասեց. Ամեն մարդ առաջ լաւ գինին է
տալիս. և երբոր արբենան, այն ժամանակ վատը.
11 դու լաւ գինին մինչև հիմա պահեցիր։ Նշանների
սկիզբը Յիսուսն այս արաւ Գալիլեայի Կանայումը.
և իր փառքը յայտնեց. և Նորա աշակերտները
հաւատացին Նորան։
12 Սորանից յետոյ Յիսուսն իջաւ Կափառնայում,
ինքն և իր մայրը և իր եղբայրները և իր աշակերտ-
ները. և շատ օրեր չ'մնացին այնտեղ։
13 Եւ Հրէաների զատիկը մօտ էր, և Յիսուսը ելաւ
14 Երուսաղէմ։ Եւ տաճարումը գտաւ եզներ և ոչ-
խարներ և աղաւնիներ ծախողներին, և սեղանա-
15 ւորներին նստած. Եւ չուանից խարազան շինեց, և

ամենին տաճարիցը դուրս հանեց՝ ոչխարներն էլ և
եզներն էլ, և սեղանաւորների պղինձները ցրուեց
16 և տախտակները կործանեց։ Եւ աղաւնի ծախող-
ներին ասեց. Դորանց վեր առէք այստեղից. իմ
17 Հօր տունը մի շինէք առուտուրի տուն։ Եւ Նորա
աշակերտները յիշեցին, թէ գրուած է, Քո տան
նախանձը կերաւ ինձ։
18 Արդ Հրէաները պատասխանեցին և ասեցին Նո-
րան. Ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ, որ անում ես
19 այդ։ Յիսուսը պատասխանեց և ասեց նորանց.
Քանդեցէք այդ տաճարը, և երեք օրում կ'կանգ-
20 նեցնեմ նորան։ Հրէաներն էլ ասեցին. Այս տա-
ճարը քառասունևվեց տարում շինուեցաւ, և դու
21 երեք օրումը կ'կանգնեցնե՞ս դորան։ Բայց Նա իր
22 մարմնի տաճարի համար էր ասում։ Արդ երբոր
Նա մեռելների միջից յարութիւն առաւ, Նորա ա-
շակերտները յիշեցին, թէ Նա ասեց նորանց այս
բանը. և հաւատացին գրքին՝ և այն խօսքին որ
ասեց Յիսուսը։
23 Եւ երբոր Երուսաղէմումն էր պասէքի տօնին, շատ
մարդիկ հաւատացին Նորա անունին. տեսնելով
24 Նորա այն նշանները, որ անում էր։ Բայց Յիսուս
ինքն իր անձը չէր հաւատում նորանց. որովհետև
25 ինքն ամենը գիտէր։ Եւ որովհետև պէտք չէր որ
մէկը վկայէր մարդի համար. որովհետև ինքը գի-
տէր Նէ ինչ կար մարդումը։

ԳԼ. Գ

1 Եւ փարիսեցիներիցը մի մարդ կար՝ անունը Նի-
2 կոդեմոս՝ Հրէաների իշխան։ Սա գիշերը Յիսուսի
մօտ եկաւ և ասեց Նորան. Ռաբբի, գիտենք որ
Աստուածանից վարդապետ ես եկել. որովհետև

ոչ ոք չէ կարող այդ նշաններն անել՝ որ դու ես
3 անում, եթէ Աստուած նորա հետ չ'լինի։ Յիսուսը
պատասխանեց և ասեց նորան. Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ քեզ. Եթէ մէկը վերստին չ'ծնուի՝ կա-
4 րող չէ Աստուծոյ արքայութիւնը տեսնել։ Նիկո-
դեմոսը նորան ասեց. Մարդ ի՞նչպէս կարող է ծըն-
ուիլ՝ որ ծեր է. մի՞թէ կարող է երկրորդ անգամ
5 իր մօր արգանդը մտնել և ծնուիլ։ Յիսուսը պա-
տասխանեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ.
եթէ մէկը ջրից և Հոգուց չ'ծնուի, նա կարող չէ
6 Աստուծոյ արքայութիւնը մտնել։ Մարմնիցը ծըն-
ուածը մարմին է. և Հոգուցը ծնուածը հոգի է։
7 Մի զարմանար՝ որ ասեցի քեզ թէ պէտք է ձեզ
8 վերստին ծնուիլ։ Քամին որտեղ ուզում է՝ փչում
է, և նորա ձայնը լսում ես. բայց չ'գիտես թէ ո՞ր
տեղից է գալիս և ո՞ր տեղ է գնում. այսպէս է
9 ամեն Հոգուցը ծնուածը։ Նիկոդեմոսը պատասխա-
նեց և ասեց նորան. Այդ ի՞նչպէս կարող է լինիլ։
10 Յիսուսը պատասխանեց և ասեց նորան. Դու ես
11 Իսրայէլի վարդապետը, և այս չ'գիտե՞ս։ Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ քեզ, թէ ինչ որ գիտենք
խօսում ենք, և ինչ որ տեսանք՝ վկայում ենք. և
12 մեր վկայութիւնը չէք ընդունում։ Եթէ երկրա-
ւոր բաներն ասեցի ձեզ, և չէք հաւատում, ապա
ի՞նչպէս կ'հաւատաք, եթէ երկնաւոր բաներն ա-
13 սեմ։ Եւ ոչ ոք վեր չ'ելաւ երկինքը, եթէ ոչ եր-
կընքից իջնողը՝ մարդի Որդին՝ նա որ երկնքումն է։
14 Եւ ինչպէս Մովսէսն օձը բարձրացրեց անապատու-
մը, այնպէս պէտք է մարդի Որդուն բարձրացուիլ.
15 Որ ամեն նորան հաւատացողը չ'կորչի, այլ յա-
16 ւիտենական կեանքն ունենայ։ Որովհետև Աստ-
ուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որ-
դին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չ'կոր-

17 չի, այլ յաւիտենական կեանքն ունենայ։ Որովհե-
տև Աստուած իր Որդին չ'ուղարկեց աշխարհքը,
որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով
18 փրկուի։ Նորան հաւատացողը չի դատապարտուիլ,
իսկ չ'հաւատացողն արդէն դատապարտուած է. ո-
րովհետև չ'հաւատաց Աստուծոյ միածին Որդու-
19 անունին։ Եւ սա է դատաստանը, որ լոյսն եկաւ
աշխարհքը, և մարդիկ խաւարն աւելի սիրեցին
քան թէ լոյսը, որովհետև նորանց գործերը չար
20 էին։ Որովհետև ամեն չար գործողը ատում է լոյ-
սին, և չէ գալիս դէպի լոյսը, որ նորա գործերը չը
21 յանդիմանուին։ Իսկ ճշմարտութիւն գործողը գա-
լիս է դէպի լոյսը, որ նորա գործերը յայտնուին,
որ Աստուծով գործուեցան։
22 Սորանից յետոյ եկաւ Յիսուսը և նորա աշակերտ-
ները Հրէաստանի երկիրը. և այնտեղ նորանց հետ
23 մնում՝ և մկրտում էր։ Եւ Յովհաննէսն էլ Այե-
նոնումն էր մկրտում՝ Սաղեմի մօտ. որովհետև
այնտեղ շատ ջուր կար. և գալիս էին և մկրտվում
24 էին։ Որովհետև Յովհաննէսը դեռ բանտի մէջ չէր
գցուած։
25 Արդ Յովհաննէսի աշակերտները Հրէաների հետ
26 վէճ ունեցան մաքրութեան համար։ Եւ Յովհան-
նէսի մօտ եկան և ասեցին նորան. Ռաբբի, նա որ
Յորդանանի այն կողմումն էր քեզ հետ, որի հա-
մար դու վկայեցիր, ահա նա մկրտում է, և ա-
27 մենքը նորա մօտ են գալիս։ Յովհաննէսը պատաս-
խանեց և ասեց. Մարդ չէ կարող ոչինչ վեր առ-
28 նել, եթէ երկնքիցը տրուած չ'լինի նորան։ Դուք
ինքներդ վկայում էք ինձ համար, որ ասեցի ձեզ,
թէ Ես Քրիստոսը չեմ, այլ թէ նորա առաջից
29 ուղարկուած եմ։ Հարսն ունեցողն է փեսայ. բայց
փեսայի բարեկամը, որ կանգնած է և լսում է նո-

րան, ուրախութիւնով ուրախանում է փեսայի
ձայնի համար․ արդ իմ այս ուրախութիւնը լց-
30 ուած է։ Նորան պէտք է աճել, և ինձ փոքրա-
31 նալ։ Վերևից եկողն ամենից վեր է․ երկրից
լինողը երկրից է և երկրից է խօսում․ երկնքից
32 եկողն ամենից վեր է․ ինչ որ տեսաւ և լսեց, նա
է վկայում․ և նորա վկայութիւնը ոչ ով չէ ըն-
33 դունում։ Նորա վկայութիւնն ընդունողը կնքեց,
34 թէ Աստուած ճշմարիտ է։ Որովհետև նա որին
Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն է խօսում․
որովհետև Աստուած Հոգին չափով չէ տալիս։
35 Հայրը սիրում է Որդուն, և ամեն բան նորա ձեռն
36 է տուել։ Որդուն հաւատացողը յաւիտենական
կեանք ունի․ իսկ Որդուն չ'հնազանդուողը կեանքը
չի տեսնիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է
նորա վերայ։

ԳԼ. Դ

1 Եւ երբոր Տէրն իմացաւ, որ փարիսեցիները լսե-
ցին, թէ Յիսուսը աւելի աշակերտներ է անում և
2 մկրտում քան թէ Յովհաննէսը, (թէպէտև Յի-
սուսը ինքը չէր մկրտում՝ այլ նորա աշակերտնե-
3 րը․) Հրէաստանի երկիրը թողեց և դարձեալ եկաւ
4 Գալիլեա։ Եւ պէտք էր որ Սամարիայի միջովն
5 անցնէր։ Արդ նա Սամարիայի մի քաղաքն եկաւ,
անունը Սիւքար, այն տեղի մօտ, որ Յակոբը տուել
6 էր որդի Յովսէփին։ Եւ Յակոբի մի աղբիւրը կար
այնտեղ․ և Յիսուսը ճանապարհից վաստակած
այն աղբիւրի վերայ նստեց․ և ժամը վեցին դէմ էր։
7 Արդ Սամարիայից մի կին եկաւ, որ ջուր հանէ․
8 Յիսուսը նորան ասեց․ Ինձ ջուր տուր խմեմ։ Որով-
հետև նորա աշակերտները քաղաքն էին գնացել,

9 որ կերակուր առնեն։ Սամարացի կինն էլ ասեց
նորան․ Դու որ Հրէայ ես, ի՞նչպէս ես ինձանից
ջուր ուզում խմել, որ մի Սամարացի կին եմ․ ո-
րովհետև Հրէաները չեն խառնվում Սամարացինե-
10 րի հետ։ Յիսուսը պատասխանեց և ասեց նորան,
Եթէ Աստուծոյ պարգևը գիտենայիր, և թէ ով է
նա, որ քեզ ասում է, Թէ Տուր ինձ խմել, ապա
դու նորանից կ'խնդրէիր, և նա կենդանի ջուր կը
11 տար քեզ։ Կինը նորան ասեց․ Տէր, դու դոյլ էլ
չ'ունիս, և հորը խոր է․ ապա ո՞րտեղից ունիս կեն-
12 դանի ջուրը։ Մի՞թէ դու աւելի մեծ ես քան մեր
հայր Յակոբը, որ այս հորը տուաւ մեզ․ և ինքը
սորանից խմեց, և նորա որդիքը և նորա անասուն-
13 ները։ Յիսուսը պատասխանեց և ասեց նորան, Ա-
մեն այդ ջրիցը խմողը դարձեալ կ'ծարաւի․ բայց
ով որ խմէ այն ջրիցը որ ես կ'տամ նորան, նա
14 յաւիտեան չի ծարաւիլ։ Այլ այն ջուրը, որ ես
կ'տամ նորան, ջրի աղբիւր կ'լինի նորանում, որ
15 յաւիտենական կեանքի համար կ'բղխէ։ Կինը նո-
րան ասեց․ Տէր, տուր ինձ այն ջուրը, որ չ'ծարա-
16 ւիմ, և չ'գամ այստեղ ջուր հանելու։ Յիսուսը
նորան ասեց․ Գնա կանչիր քո մարդին, և եկ այս-
17 տեղ։ Կինը պատասխանեց և ասեց․ Ես մարդ չ'ու-
նիմ․ Յիսուսը նորան ասեց․ Լաւ ասեցիր թէ Մարդ
18 չ'ունիմ․ Որովհետև դու հինգ մարդ ես ունեցել,
և նա որ հիմա ունիս, քո մարդը չէ․ դա ճշմարիտ
19 ասեցիր։ Կինը նորան ասեց․ Տէր, տեսնում եմ որ
20 դու մարգարէ ես։ Մեր հայրերը այս սարումը եր-
կըրպագութիւն արին․ և դուք ասում էք, թէ
Երուսաղէմումն է այն տեղն, ուր պէտք է երկըր-
21 պագութիւն անել։ Յիսուսը նորան ասեց․ Կին,
հաւատա ինձ, որ ժամանակ կ'գայ, որ այն ժա-
մանակ ոչ այս սարումը կ'երկրպագէք Հօրը, և ոչ

22 էլ Երուսաղէմումը։ Դուք երկրպագում էք նո-
րան, որ դուք չ'գիտէք. մենք երկրպագում ենք
նորան, որ գիտենք. որովհետև փրկութիւնը Հրէա-
23 ներիցն է։ Բայց ժամանակ կ'գայ, և հիմա է, որ
ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտու-
թիւնով կ'երկրպագեն Հօրը, որովհետև Հայրն էլ
24 այսպէս է ուզում իր երկրպագողներին։ Աստուած
Հոգի է, և նորան երկրպագողները պէտք է հոգով
25 և ճշմարտութիւնով երկրպագեն։ Կինն ասեց նո-
րան. Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ (որ Քրիստոս
է կոչվում). երբոր նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ
26 մեզ։ Յիսուսը նորան ասեց. Ես եմ, որ քեզ հետ
27 խօսում եմ։ Եւ սորա վերայ եկան նորա աշա-
կերտները, և զարմանում էին, որ կնկայ հետ խօ-
սում էր. բայց ոչ ոք չ'ասեց, Ի՞նչ ես ուզում,
28 կամ ի՞նչ ես խօսում դորա հետ։ Կինն էլ իր
կուժը թողեց, և գնաց քաղաք, և մարդկանց ա-
29 սեց. Եկէք տեսէք մի մարդ, որ ինձ ասեց բոլորը
30 ինչ որ գործել եմ. արդեօք նա՞ է Քրիստոսը։ Եւ
դուրս ելան քաղաքիցը, և նորա մօտ էին գալիս։
31 Եւ այն միջոցին աշակերտները խնդրում էին նո-
32 րան և ասում. Ռաբբի, կեր։ Նա էլ ասեց նորանց.
Ես կերակուր ունիմ ուտելու, որ դուք չ'գիտէք։
33 Աշակերտներն էլ իրար ասում էին. Արդեօ՞ք մի
34 մարդ դորան բան բերաւ ուտելու։ Յիսուսն ասեց
նորանց. Իմ կերակուրը նա է, որ ինձ ուղարկողի
35 կամքն անեմ, և նորա գործը կատարեմ։ Մի՞թէ
դուք չէք ասում, թէ Դեռ չորս ամիս կայ, և
հունձքը կ'գայ. ահա ես ասում եմ ձեզ. Բարձ-
րացրէք ձեր աչքերը, և տեսէք արտերը, որ սպի-
36 տակացել են և արդէն հնձին հասել։ Եւ հնձողը
վարձք է առնում, և յաւիտենական կեանքի մէջ
պտուղ ժողովում. որ սերմնողը և հնձողը իրար

37 հետ ուրախանան։ Որովհետև սորանում ճշմարիտ
է այն խօսքը, թէ Ուրիշ է սերմնողը, և ուրիշ է
38 հնձողը։ Ես ուղարկեցի ձեզ հնձել այն, որ դուք
չ'աշխատեցիք. ուրիշներն աշխատեցին, և դուք
նորանց աշխատանքի մէջը մտաք։
39 Եւ Սամարացիների այն քաղաքիցը շատերը հա-
ւատացին նորան այն կնկայ խօսքի համար, որ վը-
կայում էր, թէ Ասեց ինձ բոլորը ինչ որ գործել
40 էի։ Արդ երբոր Սամարացիները նորա մօտ եկան,
նորան աղաչեցին, որ իրանց մօտ մնայ. և երկու օր
41 մնաց այնտեղ։ Եւ էլ շատերը հաւատացին նորա՝
42 նորա խօսքի համար։ Եւ այն կնկան էլ ասում էին,
թէ Այլևս քո խօսքերի պատճառով չենք հաւա-
տում. որովհետև մենք ինքներս լսեցինք, և գի-
տենք որ ճշմարտապէս սա է աշխարհի փրկիչը՝
Քրիստոսը։
43 Եւ երկու օրից յետոյ այնտեղից դուրս եկաւ
44 գնաց Գալիլեա։ Որովհետև Յիսուսն ինքը վկայեց,
թէ Մարգարէն իր հայրենիքումը պատիւ չ'ունի։
45 Բայց երբոր Գալիլեա եկաւ, Գալիլեացիներն ըն-
դունեցին նորան. տեսնելով այն բոլորն, որ տօնին
արաւ Երուսաղէմումը. որովհետև նորանք էլ ե-
կել էին այն տօնին։
46 Եւ Յիսուսը դարձեալ եկաւ Գալիլեայի Կանան,
ուր ջուրը գինի արաւ. մի *ազնուական մարդ
կար, որի որդին Կափառնայումի մէջ հիւանդ էր։
47 Նա լսելով թէ Յիսուսը Հրէաստանիցն եկել է
Գալիլեա, եկաւ նորա մօտ և աղաչում էր, որ իջ-
նէ և իր որդուն բժշկէ. որովհետև մեռնելու մօտ
48 էր։ Յիսուսն էլ նորան ասեց, Եթէ նշաններ և
49 հրաշքներ չ'տեսնէք՝ չէք հաւատալ։ Ազնուականը

*կամ՝ թագաւորի պաշտօնեայ

Նորան ասեց. Տէր, իջիր դեռ քանի որ չէ մեռել
50 երեխաս: Յիսուսը Նորան ասեց. Գնա, քո որդին
կենդանի է. և մարդը հաւատաց այն խօսքին՝ որ
51 Յիսուսը Նորան ասեց, և գնաց: Եւ դեռ որ իջ-
նում էր, Նորա ծառաները Նորան դիմաւորեցին և
աւետիս տուին և ասեցին թէ Քո տղան կենդանի
52 է: Նա էլ Նորանց հարցնում էր այն ժամի հա-
մար, որ Նորանում սկսեց լաւանալ. և Նորան ա-
սեցին թէ Երէկ ժամը եօթին տենդը թողեց Նո-
53 րան: Այն ժամանակ հայրն իմացաւ, թէ նոյն ժա-
մին է, որ Յիսուսը Նորան ասեց թէ Քո որդին կեն-
դանի է. և հաւատաց ինքը և նորա բոլոր տունը:
54 Սա դարձեալ երկրորդ նշանն արաւ Յիսուսը,
երբոր Հրէաստանիցն եկաւ Գալիլեա:

ԳԼ. Ե

1 Սորանից յետոյ տօն էր Հրէաների. և Յիսուսը
2 վեր ելաւ Երուսաղէմ: Եւ Երուսաղէմում *Ոչ-
խարաց դուռն մօտ մի աւազան կայ, որ Եբրայեցե-
րէն Բեթհեզդա է կոչւում, որ հինգ սրահ ունի:
3 Նորանցում խիստ շատ հիւանդներ կային՝ պառ-
կած. կոյրեր, կաղեր, չորացածներ, [որ ջրի շար-
4 ժուելուն էին սպասում: Որովհետև Տիրոջ հրեշ-
տակը ժամանակ ժամանակ վայր էր գալիս այն ա-
ւազանը և ջուրը շարժում. և ջրի շարժուելուց
յետոյ Նորա մէջ առաջ մտնողը բժշկվում էր՝ ինչ
5 հիւանդութիւն էլ որ ունենար:] Եւ այնտեղ մի
մարդ կար, որ երեսուն և ութ տարի էր հիւան-
6 դութեան մէջ: Երբոր Յիսուսը Նորան պառկած
տեսաւ, և գիտաց, թէ արդէն շատ ժամանակից
7 է, Նորան ասեց. Կամենո՞ւմ ես առողջ լինել: Հի-

*Յուն. Պրոպատիկէ

ւանդը պատասխանեց Նորան. Տէր, մարդ չ՚ունիմ,
որ երբոր ջուրը շարժվում է՝ ինձ աւազանի մէջ
դցէ. և մինչև որ ես գալիս եմ, ուրիշն ինձանից
8 առաջ իջնում է մէջը: Յիսուսը Նորան ասեց. Վեր
9 կաց, մահիճդ առ և ման եկ: Եւ մարդն իսկոյն
ողջացաւ, և վեր առաւ իր մահիճը և ման էր գա-
10 լիս. և օրը շաբաթ էր: Հրէաներն էլ ասեցին բը-
ժըշկուածին. Շաբաթ է. արժան չէ քեզ, որ մա-
11 հիճդ վեր առնես: Նա պատասխանեց Նորանց.
Նա՝ որ ինձ բժշկեց, Նա ասեց ինձ. Մահիճդ առ
12 և ման եկ: Արդ հարցրին Նորան և ասեցին. Ո՞վ է
այն մարդը, որ քեզ ասեց. Մահիճդ առ և ման
13 եկ: Բայց բժշկուածը չ՚գիտէր թէ ո՛վ է. որով-
հետև Յիսուսը այն տեղի ամբոխի պատճառով
14 խոյս տուաւ: Սորանից յետոյ Յիսուսը Նորան գտաւ
տաճարումը՝ և Նորան ասեց. Ահա առողջացար,
այլ ևս չ՚մեղանչես, որ էլ աւելի չար բան չ՚լինի
15 քեզ: Մարդը գնաց և Հրէաներին պատմեց, թէ
Յիսուսն է, որ Նորան առողջացրել է:
16 Եւ Նորա համար Հրէաները Յիսուսին հալածում
էին, և ուզում էին Նորան սպանել, որ շաբաթ
17 օրն անում էր այն բանը: Եւ Յիսուսը պատաս-
խանեց նորանց. Իմ Հայրը մինչև հիմա գործում է,
18 և ես էլ գործում եմ: Նորա համար Հրէաներն
էլ աւելի ուզում էին սպանել Նորան. որ ոչ թէ
միայն շաբաթ օրն էր քանդում, այլ Աստուծուն
էլ իրան Հայր էր ասում, իր անձն Աստուծուն
19 հաւասար անելով: Յիսուսը պատասխանեց և ասեց
Նորանց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ Թէ
Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չը
տեսնէ Հօրն անելիս. որովհետև ինչ որ Նա անում
է, հէնց Որդին էլ այն բանը Նորա նման է անում:
20 Որովհետև Հայրը սիրում է Որդուն, և ամեն բան

ցոյց է տալիս նորան, որ ինքն անում է, և սորան-
ցից էլ աւելի մեծ մեծ գործեր ցոյց կ՚տայ նորան,
21 որ դուք զարմանաք։ Որովհետև ինչպէս որ Հայրը
մեռելներին յարուցանում է և կենդանի անում,
այնպէս էլ Որդին, որոնց որ կամենում է, կենդա-
22 նի է անում։ Որովհետև Հայրը ոչ մէկին էլ չէ
դատում, այլ ամեն դատաստանը տուաւ Որդուն.
23 Որ ամենքը պատուեն Որդուն, ինչպէս որ պատ-
ուում են Հօրը. Որդուն չ՚պատուողը՝ Հօրն էլ չէ
24 պատուում, որ ուղարկեց նորան։ Ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ. թէ իմ խօսքը լսողը, և ինձ
ուղարկողին հաւատացողը, յաւիտենական կեանք
ունի, և դատաստան չի մտնիլ, այլ մահից փոխ-
25 ուեցաւ դէպի կեանք։ Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ թէ ժամանակ կ՚գայ՝ և հիմա է, որ մե-
ռելներն Աստուծոյ Որդու ձայնը կ՚լսեն, և լսողնե-
26 րը կ՚ապրին. Որովհետև ինչպէս որ Հայրն իր ան-
ձումը կեանք ունի, այնպէս էլ Որդուն տուաւ՝ որ
27 իր անձումն կեանք ունենայ. Եւ նորան իշխանու-
թիւն տուաւ, որ դատաստան էլ անէ. որովհետև
28 մարդի Որդի է։ Սորա վերայ մի զարմանաք. որով-
հետև ժամանակ կ՚գայ, որ ամենքը՝ որ գերեզման-
29 ներումն են, նորա ձայնը կ՚լսեն։ Եւ դուրս կ՚գան
նորանք որ բարի են գործել՝ դէպի կեանքի յարու-
թիւնը, և նորանք որ չար են արել՝ դէպի դա-
30 տաստանի յարութիւնը։ Ես ինձանից չեմ կարող
ոչինչ անել. ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դա-
տում, և իմ դատաստանն արդար է. որովհետև
իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր
31 կամքը։ Եթէ ես ինձ համար վկայեմ՝ իմ վկայու-
32 թիւնը ճշմարիտ չէ։ Ուրիշն է որ ինձ համար վը-
կայում է. և ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկա-
33 յութիւնը, որ վկայում է ինձ համար։ Դուք ու-

ղարկեցիք Յովհաննէսի մօտ. և նա վկայութիւն
34 տուաւ ճշմարտութեանը։ Իսկ ես ոչ թէ մարդ-
կանցից եմ առնում վկայութիւնը. այլ սա ասում
35 եմ, որ դուք ապրիք։ Նա այն ճրագն էր՝ որ վառ-
վում էր և լոյս էր տալիս. և դուք կամեցաք մի
36 առ ժամանակ ուրախանալ նորա լոյսովը։ Բայց ես
աւելի մեծ վկայութիւն ունիմ քան թէ Յովհան-
նէսը, այսինքն այն գործերն, որ Հայրն ինձ տուաւ,
որ կատարեմ նորանց. նոյն այն գործերն՝ որ գոր-
ծում եմ, ինձ համար վկայում են, թէ Հայրն
37 ուղարկեց ինձ։ Եւ ինձ ուղարկող Հայրն ինքն ինձ
համար վկայեց. դուք ոչ նորա ձայնը լսեցիք եր-
38 բէք, և ոչ նորա կերպարանքը տեսաք. Եւ ոչ նո-
րա խօսքն ունիք բնակուած ձեզանում. որովհետև
այն որ նա ուղարկեց, դուք չէք հաւատում նո-
39 րան։ Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ
նորանցով ունիք յաւիտենական կեանք, և նորանք
40 են որ ինձ համար վկայում են։ Եւ դուք չէք կա-
41 մենում ինձ մօտ գալ, որ կեանք ունենաք։ Ես
42 մարդկանցից փառք չեմ առնում։ Բայց ճանա-
չում եմ ձեզ, որ Աստուծոյ սէրը չ՚ունիք ձեր ան-
43 ձերումը։ Ես իմ Հօր անունովն եկայ, և ինձ չէք
ընդունում. եթէ ուրիշը գայ իր անունովը, նորան
44 կ՚ընդունիք։ Ի՞նչպէս կարող էք դուք հաւատալ,
որ իրարից էք փառք առնում, և այն փառքը որ
45 միայն Աստուածանից է, չէք որոնում։ Մի կար-
ծէք, թէ ես Հօր մօտ ամբաստանութիւն կ՚անեմ
ձեզանից. կայ որ ձեզանից ամբաստանութիւն է
անում՝ Մովսէսը, որի վերայ դուք ձեր յոյսը դը-
46 րել էք։ Որովհետև եթէ դուք Մովսէսին հաւա-
տայիք, ինձ էլ կ՚հաւատայիք. որովհետև նա ինձ
47 համար գրեց։ Բայց եթէ նորա գրածներին չէք
հաւատում, ի՞նչպէս իմ խօսքերին կ՚հաւատաք։

ԳԼ. Զ

1 Սորանից յետոյ Յիսուսը գնաց Գալիլեայի Տիբեր-
2 եա ծովի միւս կողմը։ Եւ շատ ժողովուրդ գնում
էր նորա ետեւից. որովհետեւ տեսնում էին նորա
3 նշանները, որ անում էր հիւանդների վերայ։ Յի-
սուսն էլ վեր ելաւ սարը, և նստեց իր աշակերտ-
4 ների հետ այնտեղ։ Եւ Հրէաների զատիկի տօնը
մօտ էր։
5 Յիսուսն էլ իր աչքերը բարձրացրեց և տեսաւ,
որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ. ասեց Փի-
լիպպոսին. Ի՞նչ տեղից հաց առնենք, որ դորանք
6 ուտեն։ Բայց այս ասեց՝ նորան փորձելով. որովհե-
7 տեւ ինքը գիտէր թէ ինչ պիտի անէր։ Փիլիպպոսը
պատասխանեց նորան. Երկու հարիւր դահեկանի
հաց բաւական չէ դորանց, որ ամեն մէկը մի քիչ
8 առնէ։ Նորա աշակերտներից մէկը, Անդրէասը՝ Սի-
9 մօն Պետրոսի եղբայրն՝ ասեց նորան. Այստեղ մէկ
տղայ կայ, որ հինգ գարիէ հաց ունի և երկու
փոքր ձուկ. բայց սա ի՞նչ է այդչափ մարդկանց
10 համար։ Յիսուսն էլ ասեց. Մարդկանցը նստեցրէք.
և շատ խոտ կար այն տեղը. և մարդիկը նստեցին
11 համարով իբր հինգ հազար։ Եւ Յիսուսը հացերն
առաւ՝ գոհացաւ և բաժանեց աշակերտներին, և
աշակերտներն էլ նստողներին, նոյնպէս էլ ձկների-
12 ցը որչափ որ կամեցան։ Եւ երբոր կշտացան, ասեց
իր աշակերտներին. Ժողովեցէք աւելացած կտոր-
13 ները՝ որ բան չ'կորչի։ Եւ ժողովեցին, և կտորների-
ցը տասնեւերկու կողով լցրին այն հինգ գարիէ հա-
14 ցիցը, որ ուտողներիցն աւելացաւ։ Բայց մարդիկն՝
երբոր տեսան այն նշանն որ արաւ Յիսուսը, ասում
էին թէ Սա է ճշմարտապէս այն մարգարէն որ պի-

15 տի աշխարհք գար։ Յիսուսն էլ իմանալով թէ
գալու են իրան յափշտակեն, որ թագաւոր շինեն
16 իրան, դարձեալ մինակ գնաց սարը։ Եւ երբոր ե-
րեկուն եղաւ, նորա աշակերտները իջան ծովի եզ-
17 րը. Եւ նաւը մտնելով գնացին ծովի այն կողմը՝
Կափառնայում. և արդէն մթնել էր, և Յիսուսը
18 չէր եկել նորանց մօտ։ Եւ ծովն էլ սաստիկ քա-
19 մու փչելուցը յուզվում էր։ Եւ երբոր թիավարե-
լով քսանեւհինգ կամ երեսուն ասպարէզի չափ ա-
ռաջ էին գնացել, տեսան Յիսուսին ծովի վերայ
քայլելով գալիս, որ նաւին մօտենում էր և վա-
20 խեցան։ Նա էլ ասեց նորանց. Ես եմ մի վախե-
21 նաք։ Եւ կամենում էին նորան ընդունել նաւի
մէջ. և նաւը շուտով հասաւ այն երկիրը, որ
գնում էին։
22 Հետեւեալ օրն այն ժողովուրդը, որ ծովի այն
կողմին էր, տեսնելով որ ուրիշ նաւ չ'կար այն-
տեղ մէկիցը ջոկ՝ որ նորա աշակերտները նորա մէջ
մտան. և որ Յիսուսը իր աշակերտների հետ նաւը
չէր մտած, բայց միայն նորա աշակերտները գնա-
23 ցին. (Բայց Տիբերեայիցը ուրիշ նաւեր եկան այն
տեղի մօտ, ուր հացը կերան Տիրոջ գոհանալովը։)
24 Արդ երբոր ժողովուրդը տեսաւ, որ Յիսուսն այն-
տեղ չէ, և ոչ էլ նորա աշակերտները, իրանք էլ
նաւերը մտան և եկան Կափառնայում, Յիսուսին
25 որոնելով։ Եւ երբոր նորան ծովի այն կողմին գը-
տան, նորան ասեցին. Ռաբբի, ե՞րբ եկար այստեղ։
26 Յիսուսը պատասխանեց նորանց և ասեց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. դուք ինձ որոնում էք՝
ոչ թէ նորա համար որ նշաններ տեսաք, բայց որ
27 հացիցը կերաք և կշտացաք։ Գործեցէք ոչ թէ
կորչելու կերակուրի համար, այլ այն կերակուրի,
որ մնացող է յաւիտենական կեանքի մէջ, որ

մարդի Որդին կ'տայ ձեզ. որովհետև Աստուած
28 Հայրը կնքեց նորան։ Արդ նորան ասեցին. Ի՞նչ ա-
29 նենք, որ Աստուծոյ գործերը գործենք։ Յիսուսն
էլ պատասխանեց և նորանց ասեց. Սա է Աստու-
ծոյ գործը, որ հաւատաք նորան, որին նա ուղար-
30 կեց։ Եւ նորան ասեցին. Ապա դու ի՞նչ նշան ես
անում, որ տեսնենք և հաւատանք, ի՞նչ ես գոր-
31 ծում։ Մեր հայրերը անապատումը մանանան կե-
րան. ինչպէս գրուած է թէ Երկնքիցը հաց տուաւ
32 նորանց ուտելու։ Յիսուսն էլ նորանց ասեց. Ճշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. ոչ թէ Մովսէ-
սը տուաւ ձեզ այն հացը երկնքից, այլ իմ Հայրը
33 տալիս է ձեզ երկնքից ճշմարիտ հացը։ Որովհետև
Աստուծոյ հացը նա է՝ որ երկնքիցն է իջնում, և
34 որ աշխարհքին կեանք է տալիս։ Նորանք էլ ասե-
ցին. Տէր, ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը՝
35 Յիսուսն էլ նորանց ասեց. Ես եմ կեանքի հացը՝
ինձ մօտ եկողը չի սովիլ, և ինձ հաւատացողը եր-
36 բէք չի ծարաւիլ։ Բայց ես ասեցի ձեզ, թէ տե-
37 սաք էլ ինձ, և չէք հաւատում։ Այն ամենը որ
Հայրն ինձ տալիս է, ինձ մօտ կ'գայ. և ինձ մօտ
38 եկողին ես դուրս չեմ հանիլ։ Որովհետև ես իջայ
երկնքիցը, որ ոչ թէ իմ կամքն անեմ, այլ ինձ
39 ուղարկողի կամքը։ Սա է ինձ ուղարկող Հօր կամ-
քը, որ այն ամենը որ նա ինձ տուաւ. նորանից չեմ
կորցնեմ. այլ յետին օրումը յարուցանեմ նորան։
40 Եւ սա է ինձ ուղարկողի կամքը. որ ամեն ով որ
տեսնէ Որդուն և հաւատայ նորան, յաւիտենա-
կան կեանք ունենայ. և ես յետին օրումը կ'յա-
րուցանեմ նորան։
41 Հրէաներն էլ տրտնջում էին նորանից, որ ասեց
42 թէ Ես եմ երկնքից իջած հացը։ Եւ ասում էին.
Չէ՞ որ սա Յիսուսն է Յովսէփի որդին, որի հօրը և

մօրը ճանաչում ենք. ապա սա ի՞նչպէս է ասում,
43 Ես երկնքիցն եմ իջել։ Յիսուսն էլ պատասխանեց
44 և ասեց նորանց. Մի տրտնջաք իրար հետ։ Ոչ ով
կարող չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ու-
ղարկեց՝ չ'քաշէ նորան. և ես յետին օրումը կ'յա-
45 րուցանեմ նորան։ Գրուած է մարգարէների մէջ
թէ Եւ ամենքն Աստուածանից սովորած կ'լինին.
արդ ամեն ով որ Հօրիցը լսում և սովորում է,
46 գալիս է ինձ մօտ։ Ոչ որ չէ թէ մէկը տեսել է Հօ-
րը. բայց միայն նա, որ Աստուածանից է. նա տե-
47 սել է Հօրը։ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ.
Ինձ հաւատացողը յաւիտենական կեանք ունի.
48 Ես եմ կեանքի հացը։ (49) Ձեր հայրերը մանանան
50 կերան անապատումը, և մեռան. Սա է այն հացը,
որ երկնքիցն է իջնում որ եթէ մէկը սորանից ու-
51 տէ, չի մեռնիլ։ Ես եմ կենդանի հացն, որ երկըն-
52 քիցն է իջել։ Եթէ մէկն այս հացիցն ուտէ, յա-
ւիտեան կ'ապրի. և այն հացն՝ որ ես կ'տամ՝ իմ
մարմինն է, որ ես նորան աշխարհքի կեանքի հա-
մար կ'տամ։
53 Հրէաներն էլ իրար հետ կռւում էին և ասում.
Սա ի՞նչպէս կարող է իւր մարմինը տալ մեզ ուտե-
54 լու համար։ Յիսուսն էլ նորանց ասեց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ, եթէ մարդի Որդու
մարմինը չ'ուտէք և նորա արիւնը չ'խմէք, կեանք
55 չ'ունիք ձեր անձերումը։ Իմ մարմինը ուտողը և
իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի. և
56 ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան։ Որովհե-
տև իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, և իմ ա-
57 րիւնը ճշմարիտ խմելիք է։ Իմ մարմինն ուտողը և
իմ արիւնը խմողը մնում է ինձանում, և ես նո-
58 րանում։ Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրը,
և ես կենդանի եմ Հօր համար. այնպէս էլ նա որ

59 ինձ ուտում է, կենդանի կ'լինի ինձ համար ։ Սա
է այն հացը՝ որ երկնքից է իջել. ոչ թէ ինչպէս
ձեր հայրերը մանանան կերան և մեռան, այս հացն
ուտողը յաւիտեան կ'ապրի ։
60 Այս ասեց ժողովարանումը երբ որ Կափառնա-
յումի մէջ սովորեցնում էր ։
61 Եւ նորա աշակերտներից շատերը որ լսեցին, ասե-
ցին. Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան։
62 Բայց երբոր Յիսուսը գիտաց իր անձնումը, թէ իր ա-
շակերտները տրտնջում էին դորա համար, նորանց
63 ասեց. Դա գայթակղեցնո՞ւմ է ձեզ։ Ապա ի՞նչ եք
մտածելու եթէ մարդի Որդին տեսնէք՝ վեր գնալիս,
64 ուր որ առաջ էր։ Հոգին է կենդանացնողը, մարմի-
նը ոչինչ օգուտ չէ տալիս. այն բանն որ ես ձեզ
65 հետ խօսեցի, հոգի է և կեանք է։ Բայց ձեզանից
կան ոմանք, որ չեն հաւատում, որովհետև Յիսուսը
սկզբիցը գիտէր թէ ով են չ'հաւատացողները, և
66 ով է նա՝ որ պիտի մատնէր նորան։ Եւ ասեց. Նորա
համար ասեցի ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ
գալ, եթէ իմ Հօրիցը տրուած չ'լինի նորան ։
67 Սորանից յետոյ նորա աշակերտներից շատերը
ետ գնացին, և այլևս մօտ չէին գալիս նորա հետ ։
68 Յիսուսն էլ ասեց այն տասներկուսին, Մի՞թէ
69 դուք էլ ուզում էք գնալ։ Սիմօն Պետրոսն էլ
պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յա-
70 ւիտենական կեանքի խօսքեր ունիս դու ։ Եւ մենք
հաւատացինք և ճանաչեցինք, թէ դու ես Քրիս-
71 տոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին ։ Յիսուսը պա-
տասխանեց նորանց. Չէ՞ որ ես ձեզ տասներկու-
72 սիդ ընտրեցի, և ձեզանից մէկը սատանայ է ։ Եւ
աս խսկարիովտացի Սիմօնեան Յուդայի մասին էր
ասում. որ նա էր մատնելու նորան. և ինքը
տասներկուսից մէկն էր ։

ԳԼ. Է

1 Եւ սորանից յետոյ Յիսուսը մօտ էր գալիս Գա-
լիլեայի մէջ. որովհետև չէր կամենում Հրէաստա-
նումը մօտ գալ, որովհետև Հրէաները որոնում էին
սպանել նորան ։
2 Եւ Հրէաների տաղաւարահարաց տօնը մօտիկ
3 էր։ Եւ նորա եղբայրներն ասեցին նորան. Այստե-
ղից դուրս եկ և գնա Հրէաստան, որ քո աշակերտ-
ներն էլ տեսնեն քո գործերը, որ գործում ես.
4 Որովհետև ոչ ով չ'կայ՝ որ թագուն մի բան անէ,
և ուզէ ճանաչուած լինել. եթէ դու այդ բաները
գործում ես, քո անձը յայտնիր աշխարհքին ։
5 Որովհետև իր եղբայրներն էլ չէին հաւատում նո-
6 րան ։ Յիսուսն էլ ասեց նորանց. Իմ ժամանակը
դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատ-
7 րաստ է. Աշխարհքը կարող չէ ձեզ ատել. բայց
ինձ ատում է, որ ես նորա համար վկայում եմ,
8 թէ նորա գործերը չար են։ Դուք գնացէք այն տօ-
նին, ես դեռ չեմ գնում այն տօնին, որովհետև
9 իմ ժամանակը դեռ լրացած չէ։ Սա որ նորանց ա-
10 սեց, մնաց Գալիլեայումը ։ Երբոր նորա եղբայրները
գնացին, այն ժամանակ ինքն էլ գնաց այն տօնին,
ոչ թէ յայտնի, այլ իբր գաղտնաբար ։
11 Եւ Հրէաները որոնում էին նորան այն տօնումը
12 և ասում, Ո՞րտեղ է նա ։ Եւ ժողովուրդների մէջ
շատ զրոյց կար նորա համար. ոմանք ասում էին
թէ Բարի մարդ է. ուրիշներն էլ ասում էին. Ոչ,
13 այլ ժողովրդին մոլորեցնում է ։ Սակայն ոչ ով
համարձակ չէր խօսում նորա վերայ՝ Հրէաների
վախի համար ։
14 Եւ երբոր տօնն արդէն կէս եղաւ, Յիսուսը վեր

15 ելաւ տաճարը և սովորեցնում էր։ Եւ Հրէաները
զարմանում էին և ասում. Սա ի՞նչպէս գիտէ գիր-
16 քերը առանց սովորած լինելու ։ Յիսուսը պատաս-
խանեց նորանց և ասեց . Իմ վարդապետութիւնն
17 իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է։ Եթէ մէկը կա-
մենում է նորա կամքն անել, նա կ'իմանայ այս
վարդապետութեան համար, թէ արդեօք Աստուա-
ծանի՞ց է, կամ եթէ ես իմ անձից եմ խօսում։
18 Իր անձից խօսողը , իր անձի փառքն է որոնում.
բայց նա որ իրան ուղարկողի փառքն է որոնում,
նա ճշմարիտ է և անիրաւութիւն չ'կայ նորանում։
19 Չէ՞ որ Մովսէսը տուաւ ձեզ օրէնքը , և ձեզանից
20 ոչ ով չէ կատարում օրէնքը։ Ի՞նչու էք ուզում
ինձ սպանել. Ժողովուրդը պատասխանեց և ասեց.
21 Դև ունիս. ո՞վ է ուզում քեզ սպանել։ Յիսուսը
պատասխանեց և ասեց նորանց . Մի գործ գործե-
22 ցի, և ամենքդ զարմացել էք։ Նորա համար Մով-
սէսը ձեզ տուաւ թլփատութիւնը , (ոչ թէ Մով-
սէսից է, այլ հայրերից.) և շաբաթ օրը մարդ
23 էք թլփատում։ Եթէ մարդ շաբաթ օրումը թըլ-
փատութիւն է ընդունում, որ Մովսէսի օրէնքը չը
քանդուի , ինձ բարկանո՞ւմ էք , որ ես ամբողջ
24 մարդ բժշկեցի շաբաթ օրը։ Աչքի երևութով մի
դատէք , այլ ուղիղ դատաստան արէք ։
25 Արդ Երուսաղէմացիներից ոմանք ասում էին.
26 Չէ՞ որ սա նա է , որին ուզում են սպանել։ Եւ
ահա համարձակ խօսում է , և ոչինչ չեն ասում
դորան. մի գուցէ իրաւ իշխաններն էլ իմացան, որ
27 սա է ճշմարտապէս Քրիստոսը ։ Բայց սորան գի-
տենք, թէ որ տեղից է. իսկ Քրիստոսն երբոր գայ,
28 ոչ ոք չի գիտենալ թէ որ տեղից է ։ Յիսուսն էլ
սովորեցնելիս աղաղակեց տաճարումն ասելով. Ինձ
էլ գիտէք և գիտէք էլ թէ ինչ տեղից եմ. և ես

իմ անձից չեմ եկել. այլ ճշմարիտ է ինձ ու-
29 ղարկողը որին դուք չ'գիտէք։ Իսկ ես գիտեմ նո-
րան, որովհետև նորանից եմ, և նա ուղարկեց ինձ։
30 Եւ ուզում էին բռնել նորան. բայց ոչ ով ձեռք
չ'ձգեց նորա վերայ . որովհետև նորա ժամը դեռ
31 չէր հասել։ Եւ ժողովրդից շատերը հաւատացին
նորան և ասում էին թէ երբոր Քրիստոս գայ ,
արդեօ՞ք դորանցից աւելի նշաններ կ'անէ, քան որ
սա արաւ ։
32 Եւ փարիսեցիները լսեցին ժողովրդից , որ այդ
բաները տրտնջում էին նորա համար. և փարիսե-
ցիները և քահանայապետներն սպասաւորներ ու-
33 ղարկեցին, որ բռնեն նորան։ Յիսուսն էլ ասեց նո-
րանց . Դեռ մի քիչ ժամանակ ձեզ հետ եմ, և
34 գնում եմ ինձ ուղարկողի մօտ ։ Ինձ կ'որոնէք և
չէք գտնիլ, և որտեղ որ ես եմ, դուք չէք կարող
35 գալ։ Հրէաներն էլ իրար ասեցին . Դա ո՞րտեղ է
գնալու , որ մենք չ'գտնենք դորան. արդեօ՞ք Հել-
լենացիների ցրուած ժողովուրդների մօտն է գնա-
36 լու և Հելլենացիներին է սովորեցնելու։ Ի՞նչ է այն
խօսքն, որ ասեց Թէ Ինձ կ'որոնէք և չէք գտնիլ, և
որտեղ որ ես եմ, դուք չէք կարող գալ։
37 Եւ տօնի վերջին մեծ օրումը Յիսուսը կանգնած
էր , աղաղակեց և ասեց . Եթէ մէկը ծարաւ է ,
38 թող ինձ մօտ գայ , և խմէ ։ Ինձ հաւատացողը ,
ինչպէս գիրքն ասում է , Նորա փորից կենդանի
39 ջրերի գետեր կ'բղխին ։ Սա ասեց այն Հոգու հա-
մար , որ ընդունելու էին նորա հաւատացողները ,
որովհետև դեռ Սուրբ Հոգին տրուած չէր , որով-
40 հետև Յիսուսը դեռ չէր փառաւորուած։ Արդ ժո-
ղովրդից շատերը, երբոր այս խօսքը լսեցին, ասում
41 էին. Սա ճշմարտապէս այն մարգարէն է։ Ուրիշ-
ներն ասում էին. Սա Քրիստոսն է. և էլ ուրիշ-

ներն ասում էին. Մի՞թէ Քրիստոսը Գալիլեայից
42 կ'գայ։ Չէ՞ որ գիրքն ասում է, Քրիստոսը Դաւի-
թի սերունդից և Բեթլէհէմ գիւղից կ'գայ, ու-
43 տեղ Դաւիթն էր։ Եւ տարաձայնութիւն եղաւ
44 ժողովրդի մէջ նորա համար։ Եւ նորանցից ոմանք
կամեցան բռնել նորան. բայց ոչ ոք ձեռք չ'ձգեց
նորա վերայ։

45 Եւ սպասաւորները եկան քահանայապետների և
փարիսեցիների մօտ. և սորանք ասեցին նորանց.
46 Ի՞նչու համար նորան չ'բերիք։ Սպասաւորները պա-
տասխանեցին. Երբէք մի մարդ այսպէս չ'խօսեց
47 ինչպէս այս մարդը։ Փարիսեցիներն էլ պատասխա-
նեցին և ասեցին. Մի՞թէ դուք էլ մոլորուեցիք։
48 Մի՞թէ իշխաններից կամ փարիսեցիներից մէկը
49 հաւատա՞ց նորան։ Այլ այդ ռամիկ ժողովուրդը,
50 որ օրէնքը չ'գիտէ, անիծուած են։ Նիկոդեմոսը,
որ գիշերը նորա մօտ էր եկել, նորանցից մէկը լի-
51 նելով, ասեց նորանց. Մի՞թէ մեր օրէնքը մի մար-
դի դատում է, եթէ առաջ չ'լսէ նորանից և չը
52 գիտենայ, թէ ինչ է գործում։ Պատասխանեցին
և ասեցին նորան. Մի՞թէ դու էլ ես Գալիլեայի-
ցը. քննիր և տես, որ Գալիլեայից մարգարէ դուրս
53 չէ եկել։ Եւ ամեն մէկը գնաց իր տունը։

ԳԼ. Ը

1 Եւ Յիսուսը գնաց Ձիթենեաց սարը։ (2) Եւ ա-
ռաւօտանց դարձեալ եկաւ տաճարը, և բոլոր
ժողովուրդը նորա մօտ էր գալիս. և նա նստած
3 սովորեցնում էր նորանց։ Դպիրները և փարիսեցի-
ները մի կին բերին նորա մօտ՝ շնութեան մէջ բռ-
4 նուած, և նորան մէջտեղը կանգնեցնելով, նորան
ասեցին. Վարդապետ, այս կինը բռնուել է յայտ-

5 նապէս շնանալիս։ Եւ օրէնքումը Մովսէսը պատ-
ուիրեց մեզ, որ այսպիսիները քարկոծուին. հիմա
6 դու ի՞նչ ես ասում։ Բայց այս բանն ասում էին՝
նորան փորձելով, որ չարախօսեն նորանից։ Յիսուսն
էլ դէպի ցած ծռուելով՝ մատովը գրում էր հողի
7 վերայ։ Բայց երբոր ստիպում էին հարցնելով նո-
րան, վեր նայեց՝ և ասեց. Ձեզանից ով որ անմեղ
8 է, թող առաջ նա քար գցէ դորա վերայ։ Եւ
դարձեալ դէպի ցած ծռուելով՝ գրում էր հողի
9 վերայ։ Նորանք էլ երբոր •• լսեցին և իրանց
խղճմտանքից յանդիմանուեցան՝ մէկը մէկի ետե-
ւից դուրս էին գնում, ծերերից սկսած մինչև
յետինները. և Յիսուսը միայն մնաց, և կինը կանգ-
10 նած մէջտեղը։ Յիսուսն էլ վեր նայեց, ոչ ոքին չը
տեսաւ այն կնկանից ջոկ, և ասեց նորան. Ով կին,
ո՞ւր են [քեզ ամբաստանողները]. ոչ ով քեզ չը
11 դատապարտե՞ց։ Նա էլ ասեց. Ոչ, ով Տէր. և
Յիսուսն էլ ասեց նորան. Ես էլ չեմ քեզ դատա-
պարտում. գնա, և այսուհետև մեղք մի գործիր։
12 Արդ Յիսուսը դարձեալ խօսեց նորանց հետ և
ասեց. Ես եմ աշխարհքի լոյսը. ով որ իմ ետևից
գայ, նա խաւարումը չի գնալ, այլ կեանքի լոյսը
13 կ'ընդունի։ Փարիսեցիներն էլ ասեցին նորան. Դու
ես քո անձի համար վկայում. քո վկայութիւնը
14 ճշմարիտ չէ։ Յիսուսը պատասխանեց և ասեց նո-
րանց. Թէև ես վկայեմ իմ անձի համար, իմ վը-
կայութիւնը ճշմարիտ է. որովհետև գիտեմ թէ
որտեղից եկայ և որտեղ եմ գնում. բայց դուք
չ'գիտէք, թէ որտեղից եմ գալիս, և որտեղ եմ
15 գնում։ Դուք մարմնի համեմատ էք դատում. ես
16 չեմ դատում ոչ մէկին էլ։ Եւ եթէ ես դատեմ
էլ, իմ դատաստանը ճշմարիտ է. որովհետև ես
17 միայն չեմ, այլ ես և ինձ ուղարկող Հայրը։ Եւ

ձեր օրէնքումն էլ գրուած է թէ Երկու մարդ-
18 կանց վկայութիւնը ճշմարիտ է ։ Ես եմ, որ ինձ
համար վկայում եմ, և վկայում է ինձ համար
19 ինձ ուղարկող Հայրը։ Եւ ասում էին նորան. Ո՞ւր
է քո Հայրը. Յիսուսը պատասխանեց. Ոչ ինձ գի-
տէք, և ոչ իմ Հօրը. եթէ ինձ գիտենայիք, իմ
Հօրն էլ կ՚գիտենայիք ։
20 Այս բանը Յիսուսը գանձատան մէջ խօսեց նորանց
հետ տաճարումը սովորեցնելիս. և ոչ ով չ՚բռ-
նեց նորան. որովհետև դեռ նորա ժամը չէր հասել ։
21 Յիսուսը դարձեալ ասեց նորանց. Ես գնում եմ,
և ինձ կ՚որոնէք. և ձեր մեղքի մէջ կ՚մեռնիք.
որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ ։
22 Հրէաներն էլ ասում էին. Միթէ ինքն իրան կը
սպանէ, որ ասում է, թէ Որտեղ որ ես եմ գնում,
23 դուք չէք կարող գալ ։ Եւ ասեց նորանց. Դուք
ներքևից էք, ես վերևից եմ. դուք այս աշխարհ-
24 քից էք, ես այս աշխարհքիցը չեմ ։ Արդ ես ասե-
ցի ձեզ, թէ Ձեր մեղքի մէջ կ՚մեռնիք. որովհե-
տև եթէ չ՚հաւատաք թէ ես եմ, ձեր մեղքի մէջ
25 կ՚մեռնիք ։ Եւ նորանք ասեցին նորան. Դու ո՞վ ես.
և Յիսուսն ասեց նորանց. *Այն, որ սկզբից ձեզ
26 հետ խօսում եմ ։ Շատ բան ունիմ ձեզ համար
խօսելու և դատելու, բայց ինձ ուղարկողը ճշմա-
րիտ է. և ես ինչ որ նորանից լսեցի, այն եմ խօ-
27 սում աշխարհքի մէջ ։ Չ՚իմացան, թէ Հօր համար
էր ասում նորանց ։
28 Յիսուսն էլ ասեց նորանց. Երբոր մարդի Որդին
կ՚բարձրացնէք, այն ժամանակ կ՚իմանաք, թէ ես
եմ. և իմ անձիցը ոչինչ չեմ անում. այլ ինչպէս
29 իմ Հայրը սովորեցրեց ինձ, այն եմ խօսում ։ Եւ

*Կամ՝ Առաջ այն՝ որ խօսում էլ եմ ձեզ հետ ։

ինձ ուղարկողն ինձ հետ է. ինձ մինակ չէ թողել
Հայրը, որովհետև ես միշտ նորան հաճելի բաներն
եմ անում ։
30 Երբոր նա այս բաները խօսում էր, շատերը հա-
31 ւատացին նորան ։ Եւ Յիսուսն իրան հաւատացած
Հրէաներին ասեց. Եթէ դուք իմ խօսքի մէջ կե-
32 նաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք ։ Եւ ճըշ-
մարտութիւնը կ՚ճանաչէք. և ճշմարտութիւնը
33 կ՚ազատէ ձեզ ։ Պատասխանեցին նորան. Մենք Աբ-
րահամի զաւակ ենք, և ոչ ոքի երբէք չենք ծա-
ռայել, դու ի՞նչպէս ես ասում, թէ ազատ կ՚լի-
34 նիք ։ Յիսուսը պատասխանեց նորանց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ամեն ով որ մեղք
35 է գործում, մեղքի ծառայ է ։ Ծառան էլ յաւի-
տեան չէ կենում տան մէջ. որդին կենում է յա-
36 ւիտեան ։ Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ, ճշմա-
37 րիտ ազատ կ՚լինիք ։ Գիտեմ որ Աբրահամի զաւակ
էք. բայց ուզում էք ինձ սպանել. որովհետև իմ
38 խօսքը տեղ չ՚ունի ձեզանում ։ Ես ինչ որ տեսայ
իմ Հօր մօտ, խօսում եմ. և դուք՝ ինչ որ ձեր
39 հօրիցը տեսաք, անում էք ։ Պատասխանեցին և ա-
սեցին նորան. Մեր հայրն Աբրահամն է. Յիսուսը
նորանց ասեց. Եթէ Աբրահամի որդիք լինէիք, Աբ-
40 րահամի գործերը կ՚գործէիք ։ Բայց հիմա ուզում
էք ինձ սպանել, մի մարդի, որ ճշմարտութիւնն
եմ խօսել ձեզ. որ Աստուածանից լսեցի. այդ
41 բանն Աբրահամը չ՚արաւ ։ Դուք ձեր հօր գործերն
էք անում. և ասեցին նորան. Մենք պոռնկութիւ-
նից չենք ծնուած. մէկ Հայր ունինք, այսինքն Աս-
42 տուած. Յիսուսն էլ նորանց ասեց. Եթէ ձեր հայրն
Աստուած լինէր, ինձ կ՚սիրէիք. որովհետև ես Աս-
տուածանից դուրս ելայ և եկայ. որովհետև ոչ
թէ իմ անձիցն եկայ, այլ նա ուղարկեց ինձ ։

43 Ի՞նչու համար իմ խօսքը չէք իմանում. Նորա հա-
44 մար որ դուք չէք կարող իմ խօսքը լսել։ Դուք
Յէր սատանայ հօրիցն էք, և կամենում էք ձեր հօր
ցանկութիւններն անել. Նա սկզբիցը մարդասպան
էր, և ճշմարտութեան մէջ չ'կեցաւ, որովհետև
ճշմարտութիւն չ'կայ նորանում. երբոր սուտն է
խօսում, իրաններիցն է խօսում, որովհետև ստա-
45 խօս է և *ստութեան հայրը։ Բայց ես, որովհետև
ճշմարտութիւն եմ խօսում, ինձ չէք հաւատում։
46 Ձեզանից ո՞վ կարող է ինձ մեղքի համար յան-
դիմանել. բայց եթէ ճշմարտութիւնն եմ ասում,
47 ի՞նչու չէք հաւատում ինձ։ Աստուածանից լինողը
Աստուծոյ խօսքերը լսում է. Նորա համար դուք
48 չէք ականջ դնում, որ Աստուածանից չէք։ Հրէա-
ները պատասխանեցին և ասեցին նորան. Ձէ՞ որ
մենք լաւ ենք ասում, թէ դու Սամարացի ես, և
49 դև ունիս։ Յիսուսը պատասխանեց. Ես դև չ'ու-
նիմ, այլ իմ Հօրը պատուում եմ, և դուք ան-
50 պատուում էք ինձ։ Եւ ես իմ փառքը չեմ որո-
51 նում. կայ որոնողը և դատողը։ Ճշմարիտ ճշմա-
րիտ ասում եմ ձեզ. Եթէ մէկն իմ խօսքը պահէ,
52 նա մահ չի տեսնիլ յաւիտեան։ Հրէաներն էլ ա-
սեցին նորան. Հիմա իմացանք, որ դև ունիս. Աբ-
րահամը մեռաւ և մարգարէներն էլ. և դու ա-
սում ես, Եթէ մէկն իմ խօսքը պահէ, մահ չի ճա-
53 շակիլ յաւիտեան։ Մի՞թէ դու աւելի մեծ ես
քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ և մարգա-
54 րէներն էլ մեռան. դու քեզ ո՞վ ես անում։ Յի-
սուսը պատասխանեց. Եթէ ես իմ անձը փառաւո-
րեմ, իմ փառքը ոչինչ է. Հայրն է ինձ փառաւո-
րողը, որի համար դուք ասում էք, թէ ձեր Աս-

*Յուն. Նորա

55 տուածն է. Եւ դուք չէք ճանաչում նորան. բայց
ես գիտեմ նորան. և եթէ ասեմ, թէ ես չ'գիտեմ
նորան, ձեզ նման ստախօս կ'լինիմ. բայց ես գի-
56 տեմ նորան, և նորա խօսքը պահում եմ։ Աբրա-
համ՝ ձեր հայրը *ցանկացաւ, որ իմ օրը տեսնէ, և
57 տեսաւ, և ուրախացաւ էլ։ Հրէաները նորան ա-
սեցին. Դու դեռ յիսուն տարեկան չես, և Աբրա-
58 համի՞ն տեսար։ Յիսուսը նորանց ասեց. Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. Աբրահամի լինելուց ա-
59 ռաջ եմ ես։ Եւ նորանք քարեր վեր առան, որ
նորա վերայ գցեն. բայց Յիսուսը ծածկուեցաւ, և
դուրս ելաւ գնաց տաճարից՝ [նորանց միջովն անց-
նելով. և այսպէս գնաց։]

ԳԼ. Թ

1 Եւ անցկենալիս մի մարդ տեսաւ ծնունդից կոյր։
2 Եւ նորա աշակերտները հարցրին նորան և ասեցին.
Ռաբբի, ո՞վ է մեղանչել, սա՞ թէ իրան ծնողքը,
3 որ կոյր է ծնուել։ Յիսուսը պատասխանեց. Ոչ դա
է մեղանչել, և ոչ էլ իրան ծնողքը. այլ որ Աս-
4 տուծոյ գործերը յայտնի լինին դորանում։ Ինձ
պէտք է նորա գործերը գործել, որ ինձ ուղարկեց,
քանի որ օր կայ. գիշերը գալիս է, որ այն ժամա-
5 նակ ոչ ով կարող չէ գործել։ Քանի որ աշխարհ-
6 քումն եմ, լոյս եմ աշխարհքի. Այս ասելով թքեց
գետինը, և թուքիցը ցեխ շինեց, և ցեխը քսեց
7 կոյրի աչքերի վերայ, Եւ նորան ասեց. Գնա լուա-
ցուիր Սիլովամի աւազանումը, (որ թարգմանվում
է՝ Ուղարկուած.) և նա գնաց լուացուեցաւ, եկաւ
8 և տեսնում էր։ Բայց դրացիները և նորանք որ ա-

*Յուն. ցնծաց

առաջուց տեսել էին նորան, որ կոյր էր, ասում
9 էին՝ Չէ՞ որ սա է այն նստող մուրացողը. Ուրիշ-
ներն ասում էին, թէ Նա է. ուրիշներն էլ, թէ
Նորան նման է. բայց ինքն ասում էր թէ Ես եմ:
10 Եւ նորան ասում էին. Ապա աչքերդ ի՞նչպէս բաց-
11 ուեցան: Նա պատասխանեց և ասեց. Մի մարդ՝ ա-
նունը Յիսուս, ցեխ շինեց և աչքերիս քսեց, և ինձ
ասեց. Գնա Սիլովամի աւազանը, և լուացուիր.
12 գնացի և լուացուեցայ, և տեսնում եմ: Եւ նորան
ասեցին. Ո՞ւր է նա. ասեց. Չ՚գիտեմ:
13 Փարիսեցիների մօտ տարան նորան, որ մի ժամա-
14 նակ կոյր էր: Եւ շաբաթ օր էր, երբոր Յիսուսը
15 ցեխը շինեց և նորա աչքերը բացաւ: Փարիսեցինե-
րը դարձեալ հարցնում էին նորան, թէ ի՛նչպէս
տեսաւ. և նա նորանց ասեց. Ցեխ դրաւ իմ աչքե-
16 րի վերայ, և լուացուեցայ, և տեսնում եմ: Եւ
Փարիսեցիներից ոմանք ասեցին. Այն մարդն Ա-
տուածանից չէ, որ շաբաթը չէ պահում. ուրիշ-
ներն ասում էին, Ի՞նչպէս կարող է մի մեղաւոր
մարդ այսպիսի նշաններ անել. և բաժանմունք կար
17 նորանց մէջ: Դարձեալ ասեցին կոյրին. Դու ի՛նչ
ես ասում նորա համար, որ աչքերդ բացաւ. և
18 նա ասեց, թէ Մարգարէ է: Եւ Հրէաները չէին
հաւատում նորա համար, թէ կոյր էր և բացուե-
ցաւ. մինչև որ աչքը բացուածի ծնողներին կանչե-
19 ցին. Նորանց հարցրին և ասեցին. Սա՞ է ձեր որ-
դին, որի համար ասում էք դուք, թէ կոյր ծըն-
20 ուեցաւ. ապա ի՞նչպէս է հիմա տեսնում: Նորա
ծնողները պատասխանեցին և ասեցին. Գիտենք, որ
21 սա է մեր որդին, և թէ կոյր ծնուեցաւ. Բայց թէ
հիմա ի՞նչպէս է տեսնում, չ՚գիտենք, կամ ո՞վ
բացաւ նորա աչքերը, մենք չ՚գիտենք. ինքը չա-
փահաս է. իրան հարցրէք. Թող ինքը խօսի իրան

22 համար: Նորա ծնողներն այս ասեցին, որովհետև
Հրէաներիցը վախենում էին. որովհետև Հրէաները
արդէն միասին որոշել էին, որ եթէ մէկը Քրիս-
տոս դաւանէ նորան, ժողովարանիցը դուրս լինի:
23 Նորա համար նորա ծնողներն ասեցին, թէ Ինքը
24 չափահաս է, իրանից հարցրէք: Յետոյ երկրորդ
անգամ կանչեցին այն մարդին, որ կոյր էր, և նո-
րան ասեցին. Աստուծուն փառք տուր. մենք գի-
25 տենք, որ այն մարդը մեղաւոր է: Նա էլ պա-
տասխանեց և ասեց. Թէ մեղաւոր է, ես չ՚գիտեմ.
մի բան գիտեմ, որ կոյր էի և հիմա տեսնում եմ:
26 Եւ դարձեալ ասեցին նորան. Ի՞նչ արաւ քեզ.
27 ի՞նչպէս բացաւ աչքերդ. Նորանց պատասխանեց,
Արդէն ձեզ ասեցի և չ՚լսեցիք. ի՞նչու էք դարձեալ
կամենում լսել. մի՞թէ դուք էլ էք կամենում նո-
28 րան աշակերտ լինել: Նորանք նախատեցին նորան և
ասեցին. Դու ես նորա աշակերտ. իսկ մենք Մովսէսի
29 աշակերտներն ենք: Մենք գիտենք, որ Աստուած
Մովսէսի հետ խօսեց. բայց սորան չ՚գիտենք Թէ
30 ո՞րտեղից է: Մարդը պատասխանեց և նորանց ա-
սեց. Հէնց դա է զարմանալին որ դուք չ՚գիտէք
31 թէ ո՞ր տեղից է, և նա իմ աչքերը բացաւ: Եւ
գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լսում.
այլ եթէ մէկը աստուածապաշտ է՝ և նորա կամ-
32 քը կատարում է, նորան լսում է: Աշխարհքի սկզ-
բից հետէ չէ լսուած որ մէկը կոյր ծնուածի աչ-
33 քերը բացած լինի: Եթէ սա Աստուածանից չէր,
34 ոչինչ չէր կարող անել: Պատասխանեցին և նորան
ասեցին. Դու բոլորովին մեղքի մէջ ես ծնուել, և
դո՞ւ ես մեզ սովորեցնում. և դուրս արին նորան:
35 Յիսուսը լսեց, որ նորան դուրս արին. և նորան
գտաւ և ասեց նորան. Դու հաւատո՞ւմ ես Աս-
36 տուծոյ Որդուն: Նա պատասխանեց և ասեց. Տէր,

37 ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան։ Յիսուսն էլ նո-
րան ասեց. Տեսար էլ նորան. և քեզ հետ խօսողն
38 էլ նա ինքն է։ Եւ նա ասեց. Հաւատում եմ, Տէր,
39 և երկրպագեց նորան։ Եւ Յիսուսն ասեց. Ես դա-
տաստանի համար եկայ այս աշխարհքը, որ չ՚տես-
նողները տեսնեն, և տեսնողները կուրանան։
40 Եւ փարիսեցիներից ոմանք, որ նորա հետ էին,
լսեցին այս, և ասեցին նորան. Մի՞թէ մենք էլ
41 կոյր ենք։ Յիսուսը նորանց ասեց. Եթէ կոյր լի-
նէիք, մեղք չէիք ունենալ. բայց հիմա ասում էք,
թէ Տեսնում ենք. նորա համար ձեր մեղքերը
մնում են։

ԳԼ. Ժ

1 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ով որ դռնո-
վը չէ մտնում ոչխարների գաւիթը, այլ ուրիշ կող-
2 մից է վեր ելնում, նա գող է և աւազակ։ Բայց
3 դռնովը մտնողը, ոչխարների հովիւն է։ Դռնապա-
նը նորա համար բաց է անում. և ոչխարները նորա
ձայնը լսում են, և նա իր ոչխարներն իրանց անու-
4 նովը կանչում է, և նորանց դուրս է հանում։ Եւ
երբոր իր ոչխարները դուրս է հանում, նորանց ա-
ռաջից գնում է, և ոչխարները գնում են նորա ե-
5 տևից. որովհետև նորա ձայնը ճանաչում են։ Բայց
օտարի ետևից չեն գնում. այլ նորանից փախչում
են, որովհետև օտարների ձայնը չեն ճանաչում։
6 Այս առակը Յիսուսը ասեց նորանց. բայց նո-
րանք չ՚գիտէին թէ ինչ էր այն որ խօսում էր նո-
7 րանց հետ։ Յիսուսը դարձեալ նորանց ասեց. Ճշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ Ես եմ ոչ-
8 խարների դուռը։ Ամենքը՝ որ ինձանից առաջ ե-
կան, գողեր են և աւազակներ. և ոչխարներն էլ

9 նորանց չ՚լսեցին։ Ես եմ դուռը. եթէ մէկն ինձա-
նով ներս մտնէ, կ՚ապրի. և կ՚մտնէ և դուրս կը
10 գայ, և արօտ կ՚գտնէ։ Գողը չէ գալիս, բայց միայն
որ գողանայ և սպանէ և կորցնէ. ես եկայ որ կեանք
11 ունենան, և էլ աւելի ունենան։ Ես եմ բարի հո-
վիւը. բարի հովիւն իր անձը դնում է ոչխարների
12 համար։ Բայց վարձկանը որ հովիւ չէ, որ ոչխար-
ներն իրանը չեն, տեսնում է գայլին գալիս, և թո-
ղում է ոչխարները և փախչում. և գայլը յափշ-
13 տակում է նորանց և ցրւում է ոչխարներին։ Եւ
վարձկանը փախչում է, որովհետև վարձկան է, և
14 ոչխարների համար հոգս չ՚ունի։ Ես եմ բարի հո-
վիւը, և ես իմիններին ճանաչում եմ, և իմիննե-
15 րիցն էլ ճանաչվում եմ։ Ինչպէս Հայրն է ինձ ճա-
նաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը, և իմ անձը
16 դնում եմ ոչխարների համար։ Եւ ուրիշ ոչխարներ
էլ ունիմ, որ այս գաւիթիցը չեն, և նորանց էլ
պէտք է բերեմ. և իմ ձայնին կ՚լսեն, և մի հօտ և
17 մի հովիւ կ՚լինին։ Նորա համար իմ Հայրը սիրում
է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպէս զի դարձեալ
18 առնեմ նորան։ Ոչ ով նորան վեր չէ առնում ին-
ձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան.
ես իշխանութիւն ունիմ նորան դնելու և իշխա-
նութիւն ունիմ նորան դարձեալ առնելու. այս
19 պատուէրն առայ իմ Հօրիցը։ Արդ դարձեալ բա-
ժանմունք եղաւ Հրէաների մէջ այս խօսքերի հա-
20 մար։ Եւ նորանցից շատերն ասում էին թէ Դև ու-
նի, և գժվում է. ինչու էք ականջ դնում դորան։
21 Ուրիշներն ասում էին. Այս խօսքերը դիւահարի
խօսքեր չեն. մի՞թէ դևը կարող է կոյրի աչքերը
բանալ։
22 Այն ժամանակ Երուսաղէմումը նաւակատիք տօն
23 եղաւ, և ձմեռն էր։ Եւ Յիսուսը ման էր գալիս

24 տաճարումը Սողոմոնի սրահի մէջ։ Հրէաներն էլ
նորան շրջապատեցին և ասեցին նորան. Մինչև ե՞րբ
ես պահում մեր հոգիները տարակուսանքի մէջ.
եթէ դու ես Քրիստոսը, համարձակ ասիր մեզ։
25 Յիսուսը պատասխանեց նորանց. Ասեցի ձեզ, և չէք
հաւատում. այն գործերը որ իմ Հօր անունովը
26 գործում եմ, նորանք վկայում են ինձ համար։ Բայց
դուք չէք հաւատում. որովհետև իմ ոչխարներիցը
27 չէք, ինչպէս որ ասեցի ձեզ։ Իմ ոչխարներն իմ ձայ-
նը լսում են, և ես ճանաչում եմ նորանց, և իմ
28 ետևից գալիս են։ Եւ ես յաւիտենական կեանք
եմ տալիս նորանց, և նորանք յաւիտեան չեն կոր-
չիլ, և ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռիցը։
29 Իմ Հայրը որ նորանց տուաւ ինձ, ամենից մեծ է,
և ոչ ով կարող չէ իմ Հօր ձեռիցը յափշտակել
30 նորանց։ Ես և Հայրը մի ենք։
31 Հրէաները դարձեալ քարեր վեր առան, որ նո-
32 րան քարկոծեն։ Յիսուսը նորանց պատասխանեց.
Շատ բարի գործեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցը.
նորանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծում։
33 Հրէաները պատասխանեցին և ասեցին. Բարի գոր-
ծի համար քեզ չենք քարկոծում, այլ հայհոյու-
թեան համար. և որ դու մարդ լինելով՝ քո անձն
34 Աստուած ես անում։ Յիսուսը նորանց պատասխա-
նեց. Գրուած չէ՞ ձեր օրէնքումը, թէ Ես ասեցի՝
35 Աստուածներ էք։ Եթէ նորանց Աստուածներ է
ասում, որ Աստուծոյ խօսքն եղաւ նորանց. (և կա-
36 րելի չէ որ գիրքը եղծանուի.) Ապա նորան որ Հայ-
րը սրբեց և ուղարկեց աշխարհք, դուք ասո՞ւմ
էք, թէ հայհոյում ես, որ ասեցի, թէ Աստուծոյ
37 Որդի եմ։ Եթէ իմ Հօր գործերը չեմ գործում, մի
38 հաւատաք ինձ։ Ապա եթէ գործում եմ, թէև
ինձ էլ չ'հաւատաք, գոնէ գործերին հաւատացէք,

որ ճանաչէք և հաւատաք, թէ Հայրն ինձանում
է և ես նորա մէջ։
39 Դարձեալ ուզում էին նորան բռնել, բայց նո-
40 րանց ձեռիցը դուրս եկաւ։ Եւ դարձեալ գնաց
Յորդանանի այն կողմը, այն տեղը, որ Յովհաննէսն
էր առաջուց և մկրտում էր. և այնտեղ էր կե-
41 նում։ Եւ շատերը նորա մօտ եկան և ասում էին.
42 Թէ Յովհաննէսը ոչ մի նշան չ'գործեց։ Բայց բո-
լորն ինչ որ Յովհաննէսը նորա համար ասեց, ճըշ-
մարիտ էր. և այնտեղ շատերը հաւատացին նորան։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ մի հիւանդ կար, անունը Ղազարոս, Բեթա-
նիայիցը, Մարիամի և նորա քոյր Մարթայի գիւ-
2 ղիցը։ Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով օծեց
և նորա ոտները սրբեց իր մազերովը. որի եղբայրը
3 Ղազարոսը հիւանդ էր։ Եւ նորա քոյրերն ուղար-
կեցին նորա մօտ և ասեցին. Տէր, ահա նա՝ որին
4 դու սիրում ես՝ հիւանդացել է։ Յիսուսն էլ երբոր
լսեց, ասեց. Այս հիւանդութիւնը մեռնելու հա-
մար չէ, այլ Աստուծոյ փառքի համար. որ Աստու-
5 ծոյ Որդին նորանով փառաւորուի։ Եւ Յիսուսը
սիրում էր Մարթային և նորա քրոջը և Ղազարո-
6 սին։ Եւ երբոր լսեց, թէ նա հիւանդ է, այն ժա-
7 մանակ երկու օր մնաց այն տեղը, ուր որ էր. Ապա
նորանից յետոյ ասեց աշակերտներին. Եկէք դար-
8 ձեալ գնանք Հրէաստան։ Աշակերտներն ասեցին
նորան. Ռաբբի, հիմա Հրէաներն ուզում էին քեզ
9 քարկոծել. և դարձեալ այնտե՞ղ ես գնում։ Յի-
սուսը պատասխանեց. Չէ՞ որ օրը տասներկու
ժամ ունի. եթէ մէկը ցերեկը ման գայ, չի սահիլ.
10 որովհետև այս աշխարհքի լոյսը տեսնում է։ Իսկ

եթէ մէկը գիշերը ման գայ, կ'սահի. որովհետև
11 լոյս չ'կայ նորանում։ Այս ասեց, և սորանից յե-
տոյ ասեց նորանց. Մեր Ղազարոս բարեկամը քնեց.
12 բայց կ'գնամ, որ զարթնեցնեմ նորան։ Եւ նորա
աշակերտներն ասեցին նորան. Տէր, թէ որ քնել
13 է՝ կ'առողջանայ։ Բայց Յիսուսը նորա մահուան
համար էր ասել. նորանք էլ կարծում էին, թէ
14 քուն քնելու համար էր ասում։ Այն ժամանակ
Յիսուսը յայտնի ասեց նորանց. Ղազարոսը մեռաւ։
15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար, որ ես այնտեղ չէի,
որ դուք հաւատաք ինչ. բայց գնանք նորա մօտ։
16 Եւ ասեց Թովմասը (Երկուորեակ կոչուածը) ա-
շակերտակիցներին. Մենք էլ գնանք նորա հետ
մեռնենք։
17 Յիսուսն էլ եկաւ՝ նորան արդէն չորս օր գերեզ-
18 մանի մէջ դրուած գտաւ։ Եւ Բեթանիան մօտ էր
19 Երուսաղէմին տասնևհինգ ասպարէզի չափով։ Եւ
Հրէաներից շատերը եկել էին Մարթայի և Մարիա-
մի մօտ, որ մխիթարեն նորանց իրանց եղբօր մա-
20 հին։ Արդ երբոր Մարթան լսեց, թէ Յիսուսը գա-
լիս է, գնաց նորան դիմաւորելու. բայց Մարիամը
21 տանը նստած էր։ Եւ Մարթան ասեց Յիսուսին.
Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
22 նիլ։ Բայց հիմա էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուա-
23 ծանից խնդրես, Աստուած կ'տայ քեզ։ Յիսուսը
նորան ասեց. Քո եղբայրը յարութիւն կ'առնէ։
24 Մարթան նորան ասեց. Գիտեմ որ յարութիւն
25 կ'առնէ յարութիւնումը՝ յետին օրը։ Յիսուսը նո-
րան ասեց. Ես եմ յարութիւնը և կեանքը. ինձ
26 հաւատացողը թէև մեռնի էլ, կ'ապրի։ Եւ ամեն
ով որ կենդանի է և ինձ հաւատում է, յաւի-
27 տեան չի մեռնիլ. հաւատո՞ւմ ես սորան։ Նորան
ասեց. Այո, Տէր, ես հաւատացել եմ, թէ դու ես

Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք
28 գայիր։ Եւ երբոր այս ասեց, գնաց թագուն կան-
չեց իր Մարիամ քրոջը, և ասեց. Վարդապետը
29 եկել է և կանչում է քեզ։ Նա երբոր լսեց, շու-
30 տով վերկացաւ, և եկաւ նորա մօտ։ Յիսուսը դեռ
չէր եկել գիւղը, այլ այն տեղն էր, ուր որ Մար-
31 թան եկաւ նորա առաջը։ Բայց Հրէաները, որ
տանը նորա հետ էին և նորան մխիթարում էին,
երբոր Մարիամին տեսան, թէ շուտով վերկացաւ
և գնաց, նորա ետևից գնացին. ասելով թէ գե-
32 րեզմանն է գնում, որ այն տեղ լայ։ Բայց երբոր
Մարիամ այն տեղ եկաւ, ուր Յիսուսն էր, և տե-
սաւ նորան, նորա ոտներն ընկաւ և ասեց նորան.
Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
33 նիլ։ Յիսուսն էլ երբոր նորան տեսաւ որ լաց էր
լինում, և նորա հետ եկած Հրէաներն էլ՝ որ լաց
34 էին լինում, իր հոգովը խռովեց և յուզուեց։ Եւ
ասեց. Ո՞ւր դրիք նորան. Նորան ասեցին. Տէր, եկ
35 և տես։ Յիսուսը արտասուեց։ (36) Հրէաներն ա-
37 սում էին. Տես ինչպէս էր սիրում նորան։ Նորան-
ցից էլ ոմանք ասում էին. Մի՞թէ սա որ կոյրի աչ-
քերը բացաւ, չէր կարող անել՝ որ սա էլ չ'մեռ-
38 նէր, Եւ Յիսուսը դարձեալ խռոված եկաւ գե-
րեզմանը. և այն մի քարայր էր, և մի քար նորա
39 վերայ դրուած։ Յիսուսը ասեց. Արդ քարը վեր ա-
ռէք. մեռելի քոյրը՝ Մարթան ասեց նորան. Տէր,
40 արդէն հոտած է. որովհետև չորս օրուայ է։ Յի-
սուսը նորան ասեց. Չ'ասեցի՞ քեզ, որ եթէ հա-
41 ւատաս, Աստուծոյ փառքը կ'տեսնես։ Եւ քարը
վեր առան, ուր որ մեռելը դրուած էր. Յիսուսն
էլ իր աչքերը դէպի վեր բարձրացրեց և ասեց.
42 Հայր, գոհանում եմ քեզանից, որ ինձ լսեցիր։ Եւ
ես գիտէի, որ միշտ լսում ես ինձ. բայց այս շրջա-

կայ ժողովրդի համար ասեցի, որ հաւատան թէ
43 դու ուղարկեցիր ինձ։ Եւ այս ասելով՝ մեծ ձայնով
44 աղաղակեց. Ղազարոս, դուրս եկ։ Եւ մեռելը
դուրս եկաւ՝ ոտները և ձեռքերը պատանով կա-
պած, և երեսը վարշամակով պատած։ Յիսուսը նո-
րանց ասեց. Արձակեցէք դորան, և թողէք գնայ։
45 Եւ Հրէաներից շատերը, որ Մարիամի մօտ էին
եկել և տեսան ինչ որ արաւ Յիսուսը, հաւատա-
46 ցին նորան։ Բայց նորանցից ոմանք գնացին փարի-
սեցիների մօտ, և ասեցին նորանց ինչ որ Յի-
սուսն արաւ։
47 Եւ քահանայապետները և փարիսեցիները ատ-
եան ժողովեցին, և ասեցին. Ի՞նչ անենք, որ այդ
48 մարդը շատ նշաններ է անում։ Եթէ դորան այդ-
պէս թողենք, ամենքը կ'հաւատան դորան, և
Հռովմայեցիք կ'գան վեր կ'առնեն մեր երկիրն էլ
49 և ազգն էլ։ Եւ նորանցից մէկը՝ Կայիափան, որ
այն տարուայ քահանայապետն էր, ասեց նորանց.
50 Դուք ոչինչ չ'գիտէք, Եւ չէք էլ մտածում, որ
լաւ է մեզ համար՝ որ մէկ մարդ մեռնի ժողովրդի
51 համար, քան թէ բոլոր ազգը կորչի։ Բայց սա ի-
րանից չ'ասեց. այլ որովհետև այն տարուայ քա-
հանայապետն էր, մարգարէացաւ՝ թէ Յիսուսը պէ-
52 տի մեռնէր ազգի համար։ Եւ ոչ թէ միայն ազգի
համար, այլ որ նա Աստուծոյ ցրուած որդիքն էլ
մէկտեղ ժողովէ։
53 Արդ այն օրից հետէ խորհուրդ արին, որ նորան
54 սպանեն։ Յիսուսն էլ համարձակ չէր ման գալիս
Հրէաների մէջ. այլ այն տեղից գնաց մի երկիր, ա-
նապատի մօտ, Եփրայեմ ասուած քաղաքը. և այն-
տեղ կենում էր իր աշակերտների հետ։
55 Եւ Հրէաների զատիկը մօտ էր, և այն գաւառից
շատերը զատկից առաջ վեր ելան Երուսաղէմ, որ

56 իրանց անձերը սրբեն։ Եւ որոնում էին Յիսուսին,
և իրար ասում էին՝ տաճարումը կանգնած. Ի՞նչ-
պէս է երևում ձեզ. մի՞թէ այս տօնին չի գալ.
բայց քահանայապետները և փարիսեցիները հրա-
ման էին տուել, որ՝ եթէ մէկը գիտենայ թէ ուր
է, իմաց տայ, որ բռնեն նորան։

ԳԼ. ԺԲ

1 Եւ Յիսուսը զատկից վեց օր առաջ եկաւ Բե-
թանիա, որտեղ մեռած Ղազարոսն էր, որին մե-
2 ռելներից յարութիւն տուաւ։ Եւ այնտեղ հաց-
կերութիւն արին նորա համար. և Մարթան ծա-
ռայում էր, և Ղազարոսը նորա հետ սեղան նըս-
3 տողներից մէկն էր։ Մարիամն էլ մի լիտր նարդոսի
աղնիւ մեծագին իւղ առաւ, Յիսուսի ոտները օ-
ծեց, և իր մազերովը սրբում էր նորա ոտները. և
4 տունը լցուեցաւ իւղի հոտովը։ Եւ ասեց նորա ա-
շակերտներից մէկը՝ Յուդա Սիմօնեան Իսկարիով-
5 տացին, որ նորան մատնելու էր՝ Ի՞նչու համար
այդ իւղը երեք հարիւր դենարի չ'ծախուեցաւ, և
6 աղքատներին տրուեցաւ։ Բայց սա ասեց, ոչ թէ
որովհետև աղքատների համար նորա հոգն էր. այլ
որ գող էր՝ և քսակը ունէր, և ընկածը պահում
7 էր։ Յիսուսն էլ ասեց. Թող տուր դորան, նա իմ
8 պատանքի օրուան համար էր պահել այդ։ Որով-
հետև աղքատներին միշտ ձեզ հետ ունիք. բայց
ինձ միշտ չ'ունիք։
9 Եւ Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց, թէ նա
այնտեղ է, և եկան, ոչ թէ միայն Յիսուսի հա-
մար, այլ որ Ղազարոսին էլ տեսնեն, որին մեռել-
10 ներից յարութիւն տուաւ։ Քահանայապետներն
էլ խորհուրդ արին, որ Ղազարոսին էլ սպանեն։

11 Որովհետև Հրէաներից շատերը Նորա պատճառովը
գնում էին և հաւատում էին Յիսուսին։
12 Նորա հետևեալ օրը շատ ժողովուրդ, որ եկել
էին տօնին, երբոր լսեցին, թէ Յիսուսը գալիս է
13 Երուսաղէմ, Արմաւենի ծառերի ճղեր առան, և
դուրս գնացին Նորա առաջին, աղաղակում էին.
Ովսաննայ, օրհնեալ է Նա որ Տիրոջ անունովը գա-
14 լիս է, Իսրայէլի Թագաւորը։ Եւ Յիսուսը մի ա-
ւանակ գտաւ, և Նորա վերայ նստեց. ինչպէս գրը-
15 ուած է՝ Թէ Մի վախենար, Սիօնի աղջիկ, ահա քո
Թագաւորը գալիս է՝ էշի աւանակի վերայ նստած։
16 Եւ Նորա աշակերտներն առաջ չ'իմացան այս բա-
ները. բայց երբ որ Յիսուսը փառաւորուեցաւ՝ այն
ժամանակ յիշեցին, թէ այս Նորա համար գրուած
17 էր. և այն բանը արին Նորան։ Եւ ժողովուրդը՝ որ
Նորա հետ էր, վկայում էր, թէ Ղազարոսին գե-
րեզմանից դուրս կանչեց. և մեռելներից յարու-
18 թիւն տուաւ նորան։ Եւ Նորա համար էլ ժողո-
վուրդը գնաց Նորա առաջին, որ լսեցին թէ Նա ա-
19 րել էր այն նշանը։ Բայց փարիսեցիներն իրար մէջ
ասում էին. Տեսնո՞ւմ էք, որ ոչինչ օգուտ չ'ու-
նիք. ահա աշխարհքը Նորա ետևից գնաց։
20 Եւ կային ոմանք Հելլենացիք՝ նորանցից, որ ե-
կել էին այնտեղ, որ երկրպագեն այն տօնումը։
21 Նորանք եկան Փիլիպպոսի մօտ որ Գալիլեայի Բեթ-
սայիդայից էր, նորան խնդրում էին և ասում.
22 Տէր, կամենում ենք Յիսուսին տեսնել։ Փիլիպպո-
սը գալիս է Անդրէասին ասում. Անդրէասը և Փի-
23 լիպպոսը ասում են Յիսուսին։ Յիսուսն էլ պա-
տասխանեց նորանց՝ և ասեց. Ժամը հասաւ, որ
24 մարդի Որդին փառաւորուի։ Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ ձեզ. եթէ ցորենի հատը հողի մէջ
չ'ընկնի և մեռնի, ինքը մինակ կ'մնայ. բայց եթէ

25 մեռնի, շատ պտուղ կ'բերէ։ Իր անձը սիրողը՝ կը
կորցնէ նորան, և իր անձն ատողը այս աշխարհքու-
մը, յաւիտենական կեանքի մէջ կ'պահէ նորան։
26 Եթէ մէկը ծառայէ ինձ, թող Նա իմ ետևից գայ.
և ուր ես եմ, այնտեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի.
եթէ մէկը ծառայէ ինձ, Հայրը կ'պատուէ նորան։
27 Հիմա իմ անձը խռոված է. և ի՞նչ ասեմ. Հայր,
ազատիր ինձ այս ժամիցը. սակայն իսկ սորա հա-
28 մար եկայ այս ժամի մէջ։ Հայր, փառաւորիր քո
անունը։ Եւ երկնքիցը ձայն եկաւ, Թէ փառաւո-
29 րեցի էլ և դարձեալ կ'փառաւորեմ։ Եւ ժողո-
վուրդը, որ կանգնած էր և լսում էր, ասում էին,
Որոտմունք եղաւ. ուրիշներն ասում էին. Հրեշտակ
30 խօսեց Նորա հետ։ Յիսուսը պատասխանեց և ասեց.
Այս ձայնը ոչ թէ ինձ համար եղաւ, այլ ձեզ
31 համար։ Հիմա դատաստան է այս աշխարհքի. հի-
32 մա այս աշխարհքի իշխանը դուրս կ'գցուի։ Եւ ես
երբոր բարձրանամ երկրիցը, ամենքին կ'քաշեմ
33 ինձ մօտ։ Եւ այս ասում էր, որ ցոյց տայ, թէ
34 ինչպիսի մահով պիտի մեռնի։ Ժողովուրդը պա-
տասխանեց նորան. Մենք օրէնքիցը լսեցինք, թէ
Քրիստոսը յաւիտեան կ'կենայ. և դու ի՞նչպէս ես
ասում, թէ պէտք է մարդի Որդին բարձրանայ.
35 ո՞վ է այն մարդի Որդին։ Յիսուսն էլ ասեց նո-
րանց. Մի քիչ ժամանակ դեռ լոյսը ձեզ հետ է.
գնացէք, քանի որ լոյսն ունիք, որ խաւարը ձեզ
չ'հասնէ. և խաւարումը գնացողը չ'գիտէ, Թէ ո՞ւր
36 է գնում։ Քանի որ լոյսն ունիք, հաւատացէք լոյ-
սին, որ լոյսի որդիք լինիք։ Յիսուսը այս բանը խօ-
սեց, և գնաց թագցուեցաւ նորանցից։
37 Եւ թէպէտ նա այնքան նշաններ արել էր նո-
րանց առաջին, նորանք չէին հաւատում նորան.
38 Որ Եսայիա մարգարէի խօսքը կատարուի, որ ասեց.

Տէր, ո՞վ հաւատաց մեր լուրին, և Տիրոջ բազու-
39 կը ո՞ւմ յայտնուեցաւ։ Նորա համար չէին կարո-
ղանում հաւատալ. որ Եսայիան դարձեալ ասում
40 է. Նորանց աչքերը կուրացրեց, և նորանց սրտերը
թմրացրեց, որ աչքով չ'տեսնեն, և սրտով չ'իմա-
41 նան, և դառնան՝ և ես բժշկեմ նորանց։ Եսայիան
սա ասեց, երբոր նորա փառքը տեսաւ, և նորա
42 համար խօսեց։ Բայց և այնպէս իշխաններիցը շա-
տերը հաւատացին նորան. սակայն փարիսեցիների
պատճառովը չէին դաւանում, որ ժողովարանիցը
43 դուրս չ'գցուին։ Որովհետև մարդկանց փառքն ա-
ւելի սիրեցին քան թէ Աստուծոյ փառքը։
44 Եւ Յիսուսը աղաղակում էր և ասում. ինձ հա-
ւատացողը չէ թէ ինձ է հաւատում, այլ ինձ ու-
45 ղարկողին։ Եւ ինձ տեսնողը, ինձ ուղարկողին է
46 տեսնում։ Ես լոյս եկայ աշխարհքը, որ ամեն ինձ
47 հաւատացողը խաւարի մէջ չ'մնայ։ Եւ եթէ մէկն
իմ խօսքերին լսէ և չ'հաւատայ, ես չեմ դատիլ
նորան. որովհետև ես չ'եկայ որ աշխարհքը դա-
48 տեմ, այլ որ փրկեմ աշխարհքը։ Ինձ անարգողը
և իմ խօսքերը չ'ընդունողը ունի իրան դատողին.
այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կ'դատէ նորան յե-
49 տին օրը։ Որովհետև ես իմ անձիցը չ'խօսեցի. բայց
ինձ ուղարկող Հայրը, նա պատուէր տուաւ ինձ,
50 թէ ինչ պիտի ասեմ և ինչ պիտի խօսեմ։ Եւ
գիտեմ, որ նորա պատուիրանքը յաւիտենական
կեանք է. ուրեմն ինչ որ ես խօսում եմ, ինչպէս
Հայրն ասեց ինձ՝ այնպէս եմ խօսում։

ԳԼ. ԺԳ

1 Զատկի տօնիցն առաջ՝ Յիսուսը գիտաց, որ իր
ժամը հասել է, որ այս աշխարհքիցը փոխուի դէպի

Հայրը, իրաններին՝ որ այս աշխարհքումն են սի-
րեց. և մինչև վերջը սիրեց նորանց։
2 Եւ երբոր ընթրիք էր լինում, սատանան արդէն
Յուդա Սիմոնեան իսկարիովտացու սրտի մէջ էր
3 գցել, որ մատնէ նորան։ Յիսուսը գիտենալով որ
Հայրն ամեն բան իր ձեռն է տուել, և որ Աս-
տուածանից դուրս եկաւ, և Աստուծոյ մօտ է գը-
4 նում. ընթրիքիցը վերկացաւ և հանդերձները վայր
դրաւ, և մի ղենջակ առաւ իր մէջքը պատեց։
5 Յետոյ ջուր ածեց կոնքը, և սկսեց աշակերտների
ոտները լուանալ, և այն ղենջակովը սրբել որ մէջ-
6 քին պատած էր։ Եւ Սիմոն Պետրոսի մօտ եկաւ.
և նա նորան ասեց. Տէր, դո՞ւ ես իմ ոտները լուա-
7 նում։ Յիսուսը պատասխանեց և ասեց նորան. Ինչ
որ ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց
8 սորանից յետոյ կ'իմանաս։ Պետրոսը նորան ասեց.
Դու իմ ոտները չես լուանալ յաւիտեան. Յիսուսը
պատասխանեց նորան. Եթէ քեզ չ'լուանամ, ինձ
9 հետ բաժին չ'ունիս։ Սիմոն Պետրոսն ասեց նորան.
Տէր, ոչ թէ իմ ոտները միայն, այլ իմ ձեռքերը
10 և գլուխն էլ։ Յիսուսը նորան ասեց. Լուացածին
բան պէտք չէ, բացի ոտները լուանալ. այլ բոլո-
րովին մաքուր է. և դուք մաքուր էք, բայց ոչ թէ
11 ամենքդ։ Որովհետև գիտէր իրան մատնիչին. նորա
12 համար ասեց, Ոչ թէ ամենքդ մաքուր էք։ Եւ
երբոր նորանց ոտները լուացաւ, իր հանդերձներն
առաւ՝ և դարձեալ սեղան նստեց, և նորանց ա-
13 սեց. Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ։ Դուք ինձ կան-
չում էք Վարդապետ և Տէր, և լաւ էք ասում,
14 որովհետև եմ։ Արդ եթէ ես Տէրս և Վարդա-
պետս՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է ի-
15 րար ոտները լուանաք։ Որովհետև ես ձեզ օրինակ
տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք։

16 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ծառան իր
տէրիցը մեծ չէ. ոչ էլ ուղարկուածը մեծ է իրան
17 ուղարկողիցը։ Եթէ այս գիտէք, երանելի էք՝ թէ
18 որ այս անէք։ Ձեր բոլորիդ համար չեմ ասում.
ես գիտեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ գրուածը
կատարուի, թէ Նա որ ինձ հետ հաց էր ուտում,
19 ինձ դէմ իր կրունկը բարձրացրեց։ Հիմիկուց
ասում եմ ձեզ՝ լինելուց առաջ, որ երբոր լինի՝
20 հաւատաք թէ ես եմ։ Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ. Ով որ ընդունէ նորան, որ ես կ՚ուղար-
կեմ, ինձ է ընդունում. և ինձ ընդունողը ինձ ու-
ղարկողին է ընդունում։

21 Յիսուսն այս ասելով տրտմեց հոգով, և վկայեց
և ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
22 Ձեզանից մէկը կ՚մատնէ ինձ։ Աշակերտներն էլ ի-
րար մտիկ էին տալիս տարակուսած, թէ ո՞ւմ հա-
23 մար է ասում։ Եւ նորա աշակերտներից մէկը Յի-
սուսի գոգին նստած էր, որին Յիսուսը սիրում էր՝
24 Սիմոն Պետրոսը նորան ակնարկեց որ հարցնէ թէ
25 նա ո՞վ է, որի համար ասում է։ Եւ նա Յիսուսի
լանջքովը ընկած, ասեց նորան. Տէր, նա ո՞վ է։
26 Յիսուսը պատասխանեց. Նա է՝ որ ես պատառը
թաց կ՚անեմ և նորան կ՚տամ. և պատառը թաց
արաւ և տուաւ Յուդա Սիմոնեան Իսկարիովտա-
27 ցուն։ Եւ պատառիցը յետոյ սատանան մտաւ նո-
րա մէջ. և Յիսուսը նորան ասեց. Ինչ որ անում
28 ես՝ շուտով արա։ Եւ այս բանը սեղան նստողնե-
րից ոչ ով չ՚իմացաւ, թէ ի՞նչ պատճառով ասեց
29 նորան։ Որովհետև ոմանք կարծում էին, թէ ո-
րովհետև Յուդան քսակն ունէր, Յիսուսը նորան
ասեց, թէ առ՝ ինչ որ այս տօնին պէտք է մեզ.
30 կամ թէ աղքատներին բան տայ։ Եւ նա երբոր
պատառն առաւ, շուտով դուրս գնաց. և գիշեր էր։

31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուսն ասեց. Հիմա
մարդի Որդին փառաւորուեցաւ. և Աստուած նո-
32 րանում փառաւորուեցաւ։ Եթէ Աստուած նորա-
նում փառաւորուեցաւ, Աստուած էլ նորան կը
փառաւորէ իր անձումը. և շուտով կ՚փառաւորէ
33 նորան։ Որդեակք, տակաւին մի քիչ ժամանակ էլ
ձեզ հետ եմ. ինձ կ՚որոնէք, և ինչպէս Հրէանե-
րին ասեցի, թէ Որտեղ որ ես եմ գնում, դուք
չէք կարող գալ. և հիմա էլ ձեզ եմ ասում։
34 Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք.
ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք։
35 Սորանով կ՚գիտենան ամենքը թէ իմ աշակերտ-
36 ներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք։ Սիմոն
Պետրոսը նորան ասեց. Տէր, ո՞ւր ես գնում. Յի-
սուսը պատասխանեց նորան. Որ տեղ որ ես գնում
եմ, դու հիմա չես կարող իմ ետևից գալ. բայց
37 յետոյ իմ ետևից կ՚գաս։ Պետրոսը նորան ասեց.
Տէր, ի՞նչու չեմ կարող հիմա քո ետևից գալ.
38 իմ անձը քեզ համար կ՚դնեմ։ Յիսուսը պատաս-
խանեց նորան. Քո ա՞նձը կ՚դնես ինձ համար. Ճշ-
մարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, որ հաւը դեռ չի
խօսիլ, որ դու երեք անգամ կ՚ուրանաս ինձ։

ԳԼ. ԺԴ

1 Ձեր սիրտերը թող չ՚խռովին. Աստուծուն հաւա-
2 տացէք, և ինձ հաւատացէք։ Իմ Հօր տանը շատ
բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ կ՚ասէի.
3 գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու։ Եւ
եթէ գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ,
դարձեալ կ՚գամ և ձեզ ինձ մօտ կ՚առնեմ. որ
4 ուր ես եմ, դուք էլ լինիք։ Եւ որ տեղ որ ես
գնում եմ՝ գիտէք, և ճանապարհը գիտէք։

5 Թովմասը նորան ասեց. Տէր, մենք չ'գիտենք թէ
որ տեղ ես գնում. և ի՞նչպէս կարող ենք ճանա-
6 պարհը գիտենալ։ Յիսուսը նորան ասեց. Ես եմ
ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը. ոչ ով
7 չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով։ Եթէ ինձ
գիտենայիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք. և սորանից
յետոյ կ'գիտենաք նորան և տեսաք նորան։
8 Փիլիպպոսը նորան ասեց. Տէր, Հայրը ցոյց տուր
9 մեզ, և բաւական է մեզ։ Յիսուսը նորան ասեց.
Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, և ինձ չ'ճանա-
չեցի՞ր, Փիլիպպոս. ինձ տեսնողը Հօրը տեսաւ. և
դու ի՞նչպէս ես ասում. Հայրը ցոյց տուր մեզ։
10 Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, և Հայրն
ինձանում է. այն բանն՝ որ ես խօսում եմ ձեզ
հետ, իմ անձիցը չեմ խօսում. բայց Հայրը՝ որ ին-
ձանում բնակած է, նա է գործում այդ գործերը։
11 Հաւատացէք ինձ, որ ես Հօր մէջ եմ, և Հայրն
12 ինձանում է։ Ապա թէ ոչ, իսկ այն գործերի հա-
մար հաւատացէք ինձ. Ճշմարիտ ճշմարիտ ասում
եմ ձեզ, Ով ինձ հաւատացողը այն գործերն որ ես
գործում եմ, նա էլ կ'գործէ, և նորանցից էլ ա-
ւելի մեծ բաներ կ'գործէ. որովհետև ես իմ Հօր
13 մօտ եմ գնում։ Եւ ինչ որ էլ խնդրէք իմ անու-
նովը, այն կ'անեմ, որ Հայրը փառաւորուի Որդու-
14 մը։ Եթէ իմ անունովը մի բան խնդրէք, ես կ'ա-
15 նեմ։ Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները
16 պահեցէք։ Եւ ես Հօրը կ'աղաչեմ, և ուրիշ Մխի-
թարիչ կ'տայ ձեզ. որ մնայ ձեզ հետ յաւիտեան։
17 Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհքս կարող չէ
ընդունել. որ չէ տեսնում նորան. և ոչ էլ ճա-
նաչում նորան. բայց դուք նորան ճանաչում էք։
որովհետև ձեզ մօտ է մնում և ձեզ հետ կ'լինի։
18 Ձեզ որբ չեմ թողիլ. կ'գամ ձեզ մօտ։ (19) Մի

փոքր ժամանակ էլ, և աշխարհքն էլ չի տեսնիլ
ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ. որովհետև ես կեն-
20 դանի եմ, և դուք կենդանի կ'լինիք։ Այն օրը
դուք կ'ճանաչէք, որ ես իմ Հօր մէջ եմ, և դուք
21 ինձանում, և ես ձեզանում։ Ով որ իմ պատուի-
րանքներն ունի և նորանց պահում է, նա է ինձ
սիրողը. և ինձ սիրողն իմ Հօրիցը կ'սիրուի. և ես
կ'սիրեմ նորան, և ինձ կ'յայտնեմ նորան։
22 Ասեց նորան Յուդան՝ ոչ թէ Իսկարիովտացին.
Տէր, ի՞նչ է, որ մեզ կ'յայտնես քեզ՝ և աշխարհ-
23 քին ոչ։ Յիսուսը պատասխանեց և նորան ասեց.
Եթէ մէկն ինձ սիրում է, իմ խօսքը կ'պահէ և
իմ Հայրը կ'սիրէ նորան. և նորա մօտը կ'գանք և
24 բնակութիւն կ'անենք նորա մօտ։ Ինձ չ'սիրողը իմ
խօսքերը չէ պահում. և այն խօսքը որ լսում էք՝
25 իմը չէ, այլ ինձ ուղարկող Հօրը։ Այս խօսեցի ձեզ
26 հետ՝ քանի որ ձեզ մօտ եմ։ Բայց Մխիթարիչը՝
Սուրբ Հոգին, որ Հայրը կ'ուղարկէ իմ անունովը,
նա ամեն բան կ'սովորեցնէ ձեզ, և կ'յիշեցնէ ձեզ
27 ամեն ինչ որ ձեզ ասեցի։ Խաղաղութիւն եմ թո-
ղում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ.
ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ
28 ձեզ. ձեր սիրտը չ'խռովի և չ'վախենայ։ Լսեցիք,
որ ես ասեցի ձեզ, Ես գնում եմ, և կ'գամ ձեզ
մօտ. եթէ ինձ սիրէիք, ապա ուրախ կ'լինէիք՝ որ
ասեցի, Հօր մօտ եմ գնում. որովհետև իմ Հայրը
29 մեծ է ինձանից։ Եւ հիմա ասեցի ձեզ՝ լինելուց
30 առաջ. որ երբոր լինի, հաւատաք։ Այլ ես շատ
չեմ խօսիլ ձեզ հետ, որովհետև այս աշխարհքի
31 իշխանը գալիս է, և ինձանում ոչինչ չ'ունի։ Այլ
որպէս զի աշխարհքը իմանայ, թէ ես սիրում եմ
Հօրը. և ինչպէս Հայրը պատուիրեց ինձ, այնպէս
եմ անում. վեր կացէք, գնանք այս տեղից։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրը մշակն է։
2 Ամեն ճիւղ, որ ինձանում է և պտուղ չէ բե-
րում, Նա կտրում է նորան. և ամեն պտուղ բե-
րողին մաքրում է, որ էլ աւելի պտղաբեր լինի։
3 Դուք արդէն մաքուր էք այն խօսքի համար, որ
4 ձեզ հետ խօսեցի։ Կացէք ինձանում՝ և ես ձեզա-
նում. ինչպէս որ ճիւղն իր անձից կարող չէ պը-
տուղ բերել, եթէ որթումը չ'մնայ, այսպէս ոչ էլ
5 դուք՝ եթէ ինձանում չ'մնաք։ Ես որթն եմ՝ դուք
ճիւղերը. նա որ ինձանում մնում է, և ես նորա-
նում, նա շատ պտուղ է բերում. որովհետև ա-
6 ռանց ինձ չէք կարող ոչինչ անել։ Եթէ մէկն ին-
ձանում չէ մնում, նա դուրս կ'գցուի ինչպէս ճիւ-
ղը, և կ'չորանայ. և ժողովում են նորանց և կրա-
7 կի մէջ գցում, և այրվում է։ Եթէ կենաք ին-
ձանում՝ և իմ խօսքերը ձեզանում կենան, ինչ որ
8 էլ կամենաք, կ'խնդրէք, և կ'լինի ձեզ։ Սորանով
փառաւորուեցաւ իմ Հայրը, որ շատ պտուղ բե-
րէք. և իմ աշակերտները լինիք։
9 Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի.
10 կացէք իմ սէրի մէջ։ Եթէ իմ պատուիրանքները
պահէք, իմ սէրի մէջը կ'կենաք. ինչպէս ես իմ Հօր
պատուիրանքները պահեցի, և կենում եմ նորա սէ-
11 րի մէջ։ Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ ու-
րախութիւնը ձեզանում մնայ, և ձեր ուրախութիւ-
12 նը լցուած լինի։ Սա է իմ պատուիրանքը, որ իրար
13 սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի։ Ոչ ով նորա-
նից աւելի մեծ սէր չ'ունի, որ մէկն իր անձը դնէ
14 իր բարեկամների համար։ Դուք իմ բարեկամներն
էք, եթէ անէք ինչ որ ես պատուիրում եմ ձեզ։

15 Այլ ևս ծառայ չեմ ասում ձեզ, որովհետև ծառան
չ'գիտէ, թէ իր տէրն ինչ է գործում. բայց ձեզ
բարեկամ ասեցի, որովհետև ամեն ինչ որ լսեցի
16 իմ Հօրից, իմացրի ձեզ։ Ոչ թէ դուք ինձ ընտ-
րեցիք. այլ ես ընտրեցի ձեզ, և ձեզ դրի, որ դուք
գնաք և պտուղ բերէք. և ձեր պտուղը մնայ. որ-
պէսզի ինչ որ իմ Հօրից խնդրէք իմ անունովը,
17 տայ ձեզ։ Սա եմ պատուիրում ձեզ, որ իրար
սիրէք։
18 Եթէ աշխարհքը ձեզ ատում է, գիտացէք, որ
19 ինձ ձեզանից առաջ է ատել։ Եթէ այս աշխարհ-
քից լինէիք, ապա աշխարհքն իրանը կ'սիրէր. բայց
որովհետև աշխարհքից չէք, այլ ես ձեզ ընտրեցի
աշխարհքից, նորա համար աշխարհքն ատում է
20 ձեզ։ Յիշեցէք այն խօսքն, որ ես ասեցի ձեզ Թէ
ծառան իր Տէրից մեծ չէ. եթէ ինձ հալածեցին,
ձեզ էլ են հալածելու. եթէ իմ խօսքը պահե-
21 ցին՝ ձերն էլ կ'պահեն։ Բայց այս ամենը կ'անեն
ձեզ իմ անունի համար. որովհետև չ'ճանաչեցին
22 ինձ ուղարկողին։ Եթէ ես չէի եկել և նորանց
հետ խօսել, նորանք մեղք չէին ունենալ. բայց
հիմա պատճառանք չ'ունին իրանց մեղքի համար։
23 Ինձ ատողն իմ Հօրն էլ է ատում։ (24) Եթէ
այն գործերը չէի գործել նորանց միջումը, որ
մէկ ուրիշը չ'գործեց, մեղք չէին ունենալ. բայց
հիմա տեսան էլ, և ատեցին ինձ էլ և իմ Հօրն էլ։
25 Այլ այս էղաւ որպէսզի այն խօսքը կատարուի, որ
նորանց օրէնքումը գրուած է, թէ Զուր տեղն ա-
26 տեցին ինձ։ Բայց երբոր Մխիթարիչը կ'գայ, որ ես
Հօրից կ'ուղարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին,
որ Հօրից է դուրս գալիս, նա կ'վկայէ ինձ հա-
27 մար։ Եւ դուք էլ կ'վկայէք, որովհետև սկզբից
ինձ հետ էք։

ԳԼ. ԺԶ

1 Այս խօսեցի ձեզ հետ, որ չ'գայթակղիք՝
2 իրանց ժողովարաններիցը ձեզ դուրս կ'հանեն. և
ժամանակ էլ կ'գայ՝ որ ամեն ով որ սպանէ ձեզ,
կ'կարծէ, թէ Աստուծուն պաշտօն է մատուցա-
3 նում։ Եւ սա կ'անեն ձեզ. որովհետև ոչ Հօրը
4 ճանաչեցին և ոչ ինձ։ Այս էլ խօսեցի ձեզ հետ,
որ երբոր ժամանակը գայ, սորանք յիշէք, թէ ես
ասեցի ձեզ։ Բայց այս բաներն սկզբիցը չ'ասեցի
ձեզ. որովհետև ես ձեզ հետ էի։
5 Բայց հիմա ինձ ուղարկողի մօտ եմ գնում. և
ձեզանից ոչ մէկը չէ հարցնում ինձ, Թէ Ո՞ւր ես
6 գնում։ Այլ որովհետև այս բաները խօսեցի ձեզ
7 հետ, տրտմութիւնը լցրեց ձեր սիրտը։ Բայց ես
ճշմարտութիւնն եմ ասում ձեզ, Թէ լաւ է ձեզ
համար, որ ես գնամ. որովհետև եթէ չ'գնամ,
Մխիթարիչը չի գալ ձեզ մօտ. բայց եթէ գնամ,
8 նորան կ'ուղարկեմ ձեզ մօտ։ Եւ նա՝ երբոր գայ
աշխարհքին կ'յանդիմանէ մեղքի համար, և ար-
դարութեան համար, և դատաստանի համար՝
9 Մեղքի համար, որովհետև ինձ չեն հաւատում՝
10 Արդարութեան համար, որովհետև ես իմ Հօր մօտ
11 եմ գնում, և ինձ այլ ևս չէք տեսնիլ։ Եւ դատաս-
տանի համար, որովհետև այս աշխարհքի իշխանը
12 դատապարտուած է։ Տակաւին շատ բան ունիմ
13 ձեզ ասելու, բայց հիմա չէք կարող տանիլ։ Բայց
երբոր նա՝ ճշմարտութեան Հոգին կ'գայ, նա կ'ա-
ռաջնորդէ ձեզ ամեն ճշմարտութեան մէջ. որով-
հետև իր անձիցը չի խօսիլ, այլ ինչ որ կ'լսէ՝ կը
14 խօսի, և գալու բաները կ'պատմէ ձեզ։ Նա ինձ
կ'փառաւորէ, որովհետև իմիցը կ'առնէ և կ'պատ-

15 մէ ձեզ։ Ամեն ինչ որ Հայրն ունի՝ իմս է. նորա
համար ասեցի ձեզ, թէ իմիցը կ'առնէ և կ'պատ-
16 մէ ձեզ։ Մի քիչ ժամանակ էլ, և չէք տեսնիլ ինձ.
և դարձեալ մի քիչ, և կ'տեսնէք ինձ. որովհետև
ես Հօր մօտ եմ գնում։
17 Նորա աշակերտներից ոմանք իրար ասում էին.
Սա ի՞նչ է, որ ասում է մեզ. Մի քիչ ժամանակ՝ և
չէք տեսնիլ ինձ, և դարձեալ մի քիչ, և կ'տես-
18 նէք ինձ. և, թէ Ես Հօր մօտ եմ գնում։ Եւ ա-
սում էին. Ի՞նչ է այն որ ասում է՝ Քիչ ժամանակ.
19 մենք չ'գիտենք, թէ ինչ է խօսում։ Եւ Յիսուսը
իմացաւ, որ ուզում էին հարցնել իրան, և ասեց
նորանց. Դորա՞ համար էք հարցնում իրար, որ
ասեցի, Թէ Մի քիչ ժամանակ, և չէք տեսնիլ ինձ,
20 և դարձեալ մի քիչ, և կ'տեսնէք ինձ։ Ճշմարիտ
ճշմարիտ ասում եմ ձեզ. որ դուք լաց կ'լինիք և
կ'ողբաք և աշխարհքը կ'ուրախանայ. դուք կը
տրտմիք, այլ ձեր տրտմութիւնն ուրախութիւն կը
21 լինի։ Կինը, երբոր ծնում է, տրտմութիւն ունի,
որ նորա ժամանակը հասել է, բայց երբոր երե-
խան ծնեց, նեղութիւնն էլ չէ յիշում այն ուրա-
խութեան համար, որ մի մարդ ծնուեցաւ աշ-
22 խարհքի մէջ։ Եւ դուք էլ հիմա տրտմութիւն
ունիք, բայց դարձեալ կ'տեսնեմ ձեզ, և ձեր
սիրտը կ'ուրախանայ. և ձեր ուրախութիւնը ոչ ոք
23 չի առնիլ ձեզանից։ Եւ այն օրը ոչինչ չէք հար-
ցնիլ ինձ. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
ինչ որ Հօրիցը խնդրէք իմ անունովը, կ'տայ ձեզ։
24 Մինչև հիմա ոչինչ չ'խնդրեցիք իմ անունովը.
խնդրեցէք և կ'առնէք, որ ձեր ուրախութիւնը
25 կատարեալ լինի։ Այս բաներն առակներով խօսե-
ցի ձեզ հետ. բայց ժամանակ կ'գայ, որ էլ առա-
կով չեմ խօսիլ ձեզ հետ. այլ յայտնապէս կը

26 պատմեմ ձեզ Հօր համար։ Այն օրումն իմ անու-
նովը կ'խնդրէք. և չեմ ասում ձեզ, թէ ես ձեզ
27 համար կ'աղաչեմ Հօրը։ Նորա համար որ Հայրն
ինքը սիրում է ձեզ. որովհետև դուք ինձ սիրել
էք և հաւատացել էք, թէ ես Աստուածանից
28 դուրս եկայ։ Հօրիցը դուրս եկայ և եկայ աշխարհք.
դարձեալ թողում եմ աշխարհքը և գնում եմ
Հօր մօտը։
29 Աշակերտները նորան ասեցին. Ահա հիմա յայտ-
30 նի ես խօսում, և ոչ մի առակ չես ասում։ Հիմա
գիտենք, որ դու բոլորը գիտես. և պէտք չէ, որ
մէկը հարցնէ քեզ. սորանով հաւատում ենք, թէ
31 դու Աստուածանից դուրս եկար։ Յիսուսը պա-
32 տասխանեց նորանց. Հիմա հաւատում է՞ք։ Ահա
ժամանակ կ'գայ, և հիմա եկած է, որ ամեն մէկդ
կ'ցրուիք իր տեղը, և ինձ մինակ կ'թողէք. բայց ես
33 մինակ չեմ. որովհետև Հայրն ինձ հետ է։ Այս
բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խա-
ղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն
կ'ունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշ-
խարհքին։

ԳԼ. ԺԷ

1 Յիսուսը այս խօսեց, և իր աչքերը բարձրացրեց
դէպի երկինքը և ասեց. Հայր, ժամը հասել է,
փառաւորիր քո Որդուն, որ քո Որդին էլ քեզ
2 փառաւորէ. ինչպէս նորան իշխանութիւն տուիր
ամեն մարմնի վերայ, որ յաւիտենական կեանք տայ
3 այն ամենին՝ որ տուիր նորան։ Եւ սա է յաւիտե-
նական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ
Աստուած. և նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին
4 Քրիստոսին։ Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ.

այն գործը կատարեցի, որ տուիր ինձ՝ որ անեմ։
5 Եւ հիմա, փառաւորիր ինձ դու, Հայր, քեզ մօտ
այն փառքովը, որ աշխարհքի լինելուցն առաջ ու-
6 նէի քեզ մօտ։ Քո անունը յայտնեցի այն մարդ-
կանց, որ աշխարհքիցը տուիր ինձ. քոնն էին, և
7 ինձ տուիր նորանց. և քո խօսքը պահեցին։ Հիմա
իմացան, որ այն ամենը որ ինձ տուիր՝ քեզանից է.
8 Որովհետև այն խօսքն՝ որ ինձ տուիր, ես նորանց
տուի. և նորանք ընդունեցին, և ճշմարտութեամբ
իմացան, որ քեզանից դուրս եկայ. և հաւատա-
9 ցին, թէ դու ուղարկեցիր ինձ։ Ես նորանց համար
եմ աղաչում. ոչ թէ աշխարհքի համար եմ ա-
ղաչում. այլ նորանց համար՝ որ ինձ տուիր, որ
10 քոնն են։ Եւ ինչ որ իմն է, բոլորը քոնն է. և ինչ
որ քոնն է՝ իմն է. և ես փառաւորուած եմ նո-
11 րանցում։ Եւ ես՝ այլ ևս աշխարհքումս չեմ, իսկ
նորանք աշխարհքումս են, և ես քեզ մօտ եմ գա-
լիս. ով Սուրբ Հայր, պահիր նորանց քո անունո-
վը, որոնց տուիր ինձ, որ մէկ լինեն ինչպէս մենք։
12 Երբոր ես աշխարհքումը նորանց հետ էի, ես էի
պահում նորանց քո անունովը. Նորանց որ տուիր
ինձ, պահեցի. և նորանցից ոչ մէկը չ'կորաւ. բայց
միայն կորուստի որդին, որ գրուածը կատարուի։
13 Բայց հիմա ես քեզ մօտ եմ գալիս. և այս բա-
նը խօսում եմ աշխարհքումը, որ իմ ուրախու-
թիւնը կատարեալ ունենան իրանց անձերումը։
14 Ես քո խօսքը նորանց տուի, և աշխարհքը նորանց
ատեց, որովհետև աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ
15 աշխարհքիցը չեմ։ Ես չեմ աղաչում, որ աշխարհ-
քիցը վեր առնես նորանց. այլ որ նորանց պահես
16 չարիցը։ Այս աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշ-
17 խարհքիցը չեմ։ Նորանց սուրբ արա քո ճշմար-
18 տութիւնովը. քո խօսքը ճշմարտութիւն է։ Ինչ-

պէս դու ինձ ուղարկեցիր աշխարհք, ես էլ նո-
19 րանց ուղարկեցի աշխարհք։ Եւ ես նորանց համար
իմ անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմար-
20 տութիւնով սրբուած լինեն։ Բայց ոչ թէ միայն
նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար
21 էլ, որ նորանց խօսքովը կ'հաւատան ինձ։ Որ ա-
մենքը մէկ լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում,
և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մէկ
լինեն. որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղար-
22 կեցիր ինձ։ Եւ ես այն փառքն՝ որ ինձ տուիր՝ նո-
րանց տուի, որ մէկ լինեն՝ ինչպէս մենք էլ մէկ
23 ենք։ Ես նորանցում՝ և դու ինձանում, որ կա-
տարեալ լինեն միութիւնում, որպէսզի աշխարհքը
գիտենայ, թէ դու ուղարկեցիր ինձ. և սիրեցիր նո-
24 րանց՝ ինչպէս ինձ սիրեցիր։ Հայր, նորանք որ ինձ
տուիր, կամենում եմ, որ ինչ տեղ որ ես եմ՝ նո-
րանք էլ ինձ հետ լինեն. որ իմ փառքը տեսնեն,
որ տուիր ինձ. որովհետև աշխարհքի հիմնելուցն
25 առաջ սիրեցիր ինձ։ Արդար Հայր, աշխարհքը չը
ճանաչեց քեզ. բայց ես ճանաչեցի քեզ, և սո-
26 րանք ճանաչեցին որ դու ուղարկեցիր ինձ։ Եւ ես
քո անունը ճանաչեցրի նորանց, և կ'ճանաչեցնեմ.
որ այն սէրն, որով ինձ սիրեցիր՝ նորանցում լինի,
և ես էլ նորանցում։

ԳԼ. ԺԸ

1 Յիսուսը այս ասելուց յետոյ իր աշակերտների
հետ դուրս գնաց Կեդրոն հեղեղատի միւս կողմը,
որտեղ մի պարտէզ կար. որի մէջ մտաւ ինքը և
2 իր աշակերտները։ Յուդան՝ նորան մատնողն էլ
գիտէր այն տեղը. որովհետև Յիսուսը շատ անգամ
3 ժողովուել էր այնտեղ իր աշակերտների հետ։ Եւ

Յուդան զինուորների գունդը և քահանայապետնե-
րից և փարիսեցիներից սպասաւորներ առնելով ե-
կաւ այնտեղ ջահերով և լապտերներով և զէն-
4 քերով։ Բայց Յիսուսը՝ երբոր գիտաց այն ամեն
բաները, որ գալիս էին իր վերայ, դուրս եկաւ նո-
5 րանց ասեց. Ո՞ւմ էք ուզում։ Պատասխանեցին
նորան. Յիսուս Նազովրեցուն. Յիսուսը նորանց ա-
սեց. Ես եմ. Յուդան՝ նորան մատնողն էլ կանգ-
6 նած էր նորանց հետ։ Երբոր ասեց նորանց թէ Ես
եմ, նորանք ետ ետ գնացին, և գետնի վերայ ըն-
7 կան։ Եւ դարձեալ հարցրեց նորանց, Ո՞ւմ էք
ուզում. և նորանք ասեցին. Յիսուս Նազովրեցուն։
8 Յիսուսը պատասխանեց. Ձեզ ասեցի թէ Ես եմ.
արդ թէ որ ինձ էք ուզում, թող տուէք դորանց,
9 որ գնան։ Որ կատարուի այն խօսքը որ ասեց, թէ
Նորանց որ ինձ տուիր, նորանցից ոչ մէկն էլ չ'կոր-
10 ցրի։ Բայց Սիմօն Պետրոսը, որ սուր ունէր, քաշեց
նորան և քահանայապետի ծառային զարկեց, և
նորա աջ ականջը կտրեց գցեց. և այն ծառայի
11 անունը Մաղքոս էր։ Յիսուսն էլ Պետրոսին ասեց.
Սուրդ դիր պատեանի մէջը. այն բաժակը որ իմ
Հայրը տուաւ ինձ, ես այն չ'խմե՞մ։
12 Եւ զինուորների գունդը և հազարապետը և Հրէ-
աների սպասաւորները բռնեցին Յիսուսին, և կա-
13 պեցին նորան, Եւ տարան նորան առաջ Աննայի
մօտ. որովհետև Կայիափայի աներն էր, որ այն
14 տարուայ քահանայապետն էր։ Սա այն Կայիափան
էր, որ Հրէաներին խրատ տուաւ, թէ Լաւ է, մէկ
15 մարդ կորչի ժողովրդի համար։ Եւ Սիմօն Պետրոսը
և միւս աշակերտը գնում էին Յիսուսի ետևից։
Այն աշակերտը ծանօթ էր քահանայապետին, և
Յիսուսի հետ մտաւ քահանայապետի սրահը։
16 Պետրոսն էլ դռան մօտ կանգնած էր դուրսը. այն

միւս աշակերտը որ քահանայապետին ծանօթ էր,
դուրս եկաւ և դռնապանին ասեց, և Պետրոսին
17 ներս մտցրեց։ Եւ այն աղջիկը՝ որ դռնապան էր՝
Պետրոսին ասեց. Մի՞թէ դու էլ այն մարդի աշա-
18 կերտներիցն ես. և նա ասեց. Չեմ։ Ծառաներն ու
սպասաւորներն էլ կանգնել էին՝ կրակ արած, ո-
րովհետև ցուրտ էր, և տաքանում էին. Պետրոսն
19 էլ նորանց հետ կանգնած էր և տաքանում էր։ Եւ
քահանայապետը Յիսուսին հարցրեց նորա աշա-
կերտների համար և նորա վարդապետութեան հա-
20 մար։ Յիսուսը պատասխանեց նորան. Ես յայտնի
խօսեցի աշխարհքին. ես միշտ սովորեցրի ժողովա-
րանումը և տաճարումը, որտեղ ամեն տեղից Հրէա-
ները ժողովվում են, և ծածուկ ոչինչ չ'խօսեցի։
21 Ի՞նչու ես ինձ հարցնում. լսողներին հարցրու, թէ
ես ինչ խօսեցի նորանց. ահա նորանք գիտեն, ես
22 ինչ եմ ասել։ Երբոր նա սա ասեց, սպասաւորնե-
րից մէկը, որ այնտեղ կանգնած էր, Յիսուսին
ապտակ տուաւ և ասեց. Այդպէ՞ս ես պատասխա-
23 նում քահանայապետին։ Յիսուսը նորան պատաս-
խանեց. Եթէ չար խօսեցի, վկայիր այն չարի համար.
24 բայց եթէ բարի, ի՞նչու ես զարկում ինձ։ Եւ
Աննան նորան կապած ուղարկեց Կայիափա քա-
25 հանայապետի մօտը։ Եւ Սիմօն Պետրոսը կանգնած
տաքանում էր. նորան ասեցին, Մի՞թէ դու էլ
նորա աշակերտներիցն ես. Նա ուրացաւ և ասեց՝
26 Չեմ։ Եւ քահանայապետի ծառաներիցը մէկը, որ
ազգական էր նորան, որի ականջը Պետրոսը կտրեց,
ասեց. Չէ՞ որ ես տեսայ քեզ այն պարտէզումը
27 նորա հետ։ Եւ Պետրոսը դարձեալ ուրացաւ. և
շուտով հաւը խօսեց։
28 Եւ Կայիափայի մօտից Յիսուսին տարան պալա-
տը. և առաւօտ էր. և իրանք չ'մտան պալատի

29 մէջ, որ չ'պղծուին, այլ որ զատիկն ուտեն։ Եւ
Պիղատոսը դուրս եկաւ նորանց մօտ և ասեց. Այդ
մարդի դէմ ի՞նչ գանգատ էք առաջ բերում։
30 Պատասխանեցին և ասեցին նորան. Եթէ սա չարա-
գործ չ'լինէր, ապա նորան չէինք մատնիլ քեզ։
31 Պիղատոսն էլ նորանց ասեց. Դուք առէք նորան,
և ձեր օրէնքի համեմատ դատեցէք նորան։ Հրէա-
ներն էլ նորան ասեցին. Մեզ օրէնք չէ ոչ ոքի
32 սպանել։ Որ Յիսուսի խօսքը կատարուի, որ ասեց,
33 ցոյց տալով թէ ինչպիսի մահով է մեռնելու։ Պի-
ղատոսը դարձեալ մտաւ պալատը, Յիսուսին կան-
չեց և նորան ասեց. Դո՞ւ ես Հրէաների թագաւո-
34 րը։ Յիսուսը նորան պատասխանեց. Դու քեզանի՞ց
ես ասում այդ, թէ ուրիշներն ասեցին քեզ ինձ
35 համար։ Պիղատոսը պատասխանեց. Մի՞թէ ես էլ
Հրէայ եմ. քո ազգը և քահանայապետները քեզ
36 մատնեցին ինձ. ի՞նչ ես արել։ Յիսուսը պատաս-
խանեց. Իմ թագաւորութիւնն այս աշխարհքիցը
չէ. եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհքիցը
լինէր, ապա իմ ծառաները կռիւ կ'անէին որ չը
մատնուէիմ Հրէաների ձեռը. բայց հիմա իմ թա-
37 գաւորութիւնն այս տեղից չէ։ Պիղատոսն էլ
ասեց նորան. Ապա ուրեմն դու թագաւո՞ր ես.
պատասխանեց Յիսուսը. Դու ես ասում որ ես
թագաւոր եմ. ես դորա համար եմ ծնուել և ե-
կել աշխարհք, որ ճշմարտութեանը վկայեմ. ա-
մեն ով որ ճշմարտութիւնիցն է՝ իմ ձայնը լսում
38 է։ Պիղատոսը նորան ասեց. Ի՞նչ է ճշմարտութիւ-
նը։ Եւ սա ասելով դարձեալ դուրս գնաց Հրէա-
ների մօտ և նորանց ասեց. Ես ոչ մի յանցանք չեմ
39 գտնում նորանում։ Բայց ձեզ սովորութիւն է, որ
զատկին մի մարդ արձակեմ ձեզ համար. արդ
կամենո՞ւմ էք, որ Հրէաների թագաւորն արձա-

40 կեմ ձեզ համար։ Եւ ամենքը դարձեալ աղաղա-
կեցին և ասում էին, Ոչ թէ դորան՝ այլ Բարաբ-
բային. և այդ Բարաբբան մի աւազակ էր։

ԳԼ. ԺԹ

1 Այն ժամանակ Պիղատոսն առաւ Յիսուսին և
2 ծեծեց։ Եւ զինուորները փշերից պսակ շինեցին,
դրին նորա գլխին, և ծիրանի հանդերձ հագցրին
3 նորան։ Եւ ասում էին. Ողջ կաց, ով Հրէաների
4 Թագաւոր. և ապտակներ էին տալիս նորան։ Պի-
ղատոսը դարձեալ դուրս գնաց և նորանց ասեց.
Ահա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ, որ գի-
տենաք թէ ես ոչ մի յանցանք չեմ գտնում նո-
5 րանում։ Եւ Յիսուսը դուրս եկաւ, փշեղէն պսա-
կը և ծիրանի հագուստը հագած. և Պիղատոսը նո-
6 րանց ասեց. Ահա այն մարդը։ Երբոր քահանայա-
պետները և սպասաւորները նորան տեսան, աղա-
ղակեցին և ասեցին. Խաչիր, խաչիր։ Պիղատոսը
նորանց ասեց. Դուք առէք դորան և խաչեցէք.
որովհետև ես յանցանք չեմ գտնում դորանում։
7 Հրէաները պատասխանեցին նորան. Մենք օրէնք
ունինք, և մեր օրէնքի համեմատ պէտք է մեռնի.
8 որովհետև իր անձն Աստուծոյ Որդի արաւ։ Երբոր
Պիղատոսը այս խօսքը լսեց, էլ աւելի վախեցաւ։
9 Եւ դարձեալ մտաւ պալատը, և Յիսուսին ասեց.
Դու ի՞նչ տեղից ես. և Յիսուսը չ՚պատասխանեց
10 նորան։ Պիղատոսն էլ ասեց նորան. Ինձ հետ չե՞ս
խօսում. մի՞թէ չ՚գիտես, որ ես իշխանութիւն ու-
նիմ քեզ խաչելու, և իշխանութիւն ունիմ քեզ
11 արձակելու։ Յիսուսը պատասխանեց. Դու ոչինչ
իշխանութիւն չէիր ունենալ ինձ վերայ, եթէ վե-
րևից տրուած չ՚լինէր քեզ. նորա համար՝ նա որ

12 ինձ մատնեց քեզ, նորա մեղքն աւելի մեծ է։ Եւ
նորանից յետոյ Պիղատոսը որոնում էր նորան ար-
ձակել. բայց Հրէաներն աղաղակում էին և ասում.
Եթէ դորան արձակես՝ կայսրի բարեկամ չես. ա-
մեն ով որ իր անձը թագաւոր է կոչում, նա կայս-
13 րին հակառակ է խօսում։ Պիղատոսն էլ երբոր
այս խօսքը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, և բեմի
վերայ նստեց, այն տեղը՝ որ Քարայատակ էր կոչ-
14 վում, և Եբրայեցերէն Կաբբաթա։ Եւ զատկի
ուրբաթն էր՝ ժամը իբր վեցը, և Հրէաներին ասեց.
15 Ահա ձեր թագաւորը։ Իսկ նորանք աղաղակում
էին, Վեր առ, վեր առ՝ և խաչիր դորան. Պիղա-
տոսը նորանց ասեց. Ձեր թագաւո՞րը խաչեմ։ Քա-
հանայապետները պատասխանեցին. Մենք թագա-
16 ւոր չ՚ունինք բացի կայսրից։ Այն ժամանակ նորան
տուաւ նորանց ձեռը, որ խաչուի։
17 Եւ նորանք առան տարան Յիսուսին. և խաչա-
փայտն ինքը վերկալած, դուրս գնաց այն տեղը, որ
Գագաթն էր ասվում, որ Եբրայեցերէն Գողգոթա
18 է կոչվում։ Այնտեղ խաչ հանեցին նորան. և նորա
հետ երկու ուրիշին՝ այս կողմին և այն կողմին, և
19 Յիսուսին՝ մէջտեղը։ Պիղատոսը մի տախտակ էլ
գրեց, և խաչի վերայ դրաւ. և գրուած էր. ՅԻ-
20 ՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։ Եւ այս
տախտակը Հրէաներից շատերը կարդացին. որով-
հետև քաղաքին մօտ էր այն տեղը ուր որ Յիսուսը
խաչուեցաւ. և գրուած էր Եբրայեցերէն, Յունա-
21 րէն և Լատիներէն։ Եւ Հրէաների քահանայապետ-
ներն ասեցին Պիղատոսին. Մի գրիր Հրէաների Թա-
գաւոր, այլ թէ Նա ասեց, Ես Թագաւոր եմ
22 Հրէաների։ Պիղատոսը պատասխանեց. Ինչ որ գրե-
ցի՝ գրեցի։
23 Բայց զինուորներն՝ երբոր Յիսուսին խաչ հանե-

ցին, Նորա հանդերձներն առան՝ և չորս բաժին ա-
րին, ամեն մէկ զինուորի համար մի բաժին . բայց
պատմուճանը՝ որովհետև առանց կարի էր, վերևից
24 վայր բոլորը հիւսուած. Ուստի իրար ասեցին. Դո-
րան չ'պատառենք, այլ վիճակ գցենք դորա վերայ,
թէ ումը լինի. որ գիրքը կատարուի, որ ասում է
թէ իմ հանդերձներն իրանց մէջ բաժանեցին և
իմ պատմուճանի վերայ վիճակ գցեցին . և զին-
ուորներն արին այդ բանը ։
25 Եւ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին Նորա մայ-
րը, և Նորա մօր քոյրը՝ Մարիամը Կղէօպայի կինը,
26 և Մարիամ Մագդաղենացին։ Յիսուսն էլ տեսնե-
լով իր մօրը և այն աշակերտին՝ որ սիրում էր, որ
մօտիկ կանգնած էր, իր մօրն ասեց. Ով կին, ահա
27 քո որդին։ Յետոյ ասեց աշակերտին. Ահա քո մայ-
րը . և այն ժամանակից այն աշակերտն իրան մօտ
առաւ Նորան ։
28 Սորանից յետոյ Յիսուսն իմանալով, որ ամեն
բան արդէն լրացած է, որպէս զի գրուածը կատար-
29 ուի՝ ասեց. Ծարաւ եմ։ Եւ մի աման կար քացա-
խով լիքն . և Նորանք մի սպունգ լցրին քացախով
և զոպայի մշտիկի վերայ դրած Նորա բերանին մօ-
30 տեցրին։ Եւ երբոր Յիսուսը քացախն առաւ՝ ասեց.
Կատարուած է . և գլուխը խոնարհեցրեց՝ հոգին
աւանդեց ։
31 Բայց Հրէաները, որովհետև ուրբաթ օր էր, որ-
պէս զի մարմինները չ'մնան խաչի վերայ շաբաթ օ-
րը, որովհետև այն շաբաթ օրը մեծ էր, Պիղատո-
սին աղաչեցին, որ Նորանց սրունքները ջարդեն, և
32 վեր առնուին։ Զինուորներն էլ եկան և առաջինի
սրունքները ջարդեցին, այնպէս էլ միւսինը որ Նո-
33 րա հետ խաչուած էր ։ Բայց երբոր Յիսուսի մօտ
եկան և տեսան Նորան արդէն մեռած, Նորա սր-

34 րունքները չ'ջարդեցին ։ Այլ զինուորներից մէկը
գեղարդով Նորա կողը խոցեց. և շուտով արիւն և
35 ջուր դուրս եկաւ։ Եւ նա որ այս տեսաւ՝ վկայեց.
և Նորա վկայութիւնը ճշմարիտ է. և նա գիտէ որ
36 ճշմարիտ է ասում, որ դուք հաւատաք։ Որովհե-
տև այս բաները եղան, որ գրուածը կատարուի, Թէ
37 Նորա ոսկորը չ'պիտի փշրուի։ Եւ դարձեալ մի ու-
րիշ գրուած ասում է, Թէ Մտիկ կ'տան Նորան,
որ խոցեցին ։
38 Սորանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յովսէփը,
որ Արիմաթիայեցն էր, (որ աշակերտ լինելով Յի-
սուսին, բայց Հրէից վախի պատճառովը ծածկուած
էր) որ Յիսուսի մարմինը վեր առնէ. և Պիղատոսը
հրաման տուաւ . և նա եկաւ և վեր առաւ Յի-
39 սուսի մարմինը։ Նիկոդեմոսն էլ եկաւ՝ (որ առաջ
Յիսուսի մօտ էր եկել գիշերով.) և զմուռս բե-
րաւ հալուէի հետ խառնած՝ հարիւր լիտրի չափ ։
40 Եւ Յիսուսի մարմինն առան, և այն խնկերի հետ
կտաւներով պատեցին, ինչպէս Հրէաներին օրէնք էր
41 պատել։ Եւ այն տեղը, ուր որ խաչուեցաւ, մի
պարտէզ կար, և այն պարտէզումը մի նոր գերեզ-
42 ման, որ Նորանում երբէք ոչ ոք չէր դրուած։ Եւ
այնտեղ դրին Յիսուսին Հրէաների ուրբաթի հա-
մար, որովհետև գերեզմանը մօտ էր ։

ԳԼ. Ի

1 Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդաղենացին
առաւօտանց՝ տակաւին մութ՝ գալիս է գերեզմա-
նը, և տեսնում է քարը գերեզմանից վեր առած։
2 Ապա վազում է գալիս Սիմօն Պետրոսի և միւս ա-
շակերտի մօտ, որին Յիսուսը սիրում էր, և ասում
Նորանց. Տիրոջը վեր առան գերեզմանից, և չ'գի-

3 տենք թէ որտեղ դրին նորան ։ Եւ դուրս եկաւ
Պետրոսը և միւս աշակերտը, և գալիս էին գերեզ-
4 մանը ։ Եւ երկուսը միասին վազում էին. և միւս
աշակերտը վազեց շուտով անցաւ Պետրոսից, և
5 առաջ եկաւ գերեզմանը ։ Եւ ծռելով տեսնում է
6 կտաւները դրած. բայց ներս չ'մտաւ ։ Սիմօն Պետ-
րոսն էլ հասաւ որ նորա ետևից գալիս էր, և մտաւ
7 գերեզմանը, և տեսնում է կտաւները դրած ։ Եւ
վարշամակը՝ որ նորա գլխի վերայ էր, կտաւների
8 հետ չէր, այլ ջոկ ծալած մի առանձին տեղ ։ Այն
ժամանակ միւս աշակերտն էլ ներս մտաւ, նա որ
առաջ էր գերեզմանը եկել, տեսաւ և հաւատաց ։
9 Որովհետև տակաւին չ'գիտէին գիրքը, թէ պէտք
10 է նա մեռելներից յարութիւն առնէ ։ Եւ աշա-
կերտները դարձեալ իրանց տունը գնացին ։
11 Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած էր
դուրսը և լաց էր լինում. և լաց լինելիս ծռուեց
12 դէպի ներս գերեզմանի մէջ. Եւ տեսնում է եր-
կու հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով նստած,
մէկը գլխի կողմին, և միւսը ոտների կողմին, որ-
13 տեղ որ Յիսուսի մարմինը դրուած էր ։ Եւ նորանք
ասեցին նորան. Ով կին, ի՞նչու ես լաց լինում. Նո-
րանց ասեց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր ա-
14 ռան, և չ'գիտեմ՝ թէ ուր դրին նորան ։ Եւ երբոր
սա ասեց, դարձաւ իր յետին կողմը, և Յիսուսին
տեսաւ՝ կանգնած. և չ'գիտէր թէ Յիսուսն է ։
15 Յիսուսը նորան ասեց. Կին, ի՞նչու ես լաց լինում,
ո՞ւմ ես որոնում. Նա էլ կարծելով թէ պարտիզ-
պանն է, ասեց նորան. Տէր, եթէ դու վեր առար
նորան, ասիր ինձ՝ ուր ես դրել նորան, որ ես վեր
16 առնեմ նորան ։ Յիսուսը նորան ասեց. Մարիամ.
և նա դարձաւ և ասեց նորան. Ռաբբունի, որ կը
17 թարգմանուի Վարդապետ ։ Յիսուսը նորան ասեց.

Մի դպչիր ինձ, որովհետև դեռ չեմ վեր ելել
իմ Հօր մօտ. բայց դու գնա իմ եղբայրների մօտ,
և նորանց ասիր. Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ
և ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ և ձեր Աս-
18 տուծոյ մօտ ։ Մարիամ Մագդաղենացին գալիս է
աշակերտներին պատմում, թէ նա տեսաւ Տիրո-
ջը, և թէ նա այս բաներն իրան ասեց ։
19 Եւ նոյն օրը, միաշաբաթի իրիկունը երբոր դռ-
ները փակուած էին, այնտեղ ուր որ աշակերտնե-
րը ժողովուած էին Հրէաների վախից, Յիսուսը
եկաւ և նորանց մէջ կանգնեց, և նորանց ասեց.
20 Խաղաղութիւն ձեզ ։ Եւ սա ասելով իր ձեռքերը
և իր կողը ցոյց տուաւ նորանց. և աշակերտներն
21 ուրախացան՝ երբոր Տիրոջը տեսան ։ Յիսուսը դար-
ձեալ ասեց նորանց. Խաղաղութիւն ձեզ, ինչպէս
իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղար-
22 կում ։ Եւ սա ասելով փչեց նորանց վերայ և ա-
23 սեց. Առէք Սուրբ Հոգին ։ Որոնց մեղքը որ թողէք՝
թողուած կ'լինի նորանց. որոնցը որ պահէք՝ պահ-
ուած կ'լինի ։
24 Բայց Թովմասը՝ տասներկուսից մէկը՝ Երկուոր-
եակ կոչուածը, նորանց հետ չէր, երբոր Յիսուսը
25 եկաւ ։ Միւս աշակերտներն ասում էին նորան, թէ
Տիրոջը տեսանք. իսկ նա ասեց նորանց, Եթէ նորա
ձեռքերումն բևեռների նշանը չ'տեսնեմ, և իմ
մատը չ'դնեմ բևեռների տեղը, և իմ ձեռքը չ'կո-
խեմ նորա կողը, չեմ հաւատալ ։
26 Եւ ութ օրից յետոյ աշակերտները դարձեալ
ներսումն էին, և Թովմասն էլ նորանց հետ. Յի-
սուսը՝ դռները փակ լինելով՝ եկաւ և նորանց մի-
ջումը կանգնեց և ասեց. Խաղաղութիւն ձեզ ։
27 Յետոյ Թովմասին ասեց. Բեր քո մատը այստեղ, և
տես իմ ձեռքերը, և քո ձեռքը բեր՝ և իմ կողը

կոխիր, և մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։
28 Եւ Թովմասը պատասխանեց և ասեց նորան. Ով
29 իմ Տէրը, և ով իմ Աստուածը։ Յիսուսը նորան
ասեց. Որովհետև տեսար ինձ՝ հաւատացիր. երա-
նի նորանց, որ չեն տեսել և հաւատում են։
30 Յիսուսը ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր աշա-
կերտների առաջին, որ չեն գրուած այս գրքումը։
31 Բայց սորանք գրուեցան՝ որ հաւատաք, թէ Յի-
սուսն է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին. և որ հաւա-
տալով կեանք ունենաք նորա անունովը։

ԳԼ. ԻԱ.

1 Սորանից յետոյ Յիսուսը դարձեալ իր անձը
յայտնեց իր աշակերտներին Տիբերեայ ծովի եզրին
2 մօտ. և այսպէս յայտնեց։ Միասին էին Սիմօն
Պետրոսը, և Երկուորեակ անուանուած Թովմասը,
և Նաթանայելը՝ որ Գալիլեայի Կանայիցն է, և Զե-
բեդէոսի որդիքը, և նորա աշակերտներիցն ուրիշ
3 երկուս էլ։ Սիմօն Պետրոսը նորանց ասեց. Ես գը-
նում եմ ձուկ բռնելու. նորան ասեցին. Մենք էլ
գանք քեզ հետ. գնացին և շուտով մտան նաւը,
4 և այն գիշերը ոչինչ չ'բռնեցին։ Երբոր արդէն ա-
ռաւօտ եղաւ, Յիսուսը ծովի եզրումը կանգնած
էր, սակայն աշակերտները չ'ճանաչեցին, թէ Յի-
5 սուսն է։ Իսկ Յիսուսը նորանց ասեց. Տղերք, ու-
տելու բան ունի՞ք. պատասխանեցին նորան, Ոչ։
6 Նա էլ ասեց նորանց. Ուռկանը նաւի աջ կողմը
գցեցէք, և կ'գտնէք. նորանք էլ գցեցին, և՝ էլ
չէին կարողանում քաշել՝ ձկների շատութեան
7 պատճառովը։ Այն աշակերտը որ Յիսուսը սիրում
էր նորան՝ Պետրոսին ասեց, Տէրն է նա։ Սիմօն
Պետրոսը երբոր լսեց՝ թէ Տէրն է, վերարկուն իրան

վերայ առաւ, որովհետև մերկ էր, և զինքը ծովը
8 գցեց։ Իսկ միւս աշակերտները եկան նաւակով.
որովհետև ցամաքից հեռու չէին. այլ երկու հա-
րիւր կանգունի չափ, և ուռկանը ձկներովը քա-
9 շում էին։ Երբոր դուրս եկան ցամաքը, տեսան ա-
ծուխի կրակ վառած, և նորա վերայ դրած ձուկ և
10 հաց։ Յիսուսը նորանց ասեց. Բերէք այդ ձկներից՝
11 որ հիմա բռնեցիք։ Սիմօն Պետրոսը ներս մտաւ և
ուռկանը քաշեց դէպի ցամաքը՝ մեծ մեծ ձկներով
լիքը՝ հարիւր յիսուն և երեք հատ. և այդքան լինե-
12 լով՝ ուռկանը չ'պատառուեցաւ։ Յիսուսը նորանց
ասեց. Եկէք ճաշեցէք. և աշակերտներիցը ոչ ով
չէր համարձակում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես. ո-
13 րովհետև գիտէին, որ Տէրն է։ Յիսուսն էլ եկաւ՝
և հացն առաւ՝ և նորանց տուաւ, և նոյնպէս էլ
14 ձուկը։ Սա երրորդ անգամն է որ Յիսուսը իր ա-
շակերտներին երևեցաւ, մեռելներից յարութիւն
առնելուց յետոյ։
15 Եւ երբոր ճաշեցին, Յիսուսն ասեց Սիմօն Պետ-
րոսին. Սիմօն Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ դո-
րանցից աւելի. նորան ասեց. Այո, Տէր, դու գի-
տես՝ որ ես սիրում եմ քեզ, նորան ասեց. Արա-
16 ծեցրու իմ գառները։ Դարձեալ ասեց նորան. Սի-
մօն Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ. նորան ասեց.
Այո, Տէր, դու գիտես որ ես սիրում եմ քեզ.
17 Նորան ասեց, Արածեցրու իմ ոչխարները։ Երրորդ
անգամն ասեց նորան. Սիմօն Յովնանի որդի, սիրո՞ւմ
ես ինձ. Պետրոսը տրտմեցաւ. որովհետև երրորդ
անգամ նորան ասեց՝ Բէ Սիրո՞ւմ ես ինձ. և նորան
ասեց. Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես,
որ ես սիրում եմ քեզ. Յիսուսը նորան ասեց.
18 Արածեցրու իմ ոչխարները։ Ճշմարիտ ճշմարիտ
ասում եմ քեզ, երբոր պատանի էիր՝ ինքդ էիր

գօտիդ կապում՝ և ման գալիս որտեղ որ ուզում
էիր. բայց երբոր կ'ծերանաս, ձեռքերդ կ'մեկնես.
և ուրիշը գօտի կ'կապէ, և կ'տանէ՝ որտեղ որ չես
19 ուզիլ: Սա ասեց՝ ցոյց տալով թէ նա ի՛նչ մահով
կ'փառաւորէ Աստուծուն. և սա ասելուց յետոյ,
20 նորան ասեց. Իմ ետևից եկ. Պետրոսն էլ դար-
ձաւ՝ տեսաւ այն աշակերտին, որին Յիսուսը սի-
րում էր, որ ետևից գալիս էր, նա՝ որ էլ նորա
լանջքումն ընկաւ ընթրիքի ժամանակին և ասեց.
21 Տէր, ո՞վ է քեզ մատնողը: Պետրոսը սորան տես-
22 նելով, Յիսուսին ասեց. Տէր, բայց սա ի՞նչ: Յի-
սուսը նորան ասեց. Եթէ ես կամենում եմ, որ
դա կենայ, մինչև ես գամ. քե՞զ ինչ. դու իմ
23 ետևից եկ: Եւ այս խօսքը դուրս եկաւ եղբայր-
ների մէջ, թէ այն աշակերտը չի մեռնիլ. բայց
Յիսուսը չ'ասեց նորան, թէ չի մեռնիլ. այլ ե-
թէ կամենում եմ որ դա կենայ մինչև ես գամ.
քե՞զ ինչ:
24 Սա այն աշակերտն է, որ այս բաների համար
վկայում է, և այս բաներն էլ գրեց, և գիտենք որ
25 նորա վկայութիւնը ճշմարիտ է: Բայց ուրիշ էլ
շատ բաներ կան, որ Յիսուսը արաւ, որոնք եթէ
մէկ մէկ գրուած լինէին, կարծում եմ թէ աշ-
խարհքս էլ բաւական չէր լինիլ այն գրուած
գրքերը տանելու: Ամէն:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա

1 Առաջին պատմութիւնն արի, ով Թէոփիլէ, ա-
մեն բանի համար, որ Յիսուսը սկսեց անել և սո-
2 վորեցնել, Մինչև այն օրը, որ Սուրբ Հոգու ձեռո-
վը պատուէր տուաւ իր ընտրած առաքեալներին,
3 և վերացաւ. Որոնց էլ իր չարչարանքից յետոյ ի-
րան կենդանի կանգնացրեց շատ ապացոյցներով
քառասուն օրուայ միջոցում երևելով նորանց՝ և
4 Աստուծոյ արքայութեան համար խօսելով: Եւ նո-
րանց միասին ժողովուած ժամանակը, պատուէր
էր տալիս նորանց՝ Երուսաղէմից չ'հեռանալ, այլ
սպասել Հօր աւետիքին, որ՝ ասեց՝ ինձանից լսեցիք:
5 Որովհետև Յովհաննէսը ջրով մկրտեց.
բայց դուք Սուրբ Հոգով կ'մկրտուիք, ոչ թէ շատ
6 օրեր սորանից յետոյ: Եւ նորանք մէկտեղ գալով
հարցնում էին նորան և ասում. Տէր, այս ժամա-
նակո՞ւմն ես կանգնեցնում Իսրայէլի թագաւորու-
7 թիւնը: Եւ նա ասեց նորանց. Ձեր բանը չէ գիտե-
նալ ժամերը և ժամանակները, որ Հայրն իր իշ-
8 խանութիւնումը դրաւ: Բայց դուք զօրութիւն
կ'առնէք՝ երբոր Հոգին ձեզ վերայ կ'գայ, և իմ
վկաները կ'լինիք Երուսաղէմումը և բոլոր Հրէաս-
տանի և Սամարիայի մէջ մինչև երկրի ծայրերը:
9 Եւ երբոր այս ասեց, նորանք նայելիս՝ վերացաւ. և
10 մի ամպ վեր առաւ նորան նորանց աչքերից: Եւ
դեռ որ նորանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս

դէպի երկինքը նորա գնալին, ահա երկու մարդիկ
11 երևեցան նորանց սպիտակ հանդերձներով, Որ և
ասեցին. Ով Գալիլեացի մարդիկ, ի՞նչ էք կանգնել
և մտիկ էք անում դէպի երկինքը. այս Յիսուսը,
որ ձեզանից վերացաւ երկինքը, այսպէս կ՚գայ ինչ-
12 պէս նորան տեսաք երկինքը գնալիս։ Այն ժամա-
նակ ետ դարձան Երուսաղէմ Ձիթենեաց անուան-
ուած սարիցը, որ մօտ է Երուսաղէմին շաբաթ օր-
ուայ ճանապարհի չափ։
13 Եւ երբոր մտան, վեր ելան վերնատունը որտեղ
որ բնակվում էին, Պետրոսը և Յակոբոսը, և Յով-
հաննէսը և Անդրէասը, Փիլիպպոսը և Թովմասը,
Բարթողոմէոսը և Մատթէոսը, Յակոբոս Ալփեանը
և Սիմոն Նախանձայոյզը՝ և Յուդա Յակոբեանը։
14 Սորանք ամենքը միշտ միաբան աղօթք և աղաչանք
էին անում կանանց հետ, և Յիսուսի մայր Մա-
րիամի և նորա եղբայրների հետ։
15 Եւ այն օրերումը Պետրոսը վերկացաւ եղբայրնե-
րի մէջ ասեց, և այնտեղ հարիւր քսան հոգու
16 չափ բազմութիւն կային. Մարդիկ եղբարք, պէտք
էր այն գրուածը կատարուէր. որ առաջուց ասեց
Սուրբ Հոգին Դաւիթի բերանովը Յուդայի համար,
17 որ Յիսուսի բռնողներին առաջնորդ եղաւ։ Որ նա
մեզ հետ համարուած էր. և այս պաշտօնի վիճա-
18 կը նորան էլ հասել էր։ Արդ սա անիրաւութեան
վարձքովը մի ագարակ ստացաւ. և գլխի վայր ընկ-
նելով միջիցը ճղուեցաւ, և նորա բոլոր փորը դուրս
19 թափուեցաւ։ Եւ յայտնի եղաւ Երուսաղէմի բո-
լոր բնակիչներին. մինչև որ այն ագարակի անունն
իրանց լեզուովը Ակեղդամա կոչուեցաւ. այսինքն՝
20 Արիւնի ագարակ։ Որովհետև Սաղմոսների գրքումն
գրուած է, Թէ Նորա բնակութիւնը աւերակ պիտի
լինի, և նորանում բնակող չ՚լինի. և Նորա պաշ-

21 տօնը ուրիշն առնէ։ Հիմա պէտք է այս մարդկան-
ցիցը, որ մեզ հետ են եղել այն բոլոր ժամանակը,
որ Տէր Յիսուսը մեզ հետ մտաւ և դուրս ելաւ,
22 Յովհաննէսի մկրտութիւնիցն սկսած մինչև այն օ-
րը, որ մեզանից վերացաւ, սորանցից մէկը մեզ հետ
23 վկայ լինի նորա յարութեանը։ Եւ երկու հոգի
կանգնեցրին՝ Յովսէփին՝ որ Բարսաբա էր կոչվում,
24 որ Յուստոս անուանուեցաւ, և Մատաթիային։ Եւ
աղօթք անելով ասեցին. Դու, Տէր, ամենի սրտա-
գէտ. այս երկուսից մէկը յայտնիր, որին ընտրե-
25 ցիր, Որ այս պաշտօնի և առաքելութեան վիճակն
առնէ, որից Յուդան ընկաւ՝ իր տեղը գնալու հա-
26 մար։ Եւ նորանց վերայ վիճակ գցեցին, և վիճակն
ընկաւ Մատաթիային վերայ, և նա տասնևմէկ ա-
ռաքեալների հետ համարուեցաւ։

ԳԼ. Բ

1 Եւ երբոր Պենտէկոստէի օրերը լրացան, ամենքը
2 միաբան մէկտեղ էին։ Եւ յանկարծակի երկնքիցը
մի հնչիւն եղաւ՝ սաստիկ փչող քամու պէս, և
3 լցրեց բոլոր տունը՝ ուր նստած էին։ Եւ երևեցան
նորանց բաժանուած լեզուներ ինչպէս կրակից. և
4 նստեց նորանց ամեն մէկի վերայ։ Եւ ամենքը Սուրբ
Հոգով լցուեցան, և սկսեցին ուրիշ լեզուներով
խօսել, ինչպէս որ Հոգին նորանց խօսել էր տալիս։
5 Եւ Երուսաղէմումը բնակուած էին Հրէաներ՝ Աս-
տուածավախ մարդիկ՝ երկնքի տակի ամեն ազգե-
6 րից։ Եւ երբոր այս ձայնը եղաւ, բազմութիւնն ե-
կաւ մէկտեղ և կիտուեցաւ. որովհետև ամեն մէ-
կը լսում էր նորանց, որ իր լեզուովը խօսում էին։
7 Եւ ամենքը հիանում էին և զարմանում, և իրար
ասում էին. Չէ՞ որ ահա սորանք ամենքը, որ խօ-

8 տում են, Գալիլեացի են։ Եւ ի՞նչպէս մենք ամեն
մէկս մեր լեզուովը լսում ենք որ նորանում ծըն-
9 ուած ենք. Պարթեւներ և Մարք և Եղամացիք, և
բնակողներ Միջագետի, Հրէաստանի և Կապադով-
10 կիայի, Պոնտոսի և Ասիայի մէջ, Փռիւգիայի և
Պամփիւլիայի մէջ, Եգիպտոսումը, և Լիբիացինե-
րի կողմերումը Կիւրենէի մօտ, և Նորաեկ Հռով-
11 մայեցիներ, Հրէաներ և Նորահաւատներ, Կրետա-
ցիներ և Արաբացիներ, լսում ենք, որ նորանք մեր
լեզուներովը Աստուծոյ մեծամեծ բաները խօսում
12 են։ Եւ հիանում էին ամենքը և զարմանում, և
մէկը միւսին ասում էին, Սա ի՞նչ պիտի լինի։
13 Իսկ ուրիշները ծաղր անելով ասում էին, Քաղ-
ցուով արբած են։
14 Եւ Պետրոսը վերկացաւ այն տասնևմէկի հետ,
իր ձայնը բարձրացրեց, և նորանց հետ խօսեց. Ով
Հրէաստանցի մարդիկ, և ամենքդ՝ որ բնակուած
էք Երուսաղէմումը, սա ձեզ յայտնի լինի, և իմ
15 խօսքերին ականջ դրէք։ Որովհետև չէ թէ ինչպէս
դուք էք կարծում, սորանք արբած են. որովհետև
16 օրուայ երրորդ ժամն է։ Այլ սա Յովէլ մարգարէի
17 ձեռովն ասուածն է, Եւ կ՚լինի յետի օրերումը,
ասում է Աստուած, որ իմ Հոգուցը կ՚թափեմ
ամեն մարմնի վերայ, և ձեր որդիները և ձեր աղ-
ջիկները կ՚մարգարէանան. և ձեր երիտասարդները
տեսիլքներ կ՚տեսնեն, և ձեր ծերերը երազներ կը
18 տեսնեն։ Եւ իմ ծառաների վերայ և իմ աղախին-
ների վերայ էլ այն օրերումն իմ Հոգուցը կ՚թա-
19 փեմ, և կ՚մարգարէանան։ Եւ նշաններ կ՚տամ վե-
րևը երկնքումը, և նշաններ ներքևը երկրումը, ա-
20 րիւն և կրակ և ծխի մառախուղ։ Արեգակը խա-
ւար կ՚դառնայ, և լուսինն արիւն, Տիրոջ մեծ և
21 երևելի օրը դեռ չ՚եկած։ Եւ կ՚լինի, ամեն ով որ

22 Տիրոջ անունը կ՚կանչէ՝ կ՚փրկուի։ Ով Իսրայէլացի
մարդիկ, այս խօսքերը լսեցէք. Յիսուս Նազովրե-
ցին՝ այն մարդը՝ որ Աստուածանից ցոյց տրուեցաւ
ձեզանում զօրութիւններով և հրաշքներով և նը-
շաններով, որ Աստուած նորա ձեռովն արաւ ձեր
23 միջումը. ինչպէս դուք էլ գիտէք. Նորան, որ Աս-
տուծոյ սահմանուած խորհրդովը և կանխագիտու-
թիւնովը մատնուած էր, առաք՝ անօրէնների ձե-
24 ռով փայտի վերայ բևեռած, սպանեցիք. Որին
Աստուած յարութիւն տուաւ մահի ցաւերը լու-
ծելով. որովհետև կարելի չէր, որ նա բռնուի նո-
25 րանից։ Վասնզի Դաւիթն ասում է նորա համար.
Առաջուց տեսնում էի Տիրոջն ամեն ժամանակ իմ
26 առաջին. որ իմ աջ կողմն է, որ չ՚սասանիմ։ Սորա
համար իմ սիրտն ուրախ եղաւ, և լեզուս ցնծա-
27 ցաւ, և իմ մարմինն էլ յուսով կ՚բնակուէ։ Որով-
հետև իմ անձը չես թողիլ *գերեզմանումը, և ոչ
էլ քո Սուրբին ապականութիւն տեսնել կ՚տաս։
28 Կեանքի ճանապարհները ճանաչեցրիր ինձ. քո ե-
29 րեսի ուրախութիւնովը կ՚լցնես ինձ։ Մարդիկ եղ-
բարք, պէտք է համարձակութեամբ ասեմ ձեզ
Դաւիթ նահապետի համար. Թէ նա մեռաւ էլ
թաղուեցաւ էլ. և նորա գերեզմանը մինչև այսօր
30 մեր միջումն է։ Իսկ որովհետև մարգարէ էր, և
գիտէր, որ Աստուած երդումով երդուաւ նորան,
որ նորա երանքի պտղիցը մարմնի կողմանէ յարու-
ցանէ Քրիստոսին նորա աթոռի վերայ նստեցնելու
31 համար. Առաջուց իմացած՝ խօսեց Քրիստոսի յա-
րութեան համար, թէ նորա անձը *գերեզմանումը
չ՚թողուեցաւ՝ և ոչ էլ նորա մարմինն ապականու-

*կամ՝ մեռելների բնակարանումը. Գրաբ. դժոխ-
քումը

32 Թիւն տեսաւ։ Սոյն այս Յիսուսին Աստուած յա-
րութիւն տուաւ որի վկաներն ենք մենք ամենքս։
33 Արդ Աստուծոյ աջովը բարձրացած, և Սուրբ Հո-
գու խոստմունքը Հօրիցն առած, Թափեց այս, որ
34 դուք հիմա տեսնում և լսում էք։ Որովհետև ոչ
Թէ Դաւիթը վեր ելաւ երկինքը. բայց ինքն ասում
է, Տէրն իմ Տիրոջն ասեց. իմ աջ կողմին նստիր,
35 Մինչև քո Թշնամիները քո ոտների պատուանդան
36 դնեմ։ Հիմա Թող ստոյգ գիտենայ Իսրայէլի բոլոր
տունը, որ Աստուած նորան Տէր և Օծեալ արաւ,
սոյն այս Յիսուսին, որին դուք խաչեցիք։
37 Եւ երբոր այս լսեցին, իրանց սրտերումը զղջացին.
և ասեցին Պետրոսին և միւս առաքեալներին, ի՞նչ
38 անենք, մարդիկ եղբարք։ Պետրոսն էլ նորանց ա-
սեց. Ապաշխարեցէք՝ և ձեզանից ամեն մէկը Թող
մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի
Թողութեան համար, և Սուրբ Հոգու պարգևը
39 կ'ընդունիք։ Որովհետև ձեզ և ձեր որդկանց հա-
մար է այս խոստմունքը, և այն ամեն հեռաւորնե-
40 րի համար, որոնց մեր Տէր Աստուածը կ'կանչէ։ Եւ
ուրիշ շատ խօսքերով վկայութիւն էր դնում, և
յորդորում և ասում. Ազատուեցէք այս Թիւր
41 ազգիցը։ Եւ նորանք որ նորա խօսքը յօժարու-
Թեամբ ընդունեցին՝ մկրտուեցան. և այն օրը երեք
42 հազարի չափ հոգիք աւելացան։ Եւ միշտ հետե-
ւում էին առաքեալների վարդապետութեանը և
հաղորդութեանը և հացի կտրելին՝ և աղօԹքներին։
43 Եւ ամեն անձի վերայ վախ եկաւ. շատ հրաշք-
ներ և նշաններ էլ էին գործվում առաքեալների
44 ձեռովը։ Եւ բոլոր հաւատացեալներն իրար հետ
մէկտեղ էին, և ամեն բան հասարակաց ունէին։
45 Եւ ապրանքները և բոլոր բաները ծախում էին, և
բաշխում էին այն ամենին, ում ինչ բան որ պէտք

46 էր լինում։ Ամեն օր միաբանութեամբ տաճարումն
էին լինում, և հաց էին կտրում տներումը, և ու-
րախութիւնով և սրտի միամտութիւնով կերակուր
47 էին ուտում. Աստուծուն օրհնում էին, և բոլոր
ժողովրդի առաջին շնորհք ունէին. և Տէրն ամեն
օր փրկուածներին աւելացնում էր եկեղեցու հետ։

ԳԼ. Գ

1 Պետրոսն և Յովհաննէսը գնում էին միասին տա-
2 ճարը իններորդ ժամի աղօԹքին։ Եւ մի մարդ կար
իր մօր որովայնիցը կաղ, որին վերկալած՝ ամեն օր
դնում էին տաճարի այն դռան մօտ, որ Գեղեցիկ
էր կոչվում, տաճարը մտնողներիցը ողորմութիւն
3 խնդրելու համար։ Երբոր նա տեսաւ Պետրոսին և
Յովհաննէսին, որ գնում էին մտնեն տաճարը, ա-
ղաչում էր, որ ողորմութիւն առնէ նորանցից։
4 Պետրոսը Յովհաննէսի հետ մտիկ արաւ նորան և
5 ասեց. Մեզ նայիր։ Նա էլ ուշը դարձրեց դէպի
նորանց, սպասելով որ մի բան առնէ նորանցից։
6 Պետրոսն էլ ասեց. Արծաթ և ոսկի չ'ունիմ. բայց
ինչ որ ունիմ, այն քեզ կ'տամ. Յիսուս Քրիստո-
սի՝ Նազովրեցու անունովը վեր կաց և ման եկ։
7 Եւ աջ ձեռքիցը բռնեց՝ վերկացրեց նորան. և շու-
տով հաստատուեցան նորա սրունքը և բարձքը։
8 Վեր Թռաւ, կանգնեց և ման էր գալիս, և նո-
րանց հետ մտաւ տաճարը ման գալով և վազ տա-
9 լով և Աստուծուն օրհնելով։ Եւ բոլոր ժողովուր-
դը տեսաւ նորան, որ ման էր գալիս և Աստուծուն
10 օրհնում էր։ Եւ ճանաչում էին նորան, որ սա էր,
որ ողորմութեան համար նստում էր տաճարի Գե-
ղեցիկ դռանը. և լցուեցան երկիւղով և զարման-
քով այն եղածի համար։

11 Եւ քանի որ այն բժշկուած կաղը Պետրոսին և
Յովհաննէսին բռնած էր, բոլոր ժողովուրդը վազեց
նորանց մօտ այն սրահը, որ Սողոմոնի սրահ էր կոչ-
12 վում՝ զարմացած։ Երբոր Պետրոսը տեսաւ, պա-
տասխանեց ժողովրդին. Ով Իսրայէլացի մարդիկ,
ի՞նչու էք զարմացել սորա վերայ, կամ մե՞զ վե-
րայ ինչու էք սաստիկ նայում, իբր թէ մենք մեր
զօրութիւնովը և քաջութիւնովս արած լինինք, որ
13 դա ման գայ. Աբրահամի և Իսահակի և Յակոբի
Աստուածը՝ մեր հայրերի Աստուածը, փառաւո-
րեց իր *Որդի Յիսուսին. որին դուք մատնեցիք, և
ուրացաք Պիղատոսի առաջին երբոր նա վճռեց՝ որ
14 արձակէ նորան։ Եւ դուք այն Սուրբին և Արդա-
րին ուրացաք, և խնդրեցիք որ մի մահապարտ մարդ
15 շնորհէ ձեզ։ Իսկ կեանքի Առաջնորդին սպանեցիք,
որին Աստուած մեռելներից յարութիւն տուաւ.
16 որի վկաներն ենք մենք։ Եւ նորա անունի հաւատ-
քովը սորան՝ որ տեսնում էք և ճանաչում էք,
նորա անունը հաստատեց. և նոյն հաւատքը՝ որ
նորանով է՝ այս առողջութիւնը տուաւ դորան ձեր
17 ամենի առաջին։ Եւ հիմա, եղբարք, գիտեմ, որ
անգիտութեամբ արիք՝ ինչպէս ձեր իշխաններն էլ։
18 Բայց Աստուած, ինչ որ առաջուց բոլոր մարգարէ-
ների բերանովը պատմեց՝ Քրիստոսի չարչարուելու
19 համար, այնպէս էլ կատարեց։ Ուրեմն զղջացէք և
20 ետ դարձէք, որ ձեր մեղքերը ջնջուին. Որ Տիրոջ
երեսիցը հանգստանալու ժամանակները գան. և
նա ուղարկէ առաջուց ձեզ համար քարոզուած
21 Յիսուս Քրիստոսին. Որին երկինքը պէտք է ընդու-
նի, մինչև այն ամեն բաների հաստատուելու ժա-
մանակները, որոնց համար խօսեց Աստուած իր բո-

*Կամ՝ ծառայ

լոր սուրբ մարգարէների բերանովը յաւիտենից հե-
22 տէ։ Որովհետև Մովսէսը հայրերին ասեց, թէ Ձեր
Տէր Աստուածը մարգարէ մեր կ'կացնէ ձեզ հա-
մար ձեր եղբայրների միջիցը ինձ նման, նորան լսե-
23 ցէք ամեն բանի համար՝ ինչ որ խօսի ձեզ։ Եւ կը
լինի, որ ամեն անձն՝ որ այն մարգարէին չ'լսէ, նա
24 ժողովրդի միջիցը թող սատակուի։ Եւ բոլոր մար-
գարէները որ Սամուէլից սկսած մարգարէացան,
25 այս օրերը պատմեցին։ Դուք էք այն մարգարէնե-
րի որդիքը՝ և այն ուխտի, որ Աստուած մեր հայ-
րերի հետ հաստատեց, և Աբրահամին ասեց. Եւ
քո զաւակովը պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը։
26 Աստուած առաջ ձեզ համար վերկացրեց իր Որդի
Յիսուսին, և նորան ուղարկեց՝ որ նա ձեզ օրհնէ,
որ ամեն մէկը ետ դառնաք ձեր չարութիւններիցը։

ԳԼ. Դ

1 Եւ նորանք տակաւին ժողովրդի հետ խօսելիս
*քահանաները և տաճարի իշխանը և Սադուկեցի-
2 ները նորանց վերայ հասան, Սաստիկ բարկացած
նորա համար՝ որ նորանք ժողովրդին սովորեցնում
էին, և քարոզում էին Յիսուսի ձեռովը մեռելնե-
3 րից յարութիւն առնելը։ Եւ իրանց ձեռքերը գը-
ցեցին նորանց վերայ, և բանտի մէջ դրին մինչև
4 հետևեալ օրը. որովհետև արդէն իրիկուն էր։ Եւ
այս խօսքը լսողներից շատերը հաւատացին. և
մարդկանց համարը հինգ հազարի չափ եղաւ։
5 Եւ հետևեալ օրը եղաւ որ նորանց իշխանները
և ծերերը և դպիրները ժողովուեցան Երուսաղէմ։
6 Եւ Աննա քահանայապետը և Կայիափան, և Յով-

*Ոմանք՝ քահանայապետները

հաննէսը և Աղեքսանդրոսը, և այն ամենը որ քա-
7 հանայական ցեղից էին։ Եւ նորանց կանգնեցնե-
լով մէջտեղը՝ հարցնում էին թէ ի՞նչ զօրութե-
8 նով կամ ո՞ր անունով արիք դուք այս։ Այն ժա-
մանակ Պետրոսը Սուրբ Հոգով լցուած նորանց ա-
սեց. Ով ժողովրդի իշխաններ՝ և Իսրայէլի ծերեր.
9 Եթէ մենք այսօր հարցաքննվում ենք մի տկար
մարդի երախտիքի համար, թէ ում ձեռովը սա
10 բժշկուեցաւ, Թող յայտնի լինի ձեզ ամենիդ՝ և
բոլոր Իսրայէլի ժողովրդիդ, որ Յիսուս Քրիստոսի՝
Նազովրեցու անունովը՝ որին դուք խաչեցիք, և ո-
րին Աստուած յարութիւն տուաւ մեռելներից,
նորանով սա հիմա ձեր առաջին առողջ կանգնած
11 է։ Նա է ձեզանից՝ շինողներիցդ անարգուած քա-
12 րը, որ անկիւնի գլուխ եղաւ։ Եւ էլ մի ուրիշ ոչ
մէկով փրկութիւն չ'կայ. որովհետև ուրիշ անուն
էլ չ'կայ երկնքի ներքև մարդկանց տրուած, որով
13 կարելի լինի մեզ փրկուել։ Եւ Պետրոսի և Յով-
հաննէսի համարձակութիւնը տեսնելով, և գիտե-
նալով, որ առանց ուսմունքի և տգէտ մարդիկ են,
զարմանում էին. միայն ճանաչում էին նորանց՝ որ
14 Յիսուսի հետ էին։ Եւ այն բժշկուած մարդին էլ
տեսնելով նորանց հետ կանգնած, ոչինչ չ'ունէին
15 պատասխանելու։ Եւ հրամայեցին նորանց, որ ատ-
եանից դուրս գնան, և իրար հետ խորհուրդ ա-
16 րին, Եւ ասեցին. Ի՞նչ անենք այս մարդկանցը, որ
երևելի նշան եղաւ սորանց ձեռովը. որ Երուսաղէ-
մի մէջ բոլոր բնակողներին յայտնի է, և կարող
17 չենք ուրանալ։ Այլ որպէս զի աւելի չ'տարածուի
ժողովրդի մէջ, սաստիկ սպառնանք նորանց, որ
այլ ևս այն անունովը չ'խօսեն մարդկանց ոչ մէկի
18 հետ։ Եւ նորանց կանչեցին՝ պատուէր տուին, որ
ամենևին չ'խօսեն, և ոչ էլ սովորեցնեն Յիսուսի

19 անունովը։ Բայց Պետրոսը և Յովհաննէսը պատաս-
խանեցին նորանց և ասեցին. Եթէ արժան է Աս-
տուծոյ առաջին՝ որ ձեզ աւելի ականջ դնենք
20 քան թէ Աստուծուն, դուք դատեցէք։ Վասնզի
մենք չենք կարող այն որ տեսանք և լսեցինք, չը
21 խօսել։ Իսկ նորանք սպառնալով արձակեցին նո-
րանց, և ոչինչ չ'գտնելով թէ ինչպէս պատիժ տան
նորանց ժողովրդի պատճառովը. որովհետև ամենքն
էլ այն եղածի համար փառք էին տալիս Աստու-
22 ծուն։ Վասնզի այն մարդը քառասուն տարուց ա-
ւելի էր. որի վերայ այս բժշկութեան նշանը եղաւ։
23 Եւ արձակուելուց յետոյ եկան իրանցների մօտ,
և պատմեցին ինչ որ քահանայապետները և ծե-
24 րերն ասեցին նորանց։ Եւ նորանք երբոր լսեցին,
միաբանութեամբ իրանց ձայները բարձրացրին դէպի
Աստուած և ասեցին. Տէր, դու ես Աստուած, որ
արիր երկինքը և երկիրը՝ ծովը և նորանց մէջի բո-
25 լոր բաները։ Որ քո Դաւիթ ծառայի բերանովը
խօսեցիր և ասեցիր. Ի՞նչու համար ազգերը խռովե-
ցին՝ և ժողովուրդները ունայն բաներ մտածեցին։
26 Երկրի թագաւորները վերկացան, և իշխանները
մէկտեղ հաւաքուեցան Տիրոջ դէմ և նորա Օծեա-
27 լի դէմ։ Որովհետև արդարև հաւաքուեցան քո
սուրբ Որդի Յիսուսի վերայ, որին օծեցիր, Հերով-
դէսը և Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսների հետ
28 և Իսրայէլի ժողովուրդների հետ, Որ անեն՝ ինչ
որ քո ձեռքը և կամքն առաջուց սահմանեց լինե-
29 լու։ Եւ հիմա, Տէր, նայիր նորանց սպառնալիքին,
և տուր քո ծառաներին, բոլոր համարձակութիւ-
30 նով քո խօսքը խօսել. Որ քո ձեռքը մեկնես, որ
բժշկութիւն, և նշաններ և հրաշքներ լինեն, քո
31 սուրբ Որդի Յիսուսի անունովը։ Եւ նորանք աղօթք
անելիս՝ շարժուեցաւ այն տեղը, ուր որ ժողովուած

էին, և ամենքը Սուրբ Հոգով լցուեցան. և Աս-
տուծոյ խօսքը խօսում էին համարձակութեամբ։
32 Եւ հաւատացեալների բազմութեան սիրտը և
հոգին մէկ էր. և ոչ ոք չէր ասում իր ստացուած-
քի մէկի համար՝ թէ իրանն է. այլ նորանց համար
33 ամեն բաները հասարակաց էին։ Եւ առաքեալները
մեծ զօրութիւնով վկայութիւն էին տալիս Տէր
Յիսուսի յարութեան համար. և մեծ շնորհք կար
34 նորանց ամենի վերայ։ Որովհետև նորանց մէջ ոչ
մէկը կարօտութիւն չ'ունէր. վասնզի նորանք որ
ագարակների կամ տների տէր էին, ծախում էին, և
35 ծախուածի գինը բերում էին, Առաքեալների ոտ-
ների մօտ էին դնում. և ամեն մէկին տրվում էր
36 ինչ որ պէտք էր ունենում։ Եւ Յովսէսը որ ա-
ռաքեալներիցը Բառնաբաս կոչուեցաւ, որ Մխի-
թարութեան որդի կ'թարգմանուի, Ղևտացի, ծը-
37 նընդեամբ Կիպրացի, Նա մի ագարակ ունէր, ծախեց
և գինը բերաւ առաքեալների ոտների մօտ դրաւ։

ԳԼ. Ե

1 Եւ մի մարդ՝ անունն Անանիա, իր Սափիրա կնոջ
2 հետ՝ մի կալուածք ծախեց։ Եւ նորա գնիցը թագ-
ցրեց, որ կինն էլ գիտէր. և մի բաժինը բերաւ ա-
3 ռաքեալների ոտների մօտ դրաւ։ Եւ Պետրոսը ա-
սեց. Անանիա, ի՞նչու համար սատանան քո սիրտը
լցրեց, որ դու սուտ խօսես Սուրբ Հոգուն, և ա-
4 գարակի գնիցը թագցնես։ Չէ՞ որ նա որ կենում
էր՝ քոնն էր, և ծախուած էլ քո իշխանութեան
տակն էր. ի՞նչ է՝ որ այս բանը դրիր քո սրտի մէջ.
ոչ թէ մարդկանց սուտ խօսեցիր, այլ Աստուծուն։
5 Եւ Անանիան հէնց որ այս խօսքը լսեց, վայր ըն-
կաւ և հոգին հանեց. և մեծ վախ եղաւ ամենքի

6 վերայ, որ այդ լսեցին։ Երիտասարդներն էլ վեր-
կացան՝ պատանեցին նորան, և տարան թաղեցին։
7 Եւ եղաւ երբոր երեք ժամի չափ անցաւ, նորա
8 կինն որ չ'գիտէր եղածը՝ ներս մտաւ։ Պետրոսը
պատասխանեց նորան և ասեց. Ասիր ինձ՝ թէ ա՞յն-
չափի ծախեցիք ագարակը. նա էլ ասեց. Այո,
9 այնչափի։ Պետրոսն էլ ասեց նորան. Ի՞նչ է՝ որ
միաբանեցաք դուք, որ Տիրոջ Հոգին փորձէք. ա-
հա քո մարդը թաղողների ոտները դռան մօտ են,
10 քեզ էլ կ'հանեն։ Եւ նա իսկոյն վայր ընկաւ նո-
րա ոտների առաջին՝ և հոգին հանեց. երիտա-
սարդներն էլ ներս մտան՝ նորան մեռած գտան, և
11 հանեցին՝ իր մարդի մօտ թաղեցին։ Եւ մեծ ահ
եղաւ բոլոր եկեղեցու վերայ, և ամենքի վերայ որ
12 այս լսեցին։ Եւ առաքեալների ձեռովը շատ նշան-
ներ և հրաշքներ էին լինում ժողովրդի մէջ. ա-
13 մենքը միաբան Սողոմոնի սրահումն էին։ Եւ ուրիշ-
ներիցն ոչ ոք չէր համարձակում յարիլ նորանց.
14 բայց ժողովուրդը մեծարում էր նորանց։ Եւ ա-
ռաւել ևս շատանում էին Տիրոջ հաւատացեալ-
ները, և եղաւ մի բազմութիւն մարդկանց և կա-
15 նանց։ Մինչև որ հիւանդներին հանում էին հրա-
պարակները, և իրանց պատգարակներովը և մա-
հիճներովը այնտեղ էին դնում, որ Պետրոսը անց-
նելիս, գոնէ նորա շուքը նորանցից մէկի վերայ ընկ-
16 նէ։ Եւ շրջակայ քաղաքներից բազմութիւնը հա-
ւաքվում էին Երուսաղէմ, որ բերում էին հի-
ւանդներին և պիղծ ոգիներից չարչարուածներին.
որ ամենքն էլ բժշկվում էին։
17 Եւ վերկացաւ քահանայապետը և ամենքը որ
նորա հետ էին, և Սադուկեցիների աղանդը, և
18 նախանձով լցուեցան. Եւ ձեռք գցեցին առաք-
եալներին, և նորանց դրին հասարակաց բանտի մէջ։

19 Բայց Տիրոջ հրեշտակը գիշերով բանտի դռները
20 բացաւ, և նորանց դուրս հանելով ասեց. Գնացէք
և կանգնեցէք տաճարի մէջ և այս կեանքի բոլոր
21 խօսքերը խօսեցէք ժողովրդի հետ ։ Եւ երբոր լսե-
ցին, առաւօտանց մտան տաճարը և սովորեցնում
էին . քահանայապետն էլ եկաւ և նորանք էլ որ
նորա հետ էին , և կանչեցին ատեանը և իսրայէլի
որդկանց բոլոր ծերակոյտը մէկտեղ , և ուղարկե-
22 ցին բանտը որ բերեն նորանց ։ Եւ երբոր սպասա-
ւորներն եկան, նորանց չ'գտան բանտի մէջ. և ետ
23 դառան պատմեցին, Եւ ասեցին թէ Բանտը բոլոր
զգուշութեամբ փակած գտանք , և պահապաններն
էլ դուրսը դռան մօտ կանգնած. բայց երբոր բաց
24 արինք՝ ներսումը ոչ ոքին չ'գտանք ։ Եւ երբոր քա-
հանայապետը և տաճարի իշխանը այս խօսքը լսե-
ցին , հիանում էին նորանց համար , թէ սա ինչ
25 պիտի լինի ։ Եւ մէկն եկաւ նորանց պատմեց , թէ
Ահա այն մարդիկը , որ բանտի մէջ դրիք , տաճա-
26 րումը կանգնած սովորեցնում են ժողովրդին։ Այն
ժամանակ իշխանն սպասաւորներին հետ գնաց՝ նո-
րանց բերաւ առանց բռնութեան . որովհետև ժո-
27 ղովրդիցը վախենում էին՝ որ չ'քարկոծեն։ Եւ երբ-
որ բերին նորանց՝ կանգնեցրին ատեանումը. և քա-
28 հանայապետը հարցրեց նորանց , Եւ ասեց . Չէ՞ որ
պատուիրելով պատուիրեցինք ձեզ՝ որ չ'սովորեցը-
նէք այդ անունովը . և ահա Երուսաղէմը լցրիք
ձեր ուսմունքովը , և կամենում էք այն մարդի ա-
րիւնը մեզ վերայ բերել ։
29 Պետրոսը և առաքեալները պատասխանելով ա-
սեցին. Աստուծոյ պէտք է աւելի հնազանդել քան
30 թէ մարդկանց ։ Մեր հայրերի Աստուածը յարու-
թիւն տուաւ Յիսուսին՝ որին դուք փայտից կա-
31 խած սպանեցիք ։ Աստուած նորան Առաջնորդ և

Փրկիչ բարձրացրեց իր աջովը , որ իսրայէլին ա-
32 պաշխարութիւն և մեղքերի թողութիւն տայ։ Եւ
մենք նորա վկաներն ենք այս բաների համար , և
Սուրբ Հոգին էլ , որ Աստուած իրան հնազանդող-
33 ներին տուաւ ։ Եւ նորանք երբոր լսեցին , կատա-
ղում էին. և խորհում էին, որ նորանց սպանեն։
34 Բայց մի փարիսեցի վերկացաւ ատեանումը՝ ա-
նունը Գամաղիէլ , օրէնքի վարդապետ՝ բոլոր ժո-
ղովրդի առաջին պատուաւոր , հրամայեց որ ա-
35 ռաքեալներին մի քիչ դուրս տանեն , Եւ նորանց
ասեց . Ով իսրայէլացի մարդիկ , զգուշացէք այս
36 մարդկանց համար, թէ ինչ պիտի անէք ։ Որովհե-
տև այս օրերից առաջ Թևդասը վերկացաւ՝ ասե-
լով թէ ինքը մի բան է. որ թուով չորս հարիւրի
չափ մարդիկ նորան յարեցան . որ Ն+ը սպանուե-
ցաւ՝ և ամենքն էլ՝ որ նորան հնազանդել էին ,
37 ցրուեցան և ոչինչ եղան ։ Նորանից յետոյ Գալիլ-
եացի Յուդան վերկացաւ աշխարհագրի օրերումը .
և շատ ժողովուրդ քաշեց իր կողմը . Նա էլ կո-
րաւ՝ և ամենքն էլ որ նորան հնազանդել էին ,
38 ցիրուեցան եղան։ Եւ հիմա ասում եմ ձեզ . Հեռու
կացէք այդ մարդկանցից, և թողէք դորանց. որով-
հետև եթէ այդ խորհուրդը կամ այդ գործը մարդ-
39 կանցից է, կ'քանդուի. Բայց եթէ Աստուածանից
է, չէք կարող քանդել դորան. մի գուցէ Աստուծոյ
40 դէմ կռիւ անող էլ գտնուիք ։ Նորանք էլ համոզ-
ուեցան նորան. և առաքեալներին կանչեցին՝ ծեծե-
ցին, և պատուէր տուին, որ չ'խօսեն Յիսուսի անու-
41 նովը. և արձակեցին նորանց։ Իսկ նորանք ուրախա-
նալով գնացին ատեանի երեսիցը. որովհետև արժա-
42 նի եղան նորա անունի համար անարգուիլ ։ Եւ բո-
լոր օրը չէին դադարում տաճարումը և տներումը
սովորեցնել և Յիսուս Քրիստոսին աւետարանել ։

ԳԼ. Զ

1 Եւ այն օրերումն՝ երբոր աշակերտները շատացան,
*Հելլենախօսների կողմանէ տրտունջ եղաւ Եբրա-
յեցիների դէմ թէ նորանց որբեւայրիները ամեն օ-
րուայ մատակարարութիւնների մէջ անտես էին լի-
2 նում։ Եւ տասներկուսը կանչեցին աշակերտների
բազմութիւնը և ասեցին. Մեզ վայել չէ որ Ա-
3 տուծոյ խօսքը թողած սեղանին ծառայենք։ Հիմա,
եղբայրներ, ձեզանից եօթը վկայուած մարդիկ ընտ-
րեցէք, Սուրբ Հոգով և իմաստութիւնով լցուած,
4 որոնց այս պիտոյքի վերայ դնենք։ Իսկ մենք աղօթ-
5 քին և խօսքի պաշտամունքին հետեւինք։ Եւ այս
խօսքը բոլոր բազմութեան առաջին հաւանելի ե-
րեւեցաւ. և ընտրեցին Ստեփաննոսին որ Սուրբ Հո-
գով և հաւատքով լցուած մարդ էր, և Փիլիպպո-
սին և Պրոքորոնին և Նիկանովրային և Տիմոնային
և Պարմենային և Անտիոքացի նորահաւատ Նիկո-
6 ղայոսին։ Նորանց կանգնեցրին առաքեալների ա-
ռաջին. և աղօթք անելով ձեռք դրին նորանց վե-
7 րայ։ Եւ Աստուծոյ խօսքը աճում էր և աշակերտ-
ների համարը խիստ շատանում էր Երուսաղէմու-
մը. և քահանաներից էլ շատ բազմութիւն հնա-
զանդվում էին հաւատքին։
8 Ստեփաննոսն էլ հաւատքով և զօրութիւնով
լցուած, մեծ մեծ հրաշքներ և նշաններ էր անում
9 ժողովրդի մէջ։ Եւ վերկացան ոմանք այն ժողովա-
րանից՝ որ †Լիբերտինացիների էր կոչվում. և Կիւ-
րենացիներից և Աղեքսանդրացիներից և նորանցից

*Այսինքն՝ Հելլենախօս Հրէաների
†Այսինքն՝ Ազատուածների

որ Կիլիկիայից և Ասիայից էին, և վիճաբանում էին
10 Ստեփաննոսի հետ. Եւ չէին կարողանում դէմ
կենալ այն իմաստութեանը՝ և այն հոգուն, որով
11 նա խօսում էր։ Այն ժամանակ մի քանի մարդկանց
հրապուրեցին որ ասեն, թէ Մենք լսեցինք դորա-
նից, որ հայհոյութեան բաներ էր խօսում՝ Մով-
12 սէսի և Աստուծոյ դէմ։ Եւ ժողովրդին և ծերերին
և դպիրներին գրգռեցին. և վերայ հասան յափշ-
13 տակեցին նորան՝ և տարան ատեանը. Եւ սուտ
վկաներ կանգնեցրին, որ ասում էին. Այս մարդը
չէ դադարում այս սուրբ տեղի և օրէնքի դէմ
14 հայհոյութեան բաներ խօսելուց։ Որովհետեւ մենք
լսեցինք դորանից՝ որ ասում էր, թէ Այս Յիսուս
Նազովրեցին այս տեղը կ'քանդէ, և կ'փոխէ Մով-
15 սէսի մեզ տուած սովորութիւնները։ Եւ ատեա-
նումը նստողների ամենը երբոր մտիկ տուին նորան՝
նորա երեսը հրեշտակի երեսի նման տեսան։

ԳԼ. Է

1 Եւ քահանայապետն ասեց թէ Արդեօք այդ բա-
2 ներն այդպէ՞ս են։ Նա էլ ասեց. Մարդիկ՝ եղբայր-
ներ և հայրեր, լսեցէք. Փառքի Աստուածն երեւե-
ցաւ մեր հայր Աբրահամին, որ Միջագետումն էր,
դեռ Խառանի մէջ չ'բնակուած. և ասեց նորան.
3 Դուրս եկ քո երկրիցը և քո ազգիցը, և եկ այն
4 երկիրն՝ որ ես ցոյց կ'տամ քեզ։ Այն ժամանակ
Քաղդեացիների երկրիցը դուրս եկաւ՝ Խառանումը
բնակուեց. և այն տեղից նորա հօր մեռնելուց յե-
տոյ՝ նորան փոխադրեց պանդխտացրեց այս երկրու-
5 մը, որ նորանում դուք հիմա բնակուած էք։ Եւ
սորանում ժառանգութիւն չ'տուաւ նորան, և ոչ
էլ մի ոտքի քայլի տեղ, և խոստացաւ նորան այս

տեղը սատացուածք տալ նորան. և նորանից յե-
6 տոյ՝ նորա զաւակին, նա դեռ որդի չ'ունեցած։ Եւ
Աստուած այսպէս խօսեց. Թէ նորա զաւակը պան-
դուխտ կ'լինի օտար երկրի մէջ. և կ'ծառայեցնեն
7 նորան, և կ'չարչարեն չորս հարիւր տարի։ Եւ այն
ազգին, որին կ'ծառայեն, նորան ես կ'դատեմ, ա-
սեց Աստուած. և նորանից յետոյ դուրս կ'գան՝ և
8 այստեղ ինձ կ'պաշտեն։ Եւ նորան Թլփատութեան
ուխտը տուաւ. և յետոյ Իսահակին ծնեց, և ու-
թերորդ օրը Թլփատեց նորան. և Իսահակը Յակո-
9 բին, և Յակոբը տասներկու նահապետներին։ Եւ
նահապետները նախանձելով Յովսէփին վերայ ծա-
10 խեցին Եգիպտոս. և Աստուած նորա հետ էր։ Եւ
փրկեց նորան իր բոլոր նեղութիւններիցը. և նորան
շնորհք և իմաստութիւն տուաւ Եգիպտոսի փա-
րաւոն Թագաւորի առաջին. և նորան իշխան կանգ-
11 նեցրեց Եգիպտոսի և իր բոլոր տան վերայ։ Եւ սով
եկաւ Եգիպտոսի բոլոր երկիրը՝ և Քանանն էլ, և
մեծ նեղութիւն. և մեր հայրերը կերակուր չէին
12 գտնում։ Եւ Յակոբը լսելով Թէ Եգիպտոսումը
ցորեն կայ, մեր հայրերին ուղարկեց առաջին ան-
13 գամը։ Եւ երկրորդումը Յովսէփն իրան ճանաչել
տուաւ իր եղբայրներին. և Յովսէփի ազգը յայտնի
14 եղաւ փարաւոնին։ Յովսէփն էլ ուղարկեց և կան-
չեց իր հայր Յակոբին, և բոլոր ազգատոհմին՝ եօ-
15 Թանասունևհինգ հոգի։ Եւ Յակոբն իջաւ Եգիպ-
16 տոս, և վախճանեց ինքը և մեր հայրերը։ Եւ փո-
խադրուեցան Սիւքեմ, դրուեցան այն գերեզմա-
նում, որ Աբրահամը Սիւքեմի հօր Եմովրի որդի-
17 ներիցն առաւ արծաթով։ Եւ երբոր խոստմունքի
ժամանակը մօտեցաւ՝ որ Աստուած Աբրահամին
երդումով խոստացել էր, ժողովուրդը աճեց և
18 շատացաւ Եգիպտոսումը. Մինչև որ մի ուրիշ Թա-

գաւոր վերկացաւ Եգիպտոսումը՝ որ Յովսէփին չէր
19 ճանաչում։ Նա հնարք գործածեց մեր ազգի դէմ,
և մեր հայրերին չարչարեց՝ որ իրանց երեխաները
20 դուրս գցեն, որ չ'ապրեն։ Որ այն ժամանակ Մով-
սէսն էլ ծնուեցաւ, և գեղեցիկ էր Աստուծոյ ա-
ռաջին. որ իր հօր տանն երեք ամիս կերակրուե-
21 ցաւ։ Եւ երբ որ դուրս գցեցին նորան, փարաւոնի
աղջիկը վեր առաւ նորան և մեծացրեց նորան՝ ի-
22 րան համար իբրև որդի։ Եւ Մովսէսը վարժուեցաւ
Եգիպտացիների բոլոր իմաստութիւնովը. և զօրա-
23 ւոր էր խօսքերով և գործերով։ Եւ երբոր նորա
քառասուն տարեկան ժամանակը լրացաւ, նորա
սրտի մէջ ընկաւ՝ որ իր եղբայրներին՝ Իսրայէլի որ-
24 դիներին այցելութիւն անէ։ Եւ երբոր տեսաւ, որ
նորանցից մէկը զրկուած էր, պաշտպանեց և այն
զրկուածի վրէժն առաւ՝ Եգիպտացուն սպանելով։
25 կարծում էր Թէ նորա եղբայրները կ'իմանան, որ
Աստուած նորա ձեռովը փրկութիւն պիտի տայ
26 նորանց. բայց նորանք չ'իմացան։ Եւ հետևեալ օրն
երևեցաւ նորանց, որ կռիւ էին անում, և յորդո-
րեց նորանց դէպի խաղաղութիւն, ասելով. Մար-
դիկ, դուք եղբայրներ էք, ինչու էք իրար զրկում։
27 Բայց նա՝ որ ընկերին զրկում էր, մերժեց նորան և
ասեց. Քեզ ո՞վ կանգնեցրեց մեզ վերայ իշխան և
28 դատաւոր։ Մի՞Թէ դու կամենում ես ինձ էլ
սպանել, ինչպէս երէկ Եգիպտացուն սպանեցիր։
29 Եւ Մովսէսը փախաւ այս խօսքի վերայ, և պան-
դուխտ եղաւ Մադիամի երկրումը, ուր երկու որ-
30 դի ծնեց։ Եւ երբոր քառասուն տարի լրացաւ,
Սինա սարի անապատումը Տիրոջ հրեշտակն երևե-
31 ցաւ նորան կրակի բոցով, մորենումը։ Եւ Մով-
սէսն երբոր տեսաւ՝ զարմացաւ այն տեսիլքի հա-
մար, և երբոր մօտենում էր որ մտիկ անէ, Տիրոջ

32 ձայնը եղաւ նորան. Ես եմ քո հայրերի Աստուա-
ծը, Աբրահամի Աստուածը և Իսահակի Աստուա-
ծը և Յակոբի Աստուածը. և Մովսէսը զարհուրած
33 չէր համարձակւում նայել: Եւ Տէրն ասեց նորան.
Կօշիկներդ հանիր ոտներիցդ, որովհետև այդ տե-
34 ղը որ դու կանգնել ես, սուրբ երկիր է: Տեսնե-
լով տեսայ իմ ժողովրդի չարչարանքները որ Եգիպ-
տոսումն է, և լսեցի նորանց հառաչանքը և իջայ
որ նորանց փրկեմ. և հիմա եկ, քեզ ուղարկեմ
35 Եգիպտոս: Հէնց այն Մովսէսին՝ որին ուրացան և
ասեցին. Քեզ ո՞վ կանգնեցրեց մեզ վերայ իշխան
և դատաւոր, Աստուած նորան իշխան և փրկիչ
ուղարկեց հրեշտակի ձեռովը, որ մորենումն երե-
36 ւեցաւ նորան: Նա հանեց նորանց՝ և հրաշքներ և
նշաններ արաւ Եգիպտոսի երկրումը, և Կարմիր
37 ծովումը, և անապատումը քառասուն տարի: Սա
այն Մովսէսն է, որ ասեց Իսրայելի որդկանցը, Ձեր
Տէր Աստուածը մի մարգարէ վեր կ՚կացնէ ձեզ
համար ձեր եղբայրներիցն ինձ նման. Նորան լսեցէք:
38 Սա է՝ որ եղաւ ժողովրդի մէջ անապատումն այն
հրեշտակի հետ, որի հետ Սինա սարումը խօսեց՝
և մեր հայրերի հետ. որ կենդանի պատգամներ ա-
39 ռաւ՝ որ տայ մեզ: Որին մեր հայրերը չ՚կամեցան
հնազանդ լինել. այլ մերժեցին և իրանց սրտերովը
40 ետ դառան Եգիպտոս. Եւ Ահարօնին ասեցին.
Մեզ համար աստուածներ շինիր, որ մեր առաջին
գնան. որովհետև այն Մովսէսն՝ որ Եգիպտոսի երկ-
րիցը մեզ հանեց, չ՚գիտենք թէ ի՞նչ եղաւ նորան:
41 Եւ այն օրերումը մի հորթ շինեցին, և զոհ մա-
տուցրին կուռքին և ուրախանում էին իրանց
42 ձեռքերի գործերովը: Եւ Աստուած ետ դարձրեց
և նորանց մատնեց՝ որ երկնքի զօրութեանը պաշ-
տեն. ինչպէս որ գրուած է մարգարէների գրքումն.

Մի՞թէ զոհեր և պատարագներ բերիք ինձ քառա-
43 սուն տարի անապատումն, ով Իսրայէլի տուն. Եւ
Մողոքի վրանն առաք, և ձեր Հռեմփա աստուծոյ
աստղն. այն պատկերները որ արիք նորանց երկըր-
պագութիւն տալու համար. և ես ձեզ կ՚փոխա-
44 դրեմ Բաբելոնից այն կողմը: Վկայութեան խորա-
նը մեր հայրերի հետ անապատումն էր. ինչպէս
հրաման տուաւ Մովսէսի հետ խօսողը, որ նորան
45 անէ այն օրինակի պէս՝ որ տեսաւ: Որ նորան մեր
հայրերն էլ առան բերին Յեսուի հետ այն ազգե-
րի կալուածքը, որ Աստուած դուրս արաւ մեր
46 հայրերի երեսիցը. մինչև Դաւիթի օրերը, Որ Աս-
տուծոյ առաջին շնորհք գտաւ, և խնդրեց՝ որ Յա-
47 կոբի Աստուծոյ համար բնակարան գտնէ: Բայց
48 Սողոմոնը նորա համար տուն շինեց. Սակայն Բարձ-
րեալը ոչ թէ ձեռագործ տաճարներում է բնակ-
49 վում. ինչպէս մարգարէն ասում է, Երկինքն իմ
աթոռն է, և երկիրն իմ ոտների պատուանդան.
ի՞նչպիսի տուն պիտի շինէք ինձ համար, ասում է
Տէրը, կամ ո՞րն է իմ հանգիստ առնելու տեղը:
50 Չէ՞ որ իմ ձեռն արաւ այս ամենը: (51) Խստա-
պարանոցներ՝ և սրտերով և ականջներով չ՚թըլ-
փատուածներ. դուք միշտ Սուրբ Հոգուն հակա-
ռակում էք. ինչպէս ձեր հայրերը այնպէս էլ
52 դուք: Մարգարէներից ո՞րին չ՚հալածեցին ձեր
հայրերը, և սպանեցին նորանց՝ որ առաջուց պատ-
մեցին այն Արդարի գալստեան համար, որի դուք
53 հիմա մատնիչներն և սպանողներն եղաք. Որ օ-
րէնքն առաք հրեշտակների մատակարարութեամ-
բըն, և չ՚պահեցիք:
54 Եւ այս խօսքերը լսելով, իրանց սրտերումը կա-
տաղում էին, և ատամները կրճտեցնում էին նո-
55 րա վերայ: Իսկ նա լցուած Սուրբ Հոգով՝ դէպի

երկինքը նայեց և Աստուծոյ փառքը տեսաւ, և
Յիսուսին՝ կանգնած Աստուծոյ աջ կողմումը. Եւ
ասեց. Ահա տեսնում եմ երկինքը բացուած, և
Մարդի Որդին կանգնած Աստուծոյ աջ կողմումը։
56 Իսկ նորանք մեծաձայն աղաղակելով խփեցին ի-
րանց ականջները, և միասին յարձակուեցան նորա
57 վերայ։ Եւ քաղաքիցը դուրս հանելով նորան քար-
կոծում էին. և վկաներն իրանց հանդերձները դը-
նում էին մի երիտասարդի ոտների մօտ՝ որ Սօղոս
58 էր կոչվում։ Եւ քարկոծում էին Ստեփաննոսին,
որ կանչում էր և ասում. Տէր Յիսուս, ընդունիր
59 իմ հոգին։ Եւ ծունկ դրաւ՝ և բարձր ձայնով ա-
ղաղակեց. Տէր, այդ մեղքը մի համարիր դորանց
համար. և այս ասելով ննջեց. և Սօղոս կամակից
էր նորա սպանուելուն։

ԳԼ. Ը

1 Եւ այն օրերումը մեծ հալածմունք եղաւ Երու-
սաղէմումը լինող եկեղեցու վերայ. և ամենքը ցըր-
ուեցան Հրէաստանի և Սամարիայի երկիրների մէջ,
2 բացի առաքեալներից։ Եւ աստուածավախ մարդիկ
Ստեփաննոսին վեր առան՝ և մեծ սուգ արին նորա
3 վերայ։ Բայց Սօղոսը վնաս էր տալիս եկեղեցուն.
և տանից տուն էր մտնում, և մարդկանց և կա-
նանց քաշում մատնում էր բանտի մէջ։
4 Իսկ ցրուածները ման էին գալիս՝ խօսքն աւե-
5 տարանելով։ Եւ Փիլիպպոսն իջաւ Սամարիայի մի
քաղաքը՝ և Քրիստոսին քարոզում էր նորանց։
6 Ժողովուրդներն էլ միաբան ականջ էին դնում
Փիլիպպոսի խօսածներին, լսելով և տեսնելով այն
7 նշաններն, որ անում էր։ Որովհետև պիղծ ոգիներ
ունեցողների շատերից, մեծաձայն աղաղակելով

8 դուրս էին գալիս։ Եւ շատ անդամալոյծներ և կա-
9 ղեր բժշկվում էին։ Եւ մեծ ուրախութիւն եղաւ
այն քաղաքումը։ Եւ մի մարդ՝ անունը Սիմօն, ա-
ռաջուց այն քաղաքումը մոգութիւն էր անում,
և Սամարացիների ազգին ապշեցնում էր. ասելով
10 թէ ինքը մի մեծ բան է։ Որին ամենքն էլ՝ փոքրից
մինչև մեծը մտիկ էին անում, և ասում Թէ Սա է
11 Աստուծոյ այն մեծ զօրութիւնը։ Եւ մտիկ էին
անում նորան. որովհետև շատ ժամանակ մոգու-
12 թիւններով ապշեցրել էր նորանց։ Բայց երբոր
հաւատացին Փիլիպպոսին, որ աւետարանում էր
Աստուծոյ արքայութեան և Յիսուսի Քրիստոսի ա-
նունի բաները, ամենքն էլ մկրտվում էին՝ թէ
13 մարդիկ և թէ կանայք։ Եւ Սիմօնն ինքն էլ հա-
ւատաց, և երբ որ մկրտուեցաւ՝ միշտ Փիլիպպոսի
հետ էր. և տեսնելով այն նշանները և մեծ մեծ
զօրութիւնները, որ լինում էին, զարմանում էր։
14 Երբոր Երուսաղէմ լինող առաքեալները լսեցին, թէ
Սամարիան Աստուծոյ խօսքը ընդունեց, Պետրոսին
15 և Յովհաննէսին ուղարկեցին նորանց մօտ։ Որոնք
իջան և աղօթք արին նորանց վերայ, որ Սուրբ Հո-
16 գին առնեն. Որովհետև դեռ նորանցից ոչ մէկի
վերայ չէր իջել. միայն Տէր Յիսուսի անունովը
17 մկրտուած էին։ Այն ժամանակ ձեռքերը դրին նո-
րանց վերայ, և նորանք ընդունում էին Սուրբ Հո-
18 գին։ Սիմօնն երբոր տեսաւ՝ թէ առաքեալների
ձեռք դնելովը՝ Սուրբ Հոգին տրվում է, փող բե-
19 րաւ նորանց և ասեց. Ինձ էլ տուէք այս իշխա-
թիւնն, որ ում վերայ ձեռք դնեմ՝ Սուրբ Հոգին
20 առնէ։ Պետրոսն էլ ասեց նորան. Քո արծաթը
քեզ հետ կորչի. որովհետև դու կարծեցիր, թէ
21 Աստուծոյ պարգևը փողով կ'առնուի։ Դու բաժին
և վիճակ չ'ունիս այդ բանումը. որովհետև քո սիր-

22 տը ուղիղ չէ Աստուծոյ առաջին։ Արդ ապաշխա-
րիր քո այդ չարութիւնիցը՝ և Աստուծուն աղա-
չիր, որ թերևս թողուի քեզ քո սրտի չար խոր-
23 հուրդը։ Որովհետև տեսնում եմ քեզ՝ որ դառն
24 մաղձի և անիրաւութեան կապանքի մէջ ես։ Սի-
մօնն էլ պատասխանեց և ասեց. Դուք ինձ համար
աղօթք արէք Տիրոջը, որ ինձ վերայ մի բան չ'գայ
25 նորանցից, որ դուք ասեցիք։ Եւ նորանք վկայու-
թիւն տալով և Տիրոջ խօսքը խօսելով, ետ դա-
ռան Երուսաղէմ. և Սամարացիների շատ գիւղե-
րի մէջ աւետարանում էին։
26 Եւ Տիրոջ հրեշտակը խօսեց Փիլիպպոսի հետ և
ասեց. Վեր կաց և գնա հարաւային կողմը՝ այն
ճանապարհը, որ Երուսաղէմից իջնում է Գազա,
27 որ անապատ է։ Եւ նա վեր կացաւ գնաց. և ահա
մի Եթէովպացի մարդ, Եթէովպացիների կանթա-
կա թագուհու ներքինի մի իշխանը, որ նորա բոլոր
գանձի վերայ էր, որ եկել էր Երուսաղէմ երկրր-
28 պագութիւն անելու. Եւ ետ դառնալիս իր կա-
քումը նստած կարդում էր Եսայիա մարգարէի
29 գիրքը։ Հոգին էլ Փիլիպպոսին ասեց. Մօտեցիր և
30 հասիր այդ կառքին։ Եւ Փիլիպպոսն առաջ վազե-
լով լսեց որ Եսայիա մարգարէի գիրքն էր կարդում,
և ասեց. Հասկանո՞ւմ ես արդեօք կարդացածդ,
31 Նա էլ ասեց՝ Ի՞նչպէս կ'կարողանամ, եթէ մէկը
չ'առաջնորդէ ինձ. և Փիլիպպոսին աղաչեց, որ վեր
32 ելնէ նստէ նորա հետ։ Եւ գրքի պարունակու-
թիւնն որ կարդում էր՝ այս էր։ Ինչպէս ոչխար
տարուեցաւ մորթուելու. և ինչպէս գառն իր խու-
զողի առաջ լուռ կացած՝ այնպէս չէ բանում իր
33 բերանը։ Նորա խոնարհութիւնովը նորա դատաս-
տանը վեր առնուեցաւ, նորա ցեղն ո՞վ պիտի պատ-
մէ. որովհետև նորա կեանքը երկրիցս վեր է առ-

34 նվում։ Եւ ներքինին պատասխանեց Փիլիպպոսին
և ասեց. Աղաչում եմ քեզ, մարգարէն սա ո՞ւմ
համար է ասում. իրա՞ն համար, թէ մի ուրիշի
35 համար։ Փիլիպպոսն էլ իր բերանը բացաւ, և այս
36 գրքից սկսած՝ Յիսուսն աւետարանեց նորան։ Երբ-
որ ճանապարհումը գնում էին, եկան մի ջրի մօտ.
և ներքինին ասեց. Ահա ջուր, ի՞նչ է արգելում ինձ,
37 որ մկրտուիմ։ Եւ նորան ասեց Փիլիպպոսը. Եթէ
բոլոր սրտից հաւատում ես, կարելի է. և նա
պատասխանեց և ասեց. Հաւատում եմ՝ թէ Աս-
38 տուծոյ Որդին է Յիսուս Քրիստոսը։ Եւ հրաման
տուաւ որ կառքը կանգնէ. և երկուսն էլ իջան
ջուրը՝ Փիլիպպոսը և ներքինին, և նա մկրտեց նո-
39 րան։ Եւ երբոր ջրիցը դուրս եկան, Տիրոջ Հոգին
Փիլիպպոսին յափշտակեց, և ներքինին այլևս չ'տե-
սաւ նորան. և նա ուրախութեամբ գնում էր իր
40 ճանապարհը։ Եւ Փիլիպպոսը գտնուեցաւ Ազօտո-
սումը. և ման գալով աւետարանում էր ամեն
քաղաքներին մինչև որ եկաւ Կեսարիա։

ԳԼ. Թ

1 Բայց Սօղոսը՝ դեռ սպառնալիք և մահ շնչելով
Տիրոջ աշակերտների վերայ, քահանայապետի մօտ
2 եկաւ, Եւ նորանից թղթեր խնդրեց Դամասկոս՝
ժողովարանների վերայ. որ եթէ մէկին գտնէ այն
ճանապարհին հետևող՝ մարդիկ կամ կանայք, նո-
3 րանց կապած բերէ Երուսաղէմ։ Եւ նա գնալիս
մօտեցաւ Դամասկոսին, և յանկարծակի նորա չորս
4 կողմովը լոյս փայլեց երկնքիցը։ Եւ նա գետնի վե-
րայ ընկած՝ մի ձայն լսեց, որ ասում էր նորան,
5 Սաւուղ, Սաւուղ, ի՞նչու ես ինձ հալածում։ Եւ
նա ասեց. Ո՞վ ես, Տէր. և Տէրն ասեց. Ես Յիսուսն

եմ, որին դու հալածում ես. դժուար է քեզ
6 խթանին քացի տալ։ Եւ դողալով ու զարհուրե-
7 լով ասեց. Տէր, ի՞նչ ես կամենում որ անեմ։ Եւ
Տէրն ասեց նորան. Կանգնիր և մտիր քաղաքը, և
կ'ասուի քեզ՝ թէ ինչ է պէտք քեզ անել. բայց
այն մարդիկը՝ որ նորա հետ գնում էին, ապուշ
կանգնած էին. ձայնը լսում էին, բայց ոչինչ չէին
8 տեսնում։ Սօղոսն էլ վերկացաւ գետնիցը, իր աչ-
քերը բաց անելով ոչ ոքին չէր տեսնում, և նորա
9 ձեռքիցը բռնած մտցրին Դամասկոս։ Եւ երեք օր
չէր տեսնում. և ոչ ուտում էր և ոչ խմում։
10 Եւ Դամասկոսումը մի աշակերտ կար՝ անունն
Անանիա. և Տէրը տեսիլքի մէջ նորան ասեց.
11 Անանիա. և նա ասեց. Ահա ես, Տէր։ Եւ Տէրը
նորան ասեց. Վեր կաց գնա այն փողոցը՝ որ կոչ-
վում է Ուղիղ. և Յուդայի տանը որոնիր մի Սօղոս
անունով Տարսոնացի մարդ, որովհետև ահա աղօթք
12 է անում։ Եւ նա տեսիլքի մէջ տեսաւ մի Անա-
նիա անունով մարդ, որ մտաւ և ձեռքը դրաւ
13 իրան վերայ, որ տեսնէ։ Անանիան էլ պատասխա-
նեց. Տէր, ես այն մարդի համար շատերից լսեցի,
թէ որչափ չարիք արաւ քո սուրբերին Երուսաղէ-
14 մումը։ Եւ այստեղ էլ քահանայապետներիցն իշ-
խանութիւն ունի, որ այն ամենքին կապէ, որ քո
15 անունը կանչում են։ Տէրն էլ ասեց նորան. Գնա,
որովհետև նա ինձ համար ընտրուած անօթ է, որ
իմ անունը տանէ հեթանոսների, թագաւորների՝ և
16 Իսրայէլի որդկանց առաջին։ Որովհետև ես ցոյց կը
տամ նորան, Թէ որչափ պիտի չարչարուի իմ ա-
17 նունի համար։ Եւ Անանիան գնաց՝ և մտաւ այն
տունը. և ձեռքերը դրաւ նորա վերայ, և ասեց.
Սաւուղ եղբայր, Տէրն ուղարկեց ինձ, այն Յիսու-
սը որ երևեցաւ քեզ ճանապարհումը, որ գալիս

18 էիր, որ տեսնես՝ և Սուրբ Հոգով լցուիս։ Եւ շու-
տով նորա աչքերիցը թեփերի պէս վայր ընկան. և
19 իսկոյն տեսաւ, և վերկացաւ մկրտուեցաւ. Եւ
կերակուր առաւ՝ զօրացաւ։ Եւ Սօղոսը մի քանի
օր Դամասկոսումը լինող աշակերտների հետ եղաւ։
20 Եւ շուտով ժողովարաններումը Քրիստոսին քա-
21 րոզեց, թէ Սա է Աստուծոյ Որդին։ Ամենքն էլ՝ որ
լսում էին, զարմանում էին և ասում. Չէ՞ որ սա
էր՝ որ Երուսաղէմումը հալածում էր այս անունը
կանչողներին. և հէնց նորա համար է այստեղ ե-
կել, որ սորանց կապած տանէ քահանայապետնե-
22 րի մօտ։ Բայց Սօղոսն աւելի ևս զօրանում էր՝ և
յաղթում էր այն Հրէաներին, որ Դամասկոսումը
բնակուած էին. ապացուցանելով թէ սա է Քրիս-
23 տոսը։ Երբոր բաւական օրեր լրացան, Հրէաները
24 խորհուրդ արին՝ որ սպանեն նորան։ Բայց նորանց
նենգութիւնը յայտնուեցաւ Սօղոսին, որ գիշեր և
ցերեկ դռները պահում էին՝ որ նորան սպանեն։
25 Աշակերտներն էլ նորան գիշերով առան, և զամ-
բիւղով պարսպիցը կախելով իջեցրին։
26 Եւ երբոր Սօղոսը Երուսաղէմ եկաւ, ջանք էր
անում, որ աշակերտներին յարի. և ամենքը նո-
րանից վախենում էին, և չէին հաւատում՝ թէ
27 աշակերտ է։ Բայց Բառնաբասը նորան առաւ՝ տա-
րաւ առաքեալների մօտ. և նորանց պատմեց՝ թէ
ինչպէս ճանապարհումը Տիրոջը տեսաւ, և թէ նո-
րա հետ խօսեց, և ինչպէս Դամասկոսումը համար-
28 ձակ քարոզեց Յիսուսի անունը։ Եւ նորանց հետ
էր Երուսաղէմումը մտնելով և դուրս գալով, և
29 Տէր Յիսուսի անունը համարձակ քարոզելով։ Եւ
Հելլենախօսների հետ էլ խօսում էր՝ և վիճաբա-
նութիւն էր անում. և նորանք որոնում էին, որ
30 սպանեն նորան։ Եւ եղբայրները իմանալով, նորան

իջեցրին Կեսարիա, և ուղարկեցին նորան Տարսոն։
31 Բայց եկեղեցիները բոլոր Հրեաստանի՝ Գալիլեայի
և Սամարիայի մէջ խաղաղութիւն ունէին, շին-
վում էին, և Տիրոջ երկիւղին հետևում. և Սուրբ
Հոգու մխիթարութեամբը շատանում էին։
32 Եւ եղաւ երբոր Պետրոսը ման էր գալիս ամեն
տեղ, եկաւ այն սրբերի մօտ, որ Լիւդիայի մէջ
33 բնակուած էին։ Եւ այնտեղ մի մարդ գտաւ, ա-
նունը Ենեա, որ ութ տարի մահիճի մէջ անդա-
34 մալոյծ դրած էր։ Եւ Պետրոսն ասեց նորան. Ենեա,
Յիսուս Քրիստոսը քեզ բժշկում է, վեր կաց և
35 անկողինդ շինիր. և նա շուտով վերկացաւ։ Եւ
տեսան նորան ամենքը որ բնակուած էին Լիւդիա-
36 յի և Սարոնի մէջ, որոնք դարձան դէպի Տէրը։ Եւ
Յոպպէի մէջ մի աշակերտ եղած կին կար՝ անունը
Տաբիթա, որ թարգմանուած ասվում է Այծեմ-
նիկ. սա լիքն էր բարի գործերով և ողորմութիւն-
37 ներով, որ անում էր։ Եւ եղաւ այն օրերումը, որ
նա հիւանդացաւ և մեռաւ. և նորան լուացին
38 դրին վերնատանը։ Եւ Լիւդիան Յոպպէին մօտիկ
լինելով, աշակերտները լսեցին՝ թէ Պետրոսը այն-
տեղ է, նորա մօտ երկու մարդ ուղարկեցին աղա-
39 չելու, որ չ՚ուշանայ նորանց մօտ գալու։ Եւ Պետ-
րոսը վերկացաւ եկաւ նորանց հետ. և երբ որ ե-
կաւ, նորան հանեցին այն վերնատունը. և ամեն
որբևայրիները նորա չորս կողմովը կանգնեցին, լաց
էին լինում և ցոյց էին տալիս այն հագուստները
և այն հանդերձները որ Այծեմնիկը շինում էր,
40 քանի որ նորանց հետ էր։ Եւ Պետրոսը ամենին
դուրս հանեց, ծունկ դրաւ՝ աղօթք արաւ. և
դարձաւ դէպի մարմինն և ասեց. Տաբիթա, վեր
կաց. և նա աչքերը բաց արաւ. և Պետրոսին որ
41 տեսաւ՝ ուղիղ նստեց։ Եւ նա ձեռքը տուաւ նո-

րան՝ և վերկացրեց նորան. և կանչեց սուրբերին և
որբևայրիներին, և նորանց առաջին կենդանի կանգ-
42 նեցրեց նորան։ Եւ յայտնի եղաւ բոլոր Յոպպէի
43 մէջ, և շատերը հաւատացին Տիրոջը. Եւ նա շատ
օր մնաց Յոպպէումը՝ մի կաշեգործ Սիմոնի մօտ։

ԳԼ. Ժ

1 Կեսարիայումը մի մարդ կար՝ անունը Կոռնելիոս՝
2 հարիւրապետ, Իտալացի կոչուած գնդիցը. բարե-
պաշտ և աստուածավախ իր բոլոր տնովը. շատ ո-
ղորմութիւններ էր անում ժողովրդին, և ամեն
3 ժամանակ աղօթք անում դէպի Աստուած։ Նա
օրուայ իբրև իններորդ ժամին տեսիլքի մէջ յայտ-
նի տեսաւ Աստուծոյ հրեշտակը, որ մտնելով նորա
4 մօտ՝ ասում էր նորան, Կոռնելիոս։ Նա էլ նորան
նայելով շատ վախով բռնուեցաւ, և ասեց, Ի՞նչ
է, Տէր. և նա ասեց նորան, Քո աղօթքներն ու քո
ողորմութիւնները վեր ելան Աստուծոյ առաջին՝ յի-
5 շատակի համար։ Եւ հիմա մարդիկ ուղարկիր Յոպ-
պէ, և կանչիր Սիմոնին, որ Պետրոս է կոչվում։
6 Նա հիւր է մի կաշեգործ Սիմոնի մօտ, որի տունը
ծովի մօտ է. նա կ՚ասէ քեզ ինչ պէտք է անել։
7 Եւ երբոր գնաց այն հրեշտակն՝ որ Կոռնելիոսի հետ
խօսում էր, իր ծառաներից երկուսին՝ և իր սպա-
8 սաւորներից մէկ բարեպաշտ զինուոր կանչեց. Եւ
բոլորը պատմեց նորանց, և ուղարկեց նորանց
Յոպպէ։
9 Եւ հետևեալ օրն երբոր նորանք ճանապարհ ըն-
կան, և այն քաղաքին մօտեցան, Պետրոսը վեր ե-
լաւ կտուրը վեց ժամի մօտերը աղօթք անելու.
10 Սովեց՝ և կամենում էր ճաշել, և նորանք յերա-
կուր պատրաստելիս՝ մտքի յափշտակութիւն եղաւ

11 նորա վերայ։ Եւ տեսաւ երկինքը բացուած. և մի
մեծ կտաւի պէս անօթ՝ չորս ծայրերը կապած՝ ի-
12 ջաւ երկրի վերայ, Որի մէջ կային երկրի ամեն
կերպ չորքոտանիները և գազանները և սողունները
13 և երկնքի թռչունները։ Եւ ձայն եղաւ նորան.
14 Վեր կաց, Պետրոս, մորթիր՝ և կեր։ Պետրոսն էլ
ասեց. Քաւ լիցի, Տէր, որովհետև ես երբէք պիղծ
15 կամ անմաքուր բան չ'կերայ։ Եւ դարձեալ երկ-
րորդ անգամ ձայն եղաւ նորան, Այն որ Աստուած
16 սրբեց, դու պիղծ մի համարիր։ Այս երեք անգամ
17 եղաւ, և այն անօթը վերացաւ երկինքը։ Եւ երբ-
որ Պետրոսը զարմացած էր իր մտքումը, թէ ինչ
պիտի լինի այն տեսիլքը՝ որ տեսաւ, ահա Կոռնե-
լիոսից ուղարկուած մարդիկը՝ Սիմոնի տունը որոնե-
18 լով դռան մօտ կանգնեցին. Եւ կանչելով հարցնում
էին, թէ Սիմոնն՝ որ Պետրոս է կոչվում՝ այստե՞ղ
19 է հիւր։ Եւ դեռ Պետրոսը այն տեսիլքի համար
միտք էր անում, Հոգին նորան ասեց. Ահա երեք
20 մարդիկ քեզ որոնում են։ Բայց վեր կաց իջիր. և
գնա նորանց հետ առանց խղճմտանք անելու, ո-
21 րովհետև ես եմ ուղարկել նորանց։ Եւ Պետրոսն
իջաւ այն մարդկանց մօտ որ Կոռնելիոսից նորա
մօտ էին ուղարկուած, և ասեց. Ահա ես եմ, ո-
րին որոնում էք. Ի՞նչ բան կայ որի համար եկաք
22 դուք։ Նորանք էլ ասեցին, Կոռնելիոս հարիւրա-
պետն՝ արդար և աստուածավախ մարդ, որ Հրէա-
ների բոլոր ազգից բարի վկայութիւն ունի, նա
հրաման առաւ մի սուրբ հրեշտակից, որ քեզ
23 կանչէ իր տունը և քեզանից խօսքեր լսէ։ Եւ ներս
կանչեց նորանց՝ և ընդունեց իբրև հիւր։
Եւ հետևեալ օրը Պետրոսը նորանց հետ գնաց.
և այն եղբայրներիցն՝ որ Յոպպէումն էին, մի քա-
24 նիսը նորա հետ եկան։ Եւ հետևեալ օրը մտան

Կեսարիա. և Կոռնելիոս իր ազգականներին և ըն-
տանի բարեկամներին կանչել էր, և սպասում էր
25 նորանց։ Եւ եղաւ երբոր Պետրոսը ներս էր մըտ-
նում, Կոռնելիոսը դիմաւորեց նորան, և ոտներն
26 ընկած երկրպագեց։ Պետրոսն էլ կանգնեցրեց նո-
րան և ասեց. Վեր կաց, ես ինքս էլ մարդ եմ։
27 Եւ նորա հետ խօսելով ներս մտաւ. և ընտեղ շատ
28 մարդ ժողովուած գտաւ։ Եւ նորանց ասեց. Դուք
գիտէք, ինչպէս ապօրէն բան է Հրէայ մարդի հա-
մար մի այլազգու դպչել կամ մօտենալ. բայց
Աստուած ինձ ցոյց տուաւ, ոչ մէկ մարդի էլ
29 պիղծ կամ անմաքուր չ'ասել։ Սորա համար էլ
առանց ընդդէմ խօսելու եկայ, երբոր կանչուե-
ցայ. հիմա հարցնում եմ, Ի՞նչ բանի համար կան-
30 չեցիք ինձ։ Եւ Կոռնելիոսը ասեց. Չորս օրից առաջ
մինչև այս ժամը՝ ծոմ էի պահում և իններորդ
ժամին իմ տան մէջ աղօթք էի անում, և ահա
մի մարդ կանգնեց իմ առաջին սպիտակ հանդերձ-
31 ներով, և ասեց. Կոռնելիոս, քո աղօթքը լսուե-
ցաւ, և քո ողորմութիւնները յիշուեցան Աստու-
32 ծոյ առաջին։ Հիմա ուղարկիր Յոպպէ, և կանչիր
Սիմոնին՝ որ Պետրոս է կոչվում. սա մի կաշեգործ
Սիմոնի տանը հիւր է՝ ծովի մօտ. *երբ որ նա գայ,
33 քեզ հետ կ'խօսի˝։ Եւ ես իսկոյն քեզ մօտ ուղար-
կեցի. դու էլ լաւ արիր, որ եկար. հիմա մենք
ամենքս Աստուծոյ առաջին կանգնած ենք, որ լը-
սենք այն ամենն՝ որ Տէրից քեզ հրամայուած է։
34 Պետրոսը իր բերանը բանալով ասեց. Ճշմարտու-
թեամբ հասկանում եմ, որ Աստուած աչառու չէ.
35 Այլ ամեն ազգումն, ով որ վախենում է նորա-
նից՝ և արդարութիւն է գործում, ընդունելի է

*Յմանք չ'ունին։

36 Նորան ։ Այն խօսքը որ ուղարկեց Իսրայէլի որդ-
կանցը համար, խաղաղութիւն աւետարանել Յի-
սուս Քրիստոսի ձեռովը. (սա է ամենի Տէրը.)
37 Դուք ինքներդ գիտէք այն բանն, որ եղաւ բոլոր
Հրէաստանումը Գալիլեայից սկսած այն մկրտու-
38 թիւնից յետոյ, որ Յովհաննէսը քարոզեց. Այն
Յիսուսին որ Նազարէթիցն է, թէ ինչպէս Նորան
Աստուած Սուրբ Հոգով և զօրութիւնով օծեց. որ
ման եկաւ բարի անելով և սատանայիցը բոլոր
հարստահարուածներին բժշկելով. որովհետև Աս-
39 տուած Նորա հետ էր ։ Եւ մենք վկայ ենք այն ա-
մեն բաներին, որ Հրէաների երկրումը և Երուսա-
ղէմումն արաւ. որին փայտից կախած սպանեցին ։
40 Նորան Աստուած յարութիւն տուաւ երրորդ օրը.
41 և յայտնի արաւ Նորան ։ Ոչ թէ բոլոր ժողովրդին,
այլ մեզ՝ Աստուածանից առաջագոյն ընտրուած
վկաներիս. որ կերանք և խմեցինք Նորա հետ՝ Նո-
42 րա մեռելներից յարութիւն առնելուց յետոյ ։ Եւ
պատուիրեց մեզ ժողովրդին քարոզել՝ և վկայու-
թիւն դնել, թէ ինքն է Աստուածանից սահման-
ուած դատաւորը մեռելներին և կենդանիներին ։
43 Բոլոր մարգարէները վկայութիւն են տալիս Նորա
մասին, որ Նորա անունովը մեղքերի թողութիւն
կ'առնէ ամեն Նորան հաւատացողը ։
44 Եւ Պետրոսը դեռ այս բանը խօսելիս, Սուրբ Հո-
45 գին իջաւ այն խօսքը լսողների բոլորի վերայ ։ Եւ
զարմացան Պետրոսի հետ եկող հաւատացեալները,
որ թլփատութիւնիցն էին. որ հեթանոսների մէջ
46 էլ Սուրբ Հոգու պարգևը թափվում էր ։ Որովհե-
տև լսում էին՝ որ նորանք լեզուներով խօսում և
47 Աստուծուն փառաւորում էին ։ Այն ժամանակ
Պետրոսը պատասխանեց. Միթէ մէկը կարող է
ջուրը արգիլել, որ սորանք չ'մկրտուին, որ Սուրբ

48 Հոգին ընդունեցին ինչպէս և մենք ։ Եւ նորանց
հրամայեց որ Տիրոջ անունովը մկրտուին. այն ժա-
մանակ աղաչեցին Նորան՝ որ մի քանի օր մնայ ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ առաքեալները և այն եղբայրները՝ որ Հրէաս-
տանի կողմերումն էին, լսեցին որ հեթանոսներն էլ
2 ընդունեցին Աստուծոյ խօսքը ։ Բայց երբոր Պետրո-
սը վեր եկաւ Երուսաղէմ, այն հաւատացեալները,
որ թլփատութիւնիցն էին՝ վիճում էին Նորա դէմ,
3 Եւ ասում էին, թէ Դու անթլփատ մարդկանց մօտ
4 մտար, և նորանց հետ կերար ։ Եւ Պետրոսը սկսեց
5 կարգով պատմել նորանց՝ և ասեց. Ես Յոպպէ
քաղաքումն աղօթք էի անում՝ և մտքի յափշտա-
կութեան մէջ տեսիլք տեսայ, որ մեծ կտաւի պէս
մի անօթ՝ չորս ծայրից կախուած՝ երկնքիցը վայր էր
6 գալիս, և եկաւ մինչև ինձ մօտ ։ Երբոր աչքս նո-
րա մէջ գցած նայում էի, և տեսայ երկրի չորքո-
տանիները, և գազանները, և սողունները, և եր-
7 կնքի թռչունները. Եւ ձայն լսեցի, որ ասում էր
8 ինձ. Վեր կաց, Պետրոս, մորթիր և կեր ։ Եւ ասե-
ցի. Քաւ լիցի, Տէր. որովհետև երբէք պիղծ կամ
9 անմաքուր բան իմ բերանը չէ մտած ։ Ձայնը եր-
կնքիցն ինձ երկրորդ անգամ պատասխանեց. Այն
10 որ Աստուած սրբեց, դու պիղծ մի համարիր ։ Եւ
այս երեք անգամ եղաւ, և բոլորը դարձեալ վե-
11 րացաւ երկինքը ։ Եւ ահա շուտով երեք մարդիկ
եկան կանգնեցին այն տան առաջին, ուր որ ես էի.
12 Կեսարիայից ինձ մօտ ուղարկուած ։ Եւ Հոգին ինձ
ասեց, որ նորանց հետ գնամ՝ առանց խղճմտանք
անելու. այս վեց եղբայրներն էլ ինձ հետ եկան,
13 և մտանք այն մարդի տունը ։ Եւ պատմեց մեզ,

թէ ինչպէս տեսաւ հրեշտակն իր տանը, որ կանգ-
նած էր՝ և ասում էր նորան. Ուղարկիր Յոպպէ,
14 և կանչիր Պետրոս կոչուած Սիմոնին. Նա քեզ
հետ բաներ կ'խօսի, որ նորանով կ'փրկուիս դու՝ և
15 քո բոլոր տունը։ Եւ երբոր սկսեցի խօսել, Սուրբ
Հոգին իջաւ նորանց վերայ ինչպէս և մեզ վերայ
16 սկզբումը։ Եւ ես յիշեցի Տիրոջ այն խօսքը՝ որ ա-
սում էր. Յովհաննէսը ջրով մկրտեց. բայց դուք
17 Սուրբ Հոգով կ'մկրտուիք։ Ուրեմն՝ եթէ Աստուած
միևնոյն պարգևը տուաւ նորանց, ինչպէս և մեզ,
որ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք, ապա ես
18 ո՞վ էի որ կարողանայի Աստուծուն արգելել։ Եւ
երբոր լսեցին այս բաները, լռեցին և փառաւորում
էին Աստուծուն՝ և ասում էին. Ուրեմն հեթա-
նոսներին էլ Աստուած կեանքի համար ապաշխա-
րութիւն տուաւ։
19 Եւ նորանք որ ցրուած էին այն նեղութիւնից,
որ Ստեփաննոսի վերայ եղաւ, մինչև Փիւնիկէ և
Կիպրոս և Անտիոքա հասան. և ոչ ոքի չէին խօ-
սում Աստուծոյ խօսքը, բայց միայն Հրէաներին։
20 Եւ նորանցից ոմանք կային՝ Կիպրացի և Կիւրենա-
ցի մարդիկ, որ Անտիոք մտած խօսում էին *Յոյ-
21 ների հետ՝ աւետարանելով Տէր Յիսուսը։ Եւ Տի-
րոջ ձեռը նորանց հետ էր. և բազմաթիւ մարդիկ
22 հաւատացին՝ և դէպի Տէրը դարձան։ Այս բանի
լուրը հասաւ Երուսաղէմի եկեղեցու ականջին, և
Բառնաբասին ուղարկեցին որ գնայ մինչև Անտիոք։
23 Նա երբոր եկաւ, և Աստուծոյ շնորհքը տեսաւ՝ ու-
րախ եղաւ, և յորդորում էր ամենին՝ որ սրտի յօ-
24 ժարութեամբ Տիրոջ հետ մնան։ Որովհետև նա
բարի և Սուրբ Հոգով և հաւատքով լցուած մարդ

*Ոմանք՝ Հելլենախօսների

էր. և շատ ժողովուրդ աւելացաւ Տիրոջ համար։
25 Եւ Բառնաբասը դուրս եկաւ Տարսոն, որ Սօղոսին
26 որոնէ, և նորան գտաւ բերաւ Անտիոք։ Եւ եղաւ
որ նորանք մի բոլոր տարի ժողովւում էին եկեղե-
ցու մէջ, և շատ ժողովուրդ էին սովորեցնում, և
աշակերտներն առաջ Անտիոքումը Քրիստոնեայ
անուանուեցան։
27 Եւ այն օրերումն Երուսաղէմից մարգարէներ
28 իջան Անտիոք։ Եւ նորանցից մէկն՝ անունն Ագա-
բոս, վերկացաւ՝ Հոգումն իմաց տուաւ, թէ բոլոր
աշխարհքի վերայ մեծ սով է լինելու, որ Կղօդիոս
29 կայսեր ժամանակին եղաւ էլ։ Բայց աշակերտներն
որոշեցին որ իրանցից ամեն մէկն, որքան որ կարող
էր, օգնութիւն ուղարկէ Հրէաստանումը բնակ-
30 ուած եղբայրներին. Որ արին էլ, և ուղարկեցին
երէցների մօտ՝ Բառնաբասի և Սօղոսի ձեռովը։

Գլ. ԺԲ

1 Այն ժամանակը Հերովդէս թագաւորը ձեռք
2 գցեց, որ եկեղեցուցը մի քանիսին չարչարէ։ Եւ
Յակոբոսին՝ Յովհաննէսի եղբօրը, սրով սպանեց։
3 Եւ տեսնելով որ Հրէաներին հաճելի է, նորա վե-
րայ Պետրոսին էլ բռնեց. (և բաղարջակերաց օ-
4 րերն էր։) Նորան երբ որ բռնեց՝ բանտը դրաւ, և
մատնեց չորս կարգ չորսական զինուորների որ պա-
հեն նորան. և կամենում էր զատկից յետոյ նորան
5 բերել ժողովրդի առաջին։ Եւ Պետրոսը բանտումը
պահուած էր. բայց նորա համար անդադար ա-
6 ղօթք էր լինում եկեղեցուցը դէպի Աստուած։ Եւ
երբոր Հերովդէսը կամեցաւ նորան դուրս բերել,
այն գիշերը Պետրոսը քնած էր երկու զինուորների
մէջ երկու շղթայով կապուած. և պահապանները

7 դռան առաջին բանտը պահպանում էին։ Եւ ահա
Տիրոջ հրեշտակը կանգնեց, և տան մէջ լոյս ծա-
գեց. և խթեց Պետրոսի կողին՝ նորան արթնացրեց
և ասեց. Վեր կաց շուտով. և շղթաները վայր
8 ընկան նորա ձեռներիցը։ Եւ հրեշտակն ասեց նո-
րան. Գօտիդ կապիր և հողաթափներդ հագիր ոտ-
ներիդ, և նա այնպէս արաւ. և ասեց նորան. Հան-
9 դերձներդ քեզ վերայ գցիր և իմ ետևից եկ։ Եւ
նա դուրս եկաւ գնում էր նորա ետևից, և չ՚գի-
տէր թէ ճշմարիտ է հրեշտակից եղածը. որովհե-
10 տև կարծում էր թէ երազ է տեսնում։ Եւ երբ-
որ նորանք անցան առաջի պահապաններից և երկ-
րորդից, եկան մինչև երկաթի դուռը որ դէպի
քաղաքն էր տանում. որ ինքն իրանից բացուեցաւ
նորանց համար, և դուրս գալով մի փողոց անցան,
11 և շուտով հրեշտակը նորանից հեռացաւ։ Եւ Պետ-
րոսը ինքն իրան գալով ասեց. Հիմա ճշմարիտ ի-
մացայ, որ Տէրն իր հրեշտակն ուղարկեց, և փըր-
կեց ինձ Հերովդէսի ձեռիցը, և Հրէաների ժողո-
12 վրդի բոլոր սպասած բաներիցը։ Եւ մտածելով
եկաւ Մարկոս կոչուած Յովհաննէսի մօր Մարիա-
մի տունը, ուր շատերը ժողովուած՝ աղօթք էին
13 անում։ Եւ փողոցի դուռը որ թակեց, մի աղա-
խին՝ անունը Հռովդէ՝ մօտ եկաւ, որ ականջ դնէ.
14 Եւ Պետրոսի ձայնը ճանաչեց, ուրախութիւնիցը
դուռը բաց չ՚արաւ. ներս վազեց և պատմեց, թէ
15 Պետրոսը դռանը կանգնած է։ Նորանք էլ ասեցին
նորան՝ Գժուել ես. իսկ նա հաստատում էր թէ
այսպէս է. և նորանք ասում էին թէ Նորա հրեշ-
16 տակն է։ Բայց Պետրոսը կանգնած ատէպ դուռը
թակում էր. երբոր բաց արին, տեսան նորան և
17 զարմացան։ Եւ նա ձեռքով նշան արաւ նորանց
որ լուռ կենան. և պատմեց նորանց, թէ ինչպէս

Տէրը բանտիցն իրան հանեց. և ասեց. Այս բանը
պատմեցէք Յակոբոսին և եղբայրներին. և դուրս
18 եկաւ գնաց ուրիշ տեղ։ Եւ երբոր առաւօտ ե-
ղաւ՝ մեծ խռովութիւն կար այն զինուորների մէջ,
19 թէ Պետրոսը ի՞նչ եղաւ։ Բայց Հերովդէսը երբոր
նորան ուզեց և չ՚գտաւ, պահապաններին քննեց
և հրամայեց սպանել. և Հրէաստանիցն իջաւ Կե-
սարիա՝ և այնտեղ էր լինում։
20 Եւ Հերովդէսը շատ բարկացած էր Տիւրացիների
և Սիդոնացիների վերայ. և նորանք միաբան եկան
նորա մօտ. և Բղաստոսին՝ թագաւորին ներսի տան
վերակացուին՝ համոզելով խաղաղութիւն էին
խնդրում. որովհետև նորանց երկիրը՝ արքունիքիցն
21 էր կերակրվում։ Մի որոշուած օր, Հերովդէսը
թագաւորական զգեստ հագած ատեանումը նըս-
տած էր, և հրապարակաւ ատենաբանում էր դէ-
22 պի նորանց։ Եւ ամբոխն աղաղակում էր, թէ Դա
23 Աստուծոյ ձայն է, և ոչ թէ մարդի։ Եւ իսկոյն
Տիրոջ հրեշտակը զարկեց նորան, որովհետև Ա-
ստուծուն չ՚տուաւ փառքը. և որդներով լցուե-
ցաւ՝ մեռաւ։
24 Եւ Աստուծոյ խօսքն աճում էր և շատանում։
25 Բառնաբասը և Սօղոսը իրանց պաշտօնը կատարելով
Երուսաղէմիցը ետ դարձան. և իրանց հետ էին ա-
ռել Յովհաննէսին էլ, որ Մարկոս էր կոչուած։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Անտիոքումն՝ այն տեղի եկեղեցու մէջ կային
մի քանի մարգարէներ և վարդապետներ. Բառնա-
բասը՝ և Նիգեր ասուած Շմաւոնը, և Ղուկիոս
Կիւրենացին, և Հերովդէս չորրորդապետի սննդա-
2 կից Մանայէնը, և Սօղոսը։ Սորանք երբոր Տիրոջը

պաշտօն էին մատուցանում և ծոմ էին պահում,
Սուրբ Հոգին ասեց. ինձ համար որոշեցէք Բառ-
նաբասին և Սօղոսին այն գործի համար, որ ես դո-
3 րանց կանչել եմ։ Այն ժամանակ ծոմ պահեցին
և աղօթք արին, նորանց վերայ ձեռք դրին՝ ար-
ձակեցին։

4 Եւ նորանք էլ Սուրբ Հոգուցն ուղարկուած՝ ի-
ջան Սելևկիա, և այն տեղից նաւով գնացին Կիպ-
5 րոս։ Եւ Սաղամինա հասնելով Աստուծոյ խօսքը
պատմում էին Հրէաների ժողովարաններումը. Յով-
6 հաննէսին էլ սպասաւոր ունէին։ Ման եկան կղզ-
զին մինչև Պափոս. և մի մոգ գտան՝ սուտ մարգա-
7 րէ Հրէայ, որի անունը Բարյեսու էր։ Որ փոխա-
նորդ բդեշխ Սերգիոս Պօղոսի, իմաստուն մարդի,
հետ էր. սա Բառնաբասին և Սօղոսին իրան մօտ
կանչելով ուզում էր որ Աստուծոյ խօսքը լսէ։
8 Բայց նորան հակառակ կացաւ Եղիմաս մոգը. ո-
րովհետև այսպէս է թարգմանվում նորա անունը.
սա ուզում էր փոխանորդ բդեշխին հաւատքիցը
9 փոխել։ Բայց Սօղոսը, որ Պօղոսն է՝ Սուրբ Հոգով
10 լցուած մտիկ տուաւ նորան, Եւ ասեց. Ով ամեն
խաբեբայութիւնով և ամեն խորամանկութիւնով
լցուած սատանայի որդի, ամեն արդարութեան
թշնամի. դու չե՞ս դադարում Տիրոջ ուղիղ ճա-
11 նապարհները ծռելուց։ Եւ հիմա ահա Տիրոջ ձե-
ռը քեզ վերայ է, և կոյր կ'լինես որ չ'տեսնես ա-
րեգակը՝ մինչև մի ժամանակ. և իսկոյն մութ և
խաւար ընկաւ նորա վերայ, և ման գալով ձեռք
12 բռնող մարդիկ էր որոնում։ Այն ժամանակ փո-
խանորդ բդեշխն երբոր տեսաւ այդ եղածը, հա-
ւատաց, և Տիրոջ վարդապետութեան վերայ զար-
մացաւ։

13 Եւ Պօղոսը և հետը լինողները Պափոսից դուրս

եկան՝ եկան Պամփիւլիայի Պերգէն. բայց Յովհան-
նէսը նորանցից բաժանուեց ետ դառաւ Երուսա-
14 ղէմ։ Եւ նորանք Պերգէից գնացին՝ եկան Պիսի-
դիայի Անտիոքը. և շաբաթ օրը ժողովարանը մտան
15 նստեցին։ Եւ օրէնքն ու մարգարէները կարդալուց
յետոյ, ժողովրդապետները նորանց մօտ ուղարկե-
ցին և ասեցին. Մարդիկ եղբարք, եթէ դուք այդ
ժողովրդին համար յորդորական խօսքեր ունիք՝ խօ-
16 սեցէք։ Պօղոսն էլ վերկացաւ՝ ձեռքը շարժեց և
ասեց. Ով Իսրայէլացի մարդիկ, և դուք՝ որ Աստ-
17 ուածանից վախենում էք, լսեցէք։ Այս Իսրայէլ
ժողովրդի Աստուածը ընտրեց մեր հայրերին. և
ժողովուրդը բարձրացրեց պանդխտութիւնումն Ե-
գիպտոսի երկրի մէջ. և բարձր բազուկով նորանց
18 այն տեղից դուրս հանեց։ Եւ քառասուն տարու
չափ ժամանակ նորանց կերակրեց անապատումը։
19 Եւ Քանանի երկրումը եօթն ազգեր խորտակեց և
20 նորանց երկիրը նորանց ժառանգել տուաւ։ Եւ սո-
րանից իբր չորս հարիւրևյիսուն տարի յետոյ նո-
րանց դատաւորներ տուաւ մինչև Սամուէլ մար-
21 գարէն։ Եւ ապա թագաւոր ուզեցին, և Աստուած
տուաւ նորանց Կիսի որդի Սաւուղը՝ մի մարդ Բե-
22 նիամինի ցեղից, քառասուն տարի։ Եւ նորան փո-
խելով, Դաւիթին նորանց համար թագաւոր կանգ-
նեցրեց, որ նորա համար էլ վկայութիւն տուաւ
և ասեց. Յեսսէի որդի Դաւիթին գտայ իմ սրտի
23 պէս մարդ, որ նա իմ բոլոր կամքը կ'անէ։ Սորա
զաւակից Աստուած իր խոստմունքի պէս Իսրայէ-
24 լացիների համար Յիսուս Փրկիչը վերկացրեց։ Որ
Յովհաննէսը՝ նորա *գալուց առաջ, կանխաւ ա-
պաշխարութեան մկրտութիւնը քարոզեց Իսրայէլի

*կամ՝ մտնելուց

25 բոլոր ժողովրդին։ Եւ երբոր Յովհաննէսը վերջացը-
նում էր իր ընթացքը՝ ասում էր. Ինձ համար ո՞վ
էք կարծում որ լինեմ. ես այն չեմ. բայց ահա
իմ ետևից գալիս է նա, որ ես չեմ արժանի նորա
26 ոտների կօշիկն արձակելու։ Մարդիկ եղբարք, Աբ-
րահամի ցեղի որդիքներ, և ով որ ձեզանում աստ-
ուածավախ են. ձեզ ուղարկուեցաւ այս փրկու-
27 թեան խօսքը։ Որովհետև Երուսաղէմում բնակող-
ները, և նորանց իշխանները՝ չ'ճանաչեցին նորան, և
ոչ էլ մարգարէների ձայները՝ որ ամեն շաբաթ օ-
րեր կարդացվում են. այլ դատապարտելով կա-
28 տարեցին։ Եւ թէպէտ մի մահի պատճառ չ'գտան,
29 Պիղատոսիցն ուզեցին որ նա սպանուի։ Եւ երբոր
այն ամենը որ նորա համար գրուած էր, կատարե-
30 ցին, փայտից վայր բերին՝ դրին գերեզման։ Բայց
Աստուած նորան մեռելներից յարութիւն տուաւ,
31 որ շատ օրերով երևեցաւ նորանց, Որ նորա հետ
Գալիլեայից ելել էին Երուսաղէմ, որոնք նորա
32 համար վկաներ են ժողովրդի առաջին։ Եւ մենք
աւետարանում ենք ձեզ այն խոստմունքը, որ հայ-
33 րերին եղած էր. Որ Աստուած այն կատարեց մե-
զանում՝ որ նորանց որդիքն ենք, Յիսուսին յարու-
ցանելով. ինչպէս երկրորդ սաղմոսումն գրուած է.
34 Դու իմ Որդին ես. ես այսօր ծնեցի քեզ։ Եւ թէ
մեռելներից յարութիւն տուաւ նորան, որ էլ չը
պիտի դառնայ ապականութեան մէջ՝ այսպէս ա-
սեց. Թէ Ձեզ կ'տամ Դաւիթի հաւատարիմ
35 սուրբ խոստումները։ Որովհետև ուրիշ տեղում
էլ ասում է. Քո սուրբին ապականութիւն տես-
36 նել չես տալ։ Բայց Դաւիթն իր դարումը ծառա-
յեց Աստուծոյ կամքին, և ննջեց, և իր հայրերի
37 հետ դրուեցաւ և ապականութիւն տեսաւ։ Բայց
նա, որին Աստուած յարութիւն տուաւ, ապակա-

38 նութիւն չ'տեսաւ։ Արդ թող յայտնի լինի ձեզ,
մարդիկ եղբարք, որ սորանով մեղքերի թողու-
39 թիւն է աւետարանվում ձեզ. Եւ այն ամեն բա-
ներից, որ Մովսէսի օրէնքովը չ'կարողացաք ար-
դարանալ, սորանով ամեն հաւատացողը կ'արդա-
40 րանայ։ Արդ զգոյշ կացէք՝ որ չ'լինի թէ ձեզ վե-
41 րայ գայ մարգարէներից ասուածը Թէ Տեսէք, ա-
նարգողներ, և զարմացէք և փճացէք. որ ես մի
գործ եմ գործում ձեր օրերումը. մի գործ, որ
նորան չէք հաւատալ եթէ մէկը պատմէ ձեզ։
42 Եւ երբոր այնտեղից դուրս եկան, *աղաչում էին
որ միւս շաբաթումն էլ այն բանը խօսեն իրանց
43 համար։ Երբոր ժողովուրդն արձակուեցաւ, Հրէա-
ներից՝ և նորահաւատ բարեպաշտ մարդկանցից շա-
տերը գնում էին Պօղոսի և Բառնաբասի ետևից.
որոնք նորանց հետ խօսելով նորանց համոզում էին
որ շարունակեն Աստուծոյ շնորհքի մէջ կենալ։
44 Եւ հետևեալ շաբաթ օրն, համարեա թէ բոլոր
քաղաքը հաւաքուեցաւ՝ Աստուծոյ խօսքը լսելու։
45 Երբոր Հրէաներն ամբոխը տեսան՝ նախանձով լցը-
ուեցան և Պօղոսից ասուած խօսքերին դէմ խօսե-
46 լով հակառակում և հայհոյում էին։ Պօղոսը և
Բառնաբասն էլ համարձակութեամբ ասում էին.
Առաջ պէտք էր որ Աստուծոյ բանը ձեզ խօսուէր.
բայց որովհետև դուք մերժում էք նորան և ար-
ժան չէք համարում ձեզ յաւիտենական կեան-
քին, ահա դէպի հեթանոսներն ենք դառնում։
47 Որովհետև Տէրն այսպէս պատուիրեց մեզ Թէ Քեզ
հեթանոսների լոյս դրի, որ դու փրկութիւն լինես
48 մինչև երկրի ծայրերը։ Հեթանոսներն այս լսելով
ուրախանում էին. և Տիրոջ խօսքը փառաւորում

*Ոմանք՝ աղաչում էին հեթանոսները

էին. և հաւատացին քանիսը որ կարգուած էին
49 դէպի յաւիտենական կեանքը։ Եւ Տիրոջ խօսքը
50 տարածվում էր այն բոլոր գաւառը։ Բայց Հրէա-
ները գրգռեցին բարեպաշտ և պատուաւոր կա-
նանցը և քաղաքի գլխաւորներին, և հալածանք
վերկացնելով Պօղոսի և Բառնաբասի վերայ՝ նո-
51 րանց դուրս արին իրանց սահմաններիցը։ Եւ նո-
րանք իրանց ոտների փոշին թօթափեցին նորանց
52 վերայ, և եկան Իկոնիոն։ Եւ աշակերտները լցվում
էին ուրախութիւնով՝ և Սուրբ Հոգով։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղաւ Իկոնիոնումն որ նորանք միասին մտնում
էին Հրէաների ժողովարանը, և այնպէս խօսում որ
Հրէաներից և Յոյներից մեծ բազմութիւն հաւա-
2 տացին։ Բայց չ՚հաւատացող Հրէաները հեթանոս-
ների սիրտերը գրգռեցին և չարացրին եղբայրների
3 դէմ. Եւ նորանք շատ ժամանակ այնտեղ մնացին
համարձակ խօսելով Տիրոջ վերայ, որ վկայում էր
իր շնորհաց խօսքին. և նշաններ և հրաշքներ էր
4 լինել տալիս նորանց ձեռովը։ Եւ տարաձայնու-
թիւն եղաւ քաղաքի բազմութեան մէջ. և ոմանք
Հրէաների կողմն էին, և ոմանք առաքեալների կող-
5 մը։ Երբոր հեթանոսները և Հրէաներն իրանց իշ-
խաններովը նորանց վերայ յարձակեցին, որ նորանց
6 նախատեն և քարկոծեն, Նորանք իմացան՝ և փա-
խան Լիկայոնացիների Լիւստրա և Դերբէ քաղաք-
ները և նորանց շրջակայքը, և այնտեղ աւետարա-
նում էին։

7 Եւ Լիւստրայումն մի մարդ՝ ոտներով տկար՝ նըս-
տած էր, որ իր մօր որովայնիցը կաղ էր ծնուած, և
8 երբէք ման եկած չէր։ Սա լսեց Պօղոսի խօսքերը.

նա էլ նորա վերայ նայեց, և երբոր տեսաւ որ
9 հաւատք ունի փրկուելու, Մեծ ձայնով ասեց.
Ոտներիդ վերայ ուղիղ կանգնիր. և նա ցատկելով
10 ման էր գալիս։ Եւ ժողովուրդը Պօղոսի արածը
տեսնելով, իրանց ձայնը բարձրացրին Լիկայոնե-
րէն՝ և ասեցին. Աստուածները մարդկանց նման ե-
11 ղած վայր եկան մեզ մօտ։ Եւ Բառնաբասին Դիոս
էին կոչում, և Պօղոսին Հերմէս. որովհետև նա
12 էր խօսքի առաջնորդը։ Բայց Դիոսի քուրմը՝ որ
քաղաքի առաջին կար, ցուլեր և պսակներ բերաւ
դռների մօտ և այն բազմութեան հետ՝ կամենում
13 էր զոհ անել։ Եւ երբոր Բառնաբաս և Պօղոս ա-
ռաքեալները լսեցին, իրանց հանդերձները պատա-
ռած՝ ամբոխի մէջ վազեցին, մեծ ձայնով կանչում
14 էին, Եւ ասում. Մարդիկ, այդ ինչու էք անում.
մենք էլ ձեզ նման կիրքեր ունեցող մարդիկ ենք.
որ աւետարանում ենք ձեզ՝ այդպիսի ունայն բա-
ներից ետ դառնալ դէպի կենդանի Աստուածը.
որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ծովը՝ և ամեն
15 ինչ որ նորանց մէջ է։ Որ անցած դարերումը թոյլ
տուաւ ամեն հեթանոսներին՝ որ իրանց ճանա-
16 պարհներովը գնան. Թէպէտև ինքն իրան առանց
վկայութեան չ՚թողեց, բարերարութիւն անելով
երկնքից տուաւ ձեզ անձրևներ և պտղաբեր ժա-
մանակներ, կերակուրներով և ուրախութիւնով
17 ձեր սրտերը լցնելով։ Եւ այս ասելով՝ հազիւ թէ
ժողովուրդներին դադարեցրին, որ զոհ չ՚անեն ի-
րանց համար։

18 Եւ Անտիոքից և Իկոնիոնից Հրէաներ եկան՝ ժո-
ղովուրդներին համոզեցին և Պօղոսին քարկոծ ա-
նելով՝ քաղաքից դուրս քաշեցին, և կարծում էին
19 թէ մեռած է։ Եւ երբոր աշակերտները նորան շըր-
ջապատեցին, վեր կացաւ մտաւ քաղաքը. և հե-

միւսալ օրը Բառնաբասի հետ դուրս ելաւ գնաց
20 Դերբէ. Այն քաղաքումն էլ աւետարանեցին, և
շատերին աշակերտ շինեցին. և ապա ետ դարձան
21 Լիւստրա և Իկոնիոն և Անտիոք. Աշակերտների
սրտերը հաստատեցին, և յորդորեցին որ հաստատ
կենան հաւատքի մէջ. և թէ շատ նեղութիւննե-
րով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւ-
22 նը: Նորանց ամեն մէկ եկեղեցիների համար երէց-
ներ ձեռնադրեցին, աղօթք արին ծոմ պահելով,
և նորանց յանձնեցին այն Տիրոջը, որին հաւատա-
23 ցել էին: Եւ Պիսիդիայի մէջ ման գալով եկան
24 Պամփիլիա: Եւ երբոր Պերգէի մէջ Տիրոջ խօսքը
25 խօսեցին, իջան Ատալիա: Եւ այնտեղից նաւով
գնացին Անտիոք, որ այն տեղից Աստուծոյ շնորհ-
քին յանձնուած էին՝ այն գործի համար՝ որ կա-
26 տարեցին: Եւ երբոր եկան՝ ժողովեցին եկեղեցին
պատմեցին ինչ որ Աստուած արաւ իրանց հետ, և
թէ նա հեթանոսների համար հաւատքի դուռը
27 բացաւ: Եւ շատ ժամանակ այնտեղ մնացին աշա-
կերտների հետ:

ԳԼ. ԺԵ

1 Եւ Հրէաստանից ոմանք իջել էին եղբայրներին
սովորեցնում էին որ Եթէ չ'թլփատուիք Մովսէսի
2 սովորութեանը պէս, չէք կարող փրկուիլ: Եւ Պօ-
ղոսը և Բառնաբասը նորանց հետ բաւական հա-
կառակութիւն և վէճ անելուց յետոյ, վճռեցին
որ Պօղոսը և Բառնաբասը և նորանցից մի քանիսն
այն խնդրի համար վեր գնան Երուսաղէմ առաք-
3 եալների և երէցների մօտ: Նորանք էլ եկեղեցու-
ցը ճանապարհ գցուեցան, և Փիւնիկէի և Սամա-
րիայի միջովը անցնելով պատմում էին հեթանոս-

ների դառնալը, և մեծ ուրախութիւն էին անում
4 բոլոր եղբայրներին: Եւ երբոր հասան Երուսաղէմ,
եկեղեցուցը և առաքեալներիցը և երէցներիցն ըն-
դունուեցան, և պատմեցին ինչ բաներ որ Աստ-
5 ուած իրանց հետ արաւ: Փարիսեցիների աղանդից
մի քանի հաւատացեալներ վերկացան և ասում
էին, թէ պէտք է թլփատել դորանց և պատուի-
րել որ Մովսէսի օրէնքը պահեն:
6 Եւ առաքեալները և երէցները ժողովուեցան, որ
7 տեսնեն այս բանի համար: Եւ շատ քննութիւն
լինելուց յետոյ Պետրոսը վերկացաւ և նորանց ա-
սեց. Մարդիկ եղբարք, դուք գիտէք, որ առաջին
օրերից ձեր միջումն Աստուած ընտրեց որ իմ բե-
րանովը հեթանոսներն աւետարանի խօսքը լսեն և
8 հաւատան: Եւ սրտագէտ Աստուածը վկայութիւն
տուաւ նորանց, Սուրբ Հոգին տալով նորանց ինչ-
9 պէս և մեզ: Եւ ոչինչ խտրութիւն չ'արաւ նորանց
և մեր մէջ, հաւատքով սրբելով նորանց սրտերը:
10 Եւ հիմա ինչու էք Աստուծուն փորձում, որ մի
լուծ դնէք աշակերտների վզի վերայ, որ ոչ մեր
11 հայրերը և ոչ մենք կարողացանք տանել: Այլ
հաւատում ենք որ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ-
քովը կ'ապրենք ինչպէս նորանք էլ:
12 Եւ բոլոր բազմութիւնը լռեց, և լսում էին
Բառնաբասին և Պօղոսին որ պատմում էին թէ
Աստուած որչափ նշաններ և հրաշքներ արաւ նո-
13 րանց ձեռովը հեթանոսների մէջ: Եւ երբոր նո-
րանք լռեցին, Յակոբոսը պատասխանեց և ասեց.
14 Մարդիկ եղբարք, ինձ լսեցէք: Շմաւոնը պատմեց,
թէ ինչպէս Աստուած առաջուց այց արաւ, որ
հեթանոսներիցը ժողովուրդ առնէ իր անունի հա-
15 մար: Եւ սորա հետ միաբանվում են մարգարէնե-
16 րի խօսքերը. ինչպէս էլ գրուած է. Սորանից յե-

տոյ կ'դառնամ՝ և Դաւթի վայր ընկած բնակարա-
նը կ'շինեմ, և նորա քանդուածները նոր կ'շինեմ՝
17 և կ'կանգնեցնեմ նորան. Որ մարդկանց մնացածնե-
րը Տիրոջը խնդրեն. և այն բոլոր հեթանոսները՝ ո-
րոնց վերայ իմ անունը կոչուած է, ասում է Տէ-
18 րը. Նա որ այս բոլորն անում է։ Յաւիտենից հետէ
19 յայտնի է Տիրոջը իր բոլոր գործերը։ Նորա համար
ես էլ յարմար եմ համարում, նեղութիւն չ'տալ
նորանց՝ որ հեթանոսներից են դառնում դէպի
20 Աստուած։ Բայց որ թուղթ գրուի նորանց, որ ետ
քաշուին կուռքերի պղծութիւններից, և պոռնը-
21 կութիւնից. և խեղդուածից և արիւնից։ Որովհե-
տև Մովսէսն առաջին դարերից հետէ ամեն քա-
ղաքներում իրան քարոզիչներն ունի և ժողովա-
րանների մէջ ամեն շաբաթ օր կարդացվում է։
22 Այն ժամանակ հաճոյ երևեցաւ առաքեալներին
և երէցներին բոլոր եկեղեցու հետ, որ իրանցից
ընտրուած մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Պօղոսի և
Բառնաբասի հետ, Բարսաբայ կոչուած Յուդային,
և Շիղային՝ որ գլխաւոր մարդիկ էին եղբայրների
23 մէջ. Եւ նորանց ձեռով գրեցին այս բանը.
Առաքեալներս և երէցներս և եղբայրներս, Ան-
տիոքի և Սիւրիայի և Կիլիկիայի մէջ լինող եղբայր-
24 ներիդ՝ որ հեթանոսներից էք, ողջոյն։ Որովհետև
լսեցինք, որ ոմանք մեր միջից դուրս գալով խռո-
վեցրին ձեզ խօսքերով և ձեր անձերը խախտեցին,
ասելով որ թլփատուիք և օրէնքը պահէք. որոնց
25 մենք չ'հրամայեցինք. Մեզ միաբան ժողովուած-
ներիս հաճոյ երևեցաւ, որ ընտրուած մարդիկ ու-
ղարկենք ձեզ մօտ մեր սիրելիների՝ Բառնաբասի և
26 Պօղոսի հետ. Մարդիկ, որ իրանց անձերը մատնած
են մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունի համար։
27 Արդ Յուդային և Շիղային ուղարկեցինք. որ իրանք

28 էլ խօսքով միևնոյն բանը պատմեն։ Որովհետև
Սուրբ Հոգուն և մեզ հաճոյ երևեցաւ, աւելի բեռ
չ'դնել ձեզ վերայ այս հարկաւոր բաներից ջոկ։
29 Որ հեռու կենաք կուռքի զոհուածից և արիւնից
և խեղդուածից և պոռնկութիւնից. որ սորանցից
ձեր անձերը պահելով լաւ կ'անէք. ողջ կացէք։
30 Եւ սորանք արձակուեցան՝ եկան Անտիոք, և ժո-
31 ղովուրդը հաւաքեցին՝ և թուղթը տուին։ Եւ կար-
դալով ուրախացան այն մխիթարութեան վերայ։
32 Եւ Յուդան և Շիղան, որովհետև նորանք էլ մար-
գարէներ էին, շատ խօսքերով մխիթարեցին և
33 հաստատեցին եղբայրներին։ Եւ մի ժամանակ կե-
նալուց յետոյ, եղբայրներիցը խաղաղութիւնով
34 արձակուեցան դէպի առաքեալները. Եւ Շիղային
35 հաճոյ երևեցաւ՝ այնտեղ մնալ։ Բայց Պօղոսը և
Բառնաբասը Անտիոքի մէջ մնում էին, և Տիրոջ
խօսքը շատ ուրիշ բաների հետ սովորեցնում էին
և աւետարանում։
36 Բայց մի քանի օրերից յետոյ Պօղոսն ասեց Բառ-
նաբասին. Դառնանք և այցելութիւն անենք մեր
եղբայրներին ամեն քաղաքներում, որոնց մէջ Տի-
րոջ խօսքը քարոզեցինք, տեսնենք թէ ինչպէս են։
37 Եւ Բառնաբասը կամենում էր Մարկոս կոչուած
38 Յովհաննէսին էլ վեր առնել։ Բայց Պօղոսն արժան
էր համարում, որ Պամփիւլիայի մէջ իրանցից ջոկ-
ուածին, և նորանց հետ գործի մէջ չ'եկածին ի-
39 րանց հետ չ'առնեն։ Եւ այսպէս գժտութիւն ե-
ղաւ, մինչև որ ջոկուեցան իրարից. Բառնաբասը
40 Մարկոսին առաւ և նաւով գնաց Կիպրոս։ Եւ
Պօղոսը Շիղային ընտրեց ճանապարհ ելաւ, եղբայր-
41 ներիցն Աստուծոյ շնորհքին յանձնուած։ Եւ ման
էր գալիս Սիւրիայի և Կիլիկիայի կողմերը, և եկե-
ղեցիները հաստատում էր։

ԳԼ. ԺԶ.

1 Եւ եկաւ հասաւ Դերբէ և Լիւստրա. և ահա
մէկ աշակերտ կար այնտեղ՝ անունը Տիմոթէոս. որ
մի հաւատացեալ Հրէայ կնկայ՝ և Յոյն հօր որդի
2 էր։ Որ բարի վկայութիւն ունէր Լիւստրացի և
3 Իկոնիացի եղբայրներիցը։ Պօղոսը կամեցաւ, որ սա
գնայ իր հետ. և առաւ թլփատեց նորան՝ այն տե-
ղերումը լինող Հրէաների պատճառովը, որովհետև
4 ամենքը գիտէին որ նորա հայրը Յոյն էր։ Եւ երբ
որ անցնում էին այն քաղաքներովը, աւանդում
էին նորանց պահել այն հրամանները, որ Երուսա-
ղէմումը լինող առաքեալներիցը և երէցներիցը
5 պատուիրուած էին։ Եւ եկեղեցիները հաւատքով
հաստատվում էին, որ օրէցօր թւով աւելա-
նում էին։

6 Եւ Փռիւգիան և Գաղատացիների երկիրը ման
եկան, Սուրբ Հոգուցն արգելուելով որ Ասիայի
7 մէջ Աստուծոյ խօսքը չ'խօսեն։ Երբ որ եկան Միւ-
սիայի կողմերը, ջանք էին անում որ գնան դէպի
8 Բիւթանիա, և Հոգին թոյլ չ'տուաւ նորանց։ Եւ
9 Միւսիայովն անցնելով իջան Տրովադա։ Եւ գիշե-
րումը տեսիլք երևեցաւ Պօղոսին. մէկ Մակեդո-
նացի մարդ կանգնած էր, աղաչում էր նորան՝ և
10 ասում. Անցիր Մակեդոնիա՝ և օգնիր մեզ։ Եւ
երբոր տեսաւ տեսիլքը, շուտով ուզեցինք դուրս
գալ Մակեդոնիա. հասկանալով որ Տէրն է հրա-
ւիրել մեզ, որ աւետարանենք նորանց։
11 Եւ Տրովադայից դուրս եկած՝ ուղիղ գնացինք
12 Սամոթրակէ. և հետևեալ օրը Նէապոլիս. Եւ
այնտեղից Փիլիպպէ, որ Մակեդոնացիների բաժնի
առաջինն է՝ կոլոնիա քաղաք. և մենք քաղաքու-

13 մը մի քանի օր մնացինք։ Եւ շաբաթ օրը քաղա-
քիցը դուրս գնացինք դէպի գետը, ուր որ սովոր
էին աղօթք անելու. և նստած խօսում էինք ժո-
14 ղովուած կանանց հետ։ Եւ մի կին՝ անունը Լի-
դիա՝ ծիրանավաճառ, Թիւատիր քաղաքիցը, աստ-
ուածավախ, լսեց. որի սիրտը Տէրը բացաւ, որ Պօ-
15 ղոսի խօսածներին մտիկ անէ։ Եւ երբոր նա և իր
տունը մկրտուեցաւ, աղաչեց ասելով. Եթէ ինձ
Տիրոջը հաւատացած համարէք, մտէք իմ տու-
նը՝ մնացէք. և բռնադատեց տարաւ մեզ։
16 Եղաւ որ մենք աղօթքի գնալիս, մի աղախին
պատահեց մեզ՝ որ հարցուկ ոգի ունէր. որ կա-
խարդութիւնովն իր տէրերին շատ շահ էր բերում։
17 Սա Պօղոսի և մեր ետևից ընկած՝ աղաղակում էր
և ասում. Այս մարդիկը Բարձրեալ Աստուծոյ
ծառաներն են, որ ձեզ պատմում են փրկութեան
18 ճանապարհը։ Եւ շատ օրեր այս բանն անում էր.
Պօղոսն էլ վշտացած դարձաւ և ասեց այն ոգուն.
Յիսուս Քրիստոսի անունովը պատուիրում եմ քեզ,
դուրս եկ դորանից. և նոյն ժամումը դուրս եկաւ։
19 Եւ երբոր նորա տէրերը տեսան թէ իրանց շահի
յոյսը կտրուեցաւ, Պօղոսին և Շիղային առան՝ քա-
20 շեցին հրապարակն, իշխանների մօտ։ Եւ նորանց
տարան զօրագլուխների մօտ և ասեցին. Այս մար-
դիկը խռովեցնում են մեր քաղաքը՝ իրանք Հրէա-
21 ներ լինելով. Եւ այնպիսի սովորութիւններ են քա-
րոզում, որ մեզ արժան չէ ընդունել, և ոչ էլ
22 անել. որ Հռովմայեցի ենք։ Եւ ամբոխը կիտուե-
ցաւ նորանց վերայ. և զօրագլուխները նորանց հան-
դերձները հանեցին, և հրաման տուին որ ծեծեն։
23 Եւ նորանց շատ խոցեր տալուց յետոյ բանտը գը-
ցեցին, բանտապետին պատուիրելով, որ նորանց
24 զգուշութեամբ պահէ։ Նա էլ այն պատուէրն ա-

ուած, նորանց ներսի բանտը գցեց․ և նորանց ոտ-
ները պնդացրեց կոճղումը։
25 Եւ կէս գիշերին Պօղոսը և Շիղան աղօթք անե-
լով օրհնում էին Աստուծուն․ և բանտարկուած-
26 ներն էլ նորանց ականջ էին դնում։ Եւ յանկար-
ծակի մեծ շարժ եղաւ՝ մինչև որ բանտի հիմունք-
ներն էլ շարժվում էին․ և իսկոյն բոլոր դռները
բացուեցան, և ամենքի կապանքներն արձակուե-
27 ցան։ Երբոր բանտապետն էլ զարթնելով տեսաւ
բանտի դռները բացուած, սուրը քաշեց և կամե-
նում էր ինքն իրան սպանել․ որովհետև կարծում
28 էր՝ թէ կապուածները փախել են։ Եւ Պօղոսը մեծ
ձայնով կանչեց և ասեց․ Անձիդ չար բան չ՚անես,
29 որովհետև ամենքս այստեղ ենք։ Ճրագ ուզեց և
ներս վազեց․ և դողալով Պօղոսի և Շիղայի առա-
30 ջին ընկաւ։ Եւ նորանց դուրս հանեց և ասեց․
31 Տէրեր, ես ինչ պէտք է անեմ որ փրկուիմ։ Եւ
նորանք ասեցին․ Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին,
32 և կ՚փրկուիս դու՝ և քո տունը։ Եւ Տիրոջ խօսքը
խօսեցին նորան՝ և այն ամենին, որ նորա տանն էին։
33 Եւ նա նորանց վեր առաւ գիշերի նոյն ժամումը և
խոցերիցը լուացաւ․ և իսկոյն մկրտուեցաւ ինքը՝ և
34 բոլոր իրանները։ Եւ նորանց տարաւ իր տունը,
նորանց առաջին սեղան դրաւ․ և ուրախ եղաւ բո-
35 լոր ընտանիքովն Աստուծուն հաւատալով։ Եւ երբ
որ լուսացաւ, զօրագլուխները նուիրակներին ու-
ղարկեցին և ասեցին․ Արձակիր այն մարդկանցը։
36 Եւ բանտապետն այս խօսքերը պատմեց Պօղոսին,
թէ Զօրագլուխներն ուղարկեցին՝ որ արձակուիք․
ուրեմն հիմա դուրս եկէք, գնացէք խաղաղու-
37 թեամբ։ Բայց Պօղոսն ասեց նորանց․ Հրապարա-
կաւ ծեծեցին մեզ՝ անմեղներիս որ Հռովմայեցի
մարդիկ ենք, և բանտը գցեցին. և հիմա մեզ թա-

գո՞ւն են հանում․ ոչ․ այլ թող իրանք գան մեզ
38 հանեն։ Եւ նուիրակներն այն խօսքերը պատմեցին
զօրագլուխներին․ և նորանք վախեցան՝ երբոր լսե-
ցին թէ Հռովմայեցի են․ և եկան աղաչեցին նո-
39 րանց։ Եւ երբոր հանեցին, խնդրում էին որ քա-
40 ղաքիցը գնան։ Եւ բանտիցը դուրս եկան մտան
Լիդիայի տունը․ և եղբայրներին տեսնելով, նո-
րանց մխիթարեցին և գնացին։

ԳԼ․ ԺԷ

1 Եւ Ամփիպօլիսի և Ապողոնիայի միջովը անց գա-
լով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր էր Հրէաների ժողո-
2 վարանը։ Եւ Պօղոսը սովորութեանը պէս մտաւ նո-
րանց մօտ, և երեք շաբաթ օրեր նորանց հետ խօ-
3 սեց գրքերիցը․ Բաց էր անում՝ և առաջներին դը-
նում, թէ պէտք էր Քրիստոսը չարչարուէր՝ և մե-
ռելներիցը յարութիւն առնէր․ և թէ Քրիստոսը
4 այս Յիսուսն է որ ես պատմում եմ ձեզ։ Եւ նո-
րանցից ոմանք հաւատացին, և Պօղոսի և Շիղայի
հետ միացան․ և աստուածավախ Յոյներից էլ շատ
բազմութիւն, և գլխաւոր կանանցիցն էլ ոչ սա-
5 կաւ։ Բայց չ՚հաւատացող Հրէաները նախանձելով
և փողոցից մի քանի անպիտան մարդիկ առնելով
աղմուկ արին և քաղաքի մէջ շփոթութիւն շինե-
ցին․ և Յասոնի տան վերայ յարձակելով՝ ուզում
6 էին, որ նորանց տանեն հրապարակը։ Եւ երբոր չը
գտան նորանց՝ Յասոնին և մի քանի եղբայրներին
քաշելով տանում էին քաղաքապետների մօտ, և
սաստիկ աղաղակում՝ թէ այս աշխարհքը շփոթե-
7 ցնողներն այստեղ էլ հասան․ Որոնց Յասոնն ըն-
դունել է․ և սորանք ամենքը կայսեր հրամաննե-
րին հակառակ են գործում, ասելով թէ մի ու-

8 րիշն է թագաւոր՝ Յիսուսը։ Եւ շփոթեցրին ժողո-
վրդին և քաղաքապետներին, որ լսում էին այս
9 բաները։ Եւ Յասոնից ու ուրիշներից երաշխաւո-
10 րութիւն առան, և նորանց արձակեցին։ Բայց եղ-
բայրները Պօղոսին և Շիղային շուտով գիշերանց
ճանապարհ գցեցին դէպի Բերիա․ որ երբոր այն-
11 տեղ հասան, գնացին Հրէաների ժողովարանը։ Բայց
սորանք աւելի ազնիւ էին քան թէ նորանք՝ որ Թե-
սաղոնիկէումն էին․ որ խօսքը բոլոր յօժարութեամբ
ընդունեցին․ ամէն օր Գրքերը քննում էին, թէ
12 այս այսպէ՞ս է։ Եւ նորանցից շատերը հաւատա-
ցին․ և Յոյն պատուաւոր կանանցից և մարդկանցից
13 էլ ոչ սակաւ։ Բայց երբոր Թեսաղոնիկէի Հրէա-
ները գիտացին, թէ Բերիայի մէջ էլ Աստուծոյ
խօսքը պատմուեցաւ Պօղոսից, այնտեղ էլ եկան՝
14 ժողովուրդները գրգռելով։ Այն ժամանակ եղբայր-
ները Պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ մինչև ծովը
գնայ․ և Շիղան և Տիմոթէոսն այնտեղ մնացին։
15 Եւ Պօղոսին տանողները նորան մինչև Աթէնք տա-
րան․ և պատուէր առնելով Շիղայի և Տիմոթէոսի
համար՝ որ շուտով գան նորա մօտ, գնացին։
16 Եւ երբոր Պօղոսն Աթէնքումը նորանց սպասում
էր, նորա հոգին սաստիկ զայրանում էր իրանում,
17 որ տեսնում էր քաղաքը կուռքերով լիքը․ Եւ
խօսում էր ժողովարանումը Հրէաների և բարե-
պաշտ մարդկանց հետ և փողոցումն ամէն օր պա-
18 տահողների հետ։ Եպիկուրեան և Ստոյիկեան փի-
լիսոփաներից ոմանք նորա հետ հակառակում էին․
և ոմանք ասում էին․ Այս սերմնաքաղն ի՞նչ է
ուզում ասել․ բայց ուրիշներն էլ․ Երևում է, որ
օտար աստուածների քարոզիչ է․ որովհետև Յի-
19 սուս և յարութիւն էր աւետարանում։ Եւ առան
նորան տարան Արիսպագոսն՝ ասելով․ Կարո՞ղ ենք

իմանալ, թէ ի՞նչ է քո այդ խօսած նոր վարդա-
20 պետութիւնը․ Որովհետև օտար բաներ ես բերում
մեր ականջներին․ հիմա կամենում ենք իմանալ
21 թէ դորանք ի՞նչ պիտի լինին։ Որովհետև բոլոր
Աթենացիք և այն տեղ կենող օտարները՝ ուրիշ ոչ
մի բանի չէին պարապում, բայց միայն որ նոր բան
ասեն կամ լսեն։
22 Պօղոսն էլ կանգնեց Արիսպագոսի միջին և ասեց․
Ով Աթենացի մարդիկ, ես ձեզ ամէն կերպով
23 կրօնասէր եմ տեսնում․ Որովհետև մօտ գալիս և
ձեր պաշտամունքներին մտիկ տալիս, մի սեղան
էլ գտայ, որի վերայ գրած էր, ԱՆԾԱՆՕԹ ԱՍ-
ՏՈՒԾՈՒՆ․ այն որ դուք առանց ճանաչելու պաշ-
24 տում էք, ես նորան եմ պատմում ձեզ։ Այն
Աստուածը, որ աշխարհքս և ամէն բան՝ որ նորա-
նում կայ՝ արաւ, նա երկնքի և երկրիս Տէրը լի-
նելով ձեռագործ տաճարներում չէ բնակւում։
25 Եւ ոչ էլ մարդկանց ձեռով է պաշտւում իբր թէ
մի բանի կարօտ․ Նա է ամէնի կեանք և շունչ՝ և
26 ամէն բան տուողը։ Եւ Նա մէկ արիւնից մարդկանց
բոլոր ազգերն արաւ, որ երկրի բոլոր երեսի վերայ
բնակուեն․ որոշուած ժամանակներ և նորանց բնա-
կութեան սահմանները հաստատեց, որ Աստուծուն
27 խնդրեն․ Որ լինի թէ խարխափեն Նորան և գտնեն․
28 թէ և ինքը հեռու չէ մեր ամէն մէկիցը։ Որովհե-
տև մենք նորանով ենք ապրում և շարժւում և
կանք․ ինչպէս ձեր բանաստեղծներից ոմանք էլ
29 ասեցին, Թէ Նորա ազգից էլ ենք։ Արդ որովհետև
Աստուծոյ ազգից ենք, պէտք չէ համարենք, թէ
Աստուածութիւնը նման լինի ոսկու կամ արծաթի
կամ քարի՝ մարդի վարպետութեամբ և մտքով
30 քանդակուած։ Բայց Աստուած տգիտութեան ժա-
մանակներն անտես անելով, հիմա մարդկանց պատ-

ուիրում է, ամենին ամեն տեղ ապաշխարել.
31 Մէկ օր հաստատեց որ նորանում աշխարհքս ար-
դարութեամբ պիտի դատէ այն մարդի ձեռովը, որ
սահմանեց նորանով ամենին հաւատք տալ, որին
մեռելներից յարութիւն տուաւ։
32 Երբոր լսեցին մեռելների յարութիւնը, ոմանք
ծաղր էին անում. ոմանք էլ ասում էին, Այդ
33 բանի համար քեզանից դարձեալ կ՚լսենք։ Եւ այս-
34 պէս Պօղոսը նորանց միջիցը դուրս եկաւ։ Բայց մի
քանի մարդիկ նորա կողմն անցնելով հաւատացին.
որոնց հետ էր Դիոնեսիոս Արիսպագացին, և մի կին՝
անունը Դամարիս, և ուրիշներ էլ նորանց հետ։

ԳԼ. ԺԸ

1 Սորանից յետոյ Պօղոսն Աթէնքից բաժանուեց ե-
2 կաւ Կորնթոս։ Եւ մի Հրէայ գտաւ՝ անունը Ակիւ-
ղաս, ազգով Պոնտացի, և նորա Պրիսկիղա կինն
էլ, Իտալիայից նոր եկած, Կղօդիոսի հրամանի հա-
մեմատ՝ որ բոլոր Հրէաները Հռովմից հեռանան. և
3 նորանց մօտ գնաց։ Եւ որովհետև արհեստակից
էր, մնաց նորանց մօտ և բան էր անում. որովհե-
4 տև արհեստով վրանակար էին։ Եւ խօսում էր ժո-
ղովարանումն ամեն շաբաթ օր և Հրէաներին և
5 Յոյներին համոզում էր։ Եւ երբոր Շիղան և Տիմո-
թէոսն իջան Մակեդոնիայից, Պօղոսը հոգովը վառ-
վում էր վկայելով Հրէաներին թէ Յիսուսն է
6 Քրիստոսը։ Եւ երբոր նորանք հակառակում էին
և հայհոյում, հանդերձները թօթափեց և ասեց
նորանց. Ձեր արիւնը ձեր գլուխը, ես անպարտ
7 եմ, այսուհետև հեթանոսներին եմ գնում։ Եւ
այն տեղից գնաց մտաւ մէկի տունը՝ որի անունը
Յուստոս էր, մի աստուածապաշտ մարդ, որ նորա

8 տունը ժողովարանի կից էր։ Կրիսպոս ժողովրդա-
պետը հաւատաց Տիրոջն իր բոլոր տնովը. և Կորն-
թացիներից շատերը երբոր լսեցին՝ հաւատացին և
9 մկրտուեցան։ Եւ Տէրն ասեց գիշերումը տեսիլքով
Պօղոսին, Մի վախենար՝ այլ խօսիր՝ և լուռ մի կե-
10 նար։ Որովհետև ես քեզ հետ եմ, և ոչ ով քեզ
դէմ չի կենալ՝ քեզ վնասելու. որովհետև ես շատ
11 ժողովուրդ ունիմ այս քաղաքումը։ Եւ այնտեղ մէկ
տարի և վեց ամիս նստեց՝ և նորանց սովորեցնում
էր Աստուծոյ խօսքը։
12 Եւ երբոր Գաղիոնը փոխանորդ բդեշխ էր Աքա-
յիայումը, Հրէաները միաբան վեր կացան Պօղոսի
13 վերայ, և նորան տարան ատեանը. Ասելով, Թէ
Սա օրէնքի հակառակ հրապուրում է մարդկանց
14 Աստուած պաշտել։ Եւ երբոր Պօղոսն իր բերանը
ուզում էր բանալ Գաղիոնը Հրէաներին ասեց. Ով
Հրէաներ, եթէ մի անիրաւութիւն կամ մի չար
15 նենգութիւն լինէր, ինձ արժան էր որ լսէի։ Բայց
եթէ խնդիրը խօսքի և անունների և ձեր օրէնքի
համար է, դուք ինքներդ տեսէք. որովհետև այդ-
16 պիսի բաների դատաւոր չեմ ուզում լինել։ Եւ
17 նորանց հանեց դատաստանիցը։ Եւ բոլոր Յոյները
Սոսթենէս ժողովրդապետին բռնեցին և ատեանի
առաջին ծեծում էին. և Գաղիոնը սորանց համար
ոչինչ հոգս չէր անում։
18 Բայց Պօղոսը տակաւին շատ օրեր մնալուց յե-
տոյ, եղբայրներիցը հրաժարուելով, նաւով գնում
էր դէպի Սիւրիա. և Պրիսկիղան և Ակիւղասն նո-
րա հետ, Կենքրայումը գլուխը խուզեց. որ ուխտ
19 ունէր։ Եւ երբոր հասաւ Եփեսոս, նորանց այնտեղ
թողեց, և ինքը ժողովարանը մտնելով Հրէաների
20 հետ խօսում էր։ Եւ երբոր նորանք աղաչում էին
նորան՝ որ շատ ժամանակ այնտեղ մնայ, յանձը

21 չ'առաւ։ Բայց նորանցից հրաժարեց և ասեց. *Ան-
պատճառ պէտք է ես առաջիկայ տօնը Երուսաղէ-
մումն անեմ.՝ Աստուծոյ կամքովը դարձեալ ձեզ
22 մօտ կ'դառնամ. և Եփեսոսից վերկացաւ, Եւ ի-
ջաւ Կեսարիա, վեր ելաւ, և բարև տուաւ եկեղե-
23 ցուն, և վայր եկաւ Անտիոք։ Եւ այնտեղ մի ժա-
մանակ մնալուց յետոյ, դուրս եկաւ՝ որ կարգով
ման գայ Գաղատացիների աշխարհքումը և փռիւ-
գիայումը, բոլոր աշակերտները հաստատելով։
24 Եւ մի Հրէայ՝ անունը Ապողոս, ազգով Աղեք-
սանդրացի, ճարտարախօս մարդ՝ եկաւ հասաւ Ե-
25 փեսոս, որ զօրաւոր էր Գրքերովը։ Սա Տիրոջ ճա-
նապարհին տեղեկացած էր, և հոգով վառուած՝
Տիրոջ համար խօսում էր՝ և ստոյգ սովորեցնում
էր. բայց միայն Յովհաննէսի մկրտութիւնը գիտէր։
26 Սա սկսեց ժողովարանումը համարձակ խօսել. և
երբոր Ակիւղան և Պրիսկիղան նորանից լսեցին,
նորան իրանց մօտ առան, և էլ աւելի ստոյգ Աս-
27 տուծոյ ճանապարհը բացատրեցին նորան։ Եւ երբ-
որ նա կամեցաւ գնալ Աքայիա, եղբայրները քա-
ջալերելով գրեցին աշակերտներին, որ նորան ըն-
դունեն. երբոր նա այնտեղ հասաւ, հաւատաց-
եալներին շատ օգնութիւն էր տալիս շնորհքի ձե-
28 ռովը։ Որովհետև խիստ սաստիկ յանդիմանում էր
Հրէաներին հրապարակաւ Գրքերից ցոյց տալով,
թէ Քրիստոսը Յիսուսն է։

ԳԼ. ԺԹ

1 Եւ եղաւ որ Ապողոսը Կորնթոսումն եղած ժա-
մանակ, Պօղոսը որ վերի կողմերումը ման էր ե-

*Ոմանք չ'ունին։

կել՝ եկաւ Եփեսոս. և մի քանի աշակերտներ գըտ-
2 նելով՝ Ասեց նորանց. Արդեօք Սուրբ Հոգին ընդու-
նեցի՞ք երբոր հաւատացիք. Նորանք ասեցին նորան.
3 Մենք չենք էլ լսել թէ Սուրբ Հոգի կայ։ Եւ ա-
սեց նորանց. Ապա ի՞նչով մկրտուեցաք. Նորանք էլ
4 ասեցին. Յովհաննէսի մկրտութիւնովը։ Եւ Պօղոսն
ասեց. Յովհաննէսը ժողովրդին ապաշխարութեան
մկրտութիւնովն էր մկրտում և ասում թէ նա՝ որ
նորա ետևից պիտի գայ, նորան հաւատան. այսինքն
5 է՝ Քրիստոս Յիսուսին։ Եւ երբոր լսեցին, Տէր Յի-
6 սուսի անունովը մկրտուեցան։ Եւ երբոր Պօղոսը
ձեռք դրաւ նորանց վերայ, Սուրբ Հոգին եկաւ
նորանց վերայ. և նորանք լեզուներ էին խօսում և
7 մարգարէանում։ Եւ ամենքը տասներկու մարդի
8 չափ էին։ Եւ ժողովարանի մէջ մտած երեք ամիս
համարձակ խօսում էր, և Աստուծոյ արքայու-
9 թեան մասին համոզում էր։ Եւ երբոր մի քանիսը
յամառում էին և ընդդիմանում այն ճանապարհը
բամբասելով բազմութեան առաջին, նա բաժան-
ուեցաւ նորանցից՝ և աշակերտներին ջոկեց. և ա-
10 մեն օր խօսում էր մի Տիւրանի դպրանոցումը։ Եւ
սյս եղաւ մի երկու տարի, մինչև որ Ասիայի բոլոր
բնակիչները՝ Հրէաները և Յոյները Տիրոջ խօսքը լսե-
11 ցին։ Եւ Աստուած նշանաւոր զօրութիւններ էր
12 անում Պօղոսի ձեռովը։ Մինչև որ նորա մարմնի
վերայից թաշկինակներ և վարշամակներ տանում
էին դնում հիւանդների վերայ և ցաւերը հեռա-
նում էին նորանցից, և չար ոգիները դուրս էին
13 գալիս։ Եւ թափառական Հրէաներից ոմանք, որ
երդմնեցուցիչ էին, համարձակեցին Տէր Յիսուսի
անունը կանչել չար ոգիներ ունեցողների վերայ
ասելով. Երդում ենք տալիս ձեզ այն Յիսուսովն
14 որ Պօղոսը քարոզում է։ Հրէայ քահանայապետ

Սկեւայի եօթը որդիքն էին, որ այս անում էին։
15 Չար ոգին պատասխանեց և ասեց. Յիսուսին գի-
տեմ, և Պօղոսին ճանաչում եմ, բայց դո՞ւք ով
16 էք։ Եւ այն մարդը՝ որ նորանում չար ոգի կար՝
յարձակելով նորանց վերայ բռնեց, նորանց յաղ-
թահարեց, մինչև որ մերկ և խոցուած այն տանի-
17 ցը փախան։ Եւ այս յայտնի եղաւ բոլոր Հրէանե-
րին և Յոյներին, որ Եփեսոսումը բնակուած էին. և
ահ ընկաւ նորանց ամենի վերայ. և Տէր Յիսուսի
18 անունը մեծանում էր։ Եւ հաւատացեալներից շա-
տերը գալիս էին՝ խոստովանում էին, և իրանց
19 գործերը պատմում էին։ Եւ կախարդութեան հե-
տևողներից շատերը գրքերը բերում էին, և ամե-
նի առաջին այրում էին. և նորանց գինը համրե-
20 ցին՝ և գտան յիսուն հազար արծաթի։ Եւ այս-
պէս Տիրոջ խօսքը աճում էր և զօրանում։
21 Եւ երբոր այս կատարուեցաւ, Պօղոսը միտքը
դրաւ՝ որ Մակեդոնիայի և Աքայիայի միջովն անց-
նելով գնայ Երուսաղէմ՝ ասելով թէ իմ այնտեղ
գնալուց յետոյ, պէտք է ինձ որ Հռովմ էլ տես-
22 նեմ։ Եւ իրան սպասաւորութիւն անողներից եր-
կուսին՝ Տիմոթէոսին և Երաստոսին ուղարկեց Մա-
կեդոնիա, և ինքը մի առ ժամանակ մնաց Ասիայու-
23 մը։ Եւ այն ժամանակ ոչ սակաւ խռովութիւն ե-
24 ղաւ այն ճանապարհի համար։ Որովհետև մի ար-
ծաթագործ՝ անունը Դեմետրիոս, Արտեմիսի ար-
ծաթէ տաճարներ շինելով ոչ սակաւ շահ էր տա-
25 լիս վարպետներին. Որոնց հետ և այս արհեստի
բանուորներին ժողովեց և ասեց. Ո՛վ մարդիկ,
դուք ինքներդ գիտէք, որ այս գործիցն է մեր շա-
26 հը։ Եւ տեսնում էք ու լսում էք, որ այս Պօղո-
սը չէ թէ միայն Եփեսացիներից, բայց համարեա
թէ բոլոր Ասիացիներից շատ ժողովուրդ համոզե-

լով այն կողմը դարձրեց. որ ասում է թէ ձեռ-
27 քով շինուածները աստուածներ չեն։ Եւ այս բա-
նը ոչ թէ միայն մեր արհեստն է վտանգի մէջ դը-
ցում որ անարգուի, բայց մեծ աստուածուհու Ար-
տեմիսի տաճարն էլ ոչինչի տեղ է համարվում. և
նորա մեծութիւնն էլ կ՚քանդուի, որին բոլոր Ա-
28 սիան և աշխարհքը պաշտում է։ Եւ նորանք այս
լսելով՝ բարկութեամբ լցուեցան աղաղակում էին
29 և ասում, Մեծ է Եփեսացիների Արտեմիսը։ Եւ
բոլոր քաղաքը շփոթութիւնով լցուեցաւ. ամենքն
էլ միասին վազեցին թէատրոնը քաշելով Գայիո-
սին և Արիստարքոս Մակեդոնացուն՝ Պօղոսի ճա-
30 նապարհակիցներին։ Բայց Պօղոսը երբոր կամեցաւ
ամբոխի մէջ մտնել, աշակերտները չ՚թողեցին նո-
31 րան։ Ասիայի գլխաւորներից ոմանք էլ, որ նորա
բարեկամներն էին, ուղարկեցին նորա մօտ՝ և աղա-
32 չում էին, որ թէատրոնի մէջ չ՚գնայ։ Եւ ամեն
մէկը մի ուրիշ բան էր աղաղակում. որովհետև
ժողովքը խռովուած էր. և նորանցից շատերը չը
33 գիտէին, թէ ի՛նչու համար են հաւաքուած։ Եւ
այն բազմութեան միջիցն Աղէքսանդրոսին առաջ
բերին. և երբոր Հրէաները նորան առաջ քաշեցին,
Աղէքսանդրոսը ձեռքը շարժեց՝ և կամենում էր
34 ամբոխին պատասխանել։ Բայց երբոր գիտացին՝ թէ
Հրէայ է, ամենքն էլ մէկ ձայնով երկու ժամի չափ
աղաղակում էին թէ Մեծ է Եփեսացիների Արտե-
35 միսը։ Բայց ատենադպիրը ամբոխին հանդարտե-
ցնելուց յետոյ ասեց. Ո՛վ Եփեսացի մարդիկ, ո՞վ
է այն մարդը՝ որ չ՚գիտէ թէ Եփեսացիների քաղա-
քը մեծ Արտեմիս աստուածուհու և Դիոսից ըն-
36 կած կուռքի տաճարի պաշտօնեան է. Եւ որով-
հետև այդ անվիճելի կերպով այդպէս է, պէտք է
ձեզ որ հանդարտ կենաք և յանդգնութեամբ բան

37 չ՚գործէք ։ Որովհետև այդ մարդկանցը բերիք, որ
ոչ կռքի տուն կողոպտողներ և ոչ ձեր աստուա-
38 ծուհուն հայհոյանք տուողներ են ։ Ուրեմն՝ ե-
թէ Դեմետրիոսը և նորա հետ լինող վարպետները
մէկի հետ բան ունին, ատեան կայ և փոխանորդ
39 բդեշխ կայ, թող միմեանցից դանգատ անեն։ Իսկ
եթէ մի ուրիշ բանի համար է ձեր խնդիրը, թող
40 օրինաւոր ժողովքում վճռուի ։ Վասնզի մեզ էլ
մեծ վտանգ կայ այս օրուայ կռուի համար որ ամ-
բաստանուինք . որովհետև մի պատճառ չ՚կայ, որ
այս ժողովքի համար կարող լինէինք պատասխան
տալ . և այս ասելով՝ ժողովուրդին արձակեց ։

ԳԼ. Ի

1 Եւ աղմուկը դադարելուց յետոյ՝ Պօղոսն աշա-
կերտներին կանչեց, և հրաժարական ողջոյն
2 տուաւ՝ և դուրս եկաւ որ գնայ Մակեդոնիա ։ Եւ
այն կողմերը ման գալով և նորանց շատ խօսքերով
3 յորդորելով, եկաւ Եղլադա ։ Եւ երբոր երեք ա-
միս կացաւ, Հրէաները նենգութեան խորհուրդ
արին նորա համար, երբոր կամենում էր դուրս
գալ Սիւրիա . ինքն էլ խորհուրդ արաւ՝ որ Մակե-
4 դոնիայի միջովը ետ դառնայ ։ Եւ մինչև Ասիա նո-
րա հետ գնում էր Սոպատրոս Բերիացին . և Թե-
սաղոնիկեցիներից Արիստարքոսը և Սեկունդոսը՝ և
Գայիոս Դերբեացին և Տիմոթէոսը, և Ասիացիք՝ Տի-
5 քիկոսը և Տրոփիմոսը ։ Սորանք առաջ գնալով
6 սպասում էին մեզ Տրովադայումը ։ Եւ մենք բա-
ղարջակերաց օրերից յետոյ նաւով գնացինք Փի-
լիպպէիցը, և մինչև հինգ օրն եկանք Տրովադա
նորանց մօտ . ուր եօթն օր դադարեցինք ։
7 Եւ միաշաբաթի օրը դեռ որ ժողովուած էինք

հաց կտրելու համար, Պօղոսը նորանց խօսում էր,
որովհետև հետևեալ օրը գնալու էր . և խօսքն եր-
8 կարացրեց մինչև կէս գիշեր ։ Եւ շատ լապտերներ
կային այն վերնատանն, ուր որ մենք ժողովուած
9 էինք ։ Եւ Եւտիքոս անունով մի երիտասարդ պա-
տուհանի վերայ նստած էր . Պօղոսի երկար խօսելու
ժամանակ խոր քնի մէջ էր մտել . Նա խոր քնով
բռնուած տան երրորդ դստիկոնիցը վայր ընկաւ, և
10 վեր առնուեցաւ մեռած ։ Եւ Պօղոսն իջաւ նորա
վերայ ընկաւ . և գիրկն առնելով նորան՝ ասեց .
11 Մի շփոթուիք, որ հոգին իրանումն է ։ Եւ վեր ե-
լաւ հացը կտրեց և կերաւ . և շատ խօսեց մինչև
12 առաւօտը, և յետոյ դուրս եկաւ գնաց ։ Եւ այն
պատանուն բերին կենդանի, և անչափ մխիթար-
13 ուեցան ։ Իսկ մենք նաւը մտանք գնացինք Ասոն, որ
Պօղոսին դարձեալ այն տեղից մեզ հետ առնէինք .
վասնզի այնպէս էր պատուիրել՝ նորա համար որ
14 ինքն ցամաքով էր գնալու ։ Եւ երբոր Ասոնումը
հանդիպեցաւ մեզ, վեր առանք նորան եկանք Մի-
15 տիլինէ ։ Եւ այն տեղից նաւով գնացինք՝ հետևեալ
օրը եկանք Քիոսի դիմացը, և միւս օր հասանք
Սամոս . և Տրոգիլիոնումը մնալով հետևեալ օրն
16 եկանք Միլետոս ։ Որովհետև Պօղոսը որոշել էր՝ որ
Եփեսոսի մօտովը նաւով անցնէ՝ որ չ՚լինի թէ նա
Ասիայի մէջ ժամանակ կորցնէ . որովհետև շտա-
պում էր, որ եթէ կարելի լինի նորան՝ Պենտեկոս-
տէի օրը Երուսաղէմումը լինի ։
17 Եւ Միլետոսից ուղարկեց Եփեսոս՝ եկեղեցու ե-
18 րէցներին կանչեց ։ Եւ երբոր եկան նորա մօտ, ա-
սեց նորանց . Դուք գիտէք որ այն առաջին օրիցն
հետէ որ Ասիա եկայ, ինչպէս եղայ ամեն ժամա-
19 նակ ձեզ հետ, Ամենայն խոնարհութեամբ Տիրո-
ջը ծառայելով և շատ արտասուքով և փորձու-

թիւններով որ Հրէաների նենգութիւններիցը պա-
20 տահեցան ինձ. Որ ինչպէս ես չ'պահեցի ոչ մի օգ-
տակար բան, որ չ'պատմեմ և սովորեցնեմ ձեզ՝
21 թէ հրապարակներում և թէ տան մէջ: Հրէանե-
րին և Յոյներին վկայութիւն տալով՝ ապաշխարել
դէպի Աստուած, և մեր Տէր Յիսուս Քրիստոսին
22 հաւատալ: Եւ հիմա ահա ես հոգով կապուած
գնում եմ Երուսաղէմ. և չ'գիտեմ թէ այնտեղ
23 ինչ պիտի պատահէ ինձ. Միայն թէ Սուրբ Հոգին
քաղաքից քաղաք վկայում է՝ և ասում, թէ կա-
պանքներ և նեղութիւններ սպասում են ինձ:
24 Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ
պատուական չեմ համարում՝ որ ուրախութեամբ
կատարեմ իմ ընթացքը, և այն պաշտօնը որ Տէր
Յիսուսից առայ, որ Աստուծոյ շնորհաց աւետա-
25 րանին վկայեմ: Եւ հիմա ահա ես գիտեմ, որ իմ
երեսն այլ ես չէք տեսնիլ դուք ամենքդ, որ ձեր
մէջը ման եկայ Աստուծոյ արքայութիւնը քարոզե-
26 լով: Սորա համար այս օրուայ օրը վկայութիւն եմ
դնում ձեզ՝ որ ես ամենիդ արիւնիցն անմեղ եմ:
27 Որովհետև ես ետ չ'քաշուեցայ Աստուծոյ բոլոր
28 կամքը ձեզ պատմելուց: Արդ զգոյշ կացէք ձեր
անձերին՝ և բոլոր հօտին, որի մէջ Սուրբ Հոգին
ձեզ վերակացուներ դրաւ, որ արածեցնէք Աստու-
29 ծոյ եկեղեցին, որ իր արիւնովը ստացաւ: Որովհե-
տև ես գիտեմ, որ իմ հեռանալուց յետոյ յա-
փշտակող գայլեր կ'գան ձեր մէջը, որ հօտին չեն
30 խնայիլ: Եւ հէնց ձեզանից մարդիկ վեր կ'կենան,
որ ծուռ բաներ կ'խօսեն, որ աշակերտներին իրանց
31 ետևից քաշեն: Սորա համար արթուն կացէք, յի-
շելով որ երեք տարի գիշեր և ցերեկ չ'դադարեցի
32 ամեն մէկիդ արտասուքով խրատելու: Եւ հիմա՝
ձեզ Աստուծուն եմ յանձնում, եղբարք, և նորա

շնորհքի խօսքին, որ նա կարող է շինել և ամեն
33 սրբուածների հետ ձեզ ժառանգութիւն տալ: Ես
ձեզանից մէկի արծաթին կամ ոսկուն կամ հան-
34 դերձին չ'ցանկացայ: Դուք ինքներդ գիտէք, որ
այս ձեռները վաստակեցին իմ պէտքը, և նորանց
35 էլ՝ որ ինձ հետ էին: Ամեն բան ցոյց տուի ձեզ՝ որ
այսպէս պէտք է աշխատել, և տկարներին հոգ
տանել, և Տէր Յիսուսի խօսքը յիշել, որ ինքն ա-
սեց. Աւելի երանելի է տալը քան թէ առնելը:
36 Եւ երբոր այս ասեց, ծունկ դրաւ ամենի հետ և
37 աղօթք արաւ: Եւ ամենքն էլ շատ լաց էին լի-
նում, և Պօղոսի վզովը ընկած՝ նորան համբուրում
38 էին: Ցաւում էին մանաւանդ այն խօսքի համար՝
որ ասում էր, թէ նորա երեսը այլևս պիտի չ'տես-
նեն. և նորան ճանապարհ դցեցին դէպի նաւը:

ԳԼ. ԻԱ

1 Եւ երբոր եղաւ՝ որ մենք դուրս եկանք և նորան-
ցից բաժանուեցանք, ուղիղ գնալով եկանք Կով,
և հետևեալ օրը՝ Հռոդոն, և այն տեղից՝ Պատա-
2 րա: Եւ մի նաւ գտանք, որ Փիւնիկէ էր գնում,
3 նորա մէջ մտանք գնացինք: Եւ երբոր Կիպրոսն ե-
րևեցաւ, նորան թողինք ձախ կողմը, և նաւն ուղ-
ղեցինք դէպի Սիւրիա և իջանք Տիւրոս. որովհետև
4 նաւը բեռը այնտեղ պիտի թափէր: Եւ աշակերտ-
ներին գտնելով այնտեղ եօթն օր մնացինք. նո-
րանք Սուրբ Հոգու ձեռովը Պօղոսին ասում էին,
5 որ վեր չ'ելլէ Երուսաղէմ: Եւ երբոր մենք այն օ-
րերը կատարեցինք, դուրս եկանք գնացինք. ա-
մենքը՝ կանանցով և երեխաներով մեզ ճանապարհ
դցեցին մինչև քաղաքի դուրսի կողմը. և ծովի
6 եզրին մօտ ծունկ դրինք աղօթք արինք: Եւ իրա-

րից բաժանուելով վեր ելանք նաւը. և նորանք ետ
7 դառան իրանց տեղերը ։ Եւ մենք ծովի ճանապար-
հորդութիւնը վերջացնելով Տիւրոսից դուրս ելանք
հասանք Պտողեմայիս . և եղբայրներին ողջոյն
8 տուինք՝ և նորանց մօտ մէկ օր մնացինք ։ Եւ հե-
տևեալ օրն այն տեղից դուրս ելանք մենք, *Պօ-
ղոսի ընկերները՛, եկանք Կեսարիա . և Փիլիպպոս
աւետարանչի տունը մտնելով, որ այն եօթիցն էր՝
9 նորա մօտ մնացինք ։ Նա չորս կոյս աղջիկներ ու-
10 նէր, որ մարգարէութիւն էին անում ։ Եւ երբոր
մենք այնտեղ շատ օրեր մնում էինք, Հրէաստա-
11 նից մի մարգարէ իջաւ անունն Ագաբոս ։ Եւ նա
մեզ մօտ եկաւ, Պօղոսի գօտին առաւ իր ձեռնե-
րը և ոտները կապեց և ասեց, Սուրբ Հոգին այս-
պէս է ասում. Այն մարդին՝ որի գօտին է այս՝
Հրէաները Երուսաղէմումը այսպէս կ'կապեն, և հե-
12 թանոսների ձեռը կ'մատնեն ։ Եւ երբոր այս լսե-
ցինք, աղաչում էինք մենք, և այն տեղացիք էլ՝
13 որ վեր չ'ելնէ Երուսաղէմ ։ Այն ժամանակ Պօղոսը
պատասխանեց և ասեց . Ի՞նչ էք անում, որ լաց
էք լինում և սիրտս ճմլում. որովհետև ես ոչ մի-
այն կապուելու բայց Երուսաղէմումը մեռնելու էլ
պատրաստ եմ Տէր Յիսուս Քրիստոսի անունի հա-
14 մար ։ Եւ երբոր նա ականջ չ'դրաւ, լուռ կա-
ցինք՝ և ասեցինք . Տիրոջ կամքը լինի ։
15 Եւ այն օրերից յետոյ պատրաստուած վեր ելանք
16 Երուսաղէմ ։ Եւ այն Կեսարացի աշակերտներիցն
էլ մեզ հետ եկան, և տանում էին մեզ մի Մնա-
սոն անունով Կիպրացի մարդի՝ հին աշակերտի մօտ,
17 որ նորա մօտ կենանք ։ Եւ երբոր մենք Երուսաղէմ
մտանք, եղբայրները մեզ ուրախութեամբ ընդու-

*Ոմանք չ'ունեն ։

18 նեցին ։ Բայց հետևեալ օրը Պօղոսը մեզ հետ գնաց
19 Յակոբոսի մօտ, և բոլոր երէցները եկան ։ Եւ ող-
ջոյն տալով նորանց՝ մին մին պատմում էր ինչ որ
Աստուած հեթանոսների մէջ արաւ իր ծառայու-
20 թիւնովը ։ Եւ նորանք լսելով, փառաւորում էին
Տիրոջը, և ասում էին նորան . Եղբայր, տեսնո՞ւմ
ես, քանի բիւրաւոր հաւատացեալ Հրէաներ կան,
21 և ամենքն օրէնքի նախանձաւոր են ։ Բայց քեզ
համար իմացել են, թէ հեթանոսների մէջ լինող
ամեն Հրէաներին սովորեցնում ես Մովսէսից ետ
քաշուիլ, ասելով որ իրանց երեխաներին չ'թլփա-
22 տեն, և սովորութիւնների պէս չ'վարուին ։ Հիմա
ի՞նչ կ'լինի . անպատճառ պէտք է բազմութիւնը
մէկ տեղ գայ, որովհետև կ'լսեն որ եկել ես ։
23 Հիմա սա արա՝ որ քեզ ասում ենք . Մեզանում
չորս մարդ կան, որ ուխտ են դրած իրանց անձերի
24 վերայ ։ Նորանց առ՝ և նորանց հետ սրբուիր . և
նորանց վերայ ծախք արա՝ որ իրանց գլխները ածի-
լեն. և ամենքը գիտենան, թէ ինչ որ քեզ համար
իմացել էին՝ ոչ ինչ է . այլ թէ դու էլ միաբան
25 ես օրէնքը պահելով ։ Բայց այն հաւատացեալ հե-
թանոսների համար մենք ուղարկեցինք՝ որոշելով,
որ նորանք այնպիսի բան չ'պահեն, բայց միայն
զգուշանան կուռքի զոհից և արիւնից և խեղ-
26 դուածից, և պոռնկութիւնից ։ Այն ժամանակ
Պօղոսը այն մարդկանցն առաւ, հետևեալ օրը նո-
րանց հետ սրբուեցաւ, և տաճարը մտաւ իմաց
տալով սրբութեան օրերի լրանալը . մինչև որ նո-
րանց ամեն մէկի համար պատարագը մատուցուե-
ցաւ ։
27 Եւ երբոր այն եօթն օրը լրանալու մօտ էին,
Ասիացի Հրէաները նորան տեսան տաճարումը, և
բոլոր ամբոխին նորա վերայ թափեցին, և նորան

28 ձեռք ձգելով՝ աղաղակում էին. Ով Իսրայելացի
մարդիկ, օգնեցէք. սա այն մարդն է՝ որ ժողովրդի
և օրէնքի և այս տեղի հակառակ՝ ամենին ամեն
տեղ սովորեցնում է. մինչև որ Յոյներ էլ մտցրեց
29 տաճարի մէջ և այս սուրբ տեղը պղծեց։ Որովհե-
տև Տրոփիմոս Եփեսացուն առաջուց տեսել էին
նորա հետ քաղաքումը. և կարծում էին, թէ Պօ-
30 ղոսը նորան մտցրեց տաճարի մէջ։ Եւ բոլոր քա-
ղաքը դղրդաց, և ժողովուրդը կխտուեցաւ. և Պօ-
ղոսին բռնած տաճարիցը դուրս քաշեցին, և շու-
31 տով դռները փակուեցան։ Եւ երբոր ուզում էին
նորան սպանել, լուր հասաւ գնդի հազարապետին,
32 թէ բոլոր Երուսաղէմը տակնիվեր է եղել։ Նա էլ
իսկոյն զինուորներ և հարիւրապետներ առաւ նո-
րանց վերայ վազեց. և նորանք երբոր հազարապե-
տին և զինուորներին տեսան, Պօղոսին ծեծելուց
33 դադարեցին։ Այն ժամանակ հազարապետը մօտե-
ցաւ բռնեց նորան և հրամայեց, որ երկու շղթա-
յով կապեն. և հարցնում էր, թէ ո՞վ է, և ի՞նչ
34 է արել։ Եւ ամեն մէկը ամբոխի մէջ մի ուրիշ
բան էին աղաղակում. երբոր ամբոխի շփոթու-
թիւնից չ'կարողացաւ ստոյգն իմանալ, հրամայեց
35 նորան տանել *բերդը։ Եւ երբոր հասաւ աստի-
ճաններին, պէտք եղաւ որ ամբոխի բռնութեան
պատճառով զինուորները նորան վեր առնեն բե-
36 րեն։ Որովհետև ժողովուրդի բազմութիւնը ետևի-
37 ցը գնում էր աղաղակելով, Վեր առ դորան։ Եւ
դեռ քանի որ Պօղոսը բերդը մտնելու վերայ էր,
հազարապետին ասեց. Կարելի՞ է ինձ արդեօք, որ
քեզ հետ խօսեմ. Նա էլ ասեց՝ Յունարէն գի-
38 տե՞ս. Արդեօք դու այն Եգիպտացին չե՞ս, որ այս

*Կամ՝ զօրանոցը։ Գրաբ. բանակը։

օրերից առաջ շփոթութիւն արաւ՝ և չորս հազար
39 *սիկարեան մարդիկ հանեց անապատը։ Եւ Պօղոսն
ասեց. Ես Հրեայ մարդ եմ՝ Կիլիկիայի Տարսոնիցը,
ոչ թէ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչում
եմ քեզ՝ հրաման տուր ինձ, որ այդ ժողովրդի
հետ խօսեմ։
40 Եւ երբոր նա հրամայեց, Պօղոսն աստիճանների
վերայ կանգնեց և դէպի ժողովուրդը ձեռքը շար-
ժեց. և երբոր շատ լուռ կացին, սկսեց Եբրայե-
ցիների լեզուով խօսել՝ և ասեց.

ԳԼ. ԻԲ

1 Մարդիկ եղբայրներ և հայրեր, հիմա իմ ձեզ
2 պատասխան տալուս լսեցէք։ Եւ երբոր լսեցին թէ
Եբրայեցիների լեզուով էր նորանց հետ խօսում,
3 էլ աւելի լուռ կացին։ Եւ նա ասեց. Ես Հրեայ
մարդ եմ Կիլիկիայի Տարսոնումը ծնուած՝ այս քա-
ղաքումը մեծացած, Գամաղիէլի ոտքի մօտ, հայ-
րենական օրէնքի ճշմարտութեան պէս վարժուած.
Աստուծոյ մասին նախանձաւոր էի՝ ինչպէս այսօր
4 դուք ամենքդ էք։ Որ այս ճանապարհը հալածեցի
մինչև ի մահ. որ մարդկանց և կանանց կապում
5 էի և մատնում բանտերի մէջ։ Ինչպէս քահանա-
յապետն էլ ինձ վկայում է՝ և ծերերի բոլոր ժո-
ղովն էլ. որոնցից թղթեր էլ առած գնում էի
Դամասկոս եղբայրների մօտ, որ այնտեղ լինողնե-
րին էլ կապած բերեմ Երուսաղէմ, որ պատժուին։
6 Եւ եղաւ որ երբ ես գնալիս Դամասկոսին մօտե-
նում էի, կէս օրուայ դէմ յանկարծակի երկնքի-
7 ցը մի սաստիկ լոյս փայլեց իմ չորս կողմիցը։ Եւ

*Այսինքն՝ աւազակ

ես վայր ընկայ գետինը, և մի ձայն լսեցի՝ որ ա-
սում էր ինձ. Սաւուղ՝ Սաւուղ, ինձ ի՞նչու ես
8 հալածում: Եւ ես պատասխանեցի, Տէր՝ դու ո՞վ
ես. և նա ինձ ասեց. Ես Յիսուս Նազովրեցին եմ՝
9 որին դու հալածում ես: Բայց ինձ հետ լինողնե-
րը լոյսը տեսնում էին և վախով լցվում էին, բայց
10 ինձ հետ խօսողի ձայնը չէին լսում: Եւ ես ասեցի,
ի՞նչ անեմ՝ Տէր. և Տէրն ասեց ինձ, Վեր կաց
գնա Դամասկոս, և այնտեղ կ'ասուի քեզ ամեն
բանի համար, որ քեզ համար որոշուած է անել:
11 Եւ երբոր այն լոյսի փառքիցը չէի տեսնում, ինձ
հետ լինողները ձեռքիցս բռնեցին՝ և ես մտայ Դա-
12 մասկոս: Եւ մի Անանիա մարդ՝ օրէնքի համեմատ
աստուածավախ, որ Դամասկոսումը բնակող բոլոր
13 Հրէաներիցը բարի վկայութիւն ունէր, Նա եկաւ
ինձ մօտ կանգնեց և ասեց. Սաւուղ եղբայր, վեր
14 նայիր: Եւ ես նոյն ժամումն վեր նայեցի դէպի նա
և նա ինձ ասեց. Մեր հայրերի Աստուածն առա-
ջուց քեզ ընտրեց, որ նորա կամքը ճանաչես, և
այն Արդարին տեսնես, և նորա բերանիցը ձայն
15 լսես. Որովհետև նորա համար վկայ կ'լինես բոլոր
մարդկանց առաջին այն բաների համար, որ տե-
16 սար և լսեցիր: Եւ հիմա ի՞նչու ես ուշանում, վեր
կաց մկրտուիր և քո մեղքերը լուա Տիրոջ անունը
17 կանչելով: Եւ եղաւ երբոր ես ետ դառայ Երու-
սաղէմ, և տաճարումն աղօթք էի անում, մտքի
18 յափշտակութիւն ինձ բռնեց. Եւ ես նորան տե-
սայ որ ինձ ասում էր. Շտապիր շուտ դուրս եկ
Երուսաղէմից. որովհետև չեն ընդունիլ քո վկա-
19 յութիւնը, որ ինձ համար տալիս ես: Եւ ես ա-
սեցի. Տէր՝ նորանք գիտեն՝ որ ես բանտն էի դնում
և ժողովարաններումը ծեծում էի քեզ հաւատա-
20 ցողներին. Եւ երբոր քո Ստեփաննոս վկայի արիւ-

նը թափվում էր, ես ինքս նորա մօտ կանգնած էի,
և նորա սպանմանը կամակից էի, և նորա սպանող-
21 ների հանդերձները պահում էի: Եւ նա ասեց
ինձ. Գնա, որովհետև ես քեզ հեռու հեթանոս-
ների մէջ կ'ուղարկեմ:
22 Եւ մինչև այս խօսքն ականջ էին դնում նորան.
և իրանց ձայները բարձրացրին՝ և ասեցին. Այդ-
պիսի մարդին երկրիցս վեր առ. որովհետև պէտք
23 չէ դա ապրի: Եւ երբոր նորանք աղաղակում էին
և հանդերձները վեր գցում, և փոշին օդի մէջ
24 ցանում, Հազարապետը հրամայեց, որ նա բերդը
տարուի. ասելով թէ պէտք է ծեծելով հարցնել
նորան, որ իմանամ, թէ ինչ յանցանքի համար
25 էին նորա վերայ այնպէս աղաղակում: Եւ երբոր
նորան կաշէ փոկերով պինդ կապեցին, Պօղոսն ա-
սեց մօտը կանգնած հարիւրապետին թէ Արժա՞ն է
որ դուք Հռովմայեցի և չդատապարտուած մար-
26 դին ծեծէք: Եւ երբոր լսեց հարիւրապետը, մօ-
տեցաւ հազարապետին պատմեց և ասեց. Զգու-
շացիր թէ ինչ ես կամենում անել, որովհետև
27 այս մարդը Հռովմայեցի է: Եւ հազարապետը մօտ
եկաւ և նորան ասեց. Ասիր ինձ թէ դու Հռով-
28 մայեցի՞ ես. և նա ասեց. Այո. Եւ հազարապետը
պատասխանեց թէ Ես շատ փողով ստացայ այս
քաղաքացիութիւնը, և Պօղոսը ասեց. Ես հէնց
29 ազատ ծնուած եմ: Եւ նորանք՝ որ նորան ծե-
ծելով հարցաքննելու էին, շուտով հեռացան նո-
րանից. և հազարապետն էլ վախեցաւ երբոր իմա-
ցաւ թէ Հռովմայեցի է. որովհետև կապել էր
նորան:
30 Եւ հետևեալ օրը կամենալով ճշմարիտն իմա-
նալ, թէ ի՞նչ է Հրէաների ամբաստանութիւնը,
նորան արձակեց կապերիցը և հրամայեց որ քահա-

նյապետները և բոլոր ատեանը կանչեն. և Պօղո-
սին էլ բերաւ նորանց մէջ կանգնեցրեց:

ԳԼ. ԻԳ

1 Եւ Պօղոսն ատեանին մտիկ տուաւ՝ և ասեց.
Մարդիկ եղբարք, ես բոլորովին բարի խղճմտան-
քով վարուել եմ Աստուծոյ առաջին մինչև այսօր:
2 Եւ Անանիա քահանայապետը մօտը կանգնողներին
3 հրամայեց, որ նորա բերանին զարկեն: Այն ժա-
մանակ Պօղոսն ասեց նորան. Աստուած պիտի քեզ
զարկէ՝ ծեփած պատ. և դու նստել ես ինձ օ-
րէնքի համեմատ դատելու, և օրէնքի հակառակ
4 հրամայում ես՝ որ ես զարկուի՞մ: Եւ նորա մօտ
կանգնածներն ասեցին. Աստուծոյ քահանայապե-
5 տի՞ն ես հայհոյանք տալիս: Եւ Պօղոսը ասեց. Եղ-
բարք, ես չ'գիտէի՝ որ քահանայապետ է. որովհե-
տև գրուած է՝ Թէ քո ժողովրդի իշխանին չ'հայ-
6 հոյես: Երբոր Պօղոսն իմացաւ որ մէկ մասը Սա-
դուկեցիներից է՝ և միւս մասը փարիսեցիներից,
ատեանի մէջ աղաղակեց. Մարդիկ եղբարք, ես
փարիսեցի եմ՝ և փարիսեցու որդի. մեռելների
յոյսին և յարութեանը համար եմ ես դատվում:
7 Եւ երբոր նա այս ասեց, փարիսեցիների և Սադու-
կեցիների մէջ երկպառակութիւն ընկաւ. և բազ-
8 մութիւնը բաժանուեցաւ: Որովհետև Սադուկե-
ցիք ասում են թէ ոչ յարութիւն կայ, ոչ հրեշ-
տակ, և ոչ հոգի. բայց փարիսեցիք երկուսն էլ
9 դաւանում են: Եւ մեծ աղաղակ եղաւ. և փա-
րիսեցիների կողմից դպիրները վերկացան, հակա-
ռակում էին և ասում. Ոչինչ չարութիւն չենք
գտնում այս մարդումը. բայց եթէ հոգի խօսեց
դորանում կամ հրեշտակ, մենք Աստուծոյ հետ

10 չ'մարտնչենք: Եւ երբոր խռովութիւնը շատացաւ,
հազարապետը վախեցաւ՝ մի գուցէ Պօղոսը նորան-
ցից պատառուի. զինուորներին հրամայեց, որ իջ-
նեն նորան յափշտակեն նորանց միջիցը, և բերեն
11 բերդը: Եւ հետևեալ գիշերը Տէրը կանգնեց նո-
րա մօտ և ասեց. Քաջացիր, Պօղոս, որովհետև
ինչպէս ինձ համար Երուսաղէմումը վկայեցիր,
այնպէս էլ պէտք է Հռոմումը վկայես:
12 Եւ երբոր առաւօտ եղաւ Հրէաներից ոմանք մի-
աբանեցան և իրանց անձերը նզովեցին ասելով, որ
չ'ուտեն՝ և չ'խմեն, մինչև որ Պօղոսին չ'սպանեն:
13 Եւ քառասունից աւելի էին այս երդումն իրար
14 հետ անողները: Նորանք քահանայապետների և
ծերերի մօտ եկան և ասեցին. Նզովքով նզովեցինք
մեր անձերը՝ որ ոչինչ չ'ճաշակենք մինչև որ Պօղո-
15 սին սպանենք: Բայց դուք հիմա ատեանի հետ ի-
մաց արէք հազարապետին, որ էգուց նորան վայր
բերէ ձեզ մօտ, իբր թէ կամենում էիք աւելի
և ճշմարտութեամբ բան իմանալ նորա համար.
մենք էլ նորա մօտ գալուց առաջ պատրաստ ենք
16 նորան սպանելու: Եւ Պօղոսի քրոջ որդին երբոր
նորանց այս դաւաճանութիւնը լսեց, եկաւ մտաւ
17 բերդը և Պօղոսին պատմեց: Եւ Պօղոսը հարիւրա-
պետներից մէկին կանչեց իրան մօտ և ասեց. Այս
պատանին տար հազարապետի մօտ, որ բան ունի
18 նորան պատմելու: Եւ նա առաւ նորան հազարա-
պետի մօտ տարաւ և ասեց. Կապուած Պօղոսն ինձ
կանչեց և աղաչեց, այս պատանին քեզ մօտ բե-
19 րել, որ բան ունի քեզ խօսելու: Հազարապետը
նորա ձեռքիցը բռնեց, գնաց առանձին տեղ, հար-
20 ցնում էր, թէ ի՞նչ բան ունիս ինձ ասելու: Եւ
նա ասեց թէ Հրէաները միաբանեցան քեզ աղա-
չելու, որ էգուց Պօղոսին վայր բերես ատեանը,

խըր թէ կամենում էին աւելի ճշմարիտ քննու-
21 թիւն անել նորա համար ։ Բայց դու մի հաւատար
նորանց . որովհետև նորանցից քառասունից էլ ա-
ւելի մարդիկ դարան են մտել նորա համար , որ
իրանց անձերն էլ նզովեցին , որ չ'ուտեն և չ'խմեն
մինչև որ նորան չ'սպանեն . և հիմա պատրաստ են
22 և քո հրամանին են սպասում ։ Ապա հազարապետն
այն պատանուն արձակեց և պատուէր տուաւ , թէ
ոչ ոքի չ'ասես , որ այս բանն իմաց արիր ինձ ։
23 Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց և ա-
սեց . Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք , որ
գնան մինչև Կեսարիա . և եօթանասուն ձիաւոր և
երկու հարիւր էլ տիգաւոր՝ գիշերուայ ժամը երե-
24 քից . Եւ գրաստներ էլ պատրաստեցէք , որ Պօղոսին
հեծցնեն և ապահով հասցնեն Փելիքս կուսակալի
25 մօտ ։ Եւ մի նամակ գրեց , որի օրինակն այս էր ։
26 Կղօդիոս Լիւսիաս . պատուական կուսակալ Փե-
27 լիքսին ողջոյն ։ Այս մարդին որ Հրէաներից բըռ-
նուած էր և նորանցից սպանուելու մօտ էր , զին-
ուորներով վերայ հասայ պրծացրի , իմանալով որ
28 Հռովմայեցի է ։ Եւ ուզելով որ նորա յանցանքն
իմանամ՝ որի համար ամբաստանութիւն էին ա-
նում դորանից , վայր բերի դորան նորանց ատեա-
29 նը ։ Եւ գտայ նորան իրանց օրէնքի մի խնդիրների
համար ամբաստանուած , և մեռնելու կամ կապ-
30 ուելու արժանի ոչինչ յանցանք չ'ունէր ։ Եւ երբոր
ականջս հասաւ , որ Հրէաների կողմից այն մարդի
համար նենգութիւն կայ , նորան իսկոյն քեզ մօտ
ուղարկեցի . և չարախօսներին էլ հրաման տուի ,
որ դորանից քո առաջին խօսեն . Ողջ կաց ։
31 Եւ զինուորները իրանց հրամայուածի պէս՝ Պօ-
ղոսին առան և գիշերով տարան Անտիպատրիս ։
32 Եւ հետևեալ օրը ձիաւորներին թողեցին , որ նորա

33 հետ գնան , և իրանք ետ դարձան բերդը ։ Եւ նո-
րանք մտան Կեսարիա . և թուղթը կուսակալին
տուին , և Պօղոսին էլ նորա առաջին ներկայացրին ։
34 Եւ երբոր կարդաց՝ կուսակալը հարցրեց թէ ո՞ր
գաւառից է . և երբոր տեղեկացաւ թէ Կիլիկիա-
35 յիցն է , Ասեց . Կ'լսեմ քեզ՝ երբոր քո ամբաստա-
նողներն էլ կ'գան . և հրամայեց՝ որ Հերովդէսի
պալատումը պահեն նորան ։

ԳԼ. ԻԴ.

1 Եւ հինգ օրից յետոյ Անանիա քահանայապետը
ծերերի և մի ճարտարախօս Տերտիւղոս անուն մար-
դի հետ իջաւ , և իմաց արին կուսակալին Պօղոսի
2 համար ։ Եւ երբոր նորան կանչեց , Տերտիւղոսը
3 սկսեց ամբաստանել և ասել . Որովհետև քեզանով
շատ խաղաղութիւն ենք գտել՝ և այս ազգի հա-
մար շատ բաների կարգադրութիւն է եղել քո
խնամք տանելովը , ամեն կերպով և ամեն տեղ
շատ գոհութեամբ շնորհակալ ենք քեզանից , ով
4 պատուական Փելիքս ։ Բայց որպէսզի աւելի նեղու-
թիւն չ'տամ քեզ , աղաչում եմ՝ որ համառօտա-
5 բար լսես մեզ քո հեզութեամբը ։ Որովհետև մենք
գտանք այս մարդին որ ապականիչ և խռովարար է
այն ամեն Հրէաներին , որ բոլոր աշխարհքումը կան .
6 և Նազովրեցիների *աղանդի առաջնորդ է . Որ
տաճարն էլ ուզեց պղծել . որին բռնեցինք էլ . և
մեր օրէնքի պէս ուզեցինք դատաստան էլ անել ։
7 Բայց Լիւսիաս հազարապետն եկաւ՝ և մեծ բըռ-
8 նութեամբ մեր ձեռքերիցը հանեց , հրամայելով
որ նորա դատախազներն էլ գան քեզ մօտ . որ

*կամ՝ հերձուածի

դու վերաքննելով կարող ես տեղեկանալ այն ա-
մեն բանի համար, որ մենք գանգատում ենք դո-
9 րանից ։ Հրեաներն էլ միաբան եղած ասեցին, թէ
Այդպէս է ։
10 Պօղոսն էլ պատասխանեց՝ երբոր կուսակալը նո-
րան ակնարկեց որ խօսէ. Գիտենալով որ դու շատ
տարուց հետէ այս ազգի դատաւորն ես, աւելի
յօժարութեամբ իմ մասին պատասխան եմ տալիս ։
11 Որովհետև դու կարող ես գիտենալ, որ տասնե-
րկու օրից աւելի չէ՝ որ ես եկայ երկրպագութիւն
12 անել Երուսաղէմումը ։ Եւ ոչ տաճարումն են գը-
տել ինձ մի մարդի հետ խօսելիս, կամ շատ մարդ
13 մէկտեղ հաւաքելիս, և ոչ ժողովարանումը, Եւ
ոչ էլ քաղաքումը. և ոչ էլ կարող են քո առա-
ջին ցոյց տալ այն, որոնց համար հիմա ամբաստա-
14 նում են ինձանից ։ Բայց սա եմ խոստովանում
քեզ, թէ այն ճանապարհովն՝ որ ասում են հեր-
ձուած, այնպէս պաշտում եմ հայրենական Աս-
տուծուն, ամեն բաների հաւատալով՝ որ օրէնքու-
15 մը և մարգարէներումը գրուած է. Յուսալով այն
Աստուծուն որին դորանք էլ սպասում են, թէ
արդարների և մեղաւորների յարութիւն պիտի լի-
16 նի ։ Որ հէնց սորա համար ինքս ջանք եմ անում,
որ ամեն ժամ մաքուր խղճմտանք ունենամ Աս-
17 տուծոյ առաջին և մարդկանց առաջին ։ Արդ շատ
տարիներից յետոյ եկայ որ իմ ազգին ողորմութիւն
18 անեմ և ընծաներ բերեմ. Որ այդ բանի մէջ մի
քանի Ասիացի Հրեաներ ինձ գտան տաճարումը
19 սրբուած, ոչ շատերի և ոչ էլ ամբոխի հետ ։ Որ
նորանց պէտք էր գալ քո առաջին և գանգատ ա-
20 նել, եթէ մի բան ունենային ինձանից։ Կամ հէնց
սորանք իրանք թող ասեն, թէ ինձանում ինչ
անիրաւութիւն գտան՝ դեռ քանի որ ատեանումը

21 կանգնած էի ։ Բայց այս մէկ խօսքի համար, որ
նորանց միջումը կանգնած աղաղակեցի, թէ Մե-
ռելների յարութիւն առնելուն համար եմ ես
այսօր դատվում ձեզանից ։
22 Փելիքսն էլ երբոր լսեց այս բաները, նորանց ու-
շացրեց, որովհետև շատ լաւ տեղեկացած էր այն
ճանապարհի համար, և ասեց. Երբ որ Լիւսիաս
հազարապետը իջնէ, կ'տեղեկանամ ձեր գործին ։
23 Եւ հարիւրապետին հրամայեց՝ որ Պօղոսին պահէ՝
բայց արձակութիւն տայ. և նորա մարդկանցից ոչ
մէկին չ'արգիլէ՝ նորան ծառայութիւն անելու
կամ նորա մօտ գնալու ։
24 Եւ մի քանի օրից յետոյ Փելիքսն եկաւ իր Դրու-
սիլա կնկայ հետ, որ Հրէայ էր, Պօղոսին կանչեց՝ և
նորանից Քրիստոսի հաւատքի համար բան լսեց ։
25 Եւ երբոր նա խօսում էր արդարութեան և ժուժ-
կալութեան և գալու դատաստանի համար, Փե-
լիքսը շատ ահով բռնուեցաւ, և պատասխանեց.
Դու հիմա գնա. երբոր ժամանակ ունենամ, կը
26 կանչեմ քեզ ։ Բայց նա յոյս էլ ունէր, որ Պօղո-
սից մի բան կ'տրուի իրան, որ նորան արձակէ և
նորա համար շատ անգամ կանչում էր նորան և
27 նորա հետ խօսում ։ Եւ երբոր երկու տարին լրա-
ցաւ, Փելիքսի տեղ եկաւ Փեստոս Պորկիոսը. և
որովհետև Փելիքսը կամեցաւ Հրեաներին մի շնորհք
անել, Պօղոսին կապած թողեց ։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Փեստոսը երբոր իր իշխանութեան երկիրը հա-
սաւ, երեք օրից յետոյ Կեսարիայից վեր ելաւ Ե-
2 րուսաղէմ ։ Եւ քահանայապետը և Հրեաների գլ-
3 խաւորները Պօղոսի համար իմաց տուին նորան, Եւ

աղաչում էին՝ այս շնորհքը խնդրելով նորանից, որ
Երուսաղէմ կանչէ նորան, որովհետև դարան էին
4 գործել՝ որ ճանապարհին սպանեն նորան: Բայց
Փեստոսը պատասխանեց թէ Պօղոսը Կեսարիայումը
կ'պահուի. և ինքն էլ շուտով այնտեղ է գնալու:
5 Եւ ձեզանից որոնք որ կարող են, ասեց, թող մի-
ասին գան. և եթէ այն մարդումը մի յանցանք
6 կայ՝ թող նորանից գանգատ անեն: Եւ այնտեղ
տասն օրից աւելի մնալով իջաւ Կեսարիա. և հե-
տևեալ օրը ատեան նստեց, և հրամայեց Պօղոսին
7 բերել: Եւ նա երբոր եկաւ՝ նորա չորս կողմիը
կանգնեցին Երուսաղէմից եկած Հրէաները. շատ և
ծանր ամբաստանութիւններ բերելով Պօղոսի դէմ
8 որ չէին կարողանում ապացուցանել: Որովհետև
նա պատասխան էր տալիս, թէ Ոչ Հրէից օրէնքի,
և ոչ տաճարի, և ոչ Կայսեր դէմ մի մեղք եմ
9 գործել: Բայց Փեստոսը կամենալով Հրէաներին
շնորհք անել, պատասխանեց Պօղոսին և ասեց.
Կամենո՞ւմ ես Երուսաղէմ գնալ՝ և այնտեղ այդ
10 բաների համար դատուիլ իմ առաջին: Պօղոսն էլ
ասեց. Ես Կայսեր ատեանումն եմ կանգնած, որ
այնտեղ պէտք է ես դատուիմ. Հրէաներին ոչինչ
վնաս չեմ տուել, ինչպէս դու էլ լաւ գիտես:
11 Բայց թէ որ անիրաւութիւն ունիմ և մեռնելու
արժանի բան եմ գործել՝ մեռնելուց չեմ քաշ-
վում. իսկ եթէ այնպիսի մի բան չ'կայ, որ սորանք
ինձանից ամբաստանում են, ոչ ով ինձ կարող չէ
դորանց շնորհել. ես դէպի Կայսրն եմ բողոքում:
12 Այն ժամանակ Փեստոսը խորհրդակիցների հետ
խօսեց՝ և պատասխանեց, Դէպի Կայսրը բողոքե-
ցիր, Կայսեր մօտ կ'գնաս:
13 Երբոր մի քանի օր անցաւ, Ագրիպպաս թագա-
ւորը և Բերինիկէն եկան Կեսարիա՝ Փեստոսին շնոր-

14 հաւորելու: Եւ երբոր այնտեղ շատ օրեր անցկա-
ցրին, Փեստոսը Պօղոսի համար իմացրեց թագաւո-
րին՝ և ասեց. Այստեղ մի մարդ է մնացել Փելիք-
15 սիցը կապուած. Որի համար՝ երբոր Երուսաղէմ
էի, քահանայապետներն ու Հրէաների գլխաւոր-
ներն իմացրին ինձ, խնդրելով նորա դատապար-
16 տութիւնը: Որոնց պատասխանեցի թէ Հռովմայե-
ցիներին օրէնք չէ՝ որ մի մարդ կորստեան շնորհուի
մինչև որ ամբաստանեալն իր ամբաստանողներին իր
դիմացը չ'ունենայ՝ և այն ամբաստանութեան հա-
մար պատասխան տալու պատեհութիւն չ'ստանայ:
17 Եւ երբոր նորանք ինձ հետ այստեղ եկան բնաւ
չ'ուշացրի, այլ հետևեալ օրը ատեան նստած հրա-
18 մայեցի այն մարդին բերել: Եւ երբոր ամբաստա-
նողներն առաջ եկան, ոչ մի յանցանք յառաջ
19 չէին բերում իմ կասկածածներից. Այլ թէ իրանց
կրօնքի համար մի քանի խնդիրներ ունէին նորա
հետ, և մի մեռած Յիսուսի համար որ նորա հա-
20 մար Պօղոսը ասում էր թէ կենդանի է: Բայց երբ-
որ ես տարակուսեցայ այսպիսի բաները քննելու՝
ասեցի թէ արդեօք կամենո՞ւմ է Երուսաղէմ գը-
նալ և այնտեղ դատուիլ այդ բաների համար:
21 Բայց երբոր Պօղոսը բողոքեց, որ Վեհափառ Կայսեր
քննութեան համար պահուի, հրաման տուի նո-
րան պահել, մինչև որ ուղարկեմ Կայսեր մօտ:
22 Ագրիպպասն էլ Փեստոսին ասեց. Ես էլ կ'կամե-
նայի լսել այդ մարդին. և նա ասեց. Էգուց կ'լսես:
23 Եւ հետևեալ օրն երբոր Ագրիպպասն և Բերի-
նիկէն մեծ հանդէսով եկան, և հազարապետների
և քաղաքի պատուաւոր մարդկանց հետ ատեանը
24 մտան, Փեստոսը հրամայեց և Պօղոսին բերին: Եւ
Փեստոսն ասեց. Ով Ագրիպպաս թագաւոր և բո-
լոր մարդիկ որ մեզ հետ էք, տեսնում էք սորան,

որի համար Հրէաների բոլոր ժողովուրդն իմ առա-
ջին եկան Երուսաղէմումը և այստեղ աղաղակե-
25 լով թէ նա այլ ևս պիտի չ'ապրի ։ Բայց ես տեղե-
կացայ, որ դա ոչինչ մեռնելու արժանի բան չէ
գործել. և երբոր դա ինքը դէպի Վեհափառը բո-
26 ղոքեց, խորհուրդ արի որ ուղարկեմ ։ Որի համար
մի հաստատ բան չ'ունիմ որ գրեմ իմ տիրոջը.
նորա համար դորան բերի ձեր առաջին, և մանա-
ւանդ քո առաջին, ով Ագրիպպաս թագաւոր, որ
27 վերաքննելով մի բան ունենամ գրելու ։ Որովհե-
տև ինձ անպատշաճ է երևում, որ մի կապած
մարդ ուղարկեմ, և նորա դէմ առուած յանցանք-
ները չ'իմացնեմ ։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպասը Պօղոսին ասեց. Քեզ հրաման է
որ քո մասին խօսես. այն ժամանակ Պօղոսը ձեռ-
2 քը մեկնեց և պատասխան էր տալիս. Այն ամենի
համար որի մասին Հրէաները ամբաստանում են
ինձանից, ով Ագրիպպաս թագաւոր, իմ անձը ե-
րանելի եմ համարում, որ այսօր քո առաջին պա-
3 տասխան պիտի տամ ։ Մանաւանդ որ դու տեղ-
եակ ես Հրէից բոլոր սովորութիւններին և խնդիր-
ներին. Նորա համար աղաչում եմ, որ համբերու-
4 թեամբ լսես ինձ ։ Արդ իմ կեանքին, որ տղայու-
թիւնիցս հետէ՝ 'ի սկզբանէ իմ ազգի մէջ՝ Երու-
սաղէմումն եմ եղել, բոլոր Հրէաները տեղեակ են.
5 Որովհետև վաղուց գիտեն, (եթէ կամենան վկա-
յութիւն տալ,) որ ես մեր կրօնքի ճշմարտագոյն
կուսակցութեան համեմատ փարիսեցի եմ ապրել ։
6 Եւ հիմա Աստուածանից մեր հայրերի եղած խոստ-
մունքի յոյսին համար ատեանումը կանգնած դատ-

7 վում եմ. Որին մեր տասներկու ցեղը գիշեր և
ցերեկ անդադար պաշտելով սպասում են հասնել.
և այդ յոյսի համար ամբաստանվում եմ Հրէա-
8 ներիցն, ով Ագրիպպաս արքայ ։ Ի՞նչ, անհաւա-
տալի՞ բան է երևում ձեզ, որ Աստուած մեռել-
9 ներին յարուցանում է ։ Եւ հենց ես ինքս հարկա-
ւոր էի համարում, որ Յիսուս Նազովրեցու անու-
10 նի հակառակ շատ բաներ գործեմ. Որ Երուսաղէ-
մումն արի էլ. և սուրբերից շատերին ես բանտար-
կեցի քահանայապետներիցն իշխանութիւն առած,
և նորանք սպանուելիս հաւանութիւն էի տալիս ։
11 Եւ բոլոր ժողովարաններումը շատ անգամ պատիժ
տալով նորանց բռնադատում էի որ հայհոյեն. և
էլ աւելի նորանց վերայ կատաղած՝ հալածում էի
12 մինչև դրսի քաղաքները ։ Որով և երբոր քահա-
նայապետների իշխանութիւնովը և հրամանովը գը-
13 նում էի Դամասկոս, Կէս օրուայ ժամանակին ճա-
նապարհի վերայ տեսայ, ով արքայ, որ երկնքիցն
արեգակին լոյսիցն աւելի մի լոյս ծագեց իմ չորս
կողմիցը՝ և նորանցով էլ՝ որ ինձ հետ գնում էին ։
14 Եւ երբոր մենք ամենքս գետնի վերայ ընկանք՝ մի
ձայն լսեցի, որ Եբրայեցիների բարբառով ինձ ա-
սում էր. Սաւուղ, Սաւուղ, ի՞նչու ես ինձ հա-
լածում. դժուար է քեզ՝ խթանի դէմ քացի տալ ։
15 Եւ ես ասեցի. Դու ո՞վ ես, Տէր. և նա ասեց. Ես
16 Յիսուսն եմ, որին դու հալածում ես ։ Բայց վեր
կաց՝ և ոտներիդ վերայ կանգնիր, որովհետև նորա
համար երևեցայ քեզ, որ քեզ ձեռս առնեմ պաշ-
տօնեայ և վկայ լինելու այն բաներին՝ որ դու տե-
սար, և այն բաներին որոնցով պիտի երևամ քեզ.
17 Որ ազատեմ քեզ այդ ժողովրդիցը և հեթանոս-
ներիցը. որոնց մէջ ես հիմա քեզ ուղարկում եմ.
18 Նորանց աչքերը բանալու, և խաւարից դէպի լոյ-

որ դարձնելու, և սատանայի իշխանութիւնից
դէպի Աստուած. որ նորանք մեղքերի թողութիւն
և սրբերի հետ ժառանգութիւն առնեն՝ ինձ հա-
19 ւատալով։ Ուստի, ով Ագրիպպաս արքայ, ես
20 անհնազանդ չ'եղայ այն երկնային տեսիլքին։ Այլ
առաջ նորանց՝ որ Դամասկոսումը և Երուսաղէ-
մումն էին և բոլոր Հրէաստանի երկրումը և հե-
թանոսներին պատմեցի, ապաշխարել և դառնալ
դէպի Աստուծուն, ապաշխարութեան արժանի
21 գործեր գործելով։ Սորա համար Հրէաներն ինձ
22 տաճարումը բռնելով՝ ուզում էին սպանել։ Իսկ
որովհետև Աստուածանից ինձ օգնութիւն հասաւ
ես մինչև այսօր կանգնած վկայում եմ փոքրին և
մեծին. նորանից դուրս ոչինչ չ'ասելով՝ որ մարգա-
րէները, և Մովսէսը խօսեցին այն լինելու բաների
23 համար. Թէ Քրիստոսը պիտի չարչարուի, և նա
առաջինը մեռելներից յարութիւն առած՝ լոյս պի-
տի քարոզէ ժողովրդին և հեթանոսներին։
24 Եւ նա այս պատասխանը տալիս, Փեստոսը մեծ
ձայնով ասեց. Գժւում ես, Պօղոս, շատ կարդա-
25 ցողութիւններդ մոլորեցնում են քեզ։ Նա էլ ա-
սեց. Ես չեմ գժւում, ով ազնիւ Փեստոս, այլ
ճշմարտութեան և զգաստութեան խօսքեր եմ խօ-
26 սում։ Որովհետև թագաւորն էլ այս բաները գի-
տէ, որի հետ էլ համարձակ խօսում եմ. որով-
հետև չեմ կարծում որ սորանցից մէկն էլ նորա-
նից ծածկուած լինի. որովհետև այս բանը անկիւ-
27 նի մէջ եղած չէ։ Հաւատո՞ւմ ես մարգարէնե-
րին, ով Ագրիպպաս արքայ. գիտեմ որ դու հա-
28 ւատում ես։ Ագրիպպան էլ Պօղոսին ասեց. Քիչ
է մնում որ ինձ համոզես որ քրիստոնեայ դառ-
29 նամ։ Եւ Պօղոսն ասեց. Աստուածանից կ'խնդրէի՝
թէ քիչ թէ շատ՝ ոչ միայն դու, այլ այն ամենն

էլ՝ որ այսօր լսում են ինձ, այնպէս լինէին ինչպէս
ես եմ, այս կապանքներիցը ջոկ։
30 Եւ երբոր նա այս ասել էր, վերկացաւ թագա-
ւորը և կուսակալը և Բերինիկէն, և նորանց հետ
31 նստողները. Եւ գնալիս, իրար հետ խօսում էին և
ասում թէ Այս մարդը մեռնելու կամ կապանքի
32 արժանի բան չէ գործել։ Բայց Ագրիպպասը Փես-
տոսին ասեց. Կարելի էր այս մարդին արձակել՝ ե-
թէ դէպի Կայսրը բողոքած չ'լինէր։

ԳԼ. ԻԷ

1 Երբոր հրաման եղաւ մեզ, որ նաւով գնանք Ի-
տալիա, Պօղոսին և ուրիշ մի քանի կապուածներ
էլ տուին մի հարիւրապետի, որի անունը Յուլիոս
2 էր՝ Սեբաստոսի գնդիցը։ Եւ մտնելով մի Ադրա-
մինտացի նաւ՝ որ գնալու էր Ասիայի կողմերը, ճա-
նապարհ ընկանք. Արիստարքոս Մակեդոնացի Թե-
3 սաղոնիկեցին էլ մեզ հետ էր։ Եւ միւս օրը իջանք
Սիդոն. և Յուլիոսը մարդասիրութիւն ցոյց տալով
Պօղոսին՝ հրամայեց որ բարեկամների մօտ գնայ և
4 խնամք գտնէ։ Եւ այնտեղից ճանապարհուելով
նաւով գնացինք Կիպրոսի ցած կողմովը՝ քամու
5 ներհակ լինելու պատճառովը։ Այն ժամանակ Կի-
լիկիայի և Պամփիւլիայի ծովի միջով գնալով՝ ի-
6 ջանք Լիկիացիների Միւռան։ Եւ հարիւրապետն
այնտեղ մի Աղեքսանդրացի նաւ գտաւ՝ որ Իտա-
7 լիա էր գնում, և մեզ նորա մէջ մտցրեց։ Եւ
շատ օրեր ծանր նաւելով հազիւ հասանք Կնիդի
կողմերը. և երբոր քամին չ'թողեց մեզ, նաւով
8 գնացինք Կրետէի ցած կողմը Սաղմոնայի մօտ։ Եւ
երբոր նորանով դժուարութիւնով անցանք՝ ե-
կանք մի տեղ, որ կոչւում էր Գեղեցիկ Նա-

նաւահանգիստ, որի մօտ էր Ղասեա քաղաքը։
9 Եւ որովհետեւ շատ ժամանակ էր անցել՝ և նա-
ւով գնալու համար վտանգաւոր էր, ծոմի ժամա-
նակն էլ արդէն անցած լինելով, Պօղոսը խրատ էր
10 տալիս, Նորանց ասելով. Ով մարդիկ, տեսնում
եմ որ այս նաւարկութիւնը նեղութիւնով և շատ
վնասով է լինելու, ոչ թէ միայն բեռնին և նա-
11 ւին, այլ մեր անձերին էլ։ Բայց հարիւրապետը
նաւապետին և նաւավարին աւելի էր ականջ դը-
12 նում քան թէ Պօղոսի խօսքերին։ Որովհետեւ այն
նաւահանգիստն անյարմար էր երեւում ձմեռն անց-
կացնելու համար, շատերը խորհեցին որ այնտեղից
գնան. որ ձմեռը մնալու համար գուցէ կարողանան
Փիւնիկէն հասնիլ՝ Կրետացիների այն նաւահան-
գիստը որ դէպի արեւմտեան հարաւի կողմը և դէպի
13 արեւմտեան հիւսիսն էր նայում։ Եւ երբոր հարա-
ւի քամին մեղմօրէն փչեց, կարծում էին թէ ի-
րանց նպատակին կ'հասնեն. և ճանապարհ ընկած
14 անցնում էին Կրետէի մօտովը։ Եւ շատ ժամանակ
չէր անցել՝ որ նորա վերայ մի մրրկալից հողմ ըն-
15 կաւ, որ Եւրակիկլոն էր կոչվում։ Եւ երբոր նա-
ւը բռնուեցաւ և հողմի դէմ չ'կարողացաւ դիմա-
16 նալ, բաց ընկած գնում և գալիս էինք։ Եւ դի-
մելով մի կղզու՝ որ Կլօդա էր կոչվում, հազիւ
17 կարողացանք մակոյկը բռնել։ Որն առնելով օգ-
նութեան գործածեցին և նաւը տակիցը կապեցին,
և վախենալով՝ որ յորձանուտը չ'ընկնեն, առա-
գաստը իջեցրին, և այնպէս գնում և գալիս էին։
18 Եւ երբոր մենք շատ նեղութիւն էինք քաշում
փոթորկից, հետեւեալ օրը բեռները ծովի մէջ էին
19 գցում։ Եւ երրորդ օրը մեր ձեռքովը նաւի գոր-
20 ծիքը դուրս թափեցինք։ Եւ երբոր շատ օրեր՝ ոչ
արեւ և ոչ աստղեր էին երեւում, և փոթորիկն էլ

քիչ չէր որ մեզ վերայ կար, ապա մեր ազատուե-
21 լու բոլոր յոյսը կտրուեցաւ։ Եւ որովհետեւ շատ
օր սոված էին, այն ժամանակ Պօղոսը նորանց մէջ
կանգնած ասեց. Ով մարդիկ, պէտք էր ձեզ՝ ինձ
լսէիք, և Կրետէիցը դուրս չ'գայիք՝ և այս նեղու-
22 թիւնիցը և վնասիցը պրծնէիք։ Եւ հիմա էլ խրա-
տում եմ ձեզ՝ որ սրտապինդ կենաք. որ ձեզանից
ոչ մէկի անձին էլ վնաս չի լինիլ, բացի այդ նա-
23 ւիցը։ Որովհետեւ այս գիշեր երեւեցաւ ինձ այն Աս-
տուծոյ հրեշտակը՝ որ ես նորանն եմ, և որին էլ
24 պաշտում եմ. Եւ ասեց. Մի վախենար, Պօղոս.
պէտք է քեզ՝ Կայսեր առաջին կանգնես. և ահա
Աստուած շնորհել է քեզ այդ բոլոր քեզ հետ
25 նաւողները։ Սորա համար սրտապինդ կացէք, ով
մարդիկ. որովհետեւ հաւատում եմ Աստուծուն,
26 որ այսպէս կ'լինի ինչպէս ինձ հետ խօսեց։ Բայց
պէտք է մի կղզի ընկնենք։
27 Երբոր տասնեչորսերորդ գիշերն եղաւ՝ քանի որ
դեռ Ադրիականի անդունդներումը տարուբերվում
էինք, կէս գիշերումը նաւավարները կարծում էին՝
28 թէ մի ցամաքի հասած լինեն։ Եւ գնդերը գցելով
քսան գիրկ խոր գտան. և մի քիչ էլ առաջ գնա-
29 լով էլի գցեցին՝ և տասնեհինգ գիրկ գտան։ Եւ
որովհետեւ վախեցան որ մի գուցէ քարոտ տեղերի
մէջ ընկնեն. յետի կողմիցը չորս խարիսխ գցեցին
30 և սպասում էին լուսանալուն։ Բայց երբոր նաւա-
վարներն ուզում էին՝ որ նաւիցը փախչեն և մա-
կոյկը իջեցրին ծովը. այն պատճառանքով իբր թէ
31 առաջի կողմիցն էլ պիտի խարիսխ գցեն, Պօղոսը
հարիւրապետին և զինուորներին ասեց. Եթէ դո-
րանք նաւումը չ'մնան, դուք չէք կարող ապրիլ։
32 Այն ժամանակ զինուորները մակոյկի չուանները
33 կտրեցին՝ և նորան դէն գցեցին։ Եւ երբոր ուզում

էր առաւօտ լինել, Պօղոսն ամենին աղաչում էր՝
որ կերակուր առնեն, ասելով. Այսօր տասնչոր-
սերորդ օրն է՝ որ դուք սպասելով՝ անօթի էք մը-
34 նացել, և մի բան չէք կերել։ Նորա համար աղա-
չում եմ ձեզ, որ կերակուր ուտէք, որովհետև
սա ձեր ազատութեան համար է. վասնզի ձեզանից
35 մէկի գլխիցը մի մազ չի ընկնիլ։ Եւ սա ասելով՝
հաց առաւ ամենքի առաջին Աստուածանից գո-
36 հացաւ, կտրեց և սկսեց ուտել։ Եւ ամենքը քա-
37 ջալերուեցան, և իրանք էլ կերակուր առան։ Եւ
նաւի մէջ ամենքս երկու հարիւր եօթանասունև-
38 վեց հոգի էինք։ Երբոր այն կերակրովը կշտացան,
նաւը թեթևացրին՝ ցորենը ծովը թափելով։
39 Եւ երբոր առաւօտ եղաւ՝ երկիրը չէին ճանա-
չում, բայց մի գոգ էին տեսնում՝ որ ծովեզր էր.
և մտածում էին որ եթէ հնար լինի, նաւն այն-
40 տեղ պրծացնեն։ Եւ խարիսխները կտրելով ծովը
գցեցին. ղեկերի կապերը թուլացրին. և առագաս-
տը վեր առան՝ քամուն տուին դէպի ծովի եզրի
41 կողմը։ Եւ մի տեղ ընկան՝ որ երկու կողմիցը ծով
ունէր. և նաւը նստեցրին. և նաւի առաջի կողմը
խրուած անշարժ մնաց, և յետի կողմն ալիքների
42 սաստկութիւնիցը քանդվում էր։ Եւ զինուորները
խորհուրդ էին արել՝ որ կապուածներին սպանեն,
43 մի դուցէ մէկը լողալ փախչի։ Բայց հարիւրապե-
տը կամենալով Պօղոսին ապրեցնել, նորանց այն
խորհրդիցը արգիլեց. և հրամայեց որ լող տալ
կարողացողներն առաջ ընկնեն և դուրս գնան ցա-
44 մաքը։ Եւ մնացածներն էլ որը տախտակներով և
որը նաւի ուրիշ բաներով. և այնպէս եղաւ որ
ամենքը պրծան դուրս ելան ցամաքը։

ԳԼ. ԻԸ

1 Եւ երբոր ազատուեցանք, այն ժամանակ իմա-
ցանք՝ որ այն կղզու անունը Մելիտէ էր. բայց բար-
բարոսները ոչ սակաւ մարդասիրութիւն ցոյց տուին
2 մեզ. Վասնզի կրակ վառեցին և մեզ ամենիս ըն-
դունեցին մեր վերայ եկած անձրևի և սաստիկ
3 ցրտի համար։ Եւ Պօղոսը՝ երբոր շատ խուիւ էր
հաւաքել և կրակի վերայ էր դնում, տաքութիւ-
նիցը մի իժ դուրս եկաւ և նորա ձեռքիցը բռնեց։
4 Եւ երբոր բարբարոսները տեսան գազանը նորա
ձեռքիցը կախուած, իրար ասում էին, Այս մարդն
անպատճառ մարդասպան է, որ ծովիցը ազատուե-
լուց յետոյ արդար իրաւունքը չ'թողեց որ ապրի։
5 Եւ նա այն գազանը կրակին մէջ թափ տուաւ. և
6 իրան ոչինչ վնաս չ'եղաւ։ Իսկ նորանք սպասում
էին, թէ կամ կ'ուռենայ, կամ յանկարծակի մե-
ռած վայր կ'ընկնի. և երբոր շատ սպասեցին, և
տեսան որ վնաս չ'եղաւ նորան, իրանց խօսքը դար-
7 ձրին, և ասում էին, թէ Սա մի աստուած է։ Եւ
այնտեղի չորս կողմովը կային այն կղզու գլխաւորի
գիւղերը, որի անունը Պոպլիոս էր. որ մեզ երեք
8 օր իրան մօտ առաւ և սիրով ընդունեց։ Եւ եղաւ
որ Պոպլիոսի հայրը ջերմով և թանչքով հիւան-
դացած պառկած էր. Պօղոսը նորա մօտ մտաւ՝ և
աղօթք արաւ, և ձեռքերը նորա վերայ դրաւ, և
9 նորան բժշկեց։ Եւ երբոր այս եղաւ, ուրիշ հի-
ւանդներն էլ որ այն կղզումը կային, գալիս էին
10 և բժշկվում. Որոնք շատ պատուով էլ պատուե-
ցին մեզ. և երբոր գնացինք, ինչ որ պէտք էր
11 տուին։ Եւ երեք ամսից յետոյ վեր ելանք մի Ա-
ղեքսանդրացի նաւ, որ ձմեռը այն կղզումն էր անց-

12 կացրել և Դիոսկուրացիների նշանն ունէր։ Եւ ի-
ջանք Սիրակուսա, և երեք օր այնտեղ մնացինք։
13 Այնտեղից պտոյտ տալով հասանք Հռեգիոն. և
մէկ օրից յետոյ երբոր հարաւի քամին փչեց, երկ-
14 րորդ օրը եկանք Պատիողոս։ Ուր եղբայրներ էլ
գտանք, որոնք աղաչեցին որ եօթն օր այնտեղ մը-
15 նանք. և այսպէս եկանք Հռոմ։ Եւ երբոր այն-
տեղից եղբայրները մեր մասին լսեցին, մեր առաջը
դուրս եկան մինչև Ապփիոսի վաճառանոցը և Երեք
իջևանները. Պօղոսը որ նորանց տեսաւ, Աստուա-
ծանից գոհացաւ և քաջութիւն առաւ։
16 Եւ երբոր մտանք Հռոմ, հարիւրապետը կապ-
ուածները զօրապետին յանձնեց. և Պօղոսին հրա-
ման եղաւ որ իր պահապան զինուորի հետ առան-
17 ձին կենայ։ Եւ երեք օրից յետոյ եղաւ որ Պօղոսը
Հրէաների գլխաւորներին կանչեց. և երբոր եկան,
նորանց ասեց. Մարդիկ եղբարք, ես ժողովրդի
կամ հայրենական սովորութիւնների հակառակ մի
բան չ'գործած, Երուսաղէմից կապուած մատ-
18 նուեցայ Հռովմայեցիների ձեռը։ Որոնք ինձ դա-
տելով կամեցան թող տալ, որովհետև ինձանում
19 մեռնելու ոչինչ յանցանք չ'կար։ Բայց երբոր Հը-
րէաները հակառակում էին, ստիպուեցայ դէպի
Կայսրը բողոքել. ոչ թէ իբր իմ ազգից մի ամ-
20 բաստանելու բան ունէի։ Եւ այս պատճառի հա-
մար աղաչեցի ձեզ հիմա որ տեսնեմ և խօսեմ.
որովհետև Իսրայէլի այն յոյսին համար եմ ես այս
21 շղթայովը կապուած։ Նորանք էլ ասեցին նորան.
Մենք քեզ համար Հրէաստանից ոչ թուղթ ենք
ստացել և ոչ էլ եղբայրներից մէկը եկաւ և քեզ
22 համար մի չար բան պատմեց կամ խօսեց։ Բայց
կ'բաղձայինք քեզանից լսել թէ ինչ ես խորհում.
որովհետև այդ աղանդի համար մեզ յայտնի է,

23 որ ամեն տեղ դորա դէմ են խօսում։ Երբոր նո-
րա հետ մէկ օր որոշել էին, շատ մարդիկ եկան
նորա մօտ այն հիւրանոցը, որոնց Աստուծոյ ար-
քայութիւնը վկայութիւնով պատմում էր, և Յի-
սուսին համար նորանց համոզում էր Մովսէսի օ-
րէնքից և մարգարէներից առաւօտանց մինչև ի-
24 րիկունը։ Եւ ոմանք խօսքերին համոզվում էին, իսկ
25 ոմանք չէին հաւատում։ Եւ իրար հետ չ'միաբան-
ուած արձակուեցան, երբոր Պօղոսը այս մէկ խօսքն
ասեց թէ Սուրբ Հոգին Եսայիա մարգարէի ձեռովը
26 մեր հայրերի հետ լաւ խօսեց, Եւ ասեց. Գնա
ժողովրդի մօտ և ասիր. Դուք լսելով կ'լսէք և
չէք իմանալ. և տեսնելով կ'տեսնէք և չէք տես-
27 նել։ Որովհետև այս ժողովրդի սիրտը թանձրացաւ,
և իրանց ականջներովը ծանր լսեցին, և իրանց աչ-
քերը խփեցին. որ մի դուցէ աչքով տեսնեն և ա-
կանջներովը լսեն, և սրտով իմանան և դարձի գան,
28 և ես բժշկեմ նորանց։ Եւ հիմա յայտնի լինի ձեզ,
որ Աստուծոյ փրկութիւնն ուղարկուեցաւ հեթա-
29 նոսներին, և նորանք կ'լսեն։ *Եւ երբոր նա այս
ասեց, Հրէաները դուրս գնացին նորանից. և ի-
րանց մէջ շատ վիճաբանութիւն ունէին։"
30 Եւ Պօղոսը ամբողջ երկու տարի, իր վարձքով
31 բռնած տունը մնաց։ Եւ ամեն իրան մօտ եկողնե-
32 րին ընդունում էր. Աստուծոյ արքայութիւնը քա-
րոզելով, և Տէր Յիսուս Քրիստոսի համար սովորե-
ցնելով, անխափան ամեն համարձակութեամբ։

*Ոմանք չ'ունեն այս համարը։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի ծառայ՝ կանչուած ա-
ռաքեալ՝ Աստուծոյ աւետարանի համար որոշուած,
2 Այն որ առաջուց խոստացաւ իր մարգարէների ձե-
3 ռովը սուրբ գրքերումը, Իր Որդու համար, որ
4 մարմնի կողմանէ Դաւիթի զաւակից եղաւ. Եւ
Աստուծոյ Որդի սահմանուեցաւ զօրութիւնով՝ սըր-
բութեան Հոգու կողմանէ՝ մեռելներից յարութիւն
առնելուցը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար,
5 Որով ընդունեցինք շնորհք և առաքելութիւն՝ հա-
ւատքի հնազանդութեան համար ամեն ազգերի
6 մէջ նորա անունի համար. Որոնց միջումը դուք
7 էլ Յիսուս Քրիստոսի կանչուածներն էք. Ձեզ ա-
մենիդ՝ որ Հռովմումն էք՝ Աստուծոյ սիրելիներիդ՝
կանչուած սուրբերիդ, շնորհք լինի ձեզ և խաղա-
ղութիւն Աստուածանից՝ մեր Հօրիցը և Տէր Յի-
սուս Քրիստոսիցը։
8 Առաջ գոհանում եմ Աստուածանից Յիսուս
Քրիստոսի ձեռովը ձեր ամենի համար. որ ձեր հա-
9 ւատքը բոլոր աշխարհքի մէջ պատմվում է։ Որով-
հետև Աստուած ինձ վկայ է, որին ես պաշտում
եմ իմ հոգովը նորա Որդու աւետարանումը, թէ
10 ինչպէս անդադար ձեզ յիշում եմ։ Ամեն ժամա-

նակ իմ աղօթքներումն աղաչելով՝ որ լինի թէ մի
անգամ յաջողուի ինձ՝ Աստուծոյ կամքովը ձեզ
11 մօտ գալ։ Որովհետև շատ ցանկանում եմ ձեզ
տեսնել, որ մի հոգևոր շնորհք հաղորդեմ ձեզ
12 ձեր հաստատուելու համար. Այսինքն՝ որ ձեզ
հետ մխիթարուիմ մեր փոխադարձ՝ իմ և ձեր
13 հաւատքի միջոցով։ Եղբարք, չեմ կամենում որ
դուք չ'գիտենաք, թէ շատ անգամ միտքս դրի որ
ձեզ մօտ գամ, (Բէւ մինչև հիմա արգիլուեցայ.)
որ ձեր միջումն էլ պտուղ ունենամ՝ ինչպէս և
14 ուրիշ հեթանոսների մէջ։ Որովհետև ես Յոյներին
և Բարբարոսներին, իմաստուններին և անմիտներին
15 պարտական եմ։ Այնպէս՝ իմովսանն յօժար եմ
ձեզ էլ, որ Հռովմումն էք՝ աւետարանը քարոզել։
16 Որովհետև ես Քրիստոսի աւետարանը ամօթ չեմ
համարում. որովհետև Աստուծոյ զօրութիւն է
փրկելու համար ամեն հաւատացողին, առաջ Հը-
17 րէային՝ և յետոյ Յոյնին։ Որովհետև Աստուծոյ ար-
դարութիւնը նորանով յայտնվում է՝ հաւատքից
հաւատքի մէջ. ինչպէս գրուած է թէ Արդարը
հաւատքից կ'ապրի։
18 Որովհետև Աստուծոյ բարկութիւնն երկնքիցը
յայտնվում է մարդկանց ամեն ամբարշտութեան
և անիրաւութեան վերայ, որ ճշմարտութիւնն
19 անիրաւութիւնով բռնում են։ Որովհետև Աստու-
ծոյ գիտելիքը յայտնի է նորանցում. որ Աստուած
20 յայտնեց նորանց։ Որովհետև նորա աներևոյթ բա-
ները աշխարհքի սկզբիցն ստեղծուածներովն իմաց-
ուելով տեսնվում են, որ է՝ նորա մշտնջենաւոր
զօրութիւնը և Աստուածութիւնը, այնպէս որ ան-
21 պատասխան մնան։ Որովհետև Աստուծուն ճանա-
չելով, նորան Աստուծոյ պէս չ'փառաւորեցին՝ կամ
շնորհակալ չ'եղան. այլ իրանց մտածմունքներումն

ունայնացան և նորանց անմիտ սրտերը խաւարուե-
22 ցան։ Ասելով թէ իմաստուն են՝ յիմարեցան.
23 Եւ անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին եղծանելի
մարդի և թռչունների և չորքոտանիների և սո-
24 ղունների պատկերի նմանութեան հետ. Նորա հա-
մար Աստուած էլ նորանց մատնեց իրանց սրտերի
ցանկութեան մէջ՝ պղծութեան համար. որ խայ-
տառակեն իրանց մարմիններն իրանց անձերումը։
25 Որոնք Աստուծոյ ճշմարտութիւնը ստութեան հետ
փոխեցին. և երկրպագեցին և պաշտեցին ստեղծ-
ուածներին քան թէ Ստեղծողին. որ օրհնեալ է
26 ի յաւիտեանս. ամէն։ Նորա համար Աստուած
մատնեց նորանց անարգ կիրքերի. և նորանց էգերը
բնական գործածութիւնը փոխեցին անբնականի
27 հետ. Այնպէս էլ արուները կնոջ բնական գոր-
ծածութիւնը թողելով, իրանց ցանկութիւններովը
իրար հետ բորբոքուեցան. արուներն արուների հետ
խայտառակութիւն էին գործում, և այն փոխա-
րէնը՝ որ արժան էր իրանց մոլութեանն՝ իրանց
28 անձերումը ընդունում էին։ Եւ ինչպէս որ չ'ընտ-
րեցին՝ Աստուծուն ունենալ իրանց գիտութեան
մէջ, Աստուած մատնեց նորանց անարգ մտքի որ
29 անարժան բաներ գործեն. Որոնք լցուած են ամեն
անիրաւութիւնով, պոռնկութիւնով, անզգամու-
թիւնով, ագահութիւնով, չարութիւնով, լիքը
նախանձով, մարդասպանութիւնով, կռիւով, նեն-
30 գութիւնով, չարաբարութիւնով. Քսուներ, բամ-
բասողներ, աստուածատողներ, թշնամանողներ,
ամբարտաւաններ, գոռոզներ, չար բաներ հնարող-
31 ներ, ծնողների անհնազանդներ. Անմիտներ, ուխ-
տադրուժներ, անգութներ, անհաշտներ, անողորմ-
32 ներ. Որ Աստուծոյ իրաւունքները հասկանալով՝ թէ
այսպիսի բաներ գործողները մահի արժանի են, ոչ

թէ միայն այս բաներն անում են, այլ գործողնե-
րին էլ կամակից են լինում։

ԳԼ. Բ

1 Նորա համար առանց պատասխան տալու ես, ով
մարդ՝ ով որ էլ լինես, որ դատում ես. որովհե-
տև ինչով որ ուրիշին դատում ես, քեզ ես դա-
տապարտում. որ դու նոյնն ես գործում որ ինքդ
2 դատում ես։ Բայց մենք գիտենք, որ Աստուծոյ
դատաստանը ճշմարտութեամբ է նորանց վերայ,
3 որ այսպիսի բաներ գործում են։ Իսկ, ով մարդ,
որ դատում ես այսպիսի բաներ գործողներին, և
որ դու նոյնն ես գործում, մի՞թէ կարծում ես՝
4 թէ դու կ'պրծնիս Աստուծոյ դատաստանիցը։ Կամ
թէ նորա քաղցրութեան առատութիւնը և համ-
բերութիւնը և երկայնմտութիւնը արհամարհո՞ւմ
ես. չ'գիտենալով որ Աստուծոյ քաղցրութիւնը
5 քեզ ապաշխարութեան է տանում։ Բայց դու քո
խստութիւնովը և անզեղջ սրտովը բարկութիւն ես
կիտում քո անձի համար՝ բարկութեան և այն Աս-
տուծոյ արդար դատաստանի յայտնութեան օրու-
6 մը, Որ նա ամեն մէկին իր գործերի պէս հատու-
7 ցումը կ'տայ. Նորանց, որ բարի գործերի մէջ են
յարատեւում, և փառք և պատիւ և անապակա-
նութիւն են որոնում, յաւիտենական կեանք.
8 Բայց նորանց՝ որ հակառակութիւնից են՝ և ճըշ-
մարտութեան անհնազանդ և անիրաւութեան ե-
տևից գնացած, բարկութիւն և սրտմտութիւն.
9 Նեղութիւն և տառապանք այն ամեն մարդի վերայ՝
որ չարութիւն է գործում. առաջ Հրէայի՝ և յետոյ
10 Յոյնի։ Իսկ փառք և պատիւ և խաղաղութիւն
ամեն բարի գործողին. առաջ Հրէային՝ և յետոյ

11 Յոյնին ։ Որովհետեւ Աստուծոյ մօտ աչառութիւն
12 չ'կայ ։ Որովհետեւ նորանք՝ որ առանց օրէնքի մեղք
գործեցին, առանց օրէնքի էլ կ'կորչեն. և նորանք՝
որ օրէնքի տակ մեղք գործեցին օրէնքով կ'դատ-
13 ուին ։ (Որովհետեւ ոչ թէ օրէնքը լսողներն են Ա-
ստուծոյ առաջին արդար, այլ օրէնքը կատարողնե-
14 րը կ'արդարանան ։ Ուրեմն երբոր հեթանոսները՝ որ
օրէնք չ'ունին՝ բնութեամբ օրէնքի գործերն անեն,
սորանք թէեւ օրէնք չ'ունին իրանք են իրանց հա-
15 մար օրէնք ․ Որոնք ցոյց են տալիս թէ օրէնքի գոր-
ծը նորանց սրտերումը գրուած է՝ նորանց խղճմը-
տանքի վկայութիւնովը, և իրանց խորհուրդների
իրար յանդիմանելովը, կամ թէ իրաւունք տալո-
16 վը ․) Այն օրը՝ որ Աստուած մարդկանց ծածուկ
բաները կ'դատէ իմ աւետարանի համեմատ Յի-
սուս Քրիստոսի ձեռովը ։
17 Ահա դու Հրէայ ես անուանվում, և կռթնվում
ես օրէնքի վերայ, և պարծենում ես Աստուծով՝
18 Եւ նորա կամքը գիտես, և զանազանում ես տար-
19 բեր բաները օրէնքիցը խրատուած լինելով, Եւ քո
անձի վերայ վստահութիւն ունիս՝ որ կոյրերի ա-
20 ռաջնորդ ես ․ և խաւարեալների լոյս ․ Անմիտների
խրատիչ, երեխաների վարդապետ ․ որ օրէնքի գի-
տութեան և ճշմարտութեան կերպարանքն ունիս
21 օրէնքումը ․ Արդ դու՝ որ ուրիշին սովորեցնում ես,
քո անձին չե՞ս սովորեցնում ․ դու որ քարոզում
22 ես չ'գողանալ, գողանո՞ւմ ես ։ Որ ասում ես շնու-
թիւն չ'գործել՝ շնութի՞ւն ես գործում ․ դու՝ որ
կռքերիցը զարշում ես՝ սրբապղծութի՞ւն ես ա-
23 նում ։ Դու՝ որ օրէնքովը պարծենում ես, օրէնքին
24 դէմ գործելով Աստուծուն անարգո՞ւմ ես ։ Որով-
հետեւ Աստուծոյ անունը ձեր պատճառովը հայհոյ-
վում է հեթանոսների մէջ, ինչպէս և գրուած է ։

25 Արդ թլփատութիւնը շահաւոր է՝ թէ որ օրէն-
քը պահող ես. ապա եթէ օրէնքի դէմ յանցաւոր
ես, քո թլփատութիւնն անթլփատութիւն եղաւ ։
26 Բայց թէ որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունք-
ները պահէ, չէ՞ որ նորա անթլփատութիւնը՝ թլ-
27 փատութիւն կ'համարուի ։ Եւ ի բնէ անթլփա-
տութիւնը՝ օրէնքը կատարելով կ'դատապարտէ
քեզ, որ գրով և թլփատութիւնով օրէնքի դէմ
28 յանցաւոր ես ․ Որովհետեւ նա չէ Հրէայ՝ որ դրսի
երեւոյթով է, և այն չէ թլփատութիւնը՝ որ մարմ-
29 նով դրսի երեւոյթով է ․ Այլ նա՝ որ ծածուկ
Հրէայ է, և սրտի թլփատութիւնը հոգով՝ և ոչ
թէ գրով ․ որի գովասանքը ոչ թէ մարդկանցից է,
այլ Աստուածանից ։

ԳԼ․ Գ

1 Արդ ի՞նչ է Հրէայի առաւելութիւնը, կամ ի՞նչ
2 է թլփատութեան օգուտը ։ Շատ, ամեն կերպով ․
առաջ հէնց նա որ Աստուծոյ պատգամները նո-
3 րանց հաւատացուեցան ։ Բայց ի՞նչ․ եթէ ոմանք
չ'հաւատացին, մի՞թէ նորանց անհաւատութիւնն
4 Աստուծոյ հաւատքը կ'խափանէ ․ քաւ լիցի ։ Արդ
թող Աստուած ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ
սուտ ․ ինչպէս գրուած է, Որ արդար լինես քո
5 խօսքերումը, և յաղթես քո դատուելումը ։ Բայց
եթէ մեր անիրաւութիւնն Աստուծոյ արդարու-
թիւնը յայտնի երեւացնում է, ի՞նչ ասենք ․ մի՞թէ
անիրաւ է Աստուած, որ բարկութիւնը բերում է ։
6 Մարդի կերպով եմ ասում, քաւ լիցի ․ ապա
7 Աստուած ի՞նչպէս կ'դատէ աշխարհքը ։ Որովհետեւ
եթէ Աստուծոյ ճշմարտութիւնն իմ ստութիւնովը
աւելացաւ նորա փառքի համար, էլ ի՞նչու եմ

8 ես մեղաւորի պէս դատվում: Եւ ի՞նչու համար
այնպէս չ'անենք ինչպէս չարախօսվում ենք, և ինչ-
պէս ոմանք ասում են մեզ համար, թէ ասում
լինինք, թէ Չար գործենք՝ որ բարին գայ. որոնց
դատաստանը արդար է:
9 Եւ հիմա ի՞նչ. աւելի՞ ենք. ամենևին ոչ. որով-
հետև առաջ մեղադրեցինք Հրէաներին և հեթա-
10 նոսներին, թէ ամենքը մեղքի տակ են. Ինչպէս որ
11 գրուած է, թէ Արդար չ'կայ՝ մէկն էլ չ'կայ: Չը
12 կայ իմացող, չ'կայ Աստուծուն խնդրող, Ամենքը
խոտորեցան, միասին անպիտան եղան. չ'կայ բա-
13 րութիւն անող, մինչև մէկն էլ չ'կայ: Նորանց
կոկորդը բաց գերեզման է, և իրանց լեզուներովը
նենգութիւն են անում. իժերի թոյն կայ նորանց
14 շրթունքների տակ: Որոնց բերանը անէծքով և
15 դառնութիւնով լիքն է: Որոնց ոտները շուտագնաց
16 են արիւն թափելու համար: կործանում և թշ-
17 ուառութիւն է նորանց ճանապարհներումը, Եւ
18 խաղաղութեան ճանապարհը չ'ճանաչեցին: Աս-
19 տուծոյ երկիւղը նորանց աչքերի առաջին չէ: Բայց
գիտենք, թէ ամեն ինչ որ օրէնքն ասում է նո-
րանց է ասում, որ օրէնքի տակ են. որ ամեն բե-
րան խփուի, և բոլոր աշխարհք Աստուծոյ առաջին
20 դատապարտ լինի: Որովհետև օրէնքի գործերիցը
ոչ մի մարմին չի արդարանալ նորա առաջին. ո-
րովհետև օրէնքովը լինում է մեղքի գիտութիւն:
21 Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարու-
թիւնը յայտնուած է, օրէնքից և մարգարէներից
22 վկայուած լինելով. Այսինքն Աստուծոյ արդարու-
թիւնը որ Յիսուս Քրիստոսի հաւատքիցն է, այն
ամենի համար և ամենի վերայ, որ հաւատում են.
23 որովհետև խտրութիւն չ'կայ: Որովհետև ամենքը
մեղանչեցին, և Աստուծոյ փառքիցը պակասուած

24 են. Ձրի են արդարանում նորա շնորհքովը՝ այն
փրկութեան ձեռովը՝ որ Յիսուս Քրիստոսումն է:
25 Որին Աստուած առաջուց սահմանեց քաւութիւն
լինելու համար հաւատալով նորա արիւնովը, որ
իր արդարութիւնը ցոյց տայ՝ այն առաջուց գոր-
ծուած մեղքերի թողութեան համար՝ Աստու-
26 ծոյ ներելու ժամանակին: Որ իր արդարութիւնը
երևացնէ այս ժամանակումը. որ ինքն լինի արդար
և արդարացնող նորան՝ որ Յիսուսի հաւատքիցն է.
27 Հիմա ո՞ւր է պարծանքը. խափանուեցաւ. ո՞ր օ-
րէնքով, գործերի՞ օրէնքով. ոչ, այլ հաւատքի օ-
28 րէնքովը: Ուրեմն համարում ենք, որ մարդը հա-
ւատքով է արդարանում առանց օրէնքի գործերի:
29 Մի՞ թէ Աստուած միայն Հրէաներինն է, և հեթա-
նոսներինն էլ չէ. այո, հեթանոսներինն էլ է:
30 Որովհետև մէկ Աստուած է՝ որ արդարացնում է
թլփատութիւնը հաւատքից, և անթլփատութիւ-
31 նը նոյն հաւատքովը: Արդ մի՞ թէ օրէնքը խափա-
նում ենք հաւատքովը. քաւ լիցի. այլ օրէնքը
հաստատում ենք:

ԳԼ. Դ

1 Արդ ի՞նչ ասենք, թէ մեր Աբրահամ հայրը գը-
2 տաւ մարմնի կողմանէ: Որովհետև եթէ Աբրահա-
մը գործերով արդարացած լինէր՝ պարծանք կ'ու-
3 նենար. բայց ոչ թէ Աստուծոյ առաջին: Որովհե-
տև գիրքն ի՞նչ է ասում. Աբրահամը հաւատաց
Աստուծուն, և արդարութիւն համարուեցաւ նո-
4 րան: Բայց նորան՝ որ գործք է անում, վարձքը չէ
համարվում շնորհքի պէս, այլ պարտքի պէս:
5 Բայց նորան՝ որ գործք չէ անում այլ հաւատում
է նորան, որ ամբարշտին արդարացնում է, նորա

6 հաւատքը համարւում է արդարութիւն ։ Ինչպէս
որ Դաւիթն էլ այն մարդի երանութիւնն է ա-
սում, որին Աստուած արդարութիւն է համարում
7 առանց գործերի։ Երանի նորանց՝ որոնց անօրէնու-
թիւնները թողուեցան, և որոնց մեղքերը ծած-
8 կուեցան։ Երանի է այն մարդին, որին Տէրը մեղք
9 չի համարիլ ։ Արդ այս երանութիւնը՝ թլփատու-
թեան վերա՞յ է՝ կամ թէ անթլփատութեան վե-
րայ էլ է. որովհետև ասում ենք՝ թէ Աբրահամի
10 հաւատքն արդարութիւն համարուեցաւ ։ Արդ
ի՞նչպէս համարուեցաւ. երբոր թլփատութիւնո՞ւմ
էր՝ թէ անթլփատութիւնումը. ոչ թէ թլփատու-
11 թիւնում այլ անթլփատութիւնում։ Եւ թլփա-
տութեան նշանն առաւ իբրև արդարութեան կնիք
այն հաւատքի որ անթլփատութիւնումն էր, որ
Նա հայր լինի այն ամեն հաւատացեալների՝ որ ան-
թլփատութիւնիցն են՝ որ նորանց էլ համարուի
12 արդարութիւնը ։ Եւ թլփատութեան հայր համա-
րուի ոչ միայն նորանց՝ որ թլփատութիւնիցն են,
այլ նորանց էլ՝ որ այն հաւատքի հետքովն են գը-
նում, որ մեր հայր Աբրահամն անթլփատութիւ-
13 նումն ունէր ։ Որովհետև ոչ թէ օրէնքովը եղաւ
Աբրահամին կամ նորա զաւակին այն խոստմունքը
թէ նա աշխարհքի ժառանգն է, այլ հաւատքի
14 արդարութիւնիցը ։ Որովհետև եթէ օրէնքից լի-
նողներն են ժառանգ, ապա հաւատքն ունայն էր
15 և խոստմունքը կ'խափանուէր ։ Որովհետև օրէնքը
բարկութիւն է գործում. որովհետև ուր օրէնք
16 չ'կայ՝ օրինազանցութիւն էլ չ'կայ ։ Սորա համար
հաւատքիցն է, որ շնորհքով լինի. որ խոստմունքը
հաստատ լինի ամեն զաւակի համար, ոչ միայն օ-
րէնքիցը լինողի համար , այլ նորա համար էլ որ
Աբրահամի հաւատքիցն է, որ մեր ամենի հայրն է,

17 ինչպէս որ էլ գրուած է, թէ Շատ ազգերի հայր
արի քեզ Աստուծոյ առաջին, որին հաւատաց, որ
մեռելներին կենդանի է անում՝ և չ'լինող բաները
18 լինողի պէս է կանչում։ Որ առանց յոյսի՝ յոյսով
հաւատաց՝ թէ շատ ազգերի հայր կ'լինի. ինչպէս
ասուեցաւ՝ թէ Այնպէս պիտի լինի քո զաւակը ։
19 Եւ չ'տկարացաւ հաւատքով, թէպէտև մտիկ չ'ա-
րաւ իր մարմնին որ արդէն մեռած էր, ինքը իբրև
հարիւրամեայ լինելով, և ոչ էլ Սառայի արգան-
20 դի մեռած լինելուն ։ Եւ Աստուծոյ խոստմունքի
համար չ'երկմտեց անհաւատութիւնով, այլ զօ-
րացաւ հաւատքով, և Աստուծուն փառք տուաւ։
21 Եւ իր մտքումը հաստատուած էր, թէ Նա որ խոս-
22 տացաւ, կարող է և անել։ Նորա համար էլ
արդարութիւն համարուեցաւ նորան ։
23 Բայց ոչ միայն նորա համար գրուեցաւ թէ նո-
24 րան համարուեցաւ արդարութիւն. Այլ մեզ հա-
մար էլ, որ մեզ պիտի համարուի, որ հաւատում
ենք նորան՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարու-
25 թիւն տուաւ մեռելներից . Որ մատնուեցաւ մեր
յանցանքների համար . և յարութիւն առաւ մեզ
արդարացնելու համար ։

ԳԼ. Ե

1 Արդ մենք՝ հաւատքով արդարացած լինելով
Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր
2 Յիսուս Քրիստոսի ձեռովը ։ Որով ընդունեցինք
հաւատքով այս շնորհքի մէջ մտնելն էլ, որ նո-
րանում կանգնած ենք , և պարծենում ենք Աս-
3 տուծոյ փառքի յոյսովը ։ Եւ ոչ միայն այդ ,
այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք .
գիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է

4 գործում, համբերութիւնը՝ փորձառութիւն, փոր-
5 ձառութիւնը՝ յոյս. Յոյսն էլ չէ ամաչեցնում. ո-
րովհետև Աստուծոյ սէրը փռուած է մեր սրտերի
մէջ Սուրբ Հոգու ձեռովը՝ որ տրուեցաւ մեզ։
6 Որովհետև երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստո-
սը մեզ համար իր ժամանակումն ամբարիշտների
7 տեղ մեռաւ։ Վասնզի հազիւ թէ մի արդարի
համար մէկը մեռնի. (բայց մի բարի մարդի համար
8 իցէ թէ մէկը համարձակի մեռնիլ.) Բայց Աստ-
ուած յայտնեց իր սէրը դէպի մեզ, որ՝ երբոր
մենք դեռ մեղաւոր էինք, Քրիստոսը մեզ համար
9 մեռաւ. Ապա ո՞րքան աւելի հիմա, որ արդարա-
ցանք նորա արիւնովը կ'փրկուինք նորանով բար-
10 կութիւնից։ Որովհետև թէ որ դեռ թշնամի
էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք նորա Որդու
մահովը, ո՞րքան աւելի որ հաշտուած ենք, կ'ապ-
11 րինք նորա կեանքովը։ Եւ ոչ միայն այսքան. այլ
Աստուծով էլ պարծենում ենք՝ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի ձեռովը, որով հիմա հաշտութիւնն ըն-
դունեցինք։
12 Սորա համար՝ ինչպէս մէկ մարդի ձեռովը մեղ-
քը մտաւ աշխարհքը, և այն մեղքովն էլ մահը՝
և այսպէս մահն ամէն մարդկանց վերայ տարած-
13 ուեցաւ, ըստ որում ամենքը մեղանչեցին։ (Որով-
հետև մինչև օրէնքը՝ մեղք կար աշխարհքումը՝
բայց մեղքը չէ համարվում քանի որ օրէնք չ'կայ՝
14 Բայց մահը թագաւորեց Ադամից մինչև Մովսէսը
Ադամի մեղքի նման չ'մեղանչողների վերայ էլ. որ
15 օրինակ է նորան որ գալու էր։ Բայց շնորհքն այն-
պէս չէ՝ ինչպէս յանցանքը. որովհետև եթէ մէկի
յանցանքովը շատերը մեռան, էլ ո՞րքան աւելի
Աստուծոյ շնորհքն ու պարգևը մէկ մարդի՝ Յի-
սուս Քրիստոսի շնորհքովն աւելացաւ շատերի վե-

16 րայ։ Եւ պարգևն այնպէս չէ՝ ինչպէս այն մէկ մե-
ղանչողից եղածը, որովհետև դատաստանն այն մէկ
մեղքից դէպի դատապարտութիւն տարաւ. բայց
շնորհքը շատ մեղքերից արդարութեան մէջ է
17 տանում։ Որովհետև եթէ մէկի մեղքովը մահը թա-
գաւորեց այն մէկի ձեռովն, էլ ո՞րքան աւելի նո-
րանք, որ ընդունում են շնորհքի լիութիւնն ու
արդարութեան պարգևները կեանքով կ'թագաւո-
18 րեն՝ այն մէկ Յիսուս Քրիստոսի ձեռովը։) Արդ-
ուրեմն՝ ինչպէս որ մէկի յանցանքովն ամէն մարդ-
կանց վերայ դատապարտութիւն եկաւ, նոյնպէս էլ
մէկի արդարութիւնովն ամէն մարդկանց վերայ
19 կեանքի արդարութիւն է գալիս։ Որովհետև ինչ-
պէս որ մէկ մարդի անհնազանդութիւնովը շատե-
րը մեղաւորներ եղան, այնպէս էլ մէկի հնազան-
20 դութիւնովը շատերը արդարներ կ'լինին։ Բայց օ-
րէնքը մէջ ընկաւ՝ որ յանցանքը շատանայ. բայց
ուր որ աւելի եղաւ մեղքը, այնտեղ աւելի ևս
21 շատացաւ շնորհքը։ Որպէս զի ինչպէս մեղքը թա-
գաւորեց մահի ձեռովը, այնպէս էլ շնորհքը թա-
գաւորէ արդարութիւնով յաւիտենական կեանքի
մէջ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը։

ԳԼ. Զ

1 Արդ ինչ ասենք. Մնա՞նք մեղքի մէջ, որ շնորհ-
2 քը շատանայ. Քաւ լիցի. մենք որ մեռանք մեղ-
3 քին, էլ ինչպէս դեռ կ'ապրենք նորանում։ Կամ
չ'գիտէ՞ք՝ թէ քանիներս որ Յիսուս Քրիստոսով
մկրտուեցանք՝ նորա մահուանը մկրտուեցանք։
4 Մկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի
մէջ. որ ինչպէս Քրիստոսը Հօր փառքովը մեռել-
ների միջից յարութիւն առաւ, այնպէս մենք էլ

5 կեանքի նորոգութեան մէջ ման գանք։ Որովհետև
եթէ նորա մահի նմանութիւնովը նորա հետ տըն-
կուեցանք, ապա նորա յարութեանն էլ նման կը
6 լինինք։ Այս գիտենալով, որ մեր հին մարդը նո-
րա հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը խափան-
7 ուի, որ այլ ևս չ՚ծառայենք մեղքին։ Որովհետև
8 նա որ մեռնում է՝ արդարացած է մեղքիցը։ Եւ
եթէ Քրիստոսի հետ մեռանք, հաւատում ենք՝ որ
9 նորա հետ էլ կ՚ապրենք։ Գիտենալով որ՝ Քրիս-
տոսը մեռելների միջից յարութիւն առած լինե-
լով, այլ ևս չէ մեռնում, և մահը նորա վերայ
10 այլ ևս չէ տիրում։ Որովհետև այն որ մեռաւ՝ մեղ-
քին մեռաւ մէկ անգամ, և այն որ կենդանի է՝
11 Աստուծուն է կենդանի։ Նոյնպէս էլ դուք ձեր
անձերը մեղքին մեռած համարեցէք, և Աստու-
ծուն կենդանի՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռո-
12 վը։ Սորա համար թող մեղքը չ՚թագաւորէ ձեր
մահկանացու մարմնի մէջ, որ հնազանդիք նորա
13 ցանկութիւններին։ Եւ ձեր անդամները անիրա-
ւութեան գործիք մի ներկայացնէք մեղքին. այլ
ձեր անձերը ներկայացրէք Աստուծուն՝ ինչպէս մե-
ռելներից կենդանացածներ, և ձեր անդամներն
14 արդարութեան գործիք՝ Աստուծուն. Որովհետև
մեղքը չի տիրիլ ձեզ վերայ. որովհետև օրէնքի
տակ չէք, այլ շնորհքի տակ։
15 Արդ ի՞նչ. մե՞ղք գործենք, որովհետև օրէնքի
16 տակ չենք՝ այլ շնորհքի տակ. քաւ լիցի։ Դուք
չ՚գիտէ՞ք, թէ ում որ ձեր անձերը ծառայ էք ներ-
կայացնում՝ նորան հնազանդելու, ծառաներ էք
նորան որին հնազանդում էք. թէ մեղքին՝ դէպի
մահ, և թէ հնազանդութեան՝ դէպի արդարու-
17 թիւն։ Բայց շնորհակալութիւն Աստուծոյ. որ մեղ-
քի ծառայ էիք, բայց սրտով հնազանդեցիք այն

վարդապետութեան օրինակին՝ *որին յանձնուե-
18 ցաք՝։ Ուրեմն դուք մեղքից ազատուած՝ ծառա-
19 յեցիք արդարութեանը։ Մարդկօրէն եմ ասում
ձեր մարմնի տկարութեան համար. որ ինչպէս ձեր
անդամները ծառայ ներկայացրիք պղծութեանն ու
անօրէնութեանը՝ անօրէնութեան համար, նոյնպէս
էլ հիմա ձեր անդամները ծառայ ներկայացրէք
20 արդարութեանը սրբանալու համար։ Որովհետև
երբոր մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք արդարու-
21 թիւնիցը։ Արդ ի՞նչ պտուղ ունէիք այն ժամա-
նակ, որոնց համար հիմա ամօթ էք քաշում. ո-
22 րովհետև նորանց վերջը մահ է։ Բայց հիմա որ մեղ-
քիցն ազատուած և Աստուծոյ ծառայ եղած էք՝
ձեր պտուղն ունիք սրբանալու համար, և նորա
23 վերջը յաւիտենական կեանքն է։ Որովհետև մեղ-
քի վարձքը մահն է. բայց Աստուծոյ շնորհքը՝ յա-
ւիտենական կեանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
ձեռովը։

ԳԼ. Է

1 Կամ չ՚գիտէ՞ք, եղբարք, (որովհետև օրէնք գի-
տացողների հետ եմ խօսում) որ օրէնքը մարդի
2 վերայ տիրում է՝ քանի որ նա կենդանի է։ Որով-
հետև մարդ ունեցող կնիկը՝ իր կենդանի մարդի
հետ կապուած է օրէնքով. բայց եթէ մարդը
3 մեռնի՝ մարդի օրէնքիցն արձակուած է։ Ուրեմն՝
քանի որ մարդը կենդանի է՝ նա շնացող է կոչ-
ւում, եթէ ուրիշ մարդի գնայ. բայց եթէ մարդը
մեռնի, օրէնքիցն ազատ է՝ որ շնացող չ՚լինի եթէ
4 ուրիշ մարդի գնայ։ Այսպէս էլ, եղբարք, դուք

*Կամ՝ որով հրահանգուեցաք։

Քրիստոսի մարմնովը մեռաք օրէնքին՝ որ ուրիշի լի-
նիք՝ Նորան որ մեռելների միջից յարութիւն է ա-
5 ռել, որ պտուղ բերենք Աստուծուն։ Որովհետև
քանի որ մարմնով էինք, մեղքերի կիրքերը՝ որ օ-
րէնքովն էին՝ զօրանում էին մեր անդամներումը,
6 որ մենք պտուղ բերենք մահին։ Բայց հիմա ար-
ձակուեցանք օրէնքիցը մեռնելով Նորան՝ որով որ
բռնուած էինք, որպէս զի հոգու նորոգութիւնովը
ծառայենք՝ և ոչ թէ գրի հնութիւնովը։
7 Արդ ի՞նչ ասենք. օրէնքը մե՞ղք է. քաւ լիցի.
բայց ես մեղքը չէի գիտենալ՝ եթէ ոչ օրէնքով.
և ցանկութիւնը չէի ճանաչել՝ եթէ օրէնքը չէր
8 ասել՝ Մի ցանկանար։ Մեղքը առիթ առնելով
պատուիրանքովը, ինձանում ամեն ցանկութիւն
գործեց. որովհետև առանց օրէնքի մեղքը մեռած
9 է։ Եւ ես առանց օրէնքի մի ժամանակ կենդանի
էի. բայց երբոր պատուիրանքը եկաւ, մեղքը կեն-
10 դանացաւ։ իսկ ես մեռայ, և այն պատուիրանքն՝
որ կեանքի համար էր, ինձ մահի պատճառ եղաւ։
11 Որովհետև մեղքը առիթ առած պատուիրանքովը
12 խաբեց ինձ և Նորանով սպանեց։ Ուրեմն՝ օրէնքը
սուրբ է՝ և պատուիրանքն էլ սուրբ և արդար և
բարի։
13 Ապա բարի՞ն ինձ մահ եղաւ. քաւ լիցի. այլ
մեղքը. որ մեղքն երևի որ բարիովն ինձ մահ գոր-
ծեց. որ մեղքն աւելի ևս մեղաւոր լինի պատուի-
14 րանքի ձեռովը։ Որովհետև գիտենք՝ որ օրէնքը
հոգևոր է. բայց ես եմ մարմնաւոր՝ մեղքի տակ
15 ծախուած։ Որովհետև ինչ որ գործում եմ չ'գի-
տեմ. որովհետև ոչ թէ ինչ որ կամենում եմ՝
այն եմ գործում. այլ ինչ որ ատում եմ, այն
16 գործում։ Եւ եթէ ինչ որ չեմ կամենում՝ այն
եմ գործում, օրէնքի համար վկայում եմ՝ թէ

17 բարի է։ Արդ ուրեմն ոչ թէ ես եմ գործում
18 այն, այլ ինձանում բնակուած մեղքը։ Որովհետև
գիտեմ որ ինձանում (այսինքն իմ մարմնումը) մի
բարի բան չէ բնակվում. քանզի կամենալն կայ
19 իմ մօտը. բայց բարին անելը չեմ գտնում։ Քանզի
ոչ թէ բարին՝ որ կամենում եմ, անում եմ. այլ
20 չարը՝ որ չեմ կամենում, այն եմ գործում։ Ու-
րեմն եթէ այն որ չեմ կամենում ես, այն եմ ա-
նում. էլ ես չեմ անում այն, բայց ինձանում
21 բնակուած մեղքը։ Ուրեմն գտնում եմ այդ օրէն-
քը՝ որ երբ ես կամենում եմ բարին անել, չարն
22 իմ մօտը կայ։ Որովհետև ես հաւանում եմ Աս-
23 տուծոյ օրէնքին՝ ներսի մարդովը։ Բայց տեսնում
եմ ուրիշ օրէնք իմ անդամներումը՝ որ իմ մտքի
օրէնքի դէմ պատերազմում է, և ինձ գերի է
բռնում այն մեղքի օրէնքովը՝ որ իմ անդամներումն
24 է։ Ես ի՜նչ խեղճ մարդ եմ. ո՞վ կ'ապրեցնէ ինձ
25 այս մահի մարմնիցը։ Շնորհակալ եմ Աստուծա-
նից մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը։ Արդ ու-
րեմն ես ինքս մտքով ծառայում եմ Աստուծոյ
օրէնքին, իսկ մարմնով մեղքի օրէնքին։

ԳԼ. Ը

1 Ուրեմն հիմա դատապարտութիւն չ'կայ Յիսուս
Քրիստոսումը լինողների համար, *որ մարմնաւորա-
2 պէս չեն վարվում, այլ հոգևորապէս"։ Որովհետև
կեանքի հոգու օրէնքը Յիսուս Քրիստոսումն՝ ազա-
3 տեց ինձ մեղքի և մահի օրէնքիցը։ Որովհետև այն որ
անկարելի էր օրէնքին, որ տկար էր մարմնի պատ-
ճառովը, Աստուած իր Որդին ուղարկելով մեղքի

*Ոմանք չ'ունին։

մարմնի նմանութիւնովը և մեղքի համար՝ մեղքին
4 դատապարտեց այն մարմնումը. Որ օրէնքի արդա-
րութիւնը կատարուի մեզանում, որ մարմնաւորա-
5 պէս չենք վարվում՝ այլ հոգևորապէս։ Որովհետև
մարմնաւոր լինողները մարմնի բաներն են մտածում.
6 իսկ հոգևոր լինողները՝ հոգու բաները։ Որովհետև
մարմնի խորհուրդը մահ է. և հոգու խորհուրդը
7 կեանք և խաղաղութիւն։ Որովհետև մարմնի խոր-
հուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. որով-
հետև Աստուծոյ օրէնքին չէ հնազանդւում, և կա-
8 րող էլ չէ։ Եւ նորանք՝ որ մարմնով են, չեն կա-
9 րող Աստուծուն հաճոյ լինիլ։ Բայց դուք մարմնով
չէք՝ այլ հոգով, եթէ Աստուծոյ Հոգին ձեզանում
բնակուած է. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին
10 չ'ունի՝ նա նորանը չէ։ Եւ եթէ Քրիստոսը ձեզա-
նում է՝ ապա մարմինը մեռած է մեղքի համար,
11 և հոգին կենդանի է արդարութեան համար։ Եւ
եթէ Յիսուսին մեռելներից յարուցանողի Հոգին
ձեզանում բնակուած է, ապա Քրիստոսին մեռել-
ներից յարուցանողը ձեր մահկանացու մարմիններն
էլ կ'կենդանացնէ իր Հոգովը, որ ձեզանում
բնակուած է։
12 Ապա ուրեմն, եղբարք, պարտական ենք ոչ թէ
13 մարմնին՝ մարմնի պէս ապրելու։ Որովհետև եթէ
մարմնաւորապէս ապրէք՝ կ'մեռնէք. բայց եթէ հո-
14 գով մարմնի գործերն սպանէք՝ կ'ապրէք։ Որովհե-
տև որոնք որ Աստուծոյ Հոգովն են վարվում, նո-
15 րանք Աստուծոյ որդիք են։ Որովհետև դուք ծա-
ռայութեան հոգին չ'առաք որ դարձեալ վախե-
նաք. այլ որդեգրութեան հոգին առաք, որով ա-
16 ղաղակում ենք՝ Աբբա, Հայր։ Նոյն ինքն Հոգին
վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք
17 Աստուծոյ որդիք ենք։ Եւ եթէ որդիք՝ ապա ժա-

ռանգներ էլ, Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի
ժառանգակիցներ. որ եթէ նորա չարչարանքներին
կցորդ ենք՝ փառքին էլ մասնակից լինինք։
18 Որովհետև այնպէս եմ դատում որ այս ժամա-
նակի չարչարանքները արժանի չեն բաղդատուելու
այն գալու փառքին հետ, որ մեզանում պիտի
19 յայտնուի։ Որովհետև ստեղծուածների եռանդա-
լից ակնկալութիւնը Աստուծոյ որդկանց յայտնու-
20 թեանն է սպասում։ Նորա համար որ ստեղծ-
ուածները հնազանդեցին ունայնութեան, ոչ թէ
կամքով այլ նորա համար՝ որ հնազանդեցրեց այն
21 յոյսով, Որ՝ ստեղծուածներն իրանք էլ ապակա-
նութեան ծառայութիւնից կ'ազատուին՝ Աստու-
ծոյ որդկանց փառաւոր ազատութեան մէջ մտնե-
22 լով։ Որովհետև գիտենք որ բոլոր ստեղծուածները
մինչև հիմա միասին հառաչում են և ցաւի մէջ
23 են։ Եւ ոչ միայն նորանք, այլ ինքներս էլ որ Հո-
գու առաջին պտուղն ունինք, մենք էլ մեր ան-
ձերումը հառաչում ենք՝ որդեգրութեանն սպա-
24 սելով այսինքն մեր մարմնի ազատութեանը։ Որով-
հետև յոյսով փրկուեցանք. բայց յոյսը որ տես-
նվում է, յոյս չէ. վասնզի այն բանը, որ մէկը
25 տեսնում է՝ էլ ի՞նչպէս կ'յուսայ։ Բայց եթէ այն
որ չենք տեսնում, նորան յոյս ունինք, ապա համ-
26 բերութեամբ սպասում ենք։ Այնպէս էլ Հոգին
օգնում է մեր տկարութիւններին, որովհետև թէ
ինչ բանի համար պիտի աղօթք անենք՝ ինչպէս
արժան է, չ'գիտենք. բայց ինքը Հոգին անբարբառ
27 հառաչանքով բարեխօս է լինում։ Եւ սրտերը
քննողը գիտէ թէ ինչ է Հոգու խորհուրդը. որով-
հետև Աստուծուն վայելուչ կերպով սուրբերի հա-
մար բարեխօսում է։
28 Բայց գիտենք, որ Աստուծուն սիրողներին ամեն

բաները գործակից են լինում դէպի բարին նո-
29 րանց՝ որ նախասահմանելովը կանչուած են։ Որով-
հետև նորանց որ առաջուց ճանաչեց, առաջուց
էլ սահմանեց իր Որդու պատկերին կերպարանա-
կից լինելու. որ նա անդրանիկ լինի շատ եղբայրնե-
30 րի մէջ։ Եւ որոնց առաջուց սահմանեց, նորանց
կանչեց էլ. և որոնց կանչեց, նորանց արդարացրեց
էլ. և որոնց արդարացրեց, նորանց փառաւոր էլ
31 արաւ։ Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. ե-
թէ Աստուած մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ.
32 Որ իր Որդին էլ չ՚խնայեց, այլ մեր ամենի համար
մատնեց նորան. էլ ի՞նչպէս նորան հետ ամեն բան
33 չի շնորհիլ մեզ։ Ո՞վ է որ Աստուծոյ ընտրուած-
ների դէմ մեղադիր լինի. Աստուած է որ արդա-
34 րացնում է։ Ո՞վ է որ դատապարտէ. Քրիստոսը
որ մեռաւ և աւելի՝ որ յարութիւն էլ առաւ և
Աստուծոյ աջ կողմն է, որ մեզ համար բարեխօս
35 էլ է։ Ապա ո՞վ կ՚բաժանէ մեզ Քրիստոսի սէրից՝
տառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք,
թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ
36 սո՞ւր։ Ինչպէս գրուած է, թէ քեզ համար մեռ-
ցընվում ենք բոլոր օրը և մորթուելու ոչխարի պէս
37 համարուեցանք։ Բայց այս ամեն բաներումն առա-
ւել ևս յաղթում ենք նորա միջոցովը՝ որ մեզ
38 սիրեց, Որովհետև հաստատ գիտեմ, որ ոչ մահ,
ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ,
ոչ զօրութիւններ, ոչ ներկայ բաներ, ոչ գալու
39 բաներ, Եւ ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն, և
ոչ մէկ ուրիշ ստեղծուած բան կարող է մեզ
բաժանել Աստուծոյ սէրից՝ որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսումն է։

ԳԼ. Թ

1 Ճշմարիտն եմ ասում Քրիստոսումը՝ և սուտ չեմ
ասում, իմ խղճմտանքն էլ վկայում է ինձ Սուրբ Հո-
2 գով։ Որ մեծ տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւ
3 իմ սրտին. Որ կ՚խնդրէի՝ ես ինքս նզովուած լինել
Քրիստոսից իմ եղբայրների և մարմնաւոր ազգական-
4 ների համար. Որոնք իսրայէլացի են. որոնցն է որ-
դեգրութիւնը, և փառքը և ուխտերը, և օրինա-
5 դրութիւնը և պաշտօնը և խոստումները. Որոնց են
հայրերը՝ և որոնցից է Քրիստոսը մարմնի կողմանէ,
որ է ամենի վերայ Աստուած, օրհնեալ յաւիտ-
6 եանս. ամէն։ Բայց ոչ իբր թէ Աստուծոյ խօսքը
գետինն է ընկել. որովհետև ոչ թէ ամենքը որ
7 իսրայէլից են՝ նորանք են իսրայէլ։ Եւ ոչ թէ
նորանք որովհետև Աբրահամի սերունդ են, ամեն-
քը որդիք են. այլ իսահակով քեզ համար սե-
8 րունդ պիտի կոչուի։ Այսինքն՝ ոչ թէ մարմնի որ-
դիքն են Աստուծոյ որդիք. այլ խոստման որդիքն
9 են սերունդ համարվում։ Որովհետև խոստման
խօսքը սա է. թէ Այս ժամանակումը կ՚գամ և
10 Սառային որդի կ՚լինի։ Եւ ոչ միայն այսքան. բայց
Ռեբեկան էլ որ մէկից յղացաւ՝ մեր հայր իսա-
11 հակից. Քանզի նորանք տակաւին չ՚ծնուած, և մի
բարի կամ չար բան էլ չ՚գործած, որպէս զի ընտ-
րութեան պէս Աստուծոյ նախասահմանութիւնը
12 հաստատ մնայ, Ոչ թէ գործերից՝ այլ կանչողից,
13 ասուեցաւ նորան. Թէ մեծը պիտի ծառայէ փոք-
րին. ինչպէս գրուած է, Յակոբին սիրեցի, և Եսա-
ւին ատեցի։
14 Հիմա ի՞նչ ասենք. մի՞թէ Աստուծոյ մօտ անի-
15 րաւութիւն կայ. քաւ լիցի։ Որովհետև Մովսէսին

ասում է. Կ'ողորմիմ ում որ կ'ողորմիմ, և կ'գը-
16 թամ ում որ կ'գթամ։ Ապա ուրեմն ոչ կամեցո-
ղիցն է, և ոչ էլ վազողիցը, այլ Աստուածանից
17 որ ողորմում է։ Որովհետև գիրքն ասում է փա-
րաւոնին, թէ հէնց նորա համար գրգռեցի քեզ
որ քեզանում ցոյց տամ իմ զօրութիւնը, և իմ
18 անունն ամեն երկրի մէջ պատմուի։ Ապա ուրեմն
ում որ կամենում է ողորմում է. և ում կամե-
19 նում է խստացնում է։ Ապա ինձ կ'ասես, Էլ
ի՞նչու է մեղադրում. Նորա կամքին ո՞վ հակառակ
20 կ'կենայ։ Բայց դու ո՞վ ես, մարդ, որ Աստուծուն
դէմ պատասխան ես տալիս. մի՞թէ ստեղծուածը
կ'ասէ իր Ստեղծողին՝ թէ ի՞նչու այդպէս արիր
21 ինձ։ Մի՞թէ բրուտը իշխանութիւն չ'ունի հողի
վերայ, որ միևնոյն զանգուածից շինէ մէկը պա-
22 տուի անօթ, և միւսը անարգութեան։ Եւ ի՞նչ
եթէ Աստուած՝ կամենում էր ցոյց տալ բարկու-
թիւնը և յայտնել իր զօրութիւնը, շատ երկայն-
մտութեամբ համբերեց բարկութեան անօթներին՝
23 որ կորուստի համար պատրաստուած էին. Եւ որ
յայտնի ցոյց տայ իր փառքի մեծութիւնը՝ ողոր-
մութեան անօթների վերայ, որոնց առաջուց պատ-
24 րաստեց փառքի համար. Որ մեզ էլ կանչեց, ոչ
թէ միայն Հրէաներից, այլ հեթանոսներից էլ.
25 Ինչպէս որ Ովսէէի գրքումն էլ ասում է. Այն որ
իմ ժողովուրդը չէ, ինձ ժողովուրդ կ'կանչեմ. և
26 չ'սիրուածը սիրուած. Եւ կ'լինի որ այնտեղ որ
ասուեցաւ նորանց՝ թէ դուք իմ ժողովուրդ չէք,
այնտեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք կ'կոչ-
27 ուին։ Եսայիան աղաղակում է Իսրայէլի համար.
Թէև Իսրայէլի որդկանց համարը ծովի աւազին պէս
28 շատ լինի, միայն մնացորդը կ'փրկուի։ Որովհետև
մի կարճ և համառօտ բան կ'անէ Տէրը արդարու-

թեամբ. Տէրը մի կարճ բան կ'անէ երկրի վերայ։
29 Եւ ինչպէս որ Եսայիան առաջուց ասեց. Եթէ
Սաբաւովթ Տէրը մեզ համար սերունդ չէր թո-
ղել, մենք Սոդոմի պէս կ'լինէինք և Գոմորին կը
նմանէինք։
30 Արդ ի՞նչ ասենք. թէ հեթանոսները, որ արդա-
րութեան ետևից չէին գնում, արդարութեան
հասան՝ այն արդարութեանն որ հաւատքիցն է։
31 Բայց Իսրայէլը որ գնում էր արդարութեան օ-
րէնքի ետևից, արդարութեան օրէնքին չհասաւ։
32 Ի՞նչու համար. որովհետև ոչ թէ հաւատքից,
այլ իբր օրէնքի գործերից ուզում էին արդարանալ.
որովհետև գայթակղութեան քարի վերայ գլոր-
33 ուեցան. ինչպէս գրուած է. Ահա ես Սիօնի մէջ
գայթակղութեան քար և գլորուելու վէմ եմ դը-
նում. և ամեն նորան հաւատացողը չի ամաչիլ։

ԳԼ. Ժ

1 Եղբարք, իմ սրտի փափաքը և դէպի Աստուած
աղօթքը Իսրայէլի համար փրկութեան մասին է։
2 Որովհետև վկայում եմ նորանց՝ որ Աստուծոյ նա-
3 խանձն ունին, բայց գիտութեամբ չէ։ Որովհետև
Աստուծոյ արդարութիւնը չ'գիտենալով, և իրանց
արդարութիւնը կանգնեցնել կամենալով՝ Աստու-
4 ծոյ արդարութեանը չ'հնազանդեցին։ Վասնզի օ-
րէնքի վախճանը Քրիստոսն է ամեն հաւատացողի
համար դէպի արդարութիւն։
5 Որովհետև Մովսէսը գրում է այն արդարու-
թեան համար որ օրէնքիցն է, Թէ այս բաներն ա-
6 նող մարդը կ'ապրի նորանցով։ Բայց հաւատքից
լինող արդարութիւնը այսպէս է ասում. Չ'ասես
քո սրտումը, Ո՞վ վեր կ'ելնէ երկինքն, այսինքն

7 Քրիստոսին վայր բերելու համար։ կամ՝ ո՞վ կ՚իջ-
նէ անդունդն այսինքն Քրիստոսին մեռելների մի-
8 ջից հանելու համար։ Բայց [illegible] ի՞նչ է ասում.
Մօտիկ է քեզ խօսքը, քո բերանումն ու քո սըր-
տումն է, այսինքն հաւատքի խօսքն որ մենք քա-
9 րոզում ենք։ Որովհետև եթէ բերանովդ Յիսուսին
Տէր դաւանես, և սրտումդ հաւատաս թէ Աստ-
ուած յարութիւն տուաւ նորան մեռելներից,
10 կ՚ապրես։ Քանզի սրտով հաւատում ենք արդա-
րանալու համար, և բերանով դաւանում ենք
11 փրկուելու համար։ Որովհետև գիրքն ասում է.
12 Ամեն ով որ հաւատայ նորան՝ չի ամաչիլ։ Որով-
հետև խտրութիւն չ՚կայ Հրէայի և Յոյնի մէջ. ո-
րովհետև նոյն Տէրը ամենի Տէրն է, առատ ամենի
13 համար՝ որ կանչում են նորան։ Վասնզի ամեն ով
որ Տիրոջ անունը կանչէ կ՚ապրի։
14 Արդ ի՞նչպէս կանչեն, որին չ՚հաւատացին. և
ի՞նչպէս հաւատան, որից չ՚լսեցին. և ի՞նչպէս լսեն
15 առանց քարոզողի. Եւ ի՞նչպէս քարոզեն, եթէ
չ՚ուղարկուին. ինչպէս գրուած է, Որպէ՜ս գեղեցիկ
են նորանց ոտները՝ որ խաղաղութիւն են քարո-
16 զում և բարի բաներ են աւետիք տալիս։ Բայց ոչ
թէ ամենքը հնազանդ եղան աւետարանին։ Որով-
հետև Եսայիան ասում է. Տէր, ո՞վ հաւատաց
17 մեր լուրին։ Ուրեմն հաւատքը լսելուցն է, և լսե-
18 լը՝ Աստուծոյ խօսքից։ Բայց ես ասում եմ. Մի՞-
թէ չ՚լսեցին. մանաւանդ որ նորանց ձայնը դուրս
գնաց բոլոր երկիրը. և նորանց խօսքը՝ մինչև աշ-
19 խարհքի ծայրերը։ Բայց ասում եմ. Մի՞թէ Իսրա-
յէլը չ՚գիտաց. առաջ Մովսէսն է ասում. Ես ձեզ
նախանձաւոր կ՚շինեմ մի ոչինչ ժողովրդով, և մի
20 անմիտ ազգով կ՚կսկծացնեմ ձեզ։ Բայց Եսայիան
աւելի համարձակում է և ասում. Ես գտնուե-

ցայ նորանցից որ ինձ չէին որոնում. յայտնի եղայ
21 նորանց որ ինձ համար չէին հարցնում։ Բայց Իս-
րայէլին ասում է. Բոլոր օրն իմ ձեռքերը մեկնե-
ցի դէպի մի անհնազանդ և հակառակող ժողո-
վուրդ։

ԳԼ. ԺԱ.

1 Արդ ասում եմ, Մի՞թէ Աստուած դէն գցեց իր
ժողովուրդը. քաւ լիցի. որովհետև ես էլ Իսրայէ-
լացի եմ՝ Աբրահամի սերունդից, Բենիամինի ցե-
2 ղից։ Աստուած դէն չ՚գցեց իր ժողովուրդը որին
առաջուց ճանաչեց. կամ թէ չ՚գիտէ՞ք թէ գիրքն
ինչ է ասում Եղիայի համար [illegible]. ի՞նչ-
պէս նա Իսրայէլի դէմ գանգատում է Աստուծոյ
3 առաջին. Տէր, քո մարգարէներին կոտորեցին և
քո սեղանները կործանեցին. և միայն ես մնացի, և
4 իմ անձն որոնում են։ Բայց աստուածային պատ-
գամն ի՞նչ է ասում նորան. Եօթը հազար մարդ
թողի ինձ համար, որ Բահաղին ծունր չ՚դրին։
5 Հէնց այսպէս էլ այս ժամանակումը շնորհքի ընտ-
6 րութեան պէս մի մնացորդ եղաւ։ Բայց եթէ շը-
նորհքով է՝ էլ գործերից չէ. ապա թէ ոչ՝ շնորհքն
էլ շնորհք չի լինիլ. բայց եթէ գործերից է, էլ
7 շնորհք չէ. ապա թէ ոչ՝ գործն էլ գործ չէ։ Ու-
րեմն ի՞նչ. այն որ Իսրայէլը որոնում էր՝ նորան չը
հասաւ, բայց ընտրուածները հասան, և միւսները
8 կուրացան։ ինչպէս գրուած է. Աստուած տուաւ
նորանց թմրութեան հոգի. աչքեր՝ որ չ՚տեսնեն,
և ականջներ՝ որ չ՚լսեն, մինչև այս օրուայ օրը։
9 Եւ Դաւիթն ասում է. Նորանց սեղանը թող ո-
րոգայթ լինի նորանց՝ և որս և գայթակղութիւն՝
10 և հատուցումն նորանց համար. Թող նորանց աչ-
քերը խաւարուին՝ որ չ՚տեսնեն. և նորանց թի-

11 կունքները միշտ ծռեցրու։ Ուրեմն ասում եմ.
Մի՞թէ գլորուեցան՝ որ կործանուին. քաւ լիցի.
բայց նորանց գլորուելովը հեթանոսների փրկու-
12 թիւնն եղաւ՝ որ նախանձի գրգռէ նորանց։ Բայց
եթէ նորանց յանցանքը աշխարհքին մեծութիւն է,
և նորանց նուաստութիւնը հեթանոսների մեծու-
13 թիւն, էլ ո՞րքան աւելի նորանց լիութիւնը։ Բայց
ձեզ հեթանոսներիդ ասում եմ, Որովհետև ես
հեթանոսների առաքեալ եմ՝ իմ պաշտօնը փա-
14 ռաւոր կ'անեմ. Որ գուցէ իմ մարմինը լինողներին
նախանձի գրգռեմ, և նորանցից մի քանիսն ապ-
15 րեցնեմ։ Քանզի եթէ նորանց մերժումը աշխարհքի
հաշտութիւն է, ապա նորանց ընդունելութի՞ւնն
16 ինչ է, եթէ ոչ կենդանութիւն մեռելներից։ Եւ
եթէ երախայրին սուրբ է՝ ապա զանգուածն էլ.
17 և եթէ արմատը սուրբ է՝ ապա ճիւղերն էլ։ Բայց
եթէ ճիւղերիցը ոմանք կոտրուեցան, և դու որ
վայրի ձիթենի էիր՝ նորանցում պատուաստուե-
ցար, և հաղորդ եղար արմատին՝ և ձիթենու պա-
18 րարութեանը, Մի պարծենար այն ճիւղերի դէմ.
բայց եթէ պարծենաս, դու չես արմատը վեր բըռ-
19 նում, այլ արմատը՝ քեզ։ Արդ կ'ասես, Ճիւղերը
20 կոտրուեցան՝ որ ես պատուաստուիմ։ Լաւ. նո-
րանք անհաւատութիւնով կոտրուեցան, և դու
հաւատքով հաստատուեցար. մի ամբարտաւանա-
21 նար, այլ վախեցիր։ Որովհետև եթէ Աստուած
բնական ճիւղերին չ'խնայեց, մի գուցէ քեզ էլ
22 չ'խնայէ։ Արդ տես Աստուծոյ քաղցրութիւնը և
սաստկութիւնը. կործանուածների վերայ սաստ-
կութիւնը, և քեզ վերայ քաղցրութիւնը, եթէ
այն քաղցրութիւնումը կենաս. ապա թէ ոչ դու
23 էլ կ'կտրուիս։ Եւ նորանք էլ՝ եթէ անհաւատու-
թիւնումը չ'կենան՝ կ'պատուաստուին. որովհետև

Աստուած կարող է դարձեալ պատուաստել նո-
24 րանց։ Վասնզի եթէ դու ի բնէ վայրի ձիթենուցը
կտրուեցար՝ և բնութեան դէմ բարի ձիթենու վե-
րայ պատուաստուեցար, էլ ո՞րքան աւելի նորանք
որ բնական են կ'պատուաստուին իրանց ձիթենու
25 վերայ։ Որովհետև չեմ կամենում, եղբարք, որ չը
գիտենաք այս խորհուրդը, որ ձեր անձերումը ի-
մաստուն չ'լինիք, որ մի մասով Իսրայէլին կուրու-
թիւն եղաւ, մինչև որ հեթանոսների լրութիւնը
26 մտնէ։ Եւ այսպէս բոլոր Իսրայէլը կ'ապրի. ինչպէս
գրուած է, թէ Սիօնից Փրկիչը կ'գայ՝ և ամբա-
27 րըշտութիւնները դէն կ'գցէ Յակոբից։ Եւ այս է
իմ ուխտը նորանց հետ, երբոր նորանց մեղքերը
28 վեր կ'առնեմ։ Աւետարանի նկատմամբ նորանք
թշնամի են ձեր պատճառովը, ընտրութեան նը-
29 կատմամբ՝ սիրելի են հայրերի համար։ Որովհետև
Աստուծոյ շնորհքը և կոչումը զղջալ չ'ունի։
30 Վասնզի ինչպէս դուք էլ մի ժամանակ չէիք հա-
ւատում Աստուծուն, և հիմա ողորմութիւն գը-
31 տաք նորանց անհաւատութիւնովը, Այնպէս էլ
նորանք հիմա չ'հաւատացին ձեր ողորմութիւնովը.
32 որ նորանք էլ ողորմութիւն գտնեն։ Որովհետև
Աստուած ամենին անհաւատութեան մէջ արգե-
լեց որ ամենին ողորմի։

33 Ո՜վ Աստուծոյ մեծութեան և իմաստութեան
և գիտութեան խորութիւնը. ինչպէ՜ս անքննելի են
Նորա դատաստանները, և անհասկանալի են Նորա
34 ճանապարհները։ Որովհետև ո՞վ գիտաց Տիրոջ
35 միտքը, կամ ո՞վ եղաւ Նորա խորհրդակից։ Կամ
ո՞վ Նորան առաջուց ի՞նչ բան տուաւ, որ Նորա հա-
36 տուցումն առնէ Նորանից։ Որովհետև Նորանից և
Նորանով և դէպի Նա է ամեն բան. Նորան փառք
յաւիտեան. ամէն։

ԳԼ. ԺԲ

1 Արդ աղաչում եմ ձեզ, եղբարք, Աստուծոյ ո-
ղորմութիւնովը, որ ձեր մարմինները ներկայացնէք
կենդանի, սուրբ և Աստուծոյ ընդունելի պատա-
2 րագ, որ է ձեր բանաւոր պաշտօնը։ Եւ մի կեր-
պարանուիք այս աշխարհքի կերպարանքովը. այլ
նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբը, որ դուք
քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հա-
3 ճելին և կատարեալը։ Որովհետև Աստուծոյ շնորհ-
քովս՝ որ ինձ տրուած է՝ ասում եմ ձեր մէջ ա-
մենին, բան չ'մտածել նորանից աւելի, քան թէ
արժան է մտածել, այլ մտածել պարկեշտ կենալ
այնպէս՝ ինչպէս որ Աստուած ամեն մէկին հաւատ-
4 քի չափը բաժանեց։ Որովհետև ինչպէս մէկ մարմ-
նի մէջ շատ անդամներ ունինք, և այն ամեն ան-
5 դամները միևնոյն գործը չ'ունին, Այնպէս էլ շա-
տերս մէկ մարմին ենք Քրիստոսումը, բայց ամեն
6 մէկը միմեանց անդամ ենք։ Միայն թէ զանազան
պարգևներ ունինք այն շնորհքի պէս որ մեզ տր-
ուած է. թէ մարգարէութիւն՝ հաւատքի չափովը
7 մարգարէանանք. թէ *պաշտօն՝ պաշտօնում լինինք.
թէ մէկը սովորեցնող է՝ վարդապետութեան մէջ
8 լինի. թէ մխիթարող է՝ մխիթարութեան մէջ.
բաշխողը՝ զուարթութիւնով. վերակացու դրուա-
9 ծը՝ ջանքով. ողորմողը՝ յօժարութիւնով։ Սէրն
առանց կեղծաւորութեան. չարն ատեցէք, բարիին
10 հետևեցէք։ Եղբայրսիրութիւնում իրար վերայ
գթած եղէք. պատիւ տալու մէջ իրար առաջ
11 անցէք։ Ջանքի մէջ՝ թոյլ չ'լինիք. հոգովը ջերմե-

---

*Կամ՝ սպասաւորութիւն

12 ռանդ եղէք, Տիրոջը ծառայեցէք։ Յուսով ուրա-
խացէք, նեղութեան համբերեցէք, աղօթքում յա-
13 րատևեցէք։ Սրբերի պիտոյքներին հաղորդ եղէք.
14 հիւրասիրութեան հետևեցէք։ Ձեզ հալածողնե-
15 րին օրհնեցէք, օրհնեցէք և մի անիծէք։ Ուրախա-
ցողների հետ ուրախացէք, և լացողների հետ լա-
16 ցէք։ Իրար վերայ միևնոյն խորհուրդը ունեցէք.
բարձր բաները մի խորհիք. այլ խոնարհների հետ
խոնարհուեցէք. ձեր անձերումը իմաստուն մի լի-
17 նիք։ Մէկին չարի տեղ չար մի հատուցանէք. ա-
մեն մարդկանց առաջին բարի խորհուրդ ունեցէք։
18 Եթէ կարելի է՝ որքան ձեզանից է կախուած՝ ամեն
19 մարդկանց հետ խաղաղութիւն ունեցէք։ Ձեր ան-
ձերի համար վրէժխնդրութիւն մի անէք, սիրելի-
ներ. այլ բարկութեան տեղ տուէք. որովհետև
գրուած է՝ Վրէժխնդրութիւնն իմն է. ես հատու-
20 ցումը կ'տամ, ասում է Տէրը։ Արդ եթէ քո թըշ-
նամին սոված է, հաց տուր նորան. և եթէ ծարաւ
է, ջուր տուր նորան. որովհետև այս անելով կրա-
21 կի կայծեր կ'ժողովես նորա գլխի վերայ։ Մի յաղ-
թուիր չարից, այլ բարիովը յաղթիր չարին։

ԳԼ. ԺԳ

1 Ամեն անձը թող հնազանդէ բարձր իշխանու-
թիւններին. որովհետև չ'կայ իշխանութիւն որ չէ
Աստուածանից. և ներկայ իշխանութիւններն Աս-
2 տուածանից են կարգուած։ Ուրեմն իշխանութեա-
նը հակառակողը Աստուծոյ հրամանին է հակա-
ռակում. և հակառակողներն իրանց անձերին դա-
3 տաստան կ'ընդունին։ Որովհետև իշխանները բարի
գործերի համար վախի պատճառ չեն, այլ չար գոր-
ծերի. կամենո՞ւմ ես որ իշխանութիւնից չ'վախե-
նաս, բարին գործիր, և նորանից գովասանք կ'ըն-

4 դունիս։ Որովհետև սպասաւոր է նա Աստուծոյ
քեզ համար դէպի բարին. ապա եթէ չարը գոր-
ծես՝ վախեցի՛ր. որովհետև զուր տեղը սուրը չէ
կրում. որովհետև նա սպասաւոր է Աստուծոյ՝ վը-
րէժխնդիր բարկութիւն բերելու՝ չարը գործողի
5 համար։ Վասնորոյ պէտք է հնազանդ լինել՝ ոչ
միայն բարկութեան համար, այլ խղճմտանքի հա-
6 մար էլ։ Սորա համար հարկ էլ էք վճարում. ո-
րովհետև նորանք սպասաւորներ են Աստուծոյ որ
7 իսկ այս բանին հոգ են տանում։ Ուրեմն ամենին
վճարեցէք եղած պարտքը. ում որ հարկ պարտ է՝
հարկը, ում որ մաքս՝ մաքսը, ում որ վախ՝ վախը,
ում որ պատիւ՝ պատիւը։

8 Ոչ ովի ոչինչ պարտական չ՚մնաք՝ բացի իրար
սիրելուց. որովհետև ընկերին սիրողը՝ օրէնքը կա-
9 տարել է։ Վասնզի այն Մի շնարը, Մի սպանա-
ները, Մի գողանարը, Մի սուտ վկայերը, և Մի
ցանկանարը, և ուրիշ ինչ պատուիրանք էլ որ
կայ, այս խօսքումն է բովանդակվում, Քո ընկերը
10 սիրիր քո անձի պէս։ Սէրն իր ընկերին չար չի ա-
նիլ. ուրեմն օրէնքի լրումը սէրն է։

11 Եւ այս արէ՛ք իմանալով ժամանակը. որ ժամ է
արդէն քնիցն զարթնել. որովհետև հիմա մեզ ա-
ւելի մօտ է փրկութիւնը՝ քան թէ այն ժամանակ՝
12 որ հաւատացինք։ Գիշերն անցաւ գնաց, և ցերե-
կը մօտեցել է. ուրեմն դէն գցենք խաւարի գոր-
13 ծերը, և հագնենք լոյսի զէնքերը։ Ինչպէս ցերե-
կումը՝ պարկեշտութեամբ ման գանք. ոչ թէ
անառակութիւններով և արբեցութիւններով և
խառն անկողիններով և պղծութիւններով, ոչ հա-
14 կառակութիւնով և ոչ նախանձով։ Բայց Տէր Յի-
սուս Քրիստոսին հագէք. և մարմնի համար խնամք
մի տանիք դէպի ցանկութիւն։

ԳԼ. ԺԴ

1 Բայց հաւատքի մէջ տկար լինողին ընդունեցէք
2 առանց կարծիքների վերայ վիճելու։ Մէկը հաւա-
տում է՝ թէ ամեն բան կարող է ուտել. բայց
3 տկարը բանջար է ուտում։ Ուտողը չ՚անարգէ չ՚ու-
տողին. և չ՚ուտողը չ՚դատէ ուտողին. որովհետև
4 Աստուած ընդունեց նորան. Դու ո՞վ ես՝ որ ուրիշի
ծառային դատում ես. իր Տիրոջ համար է կանգ-
նում կամ ընկնում. բայց կ՚կանգնի, որովհետև
5 Աստուած կարող է կանգնեցնել նորան։ Մէկը
օրն օրից աւելի է համարում, իսկ միւսն ամեն օր
մէկ է համարում. ամեն մէկը թող իր միտքը հա-
6 ճեցնէ։ Օրին մտիկ անողը, Տիրոջ համար է մտիկ
անում. և օրին մտիկ չ՚անողը, Տիրոջ համար չէ
մտիկ անում. և ուտողը Տիրոջ համար է ուտում,
որովհետև Աստուածանից գոհանում է. և չ՚ու-
տողը Տիրոջ համար չէ ուտում, և Աստուածանից
7 գոհանում է։ Որովհետև մեզանից ոչ ով ինքն ի-
րան համար չէ ապրում, և ոչ ով ինքն իրան հա-
8 մար չէ մեռնում։ Որովհետև եթէ ապրենք՝ Տի-
րոջ ենք ապրում, և եթէ մեռնենք՝ Տիրոջ ենք
մեռնում. ուրեմն թէ ապրենք և թէ մեռնենք՝
9 Տիրոջն ենք։ Վասնզի նոյն իսկ նորա համար էլ
Քրիստոս մեռաւ և կենդանացաւ՝ որ մեռելների և
10 կենդանիների վերայ տիրէ։ Բայց դու ի՞նչու համար
ես դատում քո եղբօրը, կամ ի՞նչու ես քո եղ-
բօրն անարգում. որովհետև ամենս Քրիստոսի
11 ատեանի առաջին պիտի կանգնենք։ Որովհետև
գրուած է՝ Ես կենդանի եմ, ասում է Տէրը. որ
ամեն ծունկ ինձ պիտի կրկնուի և ամեն լեզու
12 խոստովան լինի Աստուծուն։ Ուրեմն մեզանից ամեն

մէկն իր անձի համար պիտի հաշիւ տայ Աստու-
13 ծուն։ Այսուհետեւ այլեւս իրար չ՚դատենք. այլ
աւելի այս դրէք ձեր մտքումը, որ եղբօր գլորում
14 կամ գայթակղութիւն չ՚դնէք։ Գիտեմ եւ հաս-
տատ իմանում եմ Տէր Յիսուսումը, որ ոչ մի բան
պիղծ չէ ինքն իրանով. բայց ով որ մի բան պիղծ
15 է համարում, նորա համար պիղծ է։ Բայց եթէ
կերակուրի պատճառով քո եղբայրը տրտմում է,
դու այլ եւս նորա հետ սիրով չես վարվում, քո
կերակուրովը մի կորցնիր նորան, որի համար Քրիս-
16 տոսը մեռաւ։ Արդ ձեր բարի բանը չ՚հայհոյուի։
17 Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնն ուտելիք եւ
խմելիք չէ. այլ արդարութիւն եւ խաղաղութիւն
18 եւ ուրախութիւն Սուրբ Հոգովը։ Վասնզի նա որ
սորանցում Քրիստոսին ծառայում է, Աստուծուն
19 հաճելի է, եւ մարդկանց ընդունելի։ Ապա ուրեմն
խաղաղութեան եւ միմեանց շինութեան բաների
20 ետեւից գնանք։ Կերակուրի պատճառով մի քան-
դիր Աստուծոյ գործը. ամեն բան մաքուր է. բայց
չար է այն մարդի համար՝ որ գայթակղութիւն
21 տալով է ուտում։ Լաւ է միս չ՚ուտել եւ գինի
չ՚խմել, եւ այն բանը չ՚անել՝ որ նորանով քո եղ-
բայրը գլորվում է կամ գայթակղում է կամ տը-
22 կարանում է։ Դու հաւա՞տք ունիս. քեզ համար
ունեցիր Աստուծոյ առաջին. երանի նորան՝ որ իր
անձը չ՚դատապարտէ նորանով, որ ընդունում է։
23 Իսկ նա որ խղճմտանք է անում, եթէ ուտէ դա-
տապարտուած է, որովհետեւ հաւատքից չէ. եւ
ամեն ինչ որ հաւատքից չէ, մեղք է։

ԳԼ. ԺԵ

1 Մենք որ զօրաւոր ենք՝ պէտք է տկարների տկա-
րութիւնը վեր առնենք, եւ միայն մեր անձերին

2 հաճոյ չ՚լինինք։ Ապա մեզանից ամեն մէկը թող
հաճոյ լինի ընկերին դէպի բարին՝ շինութեան հա-
3 մար։ Որովհետեւ Քրիստոսն էլ ոչ թէ իր անձին
հաճոյ եղաւ, այլ ինչպէս գրուած է, Քեզ նա-
4 խատողների նախատինքներն ինձ վերայ ընկան։ Նո-
րա համար ինչ որ գրուեցաւ՝ մեր սովորելու հա-
մար գրուեցաւ, որ համբերութեամբ եւ գրքերի
5 մխիթարութեամբը յոյսն ունենանք։ Եւ համբե-
րութեան եւ մխիթարութեան Աստուածը տայ ձեզ
միենոյն բանը խորհել իրար հետ Քրիստոս Յիսու-
6 սի կամքի համեմատ։ Որ միաբան մէկ բերանով
փառաւորէք Աստուծուն, եւ մեր Տէր Յիսուս Քրիս-
7 տոսի Հօրը։ Վասնորոյ իրար ընդունեցէք, ինչպէս
Քրիստոս էլ մեզ ընդունեց Աստուծոյ փառքի
8 համար։ Բայց ասում եմ թէ Յիսուս Քրիստոսը
թլփատութեան սպասաւոր եղաւ Աստուծոյ ճըշ-
մարտութեան համար, որ հայրերի խոստումները
9 հաստատէ։ Բայց հեթանոսները ողորմութեան հա-
մար փառաւորում են Աստուծուն, ինչպէս գըր-
ուած է Բէ Սորա համար կ՚գոհանամ քեզանից
*հեթանոսների մէջ, եւ քո անունին սաղմոս կ՚ա-
10 սեմ։ Եւ դարձեալ ասում է. Ուրախացէք, ով
11 հեթանոսներ, նորա ժողովրդի հետ։ Եւ դարձեալ
Օրհնեցէք Տիրոջը, ամեն հեթանոսներ, եւ գովեցէք
12 նորան, ամեն ժողովուրդներ։ Եւ դարձեալ Եսա-
յիան ասում է. Յեսսէի արմատը կ՚լինի, եւ նա որ
հեթանոսների համար իշխան կ՚կանգնի, նորան յոյս
13 կ՚դնեն հեթանոսները։ Եւ յոյսի Աստուածը լեցնէ
ձեզ ամեն ուրախութիւնով եւ խաղաղութիւնով,
հաւատալու մէջ, որ յուսով աւելանաք Սուրբ
Հոգու զօրութիւնովը։

*կամ՝ ազգերի

14 Եւ ես ինքս էլ, եղբարքս, ձեզ համար հաս-
տատ եմ, որ դուք լիքն էք բարութիւնով, լեց-
ուած ամեն գիտութիւնով, որ կարող էք իրար
15 էլ խրատել։ Բայց համարձակեցի, եղբարք, փոքր
ի շատէ գրել ձեզ. իբր թէ ձեզ յիշեցնեմ Աստ-
ուածանից ինձ տրուած այն շնորհքի պատճառովը.
16 Որ ես Յիսուս Քրիստոսի սպասաւորն եմ հեթա-
նոսների մէջ. Աստուծոյ աւետարանը մատակարա-
րող, որ հեթանոսների պատարագն ընդունելի լի-
17 նի՝ Սուրբ Հոգովը սրբուած։ Արդ պարծանք ունիմ
18 Քրիստոս Յիսուսին Աստուծոյ առաջին։ Որովհետև
ես չեմ համարձակիլ մի բան խօսել՝ որը Քրիստոս
չ'գործեց ինձանով՝ հեթանոսները հնազանդեցնելու
19 համար՝ խօսքով և գործքով, Նշանների և հրաշք-
ների զօրութիւնով, Աստուծոյ Հոգիի զօրութիւ-
նով. այնպէս որ ես Երուսաղէմից սկսած պտոյտ
տալով մինչև Լիւրիկացիների կողմերը Քրիստոսի
20 աւետարանովը լցրել եմ։ Այնպէս ջանք արի ա-
ւետարանը քարոզելու, ոչ թէ որտեղ որ Քրիս-
տոսի անունն անուանուած էր, որ մի գուցէ ու-
րիշի հիման վերայ շինեմ. այլ ինչպէս որ գրուած
21 է. Թէ որոնց չէ պատմուած նորա համար՝ կ'տես-
22 նեն, և որոնք որ չեն լսել՝ միտք կ'անեն։ Սորա հա-
մար էլ շատ անգամ արգիլուեցայ ձեզ մօտ գա-
23 լուց։ Բայց հիմա որ այս կողմերումս այլ ևս տեղ
չ'ունիմ, և շատ տարուց հետէ խիստ փափաք ու-
24 նիմ ձեզ մօտ գալու, Երբ որ անցկենամ Սպա-
նիա, կ'գամ ձեզ մօտ. յոյս ունիմ որ անցկենա-
լու ժամանակս տեսնեմ ձեզ. և ձեզանից ճանա-
պարհ գցուիմ այնտեղ, եթէ առաջ մի քիչ ձե-
25 զանով լիանամ։ Բայց հիմա Երուսաղէմ եմ գը-
26 նում սուրբերին ծառայութիւն անելու։ Որովհե-
տև Մակեդոնացիք և Աքայեցիք հաճեցան մի հա-

ղորդութիւն անել աղքատ սրբերին որ Երուսա-
27 ղէմումն են. հաճեցան, նոյն իսկ պարտական էլ
են նորանց. որովհետև եթէ հեթանոսները նորանց
հոգևոր բարիքներին մասնակից եղան, պէտք է՝ որ
28 մարմնական բաներում էլ ծառայեն նորանց։ Արդ
այս որ կատարեմ և նորանց պտուղն իր տեղը
29 հասցնեմ, կ'անցնեմ Սպանիա ձեր միջովը։ Եւ
գիտեմ որ երբոր ձեզ մօտ գամ, Քրիստոսի աւե-
տարանի առատ օրհնութիւնովը կ'գամ։
30 Եւ աղաչում եմ ձեզ, եղբարք, մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի ձեռովը և Հոգու սիրովը, որ ինձ
պատերազմակից լինիք՝ ինձ համար աղօթքներ ա-
31 նելով դէպի Աստուած. Որ ազատուիմ այն ան-
հնազանդներիցը որ Հրէաստանումն են. և իմ ծա-
ռայութիւնը որ Երուսաղէմումն անելու եմ՝ սուր-
32 բերին ընդունելի լինի. Որ ուրախութիւնով ձեզ
մօտ գամ Աստուծոյ կամքովը, և ձեզ հետ հան-
33 գիստ առնեմ։ Եւ խաղաղութեան Աստուածը ձեր
ամենի հետ լինի. ամէն։

ԳԼ. ԺԶ

1 Յանձնում եմ ձեզ մեր Փիբէ քոյրը, որ սպասա-
2 ւոր է Կենքրայի եկեղեցու։ Որ նորան ընդունէք
Տէրով. ինչպէս սուրբերին արժան է. և հոգ տա-
նիք նորան ինչ բան որ ձեզանից պէտք ունենայ,
որովհետև ինքն էլ շատերին խնամք է տարել, և
3 իսկ ինձ էլ։ Բարև տուէք Պրիսկիղային և Ակիւ-
ղասին՝ իմ գործընկերներին Քրիստոս Յիսուսումը.
4 Որ իմ անձի տեղ իրանց վիզն առաջարկեցին, ո-
րոնցից ոչ միայն ես եմ շնորհակալ՝ այլ և հեթա-
5 նոսների բոլոր եկեղեցիները. Եւ նորանց տանը լի-
նող եկեղեցուն. բարև տուէք Եպենետին՝ իմ սի-

րելուն որ Աքայեայի անդրանիկն է 'ի Քրիստոս ։
6 Բարեւ տուէք Մարիամին՝ որ շատ աշխատեց մեր
7 վերայ ։ Բարեւ տուէք Անդրոնիկոսին եւ Յունիային՝
իմ ազգականներին, եւ գերութեանս ընկերներին.
որ առաքեալների մէջ երեւելի են՝ որ ինձանից ա-
8 ռաջ են եղել Քրիստոսումը ։ Բարեւ տուէք Ամպ-
9 ղիասին իմ սիրելուն Տէրումը ։ Բարեւ տուէք Ուր-
բանոսին՝ մեր գործակցին Քրիստոսումը, եւ Ստա-
10 քէսին իմ սիրելուն ։ Բարեւ տուէք Ապեղեսին՝ որ
11 ընտիր է Քրիստոսումը ։ Բարեւ տուէք նորանց՝ որ
Արիստաբուղոսի տանիցն են. բարեւ տուէք Հերով-
դիոնին՝ իմ ազգականին. բարեւ տուէք նորանց, որ
12 Նարկիսէի տանիցն են Տէրումը։ Բարեւ տուէք Տրի-
փանոսին եւ Տրիփոսին՝ որ աշխատաւորներ են Տէ-
րումը. բարեւ տուէք Պերսիդէ սիրելուն՝ որ շատ
13 աշխատեց Տէրումը ։ Բարեւ տուէք Ռուփոսին՝ որ
14 ընտիր է Տէրումը. եւ նորա եւ իմ մօրը ։ Բարեւ
տուէք Ասինկրիտոսին, Փղեգոնտին, Երմասին,
Պատրոբասին, Երմեսին, եւ եղբայրներին՝ որ նորանց
15 հետ են։ Բարեւ տուէք Փիղողոգին եւ Յուլիային եւ
Ներէոսին եւ նորա քրոջը եւ Ողիմպիային եւ բոլոր
16 սուրբերին՝ որ նորանց հետ են։ Բարեւ տուէք իրար
սուրբ համբոյրով. բարեւ են տալիս ձեզ Քրիստոսի
բոլոր եկեղեցիները ։
17 Աղաչում եմ ձեզ, եղբարք, որ մտիկ տաք նո-
րանց՝ որ հերձուածներ եւ գայթակղութիւններ են
շինում այն վարդապետութիւնիցը դուրս՝ որ դուք
18 սովորեցիք՝ եւ հեռու քաշուեցէք նորանցից ։ Որով-
հետեւ այդպիսիները մեր Տէր Քրիստոսին չեն ծա-
ռայում, այլ իրանց որովայնին. եւ քաղցր խօսքե-
րով եւ գովութիւնով խաբում են անմեղների
19 սրտերը ։ Որովհետեւ ձեր հնազանդութիւնն ամենի
ականջը հասաւ. եւ սորա համար ուրախ եմ ձեզ

համար ։ միայն ուզում եմ՝ որ դուք իմաստուն
լինէք դէպի բարին՝ եւ միամիտ դէպի չարը ։
20 Եւ խաղաղութեան Աստուածը խորտակէ սա-
տանային ձեր ոտների տակ շուտով. մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի շնորհքը լինի ձեզ հետ. ամէն ։
21 Բարեւ են տալիս ձեզ Տիմոթէոսը իմ գործընկե-
րը, եւ Ղուկիոսը եւ Յասոնը եւ Սոսիպատրոսը իմ
22 ազգականները ։ Բարեւ եմ տալիս ձեզ ես՝ Տեր-
23 տիոս, որ այս թուղթը գրեցի Տէրումը ։ Բարեւ է
տալիս ձեզ Գայիոսը՝ իմ եւ բոլոր եկեղեցու հիւ-
րընկալը. բարեւ է տալիս ձեզ Երաստոսը՝ քաղա-
24 քիս *հոգատարը, եւ Կուարտոս եղբայրը ։ Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեր ամենի
հետ. ամէն ։
25 Բայց նորան, որ կարող է ձեզ հաստատ պահել
իմ աւետարանի եւ Յիսուս Քրիստոսի քարոզու-
թեան համեմատ, այն խորհրդի յայտնութեանը
համեմատ որ յաւիտենական ժամանակներից լուռ
26 պահուած էր, Բայց հիմա մարգարէական գրքերով
յայտնուեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամա-
նին պէս, եւ հաւատքին հնազանդելու համար բո-
27 լոր հեթանոսների մէջ ճանաչուեցաւ. Մի միայն
իմաստուն Աստուծուն, Յիսուս Քրիստոսի ձեռովը,
Նորան փառք յաւիտեանս ։ Ամէն ։

*կամ՝ գանձապետը

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի կանչուած առաքեալ
2 Աստուծոյ կամքովը, և Սօսթենէս եղբայրը. Աստու-
ծոյ եկեղեցուն, որ Կորնթոսումն է, Յիսուս Քրի-
ստոսումը սրբուածներին՝ կանչուած սուրբերին՝ այն
ամենի հետ, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անու-
նը կանչում են ամեն տեղ, իրանցը և մերը՝
3 Շնորհք լինի ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած
մեր Հօրիցը՝ և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
4 Ամեն ժամանակ գոհանում եմ իմ Աստուածա-
նից ձեր մասին, Աստուծոյ այն շնորհքի համար՝ որ
5 տրուած է ձեզ Քրիստոս Յիսուսումը. Որ ամեն
բանի մէջ հարստացաք նորանով՝ ամեն խօսքով և
6 ամեն գիտութիւնով։ Ինչպէս Քրիստոսի վկայու-
7 թիւնը հաստատուեցաւ ձեր մէջ։ Որ դուք չ'պա-
կասուիք ոչ մի շնորհքով մեր Տէր Յիսուս Քրի-
8 ստոսի յայտնութեանը սպասելով. Որ և կ'հաստա-
տէ ձեզ մինչև վերջը՝ անմեղադրելի մեր Տէր Յի-
9 սուս Քրիստոսի օրումը։ Հաւատարիմ է Աստ-
ուած՝ որի ձեռով կանչուեցաք դէպի նորա Որդու
մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաղորդութիւնը։

10 Աղաչում եմ ձեզ, եղբարք, մեր Տէր Յիսուս
Քրիստոսի անունովը, որ ամենդ միևնոյն խօսքն
ունենաք, և երկպառակութիւններ չ'լինին ձեր
մէջ. այլ միևնոյն մտքի և միևնոյն կարծիքի մէջ
11 հաստատուած լինիք։ Որովհետև ձեր մասին ինձ
լուր հասաւ, եղբարք, Քղոէի ընտանիքիցը, թէ
12 հակառակութիւններ կան ձեզանում։ Եւ այս եմ
ասում՝ որ ձեզանից ամեն մէկն ասում է. Ես Պօ-
ղոսեան եմ, և Ես Ապողոսեան, և Ես Կեփասեան,
13 և՝ Ես Քրիստոսեան։ Բաժանուա՞ծ է Քրիստոսը.
մի՞թէ Պօղոսը խաչուեցաւ ձեզ համար՝ կամ Պօ-
14 ղոսի՞ անունովը մկրտուեցաք։ Գոհանում եմ Աս-
տուածանից որ ես ձեզանից ոչ մէկին չ'մկրտեցի.
բայց միայն Կրիսպոսին և Գայիոսին. որ մէկը չ'ա-
15 սէ, թէ իմ անունովը մկրտեցի։ (16) Եւ Ստեփա-
նի տունն էլ մկրտեցի. էլ չ'գիտեմ, թէ մի ու-
րիշն էլ մկրտեցի։
17 Որովհետև Քրիստոս չ'ուղարկեց ինձ մկրտելու,
այլ աւետարանը քարոզելու. ոչ թէ խօսքի իմաս-
տութեամբ, որպէսզի ունայն չ'լինի Քրիստոսի խա-
18 չը։ Որովհետև խաչի խօսքը կորածների համար յի-
մարութիւն է, բայց մեզ փրկուածներիս համար
19 Աստուծոյ զօրութիւն է։ Որովհետև գրուած է.
Իմաստունների իմաստութիւնը կ'կորցնեմ, և խե-
20 լօքների խորհուրդները կ'անարգեմ։ Ո՞ւր է իմաս-
տուն, ո՞ւր է դպիր, ո՞ւր է այս աշխարհքի քննող.
չէ՞ որ Աստուած այս աշխարհքի իմաստութիւնը
21 յիմարացրեց։ Ուրեմն՝ որովհետև Աստուծոյ իմաս-
տութեան մէջ աշխարհքը իմաստութիւնով չ'ճա-
նաչեց Աստուծուն, Աստուած հաճեց որ քարոզու-
թեան յիմարութիւնովը ապրեցնէ հաւատացեալ-
22 ներին։ Եւ որովհետև Հրէաները նշան են ուզում,
23 և Յոյներն իմաստութիւն են խնդրում. Մենք էլ

քարոզում ենք խաչեալ Քրիստոսը, Հրէաներին
24 գայթակղութիւն և Յոյներին յիմարութիւն։ Բայց
այն կանչուած Հրէաներին և Յոյներին, Քրիստոսը
քարոզում ենք Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ
25 իմաստութիւն։ Վասնզի Աստուծոյ յիմարն աւելի
իմաստուն է քան թէ մարդիկ և Աստուծոյ տկարն
26 աւելի զօրաւոր է քան թէ մարդիկ։ Հէնց ձեր
կոչումին մտիկ արէք, եղբայրներ, որ ոչ թէ շատ
իմաստուններ մարմնի կողմանէ, և ոչ թէ շատ զօ-
27 րաւորներ, և ոչ թէ շատ ազնուականներ. Այլ
այս աշխարհքի յիմարներին Աստուած ընտրեց՝ որ
ամաչեցնէ իմաստուններին. և աշխարհքիս տկար-
ներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ զօրաւորնե-
28 րին։ Եւ աշխարհքիս անտոհմներին և անարգուած-
ներին Աստուած ընտրեց՝ և ոչինչներին, որ մի բան
29 լինողներին ոչնչացնէ։ Որպէսզի ոչ մի մարմին չը
30 պարծենայ Նորա առաջին։ Եւ դուք Նորանից էք
Յիսուս Քրիստոսումը՝ որ Աստուածանից մեզ հա-
մար եղաւ իմաստութիւն, և արդարութիւն և
31 սրբութիւն և փրկութիւն։ Որ ինչպէս գրուած է,
Նա որ պարծենում է՝ թող Տէրովը պարծենայ։

ԳԼ. Բ

1 Եւ ես էլ, եղբարք, որ ձեզ մօտ եկայ, ոչ թէ
խօսքի կամ իմաստութեան գերազանցութիւնով
եկայ Աստուծոյ վկայութիւնը ձեզ պատմելու՝
2 Որովհետև միտքս չէի դրած՝ մի ուրիշ բան գիտե-
նալ ձեր մէջ բայց միայն Յիսուս Քրիստոսին՝ և
3 այն էլ խաչուածին։ Եւ ես տկարութիւնով և
4 վախով և շատ դողով եղայ ձեզ մօտ։ Եւ իմ
խօսքը և քարոզութիւնը ոչ թէ մարդկային իմաս-
տութեան պատիր խօսքերովը եղաւ, այլ Հոգու

5 և զօրութեան ապացուցութեամբը. Որ ձեր հա-
ւատքը մարդկանց իմաստութիւնով չ՛լինի՝ այլ
6 Աստուծոյ զօրութիւնովը։ Բայց իմաստութիւն ենք
խօսում կատարեալների հետ, և ոչ թէ այս աշ-
խարհքի իմաստութիւնը, և ոչ էլ այս աշխարհքի
7 իշխաններինը՝ որ պիտի խափանուին։ Այլ Աստու-
ծոյ ծածուկ իմաստութիւնն ենք խօսում խորհրդ-
ով, որ Աստուած յաւիտենից առաջ սահմանեց
8 նորան մեր փառքի համար։ Որն այս աշխարհքի
իշխաններիցն ոչ ով չ՛ճանաչեց. քանզի եթէ ճա-
նաչած լինէին՝ փառքի Տիրոջը չէին խաչ հանիլ.
9 Այլ ինչպէս գրուած է. Ինչ որ աչք չ՛տեսաւ և
ականջ չ՛լսեց և մարդի սիրտ չ՛ընկաւ, այն պատ-
10 րաստեց Աստուած իրան սիրողների համար։ Բայց
մեզ յայտնեց Աստուած իր Հոգովը. որովհետև
Հոգին ամեն բաները քննում է, և Աստուծոյ խորքն
11 էլ։ Որովհետև մարդկանցից ո՞վ գիտէ մարդի բա-
ները եթէ ոչ մարդի հոգին, որ նորանում է. այն-
պէս էլ Աստուծոյ բաներն ոչ ով չ՛գիտէ, եթէ ոչ
12 Աստուծոյ Հոգին։ Եւ մենք ոչ թէ այս աշխարհքի
հոգին առանք, այլ այն Հոգին՝ որ Աստուածանից
է. որ ճանաչենք այն բաները որ Աստուածանից
13 տրուեցաւ մեզ։ Որն էլ խօսում ենք՝ ոչ թէ
մարդկային իմաստութեան սովորած խօսքերով,
այլ Սուրբ Հոգու սովորեցրածներովը՝ հոգևորներն
14 հոգևորների հետ համեմատելով։ Բայց շնչաւոր
մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում.
որովհետև նորանք յիմարութիւն են նորա համար,
և չէ կարող էլ գիտենալ՝ որովհետև հոգևոր կեր-
15 պով են քննվում։ Բայց հոգևոր մարդը ամեն բան
16 քննում է, և ինքը ոչ ոքից չէ քննվում։ Որովհե-
տև ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, որ բան սովորեցնէ
Նորան. բայց մենք Քրիստոսի միտքն ունինք։

ԳԼ. Գ

1 Ես էլ, եղբարք, չ'կարողացայ ձեզ հետ խօսել
ինչպէս հոգեւորների հետ, այլ ինչպէս մարմնաւոր-
ների հետ, ինչպէս մանուկների հետ Քրիստոսու-
2 մը. Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թէ կերակուր. ո-
րովհետև տակաւին չէիք կարող, այլ հիմա էլ
3 դեռ չէք կարող։ Որովհետև տակաւին մարմնաւոր
էք. վասնզի տակաւին նախանձ և կռիւ և բաժա-
նումներ կան ձեզանում. չէ՞ որ մարմնաւոր էք և
4 մարդկօրէն էք վարվում։ Որովհետև երբոր մէկն
ասէ, Ես Պօղոսեան եմ, և միւսը Ես Ապողոսեան,
5 չէ՞ որ մարմնաւոր էք։ Արդ ո՞վ է Պօղոսը կամ
ո՞վ է Ապողոսը. միայն պաշտօնեաներ, որոնց ձե-
ռովը հաւատացիք. և ամեն մէկին՝ ինչպէս Տէրը
6 տուաւ։ Ես տնկեցի, Ապողոսը ջուր տուաւ, բայց
7 Աստուած մեծացրեց։ Ուրեմն ոչ տնկողն է մի
բան, ոչ էլ ջուր տուողը. բայց աճեցնող Աստ-
8 ուածը։ Տնկողը և ջուր տուողը մէկ են. բայց ա-
մեն մէկն իր վարձքը կ'առնէ իր աշխատանքի չա-
9 փովը։ Որովհետև մենք Աստուծոյ գործակիցներ
ենք. դուք Աստուծոյ մշակութիւնը՝ Աստուծոյ շին-
10 ուածն էք։ Աստուծոյ շնորհքի չափովը՝ որ ինձ
տրուած է, իմաստուն ճարտարապետի պէս հիմք
դրի. բայց ուրիշը շինում է. միայն թէ ամեն մէկը
11 մտիկ տայ թէ ինչպէս է շինում։ Որովհետև ոչ
ով ուրիշ հիմք չէ կարող դնել՝ քան թէ որ դըր-
12 ուած է, որ է Յիսուս Քրիստոսը։ Եթէ մէկն այս
հիման վերայ շինէ ոսկի, արծաթ, ազնիւ քարեր,
13 փայտ, խոտ, եղէգն. Ամեն մէկի գործը պիտի
յայտնուի. որ օրը կ'երևեցնէ. որովհետև կրակով
պիտի յայտնուի. և ամեն մէկի գործը թէ ինչպէս

14 է, կրակը կ'փորձէ։ Եթէ մէկի գործը՝ որ շինեց՝
15 հաստատ կենայ, վարձք կ'առնէ. Եւ եթէ մէկի
գործն այրուի՝ վնաս կ'քաշէ բայց ինքը կ'ապրէ. այլ
16 այնպէս՝ ինչպէս թէ կրակով։ Չ'գիտէ՞ք որ դուք
Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ Հոգին բնակուած
17 է ձեզանում։ Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ա-
պականէ, նորան էլ Աստուած կ'ապականէ. որով-
հետև Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք։
18 Ոչ ով իր անձը չ'խաբէ. եթէ ձեզանից մէկը
կարծում է թէ իմաստուն է այս աշխարհքումը,
19 Թող նա յիմար լինի՝ որ իմաստուն լինի։ Որովհե-
տև այս աշխարհքի իմաստութիւնը յիմարութիւն
է Աստուծոյ առաջին. վասնզի գրուած է՝ Բէ ի-
մաստուններին բռնում է իրանց խորագիտութեան
20 մէջ։ Եւ դարձեալ Բէ Տէրը ճանաչում է իմաս-
21 տունների մտածմունքները, որ ունայն են։ Ուրեմն
22 ոչ ով չ'պարծենայ մարդկանցով. Որովհետև ամեն
բան ձերն է. թէ Պօղոսը, թէ Ապողոսը, թէ Կե-
փասը, թէ աշխարհքը, թէ կեանքը, թէ մահը,
թէ ներկայ բաները, թէ գալու բաները, ամեն
23 բան ձերն է։ Դուք Քրիստոսինը և Քրիստոսը Աս-
տուծունը։

ԳԼ. Դ

1 Թող ամեն մարդ այսպէս համարէ մեզ՝ ինչպէս
Քրիստոսի պաշտօնեաներ և Աստուծոյ խորհուրդ-
2 ների տնտեսներ։ Արդ տնտեսների մէջ այն է պա-
3 հանջվում որ մէկը հաւատարիմ գտնուի։ Բայց
ինձ համար ոչինչ բան է՝ որ ձեզանից դատուիմ,
կամ մարդկային *դատաստանից. այլ ես իմ անձն

*Յունարէնն՝ օրից։

4 էլ չեմ դատում։ Որովհետև իմ անձի համար ես
բան չ'գիտեմ. բայց սորանով չեմ արդարանում.
5 որովհետև ինձ դատողը Տէրն է։ Ուրեմն ժամանա-
կից առաջ մի դատէք. մինչև Տէրը գայ՝ որ խա-
ւարի ծածուկ բաները կ'բերէ էլ լոյսի մէջ, և
սրտերի խորհուրդները կ'յայտնէ, և այն ժամանակ
ամեն մէկին գովասանք կ'լինի Աստուածանից։
6 Այս բանը, եղբարք, իմ անձի և Ապողոսի վե-
րայ օրինակ բերի ձեզ համար. որ մեղանից սովո-
րէք գրուածիցն աւելի բան չ'խորհել. որ չ'լինի թէ
մէկը մէկի վերայ հպարտանայ ընկերի պատճառա-
7 վը։ Որովհետև ո՞վ է քեզ որոշում. ի՞նչ ունիս
դու՝ որ չես առել. և եթէ առել ես, ի՞նչու ես
պարծենում չ'առածի պէս։
8 Արդէն կշտացած էք, արդէն հարստացաք, ա-
ռանց մեզ թագաւորեցիք և երանի թէ թագա-
ւորէիք, որ մենք էլ ձեզ հետ թագաւորէինք։
9 Որովհետև ինձ այսպէս է երևում՝ թէ Աստուած
մեզ առաքեալներիս շատ յետին արաւ՝ մահա-
պարտների պէս. որովհետև աշխարհքի տեսարան
10 եղանք, հրեշտակների էլ՝ մարդկանց էլ։ Մենք
յիմար ենք Քրիստոսի համար, իսկ դուք՝ իմաս-
տուն Քրիստոսումը. մենք տկար՝ իսկ դուք զօրա-
ւոր. դուք փառաւորուած իսկ մենք անարգուած,
11 Մինչև այս օրուայ ժամը սովում էլ ենք՝ ծարա-
ւում էլ, մերկ էլ գնում ենք և գլխներս զարկը-
12 վում էլ է և աստանդական ման ենք գալիս։ Եւ
աշխատում ենք մեր ձեռքերովը գործելով. բամ-
բասում են մեզ, իսկ մենք օրհնում ենք. հալա-
13 ծում են և մենք համբերում ենք. հայհոյում են,
մենք աղաչանք ենք անում. ինչպէս աւելուք և
ղանք աշխարհքին՝ ամենի ջնջոց լինելով մինչև հի-
14 մա։ Ոչ թէ ձեզ ամաչեցնելով եմ այս գրում,

այլ ինչպէս իմ սիրելի որդիներին խրատում եմ։
15 Որովհետև թէ և տասը հազար վարդապետներ ու-
նենաք Քրիստոսումը, բայց ոչ թէ շատ հայրեր.
վասնզի Քրիստոս Յիսուսում ես ծնեցի ձեզ աւե-
16 տարանովը։ Ուրեմն աղաչում եմ ձեզ՝ որ ինձ
17 նմանող լինիք։ Նորա համար Տիմոթէոսին ուղար-
կեցի ձեզ մօտ, որ իմ սիրելի և հաւատարիմ որ-
դին է Տէրով. որ ձեզ յիշեցնէ իմ ճանապարհ-
ները՝ որ Քրիստոսումն են, ինչպէս ամեն տեղ ա-
18 մեն եկեղեցիներումը սովորեցնում եմ։ Մի քանի-
սը հպարտացել են իբր թէ ես չեմ գալ ձեզ մօտ։
19 Բայց շուտով կ'գամ ձեզ մօտ, եթէ Տէրը կամե-
նայ. և կ'հասկանամ ոչ թէ հպարտացածների
20 խօսքերը, այլ զօրութիւնը։ Որովհետև Աստուծոյ
արքայութիւնը ոչ թէ խօսքով է՝ այլ զօրութիւ-
21 նով։ Ի՞նչպէս էք կամենում, գաւազանո՞վ գամ
ձեզ մօտ, թէ սիրով և հեզութեան հոգով։

Գլ. Ե

1 Առհասարակ լսվում է ձեր մէջ պոռնկութիւն,
և այնպիսի պոռնկութիւն՝ որ հեթանոսների մէջ
էլ չ'կայ, այնպէս որ մէկն իր հօր կինն ունենայ։
2 Եւ դուք հպարտացած էք՝ և աւելի սուգ չէ՞ք
մնում՝ որ ձեր միջիցը վեր առնուի նա, որ այն
3 բանը գործեց։ Որովհետև ես՝ թէ և մարմնով բա-
ցակայ եմ բայց հոգով ներկայ՝ արդէն վճռել եմ
ներկայ լինողի պէս՝ նորան, որ այնպիսի բան գոր-
4 ծեց, Մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը՝ ձեր
և իմ հոգու մէկտեղ ժողովուելու ժամանակ մեր
5 Տէր Յիսուս Քրիստոսի զօրութեան հետ, Այնպի-
սին մատնել սատանային՝ մարմինը կորչելու համար.
6 որ հոգին ապրի մեր Տէր Յիսուսի օրումը։ Ձեր

պարծանքը լաւ չէ. չ'գիտէ՞ք որ մի փոքր խմորը
7 բոլոր զանգուածը խմորեցնում է։ Դէն գցեցէք հին
խմորը, որ նոր զանգուած լինէք, ինչպէս որ ան-
խմոր էք. որովհետեւ մեր զատիկը մորթուեցաւ
8 մեզ համար՝ Քրիստոսը։ Ուստի տօն կատարենք
ոչ թէ հին խմորով, և ոչ էլ չարութեան և
անզգամութեան խմորովը, այլ մաքրութեան և
9 ճշմարտութեան չ'խմորուածովը։ Գրեցի ձեզ թղ-
10 թումը՝ չ'խառնուել պոռնիկների հետ։ Եւ ոչ թէ
ամենեւին այս աշխարհքի պոռնիկների հետ, կամ
ագահների հետ, կամ յափշտակողների հետ, կամ
կռապաշտների հետ, ապա թէ ոչ՝ պէտք էր ձեզ
11 որ հէնց աշխարհքիցը դուրս գնայիք։ Բայց հի-
մա գրեցի ձեզ՝ չ'խառնուիլ, որ եթէ մէկը, որ
եղբայր է անուանուած, լինի պոռնիկ, կամ ագահ,
կամ կռապաշտ, կամ նախատող, կամ արբեցող,
կամ յափշտակող, այնպիսիին հետ հաց էլ չ'ու-
12 տել։ Որովհետեւ ինձ ի՞նչ պէտք է՝ որ դրսիններին
էլ դատեմ. չէ՞ որ դուք ներսիններին պիտի դա-
13 տէք։ Իսկ դրսիններին Աստուած կ'դատէ. բայց
դուք չարը ձեր միջիցը վեր առէք։

ԳԼ. Զ

1 Ձեզանից մէկն՝ եթէ բան ունենայ իր ընկերի
հետ, համարձակվո՞ւմ է անիրաւների առաջին
2 դատուիլ և ոչ թէ սուրբերի առաջին։ Կամ թէ
չ'գիտէ՞ք որ սուրբերն աշխարհքս կ'դատեն. և ե-
թէ ձեզանով աշխարհքը դատվում է, ապա չէք
3 արժան անարգ բաների դատաստան անելու։ Չը
գիտէ՞ք որ մենք հրեշտակներին կ'դատենք. էլ
4 ո՞րքան աւելի երկրաւոր բաները։ Եթէ երկրաւոր
բաների համար դատաստան ունիք, եկեղեցու ցած

մարդկանցը ձեզ համար դատաւոր նստեցրէք։
5 Ձեզ ամաչեցնելու համար եմ ասում. այնքան մի
իմաստուն մարդ էլ չ'կա՞յ ձեր միջումը, որ կարող
6 լինի իրաւունք որոշել իր եղբայրների մէջ։ Այլ
եղբայր եղբօր հետ դատաստան է գնում, և այն
7 էլ անհաւատների առաջին։ Եւ հէնց արդէն բո-
լորովին պակասութիւն է ձեր միջումը որ դատաս-
տաններ ունիք իրար հետ. ինչու չէք աւելի դուք
զրկվում. և ինչու չէք աւելի դուք անիրաւու-
8 թիւն քաշում։ Բայց դուք էք զրկում և անիրա-
ւութիւն անում, և այն էլ ձեր եղբայրներին։
9 Կամ թէ չ'գիտէ՞ք որ անիրաւներն Աստուծոյ ար-
քայութիւնը չեն ժառանգիլ։ Մի խաբուիք. ոչ
պոռնիկները, ոչ կռապաշտները, ոչ շնացողները,
10 Ոչ իգացողները, ոչ արուագէտները, ոչ գողերը,
ոչ ագահները, ոչ արբեցողները, ոչ նախատողնե-
րը, և ոչ յափշտակողները Աստուծոյ արքայու-
11 թիւնը չեն ժառանգիլ։ Եւ մի քանիներդ այսպէս-
ներ էիք, բայց լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝ բայց
արդարացաք Տէր Յիսուսի անունովը և մեր Աս-
տուծոյ Հոգովը։
12 Ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ամենն օգուտ
չէ. ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ես չ'պիտի
13 մի բանի իշխանութեան տակ լինիմ։ Կերակուրնե-
րը փորի համար, և փորը կերակուրների համար.
բայց Աստուած սորան էլ նորանց էլ կ'խափանէ.
միայն թէ մարմինը պոռնկութեան համար չէ, այլ
14 Տիրոջ համար. և Տէրը մարմնին համար։ Բայց
Աստուած, որ մեր Տիրոջն էլ յարութիւն տուաւ,
15 ձեզ էլ կ'յարուցանէ իր զօրութեամբը։ Չ'գի-
տէ՞ք՝ որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են.
ապա Քրիստոսի անդամներն առնեմ պոռնիկի ան-
16 դա՞մ շինեմ. քաւ լիցի։ Կամ թէ չ'գիտէ՞ք, որ

նա՝ որ պոռնիկին յարում է, մէկ մարմին է նորա
հետ. որովհետև Երկուսն, ասում է, մէկ մարմին
17 կ՚լինին։ Եւ նա՝ որ Տիրոջն է յարում՝ մէկ հոգի է
18 նորա հետ։ փախէք պոռնկութիւնիցը. ամեն մեղք
որ մարդ գործէ, իր մարմնիցը դուրս է. բայց պոռ-
նկութիւն անողն, իր մարմնի մէջ է մեղանչում։
19 կամ թէ չ՚գիտէ՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հո-
գու տաճար են՝ որ ձեզանում է, որ նորան Աստ-
20 ուածանից ունիք. և ձերինը չէք։ Որովհետև մեծ
գնով գնուեցաք. ուստի փառաւորեցէք Աստու-
ծուն ձեր մարմնումը և ձեր հոգումն՝ որ Աստու-
ծունն են։

ԳԼ. Է

1 Բայց այն բաների համար՝ որ ինձ գրեցիք, ասում
2 եմ Թէ Լաւ է մարդիս որ կնկայ չ՚մօտենայ։ Սա-
կայն պոռնկութեան պատճառով՝ թող ամեն մարդ
իր կինն ունենայ. և ամեն մէկ կին թող իր մարդն
3 ունենայ։ Մարդը թող իր կնկայ պարտքը վճարէ. և
4 այնպէս էլ կինն իր մարդին։ Կինն իր մարմնի վերայ
իշխանութիւն չ՚ունի, այլ մարդը. այնպէս էլ մարդն
իր մարմնի վերայ իշխանութիւն չ՚ունի, այլ կինը։
5 Իրար մի զրկէք. բայց միայն իրար հետ միաբանու-
լով մի քիչ ժամանակի համար, որ *ծոմապահու-
թեան և աղօթքի պարապուէք. և դարձեալ մէկտեղ
դարձէք, որ սատանան չ՚փորձէ ձեզ՝ ձեր անժուժ-
6 կալութեան պատճառովը. Բայց այս թոյլ տալով
7 եմ ասում, և ոչ թէ հրամանով։ Որովհետև կա-
մենում եմ՝ որ ամեն մարդ ինձ պէս լինէր. բայց
ամեն մարդ իր յատուկ շնորհքն ունի Աստուածա-

*Ոմանք չ՚ունին։

8 նից. մէկն այսպէս միւսն այնպէս։ Սակայն ամու-
րիներին և որբևայրիներին ասում եմ, Թէ Լաւ է
9 նորանց համար՝ որ ինձ պէս մնան։ Ապա եթէ
ժուժկալութիւն չ՚ունին, թող ամուսնանան. որով-
հետև աւելի լաւ է ամուսնանալ, քան թէ վառ-
10 ուիլ։ Բայց ամուսնացածներին պատուիրում եմ,
ոչ թէ ես՝ այլ Տէրը, որ կինը չ՚բաժանուի իր մար-
11 դիցը։ Ապա եթէ բաժանուի էլ, թող առանց ա-
մուսնանալու մնայ՝ կամ իր մարդին հետ հաշտուի.
12 և որ մարդն էլ կինը չ՚թողէ։ Բայց ուրիշներին ես
եմ ասում, ոչ թէ Տէրը. Եթէ մի եղբայր ան-
հաւատ կին ունի, և նա հաճի նորա հետ բնակ-
13 ուել՝ թող նորան չ՚թողէ։ Եւ մի կին՝ որ անհա-
ւատ մարդ ունի, և նա հաճի նորա հետ բնակ-
14 ուել՝ թող նորան չ՚թողէ։ Որովհետև անհաւատ
մարդը սրբուած է կնկանովը, և անհաւատ կինը
սրբուած է մարդովը. ապա թէ ոչ՝ ձեր որդիքը
15 պիղծ կ՚լինէին. բայց հիմա սուրբ են։ Բայց եթէ
անհաւատը բաժանվում է, թող բաժանուի. այս-
պիսի բաների մէջ մի եղբայր կամ քոյր գերի ե-
ղած չէ. Աստուած մեզ կանչեց խաղաղութեան
16 մէջ։ Որովհետև ի՞նչ գիտես, կին, դուցէ քո մար-
դը կ՚ապրեցնես. կամ ի՞նչ գիտես, մարդ, դուցէ
17 քո կինը կ՚ապրեցնես. Միայն թէ ամեն մէկին ինչ-
պէս Տէրը բաժին է տուել. ամեն մէկն ինչպէս
Աստուած կանչեց նորան, այնպէս գնայ. և ես այն-
պէս եմ ամեն եկեղեցիներումը պատուէր տալիս։
18 Մէկը թլփատուա՞ծ կանչուեցաւ, թող անթլ-
փատ չ՚ձևանայ. մէկը անթլփատութիւնո՞ւմ կան-
19 չուեցաւ՝ թող չ՚թլփատուի. Թլփատութիւնն ոչ-
ինչ է, և անթլփատութիւնն ոչինչ. այլ Աստու-
20 ծոյ պատուիրանքների պահելը։ Ամեն մէկն՝ որ կո-
չումի մէջ որ կանչուեցաւ, նորանում կենայ։

21 Ծառա՞յ կանչուեցար, հոգս մի անիր. բայց եթէ
կարենաս ազատ էլ լինել՝ աւելի նա գործածիր։
22 Որովհետև Տէրով կանչուած ծառան՝ Տիրոջ ա-
զատն է. այնպէս էլ ազատ կանչուածը Քրիստոսի
23 ծառայ է։ Մեծ գնով գնուեցաք՝ մարդկանց ծա-
24 ռայ մի լինիք։ Ամէն մէկն ինչ կոչումի մէջ որ
կանչուեցաւ, եղբարք, թող նորանում մնայ Աս-
տուծոյ առաջին։
25 Բայց կոյսերի համար հրաման չ'ունիմ Տէրիցը՝
միայն խրատ եմ տալիս ինչպէս Տէրիցը ողորմու-
26 թիւն գտած՝ հաւատարիմ լինելու համար։ Արդ
ես համարում եմ թէ այսպէս լաւ է ներկայ նե-
ղութեան պատճառով, որ լաւ է մարդին՝ այնպէս
27 լինել։ Կնկայ հետ կապուա՞ծ ես՝ մի աշխատիր
արձակուելու. կնկանից արձակուա՞ծ ես՝ կին մի
28 որոնիր։ Բայց եթէ ամուսնանաս, չ'մեղանչեցիր. և
եթէ մի կոյս ամուսնանայ, չ'մեղանչեց. միայն թէ
այնպիսիները մարմնի նեղութիւն կ'ունենան. իսկ
29 ես խնայում եմ ձեզ։ Բայց սա եմ ասում, եղ-
բարք, թէ ժամանակս կարճ է այսուհետև, որ
կին ունեցողներն էլ չ'ունեցողների պէս լինէին.
30 Եւ լաց լինողներն չ'լացողների պէս. և ուրախա-
ցողները չ'ուրախացողների, և ծախու առնողները
31 չ'ունեցողների պէս. Եւ այս աշխարհքը գործածող-
ները չար կերպով չ'գործածողների պէս. որովհե-
32 տև այս աշխարհի կերպարանքն անցնում է։ Բայց
կամենում եմ որ դուք առանց հոգսի լինիք. չ'ա-
մուսնացողը Տիրոջ բաների համար է հոգս անում,
33 թէ ինչպէս հաճոյ լինի Տիրոջը։ Բայց ամուսնացա-
ծը աշխարհի բաների համար է հոգս անում, թէ
34 ինչպէս հաճոյ լինի կնկանը։ Եւ իրարից տարբեր
են կինը և կոյսը. չ'ամուսնացած կոյսը Տիրոջ բանե-
րի համար է հոգս անում՝ որ սուրբ լինի մարմնով

և հոգով, իսկ ամուսնացած կինը աշխարհքի բաների
համար է հոգս անում, թէ ինչպէս հաճոյ լինի
35 մարդին։ Միայն թէ՝ սա ես ձեր շահի համար եմ
ասում. և ոչ թէ որ ձեզ համար *որոգայթ գցեմ.
այլ պարկեշտութեան համար՝ և առանց արգելքի
36 Տիրոջը ծառայելու համար։ Բայց եթէ մէկն ամօթ
համարէ իր կոյսի համար՝ թէ չափահասութիւնից
անցել է, և այնպէս պէտք է լինել, ինչ որ կա-
մենում է թող անէ. չէ մեղանչում. թող ա-
37 մուսնանան։ Բայց նա՝ որ իր սրտի մէջ հաստատ
է՝ և պէտք էլ չ'ունի, նա իր կամքի վերայ իշխա-
նութիւն ունի, և նա վճռեց իր սրտումն՝ որ իր
38 կոյսը պահէ, նա լաւ է անում։ Նոյնպէս և նա՝ որ
իր կոյսը մարդի է տալիս, լաւ է անում, և նա՝ որ
39 մարդի չէ տալիս, աւելի լաւ է անում։ Կինը
կապուած է օրէնքով քանի ժամանակ որ նորա
մարդը կենդանի է. բայց եթէ նորա մարդը ննջէ,
ազատ է ում հետ որ կամենայ ամուսնանալու,
40 միայն թէ Տէրով։ Բայց էլ աւելի երանելի է թէ
որ այնպէս կենայ՝ իմ խրատի պէս. այսպէս եմ
համարում, թէ ես էլ ունիմ Աստուծոյ Հոգին։

ԳԼ. Ը

1 Բայց կուռքի զոհերի համար գիտենք, որովհե-
տև ամենքս գիտութիւն ունինք. գիտութիւնը
2 հպարտացնում է, բայց սէրը շինում է։ Եթէ մէ-
կը կարծում է թէ բան գիտէ, նա դեռ բան չը
3 գիտաց՝ ինչպէս պէտք է գիտել։ Բայց եթէ մէկը
Աստուծուն սիրէ, նա ճանաչուած է նորանից։
4 Արդ կուռքի զոհուած կերակուրների համար գի-

*Յուն. խեղդելու չուան

տենք, որ կուռքը ոչինչ է աշխարհքում. և որ
ուրիշ ոչ մի Աստուած չ'կայ բացի այն մէկը՝
5 Որովհետև թէպէտև կան որ աստուածներ են ան-
ուանվում՝ թէ երկնքումը թէ երկրիս վերայ, ինչ-
պէս որ շատ աստուածներ կան և շատ տէրեր,
6 Բայց մեզ համար մէկ Աստուած կայ՝ Հայրը, ո-
րիցն են ամեն բաները, և մենք նորա համար. և
մէկ Տէր Յիսուս Քրիստոս որով են ամեն բաները,
7 և մենք նորանով: Սակայն ամենը այս գիտութիւ-
նը չ'ունին. որովհետև ոմանք կուռքի մասին
խղճմտանքով են ուտում մինչև հիմա իբրև կուռ-
քերին զոհուած, և նորանց խղճմտանքը տկար լի-
8 նելով պղծվում է: Բայց կերակուրը մեզ չի կանգ-
նեցնիլ Աստուծոյ առաջին. որ եթէ ուտենք՝ մի
բանով չենք աւելանալ, և եթէ չ'ուտենք՝ մի բա-
9 նով չենք պակասիլ: Միայն թէ զգոյշ կացէք՝ որ
այդ ձեր իշխանութիւնը գայթակղութիւն չ'լինի
10 տկարներին: Որովհետև եթէ մէկը տեսնէ քեզ՝ որ
գիտութիւն ունիս՝ կուռքի տան մէջ սեղան նըս-
տած, չէ՞ որ նորա խղճմտանքը, որ տկար է, հա-
մարձակութիւն կ'առանայ զոհուած բանն ուտե-
11 լու: Եւ այն տկար եղբայրը կ'կորչի քո գիտու-
թեան պատճառովը, որի համար Քրիստոսը մե-
12 ռաւ: Եւ այսպէս եղբայրների դէմ մեղանչելով,
և այն տկարների խղճմտանքը զարկելով Քրիստոսի
13 դէմ մեղք էք գործում: Վասն որոյ՝ եթէ կերա-
կուրն իմ եղբօրը գայթակղեցնում է, ես յաւիտեան
միս չեմ ուտիլ, որ իմ եղբօրը չ'գայթակղեցնեմ:

ԳԼ. Թ

1 Չէ՞ որ առաքեալ եմ, չէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ
մեր Տէր Յիսուս Քրիստոսին տեսայ, չէ՞ որ դուք

2 իմ գործն էք Տէրով: Թէև ուրիշներին առաքեալ
չ'լինեմ, բայց հէնց ձեզ առաքեալ եմ որ իմ ա-
3 ռաքելութեան կնիքը դուք էք Տէրով: Իմ պա-
4 տասխանը ինձ քննողների դէմ սա է. Միթէ
մենք իշխանութիւն չ'ունինք ուտելու և խմելու:
5 Միթէ իշխանութիւն չ'ունինք քոյր կին ման ա-
ծելու մեզ հետ, ինչպէս ուրիշ առաքեալները և
6 Տիրոջ եղբարքը, և Կեփասը: Կամ միթէ միայն
ես և Բառնաբասը իշխանութիւն չ'ունինք չ'գոր-
7 ծելու: Ո՞վ է որ երբէք իր պաշարովն զինուորու-
թիւն անէ. ո՞վ է որ այգի տնկէ՝ և նորա պտղից
չ'ուտէ. ո՞վ է որ հօտ արածեցնէ՝ և հօտի կաթ-
8 նից չ'ուտէ: Միթէ ես այս բաները մարդի կեր-
պով եմ ասում, կամ չէ՞ որ օրէնքն էլ է ասում
9 այս բաները: Որովհետև Մովսէսի օրէնքումը գըր-
ուած է՝ Կալի մէջ աշխատող եզան դունչը մի կա-
պիր. միթէ Աստուած եզների համար էր հոգս
10 անում: Կամ չէ՞ որ մանաւանդ մեզ համար է ա-
սում. որովհետև մեզ համար գրուեցաւ, որ հեր-
կողը պէտք է յուսով հերկէ. և կալսողն իր յոյսը
11 վայելելու յուսովը կալսէ: Եթէ մենք ձեզանում
հոգևորները սերմեցինք, մեծ բա՞ն է որ ձեզանից
12 մարմնաւորները հնձենք: Եթէ ուրիշները ձեզ վե-
րայ այդ իշխանութիւնը վայելում են, ո՞չ առա-
ւել ևս մենք. բայց մենք այս իշխանութիւնը չը
բանեցրինք. այլ ամեն բանի համբերում ենք, որ
13 արգելք չ'դնենք Քրիստոսի աւետարանին: Չ'գի-
տէ՞ք թէ նորանք՝ որ տաճարումը գործում են,
տաճարից են ուտում. և նորանք՝ որ սեղանի պաշ-
տօնեաներ են, սեղանից են բաժին առնում:
14 Այնպէս էլ Տէրը հրաման տուաւ աւետարանը
15 քարոզողներին աւետարանից ապրել: Բայց ես
սորանցից ոչ մէկն էլ չ'բանեցրի. և այս բաները չը

գրեցի որ՝ ինձ այդպէս լինի. որովհետև աւելի լաւ
է ինձ մեռնել, քան թէ մէկն իմ պարծանքը ու-
16 նայնացնէ։ Որովհետև եթէ աւետարանը քարո-
զեմ, դա ինձ պարծանք չէ. որովհետև դա հարկ է
դրուած ինձ վրայ. և վայ է ինձ, եթէ աւետա-
17 րանը չ՚քարոզեմ։ Վասնզի եթէ յօժար կամքով
անեմ այս, վարձք ունիմ. իսկ եթէ ակամայ՝ տըն-
18 տեսութիւնը յանձնուած է ինձ։ Ապա ի՞նչ է իմ
վարձքը. այն որ՝ աւետարանելիս ձրի տամ Քրիս-
տոսի աւետարանը, որ աւետարանի մէջ իմ իշխա-
19 նութիւնը գէշ կերպով չ՚բանեցնեմ։ Որովհետև
ամենից ազատ լինելով, իմ անձը ամենքին ծառայ
20 արի, որ շատերին շահեմ։ Հրէաներին Հրէայի պէս
21 եղայ, որ Հրէաներին շահեմ։ Օրէնքի տակ լինող-
ներին օրէնքի տակ լինողի պէս եղայ, *որ օրէնքի
տակ լինողներին շահեմ. օրէնք չ՚ունեցողներին օ-
րէնք չ՚ունեցողի պէս եղայ. (իբր չէ թէ ես Ա-
տուծոյ առաջին օրէնք չ՚ունէի, այլ Քրիստոսի օ-
րէնքի տակ էի) որ օրէնք չ՚ունեցողներին շահեմ։
22 Տկարներին տկարի պէս եղայ, որ տկարներին շա-
հեմ. ամենին ամեն բան եղայ, որ ինչ և իցէ մի
23 քանիսին ապրեցնեմ։ Այս անում եմ աւետարա-
24 նի համար, որ նորան կցորդ լինիմ։ Չ՚գիտէ՞ք, թէ
ասպարէզի մէջ վազողներն՝ ամենքն են վազում.
բայց մէկն է յաղթանակն առնում. դուք այնպէս
25 վազեցէք որ հասնէք։ Եւ ամեն ով որ մրցում է
ամեն բանից ժուժկալ է լինում. հիմա նորանք
մրցում են որ մի ապականելի պսակ առնեն, իսկ
26 մենք՝ անապականելի։ Ուրեմն ես այնպէս եմ վա-
զում, ոչ թէ ինչպէս անստոյգ. այնպէս եմ մըր-
27 ցում ոչ թէ ինչպէս օդին զարկելով։ Այլ իմ

*Ոմանք աւելացնում են՝ չէ թէ ես օրէնքի տակ էի,

մարմինը ճնշում եմ և նուաճում, որ մի գուցէ
ուրիշներին քարոզելով, ինքս անպիտան գտնուիմ։

ԳԼ. Ժ

1 Չեմ կամենում, եղբարք, որ չ՚գիտենաք՝ թէ մեր
հայրերն ամենն էլ ամպի տակն էին. և ամենը ծո-
2 վի միջովն անցան։ Եւ ամենը Մովսէսով մկրտուե-
3 ցան ամպումը և ծովումը։ Եւ ամենն էլ նոյն հո-
4 գևոր կերակուրը կերան։ Եւ ամենն էլ նոյն հո-
գևոր խմելիքը խմեցին. որովհետև այն հոգևոր վէ-
միցն էին խմում՝ որ գնում էր նորանց հետ. և
5 այն վէմն էր Քրիստոսը։ Բայց Աստուած նորանցից
շատերին չ՚հաւանեց. որովհետև անապատումը
6 փռուած ընկան։ Եւ սորանք մեզ օրինակի համար
եղան. որ մենք չար բաների ցանկացող չ՚լինենք,
7 ինչպէս նորանք ցանկացան։ Եւ կռապաշտ մի լինիք
ինչպէս նորանցից ոմանք. ինչպէս գրուած է, Ըն
ժողովուրդը նստեց ուտելու և խմելու, և վերկա-
8 ցան որ խաղան։ Եւ պոռնկութիւն էլ չ՚անենք,
ինչպէս նորանցից ոմանք պոռնկութիւն արին, և
մէկ օրում քսաներեք հազար հոգի վայր ընկան։
9 Եւ Քրիստոսին էլ չ՚փորձենք, ինչպէս նորանցից էլ
10 ոմանք փորձեցին, և օձերից սատակեցին։ Եւ չը
տրտնջաք էլ ինչպէս նորանցից էլ ոմանք տրտնջա-
11 ցին, և սատակչի ձեռովը կորան։ Եւ այն ամենն
օրինակի համար էր նորանց հանդիպում, բայց մեզ
խրատի համար գրուեցաւ, որոնց դարերի վերջը
12 հասաւ։ Ուրեմն ով որ համարում է թէ հաստատ
կանգնած է, թող զգոյշ լինի, որ վայր չ՚ընկնի։
13 Ձեզ ուրիշ փորձութիւն չէ պատահել բացի մարդ-
կային փորձութիւնից. բայց Աստուած հաւատարիմ
է, որ չի թողիլ ձեզ ձեր կարողութիւնիցը վեր

փորձուելու, այլ փորձութեան հետ ելքն էլ կը
պատրաստէ, որ կարողանաք համբերել։
14 Նորա համար, իմ սիրելիք, փախէք կռապաշ-
15 տութիւնիցը։ Ինչպէս իմաստուններին հետ եմ խօ-
սում, դուք ինքներդ դատեցէք այն որ ասում
16 եմ։ Այն օրհնութեան բաժակը, որ օրհնում ենք,
չէ՞ որ հաղորդութիւն է Քրիստոսի արիւնի. այն
հացը, որ կտրում ենք, չէ՞ որ հաղորդութիւն է
17 Քրիստոսի մարմնին։ Որովհետև մէկ հաց, մէկ մար-
մին ենք մենք շատերս. վասնզի ամենքս այն մէկ
18 հացիցն ենք վայելում։ Տեսէք Իսրայէլին մարմնի
կողմանէ. չէ՞ որ զոհուածներն ուտողները մասնա-
19 կից են սեղանին։ Արդ ի՞նչ ասեմ. մի՞թէ կուռքը
մի բան է, և կամ թէ կուռքերի զոհուածները
20 մի բա՞ն են։ Բայց այն որ հեթանոսները զոհում
են, դևերին են զոհում, և ոչ թէ Աստուծուն.
իսկ ես չեմ կամենում, որ դուք դևերին մասնա-
կից լինէք. չէք կարող Տիրոջ բաժակը խմել և
21 դևերի բաժակը. Չէք կարող Տիրոջ սեղանիցը
22 վայելել՝ և դևերի սեղանիցը։ Կամ թէ Տիրոջը
նախանձի գրգռե՞նք. մի՞թէ նորանից աւելի զօ-
րաւոր ենք։
23 Ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ամեն բան օ-
գուտ չէ. ամեն բան օրինաւոր է ինձ, բայց ամեն
24 բան շինութիւն չէ տալիս։ Ոչ ով միայն իր անձի
օգուտը չ՚որոնէ, այլ ամեն մէկն ընկերինն էլ։
25 Ամեն ինչ որ սպանդանոցումը ծախվում է, կերէք
առանց մի բան քննելու խղճմտանքի պատճառով։
26 Որովհետև Տիրոջն է երկիրը և նորա բոլոր լիու-
27 թիւնը։ Եթէ անհաւատներից մէկը կանչէ ձեզ,
և դուք կամենաք գնալ, ամեն բան որ ձեր առա-
ջին դրուի, կերէք, առանց մի բան քննելու խղճմը-
28 տանքի պատճառով։ Բայց եթէ մէկն ասէ ձեզ,

թէ Դա կուռքի զոհուած բան է, մի ուտէք՝ նո-
րա պատճառովը որ իմացրեց, և խղճմտանքի պատ-
ճառովը. որովհետև Տիրոջն է երկիրը և նորա բո-
29 լոր լիութիւնը։ Բայց խղճմտանք եմ ասում՝ ոչ
թէ ձերը, այլ ընկերինը. որովհետև ի՞նչու իմ
ազատութիւնը պիտի դատուի ուրիշի խղճմտան-
30 քից։ Թէ որ ես շնորհակալութիւնով վայելում
եմ, ի՞նչու հայհոյուիմ այն բանի համար՝ որի հա-
31 մար ես գոհանում եմ։ Ուրեմն՝ թէ ուտէք թէ
խմէք, թէ ինչ գործ էլ որ անէք, ամեն բան Աս-
32 տուծոյ փառքի համար արէք։ Առանց գայթակ-
ղութիւն տալու եղէք Հրէաներին և Յոյներին և
33 Աստուծոյ եկեղեցուն։ Ինչպէս ես էլ ամեն բանով
ամենին հաճոյ եմ լինում. իմ անձի օգուտը չ՚ո-
րոնելով, բայց շատերինը որ փրկուին։

ԳԼ. ԺԱ.

1 Ինձ նմանող եղէք, ինչպէս ես էլ Քրիստոսի։
2 Արդ գովում եմ ձեզ, եղբարք, որ իմ ամեն բա-
ները յիշում էք, և ինչպէս պատուիրեցի ձեզ, այն
3 պատուէրները պահում էք։ Բայց կամենում եմ
որ դուք գիտենաք, թէ ամեն մարդի գլուխը
Քրիստոսն է, և կնկայ գլուխը՝ մարդը, և Քրիս-
4 տոսի գլուխն՝ Աստուած։ Ամեն մարդ՝ երբոր ա-
ղօթք է անում կամ մարգարէանում՝ և գլուխը
ծածկած ունենայ, անպատիւ է անում իր գլու-
5 խը։ Եւ ամեն կին՝ երբոր աղօթք է անում կամ
մարգարէանում բաց գլխով, անպատիւ է անում
իր գլուխը. վասնզի մի և նոյն է թէ ածիլուած է։
6 Որովհետև եթէ կինը չ՚ծածկուի, թող ուրեմն իր
մազերն էլ կտրէ. բայց եթէ կնկան ամօթ է մա-
7 զերը կտրելը կամ ածիլելը, թող ծածկուի։ Մա-

կայն մարդին պէտք չէ որ իր գլուխը ծածկէ, ո-
րովհետև Աստուծոյ պատկերը և փառքն է. բայց
8 կինը մարդի փառքն է ։ Քանզի ոչ թէ մարդն է
9 կնկանիցը, այլ կինն է մարդիցը ։ Եւ որովհետև
ոչ թէ մարդը կնկան համար ստեղծուեցաւ, այլ
10 կինը մարդի համար ։ Նորա համար պէտք է, որ
կինը *շուք դնէ գլխի վերայ հրեշտակների համար։
11 Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, և ոչ
12 մարդն առանց կնկայ, Տէրումը ։ Որովհետև ինչ-
պէս որ կինը մարդիցը եղաւ, այնպէս էլ մարդը
կնկայ միջոցովս է . բայց ամենն Աստուածանից։
13 Դուք ինքներդ դատեցէք . մի կնկայ վայելո՞ւմ է
14 որ չ'ծածկուած աղօթք անէ Աստուծուն ։ Կամ
հէնց բնութիւնն ինքը չէ՞ սովորեցնում ձեզ, որ
եթէ մարդը երկար մազեր ունենայ, այն անարգանք
15 է նորան։ Բայց եթէ կինն երկար մազեր ունի, այն
փառք է նորան . որովհետև երկար մազերը հա-
16 գուստի տեղ է տրուած նորան ։ Բայց եթէ մէկը
կամենում է հակառակել, մենք այնպիսի սովորու-
թիւն չ'ունինք, և ոչ էլ Աստուծոյ եկեղեցիները։
17 Բայց այս էլ պատուիրելովս չեմ գովում, որ
դուք ոչ թէ դէպի լաւագոյնն այլ դէպի վատ-
18 թարն էք ժողովվում։ Որովհետև նախ և առաջ
երբոր մէկտեղ էք ժողովվում եկեղեցու մէջ, լը-
սում եմ որ բաժանումներ կան ձեր մէջ, և մա-
19 սամբ էլ հաւատում եմ։ Որովհետև հերձուած-
ներ էլ պէտք է լինին ձեր մէջ, որ ընտիր լինող-
20 ները յայտնի լինեն ձեզանում։ Արդ երբոր մէկ-
տեղ էք ժողովվում, սա Տէրունական ընթրիքն
21 ուտել չէ, Որ ամեն մէկն առաջ իր ընթրիքն է
անում ուտելու ժամանակ, և մէկը սոված է, և

*Յուն. իշխանութիւն

22 միւսը արբած ։ Մի՞թէ տուն չ'ունիք ուտելու և
խմելու . կամ թէ Աստուծոյ եկեղեցին արհամար-
հում էք, և չքաւորներին ամաչեցնում . ձեզ ի՞նչ
ասեմ . գովե՞մ ձեզ . այդ բանումը չեմ գովում ։
23 Որովհետև ես Տէրիցն ընդունեցի այն որ ձեզ էլ ա-
ւանդեցի . որ Տէր Յիսուսն այն գիշերը որ մատնվում
24 էր, հաց առաւ, Եւ գոհանալուց յետոյ կոտրեց և
ասեց . Առէք, կերէք . այս է իմ մարմինը՝ որ ձեզ
համար կոտրվում է . այս արէք իմ յիշատակի
25 համար ։ Այնպէս էլ՝ ընթրիքն ուտելուց յետոյ
բաժակն առաւ և ասեց . Այս բաժակը նոր ուխտն
է իմ արիւնովը . այս արէք՝ քանի անգամ որ խը-
26 մէք, իմ յիշատակի համար ։ Որովհետև քանի
անգամ որ այս հացն ուտէք, և այս բաժակը խը-
մէք, Տիրոջ մահը պատմեցէք՝ մինչև որ նա կ'գայ ։
27 Ուրեմն ով որ այս հացն ուտէ՝ կամ Տիրոջ բա-
ժակը խմէ անարժանութեամբ, նա պարտական կը
28 լինի Տիրոջ մարմնին և արիւնին։ Ուրեմն թող մարդ
փորձէ իր անձը, և ապա այն հացիցն ուտէ՝ և այն
29 բաժակիցը խմէ ։ Որովհետև անարժանութեամբ
ուտողը և խմողը իր անձի համար դատաստան է
ուտում և խմում, որ չէ որոշում Տիրոջ մարմինը ։
30 Նորա համար էլ ձեր միջումը շատ հիւանդներ և
31 ցաւագարներ կան . և շատեր էլ ննջած են։ Որով-
հետև եթէ մեր անձերը դատէինք, չէինք դատա-
32 պարտուիլ ։ Բայց դատուելով Տէրիցը խրատվում
33 ենք, որ աշխարհքի հետ չ'դատապարտուինք ։ Ու-
րեմն, եղբարքս, երբոր ժողովուիք ուտելու հա-
34 մար, իրար սպասեցէք ։ Ապա եթէ մէկը սոված է՝
թող իր տանն ուտէ . որ դատապարտութեան հա-
մար չ'ժողովուիք . բայց ուրիշ բաներն՝ երբոր կը
գամ՝ այն ժամանակ կ'պատուիրեմ ։

ԳԼ. ԺԲ

1 Բայց հոգևոր պարգևների համար, եղբարք, չեմ
2 կամենում որ չ'գիտենաք։ Դուք գիտէք թէ երբ
որ հեթանոս էիք, անձայն կուռքերի մօտ էիք
3 տարվում ինչպէս որ առաջնորդվում էիք։ Նորա
համար յայտնում եմ ձեզ, որ ոչ ով չ'կայ Աս-
տուծոյ Հոգովը խօսող որ Յիսուսին նզովեալ ասէ.
և ոչ ով չէ կարող Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ
4 Հոգով Սրբով։ Պարգևները զանազան են, բայց
5 Հոգին նոյնն է։ Եւ պաշտօնները զանազան են, բայց
6 Տէրը նոյնն է։ Եւ ներգործութիւնները զանազան
են, բայց Աստուած նոյնն է, որ ամենը ամենքի մէջ
7 ներգործում է։ Բայց ամեն մէկին տրուած է Հո-
8 գու յայտնութիւնը օգտի համար։ Որովհետև մէ-
կին Հոգուցը տրուած է իմաստութեան խօսք. և
ուրիշին գիտութեան խօսք՝ նոյն Հոգու չափովը։
9 Միւսին հաւատք նոյն Հոգովը. ուրիշին բժշկու-
10 թեան պարգևներ նոյն Հոգովը։ Ուրիշին զօրու-
թիւնների ներգործութիւններ. և ուրիշին մարգա-
րէութիւն. ուրիշին հոգիների ընտրութիւն. ուրի-
շին այլ և այլ լեզուներ. ուրիշին լեզուների թարգ-
11 մանութիւններ։ Բայց այս ամենը հէնց մի և նոյն
Հոգին է ներգործում, ամեն մէկին բաժանելով
ինչպէս կամենում է։
12 Ինչպէս էլ մարմինը մէկ է և անդամներ շատ
ունի, և մէկ մարմնի բոլոր անդամները շատ լինե-
13 լով՝ մարմինը մէկ է, այսպէս էլ Քրիստոսը։ Որով-
հետև մենք էլ ամենքս մէկ Հոգով մկրտուեցանք
մէկ մարմին լինելու. թէ Հրէաներ, թէ Յոյներ.
թէ ծառաներ, թէ ազատներ, և ամենքս մէկ Հո-
14 գիից խմեցինք։ Որովհետև մարմինն էլ մէկ ան-

15 դամ չէ, այլ շատ։ Եթէ ոտքն ասէ. Որովհետև
ձեռք չեմ՝ մարմնից չեմ. մի՞թէ նորանով մարմ-
16 նիցը չի լինիլ։ Եւ եթէ ականջն ասէ, Որովհետև
աչք չեմ՝ մարմնիցը չեմ. մի՞թէ նորանով մարմնի-
17 ցը չի լինիլ։ Եթէ բոլոր մարմինն աչք լինէր, ո՞ր-
տեղ էր լսելիքը. և եթէ բոլոր մարմինը լսելիք
18 լինէր, ո՞րտեղ էր հոտոտելիքը։ Բայց հիմա Աս-
տուած անդամները՝ նորանց ամեն մէկը՝ դրաւ մարմ-
19 նի մէջ ինչպէս կամեցաւ։ Եւ եթէ ամենը մէկ
20 անդամ լինէր, ո՞րտեղ էր մարմինը։ Բայց հիմա
21 անդամները շատ են, իսկ մարմինը մէկ։ Աչքը չէ
կարող ձեռքին ասել, Ինձ պէտք չես. կամ դար-
22 ձեալ գլուխը ոտներին՝ Ինձ պէտք չէք։ Այլ մա-
նաւանդ մարմնի այն անդամները՝ որ երևում են
23 թէ տկարագոյն են, նորանք հարկաւոր են։ Եւ
նորանք՝ որ կարծում ենք թէ մարմնոյ շատ անար-
գուածներն են, նորանց առաւել ևս պատիւ ենք
տանում. և մեր անվայելուչ անդամներն աւելի վա-
24 յելչութիւն ունին։ Եւ մեր վայելուչ անդամները
մի բանի պէտք չ'ունին. բայց Աստուած մարմինը
25 բարեխառնեց, ցածին աւելի պատիւ տալով։ Որ
մարմնի մէջ տարաձայնութիւն չ'լինի, այլ որ ան-
26 դամներն իրար համար նոյն հոգսն ունենան։ Եւ
եթէ մէկ անդամը ցաւում է, բոլոր անդամներն
էլ նորա հետ ցաւում են. և եթէ մէկ անդամը
փառաւորվում է, բոլոր անդամներն էլ նորա հետ
27 ուրախանում են։ Արդ դուք Քրիստոսի մարմինն
28 էք, և մէկ մէկ նորա անդամներ։ Եւ ոմանց դրաւ
Աստուած եկեղեցումը. առաջ՝ առաքեալներին.
երկրորդ՝ մարգարէներին. երրորդ՝ վարդապետնե-
րին. յետոյ *զօրութիւններ. յետոյ բժշկութիւն-

*հրաշքներ

ների պարգևներ, օգնութիւններ, կառավարու-
29 թիւններ, այլ և այլ լեզուներ։ Մի՞թէ ամենն ա-
ռաքեալներ են. մի՞թէ ամենը մարգարէներ են.
մի՞թէ ամենը վարդապետներ են. մի՞թէ ամենը
30 զօրութիւններ անող են։ Մի՞թէ ամենը բժշկու-
թիւնների պարգևներ ունին. մի՞թէ ամենը լեզու-
ներ են խօսում. մի՞թէ ամենը թարգմանում են։
31 Բայց դուք նախանձաւոր եղէք լաւագոյն պար-
գևներին. և ես էլ աւելի գերազանց ճանապարհ
ցոյց տամ ձեզ։

ԳԼ. ԺԳ

1 Եթէ մարդկանց և հրեշտակների լեզուներով խօ-
սիմ, բայց սէր չ'ունիմ, ես եղայ ձայն հանող
2 պղինձ, կամ հնչեցող ծնծղայ։ Եւ եթէ մարգա-
րէութիւն ունենամ, և գիտենամ ամեն խոր-
հուրդները և ամեն գիտութիւնը. և եթէ ամեն
հաւատքն ունենամ, մինչև սարերն էլ տեղափո-
3 խելու, բայց սէր չ'ունիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ իմ
ամեն ապրանքներն աղքատներին ուտեցնեմ և իմ
մարմինը մատնեմ որ այրուի, բայց սէր չ'ունիմ,
4 ես ոչինչ օգուտ չեմ ունենալ։ Սէրը երկայնամիտ
է՝ քաղցր է. սէրը չէ նախանձւում, չէ գոռոզա-
5 նում, չէ հպարտանում։ Չէ լրբանում, իրը չէ
6 որոնում, չէ գրգռւում, չարը չէ մտածում։ Անի-
րաւութեան վերայ չէ ուրախանում, բայց ուրա-
7 խանում է ճշմարտութեան հետ. Ամեն բանի դի-
մանում է. ամեն բան հաւատում է, ամեն բանի
8 համար յոյս ունի, ամեն բանի համբերում է։ Սէրը
երբէք չի վերջանալ. եթէ մարգարէութիւններ
կան՝ կ'խափանուին. եթէ լեզուներ՝ կ'լռեն. եթէ
9 գիտութիւն՝ կ'խափանուի։ Որովհետև փոքր ի շա-

տէ գիտենք. և փոքր ի շատէ մարգարէանում ենք։
10 Բայց երբոր կատարեալը գայ, այս փոքր ի շատէն
11 կ'խափանուի։ Երբոր երեխայ էի՝ երեխայի պէս էի
խօսում, երեխայի պէս էի մտածում, երեխայի
պէս էի համարում. բայց երբոր մարդ եղայ, այն
12 երեխայութեան բաները խափանեցի։ Որովհետև
հիմա հայելու մէջ օրինակով ենք տեսնում, բայց
այն ժամանակ դէմադէմ. հիմա փոքր ի շատէ եմ
տեղեակ, բայց այն ժամանակն այնպէս կ'գիտե-
13 նամ՝ ինչպէս գիտեցուած եմ։ Ապա ուրեմն մնում
է հաւատք, յոյս, սէր. այս երեքը, և սորանցից
մեծը սէրն է։

ԳԼ. ԺԴ

1 Սէրին հետևեցէք, և հոգևոր պարգևներին նա-
խանձաւոր եղէք. և մանաւանդ որ մարգարէանաք։
2 Որովհետև լեզուներով խօսողը, մարդկանց հետ
չէ խօսում, այլ Աստուծոյ հետ. որովհետև ոչ
ով չէ լսում, բայց հոգով խորհուրդներ է խօսում։
3 Իսկ մարգարէացողը, մարդկանց հետ շինութիւն
և մխիթարութիւն և սփոփութիւն է խօսում։
4 Լեզուով խօսողը իր անձն է շինում, իսկ մար-
5 գարէացողը եկեղեցին է շինում։ Ես կամենում եմ
որ դուք ամենդ լեզուներով խօսէք, բայց մանա-
ւանդ որ մարգարէանաք. որովհետև աւելի մեծ է
մարգարէացողը, քան թէ լեզուներով խօսողը,
միայն եթէ թարգմանէ, որ եկեղեցին շինութիւն
առնէ։
6 Բայց հիմա, եղբարք, եթէ ձեզ մօտ գամ և
լեզուներով խօսիմ, ի՞նչ օգուտ կ'տամ ձեզ՝ եթէ
չ'խօսիմ ձեզ հետ կամ յայտնութիւնով, կամ
գիտութիւնով, կամ մարգարէութիւնով, կամ

7 վարդապետութիւնով։ Այնպէս էլ անշունչ բա-
ները որ ձայն են տալիս, թէ փող թէ քնար, ե-
թէ ձայներով զանազանութիւն չ'անեն, ինչպէս
կ'ճանաչուի փողի փչելը, կամ քնարի հնչելը։
8 Որովհետև եթէ փողն էլ անորոշ ձայն տայ, ո՞վ
9 կ'պատրաստուի պատերազմի համար։ Այսպէս էլ
դուք, եթէ լեզուներով բանը յայտնի չ'ասէք, այն
խօսածն ինչպէս կ'իմացուի. որովհետև իբրև օդի
10 մէջ խօսողներ կ'լինիք։ Որովհետև այնքան այլ և այլ
ձայներ կան աշխարհքումը, և նորանց ոչ մէկն էլ
11 առանց նշանակութեան չէ։ Արդ եթէ ես ձայնի
զօրութիւնը չ'գիտենամ, ես խօսողին խուժ կ'լի-
12 նիմ, և խօսողն ինձ համար՝ խուժ։ Այսպէս էլ
դուք, որովհետև հոգևոր պարգևներին նախանձա-
ւոր էք, եկեղեցու շինութեան համար ջանք ա-
13 րէք, որ էլ առաւելանաք։ Վասնորոյ լեզուով
խօսողը, թող աղօթք անէ, որ թարգմանէ էլ՝
14 Վասնզի եթէ ես աղօթք անեմ օտար լեզուով,
իմ հոգին է աղօթք անում. բայց միտքս անպտուղ
15 է։ Ուրեմն ինչ է, աղօթք անեմ հոգով, աղօթք
անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս
16 ասեմ մտքով էլ։ Ապա եթէ դու օրհնես հոգով,
նա որ տգէտի տեղն է բռնում ինչպէս Ամէն ասէ
քո օրհնութեանը, քանի որ չ'գիտէ թէ ինչ ես
17 ասում։ Դու իրաւ որ լաւ ես գոհանում. բայց
18 միւսը չէ շինվում։ Գոհանում եմ իմ Աստուա-
ծանից, որ ձեր ամենիցն աւելի լեզուներով խօ-
19 սում եմ։ Բայց եկեղեցու մէջ աւելի կամենում
եմ որ հինգ խօսք իմ մտքովը խօսիմ, որ ուրիշնե-
րին էլ բան սովորեցնեմ քան թէ բիւրաւոր խօս-
քեր լեզուներով։
20 Եղբարք, մտքով տղայ մի լինիք. բայց չարու-
թեան կողմանէ տղայ եղէք, իսկ մտքով կատար-

21 եալ եղէք։ Օրէնքումը գրուած է, թէ Օտար լե-
զուներով և օտար շրթունքներով կ'խօսիմ այս
ժողովրդի հետ. բայց և այնպէս ինձ ականջ չեն
22 դնիլ, ասում է Տէրը։ Ուրեմն լեզուները նշանի
համար են՝ ոչ թէ հաւատացեալներին, այլ ան-
հաւատներին. բայց մարգարէութիւնը ոչ թէ ան-
հաւատների համար է, այլ հաւատացեալների։
23 Արդ եթէ բոլոր եկեղեցին մէկ տեղ գայ, և ա-
մենքը լեզուներով խօսին. և տգէտներ կամ ան-
հաւատներ մտնեն այնտեղ, մի՞թէ չեն ասիլ թէ
24 դուք գժուած էք։ Բայց եթէ ամենը մարգարէա-
նան, և մի անհաւատ կամ տգէտ գայ մտնէ, նա
25 ամենիցը կ'յանդիմանուի, ամենիցը կ'քննուի։ Եւ
այսպէս նորա սրտի գաղտնիքը յայտնի կ'լինի. և
ապա երեսի վերայ ընկած Աստուծուն երկրպա-
գութիւն կ'անէ, խոստովանելով թէ արդարև Աս-
տուած ձեր միջումն է։
26 Ուրեմն ինչ է, եղբարք. երբ որ մէկտեղ ժո-
ղովուիք, ձեզանից ամեն մէկը սաղմոս ունի, վար-
դապետութիւն ունի, յայտնութիւն ունի, լեզու
ունի, թարգմանութիւն ունի. ամենը շինութեան
27 համար լինի։ Եթէ մէկը լեզուով խօսի, թող եր-
կու, և եթէ էլ աւելի շատ՝ երեք լինեն. մէկը
28 միւսից յետոյ. և մէկը թող թարգմանէ։ Բայց
եթէ թարգմանող չ'կայ, թող լռէ եկեղեցումը.
29 թող իրան համար և Աստուծոյ հետ խօսի։ Բայց
մարգարէներից թող երկուսը կամ երեքը խօսին, և
30 ուրիշները քննեն։ Բայց եթէ մի ուրիշին, որ այնտեղ
նստած է՝ յայտնութիւն լինի, առաջինը թող լռէ։
31 Որովհետև կարող էք մէկ մէկից յետոյ ամենդ
մարգարէանալ. որ ամենը սովորին և ամենը մխի-
32 թարուին։ Եւ մարգարէից հոգիներն էլ մարգա-
33 րէներին հնազանդում են։ Որովհետև Աստուած

խռովութեան Աստուած չէ, այլ խաղաղութեան,
ինչպէս սուրբերի բոլոր եկեղեցիներումը։
34 Ձեր կանայքը եկեղեցիներումը լուռ կենան. ո-
րովհետև նորանց հրաման չ'կայ խօսելու, այլ որ
35 հնազանդ լինեն, ինչպէս օրէնքն էլ ասում է։ Բայց
եթէ մի բան կամենան սովրել, թող տան մէջ
իրանց մարդկանցից հարցնեն. որովհետև կնկանն
36 անվայել է եկեղեցում խօսել։ Կամ թէ Աստու-
ծոյ խօսքը ձեզանի՞ց դուրս եկաւ, կամ միայն ձե՞զ
37 հասաւ։ Բայց եթէ մէկը կարծէ՝ թէ նա մարգա-
րէ է կամ հոգևոր, թող գիտենայ ինչ որ գրեցի
38 ձեզ, որ Տիրոջ պատուիրաններն են։ Բայց եթէ
39 մէկը տգէտ է, թող տգէտ լինի։ Ուրեմն, եղբարք,
ջանք արէք որ մարգարէանաք, և լեզուներով խօ-
40 սելը մի արգելէք։ Ամեն բան թող պարկեշտու-
թեամբ և կարգով լինի։

ԳԼ. ԺԵ

1 Իմացնում եմ ձեզ, եղբարք, այն աւետարանը՝
որ աւետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի
2 մէջ էլ կանգնած էք. Որով փրկւում էլ էք, այն
բանով՝ որ ձեզ աւետարանեցի, եթէ ամուր բըռ-
նէք նորան. եթէ զուր տեղը չէք հաւատացել՝
3 Որովհետև ես առաջուց այն տուի ձեզ, որ ես էլ
ընդունեցի, թէ Քրիստոս մեր մեղքերի համար մե-
4 ռաւ՝ գրքերի համեմատ։ Եւ թէ թաղուեցաւ, և
թէ երրորդ օրը յարութիւն առաւ՝ գրքերի հա-
5 մեմատ։ Եւ թէ երևեցաւ Կեփասին, յետոյ այն
6 տասներկուսին։ Յետոյ երևեցաւ հինգ հարիւրից
աւելի եղբայրներին մէկ անգամ, որոնցից շատերը
մինչև հիմա մնում են, բայց մի քանիսն էլ ննջե-
7 ցին։ Եւ յետոյ երևեցաւ Յակոբին, յետոյ բոլոր

8 առաքեալներին։ Ամենից յետոյ՝ իբր թէ մի վիժա-
9 ծի՝ ինձ էլ երևեցաւ։ Որովհետև ես առաքեալնե-
րի յետինն եմ. որ արժանի չեմ առաքեալ կոչ-
ուելու. որովհետև Աստուծոյ եկեղեցին հալածե-
10 ցի։ Բայց Աստուծոյ շնորհքովն եմ ինչ որ եմ. և
նորա շնորհքն որ ինձանում է ունայն չ'եղաւ. այլ
նորանց ամենիցն աւելի աշխատեցի. սակայն ոչ թէ
11 ես, այլ Աստուծոյ շնորհքը որ ինձ հետ է։ Արդ
թէ ես՝ թէ նորանք, այսպէս ենք քարոզում, և
դուք այսպէս հաւատացիք։
12 Բայց եթէ Քրիստոսը քարոզվում է՝ թէ մեռել-
ներից յարութիւն է առել, ինչպէս են ձեզանից
ոմանք ասում, թէ Մեռելների յարութիւն չ'կայ։
13 Եթէ մեռելների յարութիւն չ'կայ, ապա Քրիս-
14 տոսն էլ չէ յարութիւն առել։ Եւ եթէ Քրիս-
տոսը յարութիւն չէ առել, ուրեմն ունայն է մեր
քարոզութիւնը, և ունայն է ձեր հաւատքն էլ։
15 Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնվում,
որ Աստուծոյ համար վկայեցինք, թէ Քրիստոսին
յարութիւն տուաւ, որին չ'յարուցրեց, եթէ ար-
16 դարև մեռելները յարութիւն չեն առնում։ Որով-
հետև եթէ մեռելները յարութիւն չեն առնում,
17 ապա Քրիստոս էլ յարութիւն չէ առել. Եւ ե-
թէ Քրիստոս յարութիւն չէ առել՝ ունայն է ձեր
18 հաւատքը. և դեռ ձեր մեղքերի մէջ էք։ Ուրեմն
19 նորանք էլ, որ Քրիստոսումը ննջեցին, կորան։ Եթէ
միայն այս կեանքումն ունինք յոյս Քրիստոսի վե-
րայ, ամեն մարդկանցից աւելի ողորմելի ենք։
20 Բայց հիմա Քրիստոսը յարութիւն է առել մե-
21 ռելներից, ինքը ննջածների առաջինեկ եղաւ։ Ու-
րեմն որովհետև մարդով եղաւ մահը, և մարդով
22 էլ մեռելների յարութիւնը. Քանզի ինչպէս Ա-
դամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստո-

23 սով ամենը կենդանանում են ։ Եւ ամեն մէկն իր
կարգումը․ առաջի պտուղը Քրիստոսը և յետոյ
24 Քրիստոսինները նորա գալու ժամանակումը։ Եւ
յետոյ վախճանը, երբ որ թագաւորութիւնը Աս-
տուծուն և Հօրը կ'տայ․ երբոր կ'խափանէ ամեն
իշխանութիւնը և ամեն պետութիւնը և զօրու-
25 թիւնը ։ Որովհետև պէտք է որ նա թագաւորէ,
մինչև որ բոլոր թշնամիներն իր ոտների տակ դնէ։
26 Յետին թշնամին՝ որ կ'խափանուի՝ մահն է․ վասնզի
ամեն բան հնազանդեցրեց նորա ոտների տակ։
27 Բայց երբոր ասէ՝ թէ Ամեն բան հնազանդ է նո-
րան, յայտնի է որ բացի նորանից որ ամեն բան
28 հնազանդեցրեց նորան ։ Բայց երբոր ամենը կ'հնա-
զանդի նորան, այն ժամանակ ինքը Որդին էլ կը
հնազանդի նորան՝ որ ամենը հնազանդեցրեց նորան,
29 որ Աստուած լինի ամենը ամենում ։ Ապա եթէ
ոչ, ի՞նչ կ'անեն մեռելների համար մկրտուողները
եթէ արդարև մեռելները յարութիւն չ'առնեն.
30 էլ ի՞նչու են նորանց համար մկրտվում ։ Եւ մենք
31 ի՞նչու ամեն ժամանակ վտանգի մէջ ենք։ Երդնում
եմ ձեր վերայ ունեցած պարծանքովս, որ մեր Տէր
Յիսուս Քրիստոսումն ունիմ, թէ ես ամեն օր մեռ-
32 նում եմ ։ Եթէ մարդկօրէն Եփեսոսումը գազան-
ների կուիւ մէջ մտայ, ի՞նչ օգուտ էր ինձ հա-
մար, եթէ մեռելները յարութիւն չեն առնում.
ուտենք և խմենք, որովհետև էգուց կ'մեռնինք։
33 Մի խաբուիք․ չար ընկերակցութիւններն ապա-
34 կանում են բարի վարքերը ։ Արթուն կացէք ար-
դարութեամբ և մեղք մի գործէք․ որովհետև մի
քանիսն Աստուծոյ մասին տգէտ են․ այս ձեզ ա-
մաչեցնելու համար եմ ասում ։
35 Բայց մէկը կ'ասէ․ Մեռելներն ի՞նչպէս յարու-
36 թիւն կ'առնեն; և թէ ի՞նչ մարմնով կ'գան։ Ան-

միտ, այն որ դու սերմում ես, չի կենդանանալ՝
37 եթէ չ'մեռնի ։ Եւ այն որ սերմում ես, ոչ թէ
այն մարմինն ես սերմում որ պիտի բուսնի, այլ
մերկ հատը․ թէ ցորենի լինի, թէ ուրիշ սեր-
38 մունքների ։ Եւ Աստուած մարմին է տալիս նորան
ինչպէս կամենում է, և սերմունքների ամեն մէկին
39 իրանց մարմինը ։ Ամեն մարմին միևնոյն մարմինը
չէ․ ուրիշ է մարդկանց մարմինը, ուրիշ է անա-
սունների մարմինը․ ուրիշ է ձկների մարմինը, ու-
40 րիշ է թռչունների մարմինը ։ Կան երկնաւոր մար-
միններ էլ, երկրաւոր մարմիններ էլ․ բայց ուրիշ
է երկնաւորների փառքը, և ուրիշ է երկրաւոր-
41 ների փառքը ։ Ուրիշ է արեգակի փառքը, և ու-
րիշ է լուսնի փառքը, և ուրիշ է աստղերի փառ-
քը․ որովհետև մի աստղ միւսից զանազանվում է
42 փառքով ։ Այնպէս էլ մեռելների յարութիւնը․
սերմվում է ապականութիւնով, և յարութիւն է
43 առնում անապականութիւնով ։ Սերմվում է ա-
նարգութիւնով, և յարութիւն է առնում զօրու-
44 թիւնով ։ Սերմվում է շնչաւոր մարմին, և յարու-
թիւն է առնում հոգևոր մարմին․ կայ շնչաւոր
45 մարմին, կայ և հոգևոր մարմին։ Այսպէս էլ գըր-
ուած է, թէ Առաջին մարդն՝ Ադամը կենդանի
շունչ եղաւ, երկրորդ Ադամը կենդանարար հո-
46 գի ։ Միայն թէ հոգևորն առաջ չէ, այլ շնչաւո-
47 րը, և յետոյ հոգևորը ։ Առաջին մարդը երկրից
է՝ հողեղէն. բայց երկրորդ մարդն է Տէրը երկնքից։
48 Ինչպէս հողեղէնը, այնպէս էլ հողեղէնները․ և
ինչպէս երկնաւորը, այնպէս էլ երկնաւորները ։
49 Եւ ինչպէս հողեղէնի պատկերը հագանք, երկնա-
50 ւորի պատկերն էլ պիտի հագնենք ։ Միայն թէ
աս եմ ասում, եղբարք, որ մարմին և արիւն չեն
կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել․ և

ոչ էլ ապականութիւնը ժառանգում է անապա-
51 կանութիւնը ։ Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ.
Ոչ թէ ամենքս կ'ննջենք, այլ ամենքս կ'փոխուինք.
52 Յանկարծ՝ մի ականթարթում յետին փողի ժամա-
նակին. որովհետև փողը կ'փչուի, և մեռելները
յարութիւն կ'առնեն անապականելի, և մենք կը
53 փոխուինք ։ Վասնզի պէտք է որ այս ապականա-
ցուն հագնէ անապականութիւնը, և այս մահկա-
54 նացուն հագնէ անմահութիւնը ։ Եւ երբոր այս ա-
պականացուն անապականութիւնը կ'հագնէ, և այս
մահկանացուն անմահութիւնը, այն ժամանակ կը
լինի այն խօսքը որ գրուած է թէ Մահն ընկղմուե-
55 ցաւ յաղթութեան մէջ ։ Ով մահ, ո՞ւր է քո խայ-
թոցը. *գերեզման, ո՞ւր է քո յաղթութիւնը.
56 Մահի խայթոցը մեղքն է, և մեղքի զօրութիւնը
57 օրէնքը ։ Բայց շնորհակալութիւն Աստուծուն, որ
տուաւ մեզ յաղթութիւնը մեր Տէր Յիսուս Քրիս-
58 տոսի ձեռովը ։ Ուրեմն, սիրելի եղբարքս, հաստատ
եղէք, անշարժ կացէք, ամեն ժամանակ աւելի ա-
ռաջացէք Տիրոջ գործումը, գիտացէք, որ ձեր
աշխատանքը զուր չէ Տէրումը ։

ԳԼ. ԺԶ

1 Բայց այն տուրք ժողովելու կողմանէ՝ որ սուրբե-
րի համար է, ինչպէս Գաղատացիների եկեղեցի-
2 ներին պատուիրեցի, այնպէս էլ դուք արէք. Ամեն
մէկ միաշաբաթ օրերը ձեզանից ամեն մէկը թող
3 իրան մօտ հաւաքէ՝ ինչ որ կ'յաջողուի ։ Որ չ'լինի
թէ երբոր գամ, այն ժամանակ ժողովելը լինի.
բայց երբոր գամ՝ որոնց որ թղթերով ընտրեցիք,

*Մեռելների բնակարան ։ Ոմանք՝ դժոխք ։

նորանց կ'ուղարկեմ՝ որ ձեր ընծան տանեն Երուս-
4 աղէմ ։ Եւ եթէ ինձ էլ արժան լինի գնալ,
5 թող ինձ հետ գնան ։ Բայց ձեզ մօտ կ'գամ՝
երբ որ Մակեդոնիայի միջովն կ'անցնիմ. որովհետև
6 Մակեդոնիայի միջովը ման կ'գամ ։ Եւ կարելի է
որ ձեզ մօտ կ'մնամ՝ կամ թէ ձմեռը կ'անցնեմ.
որ դուք ինձ ճանապարհ դնէք՝ որ տեղ որ գնա-
7 լու լինեմ ։ Որովհետեւ չեմ կամենում որ ձեզ հի-
մա անցնողի պէս տեսնեմ. յոյս ունիմ որ մի ժա-
8 մանակ ձեզ մօտ կենամ, եթէ Տէրը հրամայէ ։ Բայց
հիմա Եփեսոսումն եմ կենում՝ մինչև Պենտեկոս-
9 տէն ։ Վասնզի մեծ և արդիւնաւոր դուռ է բաց-
ուած ինձ, եւ հակառակողները շատ են ։
10 Հիմա եթէ Տիմոթէոսը գայ, նայեցէք որ անվախ
լինի ձեզ մօտ. որ Տիրոջ գործն է գործում, ինչ-
11 պէս որ ես էլ ։ Արդ մէկը չ'անարգէ նորան. եւ
խաղաղութիւնով ճանապարհ դրէք նորան՝ որ ինձ
մօտ գայ. որ սպասում եմ նորան եղբայրների հետ ։
12 Իսկ Ապողոս եղբօր համար [illegible], որ շատ ա-
ղաչեցի նորան որ ձեզ մօտ գայ եղբայրների հետ.
բայց ամենեւին կամք չ'ունէր որ հիմա գար. բայց
կ'գայ երբոր յարմար ժամանակ կ'ունենայ ։
13 Արթուն եղէք, հաստատ կացէք հաւատքումը.
14 արիացէք եւ ուժովացէք ։ Ձեր բոլոր բաները թող
սիրով լինին ։
15 Աղաչում եմ ձեզ, եղբարք, գիտէք Ստեփանի
տունը, որ Աքայեցիների առաջի պտուղն է, եւ
իրանց անձերը սուրբերի ծառայութեան նուիրեցին.
16 Որ դուք էլ հնազանդ լինիք այնպիսիներին, եւ
այն ամենին, որ գործի եւ աշխատանքի ընկեր են ։
17 Ուրախ եմ Ստեփանի եւ Փորտունատի եւ Աքա-
յիկոսի գալու համար, որ նորանք ձեր պակասու-
18 թիւնը լցրին ։ Որովհետեւ իմ եւ ձեր հոգուն

հանգիստ տուին. ուրեմն ճանաչեցէք այնպիսի-
ներին ։
19 Բարեւ են տալիս ձեզ Ասիացիների եկեղեցիները.
շատ բարեւ են տալիս ձեզ Տէրով Ակիւղասը եւ
Պրիսկիղան այն եկեղեցու հետ՝ որ նորանց տանն
20 է ։ Բարեւ են տալիս ձեզ բոլոր եղբարքը. բարեւ
տուէք իրար սուրբ համբոյրով ։
21 Իմ Պօղոսի ձեռքի բարեւն է ։ (22) Եթէ մէկը
Տէր Յիսուսին չսիրէ, անիծուած լինի. *մարան
23 աթա ։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզ
24 հետ լինի ։ Եւ իմ սէրը ձեր ամենի հետ Քրիստոս
Յիսուսում. Ամէն ։

*Ասորերէն՝ մեր Տէրը գալիս է ։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ
կամքովը, եւ Տիմոթէոս եղբայրը. Աստուծոյ եկե-
ղեցուն որ Կորնթոսումն է՝ ամեն սուրբերի հետ
2 որ բոլոր Աքայիայումն են. Շնորհք լինի ձեզ եւ
խաղաղութիւն՝ Աստուած մեր Հօրից, եւ Տէր
Յիսուս Քրիստոսից ։
3 Օրհնեալ լինի Աստուած եւ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրը, գթութիւնների Հայրը եւ ամեն
4 մխիթարութեան Աստուածը, Որ մխիթարում է
մեզ մեր ամեն նեղութիւնումը, որ մենք կարող
լինենք մխիթարել նորանց որ ամեն տեսակ նեղու-
թիւնում են՝ այն մխիթարութիւնովը որով մենք
5 Աստուածանից մխիթարվում ենք ։ Որովհետեւ ինչ-
պէս Քրիստոսի չարչարանքներն աւելանում են մե-
զանում, այնպէս էլ Քրիստոսի ձեռովը շատանում
6 է մեր մխիթարութիւնը ։ *Եւ եթէ նեղութիւն

*Ոմանք՝ Եթէ նեղութիւն ենք քաշում, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է. և եթէ մխիթարվում ենք, այն ձեր մխիթարութեան և

ենք քաշում, այն ձեր մխիթարութեան եւ փըր-
կութեան համար է, որ յաջողվում է այն չարչա-
րանքների համբերութիւնովը, որ մենք էլ չար-
չարվում ենք. եւ եթէ մխիթարվում ենք, այն
ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է,
7 Եւ մեր յոյսը ձեզ համար հաստատ է. որովհետեւ
գիտենք թէ ինչպէս չարչարանքներին մասնակից
8 էք, այնպէս էլ մխիթարութեանը։ Վասնզի չենք
կամենում, եղբարք, որ դուք չ'գիտենաք այն նե-
ղութիւնն որ Ասիայումը մեզ եղաւ. որ մեր կա-
րողութիւնից աւելի ծանրաբեռնուեցանք. մինչեւ
9 որ մեր կեանքի յոյսն էլ կտրել էինք։ Բայց հէնց
մենք ինքներս մեզ վերայ մահուան վճիռն ունէ-
ինք. որպէս զի մեր անձերի վերայ յոյս չ'դնենք,
այլ Աստուծոյ վերայ որ մեռելներին յարուցանում
10 է։ Որ այնպիսի մահից մեզ փրկեց եւ փրկում էլ
11 է. Որին յոյս ունինք՝ թէ տակաւին կ'փրկէ էլ
ձեր մեզ համար արած աղօթքի օգնականու-
թեամբը որ շատ մարդկանցից մեզ եղած շնորհքի
համար շատերի ձեռովը գոհութիւն մատուցանուի
մեզ համար։
12 Որովհետեւ մեր պարծանքը սա է՝ մեր խղճմտան-
քի վկայութիւնը, որ սրբութիւնով եւ Աստու-
ծոյ պարզութիւնովը — ոչ թէ մարմնական իմաս-
տութիւնով, այլ Աստուծոյ շնորհքովը վարուեցանք
13 աշխարհքի մէջ, եւ էլ աւելի դէպի ձեզ։ Վասնզի
ուրիշ բաներ չենք գրում ձեզ, այլ միայն նա որ
կարդում էք կամ հէնց ճանաչում էք. եւ յոյս
14 ունիմ թէ մինչեւ վերջն էլ կ'ճանաչէք։ Ինչպէս

փրկութեան համար է, որ յաջողվում է այն չար-
չարանքների համբերութիւնովը որ մենք էլ չար-
չարվում ենք, և մեր յոյսը ձեզ վերայ հաստատ է,

էլ փոքր ի շատէ ճանաչեցիք մեզ. որովհետեւ
ձեր պարծանքն ենք. ինչպէս դուք էլ մերը՝ Տէր
Յիսուսի օրումը։
15 Եւ այս վստահութիւնովը կամենում էի առաջ
ձեզ մօտ գալ, որ դուք երկրորդ շնորհք ընդու-
16 նիք. Եւ ձեզանից գնալ Մակեդոնիա. եւ դարձ-
եալ Մակեդոնիայից ձեզ մօտ գալ, եւ ձեզանից
17 ճանապարհ գցուիլ դէպի Հրէաստան։ Արդ եթէ
այս միտքն արի՝ մի՞թէ թեթեւամտութիւն գործա-
ծեցի. եւ կամ թէ այն որ խորհում եմ մարմնի՞
կերպով եմ խորհում. որ իմ կողմանէ այոն այո
18 լինի, և ոչը՝ ոչ։ Եւ Աստուած հաւատարիմ է,
19 որ մեր խօսքը դէպի ձեզ այո և ոչ չ'եղաւ։ Որով-
հետեւ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը, որ մե-
զանով ձեր մէջ քարոզուեցաւ, ինձանով և Սիղ-
ուանոսով և Տիմոթէոսով, այո և ոչ չ'եղաւ.
20 այլ այո եղաւ նորանում։ Որովհետեւ որքան Աս-
տուծոյ խոստմունքներ որ կան՝ նորանում է այոն,
եւ նորանում է ամէնը Աստուծոյ փառքի համար
21 մեզանով։ Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսումը հաս-
22 տատողը և մեզ օծողը Աստուած է. Որ մեզ կնը-
քեց էլ. և Հոգու գրաւը մեր սրտերի մէջ տուաւ։
23 Բայց ես Աստուծուն վկայ եմ կանչում իմ անձի
վերայ. որ ձեզ խնայելու համար միւսանգամ չ'ե-
24 կայ Կորնթոս. Ոչ թէ ձեր հաւատքի վերայ տի-
րապետում ենք՝ այլ ձեր ուրախութեանը գործըն-
կեր ենք, որովհետեւ դուք հաւատքով հաստատ
կանգնած էք։

ԳԼ. Բ

1 Բայց ես այս որոշեցի ինձանում որ դարձեալ
2 տրտմութիւնով չ'գամ ձեզ մօտ։ Որովհետեւ եթէ

ես ձեզ տրտմեցնեմ, էլ ո՞վ է ինձ ուրախացնողը
3 եթէ ոչ ինձանից տրտմողը ։ Եւ հէնց այս գրեցի
ձեզ, որ մի գուցէ ես եկած ժամանակը տրտմու-
թիւն քաշեմ նորանցից որոնցից պէտք էր ինձ ու-
րախ լինիլ, վստահ լինելով ձեր ամենի վերայ, որ
4 իմ ուրախութիւնն ձեր ամենինն է ։ Որովհետեւ
շատ նեղութիւնից սրտի տագնապից գրեցի ձեզ
շատ արտասուքով. ոչ թէ՝ որ տրտմիք, այլ որ
իմ սէրը գիտենաք, որն ես առատօրէն ունիմ ձեզ
վերայ ։
5 Ապա եթէ մէկը տրտմեցրել է, ոչ թէ ինձ է
տրտմեցրել, այլ փոքր 'ի շատէ, որ չ'ծանրացնեմ՝
6 ձեզ ամենիդ ։ Բաւական է այնպիսի մարդին հա-
7 մար այն խրատը, որ շատերիցը եղաւ ։ Այսուհետեւ
ընդհակառակը՝ աւելի ներեցէք, եւ մխիթարե-
ցէք. մի գուցէ շատ սաստիկ տրտմութիւնից այն-
8 պիսին խեղդուի ։ Սորա համար աղաչում եմ ձեզ,
9 որ սէրը հաստատէք նորա վերայ ։ Որովհետեւ նորա
համար գրեցի էլ ձեզ, որ ձեզ փորձով գիտե-
նամ, թէ արդեօք ամեն բանի մէջ հնազա՞նդ էք՝
10 Բայց եթէ դուք մէկին մի բան ներէք, ես էլ՝
որովհետեւ ես էլ եթէ մի բան ներեմ, որին որ նե-
11 րում եմ՝ ձեզ համար է Քրիստոսի առաջին ։ Որ
սատանան մեզ զրկանք չ'անէ. որ նորա խորհուրդ-
ներին անտեղեակ չենք ։
12 Բայց երբոր ես հասայ Տրովադա Քրիստոսի աւե-
տարանի համար, եւ դուռն ինձ համար բաց էր
13 Տէրով, իմ հոգու մէջ հանգստութիւն չ'ունէի.
որ իմ Տիտոս եղբօրն այնտեղ չ'գտայ. այլ նորան-
ցից հրաժարելով գնացի Մակեդոնիա ։
14 Բայց շնորհակալութիւն Աստուծուն՝ որ ամեն
ժամանակ մեզ յաղթող է անում Քրիստոսումը
եւ իր գիտութեան հոտը մեզանով յայտնվում է

15 ամենայն տեղ ։ Որովհետեւ մենք Քրիստոսի անուշ
հոտն ենք Աստուծոյ առաջին, փրկուածների մէջ
16 եւ կորածների մէջ ։ Ոմանց համար մահուայ հոտ
դէպի մահ, եւ ոմանց համար կեանքի հոտ դէպի
կեանք. եւ այս բաների համար ո՞վ բաւական կը
17 լինի ։ Որովհետեւ շատերին պէս չենք, որ Աստու-
ծոյ խօսքը խարդախում են. այլ ինչպէս պարզու-
թիւնից, ինչպէս Աստուածանից՝ Աստուծոյ առա-
ջին խօսում ենք Քրիստոսում ։

ԳԼ. Գ

1 Դարձեալ սկսում ե՞նք մեր անձերը յանձնարա-
րել. կամ թէ ոմանց պէս պէտք են մեզ յանձ-
նարարական թղթեր ձեզ վերայ՝ կամ ձեզանից
2 յանձնարարականներ ։ Մեր թուղթը դուք էք՝ մեր
սրտի մէջ գրուած՝ ամեն մարդկանցից իմացուած
3 եւ կարդացուած ։ Դուք յայտնի էք թէ Քրիստոսի
թուղթն էք՝ մեր ծառայութիւնովը եղած. եւ
գրուած՝ ոչ թէ թանաքով, այլ կենդանի Աստու-
ծոյ Հոգովը. ոչ թէ քարի տախտակների վերայ,
4 այլ սրտի մարմնեղէն տախտակների վերայ ։ Եւ
այսպիսի վստահութիւն ունինք առ Աստուած
5 Քրիստոսի ձեռովը ։ Ոչ թէ մենք մեզանից բաւա-
կան ենք մի բան միտք անելու ինչպէս մեզանից,
6 այլ մեր բաւական լինելն Աստուածանից է. Որ
մեզ բաւական էլ արաւ Նոր Կտակարանի պաշ-
տօնեայք լինելու՝ ոչ թէ գրի, այլ հոգու. որով-
հետեւ գիրն սպանում է, այլ հոգին կենդանա-
7 ցնում է ։ Բայց եթէ մահի պաշտօնը գրով քարերին
վերայ փորուած՝ փառքով եղաւ, մինչեւ որ Իսրա-
յէլի որդիքը չէին կարող Մովսէսի երեսին մտիկ
անել նորա երեսի փառքի համար, որ խափանուող

8 էր, ո՞րքան աւելի հոգու պաշտօնը փառքով կը
9 լինի։ Որովհետեւ եթէ դատապարտութեան պաշ-
տօնը փառքով էր, ապա ո՞րքան աւելի արդարու-
10 թեան պաշտօնը փառքով է։ Վասնզի այն փա-
ռաւորն էլ փառաւոր չէ այս մասին այն գերա-
11 զանցող փառքի համար։ Որովհետեւ եթէ այն խա-
փանուողը փառքով էր, ո՞րքան աւելի փառքով
12 է հաստատ մնացողը։ Արդ այսպիսի յոյս ունենա-
13 լով շատ համարձակութեամբ ենք վարվում, Եւ
ոչ թէ ինչպէս Մովսէսն իր երեսի վերայ քօղ էր
դցում՝ որ Իսրայէլի որդիքը չ՚նայեն խափանուե-
14 լիք բաների վախճանին. Բայց նորանց միտքը կուրա-
ցաւ. որ մինչեւ այս օրուայ օրը այն քօղը մնում
է հին կտակարանի կարդացմունքի վերայ վեր չ՚առ-
նուած, որովհետեւ Քրիստոսով խափանվում է։
15 Այլ մինչեւ այսօր երբոր Մովսէսին կարդում են,
16 մի քօղ ընկած է նորանց սրտերի վերայ։ Բայց երբ-
որ դէպի Տէրը կ՚դառնան, այն քօղը վեր կ՚առ-
17 նուի։ Որովհետեւ Տէրն է Հոգին. որտեղ որ Տի-
18 րոջ Հոգին է՝ այնտեղ է ազատութիւն։ Բայց
մենք ամենս՝ բաց երեսով Տիրոջ փառքն ինչպէս
հայելու մէջ տեսնելով՝ նոյն պատկերի նման կեր-
պարանափոխվում ենք փառքից դէպի փառք, ինչ-
պէս թէ Տիրոջ Հոգուցը։

ԳԼ. Դ

1 Սորա համար այս պաշտօնն ունենալով, ինչպէս
2 որ ողորմութիւն գտանք, չենք ձանձրանում, Այլ
ամօթալի ծածուկ բաները մերժել ենք. եւ խորա-
մանկութեամբ չենք վարվում, Եւ Աստուծոյ խօսքն
էլ չենք ծռում. այլ ճշմարտութեան յայտնու-
թիւնովը մեր անձերն ընդունելի ենք անում ամեն
3 մարդկանց խղճմտանքին՝ Աստուծոյ առաջին, Իսկ

եթէ մեր աւետարանը ծածկուած էլ լինի, նա կո-
4 րածների մէջ է ծածկուած։ Որոնցում այս աշ-
խարհքի աստուածը այն անհաւատների սրտերը
կուրացրեց, որ Քրիստոսի փառաւոր աւետարանի
լուսաւորութիւնը չ՚ծագէ նորանց վերայ. որ անե-
5 րեւոյթ Աստուծոյ պատկերն է։ Որովհետեւ մենք
ոչ թէ մեր անձերն ենք քարոզում, այլ Տէր Յի-
սուս Քրիստոսին. եւ մեզ ձեր ծառաներ Յիսուսի
6 համար։ Որովհետեւ Աստուած որ ասեց թէ խա-
ւարից լոյս ծագէ, ինքը մեր սրտերի մէջ ծա-
գեցրեց՝ Աստուծոյ փառքի գիտութեան լուսաւո-
րութիւնը տալու համար Յիսուս Քրիստոսի դէմ-
7 քումը։ Բայց այս գանձն ունինք հողի անօթնե-
րում. որ զօրութեան գերազանցութիւնը Աստու-
8 ծունը լինի, եւ ոչ թէ մեզանից։ Ամեն բանի մէջ
նեղուած ենք, բայց չենք ճնշուած. կարօտ ենք,
9 բայց չենք տարակուսել. Հալածուած, բայց երե-
10 սից չ՚ընկած. վայր ընկած, բայց չ՚կորած։ Ամեն
ժամանակ Յիսուսի մեռնելը մեր մարմնումը կրում
ենք՝ որ Յիսուսի կեանքն էլ մեր մարմնումը յայտ-
11 նուի։ Որովհետեւ մենք կենդանիներս միշտ Յիսուսի
համար մահի ենք մատնվում. որ Յիսուսի կեանքն
12 էլ յայտնուի մեր մահկանացու մարմնումը։ Այն-
պէս որ մահը մեզանում է զօրանում, եւ կեանքը
13 ձեզանում։ Բայց միեւնոյն հաւատքի հոգին ունե-
նալով, ինչպէս գրուած է. Հաւատացի եւ նորա
համար խօսեցի. մենք էլ հաւատում ենք՝ և նո-
14 րա համար էլ խօսում ենք։ Գիտենալով որ Տէր
Յիսուսին յարուցանողը մեզ էլ Յիսուսի հետ կը
յարուցանէ, և ձեզ հետ իր առաջին կ՚կանգնեցնէ։
15 Որովհետեւ ամեն բան ձեզ համար է. որ շատա-
ցած շնորհքը շատերի գոհութիւնից՝ աւելանայ
Աստուծոյ փառքի համար։

16 Նորա համար չենք թուլանում. այլ թէ և մեր
դրսի մարդը փճանում է, բայց մեր ներսի մարդն
17 օրէցօր նորոգվում է։ Որովհետև մեր այժմեան
թեթև նեղութիւնը ամենադերազանց յաւիտենա-
կան փառքի մեծութիւն է գործում մեզ համար։
18 Որ այս երևող բաներին չենք մտիկ անում, այլ
աներևոյթներին. որովհետև երևողները ժամանա-
կաւոր են, իսկ չ'երևողները յաւիտենական։

Գլ. Ե

1 Որովհետև գիտենք որ եթէ մեր վրանի երկրաւոր
շինուածքը քանդուի, Աստուածանից մի շինուածք
ունինք՝ անձեռագործ մի տուն, որ յաւիտենական
2 է երկնքումը։ Եւ հէնց սորանում հառաչում ենք
ցանկանալով հագնել մեր այն բնակութիւնը որ
3 երկնքից է։ Միայն թէ՝ երբոր այն հագնենք, մերկ
4 չ'գտնուինք։ Որովհետև մենք այս վրանի տակ լի-
նողներս հառաչում ենք ծանրութիւն կրելով. որ
չենք կամենում հանուել, այլ [illegible] վերայ
հագնել. որ մահկանացուն կեանքի մէջ ընկղմուի։
5 Բայց այս բանը մեզ յաջողել տուողը Աստուած
6 է. որ Հոգու գրաւն էլ տուաւ մեզ։ Նորա հա-
մար ամեն ժամանակ համարձակութիւն ունինք,
եւ գիտենք թէ այս մարմնումը կենալով՝ Տէրիցը
7 օտարանում ենք։ (Որովհետև հաւատքով ենք
8 գնում, եւ ոչ թէ երևոյթով։) Բայց վստահ ենք
եւ աւելի ընտրում ենք այս մարմնիցը դուրս գնալ
9 եւ Տիրոջ մօտ մնալ։ Նորա համար էլ ջանք ենք
անում, որ թէ կենանք՝ և թէ դուրս գնանք՝ հա-
10 ճոյ լինենք նորան։ Որովհետև մենք ամենս պէտք
է յայտնի լինենք Քրիստոսի ատեանի առաջին. որ
ամեն մէկն ընդունի իր մարմնով՝ ինչ որ գործեց
թէ բարի, եւ թէ չար։

11 Արդ Տիրոջ ահաւորութիւնը գիտենալով, մարդ-
կանց համոզում ենք. բայց Աստուծոյ առաջին
յայտնի ենք. եւ ես յոյս ունիմ՝ որ ձեր խղճմտան-
12 քումն էլ յայտնի ենք։ Ոչ թէ դարձեալ մեր
անձերը ձեզ յանձնարարում ենք. այլ պատճառ
ենք տալիս ձեզ՝ մեզ համար պարծենալու, որ մի
բան ունենաք նորանց դէմ, որ պարծենում են աչքի
13 առաջին եւ ոչ թէ սրտով։ Որովհետև եթէ գըժ-
ուած ենք՝ Աստուծոյ համար է. և եթէ զգաստ
14 ենք՝ ձեզ համար է։ Վասնզի Քրիստոսի սէրը ստի-
պում է մեզ՝ որ սա ենք միտք անում, թէ եթէ
մէկն ամենի տեղ մեռաւ, ուրեմն ամենը մեռած
15 են. Եւ ամենի համար մեռաւ, որ կենդանի լի-
նողները այլ ևս ոչ թէ իրանց անձերի համար կեն-
դանի լինեն, այլ նորա համար՝ որ իրանց համար
16 մեռաւ, եւ յարութիւն առաւ։ Ուրեմն այսու-
հետև մենք ոչ ոքին չ'գիտենք՝ մարմնի կողմանէ.
և թէև Քրիստոսին էլ գիտէինք մարմնի կողմանէ,
17 այլ հիմա այլ ևս չ'գիտենք։ Ուրեմն եթէ մէկը
Քրիստոսումն է՝ նոր ստեղծուած է. հիները ան-
18 ցան, ահա ամեն բան նոր եղաւ։ Բայց այն ամենն
Աստուածանից է. որ մեզ իրան հետ հաշտեցրեց
Յիսուս Քրիստոսի ձեռովը. և մեզ հաշտութեան
19 պաշտօնը տուաւ։ Որովհետև Աստուած էր Քրիս-
տոսումը որ աշխարհքը հաշտեցրեց իրան հետ, և
նորանց յանցանքները չ'համարեց նորանց և հաշ-
20 տութեան խօսքը մեր միջումը դրաւ։ Արդ Քրիս-
տոսի կողմից պատգամաւորութիւն ենք անում,
իբրև թէ Աստուած է յորդորում մեզանով. ա-
ղաչում ենք Քրիստոսի տեղ հաշտուեցէք Աստու-
21 ծոյ հետ։ Որովհետև Աստուած նորան, որ մեղք
չ'գիտէր, մեզ համար մեղք արաւ. որ մենք Աս-
տուծոյ արդարութիւնը լինենք նորանում։

ԳԼ․ Զ

1 Եւ մենք գործակից լինելով նաև աղաչում ենք,
որ դուք Աստուծոյ շնորհքը զուր տեղը չ'ընդու-
2 նէք։ Որովհետև ասում է․ Ընդունելի ժամանա-
կում լսեցի քեզ, և փրկութեան օրումն օգնեցի
քեզ․ ահա հիմա է ընդունելի ժամանակ․ ահա
3 հիմա է փրկութեան օր։ Ոչ մի բանով ոչ մի գայ-
թակղութիւն չենք տալիս, որ պաշտօնը չ'նախա-
4 տուի․ Այլ ամեն բանի մէջ մեր անձերը ընծա-
յում ենք ինչպէս Աստուծոյ պաշտօնեաներ՝ շատ
համբերութիւնով նեղութիւններում, վիշտերում,
5 չարչարանքներում, ծեծերում, բանտերում, խռո-
վութիւններում, աշխատանքներում, հսկմունքնե-
6 րում, ծոմերում, Սրբութիւնով, գիտութիւնով,
երկայնմտութիւնով, քաղցրութիւնով, Սուրբ Հո-
7 գով, անկեղծ սիրով, Ճշմարտութեան խօսքով,
Աստուծոյ զօրութիւնով, արդարութեան զէնքե-
8 րովը աջ կողմից և ձախ կողմից․ Փառքով և ա-
նարգանքով, պարսաւանքով և գովասանքով, ինչ-
9 պէս մոլորեցնողներ՝ բայց ճշմարիտներ․ ինչպէս չը
ճանաչուածներ, բայց լաւ ճանաչուածներ․ ինչպէս
մեռածներ, բայց ահա կենդանի ենք․ ինչպէս պատ-
10 ժուածներ, բայց չ'սպանուածներ, ինչպէս տրտ-
մածներ, բայց միշտ ուրախներ․ ինչպէս աղքատ-
ներ, բայց շատերին հարստացնողներ․ ինչպէս թէ
ոչինչ չ'ունեցողներ, բայց ամեն բան ունեցողներ։
11 Մեր բերանը բացուած է դէպի ձեզ, ով Կորնթա-
12 ցիներ, մեր սիրտը լայնացած է։ Դուք մեզանից
նեղութիւն չ'ունիք, միայն թէ ձեր սրտերումն էք
13 նեղվում։ Եւ մի և նոյն հատուցումը առնելով, (ինչ-
պէս թէ որդիների հետ եմ խօսում,) դուք էլ
լայնացէք։

14 Անհաւատների հետ այլախառն լծակից մի լինիք․
որովհետև ի՞նչ մասնակցութիւն ունի արդարու-
թիւնը անօրէնութեան հետ․ և ի՞նչ հաղորդու-
15 թիւն ունի լոյսը խաւարի հետ։ Եւ ի՞նչ միաբա-
նութիւն ունի Քրիստոսը Բելիարի հետ․ կամ ի՞նչ
16 բաժին ունի հաւատացեալն անհաւատի հետ։ Կամ
ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը
կուռքերի հետ․ որովհետև դուք կենդանի Աս-
տուծոյ տաճարն էք․ ինչպէս Աստուած ասեց Ես
Նորանցում կ'բնակուեմ, և Նորանցում ման կը
գամ․ և Նորանց Աստուած կ'լինեմ, և Նորանք իմ
17 ժողովուրդ։ Նորա համար՝ Նորանց միջիցը դուրս
գնացէք և բաժանուեցէք, ասում է Տէրը, և պիղծ
18 բաների մի դպչէք։ Եւ ես կ'ընդունեմ ձեզ, և ես
ձեզ հայր կ'լինիմ․ և դուք ինձ որդիներ և աղ-
ջիկներ կ'լինիք, ասում է Ամենակարող Տէրը։

ԳԼ․ Է

1 Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ,
մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղ-
ծութիւնիցը, սրբութիւնը կատարենք Աստուծոյ
ահովը։
2 Տեղ արէք մեզ․ մենք ոչ ոքի վնաս չենք տուել․
3 ոչ ոքին չենք փճացրել, ոչ ոքին չենք զրկել, Ոչ թէ
դատապարտելու համար եմ ասում․ որովհետև
առաջուց ասեցի, որ դուք մեր սրտերումն էք՝ ձեզ
հետ միասին կենդանի լինելու և մեռնելու էլ։
4 Իմ համարձակութիւնը շատ է դէպի ձեզ․ շատ
է իմ պարծանքը ձեզ վրայ․ մխիթարութիւնով
լիքն եմ․ ուրախութիւնով աւելացած եմ մեր ամեն
5 նեղութիւնումը։ Որովհետև երբոր հասանք Մա-
կեդոնիա, մեր մարմինը ոչինչ հանգիստ չ'ունե-

ցաւ, այլ ամեն բանի մէջ նեղվում էինք․ դրսից
6 կռիւներ՝ ներսից ահ ու վախ։ Բայց խոնարհնե-
րին մխիթարող Աստուածը մխիթարեց մեզ Տիտոսի
7 գալովը․ Ոչ միայն նորա գալովը, այլ և այն մխի-
թարութիւնովը՝ որով նա ձեր միջումը մխիթար-
ուել էր, երբոր նա պատմեց մեզ ձեր սրտի փա-
փաքը՝ ձեր ողբալը՝ և ձեր ջերմեռանդութիւնը ինձ
8 համար, մինչև որ ես աւելի ևս ուրախացայ․ Որ
թէև տրտմեցրի ձեզ այն թղթովը՝ չեմ զղջում,
թէ և զղջացած էլ էի, որովհետև տեսնում եմ
որ այն թուղթը, թէև մի փոքր ժամանակ, ձեզ
9 տրտմեցրեց։ Հիմա ուրախ եմ, ոչ թէ նորա հա-
մար որ տրտմեցիք՝ այլ որ տրտմեցիք ապաշխարու-
թեան համար․ որ դուք Աստուծոյ ուզած կեր-
պով տրտմեցիք, որ մեզանից ոչ մի բանով չ՚վնա-
10 ուիք։ Որովհետև Աստուծոյ ուզած կերպով տրտ-
մութիւնը, ապաշխարութիւն է գործում փրկու-
թեան համար առանց զղջալու․ բայց աշխարհքի
11 տրտմութիւնը մահ է գործում։ Որովհետև ահա
հէնց նա որ դուք Աստուծոյ ուզած կերպով տրտ-
մեցիք, որքան ջանք գործեց ձեզանում, նաև ար-
դարացումն, նաև զայրոյթ, նաև վախ, նաև փա-
փաք, նաև նախանձ, նաև վրէժխնդրութիւն․ ա-
մեն բանով ցոյց տուիք ձեր անձերը, որ անմեղ
12 էք այն բանումը։ Ուրեմն թէև գրեցի ձեզ՝ ոչ թէ
զրկողի համար էր, և ոչ էլ զրկեալի համար այլ
որ ձեր ջանքը՝ որ մեզ վերայ ունիք, յայտնի լինի
13 ձեզ մօտ՝ Աստուծոյ առաջին։ Նորա համար մխի-
թարուած ենք ձեր մխիթարութեան համար․ և
մանաւանդ աւելի ուրախացանք Տիտոսի ուրախու-
թեան համար․ որ նորա հոգին ձեր ամենիցը հան-
14 գիստ էր առած։ Որովհետև ինչ որ էլ ձեզ հա-
մար պարծեցայ նորա առաջին, չ՚ամաչեցի․ այլ

ինչպէս ամեն բան ճշմարտութիւնով խօսեցինք
ձեզ հետ, այնպէս էլ մեր պարծանքը ճշմարիտ
15 եղաւ Տիտոսի առաջին։ Եւ նորա սէրն էլ աւելի
է ձեզ վերայ, երբոր յիշում է ձեր ամենի հնա-
զանդութիւնը, թէ ինչպէս ահով և դողով ըն-
16 դունեցիք նորան։ Արդ ուրախ եմ, որ ամեն բանի
մէջ վստահութիւն ունիմ ձեզ վերայ։

ԳԼ. Ը

1 Բայց, եղբարք, իմացնում ենք ձեզ Աստուծոյ
այն շնորհքը, որ Մակեդոնացիների եկեղեցիներին
2 տրուած է, Որովհետև նեղութեան մեծ փորձի
մէջ նորանց ուրախութեան առատութիւնը և
նորանց ծանր աղքատութիւնը շատ առատաձեռն
3 եղաւ նորանց պարզութիւնովը։ Որովհետև իրանց
կարողութեան չափ, վկայում եմ, և կարողու-
4 թիւնից էլ աւելի յօժար կամքով, Շատ աղա-
չանքով աղաչում էին մեզ, որ այն պաշտօնի ըն-
ծան և պաշտօնի հաղորդութիւնը՝ սուրբերի հա-
5 մար, ընդունենք մենք։ Եւ ոչ թէ որքան որ յոյս
ունէինք, այլ իրանց անձերն էլ տուին առաջ
6 Տէրոջը և ապա մեզ՝ Աստուծոյ կամքովը․ Որ մենք
էլ Տիտոսին աղաչեցինք, որ ինչպէս առաջուց
սկսեց՝ այնպէս կատարէ այդ շնորհքն էլ ձեր մի-
7 ջումը։ Բայց ինչպէս ամեն բանի մէջ աւելանում
էք հաւատքով, և խօսքով, և գիտութիւնով, և
ամեն ջանքով, և ձեր սէրովը դէպի մեզ, որպէս
8 զի այդ շնորհքումն էլ աւելանաք։ Ոչ թէ հրա-
ման տալով եմ ասում, բայց ուրիշների ջանք ա-
նելու համար, և ձեր սէրի անկեղծութիւնը փոր-
9 ձելով։ Որովհետև գիտէք մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացաւ Նա՝

որ հարուստ էր, որ դուք Նորա աղքատութիւնովը
10 հարստանաք։ Եւ այս բանի մէջ մի խրատ եմ
տալիս. որ սա օգուտ է ձեզ. որ ոչ թէ միայն
անելը այլ և կամենալն առաջուց սկսեցիք հեր-
11 ուանից։ Բայց հիմա անելն էլ կատարեցէք. որ
ինչպէս յօժարութիւն կայ կամենալու, այնպէս
12 էլ կատարելը լինի ունեցածից։ Որովհետև եթէ
յօժարութիւն կայ, ունեցածի չափովն է ընդու-
13 նելի և ոչ թէ չ՚ունեցածի չափովը։ Վասնզի ոչ
թէ ուրիշներին հանգստութիւնն ես կամենում, և
14 ձեզ նեղութիւն. Բայց հաւասարութիւնով՝ այժ-
մեան ժամանակում ձեր աւելութիւնը ծառայէ նո-
րանց պակասութեանը, որ նորանց աւելութիւնն
էլ ծառայէ ձեր պակասութեանը, որ հաւասարու-
15 թիւն լինի. ինչպէս գրուած է. Թէ նա որ շատ՝
16 չ՚աւելացաւ. և նա որ քիչ՝ չ՚պակասեց. Բայց շնոր-
հակալութիւն Աստուծուն, որ նոյն ջանքը ձեզ
17 համար տուաւ Տիտոսի սրտի մէջ. Որովհետև նա
աղաչանքն ընդունեց, և շտապելով յօժար կամ-
18 քով ձեզ մօտ եկաւ։ Եւ նորա հետ ուղարկե-
ցինք այն եղբօրը, որ գովասանք ունի աւետարա-
19 նումն ամեն եկեղեցիների մէջ։ Եւ ոչ թէ միայն
այդքան, այլ եկեղեցիներից էլ ընտրուած՝ մեր
ճանապարհորդութեան ընկեր այս շնորհքումը, ո-
րին մենք ծառայում ենք Տիրոջ փառքի համար
20 և ձեր յօժար սրտովը. Այս բանիցն զգուշանալով՝
որ չ՚լինի թէ մէկը արատաւորէ մեզ այս առա-
21 տութիւնում, որին մենք ծառայում ենք։ Որով-
հետև մտածում ենք բարի բաներ անել՝ ոչ միայն
22 Տիրոջ առաջին, այլ և մարդկանց առաջին։ Եւ
նորանց հետ ուղարկեցինք մեր եղբօրը՝ որին փոր-
ձել ենք շատ բաների մէջ շատ անգամ որ ժիր
է. և հիմա էլ աւելի ջանք անող այն մեծ վստա-

23 հութեամբը որ ունի դէպի ձեզ։ Իսկ եթէ Տիտոսի
համար խօսք լինի, նա իմ ընկերն է՝ և ձեզ համար
իմ գործակիցը. և եթէ մեր եղբայրների համար,
Նորանք եկեղեցիների *առաքեալներ են՝ և Քրիս-
24 տոսի փառքը։ Ուրեմն ձեր սէրի և մեր ձեր հա-
մար պարծենալու ապացոյցը ցոյց տուէք դորանց
ամեն եկեղեցիների առաջին։

ԳԼ. Թ

1 Որովհետև սուրբերի համար լինելու պաշտօնի
2 մասին, աւելորդ է ինձ ձեզ գրելը։ Վասնզի գի-
տեմ ձեր յօժարութիւնը, որով Մակեդոնացի-
ների մէջ ձեզ համար պարծենում եմ. թէ Ա-
քայեցիները հերուանից պատրաստ են, և ձեր նա-
3 խանձը շատերին գրգռեց։ Եւ եղբայրներին ուղար-
կեցի, որ մեր ձեզ վերայ պարծենալն զուր չ՚լինի
այս մասին. այլ ինչպէս ասել եմ, պատրաստուած
4 լինիք։ Որ չ՚լինի թէ՝ երբոր Մակեդոնացիներ ինձ
հետ գան՝ և ձեզ անպատրաստ գտնեն, ամօթով
լինենք մենք (որ չ՚ասենք թէ՝ դուք,) այս պար-
5 ծանքի վստահութեամբը։ Արդ հարկաւոր համա-
րեցի եղբայրներին աղաչել, որ առաջ ձեզ մօտ
գան, և առաջուց պատրաստեն ձեր առաջուց խոս-
տացած †օրհնութիւնը, որ պատրաստ լինի, այն-
պէս ինչպէս օրհնութիւն, և ոչ թէ ինչպէս ագա-
6 հութիւն։ Որովհետև սա ես ասում, թէ խնայելով
սերմողը, խնայելով էլ կը հնձէ. և առատու-
թեամբ սերմողը, առատութեամբ էլ կ՚հնձէ։
7 Ամեն մէկն ինչպէս որ սրտի յօժարութիւն կայ,
ոչ թէ տրտմութիւնով կամ հարկադրութիւնով.

*ուղարկուածներ

†կամ՝ ընծան

որովհետև Աստուած սիրում է ուրախ տուողին։
8 Բայց Աստուած կարող է ամեն շնորհքներն աւե-
լացնել ձեզանում. որ ամեն բանի մէջ ամեն ժա-
մանակ ամեն բաւականութիւն ունենալով ամեն
9 բարի գործի համար աւելանաք։ Ինչպէս գրուած
է. Փռեց՝ աղքատներին տուաւ. նորա արդարու-
10 թիւնը մնում է յաւիտեան։ Բայց նա՝ որ սերմ
ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի
համար, նա կ՚պարգևէ և կը շատացնէ ձեր սեր-
մունքը, և կ՚աճեցնէ ձեր արդարութեան պտուղը։
11 Ամեն բանի մէջ հարստացած ամեն լիութիւնով
որ մեզանով գոհութիւն է բերում Աստուծուն։
12 Որովհետև այս տուրքի պաշտօնը ոչ թէ միայն
սուրբերի պակասութիւնն է լրացնում, այլ և շա-
տերի գոհութիւնը շատացնում է Աստուծոյ հա-
13 մար։ Որ այս պաշտօնի փորձովը Աստուծուն փա-
ռաւորեն ձեր Քրիստոսի աւետարանին հնազանդ-
դաւանութեանը համար. և այն առատ հաղորդու-
14 թեան համար որ նորանց և ամենին լինում է. Եւ
նորանց աղօթքովը ձեզ համար, որ փափաքեն ձեզ
Աստուծոյ այն առատ շնորհքի համար՝ որ ձեզա-
15 նում է։ Եւ շնորհակալութիւն Աստուծուն նորա
անպատմելի պարգևի համար։

ԳԼ. Ժ

1 Բայց ես ինքս՝ Պօղոսս աղաչում եմ ձեզ Քրիս-
տոսի հեզութիւնովը ու հանդարտութիւնովը, որ
խոնարհ եմ երես առ երես ձեր միջումը լինելիս,
2 իսկ հեռուից համարձակ եմ դէպի ձեզ։ Աղա-
չում եմ որ չ՚լինի՝ թէ մօտից էլ այն վստահու-
թիւնով համարձակ լինեմ որ համարում եմ յան-
դըգնիլ մի քանիսի դէմ, որ մեզ համար կարծում

3 են՝ թէ մարմնաւորապէս ենք վարվում։ Որով-
հետև թէ և *մարմնով ենք վարվում, բայց մարմ-
4 նաւորապէս չենք զինուորութիւն անում։ Որով-
հետև մեր զինուորութեան զէնքերը մարմնաւոր
չեն, այլ Աստուծով զօրաւոր, բերդեր քանդելու.
5 խորհուրդներ ենք քանդում, Եւ ամեն բարձրու-
թիւն՝ որ գոռոզանում է Աստուծոյ գիտութեան
դէմ. և գերի ենք բռնում ամեն միտք Քրիստո-
6 սին հնազանդեցնելու համար։ Եւ պատրաստ ենք
վրէժ առնելու ամեն անհնազանդութեան համար՝
երբ որ ձեր հնազանդութիւնը կատարեալ լինի։
7 Երեսի՞ էք նայում. եթէ մէկն իր անձի վերայ
վստահ է թէ Քրիստոսինն է, թող իր մտքումն
այս էլ մտածէ, թէ ինչպէս որ նա Քրիստոսինն է,
8 այնպէս էլ մենք ենք Քրիստոսինը։ Որովհետև եթէ
մի աւելի բան պարծենալու լինեմ մեր իշխանու-
թեան համար որ Տէրը տուաւ մեզ՝ ձեր շինու-
թեան և ոչ թէ կործանման համար, չեմ ամաչիլ։
9 Որ չ՚երևիմ իբր թէ վախեցնում եմ ձեզ այս թըղ-
10 թերովը։ Որովհետև թղթերը՝ ասում են՝ ծանր են
և սաստիկ. բայց մարմնի կերպարանքը տկար՝ և
11 խօսքն էլ անարգ։ Այնպիսին թող սա միտք ա-
նէ, թէ ինչպէս որ ենք հեռուանց խօսքով թը-
12 թղթերովը, այնպէս էլ են+ մօտանց գործով։ Որով-
հետև չենք համարձակում մեր անձը կշռել և
բաղդատել ոմանց հետ՝ որ իրանց անձերը գովե-
լով յանձնարարում են. այլ նորանք իրանցով ի-
րանց անձերը չափելով, և իրանց անձերը իրանց
13 հետ բաղդատելով, չեն հասկանում։ Բայց մենք
չափից դուրս չենք պարծենում. այլ այն կանոնի
չափովը, որն Աստուած բաժանեց մեզ՝ հասնել

*Յուն. մարմնի մէջ

14 մինչև ձեզ մօտ էլ, Որ ոչ թէ իբր թէ ձեզ մօտ
չ՚հասած մեր անձերը երկայնացնում ենք. որով-
հետև մինչև ձեզ մօտ էլ հասանք Քրիստոսի ա-
15 ւետարանովը։ Եւ չափից դուրս չենք պարծենում՝
ուրիշների աշխատանքով, բայց յուսալով թէ ձեր
հաւատքը աճելիս՝ մենք էլ կ՚մեծանանք ձեզա-
16 նում մեր կանոնի չափովը՝ առաւելութեամբ։ Որ
ձեզանից այն կողմն էլ աւետարանը քարոզենք՝ և
օտար կանոնով պատրաստուածների վերայ չ՚պար-
17 ծենանք։ Եւ ով որ պարծենում է՝ թող Տէրովը
18 պարծենայ։ Որովհետև ոչ թէ իր անձը յանձնա-
րարողն է ընտիր. այլ նա՝ որին Տէրն է յանձնա-
րարում։

ԳԼ. ԺԱ

1 Երանի թէ մի քիչ իմ անմտութեանը ներէիք.
2 բայց ներում էլ էք ինձ։ Վասնզի ձեզ համար
նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովը. որովհե-
տև ձեզ մի մարդի նշանեցի՝ որ մի սուրբ կոյս
3 կանգնեցնեմ Քրիստոսի առաջին։ Բայց վախենում
եմ՝ մի գուցէ ինչպէս օձն իր խորամանկութեամբը
խաբեց Եւային, այնպէս էլ ձեր միտքն ապական-
4 ուի այն միամտութիւնիցը՝ որ Քրիստոսումն է։ Ո-
րովհետև եթէ մէկը գայ և ուրիշ Յիսուս քարոզէ,
որ մենք չ՚քարոզեցինք, կամ ուրիշ հոգի առնէք
որ չ՚առաք, կամ ուրիշ աւետարան որ չ՚ընդու-
5 նեցիք, լաւ կ՚համբերէիք։ Որովհետև կարծեմ
թէ ոչ մի բանով պակաս չեմ քան թէ մեծամեծ
6 առաքեալները։ Թէև տգէտ լինիմ խօսքով, բայց
ոչ թէ գիտութիւնով. այլ ամեն բանի մէջ բո-
7 լորովին յայտնուեցանք ձեզ։ Կամ թէ մե՞ղք
գործեցի՝ որ իմ անձը խոնարհեցրի. որ դուք

բարձրանաք. որովհետև Աստուծոյ աւետարանը ձրի
8 աւետարանեցի ձեզ։ Ուրիշ եկեղեցիներ կողոպ-
տեցի, և վարձք առայ ձեզ ծառայելու համար։
9 Եւ երբոր ձեզ մօտ էի՝ մի բանի պակասութիւն
քաշած ժամանակս էլ, ձեզանից մէկին ծանրու-
թիւն չ՚տուի. որովհետև իմ պակասութիւնը Մա-
կեդոնիայից եկած եղբարքը լրացրին. և ամեն բանի
մէջ իմ անձն առանց ձեզ ծանրութիւն տալու
10 պահեցի, և կ՚պահեմ էլ։ Քրիստոսի ճշմարտու-
թիւնն է ինձանում. որ այս պարծանքն Աքայիայի
11 կողմերումը չի խափանուիլ ինձանից։ Ի՞նչու հա-
մար. որովհետև ձեզ չե՞մ սիրում. Աստուած գի-
12 տէ։ Այն որ անում եմ՝ կ՚անեմ էլ, որ պատ-
ճառ որոնողների պատճառը կտրեմ. որ ինչով որ
պարծենում են՝ նորանք էլ մեզ նման գտնուին։
13 Որովհետև այնպիսիները սուտ առաքեալներ, նեն-
գաւոր մշակներ, Քրիստոսի առաքեալների պէս
14 կերպարանուողներ են։ Եւ զարմանալի էլ չէ. ո-
րովհետև սատանան ինքն էլ լոյսի հրեշտակի կեր-
15 պարանքն իրան վերայ է առնում։ Ուրեմն մեծ
բան չէ որ նորա պաշտօնեաներն էլ կերպարանուին
արդարութեան պաշտօնեաների նման. որոնց վերջը
16 իրանց գործերին պէս կ՚լինի։ Դարձեալ ասում
եմ. չ՚լինի որ մէկն ինձ յիմար համարէ. ապա թէ
ոչ գոնեա յիմարի պէս ընդունեցէք ինձ որ ես էլ
17 մի քիչ պարծենամ։ Ինչ որ խօսում եմ, ոչ թէ
Տիրոջ կամքի համեմատ եմ խօսում, այլ ինչպէս
անմտութեամբ այս պարծանքի նիւթին նկատմամբ։
18 Եւ որովհետև շատերը մարմնի կողմանէ պարծե-
19 նում են, ես էլ կ՚պարծենամ։ Վասնզի յօժա-
րութեամբ համբերում էք անմիտներին՝ իմաս-
20 տուն գոլով։ Որովհետև համբերում էք, եթէ
մէկը ձեզ ծառայեցնէ, եթէ մէկը ձեր բանն

ուտէ, եթէ մէկը բան առնէ, եթէ մէկը գո-
21 ռոզանայ, եթէ մէկը ձեր երեսին զարկէ։ Անար-
գանքի համար եմ ասում. իբր թէ մենք տկար
էինք. ինչ բանով որ մէկը համարձակէ պարծենալ՝
անմտութիւնով եմ ասում, ես էլ եմ համար-
22 ձակում։ Եբրայեցի՞ են, ես էլ. Իսրայէլացի՞ են,
23 ես էլ. Աբրահամի զաւա՞կ են, ես էլ։ Քրիստոսի
պաշտօնեանե՞ր են, յիմարութիւնով եմ ասում՝
թէ էլ աւելի ես, մանաւանդ աշխատանքներով,
ծեծերով էլ աւելի, բանտերի մէջ մանաւանդ,
24 մահերով շատ անգամ։ Հրէաներից հինգ անգամ
25 քառասունից մէկը պակաս ծեծ ընդունեցի։ Երեք
անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ անգամ քար-
կոծուեցայ. երեք անգամ նաւակոծ եղայ. մի ցե-
26 րեկ ու գիշեր անդնդումը մնացի։ Շատ անգամ
ճանապարհներում. գետերից վտանգներ, աւազակ-
ներից վտանգներ, ազգիցս վտանգներ, հեթանոս-
ներից վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անա-
պատի մէջ վտանգներ, ծովի մէջ վտանգներ, սուտ
27 եղբայրներից վտանգներ։ Ջանքի մէջ և աշխատանքի
մէջ. շատ անգամ արթնութիւնների մէջ. սովի
և ծարաւի մէջ. շատ անգամ ծոմի մէջ. ցրտի և
28 մերկութեան մէջ։ Բացի արտաքին նեղութիւնները՝
ինձ վերայ կիտւում է՝ ամեն օր ամեն եկեղեցիների
29 հոգսը։ Ո՞վ կ'տկարանայ՝ և ես չեմ տկարանալ.
30 ո՞վ կ'գայթակղէ՝ և ես չեմ բորբոքուիլ։ Եթէ
պարծենալ պէտք լինի, իմ տկարութիւնովը կը
31 պարծենամ։ Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիստոսի
Հայրը՝ որ յաւիտեան օրհնեալ է՝ գիտէ որ սուտ չեմ
32 ասում. Դամասկոսումն Արետա թագաւորի ազգա-
պետը Դամասկացիների քաղաքումը պահապաններ
33 էր դրել որ ինձ բռնէ. Եւ ես պատուհանիցը քթո-
ցով կախուեցայ պարսպիցը, և փախայ նորա ձեռքից։

ԳԼ. ԺԲ

1 Պարծենալը յիրաւի օգուտ չէ բերում ինձ. բայց
կ'գամ Տիրոջ տեսիլքներին և յայտնութիւններին։
2 Մէկ մարդ գիտեմ Քրիստոսումը տասնեչորս տա-
րուց առաջ, թէ մարմնով էր՝ չ'գիտեմ, և թէ ա-
ռանց մարմնի էր՝ չ'գիտեմ, Աստուած գիտէ. Նա
3 յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը։ Եւ գի-
տեմ այնպիսի մարդին թէ մարմնով՝ և թէ առանց
4 մարմնի էր՝ չ'գիտեմ. Աստուած գիտէ. Որ նա յա-
փշտակուեցաւ դրախտի մէջ. և անասելի բաներ
5 լսեց՝ որ մարդի պէտք չէ նորանց խօսել։ Այնպի-
սուն համար կ'պարծենամ. բայց իմ անձի համար
չեմ պարծենալ, բայց միայն իմ տկարութիւննե-
6 րովը։ Որովհետև եթէ կամենամ էլ պարծենալ՝
անմիտ չեմ լինիլ. որ ճշմարիտն եմ ասում. բայց
խնայում եմ, որ մի գուցէ մէկն ինձ համար ա-
ւելի բան համարէ, քան թէ այն՝ որ ինձանում
7 տեսնում է կամ ինձանից լսում։ Եւ որ յայտ-
նութիւնների առաւելութեամբը չ'հպարտանամ,
մարմնիս համար խայթ տրուեցաւ ինձ՝ սատանայի
հրեշտակ, որ ինձ բռունցքով ծեծէ, որ չ'գոռո-
8 զանամ։ Սորա համար երեք անգամ աղաչեցի Տի-
9 րոջը, որ նորան հեռացնէ ինձանից։ Եւ նա ինձ
ասեց. Բաւական է քեզ իմ շնորհքը, որովհետև
իմ զօրութիւնը տկարութեան մէջ է կատարվում.
արդ աւելի յօժարութեամբ իմ տկարութիւննե-
րովը կ'պարծենամ. որ Քրիստոսի զօրութիւնը բը-
10 նակուէ ինձանում։ Վասնորոյ հաւանել եմ տկա-
րութիւնների, թշնամանքների, վիշտերի, հալա-
ծանքների, և— նեղութիւնների Քրիստոսի համար.
որ երբոր տկարանում եմ, այն ժամանակ զօրա-

11 նում եմ։ Անմիտ եղայ պարծենալովս. դուք ինձ
բռնադատեցիք. որ պէտք էր ինձ վկայութիւն առ-
նել ձեզանից. որովհետև ոչ մի բանով պակաս չե-
ղայ քան թէ այն մեծամեծ առաքեալները, թէև
12 ես ոչինչ եմ։ Բայց առաքեալի նշանները ձեր մէջ
գործուեցան՝ ամեն համբերութիւնով, նշաններով
13 և հրաշքներով և զօրութիւններով։ Որովհետև
ինչ է որ նորանով պակաս գտնուեցաք քան թէ
ուրիշ եկեղեցիները. եթէ ոչ նորանով՝ որ ես ծան-
րութիւն չ'տուի ձեզ. ներեցէք ինձ այդ վնասը։
14 Ահա երրորդ անգամն է որ պատրաստ եմ ձեզ
մօտ գալու, և ձեզ ծանրութիւն չեմ տալ. որով-
հետև ձեր բանը չեմ որոնում՝ այլ ձեզ. նորա
համար որ ոչ թէ որդիքը հայրերի համար պէտք
է գանձ հաւաքեն, այլ հայրերը որդկանց համար։
15 Բայց ես յօժարութեամբ ձեր անձերի համար ծախք
կ'անեմ, և ծախք կ'լինիմ. թէև աւելի սիրելով
ձեզ՝ ես քիչ սիրուիմ։
16 Բայց թող լինի. ես ծանրութիւն չ'եղայ ձեզ.
սակայն խորագէտ լինելով՝ վարպետութեամբ բռ-
17 նեցի ձեզ։ Մի՞թէ նորանց ձեռովը՝ որ ձեզ մօտ
18 ուղարկեցի՝ մի բան քաշեցի ձեզանից։ Աղաչեցի
Տիտոսին՝ և նորա հետ այն եղբօրն էլ ուղարկեցի.
մի՞թէ Տիտոսը ձեզանից մի բան քաշեց. չէ՞ որ
մենք նոյն հոգով վարուեցանք. չէ՞ որ նոյն ճա-
նապարհով գնացինք։
19 Դարձեալ կարծո՞ւմ էք թէ մենք խօսքով մեզ
պաշտպանում ենք. Աստուծոյ առաջին Քրիստո-
սումը խօսում ենք. և ամեն բան, սիրելիներ, ձեր
20 շինութեան համար է։ Որովհետև վախենում եմ,
որ մի գուցէ իմ գալու ժամանակը ձեզ այնպէս չը
գտնեմ՝ ինչպէս կամենում եմ. և ես գտնուիմ
ձեզ համար ինչպէս էլ դուք չէք կամենում.

որ չ'լինեն կռիւներ, նախանձներ, բարկութիւններ,
դրդռութիւններ, չարախօսութիւններ, քսութիւն-
ներ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ։
21 Որ մի գուցէ դարձեալ իմ գալու ժամանակ՝ իմ
Աստուածն ինձ ցածացնէ ձեզ մօտ. և սուգ մըտ-
նեմ շատերի համար որ առաջուց մեղք գործե-
ցին, և ապաշխարած չ'լինին այն պղծութեան և
պոռնկութեան և գիճութեան համար՝ որ գործեցին։

ԳԼ. ԺԳ

1 Այս երրորդ անգամն է որ ձեզ մօտ եմ գալիս.
երկու և երեք վկաների բերանից ամեն բան կ'հաս-
2 տատուի։ Առաջուց ասեցի և առաջ էլ ասում
եմ իբր մօտ լինող երկրորդ անգամ. և հիմա հե-
ռուանց գրում եմ այն առաջուց մեղք գործած-
ներին և ամեն ուրիշներին. որ եթէ դարձեալ գամ,
3 չեմ խնայիլ. Քանի որ դուք ապացոյց էք որոնում
թէ Քրիստոսն ինձանով խօսում է, նա որ ձեր մի-
4 ջումը տկար չէ, այլ զօրաւոր է ձեզանում։ Որով-
հետև թէև խաչուեցաւ տկարութիւնից, բայց
կենդանի է Աստուծոյ զօրութիւնովը. որ մենք
էլ թէ և տկարանում ենք նորա համար՝ բայց
կենդանի կ'լինենք նորա հետ Աստուծոյ զօրու-
5 թիւնովը ձեզ համար. փորձեցէք ձեր անձերը,
թէ արդեօք հաւատքո՞ւմն էք. քննեցէք ձեր ան-
ձերը. կամ թէ չ'գիտէ՞ք ձեր անձերը՝ որ Յի-
սուս Քրիստոսը ձեզանում է. միայն եթէ անպի-
6 տան լինիք։ Բայց յոյս ունիմ որ գիտենաք, թէ
7 մենք անպիտան չենք։ Եւ ես աղօթում եմ դէպի
Աստուած որ չար բան չ'անէք. ոչ թէ որ մենք ըն-
տիր երեւինք, բայց որ դուք բարին գործէք, և
8 մենք անպիտանի պէս լինենք։ Որովհետև մի բան

չենք կարող ճշմարտութեան դէմ. բայց ճշմար-
9 տութեան համար: Ուրախանում ենք, երբոր մենք
տկարանում ենք և դուք զօրանում էք. որ հենց
դա էլ աղօթքով խնդրում ենք, այսինքն ձեր կա-
10 տարելութիւնը: Նորա համար այս հեռուանց գը-
րում եմ. որ չ'լինի թէ իմ գալու ժամանակ սաստ-
կութեամբ վարուիմ իմ իշխանութեան չափով,
որ Տէրը տուաւ ինձ շինելու և ոչ թէ քանդելու
համար:
11 Վերջապէս, եղբարք, ուրախ եղէք, կատարեալ
եղէք, մխիթարուեցէք, միաբան եղէք, և խաղա-
ղութիւն արէք. և սէրի և խաղաղութեան Աստ-
12 ուածը ձեզ հետ լինի: Իրար բարև տուէք սուրբ
համբոյրով. բարև են տալիս ձեզ բոլոր սուրբերը:
13 Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, և Աստուծոյ սէրը,
և Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեր ամենի հետ.
Ամէն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս առաքեալ ոչ թէ մարդկանցից և ոչ թէ
մարդի ձեռով, այլ Յիսուս Քրիստոսի և Հայր Աս-
տուծոյ ձեռովը, որ մեռելներից յարութիւն տուաւ
2 նորան, Եւ ամեն եղբարքը՝ որ ինձ հետ են. Գա-
3 ղատիայի եկեղեցիներին: Շնորհք լինի ձեզ և խա-
ղաղութիւն Հայր Աստուածանից և մեր Տէր Յի-
4 սուս Քրիստոսից, Որ իր անձը մեր մեղքերի հա-
մար տուաւ, որ մեզ այս չար աշխարհքիցը փրկէ՝
5 Աստուծոյ և մեր Հօր կամքի պէս: Որին լինի փառք
յաւիտեանս յաւիտենից. ամէն:
6 Զարմանում եմ որ այսպէս շուտով փոփոխվում
էք ձեզ Քրիստոսի շնորհքի մէջ կանչողից դէպի
7 ուրիշ աւետարան: Որ ուրիշը չ'կայ. միայն թէ
կան ոմանք որ ձեզ խռովեցնում են, և կամենում
8 են Քրիստոսի աւետարանը փոխել: Բայց եթէ մենք
էլ, կամ երկնքիցը մի հրեշտակ աւետարանէ ձեզ
նորանից ուրիշ քան թէ որ մենք աւետարանեցինք
9 ձեզ, Նզովուած լինի: Ինչպէս առաջ ասեցինք՝ և
հիմա դարձեալ ասում եմ, եթէ մէկն աւետա-
րանէ ձեզ նորանից ուրիշ քան որ դուք առաք՝ նը-
10 զովուած լինի: Որովհետև հիմա մարդկա՞նց եմ հա-
ճեցնում, թէ Աստուծուն. կամ ուզում եմ մարդ-

կա՞նց հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկանց
հաճոյ լինէի, Քրիստոսի ծառայ չէի։
11 Իմացնում եմ ձեզ, եղբարք, այն աւետարանը,
որ ինձանից աւետարանուեցաւ, որ նա մարդից չէ։
12 Որովհետեւ ես էլ ոչ մարդից առայ նորան, և ոչ
էլ սովորեցի. այլ Յիսուս Քրիստոսի յայտնութիւ-
13 նովը։ Վասնզի դուք իմ վարքը լսել էք, որ մի
ժամանակ Հրէութեան մէջ էի. որ չափիցը դուրս
հալածում էի Աստուծոյ եկեղեցին, և կործանում
14 էի նորան։ Եւ Հրէութեան մէջ իմ հասակակից-
ների շատերից յառաջադէմ էի իմ ազգի մէջ,
աւելի նախանձաւոր լինելով իմ հայրենական ա-
15 ւանդութիւնների համար։ Բայց երբոր բարեհա-
ճեց Աստուած, որ իմ մօր որովայնիցն ինձ որոշել
16 և իր շնորհքովն կանչել է, Որ իր Որդին ինձանով
յայտնէ. որ նորան հեթանոսների միջումն աւե-
տարանեմ. այն ժամանակ իսկոյն մարմնի և արիւնի
17 հետ խորհուրդ չ'արի. Եւ ոչ էլ գնացի Երուսա-
ղէմ նորանց մօտ, որ ինձանից առաջ առաքեալներ
էին. այլ գնացի Արաբիա, և կրկին դարձայ Դամաս-
18 կոս։ Ա՛յնուհետեւ երեք տարուց յետոյ գնացի
Երուսաղէմ, Պետրոսին տեսնելու. և տասնեհինգ
19 օր նորա մօտ եղայ։ Եւ առաքեալներից մի ուրիշին
չ'տեսայ, բայց միայն Տիրոջ եղբայր՝ Յակոբին,
20 Բայց ինչ որ ձեզ գրում եմ, ահա Աստուծոյ ա-
21 ռաջին, որ սուտ չեմ ասում։ Յետոյ եկայ Սի-
22 րիայի և Կիլիկիայի կողմերը։ Եւ երեսով անծա-
նօթ էի Հրէաստանի եկեղեցիներին՝ որ Քրիստո-
23 սումն էին։ Բայց միայն լսել էին, թէ Նա որ մի
ժամանակ մեզ հալածում էր, հիմա այն հա-
ւատքն է աւետարանում որ առաջ կործանում
24 էր։ Եւ ինձանով փառաւորում էին Աստուծուն,

ԳԼ. Բ

1 Ապա տասնեչորս տարուց յետոյ դարձեալ գնացի
Երուսաղէմ, Բառնաբասի հետ, և Տիտոսին էլ
2 ինձ հետ առայ։ Եւ գնացի յայտնութիւնով.
և նորանց իմացրի այն աւետարանը՝ որ քարոզում
եմ հեթանոսների մէջ, եւ մասնաւորապէս նո-
րանց՝ որ մեծ կարծուած էին. որ չ'լինի թէ զուր
3 տեղը վազեմ կամ վազած լինեմ։ Բայց Տիտոսն
էլ որ ինձ հետ էր՝ Հելլենացի լինելով, չ'բռնա-
4 դատուեցաւ թլփատուելու։ Եւ այն ներս պրծած
սուտ եղբայրների պատճառով, որ ներս պրծան
մեր ազատութիւնը լրտեսելու համար, որ Քրիս-
տոս Յիսուսումն ունինք, որ մեզ ծառայեցնեն։
5 Որոնց մի ժամ էլ ականջ չ'դրինք՝ հնազանդ լի-
նելու համար, որ աւետարանի ճշմարտութիւնը
6 ձեզանում հաստատ մնայ։ Բայց այն մեծ կարծուած-
ների համար, թէ մի բան լինին, (թէ ինչ էին մի
ժամանակ, նա ես հոգս չեմ անում. Աստուած
*աչառութիւն չէ անում.) որ այն մեծ կարծուած-
7 ներն այնպիսի բան չ'իմացրին ինձ։ Բայց ընդհակա-
ռակը, երբոր տեսան թէ անթլփատութեան աւե-
տարանն ինձ հաւատացուած է, ինչպէս Պետրոսին
8 թլփատութեան աւետարանը. (Որովհետեւ նա որ
Պետրոսին յաջողեց թլփատութեան առաքելու-
թիւնում, ինձ էլ յաջողեց հեթանոսների մէջ։)
9 Եւ երբոր իմացան այն շնորհքը որ ինձ տրուած
էր, Յակոբոսը և Կեփասը և Յովհաննէսը, որ սիւ-
ներ էին կարծուած, ինձ և Բառնաբասին աջ ձեռք
տուին հաղորդակցութեան համար. որ մենք հե-

---

*Յուն. մարդի անձ չէ ընդունում.

թանոսների մէջ լինենք, և նրանք թլփատութեան
10 մէջ։ Բայց միայն որ աղքատները յիշենք. որ ես
11 էլ ջանք արի նոյնն անելու։ Բայց երբ որ Պետրոսը
եկաւ Անտիոք, ես նրան հակառակ կեցայ, որ մե-
12 ղադրելի էր։ Վասնզի մի քանի մարդիկ դեռ չ՚ե-
կած Յակոբիցը, նա անխտիր ուտում էր հեթա-
նոսների հետ. բայց երբոր եկան, ետ էր քաշվում
և իր անձը ջոկում, վախենալով նրանցից որ թլ-
13 փատութիւնիցն էին։ Եւ նրա հետ ուրիշ Հրէա-
ներն էլ կեղծաւորութիւն արին. մինչև որ Բառ-
նաբասն էլ ծռուեցաւ նրանց կեղծաւորութիւ-
14 նովը։ Բայց երբոր տեսայ, որ աւետարանի ճշմար-
տութեան համեմատ ուղիղ չեն գնում, ամենքի
առաջին ասեցի Պետրոսին. Եթէ դու, Հրէայ լի-
նելովդ, հեթանոսի պէս ես վարվում և ոչ թէ
Հրէայի պէս, էլ ի՞նչու ես բռնադատում հեթա-
15 նոսներին որ Հրէայի պէս վարուին։ Մենք որ բուն
Հրէաներ ենք, և ոչ թէ հեթանոսների միջից մե-
16 ղաւորներ. Գիտենք որ մարդ օրէնքի գործերից
չէ արդարանում, բայց միայն Յիսուս Քրիստոսի
հաւատքից. և մենք Յիսուս Քրիստոսին հաւա-
տացինք, որ Քրիստոսի հաւատքից արդարա-
նանք, և ոչ թէ օրէնքի գործերից. որովհետև
օրէնքի գործերից ոչ մի մարմին չի արդարա-
17 նալ։ Իսկ եթէ մենք՝ որ ուզում ենք Քրիստո-
սով արդարանալ, ինքներս էլ մեղաւոր գտ-
նուինք, ուրեմն Քրիստոսը մեղքի՞ պաշտօնեայ է.
18 քաւ լիցի։ Վասնզի՝ եթէ այն որ քանդեցի՝ նորան
կրկին շինեմ, ապա ես ինքս իմ անձը մեղաւոր
19 եմ երևեցնում։ Որովհետև ես օրէնքովս օրէնքին
մեռայ, որ ապրեմ Աստուծուն. ես Քրիստոսի հետ
20 խաչուած եմ։ Եւ կենդանի եմ, ոչ թէ այլ ևս
ես, այլ Քրիստոս է կենդանի ինձանում. և ինչ

որ հիմա կենդանի եմ մարմնով՝ Աստուծոյ Որդու
հաւատքովս եմ կենդանի. որ ինձ սիրեց և իր անձը
21 ինձ համար մատնեց։ Եւ ես Աստուծոյ շնորհքը
չեմ անարգում, որովհետև եթէ արդարութիւնն
օրէնքիցն էր, ուրեմն Քրիստոսը զուր տեղը մեռաւ։

ԳԼ. Գ

1 Ով անմիտ Գաղատացիներ, ո՞վ կախարդեց ձեզ
որ ճշմարտութեանը չ՚հնազանդիք. որոնց համար
աչքերի առաջին նկարագրուեցաւ Յիսուս Քրիս-
2 տոսը խաչուած ձեր մէջ։ Այս միայն կամենում
եմ սովրիլ ձեզանից. օրէնքի գործերի՞ցն ընդու-
3 նեցիք Հոգին՝ թէ հաւատքի լսելուցը։ Այդքան
անմի՞տ էք. հոգով սկսեցիք, և հիմա մարմնո՞վ
4 էք վերջանում։ Այնքան նեղութիւնները զո՞ւր
5 տեղը կրեցիք. թէ որ զուր էլ լինի։ Արդ ձեզ
Հոգին բաժանողը և ձեր միջումը զօրութիւններ
գործողը, օրէնքի գործերի՞ց է թէ հաւատքի լսե-
6 լուցը։ Ինչպէս որ Աբրահամը հաւատաց Աստու-
ծուն, և այն նորա համար արդարութիւն համար-
7 ուեցաւ։ Ուրեմն գիտացէք. թէ նորանք որ հա-
8 ւատքիցն են, նորանք են Աբրահամի որդիք։ Գիրքն
էլ առաջուց գիտենալով, որ Աստուած հաւատ-
քիցն է արդարացնում հեթանոսներին՝ առաջուց
Աբրահամին խօսացաւ, թէ քեզանում պիտի օրհ-
9 նուին բոլոր ազգերը։ Ուրեմն նորանք որ հաւատ-
քից են, օրհնվում են հաւատացեալ Աբրահամի
10 հետ։ Որովհետև որոնք որ օրէնքի գործերից են,
անէծքի տակ են. վասնզի գրուած է Թէ Անիծեալ
լինի ամեն մարդ, որ չէ կենում օրէնքի գրքի մէջի
11 բոլոր գրուածներումը, որ ամենն անէ։ Եւ թէ օ-
րէնքովս ոչ ով չէ արդարանում Աստուծոյ առա-

ջին, դա յայտնի է. որովհետեւ Արդարը հաւատ-
12 քից կ՚ապրէ։ Բայց օրէնքը հաւատքից չէ այլ
13 Նորանց կատարող մարդը կ՚ապրէ նորանով։ Քրիս-
տոս գնեց մեզ օրէնքի անէծքից մեզ համար ա-
նէծք լինելով. (վասնզի գրուած է Թէ Անիծեալ
14 լինի ամեն փայտից կախուածը։) Որ Աբրահամի
օրհնութիւնը հեթանոսների մէջ լինի Քրիստոս Յի-
սուսով, որ մենք Սուրբ Հոգու խոստմունքն ընդու-
15 նենք հաւատքով։ Մարդկօրէն եմ ասում, եղ-
բարք. ապաքէն մի մարդի հաստատուած կտակը
ոչ ով չէ անարգում. և ոչ էլ նորա վերայ ուրիշ
16 հրաման աւելացնում։ Եւ Աբրահամին խոստաց-
ուեցան այն խոստմունքները, և նորա զաւակին.
չէ ասում, Եւ զաւակներին՝ ինչպէս շատերին, այլ
ինչպէս մէկին. Եւ քո զաւակին. որ է Քրիստոս։
17 Բայց սա եմ ասում. Այն կտակը, որ առաջուց
Աստուածանից հաստատուած էր Քրիստոսի վերայ,
չորս հարիւր և երեսուն տարուց յետոյ եղած օ-
18 րէնքը չի քանդիլ որ խոստմունքը խափանուի։ Ո-
րովհետեւ եթէ ժառանգութիւնն օրէնքից լինէր,
ապա խոստմունքից չէր. բայց Աստուած խոստ-
19 մունքով շնորհեց Աբրահամին։ Արդ օրէնքն ինչ
է. նա յանցանքների պատճառով աւելացաւ. մին-
չև որ գայ այն զաւակը, որին եղաւ խոստմունքը
20 հրեշտակներով կարգուած միջնորդի ձեռով։ Բայց
միջնորդը մէկի չէ, սակայն Աստուած մէկ է։
21 Ուրեմն օրէնքն Աստուծոյ խոստմունքներին հակա-
ռա՞կ է. քաւ լիցի. որովհետեւ եթէ օրէնք տըր-
ուած լինէր որ կարող լինէր կենդանի անել, ապա
22 իրաւի օրէնքից կ՚լինէր արդարութիւնը։ Բայց գիր-
քը փակեց ամենքը մեղքի ներքև, որ խոստմունքը
Յիսուս Քրիստոսի հաւատքից տրուի հաւատա-
23 ցողներին։ Դեռ որ հաւատքը չէր եկած՝ օրէնքի

ներքև փակուած պահվում էինք այն հաւատքի
24 համար, որ պէտք էր յայտնուէր։ Ուրեմն օրէնքը
մեզ համար դաստիարակ եղաւ դէպի Յիսուս Քրիս-
25 տոսը, որ հաւատքից արդարանանք։ Բայց երբոր
հաւատքն եկաւ, այլեւս դաստիարակի տակ չենք։
26 Որովհետեւ ամենքդ Աստուծոյ որդիք էք Քրիստոս
27 Յիսուսի հաւատքովը։ Վասնզի ամենքդ՝ որ Քրիս-
տոսումը մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք։
28 Այլ ևս ոչ Հրէայ կայ և ոչ Յոյն, ոչ ծառայ կայ
և ոչ ազատ, ոչ արու կայ և ոչ էգ. որովհետեւ
29 դուք ամենքդ մէկ էք Քրիստոս Յիսուսումը։ Ապա
եթէ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Աբրահամի
զաւակ էք՝ և խոստմունքի համեմատ ժառանգներ։

ԳԼ. Դ

1 Բայց ասում եմ. քանի ժամանակ որ ժառանգը
երեխայ է՝ ծառայից ոչինչ տարբերութիւն չ՚ունի,
2 թէ և ամեն բանի տէր է, Բայց վերակացուների
և տնտեսների ներքև է մինչև հօր որոշած ժամա-
3 նակը։ Այնպէս էլ մենք, քանի որ երեխաներ էինք՝
աշխարհքի սկզբունքների ներքև ծառայութեան
4 մէջ էինք։ Բայց երբոր ժամանակի լրումն եկաւ,
Աստուած ուղարկեց իր Որդին՝ կնկանից ծնուած՝
5 և օրէնքի ներքև եղած, Որ օրէնքի տակ լինողնե-
6 րին փրկէ, որ որդեգրութիւնն ընդունենք։ Եւ ո-
րովհետեւ դուք որդիք էք, Աստուած իր Որդու
Հոգին ուղարկեց ձեր սրտերի մէջ, որ աղաղակում
7 է Աբբա Հայր։ Ուրեմն այլ ևս ծառայ չես՝ այլ
որդի. և եթէ որդի՝ Աստուծոյ ժառանգ էլ Քրիս-
8 տոսով։ Բայց այն ժամանակ որ Աստուծուն չ՚գի-
տէիք, ծառայում էիք նորանց որ 'ի բնէ աստուած-
9 ներ չեն։ Բայց հիմա որ ճանաչեցիք Աստուծուն,

մինչեւանդ թէ Աստուածանից ճանաչուեցաք, ինչ-
պէս էք կրկին ետ դառնում դէպի այն տկար և
աղքատ սկզբունքները, որոնց կամենում էք դարձ-
10 եալ ծառայել: Օրեր էք զանազանում և ամիսներ
11 և ժամանակներ և տարիներ: Վախենում եմ ձե-
զանից՝ որ մի գուցէ զուր տեղն աշխատեցի ձեր
միջումը:
12 Ինձ նման եղէք, որովհետև ես էլ ձեզ նման
էի. եղբարք, աղաչում եմ ձեզ, դուք ինձ ոչ մի
13 վնաս չէք տուել: Եւ գիտէք որ մարմնի տկարու-
14 թիւնով աւետարանեցի ձեզ առաջի անգամը. Եւ
իմ փորձանքն՝ որ իմ մարմնումն էր, չ'անարգեցիք
և չ'արհամարհեցիք, այլ ինչպէս Աստուծոյ հրեշ-
տակ ընդունեցիք ինձ՝ ինչպէս Քրիստոս Յիսուսին:
15 Արդ ի՞նչ էր այն ձեր երանութիւնը. որովհետև
վկայում եմ ձեզ համար, որ եթէ կարելի էր՝
16 ձեր աչքերն էլ կ'հանէիք և ինձ կ'տայիք: Ուրեմն
թշնամի՞ եղայ ձեզ՝ ձեզ հետ ճշմարիտը խօսելովս:
17 Նախանձով են ձեզ համար, ոչ թէ 'ի բարին.
այլ կամենում են արգելել մեզ որ նորանց համար
18 նախանձաւոր լինիք: Սակայն լաւ է բարի բանում
ամեն ժամանակ նախանձաւոր լինել, և ոչ թէ մի-
19 այն երբ որ ձեզ մօտ լինեմ: Իմ որդեակներ, որ
ձեզ կրկին ծնում եմ ցաւով, մինչև որ Քրիստոսը
20 կերպարանուի ձեզանում: Կամենում էի որ հիմա
ձեզ մօտ գամ և ձայնս փոխեմ. որովհետև տա-
րակուսած եմ ձեզ համար:
21 Ասեցէք ինձ դուք, որ կամենում էք օրէնքի տակ
22 լինել, օրէնքը չէ՞ք լսում: Որովհետև գրուած է,
թէ Աբրահամը երկու որդիք ունէր, մինն աղախ-
23 նիցը, և միւսն ազատիցը: Բայց նա որ աղախնիցն
էր՝ մարմնի կողմանէ էր ծնուած, և նա որ ազա-
24 տիցն՝ խոստմունքի համեմատ: Այս բաները այլա-

բանօրէն են. որ նորանք երկու կտակարաններն են,
մէկը Սինա սարիցը ծառայութեան մէջ ծնուած՝
25 որ է Հագարը: Որովհետև Հագարը Սինա սարն է՝
Արաբիայումն, որ հաւասար է այժմեան Երուսա-
ղէմին, որ իր զաւակներովը հանդերձ ծառայ է:
26 Բայց վերին Երուսաղէմն ազատ է, որ մեր ամենի
27 մայրն է: Որովհետև գրուած է թէ, Ցնծա, ով ա-
մուլ՝ որ չէիր ծնում, գոչիր և աղաղակիր դու՝ որ
ծնելու ցաւ չէիր քաշում. որովհետև աւելի շատ
28 են թողուածի որդիքը քան թէ այրամբիինը: Իսկ
մենք, եղբարք, Իսահակի պէս խոստմունքի որդիք
29 ենք: Բայց ինչպէս որ այն ժամանակ մարմնի կող-
մանէ ծնուածը հալածում էր նորան՝ որ հոգու կող-
30 մանէ էր, այնպէս էլ հիմա: Բայց գի՞րքն ինչ է
ասում. Դուրս հանիր աղախնին և նորա որդուն.
որ աղախնի որդին ժառանգութիւն չ'պիտի առանալ
31 ազատի որդու հետ: Սորա համար, եղբարք, ա-
ղախնի որդիք չենք, այլ ազատի:

ԳԼ. Ե

1 Արդ այն ազատութիւնովը որ Քրիստոսը մեզ ա-
զատեց, հաստատ կացէք և դարձեալ ծառայու-
2 թեան լծի տակ մի մտնէք: Ահա ես Պօղոսս ասում
եմ ձեզ, որ եթէ թլփատուէք, Քրիստոսը ձեզ օ-
3 գուտ չի անիլ: Եւ դարձեալ վկայում եմ ամեն
մարդի համար որ թլփատվում է, թէ նա պարտա-
4 կան է բոլոր օրէնքը կատարելու: Խափանուած էք
Քրիստոսից դուք, որ օրէնքով էք կամենում ար-
5 դարանալ. շնորհքից ընկած էք: Որովհետև մենք
Հոգով հաւատքից ենք սպասում արդարութեան
6 յոյսին: Վասնզի Քրիստոս Յիսուսումը ոչ թլփա-
տութիւնն է մի բան կարող, և ոչ անթլփատու-

7 թիւնը. այլ հաւատքը որ սիրով գործում է: Լաւ
էիք վազում, ձեզ ո՞վ ետ կանգնեցրեց՝ որ չ՚հնա-
8 զանդէք ճշմարտութեանը: Այդ համոզումը նրա-
9 նից չէ որ կանչեց ձեզ: Մի քիչ խմորը բոլոր զան-
10 գուածը խմորեցնում է: Ես ձեզ վրայ յոյս ունիմ
Տէրովը՝ որ ուրիշ բան չէք մտածիլ. և ձեզ խռո-
վեցնողը դատապարտութիւն կ՚քաշէ ով որ էլ լինի:
11 Բայց ես, եղբարք, եթէ տակաւին թլփատութիւն
եմ քարոզում, էլ ի՞նչու համար եմ հալածվում.
ուրեմն խաչի գայթակղութիւնը խափանուած է:
12 Երանի թէ բոլորովին կտրուէին նրանք որ ձեզ
խռովեցնում են:
13 Որովհետև դուք ազատութեան համար էք կան-
չուել, եղբարք. միայն թէ ձեր ազատութիւնը
պատճառ չ՚տաք մարմնին. այլ սիրով ծառայեցէք
14 իրար: Որովհետև բոլոր օրէնքն այս մէկ խօսքում
է կատարվում. Քո ընկերին քո անձի պէս սիրիր:
15 Բայց եթէ իրար կծէք և ուտէք, զգուշացէք որ
16 իրարից չ՚փճանաք: Բայց ասում եմ. Հոգով գնա-
17 ցէք, և մարմնի ցանկութիւնը չէք կատարիլ: Որով-
հետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ,
և հոգին մարմնին հակառակ. և սորանք իրար
հակառակ են, որ մի գուցէ այն որ դուք կամե-
18 նում էք՝ այն անէք: Բայց եթէ Հոգուց էք առաջ-
19 նորդվում, օրէնքի տակ չէք. Եւ յայտնի են մարմնի
գործերը, որ են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծ-
20 ծութիւն, գիճութիւն, կռապաշտութիւն, կա-
խարդութիւն, թշնամութիւններ, կռիւներ, նա-
խանձներ, բարկութիւններ, հակառակութիւններ,
21 երկպառակութիւններ, բաժանմունքներ, Չար նայ-
ուածներ, սպանութիւններ, արբեցութիւններ, ա-
նառակութիւններ, և ինչ որ սորանց նման են. որ
առաջուց ասում եմ ձեզ, ինչպէս էլ առաջուց

ասում էի, թէ այսպիսի բաներ գործողներն Ա-
22 տուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ: Բայց Հո-
գու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղու-
23 թիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարու-
թիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն.
24 այնպիսիների դէմ օրէնք չ՚կայ: Բայց նրանք որ
Քրիստոսինն են, իրանց մարմինը խաչ հանեցին կիր-
25 քերովը և ցանկութիւններովը միասին: Եթէ Հոգով
26 ենք ապրում, Հոգով վարուինք: Ունապարծ չ՚լի-
նինք իրար գրգռելով, և իրար վրայ նախանձելով:

ԳԼ. Զ

1 Եղբարք, եթէ մէկը յանկարծ բռնուի մի յան-
ցանքով, դուք որ հոգևոր էք, այնպիսին հաստա-
տեցէք հեզութեան հոգով, զգուշացիր քո անձին,
2 որ դու էլ չ՚փորձուիս: Իրար բեռը վեր առէք, և
3 այսպէս Քրիստոսի օրէնքը կատարեցէք: Որովհետև
եթէ մէկը համարում է թէ մին բան է և չէ, նա
4 իր անձը խաբում է: Բայց ամեն մէկը թող իր
գործը կշռէ, և ապա միայն իր անձի վրայ պար-
5 ծանք կ՚ունենայ, և ոչ թէ ուրիշի վրայ. Որ ա-
մեն մէկն իր բեռը պիտի վեր առնէ:
6 Խօսքին աշակերտողը թող վարդապետին մաս-
7 նակից անէ ամեն բարի բաներով: Մի խաբուիք.
8 Աստուած չի ծաղրուիլ: Որովհետև ինչ որ մարդ
սերմէ, այն էլ կ՚հնձէ. իր մարմնի մէջ սերմողը
մարմնից ապականութիւն կ՚հնձէ. և Հոգու մէջ
սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կ՚հնձէ:
9 Եւ չ՚ձանձրանանք բարին գործելուցը, որովհետև
10 իր ժամանակին կ՚հնձենք՝ եթէ չ՚թուլանանք: Ու-
րեմն քանի որ ժամանակ ունինք, բարի գործենք
ամենին, մանաւանդ հաւատքի ընտանիներին:

11 Տեսէք թէ ինչպիսի գրերով գրեցի ձեզ իմ ձե-
12 ռովս։ Որոնք որ կամենում են հաճոյ երևել
մարմնի կողմանէ, նորանք ստիպում են ձեզ՝ որ
թլփատուիք. միայն որ Քրիստոսի խաչի համար չ
13 հալածուին։ Որովհետև այն թլփատուածներն ի-
րանք էլ օրէնքը չեն պահում. այլ կամենում են
որ դուք թլփատուիք, որ ձեր մարմնովը պարծե-
14 նան։ Սակայն ինձ քաւ լիցի պարծենալ, բայց մի-
այն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովս. որ նորա-
նով աշխարհքն ինձ համար խաչուած է, և ես էլ
15 աշխարհքին։ Որովհետև Քրիստոս Յիսուսումը ոչ
թլփատութիւնը մի բան է, և ոչ անթլփատու-
16 թիւնը, բայց նոր արարածը։ Եւ այն ամենն որ
այս կանոնի համեմատ են վարվում, խաղաղու-
թիւն լինի նորանց վերայ և ողորմութիւն, և Աս-
17 տուծոյ Իսրայէլին վերայ։ Սորանից յետոյ թող
մէկը չ'աշխատեցնէ ինձ. որ ես կրում եմ Տէր Յի-
18 սուսի վէրքի նշաններն իմ մարմնի մէջ։ Մեր Տէր
Յիսուս Քրիստոսի շնորհքը, եղբարք, ձեր հոգու
հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ
կամքովը. այն սուրբերին որ Եփեսոսումն են, և
2 Քրիստոս Յիսուսումը հաւատացեալներին. Շնորհք
լինի ձեզ և խաղաղութիւն Աստուած՝ մեր Հօրի-
ցը, և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Հայրը. որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհ-
նութիւնով երկնաւոր բաներումը Քրիստոսով։
4 ինչպէս որ ընտրեց մեզ նորանով աշխարհքի ստեղ-
ծելուցն առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք
5 նորա առաջին սիրով. Մեզ առաջուց սահմանե-
լով, որ իրան որդեգիր լինենք Յիսուս Քրիստոսի
6 ձեռովս՝ իր կամքի հաճութեան պէս, Իր փառա-
ւոր շնորհքի գովասանքի համար. որ նորանով
7 շնորհք ցոյց տուաւ մեզ այն Սիրելիովը։ Որով ու-
նինք փրկութիւնը նորա արիւնովը՝ մեղքերի թո-
8 ղութիւնը իր շնորհքի մեծութեան չափովը. Որ
աւելացաւ մեզանում ամեն իմաստութիւնով և
9 գիտութիւնով. Ցոյց տալով մեզ իր կամքի խոր-
հուրդն իր հաճութեան պէս. որ առաջուց դրաւ
10 իրանում. Ժամանակների լրութեան տնտեսու-
թեան համար, որ ամեն բան բովանդակուի Քրիս-

տասումը, ինչ որ երկնքումն է՝ և ինչ որ երկրու-
11 մը, Նորանում. Որով որ էլ ստացանք ժառան-
գութիւնը մենք առաջուց որոշուած լինելով, Նո-
րա յառաջադրութեան պէս, որ ամեն բան յաջո-
12 ղում է իր կամքի խորհուրդների պէս. Որ մենք
գովասանք լինենք Նորա փառքին, որ առաջուց
13 մեր յոյսը Քրիստոսի վերայ ենք դրել: Որ Նորա-
նում և դուք յուսացիք, երբոր ճշմարտութեան
խօսքը լսեցիք՝ ձեր փրկութեան աւետարանը, որին
էլ երբոր հաւատացիք՝ խոստմունքի Սուրբ Հոգովը
14 կնքուեցաք: Որ մեր ժառանգութեան գրաւն է,
մինչև ստացուածքի փրկութիւնը, Նորա փառացը
գովասանքի համար:
15 Նորա համար ես էլ լսելով ձեր հաւատքը, որ
ունիք Տէր Յիսուսի վերայ, և ձեր սէրը դէպի ամեն
16 սուրբերը, Չեմ դադարում ձեզ համար գոհու-
թիւն տալուց՝ ձեզ իմ աղօթքներումը յիշելով.
17 Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառքի
Հայրը տայ ձեզ իմաստութեան և յայտնութեան
18 հոգի՝ իր գիտութիւնովը. Որ ձեր սրտերի աչքերը
լուսաւորուելով՝ գիտենաք, թէ ի՞նչ է Նորա կո-
չումի յոյսը, և ի՞նչ է իր ժառանգութեան փա-
19 ռաւոր մեծութիւնը սուրբերումը. Եւ ի՞նչ է Նո-
րա զօրութեան գերազանց մեծութիւնը մեզա-
նում, որ հաւատացինք, իր կարող զօրութեան
20 յաջողութեան պէս, Որ Քրիստոսումը գործա-
րեց՝ Նորան մեռելների միջից յարուցանելով, և իր
21 աջ կողմը նստեցրեց երկնաւորներումը, Ամեն իշ-
խանութիւնից և պետութիւնից և զօրութիւնից
և տէրութիւնից վեր՝ և ամեն անունից վեր՝ որ
անուանվում է, ոչ միայն այս աշխարհքումը, այլ
22 և այն հանդերձեալումը: Եւ ամեն բան հնազան-
դեցրեց Նորա ոտների տակ, և Նորան գլուխ դրաւ

23 եկեղեցուն՝ բոլոր բաների վերայ, Որ է Նորա մար-
մինը, այն լրումը որ ամենն ամենի մէջ լրացնում է:

ԳԼ. Բ

1 Եւ դուք, որ մեռած էիք յանցանքներումը և
2 մեղքերումը. Որոնցում մի ժամանակ գնում էիք
այս աշխարհքի սովորութեան պէս՝ օդի իշխանու-
թեան իշխանի պէս, այն հոգու պէս՝ որ հիմա
ներգործում է ապստամբութեան որդիների մէջ.
3 Որոնց մէջ մենք ամենս էլ մի ժամանակ ման էինք
գալիս մեր մարմնի ցանկութիւններումը՝ մարմնի և
մտքի կամքը կատարելով, և բնութեամբ բարկու-
4 թեան որդիք էինք ինչպէս ուրիշներն էլ. Բայց
Աստուած, որ մեծ է ողորմութեամբ, իր շատ սէ-
5 րի համար որ սիրեց մեզ, Երբ որ մեռած էինք
յանցանքներում, մեզ կենդանի արաւ Քրիստոսի
6 հետ. շնորհքով էք փրկուած: Նորա հետ մեզ յա-
րոյց, և Նորա հետ երկնաւորներումը նստեցրեց՝
7 Քրիստոս Յիսուսումը: Որ նոր եկող դարերում յա-
ւիտեան ցոյց տայ իր շնորհքի գերազանց մեծու-
թիւնը, Քրիստոս Յիսուսի մեզ վերայ ցոյց տուած
8 քաղցրութիւնովը: Որովհետև շնորհքով էք փըր-
կուած հաւատքի ձեռովը. և սա ոչ թէ ձեզանից
9 է, այլ Աստուծոյ պարգևն է. Ոչ թէ գործերից,
10 որ մէկը չ'պարծենայ: Վասնզի Նորա ստեղծուածն
ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատուած բարի գոր-
ծերի համար. որոնց համար Աստուած առաջուց
պատրաստեց մեզ, որ նորանցում վարուինք:
11 Վասն որոյ յիշեցէք որ դուք՝ մի ժամանակ հե-
թանոսներ մարմնով, որ անթլփատութիւն են կոչ-
ուած՝ մարմնի մէջ ձեռքով արած թլփատութեան
12 կողմանէ, Որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք,

և հեռացած Իսրայէլի քաղաքակցութիւնից. և
օտարացած խոստմունքի ուխտերից, յոյս չու-
13 նէիք. և անաստուած էիք աշխարհքումս։ Բայց
հիմա Յիսուս Քրիստոսի ձեռովը դուք՝ որ ժամա-
նակով հեռաւոր էիք, մօտաւոր եղաք Քրիստոսի
14 արիւնովը։ Վասնզի Նա է մեր խաղաղութիւնը որ
երկուսին մէկ արաւ և մէջ տեղի բաժանող պատը
15 թշնամութիւնը քանդեց իր մարմնովը. Հրաման-
ներով դրած պատուիրանքների օրէնքը խափանե-
լով. որ իրանով երկուսին մէկ նոր մարդ ստեղծէ,
16 խաղաղութիւն անելով. Եւ երկուսին մէկ մարմ-
նով հաշտեցնէ Աստուծոյ հետ՝ իր խաչովը, թշ-
17 նամութիւնը նորանով սպանելով։ Եւ եկաւ աւե-
տարանեց խաղաղութիւն ձեզ հեռաւորներիդ՝ և
18 խաղաղութիւն մօտաւորներին։ Վասնզի նորանով
երկուսս մէկ Հոգով ունինք մօտենալը Հօր մօտ։
19 Ուրեմն այսուհետև այլ ևս օտար և պանդուխտ
չէք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստու-
20 ծոյ ընտանիքներ, Առաքեալների և մարգարէների
հիմքի վերայ շինուած. որի անկիւնի գլուխը Յի-
21 սուս Քրիստոսն է. Որ նորանում բոլոր շինուածքը
միասին յարմարուած աճում է, որ լինի սուրբ տա-
22 ճար Տէրով. Որ նորանում դուք էլ նորա հետ
շինվում էք Աստուծոյ բնակարան Հոգով։

ԳԼ. Գ

1 Սորա համար ես Պօղոսս՝ Յիսուս Քրիստոսի կապ-
2 ուածս ձեզ հեթանոսներիդ համար. Անշուշտ դուք
լսած էք Աստուծոյ շնորհքի այն տնտեսութիւնը՝
3 որ ինձ տրուած է ձեզ համար։ Որ յայտնութիւ-
նով ցոյց տրուեցաւ ինձ այն խորհուրդը. (ինչպէս
4 առաջուց կարճառօտ գրեցի ձեզ. Որ կարող լի-

նէք կարդալ և իմանալ իմ տեղեկութիւնը, որ
5 Քրիստոսի խորհրդի համար է.) Որ ուրիշ դարե-
րում մարդկանց զաւակներին ցոյց չ'տրուեցաւ.
ինչպէս հիմա իր սուրբ առաքեալներին և մարգա-
6 րէներին յայտնուեցաւ՝ Հոգով. Որ հեթանոսները
ժառանգակիցներ և մարմնակիցներ են, և Քրիստո-
7 սումն խոստմունքի մասնակից՝ աւետարանովը։ Որի
ես սպասաւորը եղայ՝ Աստուծոյ շնորհքի պարգևի
պէս՝ որ տրուեցաւ ինձ, Նորա զօրութեան ներգոր-
8 ծելու պէս. Ինձ՝ ամեն սուրբերի յետինիս՝ տրուե-
ցաւ այս շնորհքը, որ հեթանոսների մէջ աւետա-
9 րանեմ Քրիստոսի անքննելի հարստութիւնը. Եւ
ամենին լուսաւորեմ, թէ ինչ է այն խորհրդի
տնտեսութիւնը, որ յաւիտեաններից հետէ ծած-
կուած էր Աստուծոյ մօտ՝ որ ամեն բան ստեղծեց
10 (Յիսուս Քրիստոսով)։ Որ հիմա իշխանութիւննե-
րին և պետութիւններին երկնաւորներումն եկեղե-
ցու ձեռովը յայտնուի Աստուծոյ բազմապատիկ ի-
11 մաստութիւնը, Այն յաւիտենական յառաջադրու-
թեան պէս, որ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռովն
12 արաւ. Որով ունինք համարձակութիւնը և յու-
սով մօտենալը Նորան հաւատալով։
13 Վասն որոյ աղաչում եմ, որ չ'ձանձրանաք իմ
նեղութիւններումը, ձեզ համար որ ձեր փառքն է։
14 Սորա համար կրկնում եմ իմ ծունկերը մեր Տէր
15 Յիսուս Քրիստոսի Հօր առաջին, Որից ամեն նահա-
պետութիւն երկնքումը և երկրումս անուն է առ-
16 նում, Որ իր փառքի հարստութեան պէս տայ
ձեզ, որ զօրութեամբ հաստատուիք իր Հոգու ձե-
17 ռովը ներսի մարդումը։ Որ Քրիստոսը հաւատքով
բնակուի ձեր սրտերումը. և դուք սիրով ար-
18 մատ գցած և հաստատուած լինիք։ Որ ամեն
սուրբերի հետ իմանաք, թէ ինչ է լայնութիւ-

նը և երկայնութիւնը և բարձրութիւնը և խո-
19 րութիւնը. Որ ճանաչէք Քրիստոսի սէրը որ ամեն
գիտութիւնից գերազանց է. որ Աստուծոյ ամեն
20 լիութիւնովը լցուիք։ Բայց Նորան՝ որ կարող է ա-
ռատութեամբ անել ամեն բաներից աւելի քան որ
խնդրում ենք և իմանում, այն զօրութեան չափո-
21 վը՝ որ մեզանում ներգործում է. Նորան փառք
լինի եկեղեցումը, որ Քրիստոս Յիսուսումն է, ամեն
դարերում յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

ԳԼ. Դ

1 Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար կապ-
ուածս, որ այնպէս գնաք ինչպէս որ կ'վայելէ այն
2 կոչումին որի մէջ կանչուեցաք։ Ամեն խոնարհու-
թիւնով և հեզութիւնով և երկայնմտութիւնով,
3 սիրով իրար համբերելով։ Ջանալով Հոգու միա-
4 բանութիւնը պահել խաղաղութեան կապովը։ Մէկ
մարմին և մէկ հոգի. ինչպէս կոչուեցաք էլ ձեր
5 կոչումի մէկ յոյսի մէջ։ Մէկ Տէր, մէկ հաւատք,
6 մէկ մկրտութիւն. Մէկ Աստուած և ամենքի Հայր,
որ ամենքի վերայ և ամենքի հետ՝ և ձեր ամենքի
7 մէջ է։ Բայց մեր ամեն մէկիս տրուած է շնորհ-
8 քը՝ Քրիստոսի պարգևի չափի պէս։ Սորա համար
ասում է. Նա Վեր ելաւ բարձրը, գերի առաւ
գերութիւնը. և մարդկանց պարգևներ տուաւ,
9 Այն վեր ելաւը ի՞նչ է, եթէ ոչ՝ որ առաջ վայր
10 իջաւ երկրի ցած կողմերը։ Այն վայր իջնողը նոյն
ինքն է, որ ամեն երկինքներից աւելի բարձր վեր
ելաւ, որ ամենը լրացնէ։
11 Եւ նա մի քանիսին տուաւ առաքեալներ լինե-
լու, մի քանիսին մարգարէներ, մի քանիսին աւե-
տարանիչներ, մի քանիսին հովիւներ և վարդա-

12 պետներ, Սուրբերի կատարելութեանը համար,
պաշտօնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինու-
13 թեան համար. Մինչև որ ամենքս հասնենք հա-
ւատքի և Աստուծոյ Որդին ճանաչելու միութեա-
նը. և կատարեալ մարդ լինելու Քրիստոսի կատար-
14 եալ հասակի չափովը. Որ այլ ևս երեխայ չ'լինենք
երերուած ու տատանուած վարդապետութեան
ամեն քամուցը մարդկանց խաբեբայութիւնովը որ
մոլորեցնեն խաբեբայութեան խորամանկութիւնո-
15 վը։ Բայց ճշմարիտ լինելով սէրի մէջ՝ աճինք նո-
րանում ամեն բանով, որ է գլուխը՝ Քրիստոսը.
16 Որից բոլոր մարմինը միասին կազմուելով և միասին
յարմարուելով ամեն յօդուածի ձեռնտուութեամբ
ըը ամեն մէկ անդամի ներգործութեան չափովը
մարմնոյ աճիլը գործվում է՝ իր անձը սիրով շինե-
լու համար։
17 Արդ սա եմ ասում և վկայում Տէրով, որ դուք
այլ ևս չ'գնաք ինչպէս ուրիշ հեթանոսներն են
18 գնում իրանց մտքի ունայնութիւնովը, Որ խա-
ւարուած են մտքով, և օտար՝ Աստուծոյ կեանքի-
ցը, այն տգէտութեան պատճառովը որ նորանցում
19 է. իրանց սրտերի կուրութեան համար։ Որ անըզ-
գայացած՝ իրանց անձերը մատնեցին անառակու-
թեան ամեն պղծութեան գործերի մէջ ագահու-
20 թիւնով։ Բայց դուք Քրիստոսին այսպէս չ'սովորե-
21 ցիք. Եթէ նորանից լսեցիք, և նորանով սովորե-
ցիք՝ ինչպէս որ ճշմարտութիւնն է Յիսուսումը.
22 Որ ձեզանից դուրս հանէք առաջի գնացքի պէս
եղող հին մարդը որ խաբեբայութեան ցանկութիւ-
23 նովն ապականուած է. Եւ ձեր մտքի հոգովը նո-
24 րոգուէք. Եւ նոր մարդին հագնէք՝ որ Աստուծոյ
պատկերին պէս ստեղծուած է՝ ճշմարտութեան ար-
25 դարութիւնովը և սրբութիւնովը։ Նորա համար

դէն գցելով ստութիւնը՝ խօսեցէք ճշմարտութիւնն
ամէն մարդ իր ընկերի հետ, վասնզի իրար անդամ
26 ենք։ Բարկանաք՝ մի մեղանչէք. Թող արեգակը
27 ձեր բարկութեան վերայ չ'մնէ։ Եւ տեղի չ'տաք
28 սատանային։ Նա որ գողանում էր, թող էլ չ'գո-
ղանայ, այլ մանաւանդ աշխատէ իր ձեռներովը
բարին գործելով. որ ունենայ տալու՝ պէտք ունե-
29 ցողին։ Ոչ մի գէշ խօսք չ'դուրս գայ ձեր բերա-
նիցը. բայց այն՝ որ բարի է՝ շինութեան համար
30 հարկաւոր, որ շնորհք տայ լսողներին։ Եւ մի տրտ-
մեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք
31 փրկութեան օրուայ համար։ Ամէն դառնութիւն
և բարկութիւն և սրտմտութիւն և աղաղակ և
հայհոյութիւն թող վեր առնուի ձեզանից՝ ամէն
32 չարութեան հետ։ Եւ իրար հետ քաղցր եղէք,
գթած՝ իրար ներելով, ինչպէս Աստուած էլ
Քրիստոսով ձեզ ներեց։

ԳԼ. Ե

1 Արդ նմանող եղէք Աստուծուն ինչպէս սիրելի
2 որդիներ։ Եւ սիրով գնացէք, ինչպէս որ Քրիս-
տոսն էլ մեզ սիրեց, և իր անձը մեզ համար մատ-
նեց, պատարագ և զոհ Աստուծոյ անոյշ հոտ լի-
3 նելու. Բայց պոռնկութիւն և ամէն պղծութիւն,
կամ ագահութիւն թող չ'անուանուի ձեզանում՝
4 ինչպէս սուրբերին կ'վայելէ։ Եւ գարշութիւն,
կամ յիմար խօսքեր, կամ խեղկատակութիւն, որ
5 չեն վայելում. այլ մանաւանդ գոհութիւն։ Որով-
հետև սա գիտէք, որ ոչ մի պոռնիկ, կամ պիղծ,
կամ ագահ, որ կռապաշտ է՝ ժառանգութիւն
չ'ունի Քրիստոսի և Աստուծոյ արքայութիւնումը։
6 Ոչ ով թող չ'խաբէ ձեզ դատարկ խօսքերով. ո-

րովհետև այս պատճառով էլ՝ Աստուծոյ բարկու-
թիւնը գալիս է անհնազանդութեան որդիների
7 վերայ։ Ուրեմն մասնակից մի լինիք նորանց։
8 Վասնզի մի ժամանակ խաւար էիք, իսկ հիմա լոյս
9 էք Տէրումը. լոյսի որդիների պէս գնացէք։ Որով-
հետև Հոգու պտուղը ամէն բարութիւնով է, և
10 արդարութիւնով, և ճշմարտութիւնով։ փորձե-
11 ցէք թէ ինչ է հաճոյ Տիրոջը։ Եւ մասնակից մի
լինիք խաւարի անպտուղ գործերին. այլ մանա-
12 ւանդ յանդիմանեցէք։ Որովհետև նորանց միջումը
ծածուկ գործուածները խօսքով ասելն էլ ամօթ
13 է։ Բայց ամէն բան՝ լոյսից յանդիմանուած՝ յայտ-
նի է լինում. վասնզի ամէն բան՝ որ յայտնի է լի-
14 նում, լոյս է։ Սորա համար էլ ասում է. Վեր
կաց, ով քնած, և վեր կանգնիր մեռելներից, և
Քրիստոսը կ'լուսաւորէ քեզ։
15 Արդ նայեցէք թէ ինչպէս զգուշութեամբ վար-
16 ուիք. ոչ թէ ինչպէս անխելքներ, Այլ ինչպէս ի-
մաստուններ. գնեցէք ժամանակը. որ օրերը չար
17 են, Նորա համար մի լինիք անմիտ, այլ իմացէք
18 թէ ինչ է Տիրոջ կամքը։ Եւ մի արբենաք գինով,
որ նորանում անառակութիւն կայ, այլ լցուեցէք
19 Հոգով, խօսելով ձեր մէջ սաղմոսներով և օրհ-
նութիւններով և հոգևոր երգերով, երգեցէք և
20 սաղմոսեցէք ձեր սրտերումը Տիրոջը։ Ամէն ժամա-
նակ ամէն բանի համար գոհացէք Աստուածանից
և Հօրից՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը։
21 Իրար հնազանդ եղէք Աստուծոյ վախովը։ (22) Կա-
նայք, հնազանդեցէք ձեր մարդկանցը ինչպէս Տի-
23 րոջը։ Մարդը կնոջ գլուխն է՝ ինչպէս Քրիստոս էլ
եկեղեցու գլուխը, և ինքն է մարմնին փրկիչը։
24 Բայց ինչպէս եկեղեցին հնազանդ է լինում Քրիս-
տոսին, այնպէս էլ կանայք՝ իրանց մարդկանցն ա-

25 մէն բանի մէջ։ Մարդիկ, սիրեցէք ձեր կանանցը,
ինչպէս Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և իր անձը
26 մատնեց նորա համար. Որ նորան սրբացնէ՝ մաքրե-
27 լով ջրի աւազանովը՝ խօսքով. Որ իր առաջին փա-
ռաւոր կանգնեցնէ եկեղեցին, որ չ՚ունենայ մի ա-
րատ կամ խորշոմութիւն կամ ուրիշ բաներ, որ
28 սուրբ և անարատ լինի։ Այսպէս պէտք է մարդիկ
սիրեն իրանց կանանցը, ինչպէս իրանց մարմիննե-
րը. ով որ իր կնոջը սիրում է, իրան է սիրում։
29 Վասնզի ոչ ով իր անձը չէ ատել, այլ կերակ-
րում է և պահպանում է նորան. ինչպէս Տէրն էլ
30 եկեղեցին։ Որովհետև նորա մարմնի անդամներն
31 ենք, նորա մարմնիցը և նորա ոսկորներիցը։ Սորա
համար մարդը կ՚թողէ իր հօրը և մօրը, և իր կըն-
32 կան կ՚յարէ և երկուսը մէկ մարմին կ՚լինին։ Այս
խորհուրդը մեծ է, բայց ես Քրիստոսի և եկեղեցու
33 վերայ եմ ասում։ Սակայն դուք էլ մի ըստ միո-
ջէ ամեն մէկն իր կնկանը թող այնպէս սիրէ ինչ-
պէս իր անձը. և կինը վախենայ իր մարդիցը։

ԳԼ. Զ.

1 Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողներին Տէրով.
2 որ այն է արժանը։ Պատուիր քո հօրը և մօրը, սա
3 է առաջին պատուիրանքը խոստմունքով, Որ քեզ
4 լաւ լինի, և երկար ապրես երկրի վերայ։ Եւ,
հայրեր, մի բարկացնէք ձեր որդկանցը. այլ մե-
ծացրէք նորանց խրատով և Տիրոջ ուսմունքովը։
5 Ծառաներ, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրե-
րին, վախով և դողալով ձեր սրտի միամտու-
6 թեամբն ինչպէս Քրիստոսին. Ոչ թէ աչքի առա-
ջին ծառայելով մարդկանց հաճոյ լինողների պէս,
այլ ինչպէս Քրիստոսի ծառաներ, որ Աստուծոյ

7 կամքն են անում սրտանց, Յօժարութեամբ ծա-
8 ռայելով Տիրոջը և ոչ թէ մարդկանց. Գիտենալով
որ ամեն մէկն ինչ բարի որ անէ, նոյնը կ՚ընդունի
9 Տէրիցը. թէ ծառայ լինի և թէ ազատ։ Եւ դուք,
տէրեր, նոյնն արէք նորանց՝ թողելով սպառնալի-
քը. գիտացէք որ հէնց ձեզ ինքներիդ էլ Տէր
կայ երկնքումը, և նորա առաջին երեսպաշտու-
թիւն չ՚կայ։
10 Այսուհետև, եղբայրներս, զօրացէք Տէրով և
11 նորա զօրութեան կարողութիւնովը։ Եւ Աստու-
ծոյ սպառազինութիւնը հագէք, որ կարող լինիք
12 սատանայի հնարքներին հակառակ կենալ։ Որով-
հետև մեր պատերազմը արիւնի և մարմնի հետ չէ,
այլ իշխանութիւնների և պետութիւնների հետ,
այս աշխարհի խաւարի աշխարհակալների հետ,
այն չար հոգիների հետ որ երկնաւորների մէջ են։
13 Սորա համար Աստուծոյ սպառազինութիւնն ա-
ռէք, որ կարող լինիք հակառակ կենալ չարու-
թեան օրումը, և ամենը կատարելով հաստատ
14 կանգնել. Արդ հաստատ կանգնեցէք ձեր մէջքե-
րը ճշմարտութեամբ գօտևորուած, և արդարու-
15 թեան զրահը հագած, Եւ ձեր ոտները կօշիկ հա-
գած խաղաղութեան աւետարանի պատրաստու-
16 թիւնովը։ Եւ ամենի վերայ հաւատքի վահանն
առէք. որով կարող լինիք չարի ամեն կրակոտ
17 նետերը հանգցնել։ Եւ փրկութեան սաղաւարտն
առէք, և Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է։
18 Ամեն աղօթքով և աղաչանքով աղօթք արէք ա-
մեն ժամանակ Հոգով. և սորանում հսկեցէք բո-
լոր յարատևութեամբ և աղաչանքով ամեն սուր-
19 բերի համար, Եւ ինձ համար էլ. որ ինձ խօսք
տրուի իմ բերանը բանալու ժամանակ, որ հա-
մարձակութիւնով հասկացնեմ աւետարանի խոր-

20 հուրդը․ Որի համար ես պատգամաւոր եմ կա-
պանքներում, որ նորանով համարձակ լինեմ, ինչ-
պէս որ պէտք է ինձ խօսիլ։
21 Բայց որպէսզի դուք էլ գիտենաք ինձ համար,
թէ ինչ եմ գործում, ամեն բան կ'իմացնէ ձեզ
22 Տիւքիկոս եղբայրը և Տէրում պաշտօնեան․ Որին
հէնց դորա համար ուղարկեցի ձեզ մօտ, որ մեր
մասին տեղեկանաք, և նա ձեր սրտերը մխիթարէ։
23 Խաղաղութիւն լինի եղբայրների հետ, և սէր՝
հաւատքով Աստուած Հօրից և Տէր Յիսուս
24 Քրիստոսից։ Շնորհք լինի այն ամենի հետ, որ
մեր Տէր Յիսուս Քրիստոսին սիրում են անկեղ-
ծութեամբ։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառանե-
րը․ ամեն սուրբերին Քրիստոս Յիսուսումը, որ Փի-
լիպպէումն են, եպիսկոպոսների և սարկաւագների
2 հետ․ Շնորհք լինի ձեզ հետ և խաղաղութիւն
Աստուած մեր Հօրից, և Տէր Յիսուս Քրիստոսից։
3 Գոհանում եմ իմ Աստուածանից ամեն ժամա-
4 նակ որ ձեզ յիշում եմ, Որ ամեն ժամանակ իմ
ամեն աղաչանքներումը ձեր ամենի համար աղօթք
5 եմ անում ուրախութիւնով․ Ձեր աւետարանին
հաղորդ լինելու համար այն առաջի օրից մինչև
6 հիմա։ Եւ հաստատ համոզուած եմ սորան, թէ
նա որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կ'կա-
7 տարէ էլ մինչև Յիսուս Քրիստոսի օրը։ Ինչպէս որ
պէտք է ինձ մտածել այս բանը ձեր ամենի հա-
մար․ որովհետև ձեզ է՛ սրտի մէջ ունիմ իմ կա-
պանքներումը, և աւետարանի ջատագովութեան
և հաստատութեան ժամանակ․ որ դուք ամենդ
8 ինձ հետ շնորհքին հաղորդ եղաք։ Վասնզի Աստ-
ուած ինձ վկայ է, թէ ինչպէս ձեր ամենիդ փա-
9 փաքում եմ Յիսուս Քրիստոսի գութովը․ Եւ սա
աղօթք եմ անում, որ ձեր սէրն էլ աւելի և ա-

ւելի հարստանայ գիտութիւնով և ամեն հասկա-
10 ցողութիւնով. Որ դուք լաւագոյնն ընտրէք, որ
մաքուր լինիք և առանց գայթակղութեան Քրիս-
11 տոսի օրումը, Արդարութեան պտուղներով լեց-
ուած՝ Յիսուս Քրիստոսի ձեռովը, Աստուծոյ փառ-
քի և գովասանքի համար։
12 Կամենում եմ, եղբարք, որ գիտենաք, թէ ինչ
բան որ իմ մասին եղաւ, աւելի աւետարանի յա-
13 ռաջադիմութեան համար յաջողուեցաւ։ Մինչև
որ իմ կապանքները Քրիստոսումը յայտնի եղան
14 բոլոր պալատին և ուրիշ ամենին էլ. Եւ Տէրումը
եղբայրներից շատերը իմ կապանքներովը քաջա-
լերուած աւելի համարձակ եղան Աստուծոյ խօսքը
15 առանց վախի խօսելու։ Ոմանք նախանձով և հա-
կառակութեան պատճառով, և ոմանք էլ բարե-
16 յօժար մտքով քարոզում են Քրիստոսին. *Եւ ո-
մանք հակառակութիւնից են քարոզում Քրիստո-
սին, և ոչ թէ անկեղծ. կարծելով թէ իմ կա-
17 պանքների վերայ նեղութիւն բերեն. *Իսկ ոմանք
սէրից. գիտենալով որ Աւետարանի ջատագովու-
18 թեան համար կանգնած եմ։ Բայց ինչ. ինչ կեր-
պով էլ որ լինի, թէ պատճառանքով և թէ ճըշ-
մարտութիւնով Քրիստոսն է քարոզվում. և սորա
19 համար ուրախ եմ՝ և ուրախ էլ կ'լինիմ։ Վասնզի
գիտեմ, թէ այս բանը վերջապէս ինձ փրկութեան
պատճառ կ'լինի ձեր աղօթքովը՝ և Յիսուս Քրիս-
20 տոսի Հոգու ձեռնտուութիւնովը։ Իմ ակնկալու-
թեան և յոյսի համեմատ ոչ մի բանով ամօթ չեմ
լինիլ, այլ բոլոր համարձակութիւնով ինչպէս ա-
մեն ժամանակ, հիմա էլ Քրիստոսը փառաւորուի
իմ մարմնումը, թէ կեանքով և թէ մահով։

*Ոմանք 16րդ տունը 17էն յետոյ են դնում։

21 Վասնզի ինձ համար կեանքը Քրիստոս է, և մեռ-
22 նիլը՝ շահ։ Բայց եթէ մարմնի մէջ ապրելը իմ
գործիս պտուղ է բերում, էլ չ'գիտեմ՝ թէ ո՛րն
23 ընտրեմ։ Երկու կողմից էլ նեղ տեղ եմ. փափա-
քելով դուրս գալ և Քրիստոսի հետ լինել. որ
24 շատ աւելի լաւ է. Բայց մարմնումը կենալը աւելի
25 հարկաւոր է ձեզ համար։ Եւ հաստատ համոզ-
ուած սա գիտեմ. որ կ'կենամ և կ'մնամ ձեր ա-
մենի հետ, որ դուք զարգանաք և ուրախ լինիք
26 հաւատքով։ Որ ձեր պարծանքը աւելի լինի Քրիս-
տոս Յիսուսով ինձանով՝ իմ դարձեալ ձեզ մօտ
գալու համար։
27 Միայն թէ Քրիստոսի աւետարանին վայելող կեր-
պով գնացէք. որ՝ թէ գամ և տեսնեմ ձեզ, և
թէ հեռու լինիմ և լսեմ ձեր մասին, որ հաստատ
էք մէկ հոգով և մէկ շունչով պատերազմիք ա-
28 ւետարանի հաւատքի համար, Եւ ոչ մի բանով
մի զարհուրիք հակառակորդներիցը, որ դա նո-
րանց համար նշան է կորուստի, և ձեզ համար՝
29 փրկութեան, Եւ ձեզ Աստուածանից այդ շնորհք
եղաւ Քրիստոսի համար, ոչ միայն հաւատալ նո-
30 րան, այլ նորա համար չարչարուիլ էլ՝ Նոյն պա-
տերազմն ունենալով որ ինձանում տեսաք, և
հիմա ինձանից լսում էք։

ԳԼ. Բ

1 Արդ եթէ մխիթարութիւն կայ Քրիստոսով, ե-
թէ սէրի սփոփութիւն, եթէ Հոգու հաղորդու-
2 թիւն, եթէ գթածութիւն և ողորմութիւն. Ապա
լցրէք իմ ուրախութիւնը, որ նոյն միտքն ունե-
նաք, նոյն սէրն ունենալով, միաշունչ մի և նոյնը
3 խորհէք։ Ոչ մի բան չ'լինի գրգռումով, և ոչ էլ

անապարծութիւնով. այլ խոնարհութիւնով թող
4 մէկը միւսին իր անձիցն աւելի լաւ համարէ։ Միայ-
նակ ձեր անձերի բաներին մտիկ չ'տաք, այլ ամեն
5 մէկն իր ընկերի բաներէն էլ։ Ձեր ամեն մէկը թող
6 այն մտածէ, որ էլ Քրիստոս Յիսուսումն էր. Որ
Աստուծոյ կերպարանքումը լինելով, յափշտակու-
թիւն չ'համարեց Աստուծուն հաւասար լինել։
7 Այլ իր անձն ունայնացրեց, և ծառայի կերպա-
րանք առնելով՝ մարդկանց նման լինելով և կեր-
8 պարանքով մարդի պէս գտնուելով. Իրան խոնար-
հեցրեց, և հնազանդ եղաւ մինչև ի մահ՝ և այն
9 էլ խաչի մահ։ Նորա համար էլ Աստուած շատ
բարձրացրեց նորան, և նորան մի անուն շնորհեց,
10 որ ամեն անունից աւելի բարձր է. Որ Յիսուսի
անունովը կրկնուի ամեն ծունկ երկնաւորների և
11 երկրաւորների և երկրի տակ լինողների, Եւ ամեն
լեզու դաւանէ, թէ Յիսուս Քրիստոսը Տէր է Հօր
12 Աստուծոյ փառքի համար։ Ուրեմն, իմ սիրելի-
ներ, ինչպէս ամեն ժամանակ հնազանդեցէք՝ ոչ
միայն իմ ներկայութիւնումը, այլ հիմա էլ աւե-
լի իմ բացակայութիւնումը, ահով և դողալով
13 գործեցէք ձեր անձերի փրկութիւնը։ Վասնզի
Աստուած է՝ որ ներգործում է ձեզանում կամե-
14 նալն էլ՝ անելն էլ իւր հաճութեան պէս։ Ամեն
բան գործեցէք առանց տրտնջանքի և վիճաբանու-
15 թիւնների։ Որ լինիք անբիծ և անարատ՝ որդիք
Աստուծոյ առանց մեղադրանքի այն կամակոր և
ծռած ազգի մէջ. որոնց միջումը երևիք ինչպէս
16 լոյս տուողներ աշխարհքի մէջ. Կեանքի խօսքը պա-
հելով ինձ պարծանք լինելու համար Քրիստոսի
օրումը. որ զուր տեղը չ'վազեցի, և զուր չ'աշ-
17 խատեցի։ Բայց թէև ընծայուիմ ձեր հաւատա-
քի պատարագի և պաշտամունքի վերայ՝ ուրախ

18 եմ, և ձեր ամենի հետ ուրախանում եմ։ Այն-
պէս էլ դուք ուրախ եղէք, և ինձ հետ ուրա-
խացէք։
19 Բայց յոյս ունիմ Տէր Յիսուսումը, որ Տիմոթէո-
սին շուտով ուղարկեմ ձեզ մօտ, որ սիրտս էլ
20 հանգստանայ, երբոր ձեր վիճակն իմանամ։ Վասն-
զի մէկը չ'ունիմ միասիրտ, որ մտերմաբար հոգս
21 տանէ ձեզ համար։ Վասնզի ամենքն իրանց բա-
ներն են որոնում և ոչ թէ Յիսուս Քրիստոսինը։
22 Բայց դուք գիտէք նորա ընտիր լինելը, որ ինչպէս
մի որդի իւր հօրը՝ այնպէս ինձ հետ ծառայեց աւե-
23 տարանին։ Ուրեմն յոյս ունիմ որ սորան ուղար-
կեմ իսկոյն, երբոր իմ անձի մասին կ'տեղեկանամ։
24 Բայց վստահ եմ Տէրումը, որ ինքս էլ շուտով
25 գամ։ Միայն հարկաւոր համարեցի՝ որ Եպափրո-
դիտոս եղբօրը՝ գործխս և զինուորութեանս ընկե-
րին, այն ձեր *առաքեալին, և իմ պէտք լինող
26 բաների պաշտօնեային ուղարկեմ ձեզ մօտ։ Վասն-
զի ինքն էլ խիստ փափագ ունէր ձեզ ամենիդ
տեսնելու և հոգս էր քաշում՝ որ լսել էիք թէ նա
27 հիւանդացաւ։ Եւ իրաւի որ հիւանդացաւ մերձ
ի մահ, բայց Աստուած ողորմեց նորան. ոչ միայն
նորան, այլ ինձ էլ, որ տրտմութիւն տրտմու-
28 թեան վերայ չ'ունենամ։ Ուրեմն աւելի շտապով
ուղարկեցի նորան, որ տեսնելով նորան դարձեալ
ուրախ լինիք, և ես էլ առանց տրտմութեան լի-
29 նեմ։ Արդ ընդունեցէք նորան Տէրումն ամեն ու-
րախութիւնով, և այնպիսիներին պատուական հա-
30 մարեցէք։ Վասնզի Քրիստոսի գործի համար մինչև
մահի մօտեցաւ. իր անձը վտանգի մէջ դցելով,
որ ձեր ինձ ծառայելու պակասութիւնը լրացնէ։

*ուղարկածին

ԳԼ. Գ.

1 Այսուհետև, իմ եղբարք, ուրախ եղէք Տէրու-
մը, մի և նոյն բաները ինձ գրելը ձեզ համար ձանձ-
2 րութիւն չէ, բայց ձեզ ապահովութիւն է։ Զգոյշ
կացէք շներիցը. զգոյշ կացէք չար մշակներիցը.
3 զգոյշ կացէք կրճատութիւնիցը։ Վասնզի մենք ենք
թլփատութիւնը, որ հոգով պաշտում ենք Ա-
ստուծուն, և պարծենում ենք Քրիստոս Յիսուսո-
4 վը, և մարմնի վերայ վստահութիւն չ'ունինք։ Թէ
և ես վստահութիւն ունիմ մարմնի կողմանէ էլ.
եթէ մի ուրիշը կարծէ որ մարմնով վստահ լինի,
5 աւելի ևս ես։ Ութ օրուայ թլփատուած, Իսրայէ-
լի ազգիցը, Բենիամինի ցեղիցը, Եբրայեցի Եբրա-
6 յեցիներից, օրէնքի կողմանէ փարիսեցի, Ջերմե-
ռանդութեան կողմանէ հալածող էի եկեղեցուն,
օրէնքի արդարութեան մտիկ տալով անարատ էի։
7 Բայց ինչ բան որ ինձ շահ էր, այն վնաս համարե-
8 ցի Քրիստոսի համար։ Եւ հէնց ամեն բաներ էլ
վնաս եմ համարում իմ Տէր Յիսուս Քրիստոսի
գերազանց գիտութեան համար, որի պատճառով
ամեն բանից զրկուեցայ, և աղբ եմ համարում,
9 որ Քրիստոսին շահեմ, Եւ նորանում գտնուիմ.
և ոչ թէ իմ արդարութիւնն ունենամ՝ որ օրէն-
քիցն է, այլ այն որ Քրիստոսի հաւատքիցն է. այն
արդարութիւնը որ Աստուածանից է հաւատքով.
10 Որ ճանաչեմ նորան՝ և նորա յարութեան զօրու-
թիւնը՝ և նորա չարչարանքի մասնակից լինելը, նո-
11 րա մահուան կերպարանակից լինելով. Որպէսզի
12 մեռելների յարութեանը հասնեմ. Ոչ իբր արդէն
բռնած լինեմ, կամ թէ արդէն կատարեալ եղած
լինեմ, բայց հետևում եմ որ իցէ թէ հասնեմ

նորան, ինչպէս որ էլ հէնց Քրիստոս Յիսուսիցը
13 բռնուած եմ։ Եղբարք, ես իմ անձը չեմ համա-
րում որ հասած լինեմ, բայց մէկ բան կայ, ետևի
բաները մոռանալով, դէպի առաջի լինողներն եմ
14 նկրտում, Հետևում եմ դէպի նպատակը՝ Աստու-
ծոյ վերին կոչումի մրցանակին Քրիստոս Յիսուսո-
15 վը։ Արդ որոնքս կատարեալ ենք, այս մտածենք,
և եթէ մի բան ուրիշ կերպով մտածէք, այն էլ
16 Աստուած կ'յայտնէ ձեզ։ Միայն թէ ինչի որ հա-
սանք, նոյն կանոնով վարուինք, նոյնը մտածենք։
17 Ինձ նմանող եղէք, եղբարք, և նայեցէք այն կեր-
պով գնացողներին ինչպէս մեզ օրինակ ունիք։
18 Վասնզի շատերն են գնում, որոնց համար շատ
անգամ ասում էի ձեզ. և հիմա էլ լալով ասում
19 եմ, որ Քրիստոսի խաչի թշնամիներ են. Որոնց
վերջը կորուստ է, որոնց Աստուածն է՝ որովայնն
է. և փառքը՝ իրանց ամօթն է. որոնք երկրաւոր
20 բաներն են մտածում։ Բայց մեր քաղաքականու-
թիւնը երկնքումն է, որ այնտեղից սպասում ենք
21 Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին. Որ կ'նորոգէ մեր
խոնարհ մարմինը որ իր փառաւոր մարմնին կեր-
պարանակից լինի այն զօրութիւնովը, որ կարող է
ամեն բան հնազանդեցնել իրան։

ԳԼ. Դ.

1 Ուրեմն, իմ սիրելի և բաղձալի եղբարք, իմ ու-
րախութիւնը և իմ պսակը. այսպէս հաստատ կա-
ցէք Տէրումը, սիրելիներ։
2 Եւոդիային աղաչում եմ, և Սիւնտիքէին աղա-
3 չում եմ, որ միևնոյնը խորհին Տէրումը։ Այո,
քեզ էլ եմ աղաչում, իմ հարազատ լծակից,
դու էլ օգնիր նորանց, որ ճիգ թափելով աշխա-

տեցին աւետարանումն ինձ հետ միասին և Կղեմէ-
սի հետ և իմ ուրիշ գործակիցների հետ էլ, որ
4 նորանց անունները կեանքի գրքումն են։ Ուրախ
եղէք Տէրումն ամեն ժամանակ. դարձեալ ասում
5 եմ՝ ուրախ եղէք։ Ձեր հեզութիւնը թող յայտնի
6 լինի ամեն մարդկանց. Տէրը մօտ է։ Ոչինչ հոգս
մի անէք. այլ ամեն բանում աղօթքով և աղա-
չանքով և գոհութիւնով՝ ձեր խնդրուածքները
7 թող յայտնի լինեն Աստուծուն։ Եւ Աստուծոյ
խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է, կ'պահ-
պանէ ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Յիսու-
8 սումը։ Այսուհետև, եղբարք, ինչ որ ճշմարիտ է,
ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ սուրբ,
ինչ որ սիրուն, ինչ որ բարի անուն, թէ առաքի-
նութիւն է, և թէ գովութիւն է, այն մտածեցէք։
9 Հէնց այն որ սովորեցիք, և ընդունեցիք, և լսե-
ցիք, և ինձանում տեսաք, այն արէք. և խաղա-
ղութեան Աստուածը ձեզ հետ կ'լինի։
10 Ես մեծապէս ուրախացայ Տէրումը, որ դուք
արդէն դարձեալ մտքերնիդ բերիք հոգալ ինձ
համար, ինչպէս էլ հոգում էիք, բայց պատշաճ
11 ժամանակ չէիք գտնում։ Ոչ թէ կարօտութեան
պատճառով եմ ասում. վասնզի ես սովորեցի ին-
12 չի մէջ որ կամ, նորանով բաւական լինել։ Գի-
տեմ պակասութիւն քաշել, և աւելութիւնով
լինելն էլ. ամեն բանի մէջ ամենին լաւ տեղեկա-
ցած եմ՝ կշտանալն էլ սովելն էլ. աւելութիւնով
13 ունենալն էլ, պակասութիւն քաշելն էլ։ Ամեն
14 բան կարող եմ ինձ զօրացնող Քրիստոսով։ Սա-
կայն լաւ արիք որ հաղորդ եղաք ինձ իմ նեղու-
15 թիւնումը։ Դուք ինքներդ էլ, Փիլիպպեցիք, գի-
տէք, որ աւետարանի սկզբումը՝ երբոր Մակեդո-
նիայից դուրս եկայ ոչ մի եկեղեցի հաղորդութիւն

չ'արաւ ինձ տալու կամ առնելու հաշիւով, բայց
16 միայն դուք։ Վասնզի Թեսաղոնիկէի մէջ էլ մի
երկու անգամ ինձ պէտք եղած բաները ուղարկե-
17 ցիք։ Իբր ոչ թէ տուրքն եմ ուզում, այլ պը-
տուղն եմ ուզում, որ աւելանայ ձեր հաշիւին։
18 Բայց ես ամեն բան առել եմ, և առատութիւն
ունիմ. լիքն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռովն ըն-
դունեցի այն որ ձեզանից է՝ անուշ հոտ ընդունելի
19 պատարագ՝ Աստուծոյ հաճոյ։ Եւ իմ Աստուածը
լրացնէ ձեր ամեն կարօտութիւնն իր հարստու-
թեան չափովը՝ փառքով Քրիստոս Յիսուսումը։
20 Բայց Աստուծուն՝ մեր Հօրը փառք լինի յաւիտ-
եանս յաւիտենից։ Ամէն։
21 Բարև տուէք ամեն սուրբերին Քրիստոս Յիսու-
22 սումը։ Բարև են տալիս ձեզ ինձ հետ լինող եղ-
23 բայրները։ Բարև են տալիս ձեզ ամեն սուրբերն,
24 մանաւանդ կայսրի տանիցը լինողները։ Տէր Յիսուս
Քրիստոսի շնորհքը ձեր ամենիդ հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ
2 կամքովը, և Տիմոթէոս եղբայրը. Կողոսայում լի-
նող սուրբերին և հաւատացեալ եղբայրներին
Քրիստոսումը: Շնորհք լինի ձեզ հետ՝ և խաղա-
ղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ և Տէր Յիսուս
Քրիստոսիցը:
3 Գոհանում ենք Աստուածանից և մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հօրիցը՝ ամեն ժամանակ ձեզ հա-
4 մար աղօթք անելով. Երբոր լսեցինք ձեր հաւատ-
քը, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի վերայ, և սէ-
5 րը՝ որ դէպի ամեն սուրբերն ունիք. Այն յոյսի
համար՝ որ պահվում է ձեզ համար երկնքումն,
որի համար առաջուց լսեցիք աւետարանի ճշմարիտ
6 խօսքովը. Որ հասաւ ձեզ, ինչպէս ամեն աշխարհի
մէջ, և պտուղ է բերում, ինչպէս ձեր միջումն
էլ, այն օրիցն հետէ՝ որ լսեցիք և Աստուծոյ շնորհ-
7 քը ճանաչեցիք ճշմարտութիւնով: Ինչպէս էլ սո-
վորեցիք Եպափրասից՝ մեր սիրելի ծառայակցիցը,
որ ձեզ համար Քրիստոսի հաւատարիմ պաշտօն-
8 եայ է, Որ էլ պատմեց մեզ ձեր սէրը հոգով:
9 Նորա համար մենք էլ այն օրիցը հետէ որ լսե-

ցինք, չենք դադարում ձեզ համար աղօթք անե-
լուց և խնդրուածք մատուցանելուց որ լցուիք նո-
րա կամքի գիտութիւնովը, ամեն իմաստութիւ-
10 նով և հոգևոր հանճարով. Որ դուք գնաք ինչ-
պէս արժանի է Տիրոջը, ամեն բանի մէջ հաճոյ
լինելով նորան, ամեն բարի գործով պտղաբեր լի-
11 նիք և աճիք Աստուծոյ գիտութեան մէջ. Ամեն
զօրութիւնով զօրացած իր փառքի զօրութեան
համեմատ, ամեն համբերութեան և երկայնմտու-
12 թեան մէջ ուրախութիւնով. Եւ գոհութիւն տաք
Հօրը որ մեզ արժանացրեց մասնակից լինելու սուր-
13 բերի վիճակին լոյսումը. Որ փրկեց մեզ խաւարի
իշխանութիւնից, և փոխադրեց մեզ իր սիրելի
14 Որդու արքայութեան մէջ, Որի ձեռովն ունինք
փրկութիւն նորա արիւնովը՝ մեղքերի թողութիւ-
15 նը. Որ աներևոյթ Աստուծոյ պատկերն է՝ ամեն
16 ստեղծուածներից առաջ ծնուած: Վասնզի Նորա-
նով ամեն բան ստեղծուեցաւ ինչ որ երկնքումն՝ և
ինչ որ երկրիս վերայ է՝ երևողները և չ'երևողնե-
րը, թէ աթոռները, թէ տէրութիւնները, թէ
պետութիւնները, թէ իշխանութիւնները. ամեն
բաները նորանով՝ և նորա համար ստեղծուեցան:
17 Եւ նա ամենից առաջ է, և ամեն բան նորանով է
18 հաստատ. Եւ նա է մարմնի այսինքն եկեղեցու գլու-
խը, որ նա է սկիզբը, մեռելների անդրանիկը. որ-
19 պէս զի ամեն բանի մէջ նա լինի առաջինը: Որով-
հետև Աստուած հաճեց, որ նորանում Աստուածու-
20 թեան բոլոր լիութիւնը բնակուի: Եւ նորանով ա-
մենը հաշտեցնէ իրան հետ, խաղաղութիւն անե-
լով նորա ձեռովը նորա խաչի արիւնովը, թէ երկ-
րիս վերայ թէ երկնքումը լինողներին:
21 Եւ ձեզ էլ, որ մի ժամանակ օտարացած և
22 թշնամի էիք մտքով չար գործերումը, հիմա հաշ-

տեցրեց իր մսեղէն մարմնի մէջ իր մահի ձեռովը,
որ ձեզ սուրբ, և անբիծ, և անարատ կանգնեցնէ
23 իր առաջին։ Եթէ հաւատքի մէջ հիմնուած և
հաստատ կենաք, և առանց շարժուելու այն ա-
ւետարանի յոյսից՝ որ լսեցիք, որ երկնքի տակ լի-
նող բոլոր արարածներին քարոզուեցաւ. որին ես
24 Պօղոսս պաշտօնեայ եղայ։ Հիմա ուրախ եմ իմ
չարչարանքներումը ձեզ համար, և լրացնում եմ
Քրիստոսի նեղութիւնների պակասը իմ մարմնումը
25 նորա մարմնի տեղ որ է եկեղեցին, Որի ես պաշ-
տօնեայ եղայ, Աստուծոյ այն տնտեսութեան պէս,
որ ինձ տրուած է ձեզ համար Աստուծոյ խօսքը
26 կատարելու համար. Այն խորհուրդը որ ծածկուած
էր յաւիտենից և դարերից, իսկ հիմա յայտնուե-
27 ցաւ իր սուրբերին. Որոնց Աստուած կամեցաւ ցոյց
տալ, թէ ինչ է այս խորհրդի փառաւոր ճոխու-
թիւնը հեթանոսներումը, որ է Քրիստոսը ձեզա-
28 նում՝ այն փառքի յոյսը։ Որին մենք քարոզում
ենք ամեն մարդի խրատելով և ամեն մարդի սոր-
վեցնելով ամեն իմաստութիւնով, որ ամեն մարդի
կատարեալ կանգնեցնենք Քրիստոս Յիսուսումը.
29 Որի համար էլ աշխատում եմ ճիգ թափելով նո-
րա ներգործութեան չափովը, որ ինձանում ներ-
գործում է զօրութիւնով։

ԳԼ. Բ

1 Վասնզի կամենում եմ որ գիտենաք դուք, թէ
ինչպիսի ճիգ եմ թափում ձեզ համար և Լաւո-
դիկեցիների համար, և որոնք իմ երեսը մարմնով
2 չեն տեսել. Որ նորանց սրտերը մխիթարուին սիրով
միացած. և կատարեալ իմաստութեան ամեն ճո-
խութեանը հասնեն, այսինքն Աստուծոյ և Հօր և
3 Քրիստոսի խորհուրդը իմանալու. Որի մէջ ծած-

կուած կան իմաստութեան և գիտութեան ամեն
4 գանձերը։ Բայց սա եմ ասում, որ մի գուցէ մէկը
5 մոլորեցնէ ձեզ հրապուրական խօսքերով։ Վասնզի
թէև մարմնով բացակայ եմ, բայց հոգով ձեզ
հետ եմ. ուրախանալով ձեր կարգը տեսնելով, և
ձեր հաւատքի հաստատութիւնը՝ որ Քրիստոսի վե-
6 րայ է։ Ուրեմն ինչպէս Քրիստոս Յիսուս Տէրն ըն-
7 դունեցիք՝ նորանում գնացէք. Արմատացած և նո-
րանում շինուած, և հաւատքումը հաստատուած՝
ինչպէս որ սովորեցիք՝ աճելով նորանում գոհու-
8 թիւնով։ Զգոյշ կացէք՝ մի գուցէ մէկը յափշտա-
կէ ձեզ փիլիսոփայութիւնով և դատարկ խաբէ-
բայութիւնով, մարդկանց աւանդութեան պէս,
աշխարհքիս սկզբունքների պէս և ոչ թէ Քրիստո-
9 սի պէս։ Որովհետև նորանում բնակուած է Աստ-
10 ուածութեան ամեն լիութիւնը մարմնապէս։ Եւ
դուք նորանով լցուած էք, որ նա է ամեն իշխա-
11 նութեան և պետութեան գլուխը. Որով դուք
թլփատուեցաք անձեռագործ թլփատութիւնով,
մարմնական մեղքերի մարմինը մերկանալովը Քրիս-
12 տոսի թլփատութիւնովը. Թաղուելով նորա հետ
մկրտութիւնումը, որով յարութիւն էլ առաք
նորա հետ Աստուծոյ ազդեցութեան հաւատքովը,
13 որ յարութիւն տուաւ նորան մեռելներից։ Եւ
ձեզ որ մի ժամանակ մեռած էիք մեղքերումը և
ձեր մարմնի անթլփատութիւնումը, իրան հետ կեն-
14 դանացրեց բոլոր մեղքերը ձեզ շնորհելով։ Եւ
ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաննե-
րովը որ մեզ հակառակ էր, և նորան վեր առաւ
15 մէջ տեղից և խաչափայտին վերայ բևեռեց. Իշ-
խանութիւններին և պետութիւններին մերկացնե-
լով, յայտնապէս խայտառակեց և նորանց յաղ-
թանակեց իրանում։

16 Արդ թող մէկը չ'դատէ ձեզ ուտելու կամ խը-
մելու համար, կամ տօնի կամ ամսագլխի կամ
17 շաբաթների մասին; Որոնք նոր գալու բաների
18 ստուերներն են, բայց մարմինը Քրիստոսինն է: Ո-
չով չ'զրկէ ձեզ մրցանակիցը՝ ինքնակամ խոնարհու-
թիւնով և հրեշտակների կրօնքով միջամուխ լինե-
լով այն բաներին որ չէ տեսած և զուր տեղը դ-
19 ռոզացած է իր մարմնաւոր մտքումը. Եւ չ'բռնե-
լով Գլուխը, որից բոլոր մարմինը յօդուածներով
և խաղերով հաղորդուած և կցուած՝ մեծանում
20 է Աստուծոյ աճմունքովը: Արդ եթէ Քրիստոսի
հետ մեռաք այս աշխարհքի սկզբունքներից՝ էլ
ինչու էք այս աշխարհքի մէջ կենդանիների պէս
21 այսպիսի կանոններով կապվում, Թէ Մի մօտենար,
22 մի ճաշակիր, մի դպչիր. Որ ամենն ապականու-
թեան համար են գործածութեամբ, մարդկանց
պատուիրանքների և վարդապետութիւնների պէս:
23 Որոնք իմաստութեան կերպարանք ունին ինքնա-
հնար կրօնքով և խոնարհութիւնով և մարմնին չը
խնայելով, մի տեսակ չ'պատուելով մարմինը յա-
գեցնելը:

- ԳԼ. Գ

1 Արդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն առաք,
ապա խնդրեցէք վերինները, ուրտեղ Քրիստոսն է
2 նստում Աստուծոյ աջ կողմը: Վերինները մտա-
3 ծեցէք, ոչ թէ երկրի վերայինները. Վասնզի դուք
մեռաք՝ և ձեր կեանքը ծածկուած է Քրիստոսի
4 հետ Աստուծոյ մէջ: Բայց երբոր Քրիստոս՝ մեր
կեանքը կ'յայտնուի, այն ժամանակ դուք էլ նո-
րա հետ կ'յայտնուիք փառքով:
5 Ուրեմն սպանեցէք ձեր անդամները որ երկրի վե-

րայ են, պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը,
չար ցանկութիւնը, և ագահութիւնը որ կռա-
6 պաշտութիւն է: Որոնց համար Աստուծոյ բարկու-
թիւնը գալիս է անհնազանդութեան որդիների վե-
7 րայ, Որոնց մէջ դուք էլ մի ժամանակ գնացել
8 էք, երբոր կենդանի էիք նորանցում: Բայց հիմա
դուք էլ դէն դրէք այն ամենը, բարկութիւնը,
սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը,
9 ամօթալի խօսքերը ձեր բերանից: Սուտ մի խօսէք
իրար հետ. հանեցէք հին մարդն իր գործերովը:
10 Եւ հագէք նոր մարդը որ նորոգուած է գիտութիւ-
11 նով իր ստեղծողի պատկերի պէս: Ուր ոչ Յոյն
կայ և ոչ Հրէայ, ոչ թլփատութիւն՝ և ոչ ան-
թլփատութիւն, խուժ դուժ, Սկիւթացի, ծա-
ռայ, ազատ. բայց Քրիստոսն է ամենը և ամենի
12 մէջ: Ուրեմն հագէք՝ ինչպէս Աստուծոյ ընտրուած-
ներ՝ սուրբեր և սիրելիներ՝ ողորմածիրտ գթածու-
թիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզու-
13 թիւն, երկայնմտութիւն. Իրար համբերելով, և
իրար ներելով, եթէ մէկը միւսի դէմ տրտունջ
ունենայ, ինչպէս Քրիստոսն էլ ձեզ ներեց, այն-
14 պէս էլ դուք. Եւ այս ամենի վերայ հագէք սէրը,
15 որ կատարելութեան կապն է: Եւ Աստուծոյ խա-
ղաղութիւնը իշխէ ձեր սրտերումը, որի մէջ էլ
կանչուեցաք մէկ մարմնով, և գոհացող եղէք:
16 Քրիստոսի խօսքը բնակուի ձեր միջումն առատա-
պէս ամեն իմաստութիւնով. իրար սովորեցրէք և
խրատեցէք, սաղմոսներով և օրհնութիւններով և
հոգևոր երգերով և շնորհքով օրհներգեցէք Տիրոջը
17 ձեր սրտերումը: Եւ ամեն ինչ որ էլ անէք խօս-
քով կամ գործով, ամենը Տէր Յիսուսի անունով
արէք, գոհութիւն տալով Աստուծուն և Հօրը նո-
րա ձեռովը:

18 Կանայք, հնազանդ եղէք ձեր մարդկանցը, ինչ-
19 պէս կ'վայելէ Տէրումը: Մարդիկ, սիրեցէք ձեր
20 կանանցը, և դառն մի լինիք նորանց դէմ: Որդիք,
հնազանդ եղէք ձեր ծնողներին ամեն բանի մէջ.
21 վասնզի այդ հաճոյ է Տիրոջը: Հայրեր, մի զայրա-
22 ցնէք ձեր որդկանցը, որ չ'վհատին: Ծառաներ,
հնազանդ եղէք ամեն բանի մէջ ձեր մարմնաւոր
տէրերին ոչ թէ աչքի առաջ ծառայութիւն անե-
լով մարդահաճոյների պէս. բայց սրտի միամտու-
23 թեամբ Աստուածանից վախենալով: Եւ ամեն ինչ
որ էլ անէք, սրտանց արէք, ինչպէս Տիրոջը, և
24 ոչ թէ մարդկանց. Գիտենալով որ Տէրից կ'առ-
նէք ժառանգութեան հատուցումը. վասնզի Տէր
25 Քրիստոսին էք ծառայում: Բայց անիրաւը հատու-
ցում կ'առնայ իր արած անիրաւութեան համար.
աչառութիւն չ'կայ:

ԳԼ. Դ

1 Տէրեր, իրաւունքը և հաւասարը տուէք ծառանե-
րին. գիտենալով որ դուք էլ Տէր ունիք երկնքումը:
2 Աղօթքին միշտ հետևեցէք. և արթուն կացէք
3 նորանում գոհութիւնով: Եւ մեզ համար էլ ա-
ղօթք արէք, որ Աստուած բանայ մեզ համար
խօսքի դուռը խօսել Քրիստոսի խորհուրդը, որի
4 համար էլ կապուած եմ: Որ յայտնեմ նորան՝ ինչ-
5 պէս ինձ արժան է խօսել: Իմաստութիւնով վար-
ուեցէք դրսինների հետ, և ժամանակը գնեցէք:
6 Ձեր խօսքը ամեն ժամանակ շնորհքով՝ աղով հա-
մեմած լինի, որ գիտենաք թէ ինչպէս արժան է
ձեզ ամեն մէկին պատասխան տալ.
7 Իմ մասին ամենը կ'իմացնէ ձեզ Տիւքիկոս սիրե-
լի եղբայրը և հաւատարիմ պաշտօնեան և ծա-

8 ռայակիցը Տէրումը, Որին հէնց դորա համար ու-
ղարկեցի ձեզ մօտ, որ իմանայ ձեր մասին և մխի-
9 թարէ ձեր սրտերը. Ոնեսիմոս հաւատարիմ և սի-
րելի եղբօր հետ, որ ձեզանից է. Նորանք ամենը
10 կ'իմացնեն ձեզ ինչ որ այստեղ լինում է: Բարև է
տալիս ձեզ Արիստարքոսն՝ իմ գերութեան ընկերը,
և Բառնաբասի եղբօր որդի Մարկոսը. որի համար
պատուէր առաք, որ եթէ ձեզ մօտ գայ, ընդու-
11 նիք նորան: Եւ Յիսուսը որ Յուստոս է անուան-
վում, որոնք թլփատութիւնից են. միայն դորանք
են իմ գործակիցները Աստուծոյ արքայութիւնումն,
12 որ ինձ համար էլ մխիթարութիւն եղան: Բարև է
տալիս ձեզ Եպափրաս՝ Քրիստոսի ծառան, որ ձե-
զանից է. ամեն ժամանակ ձեզ համար պատերազ-
մում է աղօթքներում, որ կատարեալ և լցուած
13 լինիք Աստուծոյ բոլոր կամքումը: Վասնզի վկայում
եմ նորա համար որ շատ նախանձ ունի ձեզ հա-
մար, և նորանց համար որ Լաւոդիկէումն և Յե-
14 րապօլիսումն են: Բարև է տալիս ձեզ բժիշկ Ղու-
15 կաս սիրելին և Դեմասը: Բարև տուէք Լաւոդի-
կէումը լինող եղբայրներին և Նիմփային և նորա
16 տան եկեղեցուն: Եւ երբոր ձեզ մօտ կարդացուի
այս թուղթը՝ Լաւոդիկեցիների եկեղեցումն էլ
կարդալ տուէք. և որ Լաւոդիկիայից եկածն էլ
17 դուք կարդաք: Եւ Արքիպոսին ասեցէք. Զգոյշ
եղիր այն սպասաւորութեանը որ ընդունեցիր Տէ-
18 րումը, որ նորան կատարես: Այս բարևը իմ Պօ-
ղոսիս ձեռքովս է, յիշեցէք իմ կապանքը. շնորհ-
քը լինի ձեզ հետ: Ամէն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ
ԹՈՒՂԹԸ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, թեսաղոնիկե-
ցիների եկեղեցուն Աստուած Հօրումը և Տէր Յի-
սուս Քրիստոսումը. շնորհք լինի ձեզ հետ և խա-
ղաղութիւն մեր Հայր Աստուածանից և Տէր Յի-
սուս Քրիստոսից։
2 Գոհանում ենք Աստուածանից ամեն ժամանակ
ձեր ամենի համար ձեզ յիշելով մեր աղօթքնե-
3 րումը. Եւ անդադար յիշում ենք ձեր հաւատքի
գործը և սէրի աշխատանքը, և մեր Տէր Յիսուս
Քրիստոսի յոյսի համբերութիւնը Աստուծոյ և մեր
4 Հօր առաջին. Գիտենալով, Աստուածանից սիր-
5 ուած եղբարք, ձեր ընտրութիւնը։ Որ մեր աւե-
տարանը ձեզ մօտ չ'եղաւ միայն խօսքով, այլ և
զօրութիւնով և Հոգով Սուրբով և շատ լիու-
թիւնով. ինչպէս լաւ գիտէք, թէ որպիսիք եղանք
6 ձեր միջումը ձեզ համար։ Եւ դուք նմանող եղաք
մեզ և Տիրոջը՝ խօսքն ընդունելով շատ նեղու-
7 թեան մէջ Սուրբ Հոգու ուրախութիւնովը. Որ
դուք օրինակ եղաք ամեն հաւատացեալներին Մա-

8 կեդոնիայի և Աքայիայի մէջ։ Որովհետև ձեզանից
հռչակուեցաւ Տիրոջ խօսքը. ոչ միայն Մակեդո-
նիայի և Աքայիայի մէջ, այլ և ամեն տեղ դուրս
եկաւ ձեր հաւատքը առ Աստուած. այնպէս որ
9 պէտք չէ մեզ մի բան խօսել։ Որովհետև հէնց ի-
րանք պատմում են մեր մասին թէ ինչպիսի մուտք
ունեցանք ձեզ մօտ և ինչպէս դուք դարձաք
կուռքերից դէպի Աստուած, որ ծառայէք կեն-
10 դանի և ճշմարիտ Աստուծուն։ Եւ սպասէք նորա
Որդուն երկնքից, որին յարութիւն տուաւ մե-
ռելների միջից՝ Յիսուսին որ փրկում է մեզ գա-
լու բարկութիւնից։

ԳԼ. Բ

1 Որովհետև ինքներդ գիտէք, եղբարք, այն մեր
2 ձեզ մօտ մտնելը, որ ունայն չ'եղաւ. Այլ առաջ
չարչարուելով և անարգուելով, ինչպէս գիտէք,
Փիլիպպէումը համարձակեցանք մեր Աստուծովը
խօսել ձեզ Աստուծոյ աւետարանը մեծ հակառա-
3 կութիւնով։ Որովհետև մեր յորդորանքը ոչ մոլու-
թիւնից է, և ոչ պղծութիւնից, և ոչ խաբեբա-
4 յութիւնով։ Այլ ինչպէս մենք Աստուածանից
ընտրուեցանք որ աւետարանը մեզ հաւատացուի,
այնպէս էլ խօսում ենք ոչ թէ իբր մարդկանց
հաճոյ լինողներ, այլ Աստուծուն՝ որ մեր սրտերը
5 քննում է։ Որովհետև երբէք շողոքորթութեան
խօսքերով չ'եղանք, ինչպէս գիտէք. և ոչ էլ ա-
գահութեան պատճառանքով. Աստուած վկայ է։
6 Եւ ոչ մարդկանցից փառք խնդրեցինք, ոչ ձեզա-
7 նից, և ոչ ուրիշներից, թէ և կարող էինք ինչպէս
Քրիստոսի առաքեալներ ծանրութիւն լինել, բայց
հեզահոգի եղանք ձեր մէջ ինչպէս որ մի դայեակ

8 սնուցանում է իր երեխաներին ։ Այնպէս էլ մենք
խանդակաթ սէր ունենալով դէպի ձեզ, հաճե-
ցանք ոչ թէ միայն Աստուծոյ աւետարանը տալ
ձեզ, այլ մեր անձերն էլ, որովհետեւ մեր սիրելի-
9 ներն եղաք ։ Վասնզի յիշում էք, եղբարք, մեր
աշխատանքը եւ ջանքը, որ գիշեր եւ ցերեկ գործում
էինք, որ ձեզանից ոչ մէկին ծանրութիւն չ՚տանք․
եւ Աստուծոյ աւետարանը քարոզում էինք ձեզ ։
10 Դուք ինքներդ վկայ էք եւ Աստուած էլ, թէ ինչ-
պէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ անարա-
տութեամբ եղանք ձեզ հաւատացեալներիդ մէջ,
11 Ինչպէս գիտէք, որ ձեզանից ամեն մէկին՝ ինչպէս
12 մի հայր իր որդիներին՝ Յորդորում եւ մխիթարում
էինք, եւ վկայութիւն էինք տալիս, որ դուք գը-
նաք, ինչպէս այն Աստուծուն կ՚վայելէ, որ ձեզ
13 իր արքայութեան եւ փառքի մէջ կանչեց ։ Նորա
համար էլ մենք անպակաս գոհանում ենք Աստ-
ուածանից, որ դուք Աստուծոյ քարոզութեան
խօսքը մեզանից առած ընդունեցիք, ոչ թէ իբր
մարդկանց խօսք, այլ ինչպէս որ ճշմարիտ է՝ Աս-
տուծոյ խօսք․ որ եւ ներգործում է ձեզ հաւա-
14 տացեալներումդ ։ Որովհետեւ, եղբարք, դուք նման
եղաք Աստուծոյ այն եկեղեցիներին, որ Հրէաստա-
նումն են Քրիստոս Յիսուսումը․ որովհետեւ դուք
էլ նոյնը կրեցիք ձեր ազգականներիցը․ ինչպէս նո-
15 րանք էլ Հրէաներիցը․ Որոնք Տէր Յիսուսին էլ
սպանեցին եւ իրանց մարգարէներին, եւ մեզ հալա-
ծեցին եւ Աստուծոյ անհաճոյ եղան․ եւ բոլոր մարդ-
16 կանց հակառակ են․ Որ մեզ արգելում են խօսել
հեթանոսներին որ փրկուին, որ իրանց մեղքերը
կատարեալ անեն ամեն ժամանակ, եւ հասել է
նորանց վերայ բարկութիւնը մինչեւ վերջը ։
17 Բայց մենք, եղբարք, թէեւ առ ժամանակ ձե-

զանից որբ մնացինք երեսով եւ ոչ սրտով, բայց
աւելի եւս շտապեցինք ձեր երեսը տեսնելու մեծ
18 փափաքով ։ Նորա համար ես Պօղոս մի երկու ան-
գամ կամեցայ ձեզ մօտ գալ, եւ սատանան խա-
19 փանեց մեզ ։ Որովհետեւ ո՞վ է մեր յոյսը կամ ու-
րախութիւնը կամ պարծանքի պսակը, եթէ ոչ
դուք Տէրումը մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաջին
20 Նորա գալու ժամանակումը ։ Վասնզի դուք էք
մեր փառքը եւ ուրախութիւնը ։

ԳԼ․ Գ

1 Վասն որոյ այլ եւս չ՚համբերելով բարւոք երեւ-
2 ցաւ մեզ, որ մենք մինակ մնանք Աթէնքումը ։ Եւ
ուղարկեցինք մեր Տիմոթէոս եղբայրը եւ Աստուծոյ
ծառան եւ Քրիստոսի աւետարանին մէջ մեր գոր-
ծակիցը, որ ձեզ հաստատէ եւ մխիթարէ ձեր հա-
3 ւատքի համար, Որ չ՚սասանիք այս նեղութիւննե-
րումը, վասնզի դուք ինքներդ գիտէք, որ հէնց
4 սորա համար կանգնած ենք ։ Որովհետեւ երբոր էլ
ձեզ մօտ էինք, կանխաւ ասում էինք ձեզ, թէ
նեղութիւններ ենք կրելու․ ինչպէս որ եղաւ էլ,
5 եւ իմացանք էլ ։ Սորա համար ես էլ այլ եւս չ՚համ-
բերելով, ուղարկեցի որ ձեր հաւատքը գիտենամ,
որ մի գուցէ փորձիչը ձեզ փորձեց եւ մեր աշխա-
6 տանքը զուր լինի ։ Բայց հիմա երբոր Տիմոթէոսը
ձեզանից եկաւ մեզ մօտ, եւ ձեր հաւատքի եւ սէ-
րի աւետիքը տուաւ մեզ, որ ամեն ժամանակ մեր
բարի յիշատակը ձեր մտքում ունիք, փափաքելով
7 մեզ տեսնել՝ ինչպէս մենք էլ ձեզ, Նորա համար,
եղբարք, մխիթարուեցանք ձեզ վերայ այն մեր ա-
մեն վիշտումը եւ նեղութիւնումը ձեր հաւատքի
8 համար ։ Որովհետեւ հիմա մենք կենդանի ենք, ե-

9 Թէ դուք հաստատ կենաք Տէրումը։ Վասնզի ինչ
գոհութիւն կարող ենք մատուցանել Աստուծուն
ձեր մասին այն ամեն ուրախութեան համար, որով
ուրախանում ենք ձեզ վերայ մեր Աստուծոյ առա-
10 ջին, Գիշեր և ցերեկ առաւել ևս աղաչում ենք,
որ ձեր երեսը տեսնենք, և ձեր հաւատքի պակա-
11 սութիւնը լրացնենք. Բայց ինքն Աստուած և մեր
Հայրը և մեր Տէրը Յիսուս Քրիստոս ուղղէ մեր ճա-
12 նապարհը դէպի ձեզ։ Իսկ ձեզ աճեցնէ և աւե-
լացնէ Տէրը սիրով դէպի իրար և դէպի ամենը,
13 ինչպէս որ մենք էլ դէպի ձեզ։ Որ ձեր սրտերը
հաստատուն անարատ սրբութիւնով Աստուծոյ և
մեր Հօր առաջին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն իր
ամեն սրբերովը գալու ժամանակումը։

ԳԼ. Դ

1 Այսուհետև, եղբարք, աղաչում ենք ձեզ և յոր-
դորում ենք Տէր Յիսուսումը, ինչպէս որ ընդու-
նեցիք մեզանից, թէ ինչպէս պէտք է ձեզ գնալ
և հաճոյ լինել Աստուծոյ, որ էլ աւելի յառա-
2 ջանաք։ Վասնզի գիտէք թէ ինչպիսի պատուի-
3 րանքներ տուինք ձեզ Տէր Յիսուսումը։ Որովհետև
սա է Աստուծոյ կամքը՝ ձեր սրբութիւնը. որ դուք
4 ետ կենաք պոռնկութիւնից, Եւ ձեզանից ամեն
մէկը գիտենայ իր անօթը պահել սրբութեամբ և
5 պատուով, Ոչ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս
6 հեթանոսներն էլ որ Աստուծուն չ'գիտեն։ Չ'լինի
որ մէկը մի բանում չափիցն անցնէ և իր եղբօրը
զրկէ. որովհետև Տէրն այդ բոլոր բաների համար
վրէժխնդիր է. ինչպէս առաջուց էլ ասեցինք ձեզ
7 և վկայութիւն տուինք։ Որովհետև Աստուած մեզ
չ'կանչեց պղծութեան մէջ, այլ սրբութեան մէջ։

8 Ուրեմն նա որ անարգում է, ոչ թէ մարդի է ա-
նարգում, այլ Աստուծուն, որ և տուաւ մեզ
Սուրբ Հոգին։
9 Բայց եղբայրսիրութեան համար պէտք չ'ունիք
մի բան գրել ձեզ. որովհետև դուք ինքներդ Աս-
10 տուածանից սովորած էք իրար սիրելու. Որ հէնց
այդ էլ անում էք այն բոլոր եղբայրներին, որ ամ-
բողջ Մակեդոնիայումն են. և աղաչում ենք ձեզ,
11 եղբարք, որ էլ աւելանաք, Եւ ջանք անէք որ
հանդարտ լինիք. և ամեն մէկն իր գործը գործէ.
և ձեր ձեռովս աշխատէք, ինչպէս որ պատուիրե-
ցինք ձեզ, որ պարկեշտութիւնով վարուիք դրսին-
ների հետ և ոչ մի բանով կարօտ չ'լինիք։
12 Չենք կամենում, եղբարք, որ տգէտ լինիք նն-
ջեցեալների նկատմամբ. որ չ'տրտմիք ինչպէս ու-
13 րիշները որ յոյս չ'ունին։ Որովհետև եթէ հաւա-
տում ենք, որ Յիսուսը մեռաւ և յարութիւն ա-
ռաւ, այնպէս էլ Աստուած ննջեցեալներին Յիսու-
14 սի ձեռով կ'բերէ նորա հետ։ Որովհետև սա ենք
ասում ձեզ Տիրոջ խօսքովը, թէ մենք որ կենդանի
մնացած ենք մինչև Տիրոջ գալը, ննջեցեալներիցը
15 չենք առաջանալ։ Որովհետև ինքը Տէրը հրամա-
նով, հրեշտակապետի ձայնով և Աստուծոյ փողով
վայր կ'գայ երկնքից. և Քրիստոսով մեռելներն
16 առաջ յարութիւն կ'առնեն, Եւ յետոյ մենք, որ
կենդանի ենք մնացած նորանց հետ մէկտեղ ամ-
պերով օդի մէջ կ'յափշտակուինք Տիրոջը դիմա-
ւորելու և այնպէս ամեն ժամանակ Տիրոջ հետ կը
17 լինինք։ Ուրեմն իրար մխիթարեցէք այս խօսքերովը։

ԳԼ. Ե

1 Բայց այն ժամերի և ժամանակների համար, եղ-

2 բարք, պէտք չ՚ունիք գրել ձեզ։ Որովհետեւ դուք
ինքներդ հաստատ գիտէք, թէ Տէրոջ օրը ինչպէս
3 գիշերուայ գող՝ այնպէս կ՚հասնէ։ Վասնզի երբոր
կ՚ասեն թէ խաղաղութիւն եւ ապահովութիւն է,
այն ժամանակ յանկարծակի կ՚հասնէ նորանց վե-
րայ կորուստը ինչպէս ցաւը յղիի վերայ, եւ նորանք
4 չեն պրծնիլ։ Իսկ դուք, եղբարք, խաւարումը
չէք, որ այն օրը գողի պէս ձեզ վերայ հասնէ։
5 Դուք ամենդ լոյսի որդիք էք եւ ցերեկի որդիք,
6 գիշերինը չենք եւ ոչ խաւարինը։ Ապա ուրեմն մի
քնենք ուրիշների պէս, բայց արթուն եւ զարթուն
7 լինենք։ Որովհետեւ նորանք որ քնում են գիշերն
են քնում, եւ նորանք որ արբում են գիշերն են
8 արբում։ Իսկ մենք ցերեկինը լինելով արթուն լի-
նինք՝ հագած հաւատքի եւ սէրի զրահը, եւ փրկու-
9 թեան յոյսի սաղաւարտը։ Որովհետեւ Աստուած
մեզ չ՚դրաւ բարկութեան համար, այլ փրկու-
թիւնը ստանալու համար մեր Տէր Յիսուս Քրիս-
10 տոսի ձեռովը. Որ մեզ համար մեռաւ, որ՝ թէ
արթուն լինենք եւ թէ քնենք, նորա հետ մէկտեղ
11 ապրենք։ Սորա համար իրար մխիթարեցէք, եւ ի-
րար շինութիւն տուէք՝ ինչպէս անում էլ էք։
12 Եւ աղաչում ենք ձեզ, եղբարք, որ ճանաչէք
ձեր միջումը աշխատողներին եւ ձեր վերակացունե-
13 րին Տէրումը, եւ ձեր խրատողներին էլ։ Եւ նո-
րանց առաւելապէս պատուեցէք սէրով իրանց գոր-
ծի պատճառով. իրար հետ խաղաղութիւնով վար-
14 ուեցէք։ Աղաչում ենք ձեզ, եղբարք, խրատեցէք
անկարգներին, մխիթարեցէք փոքրասիրտներին, օգ-
նական եղէք տկարներին, երկայնամիտ եղէք ա-
15 մենի հետ։ Զգոյշ կացէք՝ մի դուցէ մէկը չարի
տեղ չար հատուցանէ, այլ ամեն ժամանակ բա-
16 րիին հետեւեցէք իրար հետ եւ ամենի հետ։ Ամեն

17 ժամանակ ուրախ եղէք։ Անդադար աղօթք արէք։
18 Ամեն բանի մէջ գոհացէք. որովհետեւ սա է Աս-
տուծոյ կամքը ձեզ վերայ Քրիստոս Յիսուսումը։
19 Հոգին մի հանգցնէք։ (20) Մարգարէութիւնները
21 մի անարգէք։ Ամեն բան փորձեցէք, բարին ամուր
22 բռնեցէք։ Ամեն կերպ չար բանից հեռու կացէք։
23 Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ սուրբ
անէ բոլորովին. եւ ձեր բոլոր հոգին եւ շունչը եւ
մարմինը անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս
24 Քրիստոսի գալը։ Հաւատարիմ է նա որ կանչեց
ձեզ, որ կ՚անէ էլ։
25 Եղբարք, աղօթք արէք մեզ համար էլ։ (26) Բա-
րեւ տուէք բոլոր եղբայրներին սուրբ համբոյրով։
27 Երդում եմ տալիս ձեզ Տէրովը, որ այս թուղթը
28 բոլոր սուրբ եղբայրներին կարդացուի։ Մեր Տէր
Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեզ հետ լինի։ Ամեն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս. Թեսաղոնիկե-
ցիների եկեղեցուն Աստուած մեր Հօրումը և Տէր
2 Յիսուս Քրիստոսումը. Շնորհք լինի ձեզ հետ և
խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը և Տէր Յի-
սուս Քրիստոսիցը ։
3 Պարտենք ամեն ժամանակ Աստուածանից գոհա-
նալ ձեզ համար, եղբարք, ինչպէս արժան է, որ
ձեր հաւատքը խիստ մեծանում է, և ձեր ամեն
4 մէկի սէրն աւելանում է իրար վերայ ։ Այնպէս որ
մենք ինքներս ձեզանով պարծենում ենք Աստու-
ծոյ եկեղեցիներումը ձեր համբերութեան և հա-
ւատքի համար ձեր բոլոր հալածանքներումը և նե-
ղութիւններումը, որոնց դուք համբերում էք ։
5 Որ դա Աստուծոյ արդար դատաստանի նշան է. որ
դուք արժանի լինիք Աստուծոյ արքայութեանը,
6 որի համար էլ նեղութիւն էք քաշում, Որ եթէ
իրաւունք է Աստուծոյ առաջին ձեզ նեղացնողնե-
7 րին նեղութիւն հատուցանել. Եւ ձեզ նեղուած-

ներիդ հանգիստ մեզ հետ Տէր Յիսուսի երկնքից
յայտնուելումը իր զօրութեան հրեշտակներովը ։
8 Կրակի բոցով վրէժ առնելու նորանցից, որ Ա-
ստուծուն չեն ճանաչում, և չեն հնազանդում մեր
9 Տէր Յիսուսի աւետարանին. Որոնք պատիժ կ'կրեն
յաւիտենական կորուստը Տիրոջ երեսիցը և նորա
10 փառաւոր զօրութիւնիցը, Երբոր կ'գայ, որ փա-
ռաւոր լինի իր սուրբերումը, և զարմանալի՝ բոլոր
հաւատացեալներումը. (որովհետև մեր վկայու-
թիւնը ձեզ վերայ հաւատացուեցաւ) այն օրումը ։
11 Այս պատճառով էլ ամեն ժամանակ աղօթք ենք
անում ձեզ համար որ մեր Աստուածը ձեզ ար-
ժանի անէ իւր կոչումին և կատարէ բոլոր բարի
հաճութիւնը, և հաւատքի գործը զօրութիւնով.
12 Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը փառաւոր-
ուի ձեզանում և դուք նորանում, մեր Աստուծոյ
և Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքի պէս ։

ԳԼ. Բ

1 Աղաչում ենք ձեզ, եղբարք, մեր Տէր Յիսուս
Քրիստոսի գալստեան և մեր նորա մօտ ժողովուե-
2 լու համար. Որ դուք շուտով չ'շարժուիք ձեր
մտքիցը և չ'զարհուրիք ոչ հոգով, և ոչ խօսքով,
և ոչ թղթով իբր թէ մեզանից գրուած, որպէս
3 թէ Քրիստոսի օրն եկած հասած լինի ։ Մէկը չը
խաբէ ձեզ ոչ մի կերպով. որովհետև նա չի գալ
եթէ առաջ չ'գայ ապստամբութիւնը, և յայտ-
4 նուի անօրէնութեան մարդը՝ կորուստի որդին, Այն
հակառակորդը որ գոռոզացած է այն ամենի վե-
րայ, որ Աստուած կամ Աստուծոյ պաշտօնեայ է
անուանուած. մինչև որ նա Աստուծոյ տաճարի մէջ
(իբրև Աստուած) նստի, և իր անձը ցոյց տայ թէ

5 Աստուած է։ Չէ՞ք յիշում, որ քանի որ ձեզ մօտ
6 էի, այս բաներն ասում էի ձեզ։ Եւ հիմա գիտէք
այն որ խափանում է, որ նա իր ժամանակին յայտ-
7 նուի։ Որովհետեւ անօրէնութեան խորհուրդը ար-
դէն զօրանում է. միայն թէ մինչեւ որ մէջ տեղից
8 վեր առնուի այժմ խափանողը։ Եւ այն ժամանակ
կ՚յայտնուի այն անօրէնը, որին Տէրը կ՚սատակեցնէ
իր բերանի հոգովը, եւ կ՚խափանէ իր գալստեան
9 յայտնութիւնովը։ Որի գալը սատանայի ներգոր-
ծութիւնից է, ամեն զօրութիւնով եւ սուտ նշան-
10 ներով եւ հրաշքներով. Եւ անիրաւութեան ամեն
խաբեբայութիւններով կորուսեալների մէջ. փո-
խանակ նորա որ ճշմարտութեան սէրը չ՚ընդունե-
ցին որ ապրեն, եւ նորա համար Աստուած մոլորու-
թեան ներգործութիւն կ՚ուղարկէ նորանց, որ հա-
11 ւատան ստութեան. Որ դատապարտուին ամենը
որ չ՚հաւատացին ճշմարտութեանը, բայց հաւա-
12 նեցին անօրէնութեանը, իսկ մենք պարտ ենք ա-
մեն ժամանակ Աստուածանից շնորհակալ լինել
ձեզ համար, Տէրից սիրուած եղբարք, որ Աս-
տուած սկզբից ընտրեց ձեզ փրկութեան համար
Հոգու սրբութեան եւ ճշմարիտ հաւատքի մէջ.
13 Որի մէջ կանչեց ձեզ մեր աւետարանովը մեր Տէր
Յիսուս Քրիստոսի փառքն ստանալու համար։
14 Ուրեմն, եղբարք, հաստատ կացէք, եւ պինդ
բռնեցէք այն աւանդութիւնները, որ սովորեցիք
15 թէ խօսքով եւ թէ մեր թղթով։ Բայց ինքը մեր
Տէր Յիսուս Քրիստոսը եւ մեր Աստուածը եւ Հայ-
րը, որ սիրեց մեզ եւ յաւիտենական մխիթարու-
16 թիւն տուաւ մեզ եւ բարի յոյս շնորհքով, Նա
մխիթարէ ձեր սրտերը եւ հաստատէ ձեզ ամեն
բարի խօսքի եւ գործերի մէջ։

ԳԼ. Գ

1 Այսուհետեւ, եղբարք, աղօթք արէք մեզ հա-
մար, որ Տիրոջ խօսքն յառաջանայ, եւ ամեն տեղ
2 փառաւորուի ինչպէս որ էլ ձեզ մօտ։ Եւ որ փըր-
կուինք անօրէն եւ անզգամ մարդկանցից. որովհե-
3 տեւ հաւատքն ամենի բան չէ։ Բայց Տէրը հաւա-
տարիմ է, որ կ՚հաստատէ ձեզ եւ կ՚պահէ այն չա-
4 րիցը։ Վստահութիւն ունինք ձեզ վերայ Տէրով,
որ այն բաներն որ պատուիրեցինք ձեզ, եւ անում
5 էք եւ կ՚անէք էլ, իսկ Տէրը ուղղէ ձեր սրտերը
դէպի Աստուծոյ սէրը եւ դէպի Քրիստոսի համբե-
րութիւնը։
6 Եւ պատուիրում ենք ձեզ, եղբարք, մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը, որ ետ քաշուիք ա-
մեն եղբայրից, որ անկարգ է վարվում. եւ ոչ թէ
այն պատուիրանքի պէս որ ընդունեց մեզանից։
7 Որովհետեւ դուք ինքներդ գիտէք, թէ ինչպէս
պէտք է ձեզ մեզ նմանիլ. որովհետեւ ձեր մէջ
8 անկարգութիւնով չ՚վարուեցանք։ Եւ ոչ էլ ձրի
հաց կերանք մէկի մօտ, այլ ջանքով եւ աշխա-
տանքով գիշեր եւ ցերեկ գործելով, որ ձեզանից
9 մէկին ծանրութիւն չ՚տանք։ Ոչ իբր թէ իշխա-
նութիւն չ՚ունինք, այլ որ մեր անձներն օրինակ
10 տանք ձեզ որ մեզ նմանիք։ Որովհետեւ երբոր ձեզ
մօտ էինք, սա էինք պատուիրում ձեզ, որ եթէ
11 մէկը չէ կամենում գործել՝ թող չ՚ուտէ էլ։ Որով-
հետեւ ձեզանից ոմանց համար լսում ենք որ ան-
կարգութիւնով են վարվում, բան չեն գործում,
12 այլ հետաքրքիր ման են գալիս։ Այնպիսիներին
պատուիրում ենք եւ աղաչում ենք մեր Տէր Յի-
սուս Քրիստոսովը որ հանդարտութիւնով աշխա-

13 տեն և իրանց հացն ուտեն ։ Բայց դուք, եղբարք,
14 մի ձանձրանաք բարիք գործելուց ։ Եւ եթէ մէկը
չ'հնազանդէ մեր խօսքին այս թղթովը, դուք
նշանակեցէք նորան . և մի խառնուիք նորա հետ
15 որ ամաչէ ։ Բայց թշնամու պէս մի համարէք, այլ
16 խրատեցէք նորան ինչպէս եղբայր ։ Իսկ ինքը խա-
ղաղութեան Տէրը տայ ձեզ խաղաղութիւնը ա-
մեն ժամանակ, և ամեն կերպով . Տէրը ձեր ամե-
նի հետ լինի ։
17 Այս բարևը իմ Պօղոսի ձեռքինն է, որ նշան է
18 ամեն թղթերումը . Այսպէս եմ գրում ։ Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենի հետ
լինի ։ Ամէն ։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր փրկիչ
Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի՝ մեր յոյսին հրա-
2 մանովը . Տիմոթէոս՝ սիրելի որդուս՝ հաւատքով,
շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աս-
տուած մեր Հօրից և մեր Տէր Յիսուս Քրիստոսից ։
3 Ինչպէս որ աղաչեցի քեզ, որ Եփեսոսումը մնաս
Մակեդոնիա գնալիս, որ պատուիրես ոմանց որ օ-
4 տար ուսմունք չ'սովորեցնեն . Եւ մտիկ չ'տան ա-
ռասպելների և ազգահամարների, որ վերջ չ'ու-
նին, որ աւելի վիճաբանութիւններ են գրգռում,
5 քան թէ Աստուծոյ շինութիւնը հաւատքով ։ Իսկ
պատուիրանքի վախճանը սէրն է սուրբ սրտից, և
6 բարի խղճմտանքով, և անկեղծ հաւատքից . Որոն-
ցից ոմանք խոտորելով ունայն խօսքերի ետևից գը-
7 նացին, կամենում են օրէնքի վարդապետ լինել, և
իրանք չեն իմանում ոչ այն որ խօսում են, և ոչ
8 էլ այն բաները որ պնդում են ։ Եւ գիտենք որ օ-
րէնքը բարի է, եթէ մէկն օրինաւորապէս գործա-

9 ծէ նորան, Սա իմանալով, որ արդարին օրէնք չէ
կայ, այլ անօրէններին և անհնազանդներին, ամ-
բարիշտներին, և մեղաւորներին, անսուրբներին, և
պիղծերին, հայրասպաններին, և մայրասպաններին,
10 մարդասպաններին, պոռնիկներին, արուագէտնե-
րին, մարդագողներին, սուտ ասողներին, սուտ եր-
դում անողներին. և եթէ ուրիշ ինչ հակառակ է
11 ողջամիտ վարդապետութեանը, Երանելի Աստու-
ծոյ փառաւոր աւետարանի համեմատ, որն ինձ
12 հաւատացուեցաւ։ Եւ շնորհակալ եմ ինձ մեր
Տէր Յիսուս Քրիստոսումը զօրացնողիցը, որ ինձ
հաւատարիմ համարեց և սպասաւորութեան մէջ
13 դրաւ, Որ առաջուց հայհոյիչ և հալածող և
թշնամանող էի, բայց ողորմութիւն գտայ, որով-
հետև չ'գիտենալով էի գործում անհաւատութիւ-
14 նով։ Բայց էլ աւելի շատ եղաւ մեր Տիրոջ շնորհ-
քը հաւատքով և սիրով որ Քրիստոս Յիսուսումն է։
15 Ճշմարիտ է այս խօսքը և ամեն ընդունելութեան
արժանի, որ Քրիստոս Յիսուսն աշխարհք եկաւ մե-
16 ղաւորները փրկելու, որոնց առաջինը ես եմ։ Սա-
կայն նորա համար ողորմութիւն գտայ, որ Յիսուս
Քրիստոսը առաջ ինձանում ցոյց տայ բոլոր եր-
կայնմտութիւնը՝ օրինակ լինելու նորանց, որ պիտի
հաւատան նորան յաւիտենական կեանքի համար։
17 Բայց յաւիտենից Թագաւորին, այն անեղծին և
աներևոյթին, այն մէկ Աստուծուն լինի պատիւ և
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։
18 Այս պատուիրանքն աւանդում եմ քեզ, Տիմո-
թէոս որդեակ, առաջուց քեզ վերայ եղած մար-
գարէութիւնների պէս, որ նորանցով պատերազ-
19 միս բարի պատերազմը. Ունենալով հաւատք և
բարի խղճմտանք, որ մի քանիսը դէն գցելով հա-
20 ւատքումը նաւաբեկութիւն քաշեցին. Որոնցից են

Հիմենոսը և Աղեքսանդրոսը, որոնց մատնեցի սա-
տանային որ խրատուին չ'հայհոյել։

ԳԼ. Բ

1 Արդ աղաչում եմ, ամենից առաջ աղօթք ա-
նել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամեն
2 մարդկանց համար, Թագաւորների և ամեն իշխա-
նաւորների համար. որ խաղաղ և հանդարտ կեանք
վարենք, բոլոր աստուածպաշտութիւնով և սըր-
3 բութիւնով։ Որովհետև սա բարի և ընդունելի է
4 մեր Փրկիչ Աստուծոյ առաջին, Որ կամենում է
որ ամեն մարդիկ փրկուին, և ճշմարտութեան գի-
5 տութեանը գան։ Որովհետև մէկ Աստուած կայ,
և մէկ միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ Քրիս-
6 տոս Յիսուս մարդը, Որ իր անձը ամենի համար
փրկանք տուաւ, որ վկայութիւն լինի իր ժամա-
7 նակներումը։ Որին ես քարոզիչ և առաքեալ կար-
գուեցայ (ճշմարիտն եմ ասում, սուտ չեմ խօ-
սում). հեթանոսների վարդապետ՝ հաւատքի և
8 ճշմարտութեան մէջ։ Արդ կամենում եմ, որ մար-
դիկ ամեն տեղ աղօթք անեն, սուրբ ձեռքեր վեր
բարձրացնեն առանց բարկութեան և երկմտու-
9 թեան։ Այնպէս էլ կանայքը վայելուչ հագուս-
տով ամօթխածութիւնով և պարկեշտութիւնով
իրանց անձերը զարդարեն, ոչ թէ հիւսուածներով,
կամ ոսկիով կամ մարգարիտներով կամ թանգա-
10 գին հանդերձներով. Այլ ինչպէս կ'վայելէ աստ-
ուածպաշտութիւնը յանձն առած կանանց՝ բարի
11 գործերով։ Կինը թող հանդարտութեամբ սովորէ
12 ամեն հնազանդութիւնով։ Կնկան հրաման չեմ
տալիս, որ սովորեցնէ, և ոչ էլ մարդին վերայ իշ-
13 խէ, այլ որ լուռ կենայ։ Որովհետև Ադամն առաջ

14 ստեղծուեցաւ և յետոյ Եւան։ Եւ Ադամ չխաբ-
15 ուեցաւ այլ կինը խաբուելով մեղք գործեց։ Սա-
կայն կ՚ապրի որդեծնութեան համար, եթէ կենայ
հաւատքի և սէրի և սրբութեան մէջ պարկեշ-
տութեան հետ։

ԳԼ Գ

1 Ճշմարիտ է այս խօսքը, եթէ մէկը եպիսկոպոսու-
թեան է ցանկանում բարի գործի է ցանկանում։
2 Բայց եպիսկոպոսին պէտք է անարատ լինել, մէկ
կնկան մարդ, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հիւրա-
3 սէր, սովորեցնելու յարմար. Ոչ գինեմոլ, ոչ զար-
կող, այլ հանդարտ, կռիւ չանող, ոչ արծաթա-
4 սէր. Իր տանը բարի վերակացու լինող, որ որդի-
ներ ունենայ հնազանդութեան մէջ ամեն պար-
5 կեշտութիւնով. (Բայց եթէ մէկն իր տանը վերա-
կացու լինել չգիտենայ, ի՞նչպէս նա Աստուծոյ ե-
6 կեղեցուն խնամք կ՚տանի.) Ոչ նորահաւատ, որ
չ՚գոռոզանայ և սատանայի դատաստանն ընկնի։
7 Բայց պէտք է նորան, դրսիններիցը բարի վկայու-
թիւն էլ ունենալ. որ չ՚ընկնի նախատինքի և սա-
տանայի որոգայթի մէջ։
8 Այնպէս էլ սարկաւագները պէտք է ծանրաբա-
րոյ լինեն. ոչ երկու լեզուանի, ոչ գինու մոլի. ոչ
9 ամօթալից շահ սիրող. Այլ հաւատքի խորհուրդը
10 սուրբ խղճմտանքի մէջ ունեցող։ Եւ սորանք ա-
ռաջ թող փորձուին, և յետոյ այն պաշտօնը մըտ-
11 նեն, եթէ անարատ լինեն։ Այնպէս էլ նորանց կա-
նայքը պէտք է ծանրաբարոյ լինեն. ոչ թէ չարա-
խօս, այլ զգաստ, ամեն բանի մէջ հաւատարիմ։
12 Սարկաւագները մէկ կնկան մարդ լինին, իրանց
որդկանցը և իրանց տներին բարի վերակացու։

13 Որովհետև պաշտօնը լաւ կատարողներն իրանց ան-
ձերի համար բարի աստիճան են շահում, և շատ
համարձակութիւն՝ այն հաւատքումը որ Քրիստոս
Յիսուսումն է։
14 Սա գրում եմ քեզ յուսալով որ շուտով քեզ
15 մօտ գամ։ Իսկ եթէ ուշանամ, որ գիտենաս թէ
ի՞նչպէս պէտք է Աստուծոյ տան մէջ վարուիլ. որ
է կենդանի Աստուծոյ եկեղեցի, սիւն և հաստա-
16 տութիւն ճշմարտութեան։ Եւ յայտնապէս մեծ
է Աստուածպաշտութեան խորհուրդը. Աստուած
յայտնուեցաւ մարմնում, արդարացաւ Հոգով, ե-
րեւեցաւ հրեշտակներին, քարոզուեցաւ հեթանոս-
ներին, հաւատացուեցաւ աշխարհքումը և վերա-
ցաւ փառքով։

ԳԼ. Դ

1 Եւ Հոգին յայտնի ասում է թէ յետին ժամա-
նակներումը ոմանք հաւատքիցը կ՚հեռանան, և
մտիկ կ՚տան մոլար ոգիների և դևերի վարդապե-
2 տութիւններին, Ստախօսների կեղծաւորութեամբը,
3 որոնց խղճմտանքը տաղուած է. Որ ամուսնանալուց
կ՚արգիլեն, կ՚հրամայեն կերակուրներից որ Աստ-
ուած ստեղծեց հաւատացեալների և ճշմարտու-
թիւնը ճանաչողների համար որ գոհութեամբ վա-
յելեն։ Որովհետև Աստուծոյ բոլոր ստեղծուածնե-
4 րը բարի են, և ոչ մի բան խոտան չէ. երբոր գո-
հութիւնով ընդունուի։ Որովհետև սրբվում է
5 Աստուծոյ խօսքովը և աղօթքով։ Եթէ այս բանե-
6 րը եղբայրներին խրատ տաս, Յիսուս Քրիստոսի
բարի պաշտօնեայ կ՚լինես, սնուած հաւատքի խօս-
քերովը, և այն բարի վարդապետութիւնովն որին
7 հետևեցիր։ Եւ պիղծ ու պառաւական առասպել-

ներիցը ետ կաց. բայց վարժեցրու քո անձը աստ-
8 ուածպաշտութեան։ Որովհետև մարմնի վարժու-
թիւնը քիչ բանի համար է օգտակար. բայց աստ-
ուածպաշտութիւնն ամէն բանի համար օգտակար
է, ունենալով այժմեան և գալու կենաց խոստ-
9 մունքը։ Ճշմարիտ է այս խօսքը և ամէն ընդունե-
10 լութեան արժանի։ Որովհետև հէնց սորա համար
էլ աշխատում ենք և նախատւում, որ յոյս ենք
դրել կենդանի Աստուծոյ վերայ, որ Փրկիչ է ա-
մէն մարդկանց, և մանաւանդ հաւատացեալնե-
11 րին։ Այս բաները պատուիրիր և սովորեցրու։
12 Ոչ ոք քո մանկութիւնը չ'անարգէ. այլ օրինակ
եղիր հաւատացեալներին խօսքով, վարքով, սի-
13 րով, հաւատքով, սրբութիւնով, Մինչև որ գամ՝
միտք դիր կարդալուն, յորդորմունքին և վարդա-
14 պետութեանը։ Անհոգ մի լինիր այն քեզանում
եղած շնորհքի համար. որ քեզ տրուեցաւ մար-
գարէութիւնով երիցութեան ձեռնադրութեամբը՝
15 Սորանք մտածիր, սորանցում կաց, որ քո յառա-
16 ջադիմութիւնը ամենին յայտնի լինի։ Զգոյշ կաց
անձիդ և վարդապետութեանդ, և դորանում յա-
րատևիր. որովհետև այդ անելով քո անձն էլ
կ'ապրեցնես, և քեզ լսողներին էլ։

ԳԼ. Ե

1 Ծերին սաստիկ մի յանդիմանիր, այլ յորդորիր
ինչպէս հօր, երիտասարդներին եղբայրների պէս։
2 Պառաւներին մայրերի պէս, մատղաշ կանանցը
3 քոյրերի պէս բոլոր սրբութիւնով։ Որբևայրիներին
4 պատուիր՝ որ ճշմարիտ որբևայրի են։ Բայց եթէ
մէկ որբևայրի որդիք և թոռներ ունենայ, թող
առաջ սովորեն իրանց ընտանիքումը որդիական սէր

ցոյց տալ և փոխարէն հատուցանել ծնողներին.
որովհետև սա բարի է և Աստուծոյ առաջին ըն-
5 դունելի։ Իսկ նա որ ճշմարիտ որբևայրի է և մի-
նակ մնացած, նա յոյսը Աստուծոյ վերայ է դնում,
և գիշեր և ցերեկ աղօթքին և աղաչանքին հետե-
6 ւում։ Բայց փափկասէր որբևայրին կենդանոյն մե-
7 ռած է։ Եւ այս բաները պատուիրիր, որ անարատ
8 լինեն։ Բայց եթէ մէկը իրաններին և մանաւանդ ըն-
տանիքներին համար խնամք չ'տանի, նա հաւատ-
9 քիցն ուրացած է և անհաւատից էլ չար է։ Որբ-
ևայրի նա ընտրուի, որ վաթսուն տարուց պակաս
10 չէ և մէկ մարդի կին եղած է. Բարի գործերով
վկայուած, եթէ երեխաներ է մեծացրել, հիւրեր
ընդունել, սուրբերի ոտները լուացել, նեղացած-
ներին ձեռնտու եղել, ամէն բարի գործերին հե-
11 տևել։ Բայց մատղաշ որբևայրիներիցը ետ կաց.
որ երբոր ցանկութիւնով լցվում են՝ Քրիստոսի
12 հակառակ՝ կամենում են ամուսնանալ. Եւ դա-
տապարտութիւն են ընդունում, որ առաջին հա-
13 ւատքը դէն գցեցին։ Միանգամայն էլ ծոյլ են սո-
վորում տուները ման գալով. և ոչ թէ միայն ծոյլ
այլ և շատախօս, և հետաքրքիր, և խօսում են
14 ինչ որ պէտք չէ։ Կամենում եմ որ մատղաշ որբ-
ևայրիներն ամուսնանան, որդիք ծնեն, տնաշէն լի-
նեն. և հակառակողին ոչ մի պատճառ չ'տան հայ-
15 հոյանք անելու։ Որովհետև արդէն մի քանիսը խո-
16 տորուեցան սատանայի ետևիցը։ Եթէ մի հաւա-
տացեալ մարդ կամ հաւատացեալ կին որբևայ-
րիներ ունենայ, նա թող նորանց խնամք տանէ. և
եկեղեցուն ծանրութիւն չ'լինի, որ ճշմարիտ որբ-
ևայրիներին խնամք տանէ։
17 Լաւ վերակացութիւն անող երէցները թող եր-
կուպատիկ պատուի արժանի լինեն. մանաւանդ

Նորանք որ խօսքով և վարդապետութիւնով են
18 աշխատում։ Որովհետև գիրքն ասում է Եզ կալի
մէջ աշխատող եզի դունչը չ'կապես. Եւ մշակը
19 արժանի է իր վարձքին։ Երէցի վերայ գանգատ մի
ընդունիր. բայց միայն երկու կամ երեք վկանե-
20 րով։ Մեղանչողներին ամենի առաջին յանդիմա-
21 նիր, որ ուրիշներն էլ վախենան։ Վկայութիւն եմ
դնում Աստուծոյ և Յիսուս Քրիստոսի և ընտրուած
հրեշտակների առաջին, որ այս բաները պահես ա-
ռանց նախապաշարման. ոչինչ չ'անելով աչառու-
22 թեամբ։ Ձեռը շուտով մի դնիր մէկի վերայ, և
ուրիշների մեղքերին մասնակից մի լինիր. քո անձը
սուրբ պահիր։
23 Այսուհետև միայն ջուր չ'խմես, այլ մի քիչ
գինի գործածիր քո ստամոքսի և քո շուտ շուտ
տկարանալու համար։
24 Կան մարդիկ, որոնց մեղքերը յայտնի են, և ա-
ռաջուց դատաստանի հասած. իսկ ոմանցն էլ ե-
25 տևիցն են գալիս։ Այնպէս էլ բարի գործերը
յայտնի են. և ուրիշ կերպ լինողներն էլ չեն կա-
րող ծածկուիլ։

ԳԼ. Զ

1 Նորանք որ ծառայութեան լծի տակ են, թող
իրանց տէրերին ամեն պատուի արժանի համարեն.
որ Աստուծոյ անունը և վարդապետութիւնը չ'հայ-
2 հոյուի։ Իսկ հաւատացեալ տէրեր ունեցողները
թող չ'անարգեն նորա համար որ եղբարք են. այլ
առաւել եւս ծառայեն. նորա համար որ հաւա-
տացեալ են և սիրելի, որ բարերարութեանը մաս-
նակից են. այս բաները սովորեցրու և յորդորիր։
3 Իսկ եթէ մէկն ուրիշ կերպ բան սովորեցնէ և մօտիկ

չ'անէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքե-
րին, և աստուածպաշտութեան համեմատ վարդա-
4 պետութեանը, Նա դոռոզացած է, ոչինչ չ'իմա-
նալով. այլ ախտացած է վիճաբանութիւնների և
խօսքերով հակառակելու համար, որ նորանից լի-
նում է նախանձ, կռիւ, հայհոյութիւն, չար կար-
5 ծիքներ, Դատարկ վէճեր այնպիսի մարդկանց որ
մտքով ապականուած և ճշմարտութիւնից հեռա-
ցած են. որ աստուածպաշտութիւնը շահավաճա-
ռութիւն են համարում. այնպիսիներից ետ քաշ-
6 ուիր։ Բայց մեծ շահավաճառութիւն է իրաւ աս-
տուածպաշտութիւնը բաւականութեան հետ մի-
7 ասին։ Որովհետև ոչինչ չենք բերել աշխարհքս և
յայտնի է որ ոչինչ էլ չենք կարող դուրս տանիլ։
8 Բայց եթէ կերակուր և հագուստ ունինք, նորան-
9 ցով բաւականանանք։ Իսկ նորանք որ կամենում
են հարստանալ փորձութեան և որոգայթի և շատ
անմիտ վնասակար ցանկութիւնների մէջ են ընկ-
նում. որ ընկղմում են մարդկանց սատակումի և
10 կորուստի մէջ։ Որովհետև արծաթսիրութիւնը ա-
մեն չարիքների արմատն է. որին մի քանիսը անձ-
նատուր լինելով հաւատքից մոլորուեցան, և ի-
րանց անձերը շատ ցաւերով խոցեցին։
11 Բայց դու, ով Աստուծոյ մարդ, փախիր սորան-
ցից, և հետևիր արդարութեան, աստուածպաշ-
տութեան, հաւատքի, սէրի, համբերութեան, հե-
12 զութեան։ Պատերազմիր հաւատքի բարի պատե-
րազմը, և բռնիր յաւիտենական կեանքը որի մէջ
կանչուեցար, և դաւանեցիր բարի դաւանութիւնը
13 շատ վկաների առաջին։ Պատուիրում եմ քեզ
Աստուծոյ առաջին որ ամեն բան կենդանի է ա-
նում, և Քրիստոս Յիսուսի առաջին որ բարի դա-
ւանութիւնը վկայեց Պոնտացի Պիղատոսի առաջին.

14 Որ դու պատուիրանքը անբիծ և անարատ պահես,
մինչև մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը։
15 Որ իր ժամանակին ցոյց կ'տայ Երանելին և միայն
Հզօրը, Թագաւորների Թագաւորը և տէրերի Տէ-
16 րը, Որ միայն նա անմահութիւն ունի անմատոյց
լոյսի մէջ բնակուած. որ մարդկանցից ոչ ոք չ'տե-
սաւ և ոչ էլ կարող է տեսնել. Նորան լինի պա-
տիւ և զօրութիւն յաւիտեանս։ Ամէն։
17 Ներկայ աշխարհիս հարուստներին պատուիրիր
որ չ'գոռոզանան, և ոչ էլ ունայն մեծութեան վե-
րայ յոյս դնեն, այլ կենդանի Աստուծոյ վերայ որ
ամեն բան տալիս է մեզ առատապէս վայելելու
18 համար։ Բարի գործեն, բարի գործերով հարստա-
նան, առատաձեռն և կարօտներին հաղորդող լինեն։
19 Իրանց անձերի համար բարի հիմ գանձեն հան-
դերձեալի համար, որ յաւիտենական կեանք
ձեռք բերեն։
20 Ով Տիմոթէոս, պահիր քեզ տրուած աւանդը, և
ետ կաց պիղծ ունայնաբանութիւններից և սուտա-
21 նուն գիտութեան հակառակութիւններից. Որ մի
քանիսը ընդունելով հաւատքից մոլորուեցան. Շը-
նորհքը քեզ հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ
կամքովը, կեանքի խոստմունքի պէս, որ Քրիստոս
2 Յիսուսումն է, Տիմոթէոս՝ սիրելի որդուս, շնորհք,
ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած
Հօրից և մեր Տէր Յիսուս Քրիստոսից։
3 Շնորհակալ եմ Աստուածանից, որին պաշտում
եմ իմ նախնիքներից. մաքուր խղճմտանքով, որ
անպակաս յիշում եմ քեզ իմ աղօթքներումը
4 գիշեր և ցերեկ, Ցանկանալով քեզ տեսնել երբ
յիշում եմ քո արտասուքը, որ ուրախութիւնով
5 լցուիմ. Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը
որ քեզանում է. որ առաջ քո Լօիդա տատումը
և քո Եւնիկէ մօրումը բնակուեցաւ, համոզուած
6 եմ որ քեզանում էլ։ Այդ պատճառով միտքդ
եմ բերում որ արծարծես Աստուծոյ այն շնորհքն,
որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վերայ դնելովը։
7 Որովհետև Աստուած չ'տուաւ մեզ երկչոտութեան
հոգի, այլ զօրութեան և սէրի և զգաստութեան։

8 Ուրեմն ամօթ մի համարիր մեր Տիրոջ վկայու-
թիւնը, և ոչ էլ ինձ որ Նորա կապուածն եմ.
այլ միասին չարչարուիր աւետարանի համար Ա-
9 ստուծոյ զօրութեան համեմատ, Որ փրկեց մեզ, և
սուրբ կոչումով կանչեց. ոչ թէ մեր գործերի հա-
մեմատ, այլ իր յառաջադրութեան և շնորհքի
համեմատ, որ տրուեցաւ մեզ Քրիստոս Յիսուսու-
10 մը յաւիտենական դարերից առաջ, Եւ հիմա
յայտնուեցաւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի երե-
ւելովը. որ խափանեց մահն և լոյսի մէջ բերաւ
կեանքն ու անմահութիւնը աւետարանի միջոցով,
11 Որին ես քարոզիչ և առաքեալ կարգուեցայ, և
12 հեթանոսների վարդապետ։ Որ այդ պատճառով
էլ չարչարանքները կրում եմ. բայց ամօթ չեմ
համարում. որովհետև գիտեմ թէ ո՞ւմ եմ հա-
ւատացել. և համոզուած եմ թէ Նա կարող է
13 իմ աւանդը պահել մինչև այն օրը։ Ունեցիր ող-
ջամիտ խօսքերի օրինակը, որ ինձանից լսեցիր հա-
ւատքով և սիրով որ Քրիստոս Յիսուսումն է։
14 Այն բարի աւանդը պահիր Սուրբ Հոգովը, որ
15 բնակուած է մեզանում։ Սա գիտես, որ ինձանից
ետ քաշուեցան այն ամենը որ Ասիայումն էին. ո-
16 րոնցից են Փիգելոս և Հերմոգինէս։ Տէրը ողորմու-
թիւն տայ Ոնեսիփորոսի տանը, որ շատ անգամ
հանգստացրեց ինձ, և իմ կապանքն ամօթ չ'հա-
17 մարեց. Այլ երբոր Հռովմումն էր, շատ ջանքով
18 որոնեց ինձ և գտաւ։ Տէրը տայ Նորան որ ողոր-
մութիւն գտնէ Տէրից այն օրումն. և թէ որքան
ծառայութիւն արաւ ինձ Եփեսոսումը որ դու
[illegible] լաւ գիտես։

ԳԼ. Բ

1 Արդ դու, իմ որդեակ, զօրացիր այն շնորհքովը

2 որ Քրիստոս Յիսուսումն է։ Եւ այն բաները որ ին-
ձանից լսեցիր շատ վկաներով, յանձնիր հաւատա-
րիմ մարդկանց որ կարող լինեն ուրիշներին սովո-
3 րեցնել։ Իսկ դու նեղութիւնները կրիր ինչպէս
4 Քրիստոս Յիսուսի բարի զինուոր. Ոչ մի զինուորու-
թիւն անող այս աշխարհքի գործերովը չէ զբաղ-
5 վում, որպէս զի զօրապետին հաճոյ լինի։ Եւ եթէ
մէկը մրցէ էլ՝ պսակ չի ստանալ եթէ օրինաւորա-
6 պէս չ'մրցէ։ Աշխատող հողագործն առաջ պէտք է
7 պտղից վայելէ։ Իմացիր ինչ որ ասում եմ. Տէրը
8 քեզ իմաստութիւն տայ ամեն բանի մէջ։ Յիշիր
Յիսուս Քրիստոսին մեռելների միջից յարութիւն
առածին, որ Դաւիթի սերունդից է, իմ աւետա-
9 րանի համեմատ, Որի համար չարչարվում եմ մին-
չև կապանքի մէջ լինել չարագործի պէս. բայց Ա-
10 ստուծոյ խօսքը կապուած չէ։ Վասն որոյ ամեն բա-
նի համբերում եմ ընտրուածների համար. որ նո-
րանք էլ հասնեն այն փրկութեան, որ Քրիստոս
11 Յիսուսումն է յաւիտենական փառքի հետ։ Ճշմա-
րիտ է այս խօսքը, որ եթէ հետը մեռանք՝ հետն էլ
12 կ'ապրենք։ Եթէ համբերենք, հետն էլ կ'թագա-
ւորենք, և եթէ ուրանանք, Նա էլ կ'ուրանայ
13 մեզ։ Եւ եթէ չ'հաւատանք, Նա հաւատարիմ կը
14 մնայ, իր անձը չէ կարող ուրանալ։ Այս բանը
յիշեցրու Տիրոջ առաջին վկայութիւն դնելով, որ
խօսքերով կռիւ չ'անեն, որ ոչինչի պիտանի չէ և
15 լսողներին է միայն կործանում։ Ջանք արա որ քո
անձն ընտիր կանգնեցնես Աստուծոյ առաջին [illegible]
մի մշակ առանց ամօթի, որ ճշմարտութեան խօսքն
16 ուղիղ մատակարարես։ Բայց պիղծ ունայնախօսու-
թիւնից ետ քաշուիր. որովհետև աւելի առաջ
17 կ'գնան ամբարշտութեան մէջ։ Եւ նորանց խօսքե-
րը քաղցկեղի պէս ճարակում է. որոնցից են Հի-

18 մենոսը և Փիլետոսը, Որոնք ճշմարտութիւնից մո-
լորել են, ասելով թէ [illegible] յարութիւնն ար-
դէն եղած է. և կործանում են ոմանց հաւատքը.
19 Բայց Աստուծոյ հաստատ հիմքը կանգնած է և
այս կնիքն ունի, Թէ Տէրը ճանաչում է նորանց որ
իրն են. և Թէ ետ կենայ անիրաւութիւնից այն ա-
20 մենն որ Քրիստոսի անունն կանչում է: Բայց մի
մեծ տան մէջ ոչ միայն ոսկեղէն և արծաթեղէն
անօթներ կան. այլ փայտէ և հողէ էլ. կան որ
պատիւի համար են, և կան որ անարգութեան հա-
21 մար են: Եթէ մէկը իր անձը մաքրէ այդպիսինե-
րից, նա պատուական անօթ կ'լինի՝ սրբուած և իր
Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար
22 պատրաստուած: Երիտասարդական ցանկութիւն-
ներից փախիր. այլ հետևիր արդարութեան, հա-
ւատքի, սէրի, խաղաղութեան, Տիրոջ անունը
23 սուրբ սրտանց իրանց վերայ կանչողների հետ: Բայց
յիմար և անկիրթ վիճաբանութիւններից ետ քաշ-
24 ուիր. իմանալով որ կռիւներ են ծնում: Բայց Տի-
րոջ ծառային պէտք չէ կռիւ անել, այլ ամե-
նի հետ հեզահոգի լինել, սովորեցնող, ոխ չը
25 պահող, հակառակողներին հանդարտութիւնով
խրատել. Թերևս Աստուած նորանց ապաշխա-
րութիւն տայ ճշմարտութիւնն իմանալու համար,
26 Եւ սատանայի որոգայթիցն զգաստանալու, որից
նորանք որսացուել են նորա կամքին ծառայելու
համար:

ԳԼ. Գ

1 Սա գիտացիր, որ յետի օրերումը չար ժամանակ-
2 ներ կ'գան: Որովհետև մարդիկ կ'լինին ինքնասէր,
արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ,

3 ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ, Ան-
գութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դա-
4 ժան, անբարեսէր, Մատնիչ, յանդուգն, գոռոզ,
5 աւելի ցանկասէր քան թէ աստուածասէր: Որ
աստուածպաշտութեան կերպարանքն ունին, բայց
նորա զօրութիւնն ուրացած են. Նորանցից էլ ետ
6 քաշուիր: Որովհետև սորանցից են որ տունէ տուն
են մտնում, և գերի անում մեղքերով բեռնա-
ւորուած տկարամիտ 'կնիկներին, որ կերպ կերպ
7 ցանկութիւններով վարուած են. Որ ամեն ժամա-
նակ սովորում են, և երբէք դէպի ճշմարտութեան
8 գիտութիւնը չեն կարողանում գալ: Այլ ինչպէս
որ Յանէսը և Յամբրէսը Մովսէսին հակառակ կե-
ցան, այնպէս էլ սորանք են հակառակ կենում
ճշմարտութեանը, մարդիկ՝ մտքով ապականուած,
9 անպիտան՝ հաւատքի համար: Բայց աւելի չեն յա-
ռաջանալ. որ սորանց անմտութիւնն ամենին յայտ-
10 նի կ'լինի. ինչպէս նորանցն էլ եղաւ: Բայց դու
հետևեցիր իմ վարդապետութեանը, վարմունքին,
գիտաւորութեանը, հաւատքին, երկայնմտութեա-
11 նը, սէրին, համբերութեանը, Հալածմունքներին,
չարչարանքներին. ինչպէս որ եղան ինձ Անտիոքու-
մը և Իկոնիոնումը և Լիւստրայումը. ինչպիսի հա-
լածանքների համբերեցի. և ամենիցն ինձ ազատեց
12 Տէրը: Եւ ամենը որ կամենում են աստուածպաշ-
տութեամբ ապրել Քրիստոս Յիսուսումը, հալա-
13 ծանք պիտի կրեն. Բայց չար և խաբեբայ մարդիկն
յառաջ կ'գնան չարութեան մէջ, մոլորեցնելով և
14 մոլորելով: Բայց դու հաստատ կաց նորանցում,
որ սովորեցիր և հաւատացիր. և գիտենալով Թէ
15 ումից սովորեցիր. Եւ որ մանկութիւնիցդ սուրբ
գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն ա-
նել փրկութեան համար այն հաւատքի ձեռովը

16 որ Քրիստոս Յիսուսումն է ։ *Ամեն Գիրք աստուա-
ծաշունչ են և օգտակար՝, վարդապետութեան, և
յանդիմանութեան, և ուղղելու, և արդարութեան
17 խրատելու համար․ Որ Աստուծոյ մարդը կատար-
եալ լինի ամեն բարի գործերի համար պատ-
րաստուած ։

ԳԼ․ Դ

1 Արդ այս վկայութիւնը դնում եմ Աստուծոյ և
Տէր Յիսուս Քրիստոսի առաջին որ դատելու է
կենդանիներին և մեռելներին իր յայտնութիւնու-
2 մը ու թագաւորութիւնումը․ Խօսքը քարոզիր․
վերայ հասիր թէ ժամանակին լինի թէ ժամանա-
կից դուրս, յանդիմանիր, սաստիր, յորդորիր ա-
մեն երկայնմտութիւնով և վարդապետութիւնով ։
3 Որովհետև ժամանակ կ'գայ որ ողջամիտ վարդա-
պետութեանը չեն համբերիլ․ այլ իրանց յատուկ
ցանկութիւններին համեմատ վարդապետներ կ'դի-
զեն իրանց վերայ, իրանց լսելիքներին մարմաջելու
4 պէս ։ Եւ իրանց լսելիքը ճշմարտութիւնիցը ետ կը
5 դարձնեն և առասպելների ետևից կ'մոլորին ։ Բայց
դու արթուն կաց ամեն բանի մէջ նեղութիւններ
կրելով․ աւետարանչի գործը գործիր․ քո պաշտօ-
6 նը կատարիր ։ Որովհետև ես արդէն նուիրվում եմ,
7 և իմ բաժնուելու ժամանակը հասած է ։ Բարի
պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի,
8 հաւատքը պահեցի․ Այսուհետև մնում է ինձ
արդարութեան պսակը, որ Տէրը կ'տայ ինձ այն օ-
րումը՝ արդար դատաւորը․ և ոչ միայն ինձ, այլ և
ամենին, որ սիրեցին Նորա յայտնութիւնը ։

*Կամ՝ Ամեն աստուածաշունչ Գիրք օգտակար են

9 Շտապիր որ շուտով ինձ մօտ գաս․ որովհետև
Դեմասը թողեց ինձ և այս աշխարհքը սիրեց, և
10 գնաց Թեսաղոնիկէ․ Կրեսկեսը Գաղատիա․ Տիտո-
սը՝ Դաղմատիա․ Ղուկասն է միայն ինձ հետ․
11 Մարկոսին առնես հետդ բերես․ որ ինձ ծառայու-
12 թեան համար պէտք է ։ Տիւքիկոսին ուղարկեցի
13 Եփեսոս ։ Վերարկուն, որ Տրովադայումն Կարպոսի
մօտ թողեցի, գալիս՝ բեր, գրքերն էլ, մանաւանդ
14 մագաղաթները ։ Աղեքսանդրոս դարբինն ինձ շատ
չարութիւն արաւ․ Տէրը նորան հատուցում տայ
15 իր գործերի պէս ։ Դու էլ նորանից զգուշացիր․ որ
16 նա շատ հակառակ կեցաւ մեր խօսքերին ։ Ատե-
նում առաջին անգամ պատասխանելիս՝ ոչ ով չը
կանգնեց իմ կողմը, այլ ամենքը ինձ թողեցին․
17 թող չ'համարուի նորանց ։ Իսկ Տէրն ինձ մօտ
կանգնեց, և զօրացրեց ինձ որ ինձանով քարոզու-
թիւնը հաստատուի, և բոլոր հեթանոսները լսեն․
18 և ես ազատուեցայ առիւծի բերանիցը ։ Եւ կ'փըր-
կէ ինձ Տէրն ամեն չար բանից և կ'ազատէ կ'հաս-
ցնէ իր երկնային արքայութեանը․ որին լինի փառք
յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։
19 Բարև տուր Պրիսկէին և Ակիւղային, և Օնեսի-
20 փորի տանը, Երաստոսը մնաց Կորնթոսումը․ և Տրո-
21 փիմոսին հիւանդ թողեցի Մելիտոսումը ։ Շտապիր
որ ձմեռուցն առաջ գաս ։ Բարև է տալիս քեզ Եւ-
բուղոսը, և Պուդէսը և Լինոսը, և Կլաւդիան և
22 բոլոր եղբայրքը ։ Տէր Յիսուս Քրիստոսը քո հոգու
հետ լինի․ շնորհք ձեզ հետ ։ Ամէն ։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս Աստուծոյ ծառայ և Յիսուս Քրիստոսի ա-
ռաքեալ. Աստուծոյ ընտրուածների հաւատքի և
աստուածապաշտական ճշմարտութեան գիտու-
2 թեան համեմատ, յաւիտենական կեանքի յոյսով՝
որ յաւիտենական դարերից առաջ խոստացաւ ան-
3 սուտ Աստուածը. Բայց իր ժամանակին յայտնեց
իր խօսքը քարոզութիւնով, որ ինձ հաւատացուե-
ցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամանի համեմատ.
4 Տիտոս՝ սիրելի որդուս, մեր հասարակաց հաւատ-
քի համեմատ, շնորհք, ողորմութիւն և խաղա-
ղութիւն լինի Աստուած Հօրից և Տէր Յիսուս
Քրիստոսից՝ մեր Փրկչից։
5 Նորա համար թողի քեզ Կրետէի մէջ որ պա-
կասորդները ուղղես, և ամեն մէկ քաղաքում ե-
րէցներ կարգես, ինչպէս ես քեզ պատուիրեցի.
6 Եթէ մէկն անարատ է, մէկ կնկան մարդ, հաւա-
տացեալ որդիք ունենայ որոնց վերայ անառակու-
7 թեան գանգատ չ'կայ կամ անհնազանդ չեն։ Որով-
հետև եպիսկոպոսը պէտք է անարատ լինի ինչպէս
Աստուծոյ տնտես. ոչ յանդուգն, ոչ բարկացող,
ոչ գինեմոլ, ոչ զարկող, ոչ պիղծ շահ սիրող՝
8 Այլ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ,
9 ժուժկալ. Հաստատ բռնելով վարդապետութեան

հաւատարիմ խօսքը, որ կարող լինի ողջամիտ վար-
դապետութիւնով յորդորել էլ, և հակառակող-
10 ներին յանդիմանել էլ։ Որովհետև շատ անհնա-
զանդներ, զրախօսներ, խաբեբաներ կան, մանա-
11 ւանդ նորանք որ թլփատութիւնից են։ Որոնց
պէտք է պապանձեցնել, որ ամբողջ տները կործա-
նում են, սովորեցնելով այն որ արժան չէ պիղծ
12 շահի պատճառով։ Նորանցից մէկը՝ հէնց իրանց
յատուկ մարգարէ՝ ասեց. Կրետացիք միշտ ստա-
13 խօս են, չար գազաններ, դատարկափոր։ Այս վկա-
յութիւնը ճշմարիտ է. Նորա համար սաստիկ
յանդիմանիր նորանց, որ առողջ լինեն հաւատ-
14 քումը. Եւ մտիկ չ'տան Հրէական առասպելներին
և այն մարդկանց պատուիրանքներին որ ճշմարտու-
15 թիւնից թեքուած են։ Ամեն բան սուրբ է սուր-
բերին. բայց պիղծերին և անհաւատներին ոչ մի
բան սուրբ չէ, այլ պղծուած է նորանց միտքը և
16 խորհուրդները։ Խոստովանում են թէ Աստուծուն
գիտեն, բայց իրանց գործերովն ուրանում են նո-
րան. պիղծ են և անհնազանդ և ամեն բարի գոր-
ծի համար անպիտան։

ԳԼ. Բ

1 Բայց դու խօսիր ինչ որ կ'վայելէ ողջամիտ վար-
2 դապետութեանը։ Ծերերը զգաստ լինեն, ծանրա-
բարոյ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատքով, սիրով,
3 համբերութեամբ. Նոյնպէս էլ պառաւները սրբա-
վայել վարմունքով լինեն, ոչ բանսարկու, ոչ գի-
4 նեմոլ, այլ բարի խրատ տուող. Որ զգաստացնեն
մատաղաշ կանանցը՝ լինել այրասէր և որդեսէր,
5 խոհեմ, մաքուր, անարատ, բարեգործ, իրանց
մարդկանց հնազանդ, որ Աստուծոյ խօսքը չ'հայ-

6 հոյուի։ Նոյնպէս էլ յորդորիր երիտասարդներին
7 որ խոհեմ լինեն. Ամէն կողմանէ քո անձը բարի
գործերի օրինակ դնելով՝ վարդապետութեան մէջ
8 աներծութիւն, ծանրաբարոյութիւն, Ողջամիտ
խօսք անմեղադրելի. որ հակառակորդը ամաչէ,
9 ձեզ վերայ չար ասելու բան չ՚ունենալով։ Ծառա-
ներն իրանց տէրերին հնազանդ լինեն, ամէն բանե-
րի մէջ հաճոյ լինեն, ոչ թէ հակառակ խօսողներ.
10 Բան չ՚թագցնեն, այլ կատարեալ բարի հաւա-
տարմութիւն ցոյց տան. որ մեր փրկիչ Աստուծոյ
վարդապետութիւնը զարդարեն ամէն բաների մէջ։
11 Որովհետև Աստուծոյ շնորհքը երևեցաւ. որ փըր-
12 կարար է, ամէն մարդկանց համար. Որ խրատում
է մեզ, որ ուրանանք ամբարշտութիւնը և աշխար-
հական ցանկութիւնները. Եւ խոհեմութեամբ և
արդարութեամբ և աստուածպաշտութեամբ ապ-
13 րենք այս աշխարհումը. Սպասելով այն երանելի
յոյսին և մեծ Աստուծոյ և մեր փրկիչ Յիսուս
14 Քրիստոսի փառքի յայտնութեանը, Որ իր անձը
մեզ համար տուաւ, որ մեզ ամէն անօրէնութիւ-
նից փրկէ, և սրբէ իրան համար յատուկ ժողո-
15 վուրդ շինէ բարի գործերի նախանձաւոր։ Այդ
բաները խօսիր և յորդորիր և յանդիմանիր բոլոր
սաստկութիւնով. ոչ ով քեզ չ՚անարգէ։

ԳԼ. Գ.

1 Նորանց միտքը բեր, որ իշխանութիւններին և
պետութիւններին հնազանդեն, հպատակեն, և ա-
2 մէն բարի գործերի համար պատրաստ լինին. Ոչ
մէկին չ՚հայհոյեն, կռիւ չ՚անեն, հեզ լինեն, ամէն
3 մարդկանց ամէն քաղցրութիւն ցոյց տան։ Որով-
հետև մենք էլ էինք մի ժամանակ անմիտ, անհը-

նազանդ, մոլորած, ցանկութիւնների և կերպ կերպ
անառակութիւնների ծառայողներ, վարվում էինք
չարութիւնով և նախանձով, ատելի էինք, Եւ իրար
4 ատող։ Բայց երբ որ մեր փրկիչ Աստուծոյ քաղց-
րութիւնը և մարդասիրութիւնը յայտնուեցաւ,
5 Ոչ թէ արդարութեան գործերիցը, որ մենք արինք,
այլ իր ողորմութեան համեմատ փրկեց մեզ միւ-
անգամ ծնուելու աւազանովը, և Սուրբ Հոգու
6 Նորոգութիւնովը, Որ առատութիւնով թափեց
մեզ վերայ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ձեռովը,
7 Որ Նորա շնորհքովը արդարացած ժառանգ լինենք
8 յաւիտենական կեանքի յոյսովը։ Ճշմարիտ է այս
խօսքը և կամենում եմ, որ դու այս բաները հաս-
տատես, որ Աստուծուն հաւատացողները ջանք
անեն բարի գործերի մէջ կենալու, սորանք են
9 բարի և մարդկանց օգտակար։ Բայց յիմար վիճա-
բանութիւններից, ազգահամարներից և հակառա-
կութիւններից, և օրէնքի կռիւներից ետ քաշուիր.
10 որ անօգուտ և ունայն են։ Հերձուածող մարդից,
երբոր առաջին և երկրորդ անգամ խրատել ես,
11 ետ կաց։ Գիտենալով որ այնպիսին ծռուած է և
մեղք է գործում ինքն իր անձը դատապարտելով։
12 Երբոր Արտեմասին կամ Տիւքիկոսին ուղարկեմ
քեզ մօտ, շտապիր որ գաս Նիկոպօլիս ինձ մօտ.
13 որովհետև որոշել եմ ձմեռն այնտեղ մնալ։ Նու-
օրինական Զենասին և Ապողոսին շուտով ճանա-
պարհ դիր. Եւ նայէ որ ոչ մի բան չ՚պակասի նո-
14 րանց։ Բայց մերիններն էլ թող սովորեն բարի գոր-
ծերի մէջ կենալ հարկաւոր պիտոյքների համար,
15 որ անպտուղ չ՚լինին։ Բարև են տալիս քեզ այն
ամէնը որ ինձ հետ են. բարև տուր նորանց որ սի-
րում են մեզ հաւատքով. շնորհքը ձեր ամենի
հետ լինի։ Ամէն։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԹՈՒՂԹԸ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի կապուածը և Տիմոթէոս
եղբայրը, Փիլիմոն սիրելուն և մեր գործակցին,
2 Եւ Ապփիա սիրելուհուն. և Արքիպոսին՝ մեր զին-
3 ուորակցին և քո տան եկեղեցուն. Շնորհք լինի
ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը
և Տէր Յիսուս Քրիստոսիցը ։
4 Գոհանում եմ Աստուածանից՝ ամեն ժամանակ
5 յիշելով քեզ իմ աղօթքներումը. Լսելով քո սէրը
և հաւատքը, որ ունիս դէպի Տէր Յիսուսը, և դէպի
6 ամեն սուրբերը, Որ քո հաւատքի հաղորդակցու-
թիւնը պտղաբեր լինի այն ամեն բարի բաների գի-
տութիւնովը որ ձեզանում է Քրիստոս Յիսուսու-
7 մը ։ Որովհետև շատ ուրախութիւն և մխիթարու-
թիւն ընդունեցինք քո սիրոյ վերայ, որ սուրբերի
սրտերը քեզանով հանգիստ են գտել, եղբայր ։
8 Վասն որոյ՝ թէպէտ շատ համարձակութիւն ու-
նիմ Քրիստոսումը հրամայել քեզ այն որ արժան
9 է, Սակայն սէրի համար աւելի աղաչում եմ, մի
այնպիսի լինելով՝ ինչպէս ծերունի Պօղոսս, և հիմա
10 էլ Յիսուս Քրիստոսի կապուածս ։ Աղաչում եմ
քեզ իմ որդու համար, որին ծնեցի իմ կապանք-
11 ներումը, այսինքն Ոնեսիմոսի համար, Որ մի ժա-
մանակ անպիտան էր քեզ. բայց հիմա քեզ և ինձ

12 պիտանի, նորան ուղարկեցի քեզ մօտ ։ Դու էլ դո-
13 րան որ իմ սրտի կտորն է ընդունիր ։ Ես կամե-
նում էի նորան ինձ մօտ պահել, որ քո փոխանակ
ծառայութիւն անէ ինձ աւետարանի կապանքնե-
14 րումը ։ Բայց առանց քո կամքի չ'կամեցայ ոչինչ
անել, որ քո բարիքը իբրև ստիպմամբ չ'լինի, այլ
15 կամաւ ։ Եւ թերևս հէնց սորա համար մի ժամա-
նակ բաժնուեցաւ քեզանից, որ յաւիտեանս ունե-
16 նաս դորան ։ Այլ ոչ ևս ինչպէս ծառայ, այլ ծա-
ռայից բարձր, ինչպէս սիրելի եղբայր. մանաւանդ
ինձ, բայց ո՞րքան աւելի քեզ, թէ մարմնի և թէ
17 Տիրոջ կողմանէ ։ Եթէ ինձ քո ընկեր ես համարում,
18 ընդունիր դորան ինչպէս ինձ ։ Եւ եթէ քեզ մի
վնաս է արած կամ պարտական է, նա ինձ հաշ-
19 ուիր ։ Ես Պօղոսս իմ ձեռքովը գրեցի, ես կ'վճա-
րեմ. որ չ'ասեմ քեզ թէ դու քո անձն էլ ինձ
20 պարտական ես ։ Այո, եղբայր, թող օգտուիմ
քեզանից Տէրումը. հանգստացրու իմ սիրտը Տէրու-
21 մը ։ Քո հնազանդութեան վերայ համոզուած գրե-
ցի քեզ, գիտենալով որ ասածիցս աւելի կ'անես ։
22 Միանգամայն ինձ համար կենալու տեղ էլ պատ-
րաստիր. որ յոյս ունիմ որ ձեր աղօթքներովը շը-
23 նորհուիմ ձեզ ։ Բարև է տալիս քեզ Եպափրասն
իմ գերութեան ընկերը Քրիստոս Յիսուսումը.
24 Մարկոսը, Արիստարքոսը, Դեմասը, Ղուկասը իմ
25 գործակիցները ։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ-
քը ձեր հոգու հետ լինի ։ Ամէն ։

[ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ] ԹՈՒՂԹԸ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Շատ մասերով և շատ կերպերով Աստուած ա-
ռաջուց խօսելով մեր հայրերի հետ մարգարէների
2 ձեռով, Այս վերջի օրերումը խօսեց մեզ հետ Որ-
դովը, որին ամեն բանի ժառանգ դրաւ, որով *աշ-
3 խարհքն էլ արաւ. Որ նորա փառքի լոյսը լինելով
և նորա էութեան նկարագիրը, որ իր զօրութեան
խօսքովը ամեն բան կրում է՝ մեր մեղքերի սրբու-
թիւնն իրանով անելուց յետոյ նստեց Աստուծոյ
4 մեծութեան աջ կողմը բարձունքներումը, Նա
հրեշտակներիցն այնքան աւելի լաւ եղաւ, որքան
նորանցից աւելի գերազանց անուն ժառանգեց։
5 Որովհետև հրեշտակներից որի՞ն ասեց երբէք, Իմ
որդին ես դու, ես այսօր ծնեցի քեզ. և դարձեալ
Ես նորան Հայր կ'լինիմ, և նա ինձ Որդի կ'լինի։
6 Եւ երբոր անդրանիկին միւսանգամ աշխարհ կը
մտցնէ ասում է. Եւ երկրպագեն նորան Աստու-
7 ծոյ բոլոր հրեշտակները։ Բայց հրեշտակների հա-
մար ասում է. Նա որ իր հրեշտակները հոգիներ
8 արաւ, և իր պաշտօնեաները կրակի բոց։ Բայց Որ-

*կամ՝ յաւիտեաններն

դուն ասում է, Քո աթոռն, ով Աստուած, մինչև
յաւիտեանս յաւիտենից է. քո թագաւորութեան
9 գաւազանը ուղիղ գաւազան է։ Սիրեցիր արդա-
րութիւնը և ատեցիր անօրէնութիւնը. սորա հա-
մար օծեց քեզ, ով Աստուած, քո Աստուածը ու-
րախութեան իւղով աւելի քան թէ քո ընկերնե-
10 րին։ Եւ դու, ով Տէր, ի սկզբանէ երկիրը հիմնե-
11 ցիր. և երկինքները քո ձեռքի գործն են։ Նորանք
կ'կորչեն, բայց դու կ'կենաս կ'մնաս. և ամենը ձոր-
12 ձի պէս կ'մաշուին. Եւ վերարկուի պէս կ'գալարես
նորանց և կ'փոխուին, բայց դու նոյնն ես և քո
13 տարիները չեն պակասիլ։ Եւ հրեշտակներից որի՞ն
ասեց երբէք. Իմ աջ կողմը նստիր, մինչև որ քո
14 թշնամիները քո ոտների պատուանդան դնեմ։ Չէ՞
որ ամենը սպասաւոր հոգիներ են ուղարկուած
սպասաւորութիւն անելու նորանց համար, որ
փրկութիւնը պիտի ժառանգեն։

ԳԼ. Բ

1 Նորա համար պէտք է մեզ առաւել ես ականջ
դնենք այն մեր լսած բաներին, որ մի գուցէ պա-
2 կասուինք։ Որովհետև եթէ հրեշտակների ձեռով
խօսած բանը հաստատ եղաւ, և ամեն յանցանք
և անհնազանդութիւն ընդունեց իր արդար պա-
3 տիժը, Ապա մենք ի՞նչպէս կ'պրծնենք, եթէ ան-
հոգ լինենք այսպիսի մեծ փրկութեան համար, որ
սկիզբն առաւ խօսուելու Տէրիցը, և լսողների ձե-
4 ռովը մեր միջումը հաստատուեցաւ. Աստուած էլ
միասին վկայեց նշաններով և հրաշքներով, և կերպ
կերպ զօրութիւններով, և Սուրբ Հոգու պարգե-
ներովը ինչպէս ինքը կամեցաւ։
5 Որովհետև ոչ թէ հրեշտակներին հնազանդ ա-

րաւ այն հանդերձեալ աշխարհքը, որի մասին խօ-
6 սում ենք։ Մէկը վկայեց մէկ տեղ ասելով.
Մարդն ի՞նչ է որ դու յիշես նորան, կամ մարդի
7 որդին որ այցելես նորան։ Մի քիչ ցած արիր նո-
րան հրեշտակներից, փառքով և պատւով պսա-
կեցիր նորան, և քո ձեռքի գործերի վերայ կանգ-
8 նեցիր նորան։ Ամեն բան հնազանդ արիր նորա ոտ-
ների տակ. որովհետև ամենն որ հնազանդեցրեց
նորան, ոչինչ չ՚թողեց որ հնազանդ չ՚լինի նորան.
բայց հիմա տակաւին չենք տեսնում թէ ամեն բան
9 հնազանդուած է նորան։ Բայց հրեշտակներից մի
քիչ ցածացած տեսնում ենք Յիսուսին մահի չար-
չարանքի համար. փառքով և պատւով պսակ-
ուած, որ Աստուծոյ շնորհքովը ամենի համար մա-
10 հը ճաշակէ։ Որովհետև վայելում էր նորան, որի
համար է ամեն բան և որով ամեն բան, որ շատ
որդիք փառքի մէջ տանելիս՝ նորանց փրկութեան
առաջնորդին չարչարանքով կատարէ։
11 Որովհետև թէ սրբողը, և թէ սրբուողները, ա-
մենը մէկից են. և այդ պատճառով ամօթ չէ հա-
12 մարում նորանց եղբայր կոչել և ասել. Կ՚պատ-
մեմ քո անունը իմ եղբայրներին, *ժողովրդի մէջ
13 կ՚օրհնեմ քեզ. Եւ դարձեալ, Ես յոյս կ՚դը-
նեմ նորա վերայ. և դարձեալ. Ահա ես և իմ
մանուկները որ նորանց Աստուած տուաւ ինձ։
14 Արդ որովհետև մանկունքն արիւնի և մարմնի մաս-
նակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնա-
կից եղաւ նորանց. որ էր մահովը խափանէ մահի
իշխանութիւնն ունեցողին այսինքն սատանային,
15 Եւ ազատէ նորանց որ մահի վախովը իրանց բոլոր
կեանքի մէջ ծառայութեան մէջ բռնուած էին։

*կամ՝ եկեղեցու

16 Որովհետև բնաւ հրեշտակների ձեռք չէ տալիս
17 այլ Աբրահամի սերունդին է ձեռք տալիս։ Ուս-
տի պէտք էր նորան որ բոլորովին եղբայրներին
նմանուի. որ ողորմած լինի, և հաւատարիմ քա-
հանայապետ աստուածակոյս կողմանէ որ ժողովըր-
18 դի մեղքերը քաւէ։ Որովհետև ինքը որ չարչար-
ուեցաւ և փորձուեցաւ, կարող է օգնութիւն
տալ փորձուողներին։

ԳԼ. Գ

1 Ուստի, սուրբ եղբարք, երկնաւոր կոչումին մաս-
նակիցք, մտիկ տուէք մեր դաւանութեան Առաք-
եալին և Քահանայապետին՝ Քրիստոս Յիսուսին,
2 Որ հաւատարիմ է իրան հաստատողին, ինչպէս
3 Մովսէսն էլ նորա բոլոր տան մէջ։ Որովհետև նա
աւելի փառքի արժան եղաւ քան Մովսէսը որքան
որ տունից աւելի պատիւ ունի նորա շինողը.
4 Որովհետև ամեն տուն մէկից է շինվում. բայց նա
5 որ ամենն արաւ՝ Աստուած է։ Եւ Մովսէսը հա-
ւատարիմ է բոլոր տան մէջ ինչպէս ծառայ՝ այն
6 ասուելու բաներին վկայ լինելու համար։ Բայց
Քրիստոսն ինչպէս որդի իր տան վերայ որի տունը
մենք ենք, եթէ յոյսի համարձակութիւնը և պար-
ծանքը մինչև վերջը հաստատ բռնենք։
7 Նորա համար՝ ինչպէս Սուրբ Հոգին ասում է.
8 Այսօր՝ եթէ նորա ձայնը լսէք, Մի խստացնէք ձեր
սրտերը ինչպէս բարկանալու ժամանակումն, փորձու-
9 թեան օրը անապատի մէջ. Ուր որ ձեր հայրերը
փորձեցին ինձ. քննեցին ինձ և տեսան իմ գործե-
10 րը քառասուն տարի։ Նորա համար զզուեցի այն
ազգիցը և ասեցի. Միշտ մոլորվում են սրտով. և
11 նորանք չ՚ճանաչեցին իմ ճանապարհները։ Այնպէս

որ ես երդում արի իմ բարկութիւնումը, թէ պի-
12 տի չ'մտնեն իմ հանգստի մէջ: Նայեցէք, եղբարք,
մի գուցէ ձեզանից մէկումը անհաւատութեան չար
սիրտ լինի որ ապստամբուի կենդանի Աստուածա-
13 նից, Այլ իրար յորդորեցէք ամեն մէկ օր, քանի
որ այսօր է ասւում. որ ձեզանից մէկը չ'խստանայ
14 մեղքի խաբէութիւնովը: Որովհետև մասնակից ե-
ղանք Քրիստոսին, եթէ այն հաստատութեան ս-
15 կիզբը մինչև վերջը պինդ բռնենք, Քանի որ աս-
ւում է. Այսօր եթէ նորա ձայնը լսէք մի խստա-
ցնէք ձեր սրտերն ինչպէս որ բարկացնելու ժամա-
16 նակումը: Որովհետև ոմանք որ լսել էին, բարկա-
ցրին. բայց ոչ թէ Եգիպտոսից Մովսէսի միջոցովը
17 բոլոր դուրս եկածները: Ումի՞ց զզուեցաւ այն քա-
ռասուն տարին. չէ՞ որ մեղք գործողներիցը. որո՞նց
18 ոսկորներն ընկան անապատի մէջը: Եւ որո՞նց եր-
դուում արաւ որ իր հանգստի մէջ չ'պիտի մտնեն,
19 եթէ ոչ անհաւատներին: Եւ տեսնում ենք որ չը
կարողացան մտնել անհաւատութեան պատճառով:

ԳԼ. Դ

1 Ուրեմն վախենանք, մի գուցէ երբեք նորա հան-
գըստի մէջ մտնելու խոստմունքը մնալիս, ձեզանից
2 մէկը պակասած գտնուի: Որովհետև մենք էլ ենք
աւետիքն առել ինչպէս և նորանք. բայց նորանց
օգուտ չ'բերաւ [illegible] քարոզութեան խօսքը, ո-
րովհետև չ'խառնուեցաւ հաւատքի հետ լսողների
3 մէջ: Բայց մենք հաւատացեալքս մտնում ենք այն
հանգստի մէջ, ինչպէս ասեց թէ Ինչպէս երդում
արի իմ բարկութիւնումը, թէ պիտի չ'մտնեն իմ
հանգստի մէջ. թէև գործերն աշխարհքի սկզբիցը
4 կատարուած էին: Որովհետև մէկ տեղ եօթներորդ

օրուայ համար այսպէս է ասում. Եւ Աստուած
եօթներորդ օրումը հանգիստ առաւ իր բոլոր գոր-
5 ծերիցը: Եւ այս տեղ դարձեալ ասում է թէ
6 Պիտի չ'մտնեն իմ հանգստի մէջ: Արդ որովհետև
մնում է որ մի քանիսը նորա մէջ մտնեն, և նո-
րանք որ առաջուց աւետիքն առան, չ'մտան ան-
7 հաւատութեան պատճառով. Կրկին ուրիշ օր է
հաստատում. Այսօր Դաւիթով ասելով այնքան
ժամանակներից յետոյ. ինչպէս որ տուեցաւ Այս-
օր եթէ նորա ձայնը լսէք մի խստացնէք ձեր սրտե-
8 րը: Որովհետև եթէ Յեսուն նորանց հանգստի մէջ
էր տարել, նորանից յետոյ ուրիշ օրի համար էլ
9 չէր խօսիլ: Ուրեմն մնում է մի հանգստանալ Աս-
10 տուծոյ ժողովրդի համար: Որովհետև նորա հան-
գիստը մտնողը, ինքն էլ հանգստացաւ իր գործե-
11 րիցը. ինչպէս Աստուած էլ իրաններիցը: Ուրեմն
ջանանք այն հանգստի մէջ մտնելու. որ մի գուցէ
մէկը նոյն անհաւատութեան օրինակի պէս ընկնի:
12 Որովհետև Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրա-
ւոր և ամեն երկսայրի սուրից աւելի կտրուկ է, և
թափանցում է մինչև շունչի և ոգու և յօդուած-
ների և ծուծի բաժանուելը. և քննող է սրտի
13 մտքերը և խորհուրդները: Եւ չ'կայ մի արարած
աներևոյթ նորա երեսից. բայց ամենն էլ մերկ և
բաց է նորա աչքերի առաջին որի հետ է մեր բանը:
14 Արդ որովհետև մեծ Քահանայապետ ունինք եր-
կինքներումը անցած՝ Աստուծոյ Որդին Յիսուսին,
15 պինդ բռնենք դաւանութիւնը: Որովհետև ոչ թէ
[illegible] քահանայապետ ունինք որ չ'կարողանայ
մեր տկարութիւններին հետ կարեկից լինիլ. այլ
[illegible], որ ամեն բանով փորձուած [illegible] նմա-
16 նութեամբ, [illegible] առանց մեղքի: Ուրեմն համար-
ձակութիւնով մօտենանք շնորհքի աթոռին, որ ո-

ողորմութիւն ընդունենք եւ շնորհք գտնենք պա-
շաճ ժամանակին օգնելու։

Գլ. Ե

1 Որովհետեւ ամէն քահանայապետ մարդկանցից
առնուած մարդկանց համար է դրւում աստուա-
ծակոյս բաներում. որ ընծաներ եւ զոհեր մատու-
2 ցանէ մեղքերի համար։ Որ նա կարող է կարեկից
լինել տգէտներին եւ մոլորուածներին. որ ինքն էլ
3 տկարութիւնով պատուած է։ Եւ այն պատճա-
ռով պէտք է ինչպէս ժողովրդի համար նոյնպէս
էլ իր անձի համար պատարագ մատուցանէ մեղքե-
4 րի համար։ Եւ ոչ թէ մէկն իր անձի համար պա-
տիւը առնում է. այլ նա որ Աստուածանից կան-
5 չուած է, ինչպէս Ահարոնը։ Այսպէս էլ Քրիստո-
սը ոչ թէ ինքն իր անձը փառաւորեց, որ քահա-
նայապետ լինի. այլ նա որ ասեց նորան. Իմ
6 Որդին ես դու, ես այսօր ծնեցի քեզ։ Ինչպէս էլ
մի ուրիշ տեղ ասում է. Դու քահանայ ես յա-
7 ւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս։ Նա որ իր
մարմնի օրերումը աղօթք եւ աղաչանք սաստիկ ա-
ղաղակով եւ արտասուքով մատուցանում էր նո-
րան որ կարող էր ազատել նորան մահից. եւ լսուե-
8 ցաւ իր բարեպաշտութեան համար։ Թէ եւ Որդի
էր, այն չարչարանքներիցը հնազանդութիւնը սո-
9 վորեց։ Եւ երբոր կատարուեցաւ բոլոր իրան հնա-
զանդողների համար յաւիտենական փրկութեան
10 պատճառ եղաւ. Աստուածանից անուանուելով
11 Քահանայապետ Մելքիսեդեկի կարգի պէս։ Որի
համար շատ բան ունինք ասելու, եւ դժուար է
մեկնել, որովհետեւ դուք դանդաղ եղաք լսել-
12 քով։ Որովհետեւ ժամանակին նայելով պիտի վար-

դապետ լինէիք. կրկին կարօտ էք սովորելու թէ
ինչ են Աստուծոյ խօսքերի առաջին նշանագիրնե-
րը, եւ կարօտողներ եղաք կաթի եւ ոչ թէ հաս-
13 տատ կերակուրի։ Որովհետեւ ամէն ով որ կաթ-
նակեր է, անհմուտ է արդարութեան խօսքին, ո-
14 րովհետեւ տղայ է։ Բայց կատարեալների համար է
հաստատ կերակուրը. որոնց զգայարանները վար-
ժողութեամբ կրթուած են բարին եւ չարը զա-
նազանելու։

Գլ. Զ

1 Ուստի Քրիստոսի մասին սկզբնական խօսքը թողե-
լով դէպի կատարեալը գանք. առանց կրկին հիմը
դնելու մեռած գործերից ապաշխարութեան եւ Աս-
2 տուծոյ հաւատալու համար. Եւ մկրտութիւննե-
րի ուսմունքի, եւ ձեռք դնելու, եւ մեռելների յա-
րութեան եւ յաւիտենական դատաստանի համար։
3 Եւ սա անենք, եթէ Աստուած հրաման տայ։
4 Որովհետեւ անկարելի է նորանց որ մէկ անգամ
լուսաւորուած, այն երկնաւոր պարգեւի համն ա-
5 ռած, եւ Սուրբ Հոգուն մասնակից եղած, Եւ Աս-
տուծոյ բարի խօսքի, եւ հանդերձեալ աշխարհքի
6 զօրութիւնները ճաշակած են, Եթէ կործանւում
են, որ նորանք դարձեալ նորոգուին ապաշխարու-
թեան համար. որովհետեւ Աստուծոյ Որդուն իրանց
համար կրկին խաչեցին եւ խայտառակ արին։
7 Վասնզի այն երկիրը, որ իր վերայ շատ անգամ
եկած անձրեւը խմէ, եւ շահաւոր արդիւնք բուսեցնէ
նորանց համար, որոնց ձեռովն էլ մշակւում է, նա
8 Աստուածանից օրհնութիւն կ՚ընդունի։ Բայց այն
որ փուշ եւ տատասկ է բերում, անպիտան է եւ
9 անէծքի մօտ. եւ նորա վերջն այրուիլ է։ Իսկ ձեզ

համար, սիրելիներ, հաստատ յոյս ունինք լաւա-
գոյն և փրկութեան վերաբերեալ բաների մասին։
10 Որովհետև Աստուած անիրաւ չէ որ մոռանայ ձեր
գործքը և այն սէրի աշխատանքը, որ նորա անու-
նի համար ցոյց տուիք, որ ծառայում էիք սուր-
բերին և ծառայում էք։
11 Եւ փափաքում ենք որ ձեզանից ամէն մէկը նոյն
ջանքը ցոյց տայ, որ յոյսը հաստատ մնայ մինչև
12 վերջը։ Որ հիւանդամիտ չ'լինիք. այլ նմանող լի-
նիք հաւատքով և երկայնմտութիւնով խոստ-
13 մունքները ժառանգողներին։ Որովհետև երբոր Աս-
տուած խոստմունքը տուաւ Աբրահամին, այն
պատճառով որ ուրիշ աւելի մեծը չ'ունէր՝ որ նո-
14 րանով երդում անէր, Իր անձովն երդում արաւ
և ասեց. Այո, օրհնելով կ'օրհնեմ քեզ, և շա-
15 տացնելով կ'շատացնեմ քեզ։ Եւ այսպէս երկայ-
16 նամիտ լինելով, հասաւ խոստմունքին։ Իրաւի
մարդիկ աւելի մեծովն են երդում անում, և նո-
րանց բոլոր հակառակութեան վճիռը բանը հաստա-
17 տելու համար՝ երդումն է։ Որով Աստուած առա-
ւել ևս կամենալով խոստմունքի ժառանգողներին
ցոյց տալ իր խորհրդի անփոփոխ լինելը, երդումը
18 մէջ բերաւ. Որ երկու անփոփոխելի բանով, որոն-
ցով անկարելի է որ Աստուած սուտ խօսի, հաս-
տատուն մխիթարութիւն ունենանք, մենք որ ա-
պաւինեցանք մեր առջևը դրած յոյսը բռնելու.
19 Որ հաստատ և անշարժ խարիսխի պէս ունինք մեր
անձի համար. որ և մտնում է վարագուրի ներսի
20 կողմն էլ, Ուր որ մեզ համար Առաջնորդ մտաւ
Յիսուսը, Մելքիսեդեկի կարգի պէս յաւիտենա-
կան քահանայապետ եղած։

ԳԼ. Է

1 Որովհետև այս Մելքիսեդեկը Սաղէմի թագաւոր
էր. բարձրեալ Աստուծոյ քահանայ. որ դիմաւո-
րեց Աբրահամին, երբոր նա թագաւորների կոտո-
2 րելուցն ետ էր դառնում և օրհնեց նորան՝ Որին
Աբրահամ ամէն բաներից տասանորդ էլ տուաւ.
Նա առաջ թարգմանվում է արդարութեան թա-
գաւոր, և յետոյ Սաղէմի թագաւոր, որ է խաղա-
3 ղութեան թագաւոր. Անհայր, անմայր, առանց
ազգահամարի. որ ոչ օրերի սկիզբն ունի, և ոչ
կեանքի վերջ. այլ Աստուծոյ Որդու նման եղած
կենում մնում է քահանայ մշտնջենաւոր։
4 Հիմա տեսէք թէ քանի մեծ էր սա, որին Աբ-
րահամ նահապետն էլ տասանորդ տուաւ այն ա-
5 ւարիցը։ Եւ Ղևիի որդիներիցը նորանք, որ ընդու-
նում են քահանայութիւնը, հրաման ունին ժո-
ղովրդիցը տասանորդ առնելու օրէնքի համեմատ,
այսինքն իրանց եղբայրներիցը. թէպէտ և նորանք
6 էլ Աբրահամի երանքիցն են ելած։ Բայց նա, որի
ազգահամարը նորանցից չէր, տասանորդ առաւ
Աբրահամիցը. և օրհնեց նորան որ խոստմունքներն
7 ունէր։ Հիմա առանց որ և է հակառակութեան՝
նուաղը լաւագոյնիցն է օրհնվում։
8 Եւ այստեղ մահկանացու մարդիկ են առնում
տասանորդ. բայց այնտեղ նա, որ վկայուեցաւ
9 թէ կենդանի է։ Եւ կարելի է ասել, թէ Աբրա-
համի պատճառով Ղևին էլ որ տասանորդ է առ-
10 նում, տասանորդ տուաւ։ Որովհետև նա տակա-
ւին իր հօր երանքումն էր, երբոր Մելքիսեդեկը
նորան դիմաւորեց։
11 Ապա ուրեմն եթէ կատարելութիւնը Ղևտացի-

ների քահանայութիւնովն էր, (որովհետև ժողո-
վուրդը նորա վերայ հիմնուելով օրէնքն ընդունեց),
էլ ի՞նչ պէտք կայ, որ Մելքիսեդեկի կարգի պէս
մի ուրիշ քահանայ վեր կենայ և ոչ թէ Ահարոնի
12 կարգի պէս ասուի։ Բայց երբոր քահանայութիւ-
նը փոխվում է, հարկ է որ օրէնքին էլ փոփոխու-
13 թիւն լինի։ Որովհետև նա, որի համար այս բա-
ներն ասվում են, ուրիշ ցեղի էր մասնակից, որից
14 ոչ ոք սեղանին չ'մօտեցաւ։ Վասնզի յայտնի է,
որ մեր Տէրը Յուդայի ցեղիցը ծագեց, որ այն ցեղի
վերայ Մովսէսը ոչ մի բան չ'խօսեց քահանայու-
15 թեան համար։ Եւ —— առաւել ևս յայտնի է,
երբ Մելքիսեդեկի նմանութեան պէս ուրիշ քա-
16 հանայ է վեր կենում, Որ ոչ թէ մարմնաւոր պատ-
ուէրի օրէնքի պէս եղաւ, այլ անվախճան կեանքի
17 զօրութեան պէս։ Ուրեմն վկայում է, թէ Դու
քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս։
18 Վասնզի խափանումն է լինում առաջի պատուի-
րանքին իր տկարութեան և անօգուտ լինելու հա-
19 մար։ (Որովհետև օրէնքն ոչինչ կատարեալ չ'ա-
րաւ) և ներս է մտնում մի աղնուագոյն յոյս, ո-
րով մօտենում ենք Աստուծուն։
20 Եւ որքան որ առանց երդումի չէ. (որովհետև
21 նորանք առանց երդումի են քահանայ եղած. Բայց
սա երդումով նորա ձեռովը որ ասեց նորան. Տէրը
երդուեց արաւ և չի զղջալ, դու քահանայ ես յա-
22 ւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս.) Այնքան ա-
ւելի աղնիւ ուխտի երաշխաւոր եղաւ Յիսուսը։
23 Եւ նորանք շատ քահանաներ են եղել, նորանց
24 միշտ մնալը մահով արգիլուելու պատճառով. Բայց
սա, որովհետև յաւիտեան է կենում, քահանա-
25 յութիւնն ունի անանցանելի. Ուստի և բոլորովին
կարող է փրկել նորանց որ նորանով մօտենում

են Աստուծուն, որովհետև միշտ կենդանի է որ
նորանց համար բարեխօսութիւն անէ։
26 Որովհետև այսպիսի քահանայապետ էր վայելում
մեզ, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներիցը
27 ջոկուած և երկնքիցը վեր բարձրացած. Որին ամեն
օր պէտք չէ ինչպէս ուրիշ քահանայապետներին,
որ առաջ իր մեղքերի համար պատարագներ մա-
տուցանէ և յետոյ ժողովրդի մեղքերի համար. որով-
հետև սա մէկ անգամ կատարեց այդ իր անձը
28 պատարագ մատուցանելով։ Որովհետև օրէնքը
մարդիկ է կանգնեցնում քահանայապետներ, որ
տկարութիւն ունին. բայց երդումի խօսքը որ օրէն-
քիցը յետոյ է Որդուն՝ որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼ. Ը

1 Եւ ասածներիս բովանդակութիւնը սա է. մենք
այնպիսի քահանայապետ ունինք, որ Մեծափառու-
2 թեան աթոռի աջ կողմը նստեց երկնքումը. Պաշ-
տօնեայ սրբութիւններին և ճշմարիտ խորանին,
3 որն որ Տէրը կանգնեցրեց և ոչ թէ մարդ։ Որով-
հետև ամեն քահանայապետ ընծաներ և պատա-
րագներ մատուցանելու համար է կարգվում. ուս-
տի սորան էլ պէտք է որ մի բան ունենայ մատու-
4 ցանելու։ Որովհետև եթէ երկրի վերայ լինէր, քա-
հանայ չէր լինիլ, քանի որ կենում էին դեռ նո-
րանք, որ օրէնքի պէս պատարագ էին մատուցա-
5 նում. Որոնք երկնաւոր բաների օրինակովը և շու-
քովն էին ծառայում, ինչպէս հրաման եղաւ Մով-
սէսին, որ խորանը շինելու էր, Մտիկ տուր, ա-
սում է, որ ամեն բան անես այն օրինակի պէս, որ
6 ցոյց տրուեց քեզ սարումը։ Բայց հիմա Յիսուսն
աւելի աղնիւ պաշտամունքի հասաւ, որքան որ

ինքն աւելի լաւ ուխտի միջնորդ է, որ աւելի ազ-
նիւ խոստմունքների վերայ օրինադրուեցաւ։
7 Որովհետև եթէ այն առաջինն առանց պակա-
սութեան լինէր, էլ երկրորդին համար տեղ չէր
8 որոնուիլ։ Վասնզի նորանց յանդիմանելով ասում
է. Ահա օրեր կ՚գան, ասում է Տէրը, որ ես նոր
ուխտ կ՚կատարեմ Իսրայէլի տան և Յուդայի տան
9 հետ, Ոչ թէ այն ուխտի պէս որ նորանց հայրերի
հետ արի այն օրումն, որ նորանց ձեռիցը բռնեցի
Եգիպտացիների երկրիցը հանելու համար. որով-
հետև նորանք չ՚մնացին իմ ուխտի մէջ, և ես էլ
անփոյթ եղայ նորանց համար, ասում է Տէրն։
10 Որովհետև սա է այն ուխտը, որ կ՚դնեմ Իսրայէլի
տան հետ այս օրերից յետոյ, ասում է Տէրը. ես
կ՚տամ իմ օրէնքները նորանց մտքի մէջ և նորանց
սրտերի վերայ կ՚գրեմ նորանք. և նորանց կ՚լինիմ
11 Աստուած, և նորանք կ՚լինին ինձ ժողովուրդ։ Եւ
նորանց ամեն մէկը չի սովորեցնիլ իր ընկերին, և
ոչ էլ ամեն մէկն իր եղբօրը և ասիլ, Ճանաչիր
Տիրոջը. որովհետև ամենն էլ կ՚ճանաչեն ինձ նո-
12 րանց փոքրներիցը մինչև մեծը։ Որովհետև նորանց
անօրէնութիւնները ներող կ՚լինիմ, և նորանց մեղ-
քերը և նորանց անօրէնութիւններն այլ ևս չեմ
յիշիլ։
13 Նոր ասելով, այն առաջինը հնացրեց. և այն որ
հնանում է և ծերանում, մօտ է ապականութեան։

ԳԼ Թ

1 Իրաւ որ առաջի ուխտն էլ ունէր պաշտամունքի
2 իրաւունքը՝ աշխարհական սրբարանը. Որովհետև
առաջի խորանն այսպէս պատրաստուեցաւ, նորա-
նում էր աշտանակը և սեղանը և հացերի նուէրը,

3 սա կոչվում էր սրբութիւն։ Իսկ երկրորդ վարա-
գուրի ետևը մի խորան կար որ Սրբութիւն սրբու-
4 թեանց էր կոչվում. Որ ունէր ոսկէ բուրվառը, և
ուխտի տապանակը ամեն կողմից ոսկով պատած.
որ նորանում կար ոսկէ սափորը մանանայովը, և
Ահարոնի գաւազանը որ ծաղկեց, և ուխտի տախ-
5 տակները։ Եւ նորանից բարձր փառքի քերովբէ-
ները որ հովանի էին անում քաւութիւնի վերայ,
որոնց համար պէտք չէ հիմա մանրամասն ասել։
6 Եւ այս բաներն այսպէս պատրաստուած լինե-
լով, քահանաներն ամեն ժամանակ մտնում էին
առաջին խորանը պաշտամունքները կատարելու։
7 Բայց երկրորդի մէջ մտնում էր քահանայապետը
տարին մէկ անգամ, և ոչ առանց արիւնի, որ
մատուցանում էր իրան համար և ժողովրդի *ախալ-
8 մունքների համար։ Սուրբ Հոգին նորանով ցոյց էր
տալիս, որ դեռ սրբութիւնների ճանապարհը
յայտնուած չէր, քանի որ առաջի խորանը դեռ
9 հաստատ կանգնած էր, Որ օրինակ էր այն յառա-
ջիկայ ժամանակի համար, որ նորանում ընծաներ
և զոհեր էին մատուցանվում, որ խղճմտանքի հա-
մեմատ չէին կարող կատարեալ անել պաշտօն
10 մատուցանողին, Միայն կերակուրներով և խմելիք-
ներով և կերպ կերպ լուացմունքներով, և մարմնի
արդարութիւններով, մինչև ուղղութեան ժամա-
11 նակը թողուած։ Բայց Քրիստոս որ եկաւ, հան-
դերձեալ բարիքների քահանայապետը, աւելի մեծ
և կատարեալ և անձեռագործ խորանովը, այսինքն
12 այն որ այս արարածներիցը չէ, Եւ ոչ թէ նոխազ-
ների և զուարակների արիւնով, այլ բուն իր ա-
րիւնովը մէկ անգամ մտաւ այն սրբատեղին և յա-

---

*Յուն. տգիտութիւնների

13 ուխտենական փրկութիւն գտաւ ։ Որովհետև եթէ
ցուլերի և նոխազների արիւնը և երինջների մոխիրը
սրսկելով սրբում էր պղծուածներին մարմնաւոր
14 սրբութիւն ստանալու համար, Էլ ո՜րքան աւելի
Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Հոգով իր
անձն անարատ պատարագ մատուցրեց Աստուծուն,
ձեր խղճմտանքը կ'սրբէ այն մեռած գործերից որ
կենդանի Աստուծուն պաշտէք ։
15 Եւ սորա համար Նա Նոր ուխտի միջնորդ է, որ
երբոր մահն եղաւ այն առաջի ուխտի ժամանա-
կումն գործուած յանցանքների քաւութեան հա-
մար, խոստմունքն առնեն յաւիտենական ժառան-
16 գութեան կանչուածները ։ Որովհետև որտեղ որ
կտակ կայ, հարկաւոր է որ կտակարարի մահը
17 մէջ մտնէ. Որովհետև կտակը մեռնելուց յետոյ է
հաստատ. որ նա երբէք զօրութիւն չ'ունենալ
18 քանի որ կտակարարը կենդանի է ։ Ուստի և առա-
19 ջինն էլ առանց արիւնի չ'հաստատուեցաւ ։ Վասն-
զի Մովսէսը երբոր օրէնքի ամեն պատուիրանքները
պատմեց ժողովրդին, ցուլերի և նոխազների արիւնն
առաւ ջրի և կարմիր բրդի և զոպայի հետ, և
բուն այն գրքի և բոլոր ժողովրդի վերայ սրսկեց,
20 Եւ ասեց. Սա այն *ուխտի արիւնն է, որ Աստ-
21 ուած նորան պատուիրեց ձեզ ։ Եւ խորանի և պաշ-
տամունքի բոլոր անօթների վերայ էլ արիւնը նոյն-
22 պէս սրսկեց ։ Եւ համարեա թէ ամեն բան արիւ-
նով է սրբվում օրէնքին համեմատ, և առանց
արիւն թափելու թողութիւն չէ լինում ։
23 Արդ հարկաւոր էր որ երկնքումն եղած բաների
օրինակներն այսպիսի բաներով սրբուին. բայց բուն
երկնաւորները նորանից աւելի ազնիւ պատարագ-

*կամ՝ կտակի

24 ներով ։ Վասնզի ոչ թէ ձեռագործ սրբատեղերը
մտաւ Քրիստոսը որ ճշմարտի օրինակներն էին, այլ
բուն իսկ երկնքի մէջ որ հիմա Աստուծոյ երեսի
25 առաջին երևի մեզ համար ։ Ոչ թէ որպէս զի շատ
անգամ իր անձը պատարագ մատուցանէ, ինչպէս
քահանայապետը, որ ամեն տարի մտնում էր սրբ-
26 բութիւնն օտար արիւնով ։ Ապա թէ
բազմիցս պէտք էր որ աշխարհքի սկզբից յետոյ շատ ան-
գամ չարչարուէր, բայց հիմա ժամանակների վեր-
ջումը մէկ անգամ յայտնուեցաւ, որ մեղքը դէն
27 գցէ իր պատարագովը ։ Եւ ինչպէս մարդկանց հա-
մար սահմանուած է մէկ անգամ մեռնել և նո-
28 րանից յետոյ դատաստանը. Նոյնպէս էլ Քրիստո-
սը մէկ անգամ պատարագուեցաւ շատերի մեղքե-
րը վեր առնելու համար. և երկրորդ անգամն ա-
ռանց մեղքի կ'յայտնուի իրան սպասողներին փրկ-
կութեան համար ։

ԳԼ. Ժ

1 Որովհետև օրէնքը գալու բարիքների շուքն ու-
նենալով, և ոչ թէ այն բաների յատուկ կերպա-
րանքը, ամեն տարի մատուցուած մի և նոյն պա-
տարագներովը չէր կարող կատարեալ անել մատու-
2 ցանողներին ։ Ապա թէ ոչ՝ կ'դադարէին մատուցա-
նելուց, որովհետև պաշտօն մատուցանողներն էլ
մէկ անգամ սրբուած լինելով մեղքի խղճմտանք չէին ունենալ՝
3 ամեն տարի մեղքերի յիշատակ էր լինում ։ Վասնզի անկարելի է
4 որ նոխազների և ցուլերի արիւնը մեղքեր վեր առնէ ։
5 Նորա համար աշխարհք մտնելիս ասում է. Զոհ և պատարագ չ'կամեցար, բայց մի մարմին
6 պատրաստեցիր ինձ համար. Ողջակէզների և մեղ-

7 քի համար պատարագներէ չ'հաճեցիր ։ Այն ժամա-
նակ ասեցի թէ Ահա գալիս եմ, գրքի տոմսումը
գրուած է ինձ համար քո կամքն անելու, ով Ա-
8 ստուած ։ Վերևումն ասելով թէ զոհի և պատա-
րագի և ողջակէզների և մեղքի համար պատարագ-
ներէ չ'կամեցար և չ'հաճեցիր նորանց, որոնք օրէնքի
9 համեմատ մատուցանվում են. Այն ժամանակ ա-
սում է. Ահա գալիս եմ քո կամքն անելու, ով
Աստուած, առաջինը դէն է դցում որ երկրորդը
10 հաստատէ։ Որ այն կամքովը մենք սրբուեցանք մէկ
անգամ Յիսուս Քրիստոսի մարմնի պատարագովը՝
11 Եւ ամեն *քահանայապետ ամեն օր կանգնած
պաշտօն է կատարում. և նոյն պատարագներն է
մատուցանում շատ անգամ, որ երբէք չեն կարող
12 մեղքեր վեր առնել ։ Բայց սա մեղքերի համար մէկ
պատարագ մատուցանելով մշտնջենաւորապէս նըս-
13 տեց Աստուծոյ աջ կողմը ։ Եւ այսուհետև սպա-
սում է մինչև որ իր բոլոր թշնամիներն իր ոտնե-
14 րի պատուանդանը դրուին ։ Որովհետև մէկ պա-
տարագով յաւիտեան կատարեց սրբուողներին ։
15 Բայց Սուրբ Հոգին էլ վկայում է մեզ, այն ա-
16 ռաջուց ասելովը. Թէ Սա է այն ուխտն որ կ'դնեմ
նորանց հետ այն օրերից յետոյ, ասում է Տէրը՝
կ'տամ իմ օրէնքները նորանց սրտերի մէջ, և նո-
17 րանց խորհուրդների վերայ կ'գրեմ նորանց ։ Եւ-
ապա ասում է. Նորանց մեղքերը և նորանց անօրէ-
18 նութիւնները էլ չեմ յիշիլ ։ Բայց որ տեղ որ սո-
րանց թողութիւնը կայ, այնտեղ էլ մեղքի հա-
մար պատարագ պէտք չէ ։
19 Արդ, եղբարք, որովհետև համարձակութիւն
20 ունինք սրբարանը մտնելու Յիսուսի արիւնովը, Որն

*Ոմանք՝ քահանայ

որ նորոգեց մեզ համար նոր և կենդանի ճանա-
պարհ վարագուրի միջովը, այսինքն իր մարմնովը,
21 Եւ մի մեծ քահանայ՝ Աստուծոյ տան վերայ.
22 Ապա թող մօտենանք նորան ճշմարիտ սրտով, հա-
ւատքի լրութեամբ, Եր սրտերը մաքրուած չար
խղճմտանքից, և մեր մարմինը լուացուած սուրբ
23 ջրով. Պինդ բռնենք յոյսի դաւանութիւնն՝ անսայ-
24 թաք. որ հաւատարիմ է խոստացողը։ Եւ զգուշա-
նանք իրար համար՝ դէպի սէր և բարի գործեր
25 գրգռելով. Եւ չ'թողենք մեր իրար հետ ժողով-
ուելը, ինչպէս ոմանց սովորութիւն է. բայց իրար
յորդորենք, և այնքան աւելի՝ որքան տեսնում
էք որ օրը մօտեցած է ։
26 Որովհետև եթէ մենք ճշմարտութեան գիտու-
թիւնն ընդունելուց յետոյ յօժար կամքով մեղք
գործենք, այլ ևս նորանից յետոյ մեղքերի համար
27 զոհ չէ մնում, Այլ դատաստանի ահաւոր սպա-
սելը, և կրակի զայրոյթը որ հակառակողներին կը
28 լափէ ։ Մէկը, որ Մովսէսի օրէնքն անարգում էր,
առանց ողորմութեան երկու կամ երեք վկայի
29 խօսքով մեռնում էր ։ Էլ ո՞րքան աւելի, կարծում
էք, սաստիկ պատժի կ'արժանանայ, Նա որ Ա-
ստուծոյ Որդուն ոտքի տակ կոխեց, և ուխտի ա-
րիւնը պիղծ համարեց որով նա սրբուեցաւ, և
30 շնորհքի Հոգուն նախատեց։ Որովհետև գիտենք
Նորան որ ասեց. Իմն է վրէժխնդրութիւնը, ես հա-
տուցումը կ'տամ, ասում է Տէրը. և դարձեալ,
31 Թէ Տէրը կ'դատէ իր ժողովրդին ։ Սարսափելի բան
է կենդանի Աստուծոյ ձեռքն ընկնիլը ։
32 Արդ յիշեցէք առաջին օրերը, որ դուք լուսա-
ւորուելուց յետոյ շատ չարչարանքների ճիգերին
33 համբերեցիք ։ Երբեմն նախատինքների և նեղու-
թիւնների մէջ խայտառակուեցաք, և երբեմն էլ

այնպիսի վիճակում լինողների հետ մասնակից ե-
34 ղաք։ Որովհետև իմ կապանքների հետ էլ չար-
չարուեցաք, և ձեր ստացուածքների յափշտակու-
թիւնն էլ ուրախութիւնով ընդունեցիք. գիտե-
նալով որ ձեր անձերի համար աւելի լաւ և մնա-
35 յուն ստացուածք ունիք երկնքումը։ Ուրեմն դէն
մի գցէք ձեր վստահութիւնը, որ մեծ վարձքի հա-
36 տուցումն ունի։ Որովհետև համբերութիւն է
պէտք ձեզ, որ Աստուծոյ կամքն անելով խոստ-
37 մունքն ստանաք։ Որովհետև միայն մի քիչ ժամա-
նակ էլ, և նա որ գալու է՝ կ'գայ և չի ուշանալ՝
38 Բայց արդարը հաւատքից կ'ապրի. և եթէ մէկը
39 ետ քաշուի, իմ անձը նորան չի հաւանիլ։ Իսկ
մենք ետ քաշուողներիցը չենք որ կորչենք. այլ հա-
ւատքիցն ենք որ մեր հոգիները փրկուին։

ԳԼ. ԺԱ

1 Հաւատքն էլ յուսացած բաների հաստատութիւ-
2 նը՝ և չ'երևեցող բաների ապացոյցն է։ Որովհետև
նորանով առաջինները վկայութիւն ընդունեցին։
3 Հաւատքով ենք իմանում, որ աշխարհքներն Աս-
տուծոյ խօսքովը հաստատուեցան, որ չ'երևողնե-
րից այս տեսնուողներս եղած են։
4 Հաւատքով Հաբէլը Կայէնից աւելի լաւ պա-
տարագ մատուցրեց Աստուծուն, որով վկայութիւն
ընդունեց թէ արդար է, երբոր Աստուած նորա
պատարագների վերայ վկայութիւն տուաւ. որ նո-
րանով տակաւին հիմա էլ խօսում է թէպէտ և
մեռել է։
5 Հաւատքով Ենովքը փոխուեցաւ որ մահ չ'տես-
նէ. և չէր գտնվում. որովհետև Աստուած փոխեց
նորան. որ իրան փոխուելուցն առաջ վկայուեցաւ

6 որ հաճելի էր Աստուծուն։ Բայց առանց հաւատ-
քի անկարելի է հաճոյ լինել. որովհետև Աստու-
ծուն մօտեցողը պէտք է հաւատայ, թէ նա կայ,
և թէ իրան խնդրողներին վարձահատոյց կ'լինի։
7 Հաւատքով Նոյը պատգամ առնելով դեռ չ'ե-
րևացած բաների համար և երկիւղած լինելով շի-
նեց տապանը իր տան փրկութեան համար, որով
աշխարհքիս դատապարտեց. և ժառանգ եղաւ
հաւատքով լինող արդարութեանը։
8 Հաւատքով Աբրահամը երբոր կանչուեցաւ հնա-
զանդ եղաւ դուրս գնալու այն տեղը, որ ժառան-
գութեան համար ստանալու էր. և դուրս եկաւ
9 գնաց առանց գիտենալու թէ ուր է գնում։ Հա-
ւատքով պանդուխտ եղաւ աւետիքի երկրումն իբր
օտարութիւնում. խորաններում բնակուելով Իսա-
հակի և Յակոբի հետ, որ նոյն խոստմունքի ժա-
10 ռանգակիցներն էին։ Որովհետև սպասում էր այն
հիմունքով հաստատուած քաղաքին, որի ճարտա-
րապետը և արարիչն Աստուած է։
11 Հաւատքով Սառան ինքն էլ սերմն առնելու զօ-
րութիւն ընդունեց. և տարաժամ հասակի մէջ
որդի ծնեց. որովհետև հաւատարիմ համարեց
12 խոստացողին։ Նորա համար և այն մէկիցը, այն էլ
մեռած պրծածիցը՝ շատութեամբ ծնվում էին,
ինչպէս երկնքի աստղերը և ինչպէս անհամար ա-
ւազը ծովի ափի մօտ։
13 Սորանք ամենը մեռան հաւատքի մէջ. առանց
խոստմունքներն ստանալու, այլ հեռուանց տես-
նում էին նորանց և ուրախանում. և բարևում
էին և դաւանում, թէ օտարներ և պանդուխտ-
14 ներ են երկրումը։ Որովհետև այնպիսի բաներ խօ-
սողները յայտնի ցոյց են տալիս, որ մի հայրենիք
15 են որոնում։ Եւ եթէ այն էին յիշում, որից դուրս

եկան, ապաքէն ժամանակ ունէին ետ դառնալու։
16 Բայց հիմա աւելի ազնիւին են ցանկանում, այ-
ինքն երկնաւորին. և նորա համար Աստուած ամօթ
չէ համարում՝ նորանց Աստուածը կոչուելու. ո-
րովհետև մի քաղաք է պատրաստել նորանց համար։
17 Հաւատքով Աբրահամը Իսահակին պատարագ մա-
տուցրեց երբոր փորձուեցաւ. և միածնին մատու-
18 ցանում էր նա որ խոստմունքն ընդունել էր, Որ
ասուեցաւ թէ Իսահակով քեզ զաւակ կ՚կոչուի։
19 Մտածելով թէ Աստուած կարող է մեռելներից
էլ յարուցանել. ուստի օրինակի համար էլ ըն-
դունեց նորան։
20 Հաւատքով Իսահակը Յակոբին և Եսաւին օրհ-
21 նեց հանդերձեալ բաների մասին։ Հաւատքով Յա-
կոբը մեռնելիս Յովսէփի որդկանց ամեն մէկին օրհ-
նեց, և իր գաւազանի ծայրի վերայ երկրպագու-
22 թիւն արաւ։ Հաւատքով Յովսէփը վախճանելիս
յիշեց Իսրայէլի որդկանց դուրս գնալու մասին, և
իր ոսկորների համար հրաման տուաւ։
23 Հաւատքով Մովսէսը երբոր ծնուեցաւ՝ երեք ա-
միս թաքուն պահուեցաւ իր ծնողքի ձեռովը.
վասնզի տեսան թէ մանուկը գեղեցիկ էր, և չ՚վա-
24 խեցին թագաւորի հրամանիցը։ Հաւատքով Մով-
սէսը երբոր մեծացաւ՝ չ՚կամեցաւ փարաւոնի աղ-
25 ջըկայ որդի կոչուիլ։ Աւելի լաւ համարեց Աստու-
ծոյ ժողովրդի հետ չարչարուիլ, քան թէ մի առ
26 ժամանակ մեղքի զուարճութիւնն ունենալ, Աւե-
լի մեծ հարստութիւն համարելով Քրիստոսի նա-
խատինքը Եգիպտացիների հարուստ գանձերից. ո-
րովհետև աչք դրած մտիկ էր տալիս վարձքի հա-
27 տուցմանը։ Հաւատքով թողեց նա Եգիպտոսը չը
վախենալով թագաւորի բարկութիւնիցը. որովհե-
28 տև համբերեց՝ Անտեսանելուն տեսնողի պէս։ Հա-

ւատքով արաւ զատիկը և արիւնի սրսկումը. որ
առաջինեկներին սատակիչը չ՚մօտենայ նորանց։
29 Հաւատքով անցան Կարմիր ծովը ինչպէս ցա-
մաքով. որի փորձն Եգիպտացիներն անելիս խեղ-
դուեցան։
30 Հաւատքով Երիքովի պարիսպները վայր ընկան,
երբոր եօթն օր նորա շուրջը պտտեցին։
31 Հաւատքով Ռախաբ պոռնիկը չ՚կորաւ անհա-
ւատների հետ, որ լրտեսներին ընդունել էր խա-
ղաղութիւնով։
32 Եւ էլ ինչ ասեմ. որ ժամանակս բաւական չէ
որ պատմեմ Գեդէօնի, Բարակի, Սամփսոնի, Յեփ-
թայէի, Դաւիթի և Սամուէլի և ուրիշ մարգարէ-
33 ների համար, Որոնք հաւատքով թագաւորու-
թիւնների յաղթեցին, արդարութիւն գործեցին,
խոստմունքներ առացան, առիւծների բերաններ
34 խցկեցին. Կրակի զօրութիւն անցրին. սրի բերանից
պրծան. տկարութիւնից զօրացան. պատերազմի
մէջ զօրաւոր եղան. օտարների բանակներն փախ-
35 ցրին. Կանայք իրանց մեռելներն ընդունեցին յա-
րութիւնից. ուրիշներն էլ խիստ չարչարուեցան
ազատութիւնը չ՚ընդունելով, որ լաւագոյն յարու-
36 թեան հասնեն. Միւսներն էլ նախատինքների և
ծեծերի, կապանքների և բանտի փորձը առան.
37 Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձանքի մէջ ըն-
կան, սրով սպանուած մեռան. ոչխարի մորթերով
և այծի կաշիներով ման եկան. կարօտութիւն քա-
38 շելով, նեղուած, չարչարուած. Որ աշխարհքը նո-
րանց արժանի չէր. անապատներում մոլորուեցան
և սարերում և այրերում և երկրի խոռոչնե-
րում։
39 Եւ սորանք ամենը հաւատքով վկայութիւն ա-
40 ռան, բայց խոստմունքը չ՚ընդունեցին. Որովհետև

Աստուած մեզ համար աւելի լաւ բան նախա-
պատրաստեց, որ նրանք առանց մեզ չկատար-
ւեին։

ԳԼ. ԺԲ

1 Ուստի մենք էլ որ վկաների այսքան *բազմութիւն
ունենք մեզ շրջապատած, դէն գցենք ամեն ծան-
րութիւն, և դիւրաւ պաշարող մեղքը. և
համբերութեամբ վազենք մեր առաջին դրած աս-
2 պարէզի ընթացքը. Մտիկ տանք հաւատքի գլխա-
ւորին և կատարողին՝ Յիսուսին, որ իր առաջին
դրուած ուրախութեան փոխանակ խաչը յանձն ա-
ռաւ, և ամօթն արհամարհելով՝ Աստուծոյ աթո-
ռի աջ կողմը նստեց։
3 Ուրեմն մտածեցէք Նորա վերայ, որ իրան դէմ
եղած այսպիսի հակառակութիւն քաշեց մեղաւոր-
ներից, որ դուք ձեր անձերովը չյոգնիք թուլա-
4 ցած։ Տակաւին մինչև արիւն թափելու չափ պատե-
5 րազմելով հակառակ չէք կացած մեղքին, Եւ
մոռացաք այն մխիթարութիւնն որ ձեզ հետ ինչ-
պէս որդիների հետ խօսում է. Իմ որդեակ, մի
անարգիր Տիրոջ խրատը. և ոչ էլ վհատուիր, Նո-
6 րանից յանդիմանուած ժամանակդ։ Որովհետև Տէ-
րը իրան սիրածին խրատում է. նա ծեծում է ա-
7 մեն որդի որ ընդունում է։ Եթէ խրատին համ-
բերէք, Աստուած ձեզ հետ ինչպէս որդկանց հետ
կը վարուի. որովհետև ո՞ր որդին է որ հայրը նորան
8 չէ խրատում, Բայց եթէ առանց խրատի էք, որին
ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ էք և ոչ
9 որդիք։ Նաև մենք մեր մարմնաւոր հայրերը խրա-

*Յուն. ամպ

տող ունենալով նորանցից ամաչում էինք. չէ՞ որ
առաւել ևս պիտի հնազանդինք հոգիների Հօրը, և
10 ապրենք։ Որովհետև սորանք մի քիչ ժամանակ ի-
րանց հաճոյ երևեցածի պէս խրատում էին, բայց
Նա՝ օգտի համար, որ Նորա սրբութիւնն ընդու-
11 նենք։ Եւ ամեն խրատ հէնց նոյն ժամանակին ու-
րախութիւն չէ երևում, այլ տրտմութիւն. բայց
յետոյ նորանով վարժուածներին արդար խաղա-
ղութեան պտուղ է վճարում։
12 Նորա համար հաստատեցէք թուլացած ձեռնե-
13 րը, և տկարացած ծունկերը, Եւ ձեր ոտների հա-
մար ուղիղ ճանապարհներ շինեցէք, որ կաղը չը
14 գլորուի, այլ մանաւանդ բժշկուի։ Հետևեցէք
խաղաղութեան ամենի հետ և սրբութեան, որ ա-
15 ռանց նորան ոչ ով Տիրոջը չի տեսնիլ. Զգուշ կա-
ցէք, որ մէկը յետ մնացող չլինի Աստուծոյ շնորհ-
քից. որ մի դառն արմատ վեր չբուսնէ և նեղու-
16 թիւն տայ, և նորանով շատերը պղծուին։ Որ չլի-
նի մէկը պոռնիկ և պիղծ ինչպէս Եսաւը, որ մի
կերակուրի համար իր անդրանկութիւնը ծախեց։
17 Որովհետև գիտէք որ թէև յետոյ կամեցաւ օրհ-
նութիւնը ժառանգել, բայց մերժուեցաւ. որով-
հետև ապաշխարութեան տեղի չգտաւ, թէև ար-
տասուքով խնդրեց նորան։
18 Որովհետև դուք չէք մօտեցել շօշափելի սարին,
որ կրակով վառուած էր և այն մէգին և խաւա-
19 րին և մրրկին. Եւ փողի հնչումին և խօսքերի ձայ-
նին, որից հրաժարուեցան լսողները, որ խօսքը չը
20 շարունակուի նորանց։ Վասնզի չէին դիմանում
այն հրամանին. Եթէ մի անասուն էլ մօտենայ սա-
21 րին՝ քարկոծուի կամ նետով սպանուի։ Եւ այն-
պէս ահաւոր էր տեսիլքն, որ Մովսէսն ասում էր,
22 Ես զարհուրում եմ և դողում։ Այլ մօտեցել էք

Սիօն սարին, և կենդանի Աստուծոյ քաղաքին,
երկնաւոր Երուսաղէմին, և բիւրաւոր հրեշտակնե-
23 րին, Եւ երկնքումը գրուած անդրանիկների հան-
դէսին և եկեղեցուն, և ամենի դատաւոր Աստու-
24 ծուն, և կատարեալ արդարների հոգիներին. Եւ
Նոր կտակարանի միջնորդ՝ Յիսուսին. և այն արիւնի
սրսկմանը որ աւելի լաւ է խօսում քան թէ Հա-
բելի արիւնը։
25 Զգոյշ կացէք որ չ'մերժէք նորան որ խօսեց. ո-
րովհետև եթէ չ'կարողացան պրծնել երկրիս վե-
րայ պատգամ տուողին մերժողները, որքա՛ն աւե-
լի ապա մենք եթէ երկնքից խօսողին մերժենք։
26 Որի ձայնն այն ժամանակ երկիրը շարժեց. և հիմա
խոստացել է և ասում է թէ Միւսանգամ ես կը
27 շարժեմ, ոչ միայն երկիրը բայց երկինքն էլ։ Բայց
այն Միւսանգամը ցոյց է տալիս որ շարժուող բա-
ներն իբրև եղածներ պիտի փոխուին, որ հաստատ
28 մնան չ'շարժուողները։ Ուստի անշարժ թագաւո-
րութիւն ընդունած լինելով, պինդ բռնենք այն
շնորհքը որով պաշտում ենք հաճութեամբ Ա-
29 ստուծուն, ահով և երկիւղածութեամբ։ Որովհե-
տև մեր Աստուածը փճացնող կրակ է։

ԳԼ. ԺԳ

1 Եղբայրսիրութիւնը հաստատ մնայ. (2) Հիւրասի-
րութիւնը մի մոռանաք. որ նորանով ոմանք ա-
3 ռանց գիտենալու հրեշտակներ ընդունեցին։ Յիշե-
ցէք կապեալներին որպէս թէ դուք էլ նորանց
հետ կապուածներ. և չարչարուողներին որպէս թէ
4 դուք էլ մարմնում լինողներ էք։ Ամուսնութիւ-
նը ամեն կողմանէ պատուական է և անկողինը
սուրբ. բայց շնացողներին և պոռնիկներին Աստուած

5 կ'դատէ։ Վարքն առանց արծաթասիրութեան լինի.
բաւական համարեցէք այն որ ձեռներումդ ունիք.
որովհետև ինքն ասեց, թէ Չեմ թողիլ քեզ և
6 երեսից չեմ գցիլ։ Այնպէս որ համարձակ ենք ա-
սելու. Տէրն է իմ օգնականը, և ես չեմ վախե-
7 նալ, ինչ կ'անէ ինձ մարդը։ Յիշեցէք ձեր առաջ-
նորդներին որ Աստուծոյ բանը խօսեցին ձեզ. նայե-
ցէք նորանց վարմունքի վախճանին և նման եղէք
8 նորանց հաւատքին։ Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ
և այսօր և յաւիտեան։
9 Կերպ կերպ և օտար ուսմունքներով մի տա-
տանուիք. որովհետև լաւ է որ սիրտը շնորհքով
հաստատուի ոչ թէ կերակուրներով, որոնցով
ոչինչ օգուտ չ'ունեցան նորանք որ այնպէս գնա-
10 ցին։ Մենք ունինք սեղան, որից ուտելու իշխանու-
թիւն չ'ունին խորանի պաշտամունքին ծառայողնե-
11 րը. Որովհետև այն անասունների արիւնը, որ քա-
հանայապետի ձեռովը սրբարանի մէջ է տարվում
մեղքի համար, նորանց մարմիններն այրվում են
12 բանակից դուրս։ Նորա համար Յիսուս էլ որպէս-
զի բուն իր արիւնովը ժողովրդին սրբէ, դրան դրսի
13 կողմումը չարչարուեցաւ։ Ուրեմն եկէ՛ք բանակի
դուրսը գնանք նորա մօտ, և նորա նախատինքը
14 մեզ վերայ առնենք։ Որովհետև այստեղ հաստատ
մնացող քաղաք չ'ունինք. այլ հանդերձեալն ենք
15 որոնում։ Ուստի նորա ձեռովն ամեն ժամանակ
Աստուծուն օրհնութեան պատարագ մատուցա-
նենք. այսինքն նորա անունը դաւանող շրթունք-
16 ների պտուղ։ Իսկ բարերարութիւնը և հաղոր-
դակցիլը մի մոռանաք. որ այնպիսի պատարագնե-
17 րին հաւանում է Աստուած։ Ականջ դրէք ձեր
առաջնորդներին, և հնազանդեցէք. որ նորանք
հսկում են ձեր հոգիների համար որպէս թէ հա-

չիւ պիտի տան որ ուրախութիւնով անեն այն և
18 ոչ թէ հառաչելով. որ դա ձեզ օգուտ չէ։ Աղօթք
արէք մեզ համար, որովհետև համոզուած ենք որ
բարի խղճմտանք ունինք կամենալով ամեն բանի
19 մէջ բարւոք վարուիլ։ Եւ առաւել ևս աղաչում
եմ որ այս անէք, որ շուտով դառնամ ձեզ մօտ։
20 Եւ խաղաղութեան Աստուածը որ մեռելներից
վեր հանեց ոչխարների մեծ Հովիւն յաւիտենական
21 ուխտի արիւնովը՝ մեր Տէր Յիսուսին, Հաստատէ
ձեզ ամեն բարի գործի մէջ նորա կամքն անելու,
և գործէ ձեզանում ինչ որ հաճոյ է նորա առա-
ջին Յիսուս Քրիստոսի ձեռովը. որին լինի փառք
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
22 Աղաչում եմ ձեզ, եղբարք, համբերութեամբ
տարէք այս մխիթարութեան խօսքը. և քիչ էլ
23 գրեցի ձեզ։ Իմացէք թէ մեր եղբայր Տիմոթէոսը
արձակուած է. եթէ նա շուտով գայ՝ նորա հետ
24 կ'տեսնեմ ձեզ։ Բարև տուէք ձեր բոլոր առաջ-
նորդներին, և բոլոր սուրբերին, բարև են տալիս
25 ձեզ նորանք որ Իտալիայի կողմերիցն են։ Շնորհքը
ձեր ամենի հետ լինի։ Ամէն։

ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Յակոբոս Աստուծոյ և Տէր Յիսուս Քրիստոսի ծա-
ռայ. տասնևերկու ցեղերին որ ցրուած էք, ողջոյն։
2 Բոլորովին ուրախութիւն համարեցէք, եղբարքս,
3 երբոր կերպ կերպ փորձանքների մէջ ընկնէք։ Գի-
տենալով որ ձեր հաւատքի փորձառութիւնը համ-
4 բերութիւն է գործում։ Իսկ համբերութիւնը թող
կատարեալ գործ ունենայ. որ կատարեալ և ամ-
բողջ լինէք, և ոչ մի բանի պակասութիւն չ'ու-
նենաք։
5 Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակա-
սութիւն ունի, թող խնդրէ Աստուածանից, որ
ամենին տալիս է առատութեամբ և չէ նախա-
6 տում, և կ'տրուի նորան։ Միայն թէ թող հա-
ւատքով խնդրէ առանց երկմտելու, որովհետև
երկմտողը նման է ծովի հողմակոծուած և տա-
7 տանուած ալիքին։ Այն մարդը թող չ'կարծէ, որ
8 Տէրից մի բան կ'առնէ։ Երկմիտ մարդը անհաս-
տատ է իր բոլոր ճանապարհներումը։
9 Թող խոնարհ եղբայրը պարծենայ իր բարձրու-
10 թիւնովը։ Եւ հարուստն իր խոնարհութիւնովը.
11 որովհետև խոտի ծաղկի նման կ'անցնի։ Վասնզի

արեգակը ծագեց իր սաստիկ տաքութիւնովը և
խոտը չորացրեց, և նորա ծաղիկը թափուեցաւ, և
նորա երեսի գեղեցկութիւնը կորաւ. այնպէս էլ
հարուստն իր ճանապարհներումը կ'թառամի։
12 Երանելի է այն մարդը որ համբերում է փոր-
ձութեան. վասնզի եթէ փորձուելով ընտիր գըտ-
նուի կեանքի պսակը կ'առնէ, այն որ Տէրը խոս-
13 տացաւ իրան սիրողներին։ Ոչ ով, որ փորձութեան
մէջ է, չ'ասէ թէ Աստուածանից եմ փորձվում.
որովհետև Աստուած չար բաներով չէ փորձվում.
14 ինքն էլ ոչ մէկին չէ փորձում. Բայց ամեն մէկը
փորձվում է բուն իր ցանկութիւնիցը հրապուր-
15 ուած և խաբուած։ Եւ այնուհետև որ ցանկու-
թիւնը յղացած է՝ ծնվում է մեղք. և մեղքն էլ
16 երբոր կատարվում է՝ մահ կ'ծնի։ Մի խաբուիք,
17 իմ սիրելի եղբարք. Ամեն բարի տուրք, և ամեն
կատարեալ պարգև վերևիցն է իջնում լոյսի Հօրի-
ցը. որի մէջ բնաւ փոփոխում կամ դարձուածքի
18 շուք չ'կայ։ Նա կամենալով ծնեց մեզ ճշմար-
տութեան խօսքով, որ մենք նորա արարածների ե-
19 րախայրի լինենք։ Ուստի, իմ սիրելի եղբայրներ,
թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և
ծանր՝ խօսելու համար, և ծանր՝ բարկանալու հա-
20 մար։ Որովհետև մարդի բարկութիւնն Աստուծոյ
արդարութիւնը չէ գործում։
21 Սորա համար ամեն աղտեղութիւն և չարու-
թեան առաւելութիւնը դէն գցեցէք, և խոնար-
հութիւնով ընդունեցէք ձեր մէջ սերմուած խօս-
քը, որ կարող է ձեր հոգիները ապրեցնել։
22 Բայց խօսքը անող եղէք, և ոչ միայն լսողներ՝
23 ձեր անձերը խաբելով։ Վասնզի եթէ մէկը միայն
խօսքի լսող է և ոչ անող, նա նման է այն մարդին
որ պշուցած մտիկ է տալիս իր բնական երեսին

24 հայելու մէջ. Որովհետև նայելով տեսաւ իրան և
անցաւ, և շուտով մոռացաւ թէ ինչպէս էր։
25 Բայց նա որ ազատութեան կատարեալ օրէնքի մէջ
աչքը գցած մտիկ տուաւ և նորանում կացաւ,
նա մոռացուկ լսող չ'եղաւ այլ գործ կատարող.
26 նա իր անելովը երանելի է։ Եթէ ձեզանից մէկը
կարծում է թէ կրօնասէր է և իր լեզուն չ'սան-
ձահարէ, այլ իր սիրտը խաբէ, այնպիսի մարդի կրօ-
27 նասիրութիւնը զուր է. Սուրբ և անարատ կրօնա-
սիրութիւնն Աստուծոյ և Հօր առաջին սա է, որ-
բերին և այրիներին այցելել նորանց նեղութեան
մէջ, և իր անձն աշխարհքից անարատ պահել։

ԳԼ. Բ

1 Եղբարքս, մի դուցէ աչառութեամբ ունենաք
մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատքը, որ փառքի
2 Տէրն է։ Եթէ մի մարդ մտնէ ձեր ժողովարանը,
որ ոսկի մատանի և պայծառ հագուստ ունենայ,
և մի աղքատ էլ մտնէ այնտեղ կեղտոտ հագուս-
3 տով, Եւ մտիկ տաք նորան որ պայծառ հագուստ
ունի, և ասէք նորան. Դու այստեղ նստիր պատի-
ւով, և աղքատին ասէք թէ դու այդտեղ կանգ-
նիր. կամ թէ Եկ նստիր այստեղ պատուանդանիս
4 մօտ. Եւ խղճմտանք չէ՞ք անում ձեզանում, և
5 չ'եղա՞ք չար խորհուրդների դատաւորներ։ Լսե-
ցէք, սիրելի եղբարքս, չէ՞ որ Աստուած ընտրեց
այս աշխարհքի աղքատներին, որ հարուստ են հա-
ւատքով, և ժառանգներ այն արքայութեանը որ
6 Աստուած խոստացաւ իրան սիրողներին։ Բայց դուք
անպատուեցիք աղքատին. չէ՞ որ հարուստներն են
ձեզ հարստահարում և նորանք են ձեզ դատաս-
7 տան քաշում։ Չէ՞ որ նորանք են հայհոյում այն

8 բարի անունը որ ձեզ վերայ կանչուած է։ Արդ
եթէ թագաւորական օրէնքը կատարէք գրուածին
համեմատ Թէ Սիրիր քո ընկերին քո անձի պէս,
9 լաւ էք անում. Բայց եթէ աչառութիւն էք ա-
նում, մեղք էք անում՝ յանդիմանուած օրէնքից
10 ինչպէս օրինազանցներ։ Վասնզի ով որ բոլոր օ-
րէնքը պահէ և մէկումը մեղանչէ, ամեն օրէնքին
11 եղաւ պարտական։ Որովհետև այն Շնութիւն մի
անիր ասողը ասեց էլ, Մի սպանիր, իսկ եթէ շնու-
թիւն չ՚անես բայց սպանես, եղար օրինազանց։
12 Այնպէս խօսեցէք և այնպէս արէք, որպէս թէ ա-
13 զատութեան օրէնքով էք դատուելու։ Որովհետև
անողորմ դատաստան պիտի լինի ողորմութիւն չ՚ա-
նողի վերայ. և ողորմութիւնը պարծենում է դա-
տաստանի դէմ։

14 Ի՞նչ է օգուտը, եղբարքս, եթէ մէկն ասէ թէ
հաւատք ունի և գործ չ՚ունենայ. մի՞թէ հաւատ-
15 քը կարող է ապրեցնել նորան. Եթէ մի եղբայր
կամ քոյր մերկ լինին կամ օրուայ կերակրին կա-
16 րօտ. Եւ ձեզանից մէկն ասէ նորանց. Գնացէք
խաղաղութեամբ, տաքացէք և կշտացէք. և մարմ-
նի պէտք եղածը չ՚տաք նորանց, օգուտն ի՞նչ կը
17 լինի։ Այսպէս էլ հաւատքը, եթէ գործ չ՚ունե-
18 նայ, ըստ ինքեան մեռած է։ Բայց մէկը կ՚ասէ
թէ Դու հաւատք ունիս, և ես գործ ունիմ. ցոյց
տուր ինձ քո հաւատքը *գործերից, և ես էլ ցոյց
19 կ՚տամ քեզ իմ հաւատքն իմ գործերիցը։ Դու
հաւատում ես թէ մէկ է Աստուած, լաւ ես ա-
նում. դևերն էլ են հաւատում և սարսափում
20 են։ Բայց կամենո՞ւմ ես գիտենալ, ով դատարկ
մարդ, որ հաւատքն առանց գործերի մեռած է։

*Ոմանք՝ առանց գործերի

21 Մեր հայր Աբրահամը չէ՞ որ գործերով արդարա-
ցաւ իր որդի Իսահակին պատարագ անելով սե-
22 ղանի վերայ։ Տեսնո՞ւմ ես որ հաւատքը նորա
գործերի հետ միասին գործեց. և այն գործերովը
23 հաւատքը կատարեալ եղաւ. Եւ կատարուեցաւ
Գրքի խօսքը որ ասում է. Եւ Աբրահամը հաւա-
տաց Աստուծուն և արդարութիւն համարուեցաւ
նորա համար. և Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ։
24 Արդ տեսնո՞ւմ էք որ մարդ գործերով է արդա-
25 րանում, և ոչ միայն հաւատքով։ Նոյնպէս էլ
Ռախաբ պոռնիկը. չէ՞ որ գործերով արդարացաւ,
երբոր լրտեսներին իրան մօտ առաւ և ուրիշ ճա-
26 նապարհով արձակեց։ Որովհետև ինչպէս որ մար-
մինն առանց հոգու մեռած է, այնպէս և հա-
ւատքն առանց գործերի մեռած է։

ԳԼ. Գ

1 Շատ վարդապետներ մի լինիք, եղբարքս. գիտե-
2 նալով որ մեծ դատաստան պիտի ընդունիք։ Որով-
հետև շատ բաներով մեղանչում ենք ամենս։ Եթէ
մէկը խօսքով չէ մեղանչում նա կատարեալ մարդ
է, որ կարող է իր բոլոր մարմինը սանձահարել։
3 Տես, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նորանք
հնազանդեն մեզ, և նորանց բոլոր մարմինը կառա-
4 վարում ենք։ Ահա նաւերն էլ, որ այսչափ մեծ
են և սաստիկ քամիներից քշվում են, մի փոքր
ղեկով կառավարվում են որ կողմն որ ղեկավարի
5 միտքը կամենայ։ Այնպէս էլ լեզուն՝ մի փոքր ան-
դամ է, բայց մեծ մեծ բաներ է խօսում. տես,
6 մի փոքր կրակը ո՞րքան բան է վառում։ Լեզուն
էլ կրակ է՝ այդ անիրաւութեան աշխարհքը. այս-
պէս է լեզուն դրուած մեր անդամների մէջ, որ
նա բոլոր մարմինն ապականում է և կրակով վա-

ռում է մեր գոյութեան անիւը, և ինքը բորբոք-
7 ուած է գեհենից։ Որովհետև գազանների, և թռ-
չունների, և սողունների, և ծովում լինողների բո-
լոր բնութիւնը նուաճուած է և նուաճվում է
8 մարդկային բնութիւնից։ Բայց մարդկանց լեզուն
ոչ ով կարող չէ նուաճել, մի անզուսպ չար է՝ լեց-
9 ուած մահաբեր թոյնով։ Նորանով օրհնում ենք
Աստուած և Հայրը, և նորանով անիծում ենք
մարդկանց, որ Աստուծոյ նմանութիւնովը ստեղ-
10 ծուած են, Միևնոյն բերանից դուրս են գալիս
օրհնութիւն և անէծք. պէտք չէ, եղբարքս, որ
11 սա այսպէս լինի։ Միթէ մի աղբիւր նոյն ակնից
12 քաղցր և դառն ջուր կ՚բղխէ։ Միթէ կարելի է,
եղբարքս, որ թզենին ձիթապտուղ բերէ, կամ
որթը թուզ. այնպէս էլ աղի աղբիւրը չէ կարող
13 քաղցր ջուր հանել։ Ո՞վ է ձեզանում իմաստուն
և խելացի, թող իր բարի վարքովը ցոյց տայ իր
14 գործերը իմաստութեան հեզութիւնովը։ Բայց ե-
թէ դառն նախանձ և հակառակութիւն ունիք
ձեր սրտերումը, մի պարծենաք և սուտ մի ասէք
15 ճշմարտութեան դէմ։ Այս իմաստութիւնը վերե-
ւից իջած չէ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւա-
16 կան։ Որովհետև ուր որ նախանձ և կռիւ կայ,
այնտեղ անկարգութիւն և ամեն չար բաներ կան։
17 Բայց վերին իմաստութիւնը նախ և առաջ սուրբ
է, և յետոյ խաղաղարար, հեզ, հլու, ողորմու-
թիւնով և բարի պտուղներով լիքը, անկողմնա-
18 սէր, անկեղծ։ Եւ արդարութեան պտուղը խա-
ղաղութիւնով է սերմվում նորանց համար որ խա-
ղաղութիւն են անում։

ԳԼ. Դ

1 Ո՞րտեղից են պատերազմունքներ և կռիւներ ձեր

միջումը. չէ՞ որ այստեղից է, այսինքն ցանկութիւն-
ներից որ պատերազմում են ձեր անդամներումը։
2 Ցանկանում էք և չ՚ունիք. սպանում էք և նա-
խանձում էք և չէք կարողանում հասնել. պատե-
րազմում էք՝ կռվում էք, բայց չ՚ունիք, որովհե-
3 տև չէք խնդրում։ Խնդրում էք և չէք առնում,
որովհետև չար կերպով էք խնդրում, որ ձեր ցան-
4 կութիւններումը վատնէք։ Շնացողներ, չ՚գիտէ՞ք
որ աշխարհքիս սէրը թշնամութիւն է Աստուծոյ
դէմ. արդ ով որ կարողանայ աշխարհքի բարեկամ
5 լինել, իր անձն Աստուծոյ թշնամի կ՚անէ։ Կամ
թէ կարծում էք Սուրբ Գիրքը պարա՞պ տեղն է
ասում, Նախանձով փափաքում է հոգին որ
6 բնակուած է մեզանում. Բայց աւելի շնորհք է տա-
լիս. նորա համար ասում է. Աստուած ամբարտա-
ւաններին հակառակ է կենում, բայց խոնարհնե-
7 րին շնորհք է տալիս։ Արդ հնազանդեցէք Աստու-
ծուն, հակառակ կացէք սատանային, և նա կը
8 փախչի ձեզանից։ Մօտեցէք Աստուծուն, և նա կը
մօտենայ ձեզ։ Սրբեցէք ձեր ձեռքերը, ով մեղա-
ւորներ, և ձեր սրտերը մաքրեցէք, ով երկմիտներ։
9 Տառապեցէք և սուգ արէք և լացէք. ձեր ծիծաղը
թող սուգ դառնայ, և ձեր ուրախութիւնը՝ տրտ-
10 մութիւն։ Խոնարհեցէք Տիրոջ առաջին, և նա կը
բարձրացնէ ձեզ։
11 Իրար մի բամբասէք, եղբարք. իր եղբօրը բամ-
բասողը կամ իր եղբօրը դատողը օրէնքն է բամբա-
սում և օրէնքն է դատում. արդ՝ եթէ օրէնքը
դատում ես, էլ օրէնքի կատարող չես այլ դա-
12 տաւոր։ Մէկն է օրէնսդիրը [և դատաւորը] որ
կարող է փրկել և կորցնել. դու ո՞վ ես որ ուրի-
շին դատում ես։
13 Ահա, ով դուք, որ ասում էք, թէ Այսօր և

եգուց գնանք այսինչ քաղաքը, և այնտեղ մի տա-
14 րի լինենք և վաճառենք և շահինք. Դուք որ չ'գի-
15 տէք եգուցվայ օրը. Ի՞նչպիսի բան է ձեր կեանքը.
որ մի շոգի է, որ մի քիչ ժամանակ երևում է և
յետոյ աներևութանում. փոխանակ որ պէտք էր
ասէիք, Եթէ Տէրը կամենայ և ապրենք, այս բա-
16 նը կամ այն բանը կ'անենք։ Բայց հիմա պարծե-
նում էք ձեր ամբարտաւանութիւնումը. ամեն
17 այդպիսի պարծանքը չարութիւն է։ Արդ ով որ
բարին գիտենայ և չ'անէ, նորա համար մեղք է։

ԳԼ. Ե

1 Աղէ հիմա, ով հարուստներ, լացէք և ողբ ա-
րէք ձեր թշուառութիւնների վերայ, որ պիտի գան
2 ձեզ վերայ։ Ձեր հարստութիւնը փտել է, և ձեր
3 հանդերձները ցեցի կերակուր եղան. Ձեր ոսկին և
արծաթը ժանգոտած, նորանց ժանգը վկայ կ'լինի
ձեզ դէմ, և ձեր միսերը կ'ուտէ կրակի նման.
4 դուք գանձեր դիզեցիք յետին օրերումը։ Ահա
այն մշակների վարձքը որ ձեր արտերը հնձել են,
և որ դուք զրկել էք. աղաղակում է, և հնձող-
ների աղաղակները հասան զօրութեանց Տիրոջ ա-
5 կանջը։ Երկրի վերայ փափուկ ապրեցիք և զբօսա-
ցիք. ձեր սրտերը գիրացրիք ինչպէս մորթուելու
6 օրուայ համար։ Դատապարտեցիք, սպանեցիք ար-
դարին, նա հակառակ չէ կենում։
7 Արդ, եղբարքս, երկայնամիտ եղէք մինչև Տիրոջ
գալուստը. ահա մշակը երկայնամիտ եղած սպա-
սում է երկրի պատուական պտղին, մինչև որ ա-
8 ռաջի և վերջի անձրևն առնէ։ Երկայնամիտ եղէք
դուք էլ, հաստատեցէք ձեր սրտերը. որ Տիրոջ
9 գալուստը մօտացել է։ Մի հառաչէք իրար դէմ,

եղբարք, որ չ'դատուիք. ահա Դատաւորը դրան
10 առաջին կանգնած է։ Եղբարք, չարչարանքի և եր-
կայնմտութեան օրինակ առէք մարգարէներին, որ
11 Տիրոջ անունովը խօսեցին։ Ահա համբերողներին
երանի ենք տալիս. Յոբի համբերութիւնը լսել էք,
և Տիրոջ նորա համար արած վախճանը տեսաք. որ
Տէրը բազմագութ է և ողորմած։
12 Եւ ամեն բանից առաջ, եղբարք, երդում մի
անէք ոչ երկնքովը, ոչ երկրովը և ոչ էլ մի ուրիշ
երդումով, բայց թող լինի ձեր այոն այո և ոչը
ոչ. որ դատաստանի տակ չ'ընկնիք։
13 Եթէ ձեզանից մէկը նեղութիւն է քաշում,
թող աղօթք անէ. եթէ մէկն ուրախանում է,
14 թող սաղմոս ասէ։ Եթէ ձեզանից մէկը հիւանդ
է, թող եկեղեցու երէցներին կանչէ, որ նորա
վերայ աղօթք անեն, նորան իւղով օծեն Տիրոջ
15 անունովը. Եւ հաւատքով աղօթքը կ'փրկէ այն
հիւանդին, և Տէրը վեր կ'կացնէ նորան. և եթէ
16 մեղք գործած լինի, կ'թողուի նորան։ Իրար խոս-
տովանեցէք ձեր յանցանքները, և իրար վերայ ա-
ղօթք արէք, որ բժշկուիք, շատ զօրաւոր է ար-
17 դարի աղօթքը ներգործելով։ Եղիան մարդ էր մեզ
պէս՝ կրքի ենթակայ. և ջերմեռանդ աղօթք ա-
րաւ որ անձրև չ'գայ, և անձրև չ'եկաւ երկրի վե-
18 րայ երեք տարի և վեց ամիս։ Եւ դարձեալ ա-
ղօթք արաւ, և երկինքն անձրև տուաւ, և եր-
կիրն իր պտուղը բուսեցրեց։
19 Եղբարք, եթէ ձեզանից մէկը մոլորուի ճշմար-
տութեան ճանապարհիցը, և մէկը դարձնէ նորան,
20 թող գիտենայ, թէ մեղաւորին իր մոլորութեան
ճանապարհիցը դարձնողը, մի հոգի կ'փրկէ մահից
և մեղքերի շատութիւնը կ'ծածկէ։

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Պետրոս Յիսուս Քրիստոսի առաքեալ, ընտրուած
օտարականներին՝ որ ցրուած էք Պոնտոսի, Գաղա-
տիայի և Կապադովկիայի և Ասիայի և Բիւթանիայի
2 Երկրներումը. Հօր Աստուծոյ կանխագիտութեան
պէս, Հոգու սրբութիւնովը, հնազանդութեան և
Յիսուս Քրիստոսի արիւնին սրսկելու համար. շնորհք
և խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ:
3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Հայրը, որ իր առատ ողորմութեան համե-
մատ մեզ վերստին ծնեց դէպի կենդանի յոյսը՝
Յիսուս Քրիստոսի մեռելներից յարութիւն առնե-
4 լովը, Դէպի այն անեղծ և անարատ և անթառամ
ժառանգութիւնը, որ երկնքումը պահուած է ձեզ
5 համար. Որ Աստուծոյ զօրութեամբը պահպանվում
էք հաւատքով դէպի պատրաստուած փրկութիւ-
նը, որ յայտնուելու էր յետին ժամանակումը՝
6 Որ նորանով կ'ուրախանաք, թէև հիմա՝ ինչպէս
որ հարկը պահանջում է՝ մի քիչ տրտմած էք
7 կերպ կերպ փորձանքների մէջ, Որ ձեր հաւատքի
փորձառութիւնն աւելի պատուական գտնուի քան
կորստեան ոսկին, որ կրակով է փորձվում, գովու-
թեան պատուի և փառքի համար Յիսուս Քրիս-

8 տոսի յայտնութիւնումը. Որին չ'տեսած սիրում
էք. որ նորան հաւատացիք թէև հիմա չէք տես-
նում, և ուրախ էք անպատմելի և փառաւոր խըն-
9 դութիւնով, Ձեր հաւատքի վախճանն ընդունե-
10 լով, այսինքն հոգիների փրկութիւնը: Որ այն փըր-
կութեան համար որոնեցին և քննեցին մարգարէ-
ները, որ մարգարէանում էին այն շնորհքի համար
11 որ լինելու էր ձեզանում, քննելով թէ որ՝ և ինչ-
պիսի ժամանակի համար էր գուշակում Քրիստոսի
Հոգին որ նորանցում էր, առաջուց վկայելով
Քրիստոսի չարչարանքները և նորանից յետոյ լինե-
12 լու փառքը: Որոնց յայտնուեցաւ, որ ոչ թէ ի-
րանց անձերին, այլ մեզ էին մատակարարում այն
բաները, որ հիմա պատմուեցան ձեզ նորանց ձե-
ռովն, որ աւետարանեցին ձեզ Սուրբ Հոգովը որ
երկնքից ուղարկուեցաւ. որի մէջ հրեշտակները
ցանկանում են տեսնելով թափանցել:
13 Նորա համար ձեր մտքի մէջքը գօտեպնդած, և
զարթնացած, կատարելապէս յուսացէք այն շնորհ-
քին որ հասնում է ձեզ Յիսուս Քրիստոսի յայտ-
14 նութիւնումը, Հնազանդ որդկանց պէս, չ'նմանե-
լով այն ձեր տգիտութեան ժամանակի առաջի ցան-
15 կութիւններին: Այլ ձեզ կանչող Սուրբին պէս,
16 դուք էլ սուրբ եղէք ձեր բոլոր վարքերումը. Որով-
հետև գրուած է, Սուրբ եղէք, որ ես սուրբ եմ:
17 Եւ եթէ Հայր էք կանչում նորան, որ առանց ա-
չառութեան դատաստան է անում ամեն մէկի
գործին պէս, ապա ձեր պանդխտութեան ժամա-
18 նակը վախով վարուեցէք. Գիտենալով որ ոչ թէ
ապականացու արծաթով կամ ոսկով փրկուեցաք
19 ձեր հայրենաւանդ ունայն վարմունքիցը. Այլ
Քրիստոսի պատուական արիւնովը, ինչպէս մի ան-
20 բիծ և անարատ գառի: Որ առաջուց ճանաչուած

էր աշխարհքի սկզբիցն առաջ, բայց ժամանակնե-
21 րի վերջումն երեւեցաւ ձեզ համար, Ձեզ՝ Նորա-
նով այն Աստուծուն հաւատացողներիդ, որ Նորան
մեռելներից յարուցրեց, եւ փառքը Նորան տուաւ,
որ ձեր հաւատքը եւ յոյսն Աստուծոյ վերայ լինի։
22 Սուրբ Հոգուն միջոցով ձեր անձերը սրբելով ճըշ-
մարտութեան հնազանդութեամբ, անկեղծ եղ-
բայրսիրութեան համար, մաքուր սրտով իրար
23 սերտ սիրեցէք. Վերստին ծնուած լինելով ոչ թէ
ապականութեան սերմից այլ անապական սերմից.
Աստուծոյ կենդանի եւ յաւիտենական խօսքովը։
24 Որովհետեւ ամեն մարմին խոտի պէս է, եւ մարդի
ամեն փառքը խոտի ծաղկի պէս. խոտը չորացաւ
25 եւ նորա ծաղիկը թափուեցաւ։ Իսկ Տէրոջ խօսքը
մնում է յաւիտեան. եւ սա այն խօսքն է, որ ձեզ
աւետարանուեցաւ։

ԳԼ. Բ

1 Արդ՝ դէն գցելով ամեն չարութիւնը եւ ամեն
խաբէութիւնը, եւ կեղծաւորութիւնները, եւ նա-
2 խանձը, եւ ամեն չարախօսութիւնը, Նորածին ե-
րեխաների պէս ցանկացէք այն բանաւոր անխար-
դախ կաթին որ Նորանով աճէք [դէպի փրկու-
3 թիւնը]. Եթէ ճաշակել էք որ Տէրը քաղցր է,
4 Որին մօտեցել էք՝ այն կենդանի Վէմին, որ թէեւ
մարդկանցից անարգուած, բայց Աստուծոյ մօտ
5 ընտրուած եւ պատուական է, Դուք էլ կենդանի
քարերի պէս շինուեցէք հոգեւոր տաճար, սուրբ
քահանայութիւն, որ հոգեւոր պատարագներ մա-
տուցանէք Աստուծոյ ընդունելի՝ Յիսուս Քրիստոսի
6 ձեռովը։ Որովհետեւ գրքումն էլ կայ, Ահա
Սիօնումն անկիւնի գլուխ՝ ընտիր պատուական քար

եմ դնում, եւ Նորան հաւատացողը չի ամաչիլ։
7 Արդ՝ ձեզ հաւատացեալներիդ պատուականու-
թիւնն է. բայց անհաւատներին այն քարը որ շի-
նողներն անարգեցին, նա անկիւնի գլուխ եղաւ։
8 Եւ գլորման քար, եւ գայթակղելու վէմ որ գայ-
թակղում են խօսքին չ՚հաւատալով. որ նորա հա-
9 մար էլ դրուած են։ Բայց դուք ընտիր ազգ էք,
թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ,
սեփհական ժողովուրդ, որ քարոզէք Նորա առա-
քինութիւնները, որ ձեզ խաւարիցը կանչեց իր
10 զարմանալի լոյսի մէջ. Որ դուք ժամանակով ժո-
ղովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդ
էք. որ ողորմուած չէիք, բայց հիմա ողորմուածներ։
11 Սիրելիներ, աղաչում եմ ձեզ ինչպէս պանդուխտ-
ներ եւ օտարականներ, հեռու կացէք մարմնաւոր
ցանկութիւններիցը, որ կռւում են հոգու դէմ։
12 Ձեր վարքը հեթանոսների մէջ բարի պահեցէք, որ
ինչ բանով որ ձեզ չարագործների պէս բամբա-
սում են, ձեր բարի գործերը տեսնելով փառա-
ւորեն Աստուծուն այցելութեան օրումը։
13 Արդ հնազանդեցէք ամեն մարդկային կարգի՝ Տի-
րոջ համար. թէ թագաւորի ինչպէս թէ մի վեր-
14 նագոյնի. Թէ կուսակալների ինչպէս Նորանից ու-
ղարկուածների՝ չարագործները պատժելու եւ բա-
15 րեգործները գովելու համար։ Որովհետեւ Աստու-
ծոյ կամքն այսպէս է, որ բարի գործերով պապան-
16 ձեցնէք անխելք մարդկանց տգիտութիւնը։ Ինչ-
պէս ազատներ, եւ ոչ թէ ազատութիւնն ինչպէս
չարութեան ծածկոց ունեցողներ. այլ ինչպէս Աս-
17 տուծոյ ծառաներ։ Ամենին պատուեցէք. եղբայ-
րութիւնը սիրեցէք. Աստուածանից վախեցէք.
թագաւորին պատուեցէք։
18 Ծառաները հնազանդ լինին տէրերին ամեն վա-

խով, ոչ միայն բարիներին և հեզահոգիներին,
19 բայց ժանտաբարոներին էլ։ Որովհետև աս շնորհք
է եթէ մէկն դէպի Աստուած ունեցած խղճմտան-
քովը նեղութիւնների համբերէ անիրաւ տեղը։
20 Վասնզի ի՞նչ գովասանք է, եթէ մեղանչէք և նորա
համար ծեծուիք, ու համբերէք. այլ եթէ բարիք
գործէք և նորա համար չարչարուիք ու համբերէք,
21 դա է շնորհք Աստուածանից։ Որովհետև դուք
հէնց այդ բանի մէջ կանչուեցաք որ Քրիստոս էլ
չարչարուեցաւ և ձեզ էլ օրինակ թողեց որ նորա
22 հետքերին հետևիք. Որ մեղք չ'գործեց, և նեն-
23 գութիւն չ'գտնուեցաւ նորա բերանումը. Որ նա-
խատուելիս՝ փոխարէնը չէր նախատում. չարչար-
ուելիս՝ չէր սպառնում, բայց դատաստանը յանձ-
24 նում էր արդար դատաւորին. Որ ինքն մեր մեղ-
քերն իր մարմնումը խաչափայտի վերայ բարձրա-
ցրեց. որ մեղքերիցը հեռանալով արդարութեան
համար ապրենք, որ նորա խոցերովը բժշկուեցաք,
25 Որովհետև մոլորուած ոչխարների պէս էիք. բայց
հիմա դարձաք դէպի ձեր հոգիների Հովիւը և
Տեսուչը։

ԳԼ. Գ

1 Նոյնպէս էլ, կանայք, հնազանդ եղէք ձեր մարդ-
կանցը, որ եթէ նորանցից ոմանք էլ անհնազանդ
լինեն խօսքին, կանանց վարքովը առանց խօսքի
2 շահուին, Տեսնելով ձեր երկիւղածութեամբ պար-
3 կեշտ վարքը։ Որ ձեր զարդարանքը չ'լինի դրսևանց
մազերի հիւսելը, և ոսկեղէնների շարելը կամ շքեղ
4 հանդերձներ հագնելը. Այլ սրտի ծածուկ մարդը
հեզ և հանդարտ հոգու անեղծութեամբը. որ
5 դա Աստուծոյ առաջին շատ թանկագին է։ Որով-

հետև այսպէս էլ մի ժամանակով այն սուրբ կա-
նայքը, որ իրանց յոյսն Աստուծոյ վերայ էին դրել,
զարդարում էին իրանց անձերն իրանց մարդկանցը
6 հնազանդելով։ Ինչպէս Սառան հնազանդ էր Աբ-
րահամին, նորան տէր կոչելով, որի որդիներ էք
եղել դուք, որ բարեգործ լինէք և ոչ մի երկիւ-
7 ղից չ'վախենաք։ Նմանապէս, մարդիկ, իմաստու-
թիւնով բնակուեցէք նորանց հետ. ինչպէս տկար
անօթի՝ կանանց պատիւ տալով, իբրև կեանքի
շնորհքի ժառանգակիցներ. որ ձեր աղօթքը չ'խա-
փանուի։
8 Եւ վերջապէս ամենդ համամիտ, կարեկից, եղ-
9 բայրասէր, բարեսիրտ, քաղցրաբարոյ եղէք։ Չարի
փոխարէն չար չ'հատուցանէք, կամ բամբասանքի
փոխարէն բամբասանք. այլ ընդ հակառակն օրհ-
նեցէք, գիտենալով որ իսկ սորա մէջ կանչուե-
10 ցաք, որ օրհնութիւնը ժառանգէք։ Որովհետև ով
որ կամենում է կեանք սիրել և լաւ օրեր տես-
նել, թող իր լեզուն չարութիւնից լուռ պահէ,
11 և իր շրթունքները՝ որ նենգութիւն չ'խօսեն. Զա-
րիցը ետ քաշուի և բարի անէ, խաղաղութիւն ո-
12 րոնէ և նորան հետևէ։ Որովհետև Տիրոջ աչքերն
արդարների վերայ են, և նորա ականջները դէպի
նորանց աղօթքը, Տիրոջ երեսը չարագործների վե-
13 րայ է։ Եւ ո՞վ է նա որ չարչարէ ձեզ, եթէ դուք
14 բարիին հետևող լինիք։ Բայց թէև չարչարուիք էլ
արդարութեան համար, երանելի էք. բայց նորանց
15 երկիւղիցը մի վախենաք և մի շփոթուիք։ Այլ
Տէր Աստուծուն ձեր սրտի մէջ սուրբ պահեցէք.
և միշտ պատրաստ եղէք հեզութեամբ և երկիւ-
ղածութեամբ պատասխան տալու ամենին, որ ձեր
16 մէջ եղած յոյսի համար պատճառ հարցնէ։ Եւ
բարի խղճմտանք ունենանք, որ ինչ բանի համար

որ չարախօսում են ձեզանից ինչպէս չարագործնե-
րից, ամօթով մնան նորանք որ Քրիստոսում ձեր
17 բարի վարքը բամբասում են։ Որովհետև աւելի
լաւ է, եթէ Աստուծոյ կամքը այս կամենում է,
բարի գործելով չարչարուել, քան թէ չար գոր-
18 ծելով։ Որովհետև Քրիստոսն էլ մէկ անգամ մեղ-
քերի համար չարչարուեցաւ, այն Արդարն անար-
դարների վերայ, որ մեզ մօտեցնէ Աստուծուն. որ
թէև մեռաւ մարմնով, բայց կենդանի եղաւ Հո-
19 գով։ Որով գնաց բանտումը եղող հոգիներին էլ
20 քարոզեց։ Որոնք մի ժամանակ ապստամբ էին,
երբոր Աստուծոյ երկայնմտութիւնը համբերում էր
նորանց Նոյի օրերումը տապանը պատրաստուելիս,
որի մէջ քիչ այսինքն ութ հոգի Ջրիցը պրծան.
21 Որի օրինակն այսինքն մկրտութիւնը մեզ էլ հիմա
ապրեցնում է, ոչ թէ մարմնի աղտը դէն գցելով,
այլ բարի խղճմտանքի վկայութիւնը առ Աստ-
22 ուած, Յիսուս Քրիստոսի յարութիւնովը։ Որ գնա-
ցել է երկինքը, և Աստուծոյ աջ կողմն է. հրեշ-
տակներն և իշխանութիւններն և զօրութիւններն
հնազանդելով նորան։

ԳԼ. Դ.

1 Արդ Քրիստոս որ մարմնով մեզ համար չարչար-
ուեցաւ, դուք էլ նոյն մտքովը զինուորուեցէք որ
2 մարմնով չարչարուողը մեղքից դադարեց։ Որ այլ
ևս ոչ թէ մարդկանց ցանկութիւնների պէս, այլ
Աստուծոյ կամքի պէս ապրէք մարմնում մնացած
3 ժամանակը։ Որովհետև բաւական է մեզ որ մեր
կեանքի անցած ժամանակը հեթանոսների կամքը
կատարեցինք, որ վարվում էինք գիճութիւններով,
ցանկութիւններով, գինեմոլութիւններով, անա-

ռակութիւններով, արբեցութիւններով, կամ
4 անօրէն կռապաշտութիւններով. Որ դորա վերայ
զարմանում են, որ դուք նորանց հետ չէք վա-
զում նոյն անկարգ զեղխութեան մէջ, և հայհո-
5 յում են, Որ նորանք պիտի հաշիւ տան նորան,
որ պատրաստ է դատաստան անելու կենդանինե-
6 րին և մեռելներին։ Որովհետև իսկ սորա համար
մեռելներին էլ աւետարանուեցաւ, որ մարդի կող-
մանէ մարմնով դատուին, բայց կենդանի լինեն
Աստուծոյ կողմանէ հոգով։
7 Եւ ամեն բանի վերջը մօտեցել է, ուրեմն պար-
կեշտ կացէք և արթուն եղէք աղօթքներում։
8 Բայց ամենից առաջ սէրը սերտ ունեցէք իրար
հետ, որ սէրը ծածկում է մեղքերի շատութիւնը։
9 Հիւրասէր եղէք իրար հետ առանց տրտնջանքի։
10 Ամեն մէկդ՝ ինչպէս որ շնորհք է ընդունել՝ այն ի-
րար մատակարարեցէք. ինչպէս Աստուծոյ կերպ
11 կերպ շնորհաց լաւ տնտեսներ։ Եթէ մէկը խօսում
է թող ինչպէս Աստուծոյ հրամաններ խօսի. եթէ
մէկը մատակարարում է թող լինի ինչպէս այն զօ-
րութիւնից, որ Աստուած է շնորհում. որ ամեն
բանի մէջ Աստուած փառաւորուի Յիսուս Քրիս-
տոսի ձեռովը. որին լինի փառք և զօրութիւն յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն։
12 Սիրելիներ, օտար բան մի համարէք այն բորբոք-
ուած նեղութիւնը որ ձեզ փորձելու համար լի-
նում է, իբր թէ մի օտար բան է պատահում ձեզ։
13 Այլ ուրախ եղէք իբրև թէ Քրիստոսի չարչարան-
քին մասնակից եղածներ, որ նորա փառքի յայտ-
նութեան ժամանակումն էլ ցնծալով ուրախանաք։
14 Եթէ նախատուիք Քրիստոսի անունի համար, ե-
րանելի էք. որովհետև փառքի և Աստուծոյ Հոգին
հանգչում է ձեզ վերայ, Նորանցից նա հայհոյ-

15 վում է, բայց ձեզանից փառաւորվում։ Ձեզանից
մէկը չ'չարչարուի ինչպէս մարդասպան, կամ գող,
կամ չարագործ, կամ ինչպէս ուրիշի բանին խառ-
16 նուող. Բայց եթէ ինչպէս Քրիստոնեայ չարչարուի,
թող չ'ամաչէ, այլ փառք տայ Աստուծուն այս
17 մասին։ Որովհետեւ ժամանակն է որ դատաստանն
սկսէ Աստուծոյ տանիցը. բայց եթէ առաջ մեզա-
նից, ապա ի՞նչ կ'լինի նորանց վերջը որ Աստուծոյ
18 աւետարանին անհնազանդ են։ Եւ եթէ արդարն
հազիւ է ապրում, ապա ամբարիշտը և մեղաւորը
19 ո՞րտեղ կ'երեւայ։ Սորա համար Աստուծոյ կամքի
պէս չարչարուողներն էլ թող ինչպէս հաւատա-
րիմ Ստեղծողին յանձնեն իրանց հոգիները բարե-
գործութիւնով։

ԳԼ. Ե

1 Ձեր մէջի երէցներին աղաչում եմ երէցընկերս և
Քրիստոսի չարչարանքների վկայ, և այն յայտ-
2 նուելու էլ փառքի մասնակից, Արածեցրէք Ա-
ստուծոյ հօտը որ ձեզ մօտ է, վերակացու լինելով
ոչ թէ ստիպուած, այլ յօժար կամքով, ոչ թէ
պիղծ շահասիրութիւնով՝ այլ յօժարութիւնով.
3 Ոչ թէ ինչպէս վիճակների վերայ տիրապետելով,
4 այլ հօտին օրինակներ լինելով։ Եւ երբոր Հովուա-
պետն կ'երեւի, փառքի անթառամ պսակը կ'ըն-
դունէք։
5 Այնպէս էլ դուք, երիտասարդներ, հնազան-
դեցէք ծերերին, ամենդ իրար հնազանդելով խո-
նարհութիւնը հագէք. որ Աստուած ամբարտա-
ւաններին հակառակ է կենում, բայց խոնարհնե-
6 րին շնորհք է տալիս։ Խոնարհեցէք Աստուծոյ հզօր
ձեռի տակ, որ ձեզ բարձրացնէ ժամանակով։

7 Ձեր բոլոր հոգսը նորա վերայ գցեցէք, որովհետեւ
նա հոգս է անում ձեզ համար։
8 Արթուն եղէք, հսկում արէք. որովհետեւ ձեր
ոսոխ թշնամին՝ սատանան՝ գոռող առիւծի պէս
ման է գալիս և որոնում է թէ որին կուլ տայ։
9 Որին հակառակ կացէք հաւատքով հաստատուած,
գիտենալով որ ձեր եղբայրներն էլ որ աշխարհքիս
մէջ են նոյն չարչարանքներն են քաշում։
10 Եւ ամեն շնորհքի Աստուածը, որ մեզ կանչեց
իր յաւիտենական փառքի մէջ Քրիստոս Յիսու-
սով, ձեզ որ մի քիչ չարչարվում էք, կատար-
11 եալ անէ, հաստատէ, զօրացնէ, հիմնէ. Նորան
լինի փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտե-
12 նից. Ամէն։ Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձե-
ռովս, ինչպէս որ կարծում եմ, կարճառօտ գրե-
ցի, որ յորդորեմ և այս բանի համար վկայեմ, թէ
սա է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որի մէջ դուք
13 կանգնած էք։ Բարև է տալիս ձեզ ձեզ հետ ընտ-
րուած եկեղեցին որ Բաբիլոնումն է. և իմ որդի
14 Մարկոսը։ Իրար բարև տուէք սէրի համբոյրով.
Խաղաղութիւն լինի ձեզ ամենիդ որ Քրիստոս Յի-
սուսումն էք։ Ամէն։

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Շմաւոն Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի ծառայ և ա-
ռաքեալ, ձեզ՝ որ մեզ հետ նոյն պատուական հա-
ւատքին հասաք մեր Աստուծոյ և Փրկիչ Յիսուս
2 Քրիստոսի արդարութիւնովը. Շնորհք և խաղա-
ղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ և մեր
Տէր Յիսուսի գիտութիւնովը:
3 Ինչպէս որ Նորա աստուածային զօրութիւնը շնոր-
հեց մեզ այն ամենը որ կեանքի և աստուածա-
պաշտութեան համար պէտք է Նորա գիտութիւնո-
վը, որ մեզ կանչեց փառքով և առաքինութիւ-
4 նով. Որոնցով ամենամեծ և պատուական խոստ-
մունքներ են տրուած մեզ. որ նորանցով հաղոր-
դակից լինիք աստուածային բնութեանը՝ աշխարհ-
քի մէջ ցանկութիւնից եղած ապականութիւնից
5 հեռու փախչելով: Եւ այն այս բանի համար ամեն
ջանք անելով ձեր *հաւատքովը ներկայացրէք ա-
ռաքինութիւնը, և առաքինութիւնովը գիտու-
6 թիւնը, Եւ գիտութիւնովը ժուժկալութիւնը, և
ժուժկալութիւնովը համբերութիւնը, և համբե-

*կամ՝ հաւատքի վերայ աւելացրէք առաքինութիւ-
նը, և առաքինութեան վերայ գիտութիւնը, և լն:

7 րութիւնովն աստուածպաշտութիւնը, Եւ աստ-
ուածպաշտութիւնովն եղբայրսիրութիւնը, և եղ-
8 բայրսիրութիւնովը սէրը: Որովհետև այս բաները
ձեզանում մնալով և աճելով դատարկ և անպը-
տուղ չեն անիլ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
9 գիտութիւնումը: Բայց նա որ այս բաներն իրան
մօտ չ'ունի, կոյր է և կարճատես, մոռացած լինե-
10 լով իր առաջին մեղքերից սրբուիլը: Սորա համար,
եղբարք, աւելի ջանք արէք որ ձեր կոչումը և ընտ-
րութիւնը հաստատ անէք. որովհետև սորանք ա-
11 նելով երբէք յանցանքի մէջ չէք ընկնիլ: Որովհե-
տև այսպէս առատութիւնով կ'տրուի ձեզ մտնել
մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենա-
կան արքայութիւնը:
12 Ուստի ես զանցառու չեմ լինիլ ձեզ յիշեցնելու
սորանց համար, թէ և գիտէք և հաստատուած էք
13 այս ներկայ ճշմարտութիւնումը: Եւ իրաւունք
եմ համարում, որ քանի որ այս վրանի մէջ եմ
14 զարթնեցնեմ ձեզ յիշեցնելով: Գիտեմ որ շու-
տով պիտի ինձանից հանեմ իմ այս վրանը, ինչ-
պէս մեր Տէր Յիսուս Քրիստոսը յայտնեց ինձ:
15 Բայց ջանք էլ կ'անեմ որ միշտ կարողանաք իմ
աշխարհքից դուրս գալուց յետոյ այս բաները յի-
16 շել: Որովհետև մենք ոչ թէ վարպետութեամբ
հնարուած առասպելների հետևելով ցոյց տուինք
ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը և
գալուստը. այլ ականատես լինելով Նորա մեծա-
17 փառութեանը: Որովհետև Նա Հայր Աստուածա-
նից պատիւ և փառք առաւ, երբոր այն մեծվա-
յելչութեան փառքիցն այնպիսի ձայն եկաւ Նորան
թէ Դա է իմ սիրելի Որդին որին ես հաւանել եմ:
18 Եւ այս ձայնը մենք լսեցինք երկնքիցն եկած, երբ-
19 որ Նորա հետ այն սուրբ սարումն էինք: Եւ մար-

դարէական աւելի հաստատ խօսքն ունինք, որ ե-
թէ նորան մտիկ անէք, լաւ կ՚անէք, ինչպէս մի
ճրագի որ լոյս է տալիս մութ տեղը, մինչև որ ցե-
րեկը լուսանայ և լուսաբերը ծագի ձեր սրտերու-
20 մը։ Բայց առաջ այս գիտացէք, որ Գրքերի ամեն
մարգարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չ՚ունի։
21 Որովհետև երբէք մի մարգարէութիւն չ՚տրուեցաւ
մարդկանց կամքի պէս, բայց Սուրբ Հոգուցը շար-
ժուած խօսեցան Աստուծոյ մարդիկը։

ԳԼ. Բ

1 Եւ սուտ մարգարէներ էլ կային այն ժողովրդի
մէջ, ինչպէս ձեր մէջ էլ պիտի սուտ վարդապետ-
ներ լինեն. որ ներս կ՚մտցնեն կորստական հերձ-
ուածողութիւններ. և ուրանալով այն Տիրոջը որ
իրանց գնեց, իրանց վերայ շուտահաս կորուստ կը
2 բերեն։ Եւ շատ մարդիկ կ՚հետևեն նորանց կո-
րստեանը. որոնց պատճառով ճշմարտութեան
3 ճանապարհը կ՚հայհոյուի։ Եւ ագահութիւնով
իրանց մտքից հնարած խօսքերով ձեզ վաճառաշա-
հութեան կ՚գործածեն, որոնց դատաստանը վա-
ղուց պատրաստուած պարապ չէ, և նորանց կորուս-
տը չէ ննջում։
4 Որովհետև եթէ Աստուած այն հրեշտակներին,
որ մեղանչեցին, չ՚խնայեց, այլ խաւարի կապան-
քովը տարտարոսը գցած դատաստանի համար պա-
5 հել տուաւ. Եւ առաջին աշխարհքին էլ չ՚խնա-
յեց, այլ Նոյին, որ ութերորդն էր, այն արդա-
րութեան քարոզչին՝ պահեց երբոր ամբարիշտների
6 աշխարհքի վերայ ջրհեղեղը ածեց. Եւ Սոդոմացի-
ների և Գոմորացիների քաղաքները մոխիր դարձը-
նելով կործանմամբ դատապարտեց, յետոյ եկող

7 ամբարիշտներին օրինակ դնելով. Եւ փրկեց ար-
դար Ղովտին որ անօրէնների անառակ վարմունք-
8 ներովը ձանձրացել էր։ Որովհետև այն արդարը՝ նո-
րանց մէջ բնակուելով՝ տեսնելովը և լսելովը, օրէ-
ցօր իր արդար հոգին տանջվում էր նորանց անօ-
9 րէն գործերովը. Տէրը գիտէ աստուածապաշտնե-
րին փրկել փորձանքից, և անիրաւներին պահել
դատաստանի օրուայ համար որ տանջուին։
10 Մանաւանդ նորանց որ պղծալից ցանկութիւնով
մարմնի ետևից են գնում. և տէրութիւնը անար-
գում, յանդուգներ, ինքնահաւաններ, որ չեն վա-
11 խենում փառքը հայհոյելով։ Մինչդեռ հրեշտակ-
ներն, որ զօրութիւնով և կարողութիւնով աւելի
մեծ են, հայհոյանքի դատաստանը չեն բերում նո-
12 րանց վերայ Տիրոջ առաջին։ Իսկ սորանք ինչպէս
անբան անասուններ, որ ի բնէ ծնուած են որսի և
ապականութեան համար, հայհոյում են այն բա-
ները որ չ՚գիտեն, իրանց ապականութիւնովը կ՚ա-
13 պականուին։ Անիրաւութեան վարձքն ստանալով,
որ ցերեկուայ փափկութիւնը զուարճութիւն են
համարում, աղտ են և կեղտ, և իրանց խաբե-
բայութիւններովը զուարճանում են, ձեզ հետ
14 միասին ուտել խմելիս։ Աչքեր ունին պոռնկու-
թիւնով լիքը, որ մեղքից չեն դադարում. խա-
բում են անհաստատ անձերին, որ ագահութիւ-
15 նով բռնուած սրտեր ունին, անէծքի որդիք։ Որ
շիտակ ճանապարհը թողած մոլորուեցան, Բէովր-
եան Բաղաամի ճանապարհին հետևելով, որ անի-
16 րաւութեան վարձքը սիրեց. Որ իր անօրէնութեան
յանդիմանութիւնն ստացաւ. անխօս էշը մարդի
ձայնով խօսելով՝ արգիլեց մարգարէի յիմարութիւ-
17 նը։ Սորանք անջուր աղբիւրներ են, մրրկից քըշ-
ուած ամպեր, որոնց համար խաւարի մթութիւնը

18 պահուած է յաւիտեան։ Որովհետև ունայնու-
թեան հպարտ բաներ խօսելով՝ գիճութիւններով
խաբում են մարմնի ցանկութիւններով նորանց, որ
ճշմարտապէս փախել են մոլորութեան մէջ վար-
19 ուողներից։ Նորանց ազատութիւն են խոստանում,
և իրանք ապականութեան ծառաներ են. որովհե-
տև ինչ բանով որ մէկը յաղթուի, նորան էլ ծա-
20 ռան է։ Որովհետև եթէ աշխարհքի պղծութիւն-
ներիցը մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսի գի-
տութիւնովը փախչողները կրկին նորանում շաղախ-
ուած յաղթուեն, նորանց վերջը չար եղաւ քան
21 թէ առաջինը։ Որովհետև լաւ էր նորանց որ չ'ճա-
նաչէին արդարութեան ճանապարհը, քան թէ
ճանաչեցին և յետ քաշուեցան այն սուրբ պատուի-
22 րանքիցը, որ աւանդուեցաւ նորանց։ Եւ նորանց
պատահեց այն ճշմարիտ առակի խօսքը Թէ Շունը
վերադառնում է դէպի իր փսխածը, և լուաց-
ուած խոզը՝ թաւալուելու ցեխի մէջ։

ԳԼ. Գ

1 Սիրելիներ, սա արդէն երկրորդ թուղթն եմ գը-
րում ձեզ, որոնցով ձեր մաքուր միտքը յիշեցնե-
2 լով զարթնեցնեմ, Որ յիշէք սուրբ մարգարէներից
առաջուց ասուած խօսքերը և մեր՝ Տիրոջ և փրկչի
3 առաքեալներիս պատուիրանքները։ Բայց առաջ
այս գիտացէք, որ յետին օրերումը ծաղր անողներ
կ'գան, որ իրանց ցանկութիւնների պէս կ'վարուին։
4 Եւ կ'ասեն. Ո՞ւր է նորա գալստեան խոստումը,
վասնզի այնուհետև որ հայրերը վախճանեցան ա-
մեն բան նոյնպէս կենում մնում է աշխարհքի
5 ստեղծագործութիւնիցն հետէ. Վասնզի նորանք
ուզում են այս բանը մոռանալ, թէ երկինքները

վաղուց էին և երկիրս ջրից և ջրով հաստատուած
6 է Աստուծոյ խօսքովը. Նորա համար այն հին աշ-
7 խարհքը ջրհեղեղով ապականուած կորաւ։ Եւ
այժմեան երկինքը և երկիրս նոյն խօսքովը պահ-
պանուած պահվում են կրակի համար դատաստա-
նի և ամբարիշտ մարդկանց կորստեան օրումը։
8 Բայց այս մէկն էլ ձեզանից ծածուկ չ'լինի, սիրե-
լիներ, որ Տիրոջ մօտ մէկ օրը հազար տարուայ պէս
9 է, և հազար տարին ինչպէս մէկ օր։ Տէրը չի ու-
շացնիլ խոստումը, ինչպէս ոմանք ուշացնել են
կարծում, բայց երկայնամիտ է լինում մեզ վե-
րայ, որովհետև չէ կամենում որ կորչողներ լի-
նեն, բայց որ ամենն ապաշխարութեան հասնեն։
10 Բայց Տիրոջ օրը (գիշերուայ) գողի պէս կ'գայ. որ
նորանում երկինքը շառաչիւնով կ'անցնէ և տա-
րերքը կրակով վառուած կ'հալուին, և երկիրը և
11 նորանում եղած բաներն էլ կ'այրուին։ Հիմա որ
սորանք ամենը հալուելու բաներ են. ի՛նչպէս
պէտք է դուք գտնուիք սուրբ և աստուածապաշտ
12 վարքում։ Սպասելով և արտորալով Տիրոջ գա-
լըստեան օրին հասնել, որ նորանում երկինքները
կրակով այրուած կ'լուծուին. և տարերքը կրակ
13 ընկած կ'հալուին։ Բայց նորա խոստմունքի պէս՝
նոր երկնքի և նոր երկրի ենք սպասում. որոնցում
արդարութիւն է բնակվում։
14 Սորա համար, սիրելիներ, սորանց սպասելով
ջանք արէք որ անբիծ և անարատ գտնուիք նորա
15 առաջին խաղաղութեան մէջ։ Եւ մեր Տիրոջ եր-
կայնմտութիւնը փրկութիւն համարեցէք. ինչպէս
մեր սիրելի եղբայր Պօղոսն էլ Աստուածանից ի-
16 րան տրուած իմաստութեան պէս գրեց ձեզ։ Ինչ-
պէս ամեն թղթերումն էլ խօսում է այս բաների
համար. որոնցում մի քանի դժուարիմաց բաներ

կան. որ անուսումները և անհաստատները նորանց
ծռում են, ինչպէս միւս գրքերն էլ՝ իրանց ան-
17 ձերի կորստեան համար։ Ուրեմն դուք, սիրելի-
ներ, առաջուց իմանալով զգոյշ կացէք, որ մի
գուցէ անօրէնների մոլորութիւնովը յափշտակուե-
18 լով ընկնէք ձեր հաստատութիւնիցը։ Եւ աճե-
ցէք մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհ-
քովը և գիտութիւնովը. Նորան լինի փառք և հի-
մա և մինչև յաւիտենական օրն։ Ամէն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ

ԳԼՈՒԽ Ա.

1 Այն որ սկզբիցն էր, որ լսեցինք, որ մեր աչքե-
րովը տեսանք, որին նայեցինք, և մեր ձեռքերը
2 շօշափեցին՝ կեանքի Բանի համար. (Եւ կեանքը
յայտնուեցաւ, և մենք տեսանք, և վկայում ենք,
և պատմում ենք ձեզ յաւիտենական կեանքը, որ
3 Հօր մօտ էր և երևեցաւ մեզ։) Այն որ տեսանք
և լսեցինք, պատմում ենք ձեզ, որ դուք էլ հա-
ղորդութիւն ունենաք մեզ հետ. և մեր հաղոր-
դութիւնը Հօր հետ և Նորա Որդի Յիսուս Քրիս-
4 տոսի հետ։ Եւ սա գրում ենք ձեզ, որ ձեր ու-
րախութիւնը կատարեալ լինի։
5 Եւ սա է այն աւետիքը, որ Նորանից լսեցինք և
պատմում ենք ձեզ, թէ Աստուած լոյս է, և ոչ
6 մի խաւար չ'կայ Նորանում։ Եթէ ասենք թէ հա-
ղորդութիւն ունինք Նորա հետ, և խաւարի մէջ
ման գանք, սուտ ենք ասում և ճշմարտութիւնը
7 չենք անում։ Բայց եթէ լոյսի մէջ ման գանք ինչ-
պէս Նա է լոյսի մէջ, հաղորդութիւն ունինք իրար
հետ, և Նորա Որդի Յիսուս Քրիստոսի արիւնը
8 մեզ սրբում է ամեն մեղքից։ Եթէ ասենք թէ
մեղք չ'ունինք, մեր անձերը խաբում ենք և ճըշ-
9 մարտութիւնը չ'կայ մեզանում։ Ապա թէ մեր

մեղքերը խոստովանենք, Նա հաւատարիմ է և ար-
դար որ մեր մեղքերը թողէ մեզ, և սրբէ մեզ ա-
10 մեն անիրաւութիւնից։ Եթէ ասենք թէ մեղք չը
գործեցինք, ստախօս ենք անում Նորան, և Նորա
խօսքը մեզանում չէ։

ԳԼ. Բ

1 Իմ որդեակներս, սա գրում եմ ձեզ որ չ՚մե-
ղանչէք, և եթէ մէկը մեղանչէ, բարեխօս ունինք
2 Հօր մօտ Յիսուս Քրիստոս արդարին։ Եւ Նա քա-
ւութիւն է մեր մեղքերի համար. և ոչ միայն մե-
րինների բայց բոլոր աշխարհքի էլ։
3 Եւ սորանով գիտենք որ ճանաչեցինք Նորան, ե-
4 թէ Նորա պատուիրանքները պահենք։ Ով որ ա-
սում է Ես ճանաչեցի Նորան և Նորա պատուի-
րանքները չէ պահում, ստախօս է, և ճշմարտու-
5 թիւնը չ՚կայ Նորանում։ Բայց ով որ Նորա խօսքը
պահէ, իրաւի Աստուծոյ սէրը Նորանում կատար-
եալ է. սորանով ճանաչում ենք որ Նորանում
6 ենք։ Ով որ ասում է թէ Նորանում եմ բնակ-
վում, պէտք է, ինչպէս որ Նա գնաց, ինքն էլ
այնպէս գնայ։
7 Եղբայրներ, ոչ թէ մի Նոր պատուիրանք եմ
գրում ձեզ, այլ հին պատուիրանքը որ սկզբիցն
ունէիք և հին պատուիրանքն այն խօսքն է որ լսե-
8 ցիք սկզբից։ Դարձեալ Նոր պատուիրանք եմ գը-
րում ձեզ, որ ճշմարիտ է Նորանում և ձեզանում.
որ խաւարն անցնում է, և ճշմարիտ լոյսն արդէն
9 երևում է։ Ով որ ասում է, Ես լոյսի մէջ է և
իր եղբօրն ատում է, մինչև հիմա խաւարի մէջ է։
10 Նա որ իր եղբօրը սիրում է, լոյսի մէջ է մնում,
11 և գայթակղութիւն չ՚կայ Նորանում։ Բայց նա որ

իր եղբօրն ատում է, խաւարումն է, և խաւարի
մէջ է ման գալիս, և չ՚գիտէ թէ ուր է գնում,
որովհետև խաւարը կուրացրեց Նորա աչքերը։
12 Գրում եմ ձեզ, որդեակներ, որ ձեր մեղքերը
13 թողուած են ձեզ Նորա անունի համար։ Գրում
եմ ձեզ, հայրեր, որ ճանաչեցիք Նորան որ սկզբիցն
է. գրում եմ ձեզ, երիտասարդներ, որ դուք
14 յաղթեցիք չարին։ Գրում եմ ձեզ, մանկունք, որ
ճանաչեցիք Հօրը. գրեցի ձեզ, հայրեր, որ ճանա-
չեցիք Նորան որ սկզբիցն է. գրեցի ձեզ, երիտա-
սարդներ, որ դուք զօրաւոր էք. և Աստուծոյ խօս-
քը բնակվում է ձեզանում, և դուք յաղթել էք
15 չարին։ Մի սիրէք աշխարհքը. և ոչ էլ այն որ
16 աշխարհքի մէջ է։ Եթէ մէկն աշխարհքը սիրէ,
Հօր սէրը Նորանում չէ. որովհետև ամեն ինչ որ
աշխարհքումն է՝ մարմնի ցանկութիւնը, աչքերի
ցանկութիւնը և այս կեանքի ամբարտաւանութիւ-
17 նը, Հօրիցը չէ, այլ աշխարհքիցն է։ Եւ աշխարհ-
քը անցնում է և Նորա ցանկութիւնն էլ, բայց
Աստուծոյ կամքն անողը մնում է յաւիտեան։
18 Որդեակներ, վերջի ժամանակն է, և ինչպէս լսե-
ցիք թէ Նեռը գալիս է, և այժմ շատ Նեռեր են
եղել, որ սորանից իմանում ենք թէ վերջի ժամա-
19 նակն է։ Մեզանից դուրս գնացին, բայց մեզանից
չէին. որովհետև եթէ մեզանից լինէին, ապա մեզ
հետ մնացած կ՚լինէին. բայց որ յայտնի լինեն թէ
20 Նորանք ամենը մեզանից չեն։ Եւ դուք օծութիւն
21 ունիք այն սուրբիցը և ամեն բան գիտէք։ Չ՚գրեցի
ձեզ իբր թէ ճշմարտութիւնը չ՚գիտէք, այլ թէ
գիտէք Նորան, և՝ թէ ամեն ստութիւն այն ճշմար-
22 տութիւնիցը չէ։ Ո՞վ է ստախօսը, եթէ ոչ Նա
որ ուրանում է թէ Յիսուսը չէ Քրիստոսը. Նա
23 Նեռն է, որ ուրանում Հօրը և Որդուն։ Ամեն ով

որ Որդուն ուրանում է, Հօրն էլ չ'ունի. Նա որ
24 Որդուն դաւանում է, Հօրն էլ ունի։ Արդ այն որ
դուք լսեցիք սկզբիցը, թող բնակուէ ձեզանում.
եթէ բնակուէ ձեզանում այն որ սկզբիցը լսեցիք,
25 դուք էլ կ'բնակուէք Որդու և Հօր մէջ։ Եւ սա է
այն խոստմունքը որ նա աւետարանեց մեզ, այս-
26 ինքն յաւիտենական կեանքը։ Այս բաները գրեցի
27 ձեզ՝ ձեզ մոլորեցնողների մասին։ Եւ այն օծու-
թիւնը, որ դուք նորանից ընդունեցիք բնակվում
է ձեզանում. և դուք պէտք չ'ունիք որ մէկը սո-
վորեցնէ ձեզ. այլ ինչպէս այն օծութիւնը սովո-
րեցնում է ձեզ ամեն բանի համար, ճշմարիտ էլ
է և սուտ չէ. և ինչպէս նա սովորեցրեց ձեզ, կա-
ցէք նորանում։
28 Եւ հիմա, որդեակներ, կացէք նորանում. որ
երբոր նա կ'յայտնուի, համարձակութիւն ունե-
նանք, և չ'ամաչենք նորանից նորա գալուստի ժա-
29 մանակումը։ Եթէ գիտէք որ նա արդար է, կ'իմա-
նաք թէ ամեն ով որ արդարութիւն է անում,
նորանից է ծնուած։

ԳԼ. Գ

1 Տեսէք թէ Հայրն ինչպիսի սէր շնորհեց մեզ, որ
Աստուծոյ որդիք կոչուինք, սորա համար աշխարհ-
2 քը չէ ճանաչում մեզ, որ նորան չ'ճանաչեց։ Սի-
րելիներ, հիմա Աստուծոյ որդիք ենք, և տակաւին
յայտնուած չէ թէ ինչ պիտի լինենք. բայց գի-
տենք թէ, երբոր նա կ'յայտնուի, նորան նման կը
լինենք, որովհետև կ'տեսնենք նորան ինչպէս որ է։
3 Եւ ամեն ով որ այս յոյսն ունի իրանում, սըր-
4 բում է իր անձն ինչպէս որ նա սուրբ է։ Ամեն
ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է

5 անում, և մեղքն է անօրէնութիւնը։ Եւ գիտէք
որ նա յայտնուեցաւ որ մեր մեղքերը վեր առնէ.
6 և նորանում մեղք չ'կայ։ Ամեն ով որ նորանում
մնում է՝ չէ մեղանչում. և ամեն ով որ մեղան-
չում է, չէ տեսել նորան և ոչ էլ ճանաչել նո-
7 րան։ Մանկունք, ոչ ոք ձեզ չ'խաբէ. նա որ ար-
դարութիւն է անում, արդար է, ինչպէս Նա էլ
8 արդար է։ Եւ նա որ մեղք է անում, սատանայիցն
է. որովհետև սատանան հէնց սկզբիցը մեղանչում
է, նորա համար յայտնուեցաւ Աստուծոյ Որդին, որ
9 սատանայի գործերը քանդէ։ Ամեն ով որ Աստ-
ուածանից է ծնուած, մեղք չէ անում. որովհետև
նորա սերմը նորանում մնում է, և չէ կարող մե-
ղանչել, որովհետև Աստուածանից է ծնուած։
10 Սորանով են յայտնի Աստուծոյ Որդիքը և սատա-
նայի որդիքը։
Ամեն ով որ արդարութիւն չէ անում, նա Աս-
տուածանից չէ, և ոչ էլ նա՝ որ իր եղբօրը չէ սի-
11 րում։ Որովհետև սա է պատուիրանքը, որ սկզբի-
12 ցը լսեցիք, որ իրար սիրենք։ Ոչ թէ այնպէս ինչ-
պէս որ Կայէնն էր չարից և իր եղբօրն սպանեց. և
ի՞նչու համար սպանեց նորան, որովհետև իր գոր-
13 ծերը չար էին և իր եղբօրինը արդար։ Մի զարմա-
14 նաք, եղբարքս, եթէ աշխարհքս ատէ ձեզ։ Մենք
գիտենք որ մահիցը ի կեանք փոխուեցանք. որով-
հետև եղբայրներին սիրում ենք. բայց ով որ չէ
15 սիրում եղբօրը, մնում է մահի մէջ։ Ամեն ով որ
իր եղբօրն ատում է, մարդասպան է. և գիտէք որ
ամեն մարդասպան յաւիտենական կեանք չ'ու-
16 նի հաստատուած իրանում. Սորանով գիտացինք
[Քրիստոսի] սէրը, որ նա իր անձը տուաւ մեզ վե-
րայ. և մենք պարտենք մեր եղբայրների վերայ դը-
17 նել մեր անձերը։ Ով որ այս աշխարհքի ապրանքն

ունենայ, և տեսնէ իր եղբայրը կարօտ ի բանի, և
իր գութը փակէ նորանից, ինչպէս Աստուծոյ սէ-
18 րը բնակուած կ'լինի նորանում։ Որդեակներ, չ'սի-
րենք խօսքով և ոչ էլ լեզուով, այլ գործով և
ճշմարտութիւնով։
19 Եւ սորանով ենք ճանաչում թէ ճշմարտութիւ-
նից ենք, և նորա առաջին ի հանդէս բերենք մեր
20 սրտերը. Որ եթէ մեր սիրտը մեղադրէ մեզ, այլ
Աստուած մեր սրտից աւելի մեծ է և ամեն բան
21 գիտէ։ Սիրելիներ, եթէ մեր սրտերը չ'մեղադրեն
մեզ, համարձակութիւն ունինք առ Աստուած։
22 Եւ ինչ որ խնդրենք կ'առնենք նորանից. որովհե-
տև նորա պատուիրանքները պահում ենք, և նորա
23 առաջին հաճոյ եղածները անում ենք։ Եւ սա է
նորա պատուիրանքը, որ հաւատանք նորա Որդի
Յիսուս Քրիստոսի անունին, և իրար սիրենք, ինչ-
24 պէս նա պատուիրանք տուաւ մեզ։ Եւ նա որ նորա
պատուիրանքները պահում է, մնում է նորանում
և նա սորանում. և սորանից գիտենք թէ բնակ-
վում է մեզանում՝ այն Հոգուցը որ տուաւ մեզ։

ԳԼ. Դ

1 Սիրելիներ, ամեն հոգու մի հաւատաք. այլ փոր-
ձեցէք հոգիները թէ արդեօք Աստուածանից են.
որովհետև շատ սուտ մարգարէներ են դուրս եկել
2 աշխարհք։ Սորանով ճանաչեցէք Աստուծոյ Հոգին.
ամեն հոգի որ խոստովանում է Յիսուս Քրիստոսին
3 մարմնով եկած, Աստուածանից է։ Եւ ամեն հոգի
որ չէ խոստովանում Յիսուս Քրիստոսին մարմնով
եկած, Աստուածանից չէ. և նա Նեռի հոգին է, որ
լսեցիք թէ գալիս է, և հիմա արդէն աշխարհքումն
4 է։ Դուք Աստուածանից էք, որդեակներ, և յաղ-

թեցիք նորանց. որովհետև աւելի մեծ է նա որ ձե-
զանում է, քան թէ նա որ աշխարհքիս մէջ է։
5 Նորանք աշխարհքից են. նորա համար աշխարհ-
քից են խօսում. և աշխարհքը լսում է նորանց։
6 Մենք Աստուածանից ենք. ով որ Աստուծուն ճա-
նաչում է՝ լսում է մեզ, ով որ Աստուածանից
չէ, չէ լսում մեզ. սորանից ենք ճանաչում ճըշ-
մարտութեան Հոգին և խաբէութեան հոգին։
7 Սիրելիներ, իրար սիրենք, որ սէրն Աստուածա-
նից է. և ամեն ով որ սիրում է Աստուածանից է
8 ծնուած, և ճանաչում է Աստուծուն։ Նա որ չէ
սիրում, Աստուծուն չէ ճանաչել. որովհետև Աս-
9 տուած սէր է։ Սորանով Աստուծոյ սէրն երևեցաւ
մեզանում, որ Աստուած իր միածին Որդուն ու-
ղարկեց աշխարհք, որ նորանով կեանք ունենանք։
10 Սորանում է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք Աս-
տուծուն, այլ որ նա սիրեց մեզ, և ուղարկեց իր
11 Որդուն քաւութիւն մեր մեղքերի համար։ Սիրե-
լիներ, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա
12 մենք էլ պէտք է իրար սիրենք։ Աստուծուն եր-
բէք մէկը չէ տեսել. եթէ իրար սիրենք Աստուած
մեզանում է բնակվում, և նորա սէրը կատարեալ
13 է մեզանում։ Սորանով գիտենք, որ մենք նորա-
նում ենք բնակուած և նա մեզանում. որ իր Հո-
14 գուցը տուաւ մեզ։ Եւ մենք տեսանք և վկայում
ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց աշխարհքի
15 փրկիչ լինելու։ Ով որ դաւանէ թէ Յիսուսն է
Աստուծոյ Որդին, Աստուած նորանում է բնակ-
16 վում և նա Աստուածանում։ Եւ մենք ճանաչե-
ցինք և հաւատացինք այն սէրը, որ Աստուած ունի
մեզ վերայ. Աստուած սէր է, և ով որ մնում է
սէրի մէջ, Աստուծոյ մէջ է բնակվում, և Աստուած
17 նորանում. Սորանում է սէրը կատարեալ մեզ

հետ, որ համարձակութիւն ունենանք դատաս-
տանի օրումը. որովհետև ինչպէս նա է, այնպէս
18 էլ մենք ենք այս աշխարհքումը: Վախ չ'կայ սէրի
մէջ. այլ կատարեալ սէրը հեռացնում է վախը.
որովհետև վախը տանջանք ունի. բայց նա որ վա-
19 խենում է, կատարեալ չէ սէրի մէջ: Մենք սի-
րենք նորան, որովհետև առաջ նա սիրեց մեզ:
20 Եթէ մէկն ասէ թէ Սիրում եմ Աստուծուն և իր
եղբօրն ատէ, նա ստախօս է. որովհետև նա որ իր
տեսած եղբօրը չէ սիրում, Աստուծուն որ չէ տե-
21 սել ի՞նչպէս կարող է սիրել: Եւ այս պատուի-
րանքն ունինք նորանից, թէ նա որ Աստուծուն
սիրում է, իր եղբօրն էլ սիրէ:

ԳԼ. Ե

1 Ամեն ով որ հաւատում է թէ Յիսուսն է Քրիս-
տոսը, Աստուածանից է ծնուած և ամեն ով որ
ծնողին սիրում է, նորանից ծնուածին էլ սիրում
2 է: Սորանով ենք ճանաչում թէ Աստուծոյ որդի-
ներին սիրում ենք, երբոր սիրում ենք Աստու-
3 ծուն, և նորա պատուիրանքները պահում: Որով-
հետև սա է Աստուծոյ սէրը որ նորա պատուիրանք-
ները պահենք. և նորա պատուիրանքները ծանր
4 չեն: Որովհետև ամեն ով որ Աստուածանից է ծըն-
ուած յաղթում է աշխարհքին. և սա է յաղթու-
թիւնն, որ աշխարհքին յաղթեց, այսինքն մեր հա-
5 ւատքը: Եւ ո՞վ է որ յաղթում է աշխարհքին,
եթէ ոչ նա, որ հաւատում է, թէ Յիսուսն Աս-
տուծոյ Որդին է:
6 Սա է որ եկաւ ջրով և արիւնով՝ Յիսուս Քրիս-
տոսը. ոչ թէ միայն ջրով, բայց ջրով և արիւնով.
և Հոգին է վկայողը. որովհետև Հոգին է ճշմար-

7 տութիւնը: Որովհետև երեք են որ [երկնքումը վը-
կայում են, Հայրը և Բանը և Սուրբ Հոգին. և այս
8 երեքը մի են: Եւ երեք են որ երկրումը] վկայում
են. Հոգին, և ջուրը, և արիւնը. և այս երեքը
9 միաբան են: Եթէ մարդկանց վկայութիւնն ընդու-
նում ենք, Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է.
որովհետև սա է Աստուծոյ վկայութիւնն, որ վը-
10 կայեց իր Որդու մասին: Ով որ հաւատում է Աս-
տուծոյ Որդուն, վկայութիւնն ունի իր անձումը.
ով որ չէ հաւատում Աստուծուն, ստախօս է ա-
րել նորան. որովհետև չ'հաւատաց այն վկայու-
թեանն, որ Աստուած վկայեց իր Որդու մասին:
11 Եւ սա է վկայութիւնը, որ Աստուած յաւիտե-
նական կեանք տուաւ մեզ. և այս կեանքը նորա
12 Որդու մէջ է: Ով որ Որդուն ունի, նա կեանքն
ունի. և ով որ Աստուծոյ Որդուն չ'ունի, կեան-
քը չ'ունի:
13 Այս բաները գրեցի ձեզ՝ Աստուծոյ Որդու ա-
նունին հաւատացեալներիդ, որ գիտենաք թէ յա-
14 ւիտենական կեանք ունիք: Եւ սա է այն համար-
ձակութիւնը որ ունինք դէպի նորան, թէ ինչ որ
նորա կամքի պէս խնդրում ենք, լսում է մեզ:
15 Եւ եթէ գիտենք թէ լսում է մեզ, ինչ որ խնդրում
ենք, գիտենք որ առնում ենք մեր խնդրուածք-
ներն, որ խնդրեցինք նորանից:
16 Եթէ մէկը տեսնէ իր եղբօրը որ մեղանչել է այն-
պիսի մեղքով որ դէպի մահ չէ, թող խնդրէ, և
Աստուած կեանք կ'տայ նորան այսինքն նորան որ մե-
ղանչել է ոչ թէ դէպի մահ. կայ մեղք որ դէպի
մահ է, նորա համար ես չեմ ասում որ խնդրես:
17 Ամեն անիրաւութիւն մեղք է. և կայ մեղք որ
դէպի մահ չէ:
18 Գիտենք որ ամեն ով որ Աստուածանից է ծնուած,

մեղք չէ գործում, բայց Նա որ Աստուածանից է
ծնուած, իր անձը պահում է, և չարը չէ մօտե-
19 նում Նորան: Գիտենք որ Աստուածանից ենք, և
20 բոլոր աշխարհքը չարութեան մէջ է կենում: Եւ
գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ և մեզ միտք
տուաւ, որ ճշմարիտը ճանաչենք. և ճշմարիտումն
ենք, այսինքն Նորա Որդի Յիսուս Քրիստոսումը,
Նա է ճշմարիտ Աստուածը և յաւիտենական կեան-
21 քը: Որդեակներ, պահեցէք ձեր անձերը կուռ-
քերիցը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

1 Երէցը, ընտրեալ *կիւրիային, և նորա որդինե-
րին, որոնց ես սիրում եմ ճշմարտութիւնով, (և
ոչ միայն ես, այլ այն ամենն էլ որ ճշմարտու-
2 թիւնը ճանաչել են:) Այն ճշմարտութեան պատ-
ճառովը որ մեզանում մնում է, և մեզ հետ կը
3 լինի յաւիտեան: Ձեզ հետ լինի շնորհք, ողորմու-
թիւն, խաղաղութիւն Աստուած Հօրիցը, և Տէր
Յիսուս Քրիստոսիցը՝ Հօր Որդուցը, ճշմարտութիւ-
նով և սիրով:
4 Շատ ուրախացայ որ քո որդիներիցը գտայ որ
ճշմարտութիւնով են գնում, ինչպէս որ հրաման
5 առանք Հօրիցը: Եւ հիմա աղաչում եմ քեզ,
†կիւրիա, ոչ իբր թէ մի նոր պատուիրանք եմ
գրում քեզ, այլ այն որ սկզբիցն ունէինք, որ ի-
6 րար սիրենք: Եւ սա է սէրը, որ նորա պատուի-
րանքների համեմատ գնանք, և սա է պատուիրան-
քը, որ ինչպէս լսեցիք սկզբիցն՝ այնպէս գնաք:
7 Որովհետև շատ մոլորեցուցիչներ դուրս եկան աշ-
խարհք որ չեն դաւանում Յիսուս Քրիստոսին
մարմնով եկած. Նա է մոլորեցուցիչը և Նեռը:
8 Զգուշ կացէք ձեր անձերին որ չ'կորցնենք այն որ
վաստակեցինք. այլ որ բոլոր վարձք առնենք:

---

*Այսինքն՝ տիկնին †Այսինքն՝ տիկին

9 Ամեն ով որ յանցանք է գործում, և չէ կենում
Քրիստոսի վարդապետութեան մէջ, Աստուած չ'ու-
նի. ով որ կենում է Քրիստոսի վարդապետու-
10 թեան մէջ, նա ունի Որդուն էլ Հօրն էլ: Եթէ
մէկը ձեզ մօտ գայ և այս վարդապետութիւնը չը
բերէ, մի ընդունիք նորան ձեր տունը, և բարև
11 մի տաք նորան: Որովհետև ով որ բարև տայ նո-
րան, մասնակից կ'լինի նորա չար գործերին:
12 Շատ բան ունէի ձեզ գրելու, բայց չ'կամեցայ
թղթով և թանաքով գրել. այլ յոյս ունիմ գալ
ձեզ մօտ, և բերանէ բերան խօսել, որ մեր ու-
13 րախութիւնը կատարեալ լինի: Բարև են տալիս
քեզ քո ընտրեալ քրոջ որդիքը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ

1 Երէցը, սիրելի Գայիոսին, որին ես սիրում եմ
2 ճշմարտութիւնով: Սիրելի, աղօթք եմ անում որ
ամեն բանի մէջ յաջող և առողջ լինես, ինչպէս
3 քո հոգին յաջող է: Որովհետև շատ ուրախացայ
երբոր եղբարքն եկան, և քո ճշմարտութիւնը վը-
կայեցին, ինչպէս որ դու ճշմարտութեան մէջ գը-
4 նում ես: Սորանից աւելի մեծ ուրախութիւն չ'ու-
նիմ, որ լսում եմ թէ իմ որդիները ճշմարտու-
5 թեան մէջ են գնում: Սիրելի, հաւատարմաբար
ես գործում այդ՝ ինչ որ անում ես եղբայրներին
6 և օտարականներին. Որոնք վկայեցին քո սէրի հա-
մար եկեղեցու առաջին, որ լաւ կ'անես եթէ նո-
րանց Աստուծոյ արժանաւոր կերպով ճանապարհ
7 գցես: Որովհետև նորա անունի համար դուրս ե-
կան առանց մի բան առնելու հեթանոսներից:
8 Արդ պէտք է մենք ընդունենք այսպիսիներին, որ
գործակից լինենք ճշմարտութեանը:
9 Ես գրեցի եկեղեցուն. բայց Դիոտրէփէսը որ ու-
զում է նորանց միջումը առաջինը լինել, մեզ չէ
10 ընդունում: Սորա համար եթէ գամ նորա գոր-
ծերը կ'յիշեմ որ չար խօսքերով շատախօսութիւն
է անում մեզ վերայ, և սորանով էլ չ'բաւակա-
նացած՝ ոչ ինքն է ընդունում եղբայրներին, և

նորանց էլ որ ուզում են ընդունել, արգելում է
11 և եկեղեցուցը հանում: Սիրելի, չարին նմանող
մի լինիր, այլ բարիին. ով որ բարի է գործում
Աստուածանից է, և ով որ չարիք է գործում Աս-
12 տուածուն չէ տեսել: Դեմետրիոսը վկայութիւն ու-
նի ամենից և նոյն իսկ ճշմարտութիւնիցն էլ, և
մենք էլ վկայում ենք. և գիտէք որ մեր վկայու-
թիւնը ճշմարիտ է:
13 Շատ բան ունէի քեզ գրելու, բայց չեմ կա-
14 մենում թանաքով և գրիչով գրել քեզ: Բայց
յոյս ունիմ շուտով քեզ տեսնել, և բերանէ բե-
15 րան կ'խօսենք: Խաղաղութիւն լինի քեզ հետ.
բարև են տալիս քեզ սիրելիքը. բարև տուր մեր
սիրելիներին անուն անուն:

ՅՈՒԴԱ ԱՌԱՔԵԱԼԻ

ԹՈՒՂԹԸ

1 Յուդա Յիսուս Քրիստոսի ծառայ, և Յակոբոսի
եղբայր. Աստուած Հօրից սրբուած, և Յիսուս
2 Քրիստոսումն պահուած կանչուածներին. Ողորմու-
թիւն և խաղաղութիւն և սէր շատանայ ձեր վերայ:
3 Սիրելիներ, որովհետև ամեն ջանք արի որ գրեմ
ձեզ մեր հասարակաց փրկութեան համար, հարկ
եղաւ ինձ որ գրեմ ձեզ և յորդորեմ, որ մրցիք
4 սրբերին միանգամ աւանդուած հաւատքովը: Որով-
հետև մի քանի մարդիկ ներս պրծան, որոնք առա-
ջուց հաստատուած էին սոյն այս դատաստանի
համար, ամբարիշտներ, որ մեր Աստուծոյ շնորհքն
անառակութեան դարձրին. և ուրանում են այն
միայն իշխանին, [Աստուծուն] և մեր Տէր Յիսուս
5 Քրիստոսին: Իսկ ես կամենում եմ յիշեցնել ձեզ,
որ արդէն այս բանը գիտէք, թէ Տէրը ժողովրդին
փրկեց Եգիպտոսի երկրիցը. և յետոյ չ'հաւատա-
6 ցողներին կորցրեց: Եւ այն հրեշտակներին որ ի-
րանց իշխանութիւնը չ'պահեցին, այլ իրանց բնա-
կութիւնը թողեցին, յաւիտենական կապանքնե-
րով խաւարի մէջ պահեց մեծ օրուայ դատաստա-
7 նի համար: Ինչպէս Սոդոմը և Գոմորը և նորանց
շուրջի քաղաքները, հէնց սորանց կերպով պոռնկե-
լով և ուրիշ մարմնի ետևից գնալով՝ օրինակի հա-

մար մեր առաջին դրուած են, յաւիտենական կրա-
8 կի դատաստանն ընդունելով։ Եւ նմանապէս էլ
սրանք, որ ցնորուած լինելով մարմինը պղծում
են, տէրութիւնը անարգում են, և փառքը հայ-
9 հոյում են։ Եւ Միքայէլ հրեշտակապետը, երբոր
սատանայի հետ վիճելով պատասխան էր տալիս
Մովսէսի մարմնին համար, չ'համարձակեց հայհո-
յանքի դատաստան անել, բայց ասեց Տէրը քեզ
10 յանդիմանէ։ Իսկ սրանք այն բաները, որ չեն ի-
մանում, հայհոյում են. և ինչ որ էլ անխօս ա-
նասունի պէս բնականաբար գիտեն, նորանցում
11 ապականվում են։ Վա՜յ նորանց, որ Կայէնի ճա-
նապարհովը գնացին, և Բաղաամի մոլորութիւնովը
վարձքին նուիրուեցան, և Կորխի հակառակու-
12 թեան պէս կորան։ Սրանք գայթակղութեան ժայռեր
են ձեր սէրի խնջոյքներումը, որ աներկիւղ միասին
ուտել խմելիս, իրանց անձերն են արածեցնում։
Անջուր ամպեր են քամիներից տատանուած, պըտ-
ղակորոյս անպտուղ ծառեր, երկու անգամ մեռած
13 արմատախիլ եղած. Ծովու կատաղած ալիքներ,
որ իրանց անձերի ամօթն են փրփրեցնում. մոլար
աստղեր, որոնց պահվում է յաւիտեան խաւա-
րի մութը։
14 Ենովքն էլ, որ եօթներորդն է Ադամից, սրանց
համար մարգարէացաւ և ասեց. Ահա Տէրը եկաւ
15 իր բիւրաւոր սուրբերովը, Որ դատաստան անէ
ամենին, և նորանց ամբարիշտներին յանդիմանէ
իրանց արած բոլոր ամբարիշտ գործերի համար, և
բոլոր այն խիստ խօսքերի համար, որ ամբարիշտ մե-
16 ղաւորները նորա դէմ խօսեցին։ Սրանք տրտնջող-
ներ և փափաքողներ են, որ իրանց անձերի ցանկու-
թիւնների պէս են գնում. և նորանց բերանը ամ-
բարտաւան բաներ է խօսում, երեսպաշտութիւն

17 են անում շահի համար։ Բայց դուք, սիրելիներ,
յիշեցէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի առաքեալնե-
18 րից առաջուց ասած խօսքերը։ Որովհետև ասում
էին ձեզ, թէ վերջի ժամանակներումը ծաղր անող
մարդիկ կ'լինին, որ իրանց ամբարիշտ ցանկութիւն-
ների ետևից կ'գնան։
19 Սրանք են որ ջոկում հեռացնում են իրանց,
20 շնչաւորներ որ Հոգին չ'ունին։ Բայց դուք, սիրե-
լիներ, ձեր անձերը ձեր սուրբ հաւատքի վերայ
21 շինեցէք Սուրբ Հոգովը, աղօթք անելով։ Որ ձեր
անձերը Աստուծոյ սէրի մէջ պահէք, սպասելով
մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեանը յաւի-
22 տենական կեանքի համար։ Եւ մի քանիսին ողոր-
23 մեցէք խտրութիւն անելով։ Եւ մի քանիսին վա-
խով ազատեցէք կրակից յափշտակելով. ատելով
այն պատմուճանն էլ որ մարմնից աղտոտուած է։
24 Եւ նորան որ կարող է անսայթաք պահել ձեզ և
անկեղծ կանգնեցնել իր փառքի առաջին ուրախ
25 ցնծութիւնով. Այն մէկ իմաստուն Աստուծուն և
մեր փրկչին [մեր Տէր Յիսուս Քրիստոսով] փառք
և մեծութիւն, զօրութիւն և իշխանութիւն, [բո-
լոր դարերից առաջ] և հիմա և ամեն յաւիտեան-
ներում։ Ամէն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած
տուաւ իր ծառաներին ցոյց տալու, ինչ որ շու-
տով պիտի լինի, և իմացրեց իր հրեշտակի ձեռովն
2 ուղարկելով իր Յովհաննէս ծառային. Որ վկայեց
Աստուծոյ խօսքին և Յիսուս Քրիստոսի վկայու-
3 թեանը, որ տեսաւ: Երանելի են այս մարգարէու-
թեան խօսքերը կարդացողը և լսողները, և նորա-
նում գրուածները պահողները. որովհետև ժամա-
նակը մօտեցել է:
4 Յովհաննէս, եօթը եկեղեցիներիդ, որ Ասիայումն
էք, շնորհք լինի ձեզ հետ և խաղաղութիւն Նո-
րանից որ է, և որ էր, և որ գալու է, և այն եօթը
5 Հոգիներիցը, որ Նորա աթոռի առաջին են. Եւ
Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայիցը, որ մե-
ռելներից անդրանիկը՝ և երկրի թագաւորների իշ-
խանն է. Նորան որ մեզ սիրեց և մեր մեղքերիցն
6 լուացաւ մեզ իր արիւնովն, Եւ մեզ թագաւոր-
ներ և քահանաներ արաւ Աստուծոյ և իր Հօր հա-
մար. Նորան փառք և զօրութիւն յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:
7 Ահա Նա գալիս է ամպերով. և ամէն աչք կը

տեսնէ Նորան, և Նորանք որ խոցեցին Նորան. և Նո-
րա վերայ կոծ կ'անեն երկրի ամէն ազգերը. Այո,
8 Ամէն: Ես եմ Ալֆան և Օմեղան [սկիզբը և վեր-
ջը] ասում է Տէրը, Նա որ է և որ էր և որ գալու
է, Ամենակալը:
9 Ես՝ Յովհաննէս ձեր եղբայր և հաւասար ընկեր
նեղութեան և արքայութեան և Յիսուս Քրիստոսի
համբերութեան, Պատմոս ասուած կղզումն էի
Աստուծոյ խօսքի համար, և Յիսուս Քրիստոսի
10 վկայութեան համար: Եւ կիրակի օրը եղայ Հո-
գում. և իմ ետևից մի մեծ ձայն լսեցի ինչպէս
փողի ձայն, որ ասում էր. [Ես եմ Ալֆան և Օմե-
11 ղան, առաջինը և վերջինը: Եւ] ինչ որ տեսնում
ես գրիր մի գրքի մէջ, և ուղարկիր այն եօթը ե-
կեղեցիներին որ Ասիայումն են՝ Եփեսոս, Զմիւռ-
նիա, և Պերգամոն, և Թիւատիրա, և Սարդէս,
12 և Փիլադելփիա և Լաւոդիկէ: Եւ ես ետ դարձայ
այն ձայնը տեսնելու, որ ինձ հետ խօսում էր, և
13 երբոր դարձայ եօթը ոսկի ճրագակալ տեսայ. Եւ
այն եօթը ճրագակալների միջումը մի մարդի Որ-
դու նման, պճղնաւոր պատմուճան հագած, և
14 ստինքների մօտ ոսկի գօտի կապած: Եւ Նորա
գլուխը և մազերը սպիտակ բուրդի և ձիւնի պէս
սպիտակ էին, և Նորա աչքերը կրակի բոցի պէս:
15 Եւ Նորա ոտները կարմրած պղնձի պէս իբրև հնո-
ցի մէջ կրակ եղած, և Նորա ձայնը շատ ջրերի
16 ձայնի պէս, Եւ իր աջ ձեռքումը եօթն աստղեր
ունէր, և Նորա բերանիցը սրած երկբերան սուր
էր դուրս գալիս, և Նորա երեսն ինչպէս արեգակը
17 որ ճառագայթում է իր զօրութեամբը: Եւ երբոր
տեսայ Նորան, մեռածի պէս ընկայ Նորա ոտների
առաջին. և Նա իր աջ ձեռքն ինձ վերայ դրաւ և
ասեց ինձ. Մի վախենար, ես եմ Առաջինը և

18 վերջինը, Եւ կենդանին. և ես մեռած էի, և ա-
հա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից, ամէն.
19 և ունիմ դժոխքի և մահի բանալիները։ Գրիր ինչ
որ տեսնում ես, ինչ որ է, և ինչ որ նորանից յե-
20 տոյ լինելու է։ Այս եօթն աստղերի խորհուրդն
որ իմ աջ ձեռքի մէջ տեսար, և այն եօթը ոսկի
ճրագակալները. այն եօթն աստղերը եօթը եկե-
ղեցիների հրեշտակներն են, և այն եօթը ճրագա-
կալները եօթը եկեղեցիներն են։

ԳԼ. Բ

1 Եփեսոսի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է ա-
սում այն եօթն աստղերն իր աջ ձեռքումն ունե-
ցողը, որ եօթը ոսկի ճրագակալների մէջ ման է
2 գալիս։ Գիտեմ քո գործերը և քո աշխատութիւ-
նը և քո համբերութիւնը. և որ չարերին չես կա-
րողանում համբերել, և փորձեցիր նորանց որ ա-
ռաքեալ են ձեւանում, և չեն, և գտար որ սուտ
3 են։ Եւ նեղութիւններ կրեցիր և համբերութիւն
ունիս, և իմ անունի համար աշխատեցիր, և չը
4 թուլացար։ Բայց քեզ դէմ այս ունիմ, որ քո
5 առաջին սէրը թողել ես։ Արդ յիշիր, թէ որտե-
ղից վայր ընկար, և զղջա, և առաջի գործերն ա-
րա. ապա թէ ոչ՝ կ'գամ շուտով քեզ մօտ, և
քո ճրագակալը կ'շարժեմ իր տեղիցը եթէ չ'ա-
6 պաշխարես. Բայց այս բանն ունիս, որ Նիկողայոս-
եանների գործերն ատում ես, որոնք ես էլ եմ
7 ատում։ Ով որ ականջ ունի, թող լսէ ինչ որ Հո-
գին ասում է եկեղեցիներին. Ով որ յաղթում
է՝ նորան կեանքի ծառիցն ուտել կ'տամ, որ Ա-
տուծոյ դրախտի մէջ է։
8 Եւ Զմիւռնիայի եկեղեցու հրեշտակին գրիր.

Սա է ասում Առաջինը և Վերջինը որ մեռած էր,
9 և կենդանացաւ։ Գիտեմ քո գործերը և նեղու-
թիւնը և աղքատութիւնը. բայց դու հարուստ
ես. և գիտեմ նորանց հայհոյանքը որ ասում են
թէ իրանք Հրեայ են և չեն, այլ սատանայի ժո-
10 ղովք են։ Բնաւ մի վախենար այն բաներիցը որ
կրելու ես. ահա բանսարկուն ձեզանից բանտի մէջ
է գցելու, որ փորձուիք, և նեղութիւն կ'ունե-
նաք տասն օր. հաւատարիմ եղիր մինչև ի մահ,
11 և կեանքի պսակը կ'տամ քեզ։ Ով որ ականջ ու-
նի թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցինե-
րին. Ով որ յաղթում է, երկրորդ մահիցը չի
վնասուիլ։
12 Եւ Պերգամոնի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա
13 է ասում սրած երկսայրի սուրն ունեցողը։ Գիտեմ
քո գործերը, և թէ՝ որ տեղ ես բնակվում, ուր
որ սատանայի աթոռն է. և իմ անունը պահում
ես, և իմ հաւատքը չ'ուրացար այն օրերը, որ իմ
Անտիպաս հաւատարիմ վկան սպանուեցաւ ձեր
14 մէջ. ուր որ սատանան է բնակվում։ Բայց քեզ
դէմ մի քիչ բաներ ունիմ. որ այդ տեղ Բաղաա-
մի վարդապետութիւնը պահողներ ունիս որ Բա-
ղակին սովորեցրեց, գայթակղութիւն դնել Իս-
րայէլի որդկանց առաջին, որ նորանք կուռքի մա-
15 տաղ ուտեն և պոռնկութիւն անեն։ Այսպէս դու
էլ Նիկողայոսեանների վարդապետութիւնը պա-
16 հողներ ունիս, որ ես ատում եմ։ Ապաշխարիր,
ապա թէ ոչ՝ շուտով քեզ մօտ կ'գամ, և կ'պա-
17 տերազմեմ նորանց հետ իմ բերանի սրովը։ Ով որ
ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է ե-
կեղեցիներին. Ով որ յաղթում է այն թագցրած
մանանայիցն ուտել կ'տամ նորան. և սպիտակ խիճ
կ'տամ նորան. և այն խիճի վերայ մի նոր անուն

գրուած, որ ոչ ոք չ'գիտէ, բացի նա որ առնում է։
18 Եւ Թիւատիրայի եկեղեցու հրեշտակին գրիր·
Սա է ասում Աստուծոյ Որդին, որի աչքերը կրա-
կի բոցի պէս են, և նորա ոտները կարմրած պղնձի
19 նման։ Գիտեմ քո գործերը, և սէրը, և քո ծա-
ռայութիւնը, և հաւատքը, և քո համբերութիւ-
նը, և քո գործերը, և որ վերջինները աւելի են
20 քան թէ առաջինը։ Բայց քեզ դէմ մի քիչ բա-
ներ ունիմ. որ Յեզաբէլ կնկանը թոյլ ես տալիս
որ իրան մարգարէուհի է ասում, և իմ ծառանե-
րին սովորեցնում և մոլորեցնում է, որ պոռնկու-
21 թիւն անեն և կուռքի մատաղ ուտեն։ Եւ նորան
ժամանակ տուի որ ապաշխարէ իր պոռնկութիւ-
22 նիցը, և նա չ'ապաշխարեց։ Ահա ես նորան անկո-
ղինի մէջ կ'գցեմ, և նորա հետ շնացողներին էլ
մեծ մեծ նեղութիւնների մէջ. եթէ չ'ապաշխարեն
23 իրանց գործերիցը։ Եւ նորանց որդիքը մահով
կ'սպանեմ. և բոլոր եկեղեցիները կ'ճանաչեն որ ես
եմ երիկամունքները և սրտերը քննողը. և կ'տամ
24 ձեզ ամեն մէկիդ իր գործերի համեմատ։ Իսկ ես
ասում եմ ձեզ և միւսներին որ Թիւատիրայումն
էք, որ այս վարդապետութիւնը չ'ունիք, և որ
սատանայի խորութիւնները չ'ճանաչեցիք, ինչպէս
ասում են. Ձեզ վերայ ուրիշ ծանրութիւն չեմ
25 գցիլ։ Բայց այն որ ունիք պահեցէք մինչև որ ես
26 կ'գամ։ Եւ ով որ յաղթում է և իմ գործերը
պահում մինչև վերջը, նորան իշխանութիւն կը
27 տամ ազգերի վերայ. (Եւ նա կ'հովուէ նորանց
երկաթէ գաւազանով. բրուտի ամանի պէս կ'փշ-
28 րուին նորանք։) ինչպէս ես էլ իմ Հօրիցն ընդու-
նեցի. և ես կ'տամ նորան առաւօտեան աստղը։
29 Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ա-
սում է եկեղեցիներին։

ԳԼ. Գ

1 Եւ Սարդիսի եկեղեցու հրեշտակին գրիր. Սա է
ասում Աստուծոյ եօթը Հոգիները և եօթն աստ-
ղերն ունեցողը. Գիտեմ քո գործերը, որ անուն
2 ունիս թէ կենդանի ես, բայց մեռած ես։ Արթուն
եղիր, և հաստատիր մնացածներին որ մեռնելու
մօտ են. որովհետև քո գործերը կատարեալ չ'գտայ
3 Աստուծոյ առաջին։ Արդ յիշիր թէ ինչպէս ընդու-
նեցիր և լսեցիր. և պահիր և ապաշխարիր. ապա
թէ չ'արթնանաս՝ ես կ'գամ քեզ վերայ գողի պէս.
և չես իմանալ թէ որ ժամում քեզ մօտ կ'գամ։
4 Բայց մի քանի *անձինք ունիս Սարդիսի մէջն էլ,
որ իրանց հանդերձները չ'կեղտոտեցին. և նորանք
սպիտակներով ման կ'գան ինձ հետ, որովհետև
5 արժանի են։ Ով որ յաղթում է, նա սպիտակ
հանդերձներ կ'հագնէ. և նորա անունը կեանքի
գրքիցը չեմ ջնջիլ. և կ'դաւանեմ նորա անունն
իմ Հօր առաջին և նորա հրեշտակների առաջին։
6 Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում
է եկեղեցիներին։
7 Եւ Փիլադելփիայի եկեղեցու հրեշտակին գրիր.
Սա է ասում Սուրբը՝ Ճշմարիտը, որ Դաւիթի բա-
նալիներն ունի. որ բանում է և ոչ ով չէ փա-
8 կում, և փակում է և ոչ ով չէ բանում։ Գիտեմ
քո գործերը. ահա քո առաջին մի բացուած դուռ
դրի, և նորան ոչ ով կարող չէ փակել, որովհե-
տև քիչ զօրութիւն ունիս, և իմ խօսքը պահե-
9 ցիր, և իմ անունը չ'ուրացար։ Ահա ես տալիս եմ
սատանայի ժողովքիցը եղողներին, որ իրանց համար

*Յուն. անուններ

ասում են թէ Հրէայ են և չեն, այլ սուտ են ա-
սում, ահա կ'անեմ նորանց, որ կ'գան քո ոտնե-
րի առաջին և երկրպագութիւն կ'անեն, և կ'ճա-
10 նաչեն թէ ես սիրեցի քեզ։ Որովհետև իմ համբե-
րութեան խօսքը պահեցիր, ես էլ քեզ կ'պահեմ
այն փորձութեան ժամիցը, որ գալու է այս աշ-
խարհքի վերայ, որ փորձէ երկրի երեսի վերայ բը-
11 նակողներին։ Ահա ես գալիս եմ շուտով. պահիր
12 այն որ ունիս, որ ոչ ով չ'առնէ քո պսակը։ Ով
որ յաղթում է սիւն կ'անեմ նորան իմ Աստու-
ծոյ տաճարումը, և այլ ևս դուրս չի գնալ. և նո-
րա վերայ կ'գրեմ իմ Աստուծոյ անունը, և իմ
Աստուծոյ քաղաքի անունը, այն նոր Երուսաղէմի
անունը որ իջնում է երկնքիցն իմ Աստուածանի-
13 ցը, և իմ նոր անունը։ Ով որ ականջ ունի թող
լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին։
14 Եւ Լաւոդիկէի եկեղեցու հրեշտակին գրիր.
Սա է ասում Ամէնը, հաւատարիմ և ճշմարիտ
15 վկան, Աստուծոյ արարածների Սկիզբը։ Գիտեմ
քո գործերը որ ոչ ցուրտ ես և ոչ տաք. ո՜հ թէ
16 ցուրտ լինէիր կամ տաք։ Ուրեմն որովհետև գաղջ
ես, և ոչ տաք և ոչ ցուրտ, քեզ պիտի փսխեմ
17 իմ բերանիցը։ Որովհետև ասում ես, թէ Ես հա-
րուստ եմ և մեծացայ, և ոչ բանի կարօտ չեմ.
բայց չ'գիտես թէ դու թշուառ, և ողորմելի, և
18 աղքատ, և կոյր, և մերկ ես։ Ես խրատ եմ տա-
լիս քեզ, ինձանից կրակում փորձուած ոսկի առ,
որ հարստանաս, և սպիտակ հանդերձներ՝ որ հագ-
նիս, որ քո մերկութեան ամօթը չ'երևի. և դեղ
19 դիր աչքերիդ որ տեսնես։ Ես որոնց որ սիրում եմ
յանդիմանում եմ, և խրատում եմ. ուրեմն ջանք
20 արա և ապաշխարիր։ Ահա ես դրան առաջին
կանգնած եմ և թակում եմ. եթէ մէկը լսէ իմ

ձայնը և դուռը բանայ, կ'մտնեմ նորա մօտ և
21 ընթրիք կ'անեմ նորա հետ, և նա ինձ հետ։ Ով
որ յաղթում է, կ'տամ նորան, որ ինձ հետ նստի
իմ աթոռի վերայ, ինչպէս ես էլ յաղթեցի և
22 նստեցի իմ Հօր հետ նորա աթոռի վերայ։ Ով որ
ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է ե-
կեղեցիներին։

ԳԼ. Դ

1 Եւ սորանից յետոյ տեսայ, և ահա մի բացուած
դուռ երկնքումը, և այն առաջին ձայնը, որ լսեցի
փողի պէս որ խօսում էր ինձ հետ, ասեց. Վեր
ելիր այստեղ, և ես ցոյց տամ քեզ ինչ որ լինե-
2 լու է սորանից յետոյ։ Եւ ես շուտով Հոգում ե-
ղայ. և ահա մի աթոռ կար երկնքումը. և աթո-
3 ռի վերայ մէկը նստած։ Եւ նստողը յասպիս և
4 սարդիոն քարի երևոյթի նման էր. Եւ աթոռի
չորս կողմովը ծիածան կար զմրուխտի երևոյթի
նման. և աթոռի չորս կողմովը քսանևչորս աթոռ-
ներ, և այն աթոռների վերայ քսանևչորս երէցներ
նստած՝ սպիտակ հանդերձներ հագած, և իրանց
5 գլուխներին ոսկի պսակներ։ Եւ աթոռիցը փայլա-
տակներ և որոտմունք և ձայներ էին դուրս գալիս.
և եօթը ղամբարներ՝ կրակով բորբոքուած աթոռի
6 առաջին, որոնք Աստուծոյ եօթը Հոգիներն են։ Եւ
աթոռի առաջին ապակեայ ծով կար ակնվանու
նման, և աթոռի մէջ և աթոռի չորս կողմովը չորս
7 կենդանիք՝ առաջից և ետևից լիքն աչքերով։ Եւ
առաջին կենդանին առիւծի նման էր, և երկրորդ
կենդանին՝ զուարակի նման, և երրորդ կենդանին
մարդի նման երես ունէր, և չորրորդ կենդանին
8 թռչող արծուի նման։ Եւ չորս կենդանիների իւ-

րաքանչիւրը վեց թև ունէին, իրանց չորս կողմովը
և ներսևանց լիքն էին աչքերով. և հանգստութիւն
չ'ունէին ցերեկ և գիշեր ասելով. Սուրբ, Սուրբ,
Սուրբ, Տէր Աստուած ամենակարող, որ էր, և որ
9 է, և որ գալու է : Եւ երբոր այն կենդանիները
փառք, և պատիւ, և գոհութիւն են տալիս ա-
թոռի վերայ նստողին որ կենդանի է յաւիտեանս
10 յաւիտենից, Քսանևչորս երէցները ընկնում են ա-
թոռի վերայ նստողի առաջին, և երկրպագում
նորան, որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից և
իրանց պսակները գցում են աթոռի առաջին և
11 ասում. Արժանի ես, Տէր, որ առնես փառքը, և
պատիւը, և զօրութիւնը. որ դու ստեղծեցիր ա-
մեն բաները և քո կամենալովը կան և ստեղծ-
ուեցան :

ԳԼ. Ե

1 Եւ աթոռի վերայ նստողի աջ ձեռքումը մի գիրք
տեսայ, որ ներսևանց և դրսևանց գրուած էր, եօ-
2 թը կնիքով կնքուած : Եւ մի զօրաւոր հրեշտակ
տեսայ որ մեծ ձայնով քարոզում էր. Ո՞վ է ար-
ժանի բանալ այս գիրքը և սորա կնիքները լուծել :
3 Եւ ոչ ով՝ ոչ երկնքումը և ոչ երկրի վերայ և ոչ
երկրի ներքևումն, չէր կարողանում այն գիրքը
4 բանալ, և ոչ էլ նայել նորա մէջ : Եւ ես շատ
լաց էի լինում, որ ոչ ով չ'գտնուեցաւ արժանի
այն գիրքը բանալու [և կարդալու] և ոչ նորա մէջ
5 նայելու : Եւ երէցներից մէկն ասեց ինձ. Լաց մի
լինիր, ահա յաղթեց առիւծը որ Յուդայի ցեղիցն
է՝ Դաւիթի Արմատը, որ գիրքը բանայ և նորա
6 եօթը կնիքները լուծէ : Եւ տեսայ, և ահա այն
աթոռի մէջ և չորս կենդանիների մէջ և երէցնե-

րի մէջ մի Գառն կանգնած մորթուածի նման, որ
եօթը եղջիւր ունէր և եօթն աչք, որ Աստուծոյ
եօթը Հոգիքն են, որ ուղարկվում են բոլոր երկ-
7 րը : Եւ նա եկաւ և գիրքն առաւ աթոռի վերայ
8 նստողի աջ ձեռքիցը : Եւ երբոր գիրքն առաւ
չորս կենդանիները և քսանևչորս երէցները ընկ-
նում էին Գառի առաջին. ամեն մէկը ունէին քը-
նարներ և ոսկի բուրվառներ խնկով լիքը, որ սուր-
9 բերի աղօթքն է : Եւ նոր երգ են երգում և ա-
սում. Արժանի ես առնելու այդ գիրքը և դորա
կնիքները բանալու, որովհետև մորթուեցար, և
քո արիւնովը մեզ գնեցիր Աստուծոյ համար ամեն
10 ցեղից և լեզուից և ժողովրդից և ազգից : Եւ մեր
Աստուծոյ համար մեզ թագաւորներ և քահանա-
ներ արիր, և երկրի վերայ թագաւորութիւն կ'ա-
11 նենք : Եւ տեսայ, և շատ հրեշտակների ձայն լսե-
ցի աթոռի և չորս կենդանիների և երէցների չորս
կողմովը. և նորանց համարն էր բիւրերի բիւրեր և
12 հազարների հազարներ. Որ մեծ ձայնով ասում
էին. Արժանի է մորթուած Գառն առնելու և զօ-
րութիւն, և հարստութիւն, և իմաստութիւն, և
կարողութիւն, և պատիւ, և փառք, և օրհնու-
13 թիւն : Եւ ամեն ստեղծուած, որ երկնքումն է, և
երկրի վերայ, և երկրի տակ, և ծովումը. և նո-
րանք ամենը որ նորա մէջ են, լսեցի որ ասում էին.
Աթոռի վերայ նստողին և Գառին լինի օրհնու-
թիւնը, և փառքը, և կարողութիւնը յաւիտեանս
14 յաւիտենից : Եւ չորս կենդանիներն ասում էին,
Ամէն. և քսանևչորս երէցները ընկան և երկրպա-
գութիւն արին նորան որ կենդանի է յաւիտեանս
յաւիտենից :

Գլ· Զ

1 Եւ տեսայ երբոր Գառը այն կնիքներից մէկը բա-
ցաւ, և այն չորս կենդանիների մէկից լսեցի որ
որոտմունքի ձայնի պէս ասում էր. Եկ և տես։
2 Եւ տեսայ, և ահա մի սպիտակ ձի, և նորա վե-
րայ նստողը մի աղեղ ունէր. և մի պսակ տրուե-
ցաւ նորան, և նա դուրս եկաւ յաղթելով և յաղ-
թելու համար։
3 Եւ երբոր երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ կեն-
4 դանիից լսեցի որ ասում էր. Եկ և տես։ Եւ մի
ուրիշ ձի դուրս եկաւ կարմիր. և նորա վերայ
նստողին տրուեցաւ որ խաղաղութիւնը վեր առնէ
երկրից, և որ իրար մորթեն. և մի մեծ սուր
տրուեցաւ նորան։
5 Եւ երբոր երրորդ կնիքը բացաւ, երրորդ կեն-
դանիից լսեցի որ ասում էր. Եկ և տես. և տե-
սայ և ահա մի սև ձի, և նորա վերայ նստողը մի
6 կշիռք ունէր իր ձեռքումը։ Եւ չորս կենդանինե-
րի միջից մի ձայն լսեցի որ ասում էր. Մի կա-
պիճ ցորենը մի դենարի, և երեք կապիճ գարին մի
դենարի, և ձէթին և գինուն վնաս չ՚տաս։
7 Եւ երբոր չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կեն-
8 դանու ձայնը լսեցի որ ասում էր. Եկ և տես։ Եւ
տեսայ, և ահա մի դեղնականաչ ձի, և նորա վե-
րայ մի նստող՝ անունը Մահ, և Դժոխքը գնում
էր նորա ետևից. և իշխանութիւն տրուեցաւ նո-
րանց՝ աշխարհքի չորրորդ բաժնի վերայ սրով և
սովով և մահով և երկրի գազաններովն սպանել։
9 Եւ երբոր հինգերորդ կնիքը բացաւ, տեսայ սե-
ղանի ներքև նորանց հոգիները որ մորթուած էին
Աստուծոյ խօսքի համար և այն վկայութեան հա-

10 մար որ ունէին, Որ մեծ ձայնով աղաղակում էին
և ասում. Մինչև ե՞րբ, ով սուրբ Տէր և ճշմա-
րիտ, չես դատում, և մեր արիւնի վրէժը չես առ-
11 նում երկրի վերայ բնակողներից։ Եւ նորանց իւ-
րաքանչիւրին սպիտակ հանդերձներ տրուեցան, և
ասուեցաւ նորանց, որ տակաւին մի քիչ ժամա-
նակ հանգիստ առնեն, մինչև որ նորանց ծառայա-
կիցները և նորանց եղբայրներն էլ կատարուին որ
նորանց պէս սպանուելու են։
12 Եւ տեսայ, երբոր վեցերորդ կնիքը բացաւ, և
ահա մեծ շարժ եղաւ, և արեգակը սևացաւ մա-
ղեղէն քուրձի պէս, և լուսինն արիւնի պէս եղաւ։
13 Եւ երկնքի աստղերը թափուեցան երկրի վերայ
ինչպէս թզենին իր խակ պտուղը թափում է՝ սաս-
14 տիկ քամուց շարժուած։ Եւ երկինքը տեղից
քաշվում էր գալարուող գրքի պէս. և բոլոր սա-
րերն ու կղզիներն իրանց տեղից շարժուեցան։
15 Եւ երկրի թագաւորները և մեծամեծները և հա-
րուստները և հազարապետները և զօրաւորները և
ամեն ծառայ և ամեն ազատ թագցրին իրանց ան-
16 ձերը այրերի և սարերի ժայռերի մէջ, Եւ ասում
էին սարերին և ժայռերին. Վայր ընկէք մեզ վե-
րայ, և ծածկեցէք մեզ աթոռի վերայ նստողի ե-
17 րեսից, և Գառի բարկութիւնից. Որ նորա բար-
կութեան մեծ օրը եկել է, և ո՞վ կարող է կանգնել։

Գլ· Է

1 Եւ սորանից յետոյ տեսայ չորս հրեշտակ՝ կանգ-
նած երկրի չորս անկիւնումը, և երկրի չորս քա-
մին բռնած, որ քամի չ՚փչէ երկրի վերայ, ոչ էլ
2 ծովի վերայ, և ոչ մի ծառի վերայ։ Եւ մի ուրիշ
հրեշտակ տեսայ, որ դուրս էր գալիս արևելքից,

և կենդանի Աստուծոյ կնիքն ունէր , և մեծ ձայ-
նով աղաղակեց այն չորս հրեշտակներին որոնց իշ-
խանութիւն տրուեցաւ երկրին և ծովին վնասելու ,
3 Եւ ասում էր . Վնաս մի տաք ոչ երկրին, ոչ ծո-
վին . և ոչ էլ ծառերին , մինչև որ մեր Աստուծոյ
ծառաների վերայ կնիք դնենք նորանց ճակատնե-
4 րումը ։ Եւ կնքուածների համարը լսեցի հարիւր
քառասունևչորս հազար կնքուած Իսրայէլի որդ-
5 կանց ամեն ցեղերից ։ Յուդայի ցեղից տասնևեր-
կու հազար կնքուած . Ռուբէնի ցեղից տասնևեր-
կու հազար կնքուած . Գադի ցեղից տասնևերկու
6 հազար կնքուած . Ասերի ցեղից տասնևերկու հա-
զար կնքուած . Նեփթաղիմի ցեղից տասնևերկու
հազար կնքուած . Մանասէի ցեղից տասնևերկու
7 հազար կնքուած . Շմաւոնի ցեղից տասնևերկու
հազար կնքուած . Ղևիի ցեղից տասնևերկու հա-
զար կնքուած . Իսաքարի ցեղից տասնևերկու հա-
8 զար կնքուած . Զաբուղոնի ցեղից տասնևերկու
հազար կնքուած . Յովսէփի ցեղից տասնևերկու
հազար կնքուած . Բենիամինի ցեղից տասնևերկու
հազար կնքուած ։
9 Եւ սորանցից յետոյ տեսայ , և ահա մի շատ
ժողովուրդ որ ոչ ով չէր կարող համարել , ամեն
ազգից և ցեղերից և ժողովուրդներից և լեզու-
ներից , կանգնած աթոռի առաջին և Գառի ա-
ռաջին , և սպիտակ հանդերձներ հագած , և ի-
10 րանց ձեռքերումն արմաւենիներ . Եւ աղաղակում
էին բարձր ձայնով և ասում . Փրկութիւնը մեր
Աստուծուն , որ նստում է աթոռի վերայ , և Գա-
11 ռին ։ Եւ բոլոր հրեշտակները կանգնել էին աթո-
ռի և երէցների և չորս կենդանիների չորս կողմո-
վը , և ընկնում էին երեսների վերայ աթոռի ա-
12 ռաջին և երկրպագում էին Աստուծուն , Ասելով .

Ամէն . օրհնութիւնը և փառքը և իմաստութիւնը
և գոհութիւնը և պատիւը և կարողութիւնը և
զօրութիւնը լինի մեր Տէր Աստուծուն յաւիտեանս
13 յաւիտենից . Ամէն ։ Եւ երէցներից մէկը պատաս-
խանելով ասեց ինձ . Սորանք որ սպիտակ հան-
դերձներ են հագել՝ ո՞վ են և կամ ո՞րտեղից են
14 եկել ։ Եւ ես ասեցի նորան . Տէր , դու գիտես . և
նա ասեց ինձ . Սորանք են որ գալիս են այն մեծ
նեղութիւնից , և իրանց հանդերձները լուացին և
15 սպիտակացրին Գառի արիւնովը ։ Նորա համար Աս-
տուծոյ աթոռի առաջին են , և պաշտում են նո-
րան ցերեկ և գիշեր նորա տաճարի մէջ . և աթո-
ռի վերայ նստողը *իր վրանը կ'տարածէ նորանց
16 վերայ" . Այլ ևս ոչ կ'սովեն և ոչ կ'ծարաւեն , և
չի ընկնիլ նորանց վերայ ոչ արևը և ոչ մի տաքու-
17 թիւն ։ Որովհետև Գառը՝ որ աթոռի մէջ է , կը
հովուէ նորանց և կ'առաջնորդէ նորանց դէպի կեն-
դանի ջրերի աղբիւրներ . և Աստուած կ'սրբէ ա-
մեն արտասուքը նորանց աչքերից ։

ԳԼ. Ը

1 Եւ երբոր եօթներորդ կնիքը բացաւ , լռութիւն
եղաւ երկնքումը իբրև կէս ժամի չափ ։
2 Եւ տեսայ այն եօթը հրեշտակները որ Աստու-
ծոյ առաջին կանգնած էին . և եօթը փող տրուե-
3 ցաւ նորանց ։ Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ կանգ-
նեց սեղանի առաջին , և ոսկի խնկանոց ունէր . և
շատ խունկ տրուեցաւ նորան , որ բոլոր սուրբերի
աղօթքների հետ մատուցանէ այն ոսկի սեղանի վե-
4 րայ որ աթոռի առաջին էր ։ Եւ վեր ելաւ խնկերի

*Գրաբ . բնակուած է նորանց մէջ .

ծուխը սուրբերի աղօթքների հետ հրեշտակի ձեռ-
5 քիցն Աստուծոյ առաջին ։ Եւ հրեշտակն այն խըն-
կանոցն առաւ և լցրեց սեղանի կրակիցը, և գցեց
երկրի վերայ, և ձայներ և որոտմունքներ և փայ-
6 լատակներ և շարժ եղաւ ։ Եւ այն եօթը հրեշ-
տակները, որ եօթը փողերն ունէին, իրանց պատ-
րաստեցին որ փչեն ։
7 Եւ առաջին հրեշտակը փողը փչեց, և եղաւ կար-
կուտ և կրակ արիւնով խառնուած և ընկաւ երկ-
րի վերայ. և երկրի երրորդ բաժինը այրուեցաւ,
և ծառերի երրորդ բաժինը այրուեցաւ, և բոլոր
կանաչ խոտերը այրուեցան ։
8 Եւ երկրորդ հրեշտակը փողը փչեց, և իբրև մի
մեծ սար կրակով բորբոքուած ընկաւ ծովի մէջ,
9 և ծովի երրորդ բաժինն արիւն դառաւ ։ Եւ ծովի
մէջ շունչ ունեցող արարածների երրորդ բաժինը
մեռաւ, և նաւերի երրորդ բաժինը փճացաւ ։
10 Եւ երրորդ հրեշտակը փողը փչեց, և երկնքիցը
մի մեծ աստղ ընկաւ ղամբարի պէս բորբոքուած,
և ընկաւ գետերի երրորդ բաժնի և ջրերի աղբիւր-
11 ների վերայ ։ Եւ աստղի անունը Օշինդր էր. և
ջրերի երրորդ բաժինը օշինդր դառաւ, և շատ
մարդիկ մեռան ջրերիցը, որ դառնացել էին ։
12 Եւ չորրորդ հրեշտակը փողը փչեց, և վիրաւոր-
ուեցաւ արեգակի երրորդ բաժինը, և լուսնի եր-
րորդ բաժինը, և աստղերի երրորդ բաժինը. որ
նորանց երրորդ բաժինը խաւարուի. և ցերեկը եր-
րորդ բաժինը լոյս չ'տայ, և գիշերն էլ նմանապէս ։
13 Եւ տեսայ, և լսեցի մի հրեշտակ որ երկնքի մի-
ջովը թռչում էր և մեծ ձայնով ասում. Վա՜յ,
վա՜յ, վա՜յ նորանց որ բնակուած են երկրի վերայ,
այն երեք հրեշտակների փողի միւս ձայներիցը, ո-
րոնք փչելու են ։

ԳԼ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակը փողը փչեց. և տեսայ
մէկ աստղ էր երկնքիցը ընկել երկրի վերայ. և
2 անդունդի գուբի բանալին տրուեցաւ նորան, Եւ
անդունդի գուբը բացաւ, և գուբիցը ծուխը դուրս
էր գալիս մեծ հնոցի ծուխի պէս. և արեգակը և
օդը խաւարուեցան գուբի ծուխիցը ։
3 Եւ ծուխիցը մարախներ էին դուրս գալիս երկրի
վերայ. և նորանց իշխանութիւն տրուեցաւ ինչպէս
4 որ երկրի կարիճներն իշխանութիւն ունին ։ Եւ
նորանց ասուեցաւ, որ երկրի խոտին վնաս չ'տան,
և ոչ մի խոտի, և ոչ մի ծառի, բայց միայն այն
մարդկանց, որ Աստուծոյ կնիքը չ'ունին իրանց ճա-
5 կատների վերայ ։ Եւ տրուեցաւ նորանց, որ չ'սպա-
նեն նորանց, այլ հինգ ամիս չարչարեն նորանց. և
նորանց չարչարանքը կարիճի խայթոցի պէս էր երբ-
6 որ մի մարդի կծում է ։ Եւ այն օրերումը մարդիկ
մահը կ'խնդրեն և չեն գտնիլ նորան. և կ'ցանկա-
7 նան մեռնիլ, և մահը կ'փախչի նորանցից ։ Եւ մա-
րախների նմանութիւնը նման էր ձիերի. որ պատ-
րաստուած են պատերազմի համար, և նորանց
գլուխների վերայ իբրև պսակներ կային ոսկու նման.
և նորանց երեսները մարդկանց երեսների նման.
8 Եւ մազեր ունէին կանանց մազերի պէս. և նորանց
9 ատամներն առիւծի ատամների նման էին ։ Եւ զրահ-
ներ ունէին ինչպէս երկաթէ զրահներ. և նորանց
թևերի ձայնը նման էր շատ ձիերի կառքերի ձայ-
10 նի որ վազում են պատերազմ ։ Եւ ագիներ ունէին
կարիճների նման, և խայթոցներ կային նորանց ա-
գիներումը. և նորանց իշխանութիւնն էր հինգ ա-
11 միս մարդկանց չարչարել ։ Եւ իրանց վերայ թա-

դաւոր ունէին անդունդի հրեշտակը. և նորա ա-
նունը Եբրայեցերէն *Աբադդոն և Յունարէն նորա
12 անունն էր *Ապողլիոն: Մէկ վայն անցաւ, ահա
տակաւին երկու վայը գալիս են սորանից յետոյ:
13 Եւ վեցերորդ հրեշտակը փողը փչեց. և մի ձայն
լսեցի այն ոսկի սեղանի չորս եղջիւրներիցը որ Ա-
14 տուծոյ առաջին էին, Որ ասում էր վեցերորդ հրեշ-
տակին որ փողն ունէր. Արձակիր այն չորս հրեշ-
տակները որ Եփրատ մեծ գետի վերայ կապուած
15 են: Եւ այն չորս հրեշտակներն արձակուեցան, որ
պատրաստուած էին այն ժամի և օրուայ և ամ-
սուայ և տարուայ համար, որ մարդկանց երրորդ
16 բաժինը սպանեն: Եւ նորանց ձիաւոր զօրքի հա-
մարը երկու բիւրերի բիւրեր էր, և լսեցի նորանց
17 համարը: Եւ այսպէս տեսայ ձիանքը տեսիլքի մէջ,
և նորանց վերայ նստողներն ունէին հրեղէն և
յակնթեղէն և ծծմբեղէն զրահներ, և ձիերի
գլուխներն առիւծի գլուխների նման. և նորանց
բերանիցը կրակ և ծուխ և ծծումբ էր դուրս գա-
18 լիս: Եւ այս երեքիցը մարդկանց երրորդ բաժինը
մեռաւ, այսինքն կրակիցը և ծուխիցը և ծծումբի-
19 ցը, որ նորանց բերանիցը դուրս էր գալիս: Որով-
հետև նորանց զօրութիւնն իրանց բերաններումն է,
և իրանց ագիներումը, որ նորանց ագիներն օձի
նման են, որ գլուխներ ունէին և նորանցով վնա-
20 սում էին: Եւ մնացեալ մարդիկը որ չ'մեռան այս
վէրքերիցը, չ'ապաշխարեցին իրանց ձեռքերի գոր-
ծերիցը, որ չ'երկրպագեն դևերին և ոսկէ և ար-
ծաթէ և պղնձէ և քարէ և փայտէ կուռքերին,
որ ոչ տեսնել կարող են, և ոչ լսել, և ոչ գնալ:
21 Եւ չ'ապաշխարեցին իրանց մարդասպանութիւննե-

*Այսինքն՝ կորուսիչ

րիցը, և ոչ էլ իրանց կախարդութիւններիցը, և
ոչ էլ իրանց պոռնկութիւնիցը, և ոչ իրանց գո-
ղութիւններիցը:

ԳԼ. Ժ

1 Եւ մի ուրիշ զօրաւոր հրեշտակ տեսայ երկնքիցը
վայր գալիս, և ամպ հագած և գլխին ծիածան. և
նորա երեսը արեգակի նման. և նորա ոտները կրա-
2 կի սիւնի պէս: Եւ նա իր ձեռքումը մի փոքր գիրք
ունէր բացած, և իր աջ ոտքը դրաւ ծովի վերայ,
3 և ձախը հողի վերայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց,
ինչպէս առիւծն գոռում է. և երբոր աղաղակեց,
այն եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսեցին:
4 Եւ երբոր եօթը որոտմունքն իրանց ձայնովը խօսե-
ցին, պիտի գրէի. և ձայն լսեցի երկնքիցը որ ա-
սում էր. Կնքիր այն բաները որ եօթը որոտմունքը
5 խօսեցին, և սորանք մի գրիր: Եւ այն հրեշտակը
որ տեսայ ծովի վերայ և ցամաքի վերայ կանգնած,
6 իր աջ ձեռքը դէպի երկինքը բարձրացրեց, Եւ
երդուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանիովը, որ
ստեղծեց երկինքը և ինչ որ նորանում է, և երկի-
րը և ինչ որ նորանում է, և ծովը և ինչ որ նո-
7 րանում է. Թէ այլևս ժամանակ չ'կայ: Բայց եօթ-
ներորդ հրեշտակի ձայնի օրերումն երբոր փողը կը
փչէ, Աստուծոյ խորհուրդն էլ կ'կատարուի, ինչ-
պէս աւետարանեց իր ծառայ մարգարէներին:
8 Եւ այն ձայնն որ երկնքիցը լսեցի դարձեալ խօ-
սեց ինձ հետ և ասեց. Գնա առ այն բաց գրքոյ-
կը, որ ծովի և ցամաքի վերայ կանգնած հրեշտա-
9 կի ձեռքին է: Եւ ես գնացի հրեշտակի մօտ և
ասեցի նորան. Տուր ինձ այդ գրքոյկը. և նա ասեց
ինձ. Առ և կեր սորան, և սա կ'դառնանայ փո-

րումդ, բայց բերանումդ քաղցր կ'լինի մեղրի պէս։
10 Եւ գրքոյկն առայ հրեշտակի ձեռքիցը և կերայ
նորան. և բերանումս քաղցր էր մեղրի պէս. և
11 երբոր կերայ նորան, դառնացաւ փորումս։ Եւ ա-
սեց ինձ. Պէտք է դու դարձեալ մարգարէանաս
ժողովուրդների և ազգերի և լեզուների և շատ
թագաւորների վերայ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ ինձ մի եղէգ տրուեցաւ գաւազանի նման. և
հրեշտակը կանգնած էր և ինձ ասում էր. Վեր կաց
և չափիր Աստուծոյ տաճարը և սեղանը և նորա-
2 նում երկրպագողներին։ Եւ գաւիթը, որ տաճա-
րիցը դուրս է, դուրս գցիր և մի չափիր, որովհե-
տև նա հեթանոսներին է տրուած. և սուրբ քա-
3 ղաքը կոխ կ'տան քառասուներկու ամիս։ Եւ իմ
երկու վկաներին կ'տամ, և հազար երկու հարիւր-
4 ևվաթսուն օր կ'մարգարէանան քուրձ հագած։ Սո-
րանք են այն երկու ձիթենիները և երկու ճրագա-
կալները, որ երկրի Աստուծոյ առաջին կանգնած
5 են։ Եւ եթէ մէկը կամենայ նորանց վնասել, կրակ
է դուրս գալիս նորանց բերանիցը և լափում է նո-
րանց թշնամիներին. և եթէ մէկը կամենայ վնա-
6 սել նորանց՝ այսպէս պիտի սատակէ։ Սորանք իշ-
խանութիւն ունին երկինքը փակելու որ անձրև չը
գայ նորանց մարգարէութեան օրերումը. և իշխա-
նութիւն ունին ջրերի վերայ նորանց արիւն դար-
ձընելու, և երկիրն ամեն կերպ պատուհասներով
7 հարուածելու քանի անգամ որ կամենան։ Եւ
երբոր իրանց վկայութիւնը կ'կատարեն, այն ժամա-
նակ անդունդիցը դուրս եկող գազանը կռիւ կ'տայ
նորանց հետ, և կ'յաղթէ նորանց և կ'սպանէ նո-

8 րանց։ Եւ նորանց դիերը ընկած կ'մնան այն մեծ
քաղաքի հրապարակումը, որի անունն հոգևորա-
պէս Սոդոմ և Եգիպտոս է կոչվում. որտեղ մեր
9 Տէրն էլ խաչուեցաւ։ Եւ կ'տեսնեն ժողովուրդնե-
րից և ցեղերից և լեզուներից և ազգերից նորանց
դիերը երեք օր և կէս, և թող չեն տալ որ նո-
10 րանց դնեն գերեզմանների մէջ։ Եւ երկրի վերայ
բնակողները կ'ուրախանան և կ'խնդան. և իրար ըն-
ծաներ կ'ուղարկեն. որ այս երկու մարգարէները
չարչարեցին երկրի վերայ բնակողներին։
11 Եւ երեքևկէս օրից յետոյ Աստուածանից կեն-
դանի հոգի եկաւ մտաւ նորանց մէջ, և նորանք
իրանց ոտների վերայ կանգնեցին. և մեծ վախ ըն-
12 կաւ նորանց տեսնողների վերայ։ Եւ մեծ ձայն
*լսեցի երկնքիցը որ ասում էր նորանց. Վեր ելէք
այստեղ. և վեր ելան երկինքն ամպով. և նորանց
13 թշնամիները տեսան նորանց։ Եւ նոյն ժամումը
մեծ շարժ եղաւ, և քաղաքի տասներորդ բաժինը
կործանուեցաւ, և այն շարժումից եօթը հազար
մարդիկ սպանուեցան. և մնացեալները մեծ վախով
բռնուեցան, և փառք տուին երկնքի Աստուծուն։
14 Երկրորդ վայն անցաւ, և երրորդ վայը գալիս է
շուտով։
15 Եւ եօթներորդ հրեշտակը փողը փչեց, և մեծ
ձայներ եղան երկնքումն որ ասում էին. Աշխարհ-
քի թագաւորութիւնները մեր Տիրոջը և նորա
Քրիստոսինը եղան. և նա կ'թագաւորէ յաւիտ-
16 եանս յաւիտենից։ Եւ քսանևչորս երէցները որ
Աստուծոյ առաջին իրանց աթոռների վերայ նըս-
տած էին, իրանց երեսների վերայ ընկան և երկըր-
17 պագեցին Աստուծուն, ասելով. Գոհանում ենք

*Ոմանք՝ լսեցին

քեզանից, Տէր Աստուած Ամենակալ, որ էիր և
ես, [և որ գալու ես] որ քո մեծ զօրութիւնն ա-
18 ռար և թագաւորեցիր ։ Եւ ազգերը բարկացան, և
եկաւ քո բարկութիւնը, և մեռելների ժամանակը
որ դատուին. և որ վարձքը տաս քո ծառայ մար-
գարէներին և սուրբերին, և քո անունից վախեցող-
ներին՝ փոքրներին և մեծերին, և երկիրն ապակա-
նողներին ապականես ։
19 Եւ Աստուծոյ տաճարը որ երկնքումն էր բաց-
ուեցաւ, և երևեցաւ Աստուծոյ տապանակը իր
տաճարումը, և եղան փայլատակներ և ձայներ և
որոտմունքներ, և շարժ և մեծ կարկուտ ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ մի մեծ նշան երևեցաւ երկնքումը. մի կին՝
արեգակն իր վերայ առած. և լուսինը նորա ոտնե-
րի տակ. և նորա գլխի վերայ տասներկու աս-
2 տղերի պսակ ։ Եւ նա յղի լինելով՝ աղաղակում էր
երկունք քաշելով և չարչարուելով որ ծնէ ։
3 Եւ մի ուրիշ նշան երևեցաւ երկնքումը. և ահա
մի մեծ վիշապ՝ կրակի պէս կարմիր. որ եօթը գլուխ
ունէր և տասն եղջիւր, և նորա գլուխների վերայ
4 եօթը թագ. Եւ նորա ագին քաշում էր երկնքի
աստղերի երրորդ բաժինը, և նորանց գցեց երկրի
վերայ և վիշապը կանգնած էր այն կնկայ առաջին
որ պիտի ծնէր, որ երբոր ծնէ, կուլ տայ նորա զա-
5 ւակին ։ Եւ նա մի արու զաւակ ծնեց, որ պիտի
բոլոր ազգերին երկաթէ գաւազանով հովուէ. և
նորա որդին յափշտակուեցաւ Աստուծոյ մօտ և
6 նորա աթոռի մօտ ։ Եւ կինը փախաւ անապատը,
ուր Աստուածանից պատրաստուած տեղ ունէր,
որ այնտեղ կերակրեն նորան հազար երկու հա-
րիւր և վաթսուն օր ։

7 Եւ պատերազմ եղաւ երկնքումը. Միքայէլը և
նորա հրեշտակները պատերազմեցին վիշապի դէմ.
8 և պատերազմեց վիշապը և իր զօրքերը. Եւ չ'կա-
րողացան դէմ կենալ, և ոչ էլ տեղ գտնուեցաւ
9 նորանց համար երկնքումը ։ Եւ վայր գցուեցաւ մեծ
վիշապը՝ այն առաջի օձը, որ Բանսարկու և սա-
տանայ է կոչվում, այն բովանդակ աշխարհքը մո-
լորեցնողը վայր գցուեցաւ երկրի վերայ և իր հրեշ-
10 տակներն էլ իրան հետ վայր գցուեցան ։ Եւ մեծ
ձայն լսեցի որ ասում էր երկնքումը. Հիմա փրկու-
թիւնը և զօրութիւնը և թագաւորութիւնը եղաւ
մեր Աստուծուն, և իշխանութիւնը եղաւ նորա
Օծեալին, որ վայր գցուեցաւ մեր եղբայրների չա-
րախօսը, որ չարախօսում էր նորանցից Աստուծոյ
11 առաջին ցերեկ և գիշեր. Եւ նորանք յաղթեցին
նորան՝ Գառի արիւնովը և *իրանց վկայութեան
խօսքովը. և չ'սիրեցին իրանց հոգին մինչև ի մահ ։
12 Սորա համար ուրախացէք, ով երկինք, և որ բը-
նակուած էք նորանում. վա՜յ երկրին և ծովին, [և
նորանցում բնակողներին] որ Բանսարկուն վայր ի-
ջաւ ձեզ մօտ, որ մեծ բարկութիւն ունի, գի-
տենալով, որ քիչ ժամանակ ունի ։
13 Եւ երբոր տեսաւ վիշապը, թէ վայր գցուեցաւ
երկրի վերայ, ընկաւ այն կնկայ ետևից որ արու
14 զաւակը ծնեց ։ Եւ այն կնկան երկու մեծ արծուի
թև տրուեցաւ, որ թռչի անապատն՝ իր տեղը.
ուր որ կերակրվում է մի ժամանակ, և ժամա-
15 նակներ և կէս ժամանակ օձի երեսիցը ։ Եւ օձն իր
բերանիցը գետի պէս ջուր թափեց այն կնկայ ե-
16 տևից, որ նորան ընկղմէ ։ Եւ երկիրն օգնեց այն
կնկան, և երկիրն իր բերանը բացաւ և այն գետը

---

*Գրաբ. Նորա

կուլ տուաւ որ վիշապն իր բերանիցը թափեց։
17 Եւ վիշապը բարկացաւ այն կնկայ վերայ, և գնաց
պատերազմ անելու նորա միւս զաւակների հետ,
որ Աստուծոյ պատուիրանքները պահում են, և
Յիսուսի [Քրիստոսի] վկայութիւնն ունին ։
18 Եւ ծովի աւազի վերայ *կանգնեց։

ԳԼ. ԺԳ

1 Եւ տեսայ ծովիցը մի գազան դուրս գալիս, որ
եօթը գլուխ ունէր և տասը եղջիւր, և նորա եղ-
ջիւրների վերայ տասը թագ, և նորա գլուխների
2 վերայ հայհոյութեան անուն։ Եւ այն գազանը որ
տեսայ ինձու նման էր, և նորա ոտները արջի ոտ-
ների նման, և նորա բերանն առիւծի բերանի նման.
և վիշապը տուաւ նորան իր զօրութիւնը և իր ա-
3 թոռը և մեծ իշխանութիւն։ Եւ տեսայ նորա
գլուխներից մէկը մեռնելու չափ խոցուած. և նո-
րա մահի վէրքը ողջացաւ. և բոլոր երկիրը զար-
4 մացաւ այն գազանի ետևիցը։ Եւ երկրպագեցին
այն վիշապին, որ իշխանութիւն տուաւ այն գազա-
նին, և երկրպագեցին գազանին ասելով. Ո՞վ է այս
գազանի նման. կամ ո՞վ է կարող դորա հետ պա-
5 տերազմել։ Եւ նորան տրուեցաւ մի բերան մեծ
մեծ բաներ և հայհոյանք խօսող, և իշխանութիւն
տրուեցաւ նորան քառասուներկու ամիս էր ու-
6 զածն անելու։ Եւ նա իր բերանը բացաւ Աստու-
ծոյ դէմ հայհոյանքով, որ հայհոյէ նորա անունին
7 և նորա խորանին, և երկնքումը բնակողներին։ Եւ
նորան իշխանութիւն տրուեցաւ որ սուրբերի հետ
պատերազմ անէ և նորանց յաղթէ. և իշխանու-

*Ոմանք՝ կանգնեցի

թիւն տրուեցաւ նորան ամեն ցեղի և լեզուի և
8 ազգի վերայ. Եւ կ՚երկրպագեն նորան երկրի վե-
րայ բոլոր բնակողները, որոնց անունները գրուած
չեն Գառի կեանքի գրքի մէջ որ աշխարհքի սկզբիցը
9 հետէ մորթուած է։ Եթէ մէկն ականջ ունի թող
10 լսէ։ Եթէ մէկը գերութեան քաշէ, գերութեան
պիտի քաշուի. եթէ մէկը սրով սպանէ, պիտի
սրով սպանուի. այստեղ է սուրբերի համբերու-
թիւնը և հաւատքը։
11 Եւ ես տեսայ մի ուրիշ գազան դուրս գալիս
երկրիցը, և երկու եղջիւր ունէր գառի նման.
12 բայց խօսում էր վիշապի նման։ Եւ այն առաջի
գազանի բոլոր իշխանութիւնը բանեցնում էր նո-
րա առաջին. և այնպէս էր անում, որ երկիրը և
նորա վերայ բնակողները երկրպագեն այն առաջի
13 գազանին որի մահի վէրքը ողջացել էր։ Եւ մեծ
նշաններ է անում, որ երկնքիցը կրակ էլ է վայր
բերել տալիս երկրի վերայ մարդկանց առաջին։
14 Եւ մոլորեցնում է երկրի վերայ բնակողներին այն
նշաններովը որ տրուած էին նորա ձեռքը, որ գոր-
ծէ գազանի առաջին, ասելով երկրի բնակողներին
որ պատկեր շինեն այն գազանին որ սուրի վէրքն
15 ունէր և ապրեց։ Եւ տրուեցաւ նորան, որ հոգի
տայ գազանի պատկերին, որ պատկերը խօսի էլ.
և անէ էլ՝ որ նորանք, որ չ՚երկրպագեն գազանի
16 պատկերին, սպանուին։ Եւ ստիպում է ամենին՝
փոքրերին և մեծամեծներին, հարուստներին և աղ-
քատներին, ազատներին և ծառաներին, որ նորանց
դրոշմ տայ նորանց աջ ձեռքումը կամ նորանց
17 ճակատումը։ Եւ որ ոչ ով չ՚կարողանայ գնել
կամ ծախել բացի նորանից, որ գազանի դրոշմը
կամ նորա անունն ունի կամ նորա անունի համա-
18 րը։ Այստեղ է իմաստութիւնը. ով որ միտք ու-

նի թող գաղանի թիւը համարէ․ որ մարդի թիւ-
է, և նորա թիւը վեց հարիւր վաթսունևվեց է։

ԳԼ․ ԺԴ

1 Եւ տեսայ և ահա Գառը կանգնած էր Սիօն սա-
րի վերայ, և նորա հետ հարիւր քառասունևչորս
հազար հոգիք, որ [նորա անունը և] նորա Հօր ա-
նունը գրած ունէին իրանց ճակատների վերայ։
2 Եւ ձայն լսեցի երկնքիցը՝ շատ ջրերի ձայնի պէս,
և մեծ որոտմունքների ձայնի պէս․ և քնար ածող-
ների ձայնի պէս լսեցի, որ իրանց քնարներն ա-
3 ծում էին։ Եւ երգում էին մի նոր երգ աթոռի
առաջին և չորս կենդանիների առաջին և երեցնե-
րի առաջին․ և ոչ ով չէր կարող ուսանել այն
երգը բացի այն հարիւր քառասունևչորս հազար-
4 ներից, որ երկրից փրկուել էին։ Սորանք են որ
կանանց հետ չ'խառնակուեցան, որովհետև կոյս
են․ սորանք են որ Գառի ետևից գնում են ուր
որ նա գնայ․ սորանք փրկուեցան մարդկանցից Աս-
5 տուծուն և Գառին իբրև երախայրի։ Եւ նորանց
բերանումը նենգութիւն չ'գտնուեցաւ, որովհետև
անարատ են [Աստուծոյ աթոռի առաջին։]
6 Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի
մէջ, որ յաւիտենական աւետիք ունէր, որ աւե-
տարանէր երկրի վերայ բնակողներին․ և ամեն ազ-
7 գի և ցեղի և լեզուի և ժողովրդի։ Եւ մեծ ձայնով
ասում էր․ Վախեցէք Աստուածանից, և փառք
տուէք նորան․ որովհետև նորա դատաստանի ժա-
մը եկաւ․ և երկրպագեցէք երկինքը և երկիրը և
ծովը և ջրերի աղբիւրները Ստեղծողին։
8 Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ նորա ետևից ասե-
լով․ Ընկա՛ւ, ընկա՛ւ Բաբելոն մեծ քաղաքը, ո-

րովհետև իր պոռնկութեան բարկութեան գինու-
9 ցը խմեցրեց բոլոր ազգերին․ Եւ մի երրորդ հրեշ-
տակ եկաւ նորանց ետևից մեծ ձայնով ասելով․
Ով որ երկրպագութիւն է անում գազանին և նո-
րա պատկերին և դրոշմ ընդունում իր ճակատի
10 կամ իր [աջ] ձեռքի վերայ, Այնպիսին Աստու-
ծոյ սրտմտութեան *գինուցը պիտի խմէ, որ ան-
խառն ածուած է նորա բարկութեան բաժակի
մէջ․ և պիտի տանջուի կրակի և ծծմբի մէջ սուրբ
11 հրեշտակների և Գառի առաջին։ Եւ նորանց տան-
ջանքի ծուխը վեր է ելնում յաւիտեանս յաւիտե-
նից․ և հանգիստ չ'ունին ցերեկ և գիշեր նորանք
որ երկրպագեցին գազանին և նորա պատկերին, և
ով որ էլ ընդունում է նորա անունի դրոշմը։
12 Այստեղ է սուրբերի համբերութիւնը․ այստեղ
են Աստուծոյ պատուիրանքները և Յիսուսի հա-
ւատքը պահողները։
13 Եւ երկնքից մի ձայն լսեցի որ ասում էր ինձ․
Գրիր, Երանելի են այն մեռելները որ Տէրումն են
ննջում այսուհետև․ այո, Հոգին ասում է որ ի-
րանց աշխատանքիցը հանգիստ կ'առնեն, և նորանց
գործերը գնում են նորանց ետևից։
14 Եւ տեսայ, և ահա մի սպիտակ ամպ, և ամպի
վերայ մէկը նստած մարդի Որդու նման, որ իր գլ-
խի վերայ ոսկի պսակ, և իր ձեռքումը սուր գե-
րանդի ունէր։
15 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ տաճարից,
որ մեծ ձայնով աղաղակում էր ամպի վերայ նըս-
տողին․ Ուղարկիր քո գերանդին և հնձիր․ որով-
հետև քո ժամանակն եկաւ հնձելու, որ երկրի
16 հունձքը հասել է։ Եւ ամպի վերայ նստողը վայր

*Գիրք․ բաժակիցը

դցեց իր գերանդին երկրի վերայ, և երկիրը հըն-
ձուեցաւ ։
17 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ տաճարիցը
որ երկնքումն է, որ նա էլ սուր գերանդի ունէր։
18 Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս եկաւ սեղանիցը որ
իշխանութիւն ունէր կրակի վերայ, և մեծ աղա-
ղակով գոչեց սուր գերանդին ունեցողին ասելով.
Ուղարկիր քո սուր գերանդին և երկրի այգու ող-
կոյզները քաղիր, որովհետև նորա խաղողը հասել
19 է ։ Եւ հրեշտակն իր գերանդին դցեց երկրի վե-
րայ, և երկրի այգու խաղողը քաղեց, և դցեց Աս-
20 տուծոյ բարկութեան մեծ հնձանի մէջ։ Եւ հըն-
ձանը կոխուեցաւ քաղաքիցը դուրս, և դուրս ե-
կաւ արիւնը հնձանիցը մինչև ձիերի սանձը հա-
զարվեց հարիւր ասպարէզի չափ ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսայ մի ուրիշ մեծ և զարմանալի նշան եր-
կընքումը, եօթը հրեշտակ որ վերջի եօթը պա-
տուհասներն ունէին. որովհետև Աստուծոյ բար-
2 կութիւնը նորանցով կատարուեցաւ ։ Եւ տեսայ
իբրև ապակեղէն ծով կրակով խառնուած. և նո-
րանց որ յաղթում են գազանին և նորա պատկե-
րին և նորա դրոշմին և նորա անունի թւին, որ
կանգնած էին ապակեղէն ծովի վերայ, և Աստու-
3 ծոյ քնարներն ունէին ։ Եւ երգում էին Աստու-
ծոյ ծառայ Մովսէսի երգը և Գառի երգը, ասե-
լով. Մեծ և զարմանալի են քո գործերը, Տէր Աս-
տուած Ամենակալ, արդար և ճշմարիտ են քո ճա-
4 նապարհները, ով սուրբերի Թագաւոր ։ Ո՞վ է որ
քեզանից չ՚վախենայ, ով Տէր, և քո անունը չը
փառաւորէ. որ միայն դու ես սուրբ. վասնզի բո-

լոր ազգերը կ՚գան և քո առաջին երկրպագու-
թիւն կ՚անեն, որովհետև քո իրաւունքները յայտ-
նուեցան ։
5 Եւ սորանից յետոյ տեսայ, և ահա բացուեցաւ
6 վկայութեան խորանի տաճարը երկնքումը ։ Եւ
դուրս եկան տաճարիցը այն եօթը հրեշտակները,
որ այն եօթը պատուհասներն ունէին, մաքուր և
պայծառ կտաւ հագած, և ստինքների մօտով ոս-
7 կէ գօտիներ կապած։ Եւ այն չորս կենդանիներից
մէկն այս եօթը հրեշտակներին եօթը ոսկի սկա-
ւառակ տուաւ՝ յաւիտեանս յաւիտենից կենդանի
8 Աստուծոյ բարկութիւնովը լիքը ։ Եւ տաճարը լըց-
ուեցաւ Աստուծոյ փառքից և նորա զօրութիւնից
ելած ծուխովը. և ոչ ով կարող չէր մտնել տա-
ճարը, մինչև որ այն եօթը հրեշտակների եօթը
պատուհասները կատարուէին ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ մեծ ձայն լսեցի տաճարիցը որ ասում էր այն
եօթը հրեշտակներին. Գնացէք և Աստուծոյ բար-
կութեան սկաւառակները թափեցէք երկրի վերայ։
2 Եւ առաջինը գնաց և իր սկաւառակը թափեց
երկրի վերայ, և չարաչար պալարներ եղան այն
մարդկանց վերայ, որ գազանի դրոշմն ունէին և
նորա պատկերին երկրպագում էին ։
3 Եւ երկրորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց
ծովը, և արիւն դառաւ մեռածի արեան նման. և
ամեն կենդանի շունչ սատակեց որ ծովումն էր ։
4 Եւ երրորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց
գետերի և ջրերի աղբիւրների մէջ և արիւն եղաւ։
5 Եւ ձայն լսեցի ջրերի հրեշտակիցը որ ասում էր.
Արդար ես, Տէր, որ ես և էիր և սուրբ՝ որ այս

6 դատաստաններն արիր։ Որովհետև սուրբերի և
մարգարէների արիւնը թափեցին. նորա համար էլ
7 արիւն տուիր նորանց խմելու, որ արժան են։ Եւ
մի ուրիշը լսեցի սեղանիցը որ ասում էր. Այո,
Տէր Աստուած Ամենակալ, ճշմարիտ և արդար են
քո դատաստանները։
8 Եւ չորրորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց
9 արեգակի վերայ։ Եւ տրուեցաւ նորան որ մարդ-
կանց խորշակահար անէ կրակով. և խորշակահար
եղան մարդիկ սաստիկ տաքով և հայհոյեցին Ա-
տուծոյ անունին որ այս պատուհասների վերայ իշ-
խանութիւն ունի. և չ՚ապաշխարեցին որ փառք
տան նորան։
10 Եւ հինգերորդ հրեշտակն իր սկաւառակը թա-
փեց գազանի աթոռի վերայ. և նորա թագաւո-
րութիւնը խաւարուած եղաւ. և իրանց լեզունե-
11 րը ծամում էին տանջանքիցը. Եւ երկնքի Աստու-
ծուն հայհոյեցին իրանց ցաւերի և պալարների
պատճառովը. և չ՚ապաշխարեցին իրանց գոր-
ծերիցը։
12 Եւ վեցերորդ հրեշտակն իր սկաւառակը թափեց
մեծ գետ՝ Եփրատի վերայ, և նորա ջուրը ցամա-
քեց որ արևելքի թագաւորների ճանապարհը պատ-
13 րաստուի։ Եւ տեսայ՝ վիշապի բերանիցը և գազա-
նի բերանիցը և սուտ մարգարէի բերանիցը երեք
14 պիղծ հոգի եէն [illegible] գորտերի նման։ Որով-
հետև նորանք դևերի ոգիք են, որ նշաններ են ա-
նում, նորանք գնում են երկրի և բովանդակ տիե-
զերքի թագաւորների մօտ որ նորանց ժողովեն Ա-
մենակարող Աստուծոյ այն մեծ օրուայ պատերազ-
15 մի համար։ Ահա գալիս եմ գողի նման, երանի
նորան որ արթուն է, և իր հանդերձները պահում
է. որ մերկ ման չ՚գայ, և նորա ամօթանքը չ՚տես-

16 նեն. Եւ ժողովեցին նորանց այն տեղ որ Եբրայե-
ցերէն Արմագեդոն է կոչվում։
17 Եւ եօթներորդ հրեշտակն իր սկաւառակը թա-
փեց օդի վերայ. և մեծ ձայն դուրս եկաւ երկնքի
տաճարիցը և աթոռիցը որ ասում էր. Եղա՛ւ։
18 Եւ եղան ձայներ և փայլատակներ և որոտմունք,
և մեծ շարժ եղաւ որ այնպիսի չէր եղած քանի որ
մարդիկ երկրի վերայ են՝ այնպիսի մեծ շարժ էր.
19 Եւ մեծ քաղաքը երեք կտոր եղաւ, և ազգերի
քաղաքները վայր ընկան. և մեծ Բաբելոնը յիշուե-
ցաւ Աստուծոյ առաջին, որ իր ցասման բարկու-
20 թեան գինու բաժակը նորան տայ։ Եւ ամեն կղզի
21 փախաւ, և սարերը չ՚գտնուեցան։ Եւ երկնքի-
ցը տաղանդաչափ մեծ մեծ կարկուտ էր իջնում
մարդկանց վերայ, և մարդիկ հայհոյեցին Աստու-
ծուն այն կարկտի հարուածի համար, որ սաստիկ
մեծ է նորա պատուհասը։

ԳԼ. ԺԷ

1 Եւ այն եօթը սկաւառակներն ունեցող եօթը
հրեշտակներից մէկն եկաւ և խօսեց ինձ հետ ասե-
լով. Եկ քեզ ցոյց տամ այն մեծ պոռնկի դա-
տաստանը, որ այն շատ ջրերի վերայ նստում է,
2 Որի հետ պոռնկուեցան երկրի թագաւորները և
երկրի բնակիչները նորա պոռնկութեան գինովն
3 արբեցին։ Եւ ինձ առաւ տարաւ հոգով մի անա-
պատ. և տեսայ մի կին՝ նստած կարմիր գազանի
վերայ՝ լիքը հայհոյութեան անուններով որ եօթը
4 գլուխ ունէր և տասը եղջիւր։ Եւ այն կինը որ
ծիրանի և կարմիր էր հագած, և ոսկով և պատ-
ուական ակունքներով և մարգարիտներով զար-
դարուած մի ոսկի բաժակ ունէր իր ձեռքումը,
լիքը գարշելութիւններով և իր պիղծ պոռնկու-

5 թիւնովը, Եւ նորա ճակատումը գրուած էր մի
անուն՝ խորհուրդ, Մեծ Բաբիլոն, պոռնիկների և
6 երկրի գարշելիների մայրը։ Եւ տեսայ այն կինը
արբած սուրբերի արիւնովը և Յիսուսի վկաների
արիւնովը. և երբոր տեսայ նորան, մեծ զարման-
7 քով զարմացայ։ Եւ հրեշտակն ասեց ինձ. Ի՞նչու-
համար զարմացար. ես ասեմ քեզ այդ կնկայ խոր-
հուրդը, և այն գազանինը, որ նորան վեր է ա-
ռել, որ եօթը գլուխը ունի և տասը եղջիւրը։
8 Գազանը որ տեսար, կար և չ'կայ, և անդունդիցն
է դուրս գալու և կորուստն է գնալու, և կ'զար-
մանան երկրի վերայ բնակողները որոնց անունները
գրուած չեն կեանքի գրքի մէջ աշխարհքի սկզբից
հետէ, երբոր տեսնեն այդ գազանը որ կար, և չը
9 կայ, թէև է։ Այստեղ է այն միտքը որ իմաս-
տութիւն ունի. այն եօթը գլուխը եօթն սարեր են
որ կինը նորանց վերայ նստած է. և եօթը թա-
10 գաւորներ են. Հինգը ընկան, և մէկը կայ, միւսը
դեռ չէ եկել. և երբոր գայ մի քիչ ժամանակ
11 պէտք է մնայ։ Եւ այն գազանը որ կար և չ'կայ,
նա էլ ութերորդն է և այն եօթնիցն է, և կո-
12 րուստն է գնում, Եւ այն տասը եղջիւրը որ տե-
սար, տասը թագաւորներ են. որոնք դեռ թագա-
ւորութիւն չեն առել, այլ թագաւորի պէս իշ-
խանութիւն են առնում մէկ ժամ այն գազանի հետ,
13 Սորանք մէկ կամք ունին, և իրանց զօրութիւնը և
14 իշխանութիւնը կ'տան գազանին։ Սորանք պատե-
րազմ կ'անեն Գառի հետ, և Գառը կ'յաղթէ նո-
րանց, որովհետև տէրերի Տէր է, և թագաւորնե-
րի Թագաւոր. և նորանք որ նորա հետ են, կոչ-
15 ուած, ընտրուած և *հաւատարիմ են։ Եւ ասեց

*Գրաբ. հաւատացեալ

ինձ. Այդ ջրերը, որ տեսար ուր որ պոռնիկը նըս-
տած է, ժողովուրդներ են, և բազմութիւններ և
16 ազգեր և լեզուներ։ Եւ տասը եղջիւրը, որ տեսար
գազանի վերայ, նորանք կ'ատեն պոռնկին, և նո-
րան ամայի և մերկ կ'անեն, և նորա միսերը կ'ու-
17 տեն և կրակով կ'այրեն նորան։ Որովհետև Աստ-
ուած դրաւ նորանց սրտերի մէջ որ նորա կամքն
անեն, և միակամ լինեն, և իրանց թագաւորու-
թիւնը տան գազանին մինչև որ Աստուծոյ խօսքե-
18 րը կատարուին։ Եւ կինը, որ տեսար, այն մեծ
քաղաքն է, որ թագաւորութիւն ունի երկրի
թագաւորների վերայ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ սորանից յետոյ տեսայ մի հրեշտակ երկնքիցը
վայր գալիս. որ մեծ իշխանութիւն ունէր, և եր-
2 կիրը լուսաւորուեցաւ նորա փառքիցը։ Եւ զօրու-
թեամբ աղաղակեց մեծ ձայնով և ասեց. Ընկա՛ւ,
ընկա՛ւ մեծ Բաբիլոնը, և եղաւ դևերի բնակու-
թիւն և ամեն պիղծ հոգու արգելանոց, և ամեն
3 անսուրբ և ատելի թռչունի վանդակ։ Որովհետև
նորա պոռնկութեան բարկութեան գինուցը խմե-
ցին բոլոր ազգերը, և երկրի թագաւորները նորա
հետ պոռնկուեցան. և երկրի վաճառականները
նորա զեղխութեան զօրութիւնիցը հարստացան։
4 Եւ մի ուրիշ ձայն լսեցի երկնքիցը որ ասում էր.
Դուրս եկէք դորանից, ով իմ ժողովուրդ, որ
մասնակից չ'լինիք դորա մեղքերին, և որ դորա
5 պատուհասիցը չ'ընդունիք. Վասնզի դորա մեղքե-
րը հասան մինչև երկինքը, և Աստուած յիշեց դո-
6 րա անիրաւութիւնները։ Հատուցում արէք դո-
րան ինչպէս դա հատուցում տուաւ ձեզ, և եր-

կուպատիկ տուէք դորան իր գործերի չափովը. այն
բաժակը որ դա լցրեց, լցրէք դորա համար երկու-
7 պատիկ ։ Եւ որչափ որ իրան փառաւորեց և զեղ-
խացաւ, այնչափ տանջանք և սուգ տուէք դորան.
որովհետև նա իր սրտումն ասում է. Թագուհի եմ
նստած, և այրի չեմ, և բնաւ սուգ չեմ տեսնիլ ։
8 Նորա համար մէկ օրում պիտի գան դորա վերայ
իր հարուածները՝ մահ, և սուգ, և սով, և կրա-
կով կ'այրուի, որովհետև զօրաւոր է Տէր Աստ-
9 ուածը՝ դորա դատաստանն անողը ։ Եւ լաց և կոծ
կ'անեն դորա վերայ երկրի թագաւորները որ դորա
հետ պոռնկացան և զեղխութիւն արին, երբոր
10 կ'տեսնեն դորա այրուելու ծուխը, հեռու կանգ-
նած դորա տանջանքի վախիցը, և կ'ասեն. Վա՜յ,
վա՜յ քեզ, մեծ քաղաքդ Բաբելոն, զօրաւոր քա-
11 ղաք. որ մէկ ժամում եկաւ քո դատաստանը ։ Եւ
երկրի վաճառականները ողբ և սուգ կ'անեն նորա
վերայ, որ այլ ևս ոչ ոք չէ առնում նորանց ապ-
12 րանքը ։ Ոսկու և արծաթի և պատուական ակունք-
ների և մարգարիտի և բեհեզի և ծիրանիի և մե-
տաքսի և որդան կարմիրի ապրանքը, և ամեն խնկէ
փայտը և ամեն փղոսկրեայ անօթը, և ամեն ազ-
նիւ փայտից և պղնձից և երկաթից և մարմարիո-
13 նից շինած անօթը, Եւ կինամոնը և խունկերը և
իւղը և կնդրուկը և գինին և ձէթը, և նաշիհը և
ցորենը և արջառներն ու ոչխարները. և ձիանքը և
կառքերը, և մարմինները և մարդկանց հոգիները ։
14 Եւ քո հոգու ցանկացած պտուղները գնացին քե-
զանից, և ամեն շքեղ և լուսափայլ վայելչու-
թիւնները գնացին քեզանից, և այլ ևս բնաւ չես
15 գտնիլ նորանց ։ Եւ այս բաների վաճառականները,
որ նորանից հարստացան հեռուից կ'կանգնեն նորա
տանջանքի վախիցը լաց և սուգ անելով, կ'ասեն.

16 Վա՜յ, վա՜յ մեծ քաղաք որ բեհեզ և ծիրանի և
որդան կարմիր էիր հագած, և ոսկով և ազնիւ
17 քարերով և մարգարիտով զարդարուած ։ Որովհե-
տև մէկ ժամի մէջ այդչափ մեծութիւնը աւերակ
եղաւ. և ամեն նաւավար և այն ամենն որ նաւով
գնում են տեղ տեղ, և նաւաստիները և նորանք
18 որ ծովումն են գործում, հեռուից կանգնեցին, Եւ
աղաղակում էին նորա այրուելու ծուխը տեսնելով
19 և ասում. Ո՞րն է այս մեծ քաղաքին նման ։ Եւ
հող ցանեցին իրանց գլուխների վերայ, և մեծ
ձայնով աղաղակեցին լաց և սուգ անելով և ասե-
ցին. Վա՜յ, վա՜յ մեծ քաղաք որ նորանում հա-
րստացան բոլոր ծովի վերայ նաւեր ունեցողնե-
րը նորա պատուականութիւնիցը. որովհետև մէկ
20 ժամի մէջ աւերակ դառաւ ։ Ուրախ եղէք նորա
վերայ, երկինք և սուրբ առաքեալներ և մարգա-
րէներ, որ Աստուած ձեր դատաստանը դատեց
դորա վերայ ։
21 Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մի քար առաւ մեծ
ջաղացաքարի պէս և գցեց ծովի մէջ ասելով.
Այսպէս ուժով պիտի վայր գցուի Բաբելոն մեծ
22 քաղաքը, և այլ ևս չ'գտնուի ։ Եւ քնարերգների,
և երաժիշտների և սրնգահարների, և փողահար-
ների ձայնը այլևս պիտի չ'լսուի քո միջումը և այլ
ևս ոչ մի արհեստագէտ բնաւ չի գտնուիլ քեզա-
նում. և ջաղացի ձայն այլևս չի լսուիլ քեզանում.
23 Եւ ճրագի լոյս այլևս լոյս չի տալ քեզանում. և
փեսայի և հարսի ձայնը այլևս բնաւ չի լսուիլ
քեզանում. որովհետև քո վաճառականները երկրի
մեծամեծներն էին. քո կախարդութիւնովը մոլոր-
24 ուեցան բոլոր ազգերը ։ Եւ նորանում գտնուեցաւ
մարգարէների և սուրբերի և երկրի վերայ բոլոր
սպանուածների արիւնը ։

Գլ. ԺԹ

1 Եւ սորանցից յետոյ լսեցի շատ բազմութեան մեծ
ձայնի պէս մի ջոյն երկնքումը որ ասում էր. Ալէ-
լուիա, փրկութիւնը և փառքը և պատիւը և զօ-
2 րութիւնը մեր Տէր Աստուծուն. Որովհետև ճըշ-
մարիտ և արդար են նորա դատաստանները. որով-
հետև նա այն մեծ պոռնիկին դատեց նորա պոռնը-
կութիւնումը, և իր ծառաների արիւնի վրէժն ա-
3 ռաւ նորա ձեռքից։ Եւ երկրորդ անգամ ասե-
ցին, Ալէլո՛ւիա. և նորա ծուխը բարձրանում էր
4 յաւիտեանս յաւիտենից։ Եւ քսան և չորս երէց-
ները և չորս կենդանիները վայր ընկան և երկրպա-
գեցին Աստուծուն որ աթոռի վերայ նստած էր և
5 ասեցին. Ամէն, Ալէլո՛ւիա։ Եւ աթոռից մի ձայն
դուրս եկաւ ասելով. Օրհնեցէք մեր Աստուծուն,
ով նորա բոլոր ծառաները, և նորանից վախեցող-
6 ները, փոքրերը և մեծերը։ Եւ ես լսեցի իբր մի
մեծ բազմութեան ձայն և իբր շատ ջրերի ձայն,
սաստիկ որոտմունքի ձայնի նման. որ ասում էր.
Ալէլո՛ւիա, որովհետև Ամենակալ Տէր Աստուածը
7 թագաւորեց։ խնդանք և ուրախ լինենք, և փառ-
քը տանք նորան որ եկաւ Գառի հարսանիքը, և
8 նորա կինը պատրաստեց իրան։ Եւ տրուեցաւ նո-
րան որ սպիտակ սուրբ և լուսափայլ բեհեզ հագ-
նի. (որովհետև բեհեզը սուրբերի արդարութիւնն
9 է։) Եւ ասեց ինձ. Գրիր, Երանելի են Գառի
հարսանիքի ընթրիքին կանչուածները. և ասեց
10 ինձ. Սորանք Աստուծոյ ճշմարիտ խօսքերն են։ Եւ
ես ընկայ նորա ոտների առաջին որ երկրպագեմ
նորան, և ասեց ինձ, Զգուշ կաց, մի անիր. ես
ծառայակից եմ քեզ և քո եղբայրներին, որ Յի-

սուս Քրիստոսի վկայութիւնն ունին. Տէր Աստու-
ծուն երկրպագիր. որովհետև Յիսուսի վկայու-
թիւնը մարգարէութեան հոգին է։
11 Եւ տեսայ երկինքը բացուած, և ահա մի սպի-
տակ ձի, և նա որ նորա վերայ նստած էր, կոչ-
վում էր Հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարու-
թիւնով է դատաստան անում և պատերազմում։
12 Եւ նորա աչքերը կրակի բոցի պէս, և նորա գլխի
վերայ շատ պսակներ. և անուն ունէր գրած, որ
13 ոչ ով չ'գիտէր բայց միայն ինքն։ Եւ իր վերայ
հանդերձ էր հագած արիւնով ներկուած, և նորա
14 անունն կոչվում է Աստուծոյ Բան։ Եւ երկնքի
զօրքերը նորա ետևից գնում էին սպիտակ ձիերի
15 վերայ սպիտակ և մաքուր բեհեզ հագած։ Եւ
նորա բերանից դուրս է գալիս սրած սուր, որ
նորանով զարկէ ազգերին. և ինքը հովւում է
նորանց երկաթէ գաւազանով. և ինքը կոխում է
Ամենակարող Աստուծոյ բարկութեան և սրտմը-
16 տութեան գինու հնձանը։ Եւ իր հանդերձի
վերայ, և իր ազդրի վերայ գրած էր անունը,
ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՏԷՐԵՐԻ ՏԷՐ։
17 Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ որ կանգնած էր
արեգակի վերայ, և մեծ ձայնով աղաղակեց ասե-
լով ամեն թռչուններին որ երկնքի մէջ թռչում
են. Եկէք հաւաքուեցէք մեծ Աստուծոյ ընթրի-
18 քին. Որ ուտէք թագաւորների մարմինները, և
հազարապետների մարմինները և հզօրների մարմին-
ները. և ձիերի և նորանց վերայ նստողների մար-
մինները, և ամենի մարմինները՝ ազատների և ծա-
ռաների, մեծերի և փոքրերի։
19 Եւ տեսայ գազանը և երկրի թագաւորները և
նորանց զօրքերը մէկ տեղ ժողովուած որ պատե-
րազմ անեն ձիին վերայ նստողի հետ և նորա զօր-

20 քերի հետ ։ Եւ գազանը բռնուեցաւ , և նորա
հետ սուտ մարգարէն էլ որ նշաններ էր անում
նորա առաջին , որոնցով մոլորեցրեց նորանց որ
գազանի դրոշմն առան , և նորանց էլ որ երկրպա-
գեցին նորա պատկերին . և երկուսն էլ կենդանի
կենդանի գցուեցան կրակի լճի մէջը որ ծծմբով
21 այրվում է ։ Եւ մնացեալները սպանուեցան ձիին
վերայ նստողի սրիցը , որ նորա բերանիցը դուրս էր
գալիս . և բոլոր թռչունները կշտացան նորանց
մարմիններիցը ։

ԳԼ. Ի

1 Եւ տեսայ մի հրեշտակ վայր գալիս երկնքիցը ,
որ դժոխքի բանալին ունէր , և մի մեծ շղթայ իր
2 ձեռքումը ։ Եւ նա բռնեց այն վիշապին այն առա-
ջի օձին որ է Բանսարկուն և սատանան , և կա-
3 պեց նորան հազար տարի ։ Եւ գցեց նորան անդուն-
դի մէջ , և փակեց և կնիք դրաւ նորա վերայ որ
էլ չ'մոլորեցնէ ազգերին մինչև որ հազար տարին
լրանայ . և նորանից յետոյ պէտք է որ նա մի քիչ
ժամանակ արձակուի ։

4 Եւ տեսայ աթոռներ , և նորանց վերայ նստե-
ցին . և դատաւորութիւն տրուեցաւ նորանց , և
նորանց հոգիքը որ գլխատուել էին Յիսուսի վկա-
յութեան համար և Աստուծոյ խօսքի համար , և
նորանց որ չ'երկրպագեցին գազանին և ոչ էլ նորա
պատկերին , և նորա դրոշմը չ'առան իրանց ճակա-
տի և ոչ էլ իրանց [աջ] ձեռքի վերայ , և սո-
րանք կենդանացան և Քրիստոսի հետ թագաւո-
5 րութիւն արին հազար տարի . իսկ մեռելների
մնացեալները չ'կենդանացան , մինչև որ հազար
6 տարին լրանայ ։ Սա առաջի յարութիւնն է ։ Երա-

նելի և սուրբ է , որ բաժին ունի առաջի յարու-
թեան մէջ . սորանց վերայ իշխանութիւն չ'ունի
երկրորդ մահը . այլ Աստուծոյ և Քրիստոսի քա-
հանաներ կ'լինին . և նորա հետ կ'թագաւորեն
հազար տարի ։
7 Եւ երբոր հազար տարին կ'լրանայ՝ կ'արձակուի
սատանան իր բանտիցը . և դուրս կ'գնայ որ մոլո-
րեցնէ այն ազգերը , որ երկրի չորս անկիւնումն են ,
և Գոգը և Մագոգը , որ հաւաքէ նորանց պատե-
8 րազմի , որոնց թիւը ծովի աւազի չափ է ։ Եւ վեր
գնացին երկրի լայնութեան վերայ , և սուրբերի
9 բանակը և սիրելի քաղաքը շրջապատեցին ։ Եւ եր-
կնքիցը կրակ իջաւ Աստուածանից և լափեց նո-
րանց . և Բանսարկուն որ նորանց մոլորեցնում էր
գցուեցաւ կրակի և ծծմբի լիճը , ուր որ էին գա-
10 զանը և սուտ մարգարէն ։ Եւ կ'չարչարուին գիշեր
և ցերեկ յաւիտեանս յաւիտենից ։
11 Եւ տեսայ մի սպիտակ մեծ աթոռ , և նորա վե-
րայ նստողին . որի երեսից երկինքը և երկիրը փա-
12 խան . և տեղ չ'գտնուեցաւ նորանց համար ։ Եւ
տեսայ մեռելները մեծ և փոքր կանգնած աթոռի
առաջին . և գրքեր բացուեցան , և մի ուրիշ գիրք
էլ բացուեցաւ , որ է կեանքի գիրքը , և մեռելնե-
րը դատուեցան այն գրքերում գրուածներից իրանց
13 գործերի համեմատ ։ Եւ ծովն իր մէջի մեռելները
տուաւ , և մահը և դժոխքը իրանց մէջի մեռելնե-
րը տուին . և ամեն մէկն իրանց գործերի համե-
14 մատ դատուեցան ։ Մահը և դժոխքը գցուեցան
15 կրակի լճի մէջ . սա երկրորդ մահն է ։ Եւ եթէ
մէկը գրուած չ'գտնուեցաւ կեանքի գրքի մէջ ,
կրակի լճի մէջ գցուեցաւ ։

Գլ. ԻԱ

1 Եւ տեսայ նոր երկինք և նոր երկիր. որովհետև
առաջի երկինքը և երկիրն անցաւ. և էլ ծով չէր
2 կայ։ Եւ ես՝ [Յովհաննէս] տեսայ սուրբ քաղա-
քը՝ նոր Երուսաղէմը վայր գալիս Աստուածանից
երկնքից պատրաստուած ինչպէս մի զարդարուած
3 հարս իր մարդի համար։ Եւ մի մեծ ձայն լսեցի
երկնքից, որ ասում էր. Ահա Աստուծոյ խորանը
մարդկանց հետ, և նա կ'բնակուէ նորանց հետ,
և նորանք կ'լինին նորան ժողովուրդ, և ինքն Աս-
4 տուած նորանց հետ կ'լինի նորանց Աստուած։ Եւ
կ'ջնջէ Աստուած բոլոր արտասուքը նորանց աչքե-
րից. և մահն այլևս չի լինիլ, ոչ սուգ, և ոչ ա-
ղաղակ. և ոչ ցաւ այլևս չի լինիլ, որովհետև ա-
5 ռաջիններն անցան։ Եւ աթոռի վերայ նստողն ա-
սեց. Ահա ամէն բան նոր եմ անում. և ասեց
ինձ. Գրիր. որ այս խօսքերը ճշմարիտ և հաւա-
6 տարիմ են։ Եւ ինձ ասեց. Եղաւ, ես եմ Ալֆան
և Օմեղան. սկիզբը և վերջը. ես ձրի կ'տամ ծա-
7 րաւին կեանքի ջրի աղբիւրից։ Ով որ յաղթէ,
ամենը կ'ժառանգէ. և ես կ'լինիմ նորան Աստ-
8 ուած, և նա կ'լինի ինձ որդի։ Իսկ վախկոտներին
և անհաւատներին, և պիղծերին և մարդասպան-
ներին և պոռնիկներին, և կախարդներին և կռա-
պաշտներին և ամէն ստախօսներին բաժինը այս
լճումը կ'լինի որ կրակով և ծծմբով վառուած է.
Սա է երկրորդ մահը։
9 Եւ այն եօթը հրեշտակներից մէկը, որ եօթը
սկաւառակն ունէին վերջի եօթը պատուհասներո-
վը լցուած, ինձ մօտ եկաւ, խօսեց ինձ հետ և ա-
սեց. Եկ ցոյց տամ քեզ այն հարսը, որ Գառի

10 կինն է. Եւ առաւ տարաւ ինձ հոգով մի մեծ և
բարձր սար, և ինձ ցոյց տուաւ այն մեծ քաղա-
քը՝ սուրբ Երուսաղէմը, որ վայր էր գալիս Աստ-
11 ուածանից երկնքից. Եւ Աստուծոյ փառքն ու-
նէր. և նորա լուսաւորութիւնը պատուական ա-
կունքի նման ինչպէս բիւրեղացած յասպիս քար։
12 Որ մեծ և բարձր պարիսպ ունէր, և տասներկու
դուռ ունէր, և դռների վերայ տասներկու հրեշ-
տակ, և նորանց վերայ անուններ էին գրուած որ
Իսրայէլի որդկանց տասներկու ցեղերի անուններն
13 են։ Արևելքից երեք դուռ, հիւսիսից երեք դուռ,
հարաւից երեք դուռ, և արևմուտքից երեք դուռ։
14 Եւ քաղաքի պարիսպը տասներկու հիմեր ունէր,
և նորանց վերայ Գառի տասներկու առաքեալնե-
15 րի տասներկու անունները։ Եւ ինձ հետ խօսողը
մի ոսկի եղէգ ունէր, որ չափէր քաղաքը, և նո-
16 րա դռները, և նորա պարիսպը։ Եւ քաղաքը քա-
ռակուսի էր. և նորա երկայնութիւնն այնչափ է
որչափ նորա լայնութիւնը, և չափեց քաղաքը ե-
ղէգովը, և նորա չափը տասներկու հազար աս-
պարէզ, նորա երկայնութիւնը և լայնութիւնը և
17 բարձրութիւնը հաւասար է։ Եւ նորա պարիսպը
չափեց հարիւր քառասուն և չորս կանգուն. մար-
18 դի չափով որ հրեշտակինն է։ Եւ նորա պարսպի
շինուածքը յասպիս քարից էր. և քաղաքը մաքուր
19 ոսկի էր խառնակ ապակու նման։ Եւ քաղաքի պա-
րիսպի հիմունքը զարդարուած էին ամէն ազնիւ
ակունքներով. առաջին հիմը յասպիս, երկրորդը
շափիղայ, երրորդը քաղկեդոն, չորրորդը զմ-
20 րուխտ, Հինգերորդը եղնգնաքար, վեցերորդը սար-
դիոն, եօթներորդը ոսկեքար, ութերորդը բիւ-
րեղ, իններորդը տպազիոն, տասներորդը քրիսոպ-
րասոս, տասնմէկերորդը յակինթ, տասներ-

21 կուերորդը ամեթոյս։ Եւ տասներկու դուռը
տասներկու մարգարիտից՝ ամեն մէկ դուռը մէկ
մարգարիտից. և քաղաքի հրապարակը մաքուր
22 ոսկի ինչպէս թափանցիկ ապակի։ Եւ տաճար չը
տեսայ նորա մէջ, որովհետև Տէր Աստուած Ամե-
23 նակալը և Գառն է նորա տաճարը։ Եւ քաղաքը
ոչ արեգակին և ոչ լուսնի պէտք չ'ունէր, որ լոյս
տան նորա մէջ. որովհետև Աստուծոյ փառքը լու-
սաւորում էր նորան, և նորա ճրագը Գառն էր։
24 Եւ [փրկեալների] ազգերը նորա լոյսով պիտի գը-
նան. և երկրի թագաւորները իրանց փառքը և
25 պատիւը կ'բերեն նորա մէջ։ Եւ նորա դռները չեն
փակուիլ ցերեկը, որովհետև գիշեր չի լինիլ այն-
26 տեղ։ Եւ ազգերի փառքը և պատիւը կ'բերեն նո-
27 րա մէջ։ Եւ բնաւ չի մտնիլ նորա մէջ ոչ մի ան-
մաքրութիւն անող և պղծութիւն և ստութիւն
գործող, բայց միայն նորանք որ Գառի կեանքի
գրքի մէջ գրուած են։

ԳԼ. ԻԲ

1 Եւ ցոյց տուաւ ինձ մի մաքուր գետ, կենդանի
ջրի ակնվանու նման փայլուն, որ դուրս էր գալիս
2 Աստուծոյ և Գառի աթոռից։ Եւ նորա հրապա-
րակի միջումը և գետի այս կողմին և այն կողմին
կեանքի ծառ կար, որ տասներկու կերպ պտուղ
էր բերում. ամեն մէկ ամիս տալիս էր իր պտու-
ղը. և այն ծառի տերևը բժշկում էր հեթանոսա-
3 ներին։ Եւ այլ ևս նզովք բնաւ չի լինիլ. և Աս-
տուծոյ և Գառի աթոռը նորանում կ'լինի. և նո-
4 րա ծառաները կ'պաշտեն նորան։ Եւ նորա երեսը
կ'տեսնեն, և նորա անունը նորանց ճակատների վե-
5 րայ։ Եւ գիշեր չի լինիլ այնտեղ, և ճրագի և ա-

րեգակի լոյս պէտք չէր նորանց. որովհետև Տէր
Աստուածը լուսաւորում է նորանց, և կ'թագա-
ւորեն յաւիտեանս յաւիտենից։
6 Եւ ասեց ինձ. Այս խօսքերը հաւատարիմ և
ճշմարիտ են. և Տէրը՝ սուրբ մարգարէից Աստ-
ուածն իր հրեշտակն ուղարկեց որ իր ծառաներին
7 ցոյց տայ այն որ շուտով պիտի լինի։ Ահա շու-
տով գալիս եմ. երանի նորան որ այս գրքի մար-
գարէութեան խօսքերը պահում է։
8 Եւ ես Յովհաննէս՝ այս բաները լսող և տես-
նող, երբոր լսեցի և տեսայ, ընկայ որ երկրպա-
գեմ այն հրեշտակի ոտների առաջին, որ այս բա-
9 ները ցոյց էր տալիս ինձ։ Եւ նա ինձ ասեց.
Զգուշացիր. մի՛ անիր. որովհետև ես ծառայակից
եմ քեզ և քո եղբայր մարգարէների և այս գրքի
մարգարէութեան խօսքերը պահողների. Աստու-
10 ծուն երկրպագիր։ Եւ ասեց ինձ. Մի կնքիր այս
գրքի մարգարէութեան խօսքերը. որովհետև ժա-
11 մանակը մօտ է։ Անիրաւութիւն գործողը թող էլ
անիրաւանայ, և կեղտոտը թող էլ կեղտոտուի,
և արդարը թող էլ արդարանայ, և սուրբը թող
12 էլ սրբուի։ Եւ ահա շուտով գալիս եմ և իմ
վարձքն ինձ հետ, որ ամեն մէկին կ'հատուցանեմ
13 ինչպէս իր գործը կ'լինի։ Ես եմ Ալֆան և Օմե-
ղան. սկիզբը և վերջը, առաջինը և վերջինը։
14 Երանելի են նորա պատուիրանքները պահողները.
որ նորանցը կ'լինի իշխանութիւնը կեանքի ծառի
15 վերայ, և քաղաքի դռնովը ներս կ'մտնեն։ Բայց
դուրսն են շները և կախարդները և պոռնիկները
և սպանողները և կռապաշտները. և ամեն ստու-
թիւն սիրողն ու գործողը։
16 Ես Յիսուս իմ հրեշտակն ուղարկեցի, որ վկա-
յէ ձեզ այս բաները եկեղեցիների մասին. ես եմ

Դաւիթի արմատը և սերունդը և առաւօտեան
17 պայծառ աստղը ։ Եւ Հոգին և հարսն ասում են ․
Եկ ․ և լսողն ասէ ; Եկ ․ և նա որ ծարաւ է՝ թող
գայ , և նա որ կամենում է՝ թող առնէ կեանքի
ջուրը ձրի ։
18 Որովհետև ես վկայում եմ ամենին որ լսում է
այս գրքի մարգարէութեան խօսքերը ․ եթէ մէկը
բան աւելացնէ սորանց վերայ , Աստուած կ'աւե-
լացնէ նորա վերայ այն պատուհասները որ այս
19 գրքումը գրուած են ։ Եւ եթէ մէկն այս գրքի
մարգարէութեան խօսքերից բան պակասեցնէ ,
Աստուած կ'պակասեցնէ նորա բաժինը կեանքի
գրքից , և սուրբ քաղաքից , և այս գրքում գրը-
20 ուածներից ։ Այս բաներին վկայողը ասում է ․
Այո ․ ես շուտով գալիս եմ ։ Ամէն ։ Եկ , Տէր
Յիսուս ։
21 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը լինի ձեր
ամենի հետ ։ Ամէն ։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0160343

3101

208.2
V-66